



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

C 534,748








4

ԹՈՎՄԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԵՐՈՒՆԻՈՑ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



51


Thomas Ardzrouni, Vardapet, 10<sup>th</sup> cent.

## ԹՈՎՄԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԾՐՈՒՆԻՍՈՑ

Patmut'iwn Tann

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՏԱՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ



Է լոյն էմած

Ք. Պ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ ՎԵՀԱՓՈԽ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:



Ի. Ա. ԳԵՏԵՐԻՄՅՈՒՄ  
Ի ՑՊԵՐԱՆԻ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈՒՊՈՎԻ:  
1887.

История Армении Томы Арцруни, автора X вѣка.  
Histoire d'Arménie par Thomas Ardzrouni, X<sup>e</sup> siècle.

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES.

— — —  
Fren  
511  
Kutur

Печатать, по опредѣленію Факультета Восточныхъ языковъ С.-Петербургскаго Университета, отъ 28 ноября 1886 года, разрѣшается.

Деканъ Факультета *В. Васильевъ.*  
Секретарь Факультета *К. Голстунский.*

~~~~~  
Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

ՀՐԱԺ


ԷՐԵՆ


511

• 26.93

Պատմութիւնս այս թաղմայի Արծրունւոյ, որպէս յայտնի է բանասիրաց, զառաջինն ի լոյս ածաւ ի կոստանդնուպոլիս յամին 1852 արդեամք տեսչաց թանգարանին Ա երծանութեան որ ի Միջագիւղ այլ քանզի սպառեալ էին առ մեզ օրինակք նորա վասն բազում ժամանակի ընդ մէջ անցանելոյ, որպէս և վասն դըժուարութեանց ճանապարհի՝ ձեռն արկաք յայս նոր տպագրութիւն, զոր արարաք բաղդատութեամբ նախկին տպագրին ընդ հնագոյն ձեռագիր օրինակին թաղմայի Արծրունւոյ, գրելոյ ի վասն Աղթամարայ ի թուականութեանս մերում ՉՈՐԻ, զոր յատկապէս խնդրեցաք և ընկալաք ի կոստանդնուպոլսոյ:

Ու մեծամեծք են խոիրքն ընդ հրատարակութիւնս այս մեր և ընդ առաջինն, զորոյ և զընթերցուածսն համեմատութեամբ հընագոյն օրինակին ընդ երկուս այլ նորագոյն օրինակս պատմագրիս եղաք աստ, զաննշանիւքն ոմամբք զանց արարեալ: Յաւելաք միայն ի տեղիս տեղիս զհատուածսն, զորս ի բաց արկեալ էր հըրատարակչացն առաջնոց առ հանգամանաց տեղւոյն և ժամանակին. այլ և ուղղագրութիւնս քանի մի մուծաք ի ներքս, էր զոր ի բնագիրն անդ, ըստ ձեռագիր օրինակին, որք վըիպեալ էին յաչաց նախկին հրատարակչացն, և էր զոր ի ստորևս իջից, որպէս մեզն թուեցան ընթեռնլիք: Այսնպէս և առ ի դիւրել զցուցմունսն ի մատեանս այս՝ յաւելաք ի գլխակարգութիւնս բնագրին՝ և զթիւս գլխոց ըստ իւրաքանչիւր գպրութիւնս, որպէս և նշանակեցաք զեսորագիր Դապրութեանն Չորրորդի, որ և ի ձեռագրին պակասէր, թուի թէ վըիպակաւ իւիք:— Օչչանկն յատուկ անուանց պատմագրիս արար Ատ. Այլինասեանց:





## ՅԵԿԻ ԳԼԽՈՑ

Յառաջաբանութիւն հեղինակին . . . . . 1

### ԳՐԱԿՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

|                                                                                                                                                    |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Ե. Գլուխ . . . . .                                                                                                                                 | 5  |
| Ի. Ասն Բէլայ և Տարելացւոցն և նոցին առասպե-<br>լարանութեանցն . . . . .                                                                              | 20 |
| Գ. Ա. Ասն Ասորեստանեայց թագաւորութեանն. և թէ<br>որպէս Օքադաշտ և Մանիթոպ կացեալ գլխաւորք ա-<br>րևելից կողման, և մոլար ուսմանց նոցա . . . . .        | 25 |
| Դ. Եթէ որպէս կարգ ըստ կարգի եկաց թագաւորու-<br>թիւնն Ասորեստանեայց մինչև ի կիւրոս Պարսիկ . . . .                                                   | 32 |
| Ե. . . . .                                                                                                                                         | 36 |
| Զ. Ծետ կիւրոսիվ կամբիւսէս, Ծմերգիս մոդ, Դարեհ<br>Աշտասպա. ի քսաներորդի ամի Դարեհի մեռաւ Տիգրան<br>Հայկազնեայ . . . . .                             | 40 |
| Լ. Չարախօսութիւն նախարարացն Կերսեհի զլա աչէն<br>Վաշարեան . . . . .                                                                                 | 49 |
| Ը. Թագաւորելն Արտաշէսի ի վերայ Հայոց . . . .                                                                                                       | 52 |
| Խ. Տարձումն Պահղաւիկ թագաւորութեանն և թա-<br>գաւորել Ատահրացոյն . . . . .                                                                          | 56 |
| Ժ. Դարձն. Տրդատայ ի յերկրէն Յունաց և հաստատել<br>յաթոռ թագաւորութեանն Հայոց մեծաց օգնականութեամբ<br>թագաւորին Յունաց, և վասն հաւատոցն որ ի Քրիստոս | 57 |
| Ժ. Ը. Թագաւորել Խէոդոսի ի վերայ Յունաց . . . .                                                                                                     | 66 |

\*

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ա.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | 77  |
| Բ. Պատմած յիշատակի վասն արիւնահեղին Իարսու-<br>մայի . . . . .                                                                                                                                                                                                                                                                                                        | 80  |
| Գ. Եթէ որպէս եղև բարձումն չար թագաւորութեանն<br>Պարսից տանն Ասսանական . . . . .                                                                                                                                                                                                                                                                                      | 85  |
| Դ. Ուշ որպէս եղև բարձումն չար թագաւորութեանն<br>Պարսից, և փոխանորդեաց միւս ես չար Խսմայէլական . .                                                                                                                                                                                                                                                                    | 98  |
| Ե. Ա ասն թագաւորին Զափրայ, զոր ինչ խորհեցաւ<br>իվերայ աշխարհին Հայոց, և ի գլուխ եհան զկամսն չարու-<br>թեանն. և որ ինչ ընդ սովաւ նախ քան զյնուլ վեցերորդ<br>յորելինի, եօթանասուներորդ ոլոմպիադին, յետ ինն և<br>տասն ընդիքտիոնին, յորում բովանդակին ժամանակք բըռ-<br>նակալութեանն Տաճկաց ամք ԱՄԻՒ ըստ թուոյ հայերէն<br>տումարի. թագաւորէ Տաճկաց թօռքլ ոմն Զափրար անուն | 106 |
| Զ. Ա ասն պատերազմին Իարարատայ իշխանին Հայոց<br>և Առուսէի և յաղթութեանն ի ձեռն Աշոտոյ Ա ասպուրա-<br>կան իշխանին, զի եկն զօրավիգն Իարարատայ . . . .                                                                                                                                                                                                                    | 108 |
| Է. Ա ասն մահուանն Յովսեփու ի լեռնայնոցն Խու-<br>ժայ և պատմութիւն նոցա . . . . .                                                                                                                                                                                                                                                                                      | 119 |

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐՐԱՐԴ

|                                                                                                                                                           |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ա.                                                                                                                                                        | 122 |
| Ա. Ա ասն որ ինչ գործեցաւ ընդ հանուր աշխարհս Հայ-<br>ոց. և երկպառակութիւն իշխանացն, անհաւանք և անհնա-<br>զանդք միմեանց լինելով, և որ ինչ ընդ սոքօք . . . . | 122 |
| Բ. Ա ասն Ամբատայ Իագրատունւոյ, ԱՌոկաց իշխանին                                                                                                             | 127 |
| Գ. Լապումն և Ալտարումն յաշխարհէս իշխանին և նա-<br>խարարացն և նոցին ընտանեաց . . . . .                                                                     | 139 |
| Դ. Ուշ որպիսի պատճառաւ հասին ոմանք ի նոցանէ<br>սուրբ կատարմանն . . . . .                                                                                  | 140 |
| Ե. Երկրորդ նորին և երթալն Գոուրգէնի զհետ կոչո-<br>ղացն Իուխայի և որ ինչ գործեցաւն, և թուղթն իբրև ի<br>գիմաց արքայի . . . . .                              | 148 |

|                                                                                                                                                                                                       |     |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Օ. Ա. Ասն չար յանձնառութեան նախարարացն Արծ-<br>քունեաց, և խոստավանութիւնն ի Քրիստոս տեառն Գրի-<br>գորի Արծրունւոյ և տեառն Յովհաննիսի եպիսկոպոսի Ար-<br>ծրունեաց և Գրիգորի քահանայի, և պատմութիւն նոցա | 152 |
| Լ. Ա. Ասն հերձուածոյն Բագարատայ Բագրատունայ,<br>որ ի վերայ ուրացութեանն զ-Քրիստոս յաւել և զայս ի<br>կործանումն բազմաց: Ընդդիմագրութիւն սակաւուք . . .                                                 | 162 |
| Ը. Որ ինչ զկնի այսորիկ գործեաց Բուհայ ի Պատին<br>քաղաքի, և յիշատակարան վկայիցն . . . . .                                                                                                              | 166 |
| Թ. Որ ինչ գործեցաւ յերկրորդում ամին գալափեանն<br>Բուխայի, որք են ոլոմքիաթք. վասն պատերազմին ընդ<br>Ամակայ Խամայէլացոյ, որ Խամայէլի որդի ճանաչէր, և<br>վասն պաշարման քաղաքին . . . . .                 | 172 |
| Ժ. Ա. Ասն որ ինչ ի Ծանարան գործեցաւ :                                                                                                                                                                 | 175 |
| Ժ. Ե. Թեւ որով օրինակաւ վկայեաց Այուկաթլ ի Ա. Ա.<br>նանդ գաւառէ . . . . .                                                                                                                             | 185 |
| Ժ. Ի. Որ ինչ զկնի անիշխանութեան գործեցաւ և պա-<br>տերազմաց . . . . .                                                                                                                                  | 191 |
| Ժ. Գ. Յաղագս Պուրգինայ միայն մալոյ, և շատ պա-<br>տերազմողացն յաշխարհիս . . . . .                                                                                                                      | 192 |
| Ժ. Դ. Դասեալ Պետրանկին ի Հայու, և սկիզբն գործու-<br>ցանել տեառն զգերութիւն իշխանացն բոլոր Հայուստանեաց                                                                                                | 201 |
| Ժ. Ե. Դարձ գերութեան իշխանացն . . . . .                                                                                                                                                               | 207 |
| Ժ. Զ. Ա. Ասն դառնելոյ Աշոտոյ իշխանին ի գերութե-<br>նէն և Ա. Ահանայ Արծրունւոյ . . . . .                                                                                                               | 210 |
| Ժ. Է. Ա. Ասն Անձաւացեաց յուզմանցն Աշոտի և դար-<br>ձեալ խազաղանալոյ . . . . .                                                                                                                          | 212 |
| Ժ. Բ. Ա. Ասն մաքառման Աշոտ իշխանի ընդ Աւթմա-<br>նիկսն և տեղաթափս պունելոյ զյափշտակեալն ի Կոցանէ                                                                                                       | 214 |
| Ժ. Թ. Ա. Ասն ծննդոց Պետրանկին . . . . .                                                                                                                                                               | 217 |
| Խ. Ա. Ասն ունելոյն Պերանկին զկորապազտան իշ-<br>խան Տարունոյ, և զիւաւիթ, որ արքայն ճանաչէր՝ իշխան-<br>ցուցանելոյ . . . . .                                                                             | 219 |
| Ի. Ա. Փափանակ Աշոտի Թագաւորել Ամբատայ . . . .                                                                                                                                                         | 229 |
| Ժ. Ի. Կործանումն քաղաքին Պունի ի սաստիկ շարժմանէն                                                                                                                                                     | 230 |


|                                                                                                                                                                                                                                                  |     |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ի՞մ. Ա ասն զօրաժողովն լինելոյ Ամբատայ թագաւորին Հայոց ի վերայ Ե՛հմատայ Եմդացւոյն, Ա րաց և Եշղուանից և բոլոր Հայոց իշխանոքն, և պարտութիւն Աըմբատայ յԵ՛հմատայ ի սահմանս Եղձնեաց ի վերայ գետոյն թռուխ կոչեցեալ, որ իջանէ ի ծովն Բազունեաց . . . . . | 236 |
| Ի՞մ. Ա ասն մահուանն Եպումրուանայ . . . . .                                                                                                                                                                                                       | 238 |
| Ի՞շ. Եթէ որպէս կեղծաւորական սիրով նիւթէր չարիս Եւշին ի վերայ Հայոց և իշխանաց նոցա . . . . .                                                                                                                                                      | 239 |
| Ի՞օ. Եթէ որպէս անտուածասաստ բարկութեամբ սատակեցաւ Եւշին և համօրէն զօրք իւր . . . . .                                                                                                                                                             | 241 |
| Ի՞չ. Ա ասն սքանչելեացն որ ցուցաւ յԱստանն Ուշունեաց յամս զօրավարութեանն Գագկայ . . . . .                                                                                                                                                          | 244 |
| Ի՞մ. Ա ասն ապստամբութեան Տաճկացն որ Այսիկքն կոչին և իշխանին Աիւնեաց ի թագաւորելն Ամբատայ, և դարձեալ երկոցունց հնազանդութիւն . . . . .                                                                                                            | 245 |
| Ի՞մ. Ա ասն մահուն Եշոտի Ա ասպուրական իշխանին ի Կախճաւան քաղաքի . . . . .                                                                                                                                                                         | 248 |


### ԴՊՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

|                                                                                                                                                                                         |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ե. Եթուակալութիւն Եշոտի որդւոյ նորին անդրանականն. և փոխումն տիկնոջն Եոփեայ երջանկի և բարեպաշտի                                                                                          | 269 |
| Ի. Փայլումն փառազարդութեան միանգամայն և երեւումն շնորհացն Եստուծոյ ի վերայ մանկանն Գագկայ, և սպանումն Եպումրուանայ ի ձեռաց նորա մեծապէս արութեամբ, և որ ինչ զնմանէ են գովեստք . . . . . | 271 |
| Գ. Ակիզմն իշխանութեանն Գագկայ զկնի եղբօր իւրոյ Եշոտի, և գործք նորին քաջութեան . . . . .                                                                                                 | 277 |
| Դ. Ա ասն բառնալոյ սգոյն մեծի, և խաղաղացուցանելոյ արքայի զաշխարհս, և որ ինչ յաղագս Ծուսփայ որդւոյ Եպուսամայ . . . . .                                                                    | 289 |
| Ե. Որ ինչ յաղագս անիշխանութեանն Պարսից . . .                                                                                                                                            | 289 |
| Զ. Յաղագս աշխարհաշխնութեան մեծի արքային Գագկայ և բազում տեղեաց նորոգմանց և հրաշակերտութեանց յԱստանն աւանի . . . . .                                                                     | 290 |

|                                                                                                                                                                                                                           |     |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ես. Յաղագս շինութեան Աղթամարայ, և թէ ոյք ո-<br>մանք յառաջ քան զձեռնարկելն արքայի սուղ և ոչ ար-<br>ժանի ինչ յիշատակի ի նմա գործս գործեցին . . . . .                                                                        | 292 |
| Բ. Յաղագս գերապայծառ և պանծալի սուրբ եկեղե-<br>ցւոյն որ Աղթամար քաղաքի, որոյ նիւթ նպաստաւորու-<br>թեան քարանցն բերաւ յերկրէ հեռաստանէ. զորոյ մեք<br>զիրն և զտեղին հաւաստեաւ յայտ արասցուք . . . . .                       | 297 |
| Թ. Յաղագս մեծի պատերազմին ընդ առնն արաբացւոյ<br>ի դրունս մայրաքաղաքին Դաւուայ, և որ ինչ գործք քա-<br>շութեան մեծի արքային Հայոց Գագկայ, և որ ինչ յաղ-<br>թութեանն գործք . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . | 299 |
| Ժ. Յարձակումն Դելմկացն ի քաղաքն Հագամակերտ<br>և ի գաւառն Աղբագ, և որ ինչ յաղթութիւն զօրացն<br>Հայոց ի շնորհացն Աստուծոյ . . . . . . . . . . . . . . . . . .                                                               | 302 |
| Ժ. Յայտարարութիւն կերպագրութեան անձին և փա-<br>ռաց մեծի արքային Հայոց Գագկայ . . . . . . . . . . . . .                                                                                                                    | 303 |
| Ժ. Ա ասն անցիցն անցելոցն ընդ Հայս, և վասն աս-<br>տուածասէր իշխանին Արդլմսէհի և որդւոց իւրոց . . .                                                                                                                         | 305 |
| <br><hr/>                                                                                                                                                                                                                 |     |
| Յիշատակարան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .                                                                                                                                                   | 318 |
| Յաւելուած . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .                                                                                                                                                 | 321 |







## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ՀԵՂԻՆ ԱԿԻՆ

Եւ ըստ նմանակիրպութեան պատկերի իւրոյ, յանձնիշխան կամայական կամարարութեանն ձգեալ պատիւ զնա՝ և տէր բոլորակերտ իրողութեանց մակադրեալ զհողանիւթեայ էակս, որպէս ասաց նախամարգարէն Մովսէս. նմանագոյնս ասացեալ և թագաւորացնն մարդարէաշնորհն Դաւիթ՝ փառօք և պատուովք պսակեցեր զնա, և կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց քոց, և զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա: Եւ ծառայականս պատահիս տուեալ նմա, որ ի վերայ կառուցեալ լուսաւորացդ պարողութիւն երեկալագոյն գոյիցն, ի գործառնութեան կենցաղավարութեան պիտոյից մարդւոյ, ըստ տունջիան և գիշերոյ բայցակայութեանց գործոց եղանակիալ: Որպէս ասաց սաղմոսերգուն՝ ի ծագել արեւուն ելանէ մարդ ի գործս իւր, ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ. և Փրկիչն ասաց՝ պարտ է գործել զգործս մինչ աւուր<sup>1</sup> կայ. գայ գիշեր յորում ոչ ոք կարէ գործել: Նամառուսագոյնս ասացից, ամենայն իրողութեանց յօդտութեան մարդկայնոց սոքօք բնաւորեալ ի շարժմունս երկակի լուսաւորօք ժամայեղից, առ ի նշանակ հոլովմանց պարագայց ժամանակագիւտն շրջագայց արշաւանաց, հանդերձ աստիղացդ ձոխագայութեան երկնաշու օդակառոյց ընթացից, ի բացերեւութիւն աւուրց և ամնոց բովանդակութեան, ի լրումն տարեաց, ի չափաբերութիւն անհատից մարդկայից սեռից, ի գիւտս իմաստից տրամադրութեանց, ի տարբերս թուոց և ի բովանդակութիւն ժամանակաց. որով բովանդակեցան բոլորա-

1 Այլ օրէնակ՝ օր:

կերպ աշխարհայնոցս սահմանք, ըստ քառից սեռից որակութեանց. բայտ խառնուածոց հակակայիցն շարժմանց, քառիւք երրեկք արշաւասոյր ի շարժմանցն օդոցն տարբերութեանց. և եռակի կացութեամբք եղանակաք կացեալ երրեկօքն յաւուրս յէ, և յայսոսիկ քաղաքավարեալք մարդք խնամատալք քաղաքական հանձարագիտութեանց, սակս հեարագիւտ կինաց մարդկան ի պէսպէս իմաստու ալք պատուաւուլք, ծոխք և բարձրագահք, մեծարեալք ի թագաւորաց, երևելք և ընչաւէտք, որք յայսոքիկ ներակլթեալք՝ և ի սոյն զդեգերութեանն երկասիրէին: Եւ զիւրաքանչիւր իրի զժամանակս ի ներքոյ թուոց զրոշմեալ՝ զքանիօնութիւնն կանովնեցին, համահաւաքիալ ի բովանդակութիւն լրման ժամանակաց եօթն հազարեան դարուցն: Որպէս և մեծն Մովսէս Երրայեցւոցն շարագրօղ և աշխարհարարութեանն մարդարէ, որ հմուտ և տեղեակ էր եգիպտական հրահանգիցն՝ յերկս աշխատասիրութեանն՝ լուսաւորացդ պարողութեան՝ ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս բնաւորեալ յարարչէն ասաց զսոսա: Եւ ընդ սոքօք դրուագեաց զժամանակս երկրակեաց կինաց մարդկան ի նախնոցն մերոյ սկզբնեալ. Նդամ, ասէ, եկաց ամս ճ և ծնաւ զԱԷթ, և կեցեալ ամս ջ և մեռաւ: Եւ որք ընդ սովաւ էին տեսակք անընդհատից՝ նոյնպէս մատենապղեաց, և զպէսպէս յեղանակս գործառնութեանց մարդկան նովին օրինակաւ ի շարս կանովնեալ: Գունակ սմին և Եկրոսոս ոմն և Երիդոնոս Քաղղէացւոց իմաստունք. որք ոչինչ կարի հեռագոյնք ի Մովսէսէ զգիւտ ժամուց և ժամանակաց զմարդկայնոց սեռից կինցաղավարութիւնս կանովնադրեալ զրոշմեցին ի մատեանս քաղդէական պատմութեանցն: Եւ ի սոցունց այլ հետազոտեալ բացում աշխատութեամբ, որ մինչ առ մեզ հասեալ շարագրեցին, թէ ովք ի թագաւորաց աշխարհակալաց՝ որքան ամս և ժամանակս կեցեալ տիրեցին, և կամ ովք միւս քան զմիւս առաւելեաց ի հոգաբարձութիւն աշխարհի. և զպատերազմաց և գիւաղաղութեանց կարգս, զյաղթութեանց և զպարտութեանց հանդէս, զառաքինեացն և զանժուժիցն փորձս, զքաջացն և զվատացն զպնդութիւն և զլուծութիւն, զարեաց և զանարեաց կարծ-

բութիւն և զթուլամորթութիւն, զիմաստնոցն և զանմափցն զանհարթութիւն, զհանձարեղիցն և զկարծմտացն զանկցորդութիւն, զշխողաց աշխարհի և զնոյն անփոյթարարաց զախորժակ իւրաքանչեւրոց բարուց. թէ որպէս քաղաքավարեցին, մարմնոյ զհեա ըռգան, եթէ զհոգւց մեծարդի եղին զնախապատութիւնն, և վասն երկնաւորականացն կենաց ցանկ հոգ տարեալ քաղաքավարէին, եթէ ընդ երկիր զքարշումն առնէին: Այլ և ըստ իւրաքանչեւրոցն ի միմեանց յաջորդելոցն, որք ըստ սեռից տեսակաւ ննթակացեալ, զտիրեն աշխարհաց, և որք ըստ պատահմանց ի նոյն ձգեցան պատիւ<sup>1</sup>. և այլք որք բռնակալութեան և յընչաւետ մժերից յղփացեալ կորզեցին յինքեանս զփառս աշխարհիս: Աւ զոմանս ի Տեառնէ յայս վեր եկեալ գահակալութիւն, որպէս զ' Կաւիթ և զՅեսու և զայլ ոմանս, որ որք մինչ առ մեզ հասեալ: Զիւրաքանչեւր զանուանս և զժամանակս, զզիարդն և զորպէսն կանոնեալ սահմանաւ ի ներքոց թուոց ի գիրս պատմութեանց յօրինեալ դրոշմեցին, ըստ ազգաց ազգաց և լեզուացն տարբերութեանց ընդ զլով պարունակեալ ի լրութիւն եկեղեցւոյ զանազան իմաստիք: Զի որք զինի նոցունց ի նոյն վարժս և ի զիւտս իմաստից յորդորիցին՝ առանց աշխատութեան զիւրաւ առցն զինողիրս հանձարեղագոյնքն և ուսումնասէքն ի մարդկանէ:

Աւ արդ և՝ սակս որոյ մերս է շարագրութեան յեղանակի ինողիր ի քէն, Պ' րիգոր Նըծրունիաց տէր և Վ' ասպուրական իշխան, ընկալեալ ի մեզ զհրաման պատուիրանի քո, զոր ախորժակք փափագելիք զքեկ ստիպեցին՝ ներքադրեալ ի յիշատակարանս մատենից զնախնեացն քոց զազգաբանութիւն և զորպիսութիւն, կարգաւ ածել զթիւսն ըստ ծննդոց իւրաքանչեւրոց մինչ առ մեզ զըովանդակութիւնն չափաբերել, և որ վասն անցիցն ձայոց ի Տաճկաց զպիսութիւնն ներգործեցաւ՝ անյապաղ հնազանդութեամբ ըստ հրամանի քո ձևոն ի գործ արկից, և ըստ կարի իմում անցից համառօտիւք ընդ կարևորագոյնսն, և որքան ինչ վայելուչքն ին՝ եղից ի պատ-

<sup>1</sup> Այլ օրինակ՝ շաւիդ:

մութեան աստ, առ փոքր ինչ և դուզնաքեայ զմնացորդս յիշատակարանացն ի յառաջագոյն և ի հին պատմագրացն զմեր զբնիկ տերանց տոհմին Արծրունեաց զիրն և զտեղին բացայատիսցուք ի պատմութեան աստ, զի յայտ յանդիման երեսցին արիութիւնք առաքինութեանց ըստ անուանց և տեղեաց և ժամանակաց: Եւ խուզեցից զկարեւորագոյնսն խորհրդոց ի խաղացմունս բանիցս կարգադրութեանց, թէ ով ոք էին, և երբ, և յորմէ, և ուր, և զիարդ, և որբան, և որպիսիք, և որովք յեղանակօք քաղաքավարեցին, և յոր պէտու հանդիսացն: Եւ վասն պատերազմաց և յաղթութեանց, և թէ յաղթեցին կամ յաղթեցան. և զկէսս որ վասն այլոց ինչ իրաց հանդիսանալ հաճոյացան յօդուտ և ի շահ մատակարարեալ անձանց և ընկերացն: Եւ որ ինչ ընդ այսոքիւք պատկանին ստորոգութիւնք զըուցատրութեանց՝ համառօտեսցուք ի մատեանս յայսոսիկ, ըստ կարի մերում օժանդակեալ ի զրոց հնագէտ պատմութեանց մարգարէականաց և նորոց վարգապետաց եկեղեցւոյ Քրիստոսի, և արտաքին վիպապատմացն աշխատասէր և մուհարուստ արանց, ուրք դայեակարսր յանձնանձնեցին մեզ յետոյ հետեւելոցս զառողջ և զառանց խարդախութեան ճաշակս համեղագոյն և կարեւորագոյն կերակրոցն՝ յարբունս կատարեալ գիտութեանն տանել հասուցանել զուսումնասէրն և զերկիւղածագոյնն Ապուծոյ, զհանձնարեղմն և զիմաստուննն, զնախանձաւորս լաւագոյն և մնացական ընչաւէտութեանն և որ անդ է աշխարհն: Օռորս և աստ ի յայսմ պատմութեան արտայայտեցից քեզ, քաջդ բանասիրաց, զնոցայն որ վասն Քրիստոսի պատերազմեալ զքարիոք պատերազմ, և յաղթանակ կանգնեցին ի վերայ երկրի մինչեւ յերկինս: Ուրոց աղօթիւք տացէ ինձ Տէր զուղղորդ և զճշմարտութեամբ զբանն գրել ի մատեանս յայս, առաջնորդութեամբ Նոգույն սրբոց, խորհրդովն Քրիստոսի, ի հաճոյս քեզ և նմանեաց քոց: Ողջ լերուք ի Տէր Քրիստոս: Ամէն:



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՑ

## **ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ**

### **ԳԼՈՒԽ Ե.**

Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգա-  
քանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանա-  
կաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ նայաստա-  
նեայց՝ և հրաման հարկեցուցանող ձոխութեան քո ստիպէ  
զմեղ, Ճեպիլ փութալ առ զիւտն հանդիսանալ և կարգել ոճով  
զփափագելին քո յայտաբարական զրով, զրոշմել կանոնել ի  
զիրս ասո և ի մեր կար տաժանմամբ<sup>1</sup> ի խոյզ և ի խնդիր  
ելեալ զհաւաստին գտանել՝ ի Հնախօսս շարագրական մա-  
տեանս և ի բազում վէպս պատմութեանց սնցեալ զրեցի,  
որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱղամայ<sup>2</sup> մինչ  
առ մեղ հասեալ ժամանակացս զիւտն

Եւ զի ժ ազգացն շաբք առանց ստութեան կան զը-  
րեալ յամենայն մատենադարս՝ յերկրորդն հարկ է մեղ զոճն  
կանոնել, որ յետ նոյի և անդր ազգացն բաժանմոնք յառաջ  
խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին  
ցեղակարգութեամբ. և ի մէջ առից, թէ ըստ բազմաշուրթն  
լեզուացն յետ աշտարակաշինութեանն, յորմէ՛ ցեղէ էառ<sup>3</sup>  
աճել սկրունդք Արծրունեաց տոհմին. և զի հաւասարութիւն  
երից ազգացն, այսինքն որդւոցն նոյի, կարգաւ կանոնեալ

<sup>1</sup> Յօրինակն, ի մերկատաժանմամբ:

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ յնդամ:

<sup>3</sup> Ա.Յ. օր.՝ առ:

դրոշմեալ կան յոլովից գիրս՝ ոչ է մեղ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկուրդել:

Եւ արդ ըստ Եւսեբեա բազմայել յեղանակաց խուզմանցն և ըստ Ամբրիկանոսի հաւատարմաբանութեանն և ըստ Սովուսի քերթողի՝ նախ ի մէջ առից զորպիսութիւն ազգացն բաժանմանցն զրել: Եւ անդէն զտարակարծելի գիւտիցն յոյս երկրայութեան՝ յայլոց քննողական աշխատութեանց եղից առ ընթիր թելազութեամբ. զի անտի և անտի ի բացկացցեն տարակուսական մոածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանձարեղ խոհականալիր բանգիտութիւնէ: Եւ արդ ունի պատմութիւնս այսպէս:

“Եոյ ծնանի երիս որդիս, զօքուան և զՏիտան և զՅառպիտութէ, որ նն Սեմ Քամ և Յարէթ: Սեմ ծնանի զԼազամ և զԼառուր և զԵրփաքսաթ և զԵրամ և զՆուր Էսուր շինէ զՆինոս քաղաք, որ է Նինուէ, որ կոչի առաջին Ըսորիք:

Իսկ Ներբովթ ի Քամա շինէ զԲարելոն առաջին քաղաք, և առաջին թագաւորէ ի վերայ երկրի: Եւ քանզի էր Բարելոն վեճակիալ Սեմա՝ և բռնազբօսութեամբ Ներբովթ յինքըն զրաւէ, և հաստատէ անդ զթագաւորութիւնն Եթովպացւոց<sup>1</sup>: Իսկ Էսուր որդի Սեմա զՆինուէ շինէ առաջին քաղաք Էսուրոց թագաւորութեանն:

Երդ զիանութ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Կամիրամայ, որ ծնաւ զՆինուասյորոց<sup>2</sup> աճմամբ յառաջանայ կարգն և գոյ հասանէ ի Սեմերիմ արքայ, առ Նզեկիայիւ Ներբայիցւոցն առաջնորդաւ և առ մերովն ձարամայիւ: Ոչ վարկպարագել, որպէս ինձ թուի, ի Ճախ է զանց առնել զիսնդրոյս այսորիկ զպատճառն, բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն զրել, թէ արդեօք Ըսուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Ներբովթ, կամ թէ արդեօք ազգն Եղծրունեաց Սեմայ սերունդք իցեն, թէ Քամայ ի Ներբովթայ: Քանզի որպէս զրեցաւն Ըսուր ի Սեմայ շինէ զՆինուէ, և Սեմերի-

1 Այլ օր՝ Եթեռպացւոց:

2 Այրն յորոց աճմամբ:

րիմ պայյազատաբար թագաւորէ ի ՚Նինուէ, և ասի Շառոց թագաւոր Հաւաստիս այս մեզ Խւսկրիոս Կեսարացի, Յուլիանոս Եղիկառնացի՝ ստուգաբաննեն զթագաւորս Շառոց ի զաւակէ Անմայ զաձմունս<sup>1</sup> առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: Խւ ունի պատմութիւնն այսպէս. Տիտան բռնացեալ ի վերայ Օքուտնայ՝ առնու զ՞աբելոն և շնէ քաղաք. թագաւորութեան իւրոյ անդ, որ էր հինգերորդ Օքուտնն Քսիսութրեա:

Իսկ Շառուր երրորդ ի Անմայ՝ առաջին շնէ զ՝ ՚Նինուէ. և ՚Նինոս տասներրորդ ի Անմայ և ի ՚Քամայ. և է ՚Նինուէ իսկապէս վիճակ Անմայ, և ՚Նինոս ի զաւակէ ՚Քամայ ըստ Երիսդոնեա<sup>2</sup> Քաղդէացւոյ և ըստ Խւսերեա Կեսարացւոյ և ըստ Մովսէսի Խորմնացւոյ և ըստ Յուլիանու Եղիկառնացւոյ ստուգաբանի: Խւ քանզի առեալ էր Կոռնեայ իւր կին զՈւեա յազգէ Օքուտնայ, և յինքն զրաւեալ<sup>3</sup> զթագաւորութիւնն՝ և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Օքուտնայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչեւ որ ի կոոջէն Բուեա որ ի Օքուտնայ զարմիցն էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. բայց միայն մանուկ մի ՚Նիոս անուն, զոր գաղտաբար ապրեցցց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԼոգիպտոս, և անտի և անդ ոչ զօրէր Օքրուտնայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի ՚Նիոնիսեայ, հարստայեղզ վավաշոտ հոմանի բարուք. սա անուանէ զանուն իւր ըստ անուան հաւոյն իւրոյ Անմայ՝ Անմիրամ: որ ըստ սիւղաբայիցն ի հայկական լեզուէ Շամիրամ ձայնաւորի: Վու սա յանգուցեալ Բուեանն ՚Նինոս առնու իւր կը նութեան, զի Շամիրամն ամրանայր ի բնիկ իւրեանց քաղաքին ՚Նինուէ, և մատանէ ՚Նինոս ի համար Շառիստանայց թագաւորաց ընդ կնոջ իւրոյ Շամիրամայ. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն գկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակազրութեանն կանոնի, որպէս և յԼուրայէլի զ՞ոթողիայ, և յԼոգիպտոս զՎոլէոպատրեայ դուստր Պտղոմեայ ՚Նիոնիսեայ: ՚Նա

1 ԱՅԼ օր՝ զաձմունն:

2 Աքիւդնեայ?

3 Յօրինակոն՝ գրուեալ

ևս ծանօթագոյն քեզ գրիմ, զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի  
Կրիստոսի զբստ մարմնոյ ազգաբանութիւնն զբեռվ ։ Աւետա-  
րանին Մատթէոս՝ և թուէ մի ըստ միոջէ, սկսեալ յԱբրա-  
համէ և գայ անցանէ մինչ ի Յովսէփի, և լոէ վասն Մարե-  
մայ<sup>1</sup> զազգաբանին։ Խւ քանզի ոչինչ հաղորդութիւն ունէր  
Յովսէփի առ ծնունդն Քրիստոսի՝ մտանէ յազգահամարն փո-  
խանակ Մարիամու<sup>2</sup> կնոջ իւրոյ զոր վերագոյնն գրեցի. զի  
ոչ էր օրէն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարա-  
կաբիլ։ Նոյն գունակ և զԴուկա ազգաբանութիւնն գտցես  
շարածեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅի-  
սուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ  
միոջէքն։ Եւյսպէս և Շամիրամ կին, ի յազգէն Աեմայ, թա-  
գաւորէ Նինոսիւ արամբ իւրով ի վերայ Սորեստանի պայա-  
զատաբար, ընդ զգեալ ի վերայ Նինոսի, որպէս թէ եկեալ  
պանդխտաբար մտանիլ<sup>3</sup> ի թագաւորութիւն Շամիրամայ ի  
Աեմայ։ Յաւել և զինչ գրեան է զվավաշոտ ցանկասիրու-  
թեամբ թիւեակոխել։ Ի՞այց որպէս բացայացտեցաւ՝ Շամի-  
րամ սեպհականեալ թագաւորէ յազգէ Սուրա ի Աեմայ Ե-  
սորեստանի բնիկ իւրեանց աէրութեանն, և պայազատեալ մի  
ըստ միոջէ մինչ ի Թանոս Կոնկողեռոս, որ յետ չը ամի Աե-  
նկքիրիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորու-  
թեանն մեծառ զօրութեամբ, և առնու զԲարելոն, և շինէ  
զՏարսոն ի ձև Ի՞աբելոնի, գետոյ ընդ մէջ անցանիլոյ որպէս  
խոնարհագոյն մասնաւորաբար գրիմ։ Որ ապա յետ սպան-  
մանն Աենկքիրիմայ յորդւոց իւրոց՝ բուռն զնդաւ Կողրամե-  
լէք և Սանասար գան մտանեն ի լիառն<sup>4</sup> Աիմ, որ յանուն  
հաւոյն իւրոյ Աեմայ անուանեալ էր լիառնն։ Որպէս և պարս-  
կային ճայնին<sup>5</sup> ի Օլորւանն անուն զՕլորուանդն<sup>6</sup> անուա-  
նեն։ Խւ եղեալ նոցա ի Աիմ լիրին մինչ ի Տիգրանն Հայ-  
կազնեաց։ Ի՞այց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ  
ի բռնանալն ի վերայ Աեմեացն, և զԲարելոն փոխանակ նորա  
շինեալ՝ ի թագաւորելն Նինոսի առնու զԲարելոն և շինէ

1 Հին օր՝ Մարամայ։

2 Հին օր՝ վասն Մարիամու։

3 Մի օր՝ պանդխտաբար մոռաքար։

4 Այլ օր՝ ի լւառնն։

5 Զայնիւ։

6 Այլ օր՝ զարաւանդն։

զՆինուէ, և փոխէ անդ գթագաւորութիւնն Ասորեստանին Դարձակալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման աղպին և աշխարհին, շինէ զեղիպտոս և անդ հարստանան աղգապիտաբար, և առանձին թագաւորին Ասորեստանիայքն՝ ի կանոնի անդ գտցես զՆինոս և զԸ ամիրամ և զԵրրահամ և զվեշտասաներորդ՝ հարստութիւն Խդիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Էղիկառնացւոյ; որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի:

Իսկ Նինոս և Համիրամ տիրեն Էսիացւոց և Խդիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: Օայս սակաւուք ի մասնէ զբեցի ճանաչել միայն զազգա:

Խւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խրնդիր՝ պարտ է նախ զիտել թէ որով օրինակաւ Վաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապիտացն տառամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս, իսկ զանուանս նոցա այլափոխ ասելով զատանին: Խոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգմն, որ ոչ և ըստ մից յեղանակի հաւաստանայ՝ առ ի ցուցումն, ոչ արեգական բեկմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ծշմարիտն ստուերաբանեն, և նախ նոքա եղին գտակք գրոց, թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն մատենից ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքիամբ և կամ նովաւ գտանել զհնալրս գիւտի գրոց, թէպէտ և յառաջքան զնա, այլ ոչ թէ և քան զԸարելացւոցն իրս, զոր ոչ միայն Յոյնք՝ այլ և այլ ազգք ոչ երեխն այսուիկ նախկինք. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ զիլ ի Աաղմեա<sup>3</sup> յումեմնէ Փիւնիկեցւոյ: Խւ զի առ այսուիկ փոյթ եղել մեզ

1 Այլ օր՝ վեցտասաներորդ:

2 Հին օր՝ հաւեստանաց:

3 Հին օր՝ իսկ Ադմեա:

քննասիրութեամբ լինել հասու և ոչ զանց առնել՝ աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. զի և աստուածատուր ասացելովքն թեակոխեսցուք յարտաքնոցն գէպս, և ապա յառաջեկայիցն եկեսցուք տեսութիւն

Տնկեաց, ասէ, Աստուած զդրախտն յեղեմ ընդ արեելս. այսինքն յերկրի յարեելս, զորոյ չունի բան ասել անդր ևս քան զնա յարեելս<sup>1</sup> ունել բնակութիւն մարդկանք որով իցէ ասել արեմտական զդրախտն կամ ի միջոցի ուրեք. և զանբաւութիւն մեծութեանն յայտ առնէ սաստկութիւն յորդահոս աղբերն, որ արբուցանելով զդրախտն ընկղմի ընդ երկրաւ, և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներեւելոյն յերեելի աշխարհս: Իսկ զգերազանցութիւն գեղեցկութեանն որ բերան բաւեսցէ ասել բան մարդկային, միանգամայն և զաստուածագործ տնկոցն հեշտալի տեսութիւն. և անհասական իմն չնորհիւ փառօք և պատուով պաակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելմցուցանէ դրախտին<sup>2</sup>, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր, ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ գոյզն ինչ փոքրագոյն քան գշմեշտակս գոր և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լրութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վընասակարաց, այլ ահա գործել զարդարութիւն և պահել զպատուէրն ասացեալ նմա. զի սակաւածան նպաստաւորութեամբն իբրև ընծայաբեր արար լինելով, և այնր աղագաւյւա բարձրագոյնսն ձգեսցի ըստ ասացելումն՝ ի սակաւուն հաւատարիմ լինելով՝ ոչ այնմ և եթ տիրեսցէ տնկոցն, այլ և բազմերջանիկ երկնայնոցն հասցէ կենաց:

Իսկ նա ի հրապոյլս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ շարութեամբն եհեղ առաստութեամբ զգառնու-

<sup>1</sup> Յայլ օրինակս չիք՝ յարեելս:

<sup>2</sup> Այլ օր՝ վայելութեամբ ճոխացուցանէ ի գրախտին:

թիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի։ Որով ընթաղրեալ զսիրողական երախտիս Երարչին, միանդամայն և զպատուելոն՝ առ սպանօղն հատուածեցաւ, զոր ի դէպ է այժմ ասել նենդաւոր գոլ և անմիտ. ոչ շատացաւ ինքեան ծնելութեամբն առ ի զմայլումն հրաժարել ի կերակրոյ, այլ և աստուածականն ցանկացաւ փառաց, կորզել ապարասանութեամբ յինքեան և զպատիւ. Երարչին, որով փորձիւ և հրապուրիչն նորա բանսարկուն ախտացաւ։ Այլ և նախապատիւ եւս քան զայրն յաստուածականին լինելո. կնոջն նախայարձակ ճաշակմամբն։ Եւաղ խարդախագունին այնորիկ խորհրդոյ և յիմարական մտաբերութեանն, որով անդիտացեալ զհողանիւթեայ իւր զանգուած՝ յահաւորէն Եստուծոյ և յարարչէն խորհրդացաւ թիկունս դարձուցանիլ, որ ամենատիս ակնարկութեամբ ստորիջեալ ի ինդիր կորուսելոյն հեղագնաց գարշապարզ՝ ընդելականս նմա գուշակէր գալուստ, ընտանեգոյնս ևս ձայնիւ կոչելով՝ ուր ևս Եղամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերեւս ինքեամբ իսկ զօգտակարօքն տածիցի։

Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժաման առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Խատուած վերաբերէ զպատճառն, ասէ՝ կինս զոր հտուր ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. և թէ Եղամ առ նմանն իւր և օգնական զայսոսիկ՝ զի՞նչ ի դէպ իցէ կնոջն անմեղադրելի գոլ՝ սձին պատճառել<sup>1</sup>, որ ևս վատթարագոյն քան զանասունն լինիցի։ Ուստի և ըստ կարգի մեղանացն՝ և դժուարինք անիծիցն հետեխն, նախ օձին և ապա կնոջն։ Իսկ եթէ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ միասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանիլ պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց։ Կո որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ոչ մի ինչ ոչ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք անիծիւք ի բաց բառնալ նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի։ Զոր

<sup>1</sup> Այլ օր՝ պատճառելով։

բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղկբ-  
սանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածու՝ յոլովութիւն  
իմաստից ունել ամենայն շնչականաց<sup>1</sup>. այլ և մարդոյն ևս  
յստակագոյնս տեսանել զիւրաքանչիւրոցն ի նոցանէ մտա-  
ծութիւն. յիտուսո երբեմն գտանէր ի ձեռն անիծիցն իմա-  
ցեալք երկոքին. մասնաւոր ինչ մարդարէական ոգւով եղե-  
լում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդ-  
րէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուսա. ըստ  
այսմիկ և այլոց կենդանեացն զդայականօքն և թէ ունայնա-  
ցելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականա:

Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն  
փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: Եւ ապա զի՞նչ  
առ այսոսիկ առցուք ի մէջ զողբերգութեան բերումն ի հա-  
ռաջանս, որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս  
զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և  
ողորմելի յիշափոխմամբ. ըստ պատկերին Աստուծոյ ստուե-  
րացեալ բարձրացեալն՝ նուաստացաւ, անմահից կենաց հա-  
ղորդն՝ ի ձեռն անիծիցն հողացաւ, ի տէրութիւն կարգեալն՝  
բազմադիմի չարիւք վարատեալ, և ծառայ ախտից եղեւ, ին-  
քեան և որոց յիտ իւր թողլով ժառանգութիւնս որդւոց  
կեանս վշտագինս հանդիրձ մահուամբ, և ծննդականութիւնս  
տրտութեամբ: Օռոր պարտ էր աստանօր յոլովագունիւք ո-  
մամբք աւաղականօք ընդ ողբակիցս՝ և զմարդարէականն առ-  
նուլ ի ձայնարկութիւն, «մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ,  
հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա»:

Յետ այսորիկ եմուտ Աղամ առ Եւա կին իւր, և յղոցաւ  
և ծնաւ զԱյէն, և ասէ զնա Ատացուած, թէ և Աստուծով՝  
այլ ոչ արժանաժառանգ. և յաւել ծնանել զեղբայրն նորա զւա-  
րէլ և կանխածան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա գոլ որ-  
դիս<sup>2</sup>, զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւ-  
րովք տեսցէ, և զինքն կերպազրեալ յորդին իւր սպանեալ ի  
Այշէնէ: Իսկ ասեին՝ ամենայն որ սպանանէ զԱյէն՝ հօթն  
վրէժս լուծցէ, եօթն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ

1 Հին օր՝ շնչականաց:

2 Հին օր՝ գուլուշիս գոյ:

ըստ յաւելուածոյ՝ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ, որ ի բնաւին արդարադատութիւն բնաւորեալ՝ և ողորմութեանն ընդ նմին լինիցի լծակից. և զայսոսիկ թէ բարիոք ումեք թուեսցի տեսցուք. զի և հօթամբք իսկ շարագրեալ չարիւք<sup>1</sup> ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երեսցի.

‘Նախ առաջին՝ զի յիտ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարեոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երեւի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: Դարձեալ և յընդիմակէն՝ ած և Աբէլ ի յանդրանկացն և ի պարարտիցն:

Նրկուրդ՝ չարասէր և աներկիւղ նախանձուցն բարք, եթէ ընդէ՞ր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արատաձգեալ<sup>2</sup> Աստուծոյ:

Նրբորդ՝ խժարար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ:

Չորբորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձիուս արիւնարբու գազանին:

Հինգերորդ՝ զի զծնօղան անհնարին դառնութեամբ նոր սպովն ելից:

Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոդին, մինչեւ զԱստուծ ևս անգէտ կարծելով լրբենի երեսօք պատասխանէր, հարցեալ ցնա «ո՞ւր է Աբէլ եղբայր քո»՝ ասէ զգիտեմ, միթէ պահապան իցեմ եղբօրն իմոյ:

Խօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրիցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. այլ և զվճիռ պատուհասին իւրովն կնքէր բերանով. և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարող նահապետացն:

Խու լեալ Ազամ ամաց ձև ծնաւ զԱէթ, որ ի նախկին բարբառոյ անտար թարգմանի Նրբումն: Զոր Փիլոն Աղեքսանդ-

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ չորեւք:

<sup>2</sup> Այսպէս յօր.

բացի փիլիսոփոս և վարդապետ Հնոյն՝ Քրարբի ասե, թե-  
րես զննդականութեան և զամողական բազմամարդութեանն  
պատճառ նշանակեալ յառաջատես հայրն. քանզի էին Եգա-  
մայ և այլ ուստիելք և դստելք բազումք, այլ ոչ արժանա-  
ժառանքք պայազատութեան աշխարհահայր լինելոց. զի սմա  
և եթ յաւելու ասել, եթէ ծնաւ ըստ կերպարանաց իւ-  
րոց, և ըստ պատկերի իւրոյ: Եւ դարձեալ՝ եթէ յարոյց  
ինձ Եստուած զաւակ այլ՝ փոխանակ Հարելի զոր սպան  
**Այլէն:**

Եւ Սէթ լիալ ամաց մե ծնանի գԵնովս. նա յուսացաւ  
կոչել զանուն Եստուծոյ: Եւ որով օրինակաւ թեացեալ  
քաջալերեցաւ առ այս զի և ի հօրէ իւրմէ ուսաւ՝ որդոյն<sup>1</sup>  
Սէթայ որդիս Եստուծոյ կոչիլ որում պատուեր տուաւ  
չխառնակել յանիծեալ զաւակն Այլէնի. այտքիւք ծանու-  
ցեալ զպատիւ խնամոցն Եստուծոյ՝ ևս յորդորագոյնս յու-  
սացաւ կոչել այցելու ինքեան զԵստուած:

Ենովս լիալ ամաց նու ծնաւ գԱյիհանան: Այիհանան  
լիալ ամաց նու ծնաւ զՄազազայէլ: Եւ ի սորա հարիւր և  
երեսուն և հինգերորդ ամին վախճանեցաւ նախահայրն Ե-  
ստամ, կեցեալ ամս զւ վասն որոյ զերկայնութիւն կենաց տա-  
լով նահապետացն Եստուծոյ՝ յանդիման դրախտին բնակե-  
ցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վե-  
րադարձիլ<sup>2</sup> կեանս. և ոչ նոցա միայն՝ այլ և ընդհանուր  
մարդկութեան լինել օրինակ արդարութեան և ժուժկալու-  
թեան. մորք սրտի գիտել զերկիւղն Եստուծոյ, կարգել և  
օրէնս բնութեան ի մարդիկ. զի զոր անձանց՝ զնոյն և այլոց  
գիտասցին հրաժարել ի զօշոտութենէն, որ առաջնոյ անկ-  
մանն եղեւ պատճառս, որ կարծիւք յիմարութեան աստուա-  
ծանալ կամեցաւ: Եւ զի զըրբոցն իսկ ասացից բանս. եթէ զի-  
արդ ամենեքեան սուլրբքն որպէս ժառանգութիւն իմն հայ-  
րենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդոց աւան-  
դելով զպահոցն պէտս. ուստի և մեզ կարգաւորութիւն փո-  
փոխմանց պահեցաւ ստացուածս այս: Եւ այլովք ևս յոլո-

վեւք բազումս է ասել վասն աշխարհալից նահապետացնու Եյլ այժմիկ ի կարգ բանին երթիցուք:

Մաղաղիկ լեալ ամաց ճիշ-ից ծնանի զՅարէդ<sup>1</sup>: Յարէդ լեալ ամաց ճիշ ծնանի զՅենովք, որ զժայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կինուանուցն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից, որ ոչ առին ի միտ լսել զպատուեր սրբոց նախահարցն: Օռոր վկայէ ոմն ի սրբոցն, թէ Մարդարէացաւ ութերորդն յԵպամայ Խնովք և ասէ, «Եհաւասիկ եկն Տէր բիւրովք հրեշտակօք առնել դատաստան ըստ ամենայնի, և յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն գործոց իւրեանց զոր ամբարշտեցան: Աստանօր և զհայհյական բարսն նշանակէ, և վասն ամենայն խիստ բանից զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամբարիշտք: Խւ զի զթիւ հօթներորդիս յաւելուածով ասաց ութա լինել՝ թուփ ինձ թէ և զարդարն Նարէլ ի սոյն շարակարգի կարգեալ համարեցաւ. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Նարէլ:

Երդ Խնովք լեալ ամաց ճիշ ծնանի զՄաթուսաղայ, և կեցեալ առնովաւ ամս Տ՝ փոխեցաւ յանմահութիւն յամին թէ Պամէքայ:

Մաթուսաղայ լեալ ամաց ճիշ ծնանի զՊամէք: Պամէք լեալ ամաց Ճյը ծնանի զԻոյ, և կեցեալ առնովաւ ամս շիշ, մինչև ի հանդերձել տապանին: Իոյ էր ամաց շ յորժամ առ հրաման որդւովքն կազմել զտապանն:

Աստանօր լաւագոյնս իմն աստուածայինն Մովսէս գրէ ի բերանոյ Աստուծոյ զյածախութիւն ամբաստանտւթիւն ամբարշտելոցն, ըստ իւրաքանչիւրոցն և զկեասն նշանակելով: Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդպտերսն մարդկան զի զեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: Որոց տուաւ պատուեր՝ հեռանալ յայնցանէ. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսա-

<sup>2</sup> Հին օր.՝ Յեարէդ:

կորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս  
իւր ասելով, այսր անգր կորօնեալ գկարգ բնութեան առ ի  
յընդգէմն հրամանին Աստուծոյ զիմագրաւեալք, միանգամայն  
և զերկիր զազրացեալ ի բազմադէմ չարեացն գործելոցն ի  
նմա: Քանզի ասէ՝ բազմացան չարիք մարդկան ի վերայ  
երկի, և ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի  
չարիս: Եւ դարձեալ հաես Տէր Աստուած զերկիր և էր ապա-  
կանեալ զի ապականեաց ամենայն մարմին զմանապարհս իւր  
ի վերայ երկի: ոչ ևս զբանականեաց բերելով խորհուրդս,  
այլ իբրև երամակք<sup>1</sup> վայրենիք վայրայածեալք անկարգու-  
թեամբ և պէս պէս անառակութեամբք, ի յաղթանդամու-  
թիւն ապաստանեալք, և ապարասանք հպարտացեալք ի գո-  
րութիւն բազկի: բնաւ և ոչ մի ինչ փոյթ ունելով ի դիպա-  
ռորագոյնսն առաւել քան թէ ի վատթարագոյնսն:

Եւ ստրջացաւ Աստուած քանզի արար զմարդն:

Եւ մտախորհ եղե ի սրտի իւրում, այն որ յատակագոյնս  
գիտէ և տեսանէ զամենայն, յառաջ քան զինել իւրեանց:  
այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարա-  
կանն ի սպառ վախճան: Որով ետ հրաման արդարոյն կադ-  
մել զտապանն ի գուշակումն անօրինաց կորսաեանն:

Նուր և զարմացիր և աստանօլ ևս առաւել, եթէ զի-  
արդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն  
յաղթէր, որ առ ժամեայ սպառնացեալ պատուհասիւն ի  
հարիւրամեայ ձգէր ժամանակս ներողութեամբ: Այլ և տե-  
սութիւնք ևս յայնս սաստակզինք և նորանշանք. զոր՝ և  
սուզրքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ  
ի հեղուսել զփայտսն՝ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամե-  
նեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի  
յիրկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերեւս դարձ-  
ցին և կիցցէն. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նո-  
սայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ  
մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումնն  
յապազէր. զոր և այլուր ասէ՝ կենդանի եմ ևս Տէր Տէր,

1 Հին օր՝ երեմակք:

զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս դառնալ ի չար Ճանա-  
նապարհէն և կիալ:

Իսկ ոմանք ասեն ի Պատողիկեայ Փոխւգացւոց շինեալ  
տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչե կողմ և  
յոյժ անհաւաստի են ասացեալքն. քանզի սուրբ նահապե-  
տացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի մէջեր-  
կրպյս ունել բնակութիւն: Եյլ ի Հրամանէ Սստուծոյ յան-  
դիման դրախտին բնակելով պահօք ապաշխարութեան սգա-  
ցեալ եղեն, ողբալով զվորպումն առաջին կենացն, ամենայնիւ  
հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ  
ժուժկալեալք ի մոյց և ի զինւոյ: Յետ ջրհեղեղին հրամայեալ՝  
կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ. յետ ջրհեղեղին արբ  
գինի Նոյ, վասն որոյ և անփորձ իրացն եղելոյ՝ արբեալ եղեւ:  
Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ մի մնասցէ ոգի  
իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մար-  
մին. այսինքն մարմնասէլք և ոչ հոգիասէլք: Եւ նահապե-  
տացն արդարոցն անդէն և ի նոյն կալով անդ և վախճանե-  
ցան, անդ և տապանն շինեալ եղեւ և անհնարին չարեացն  
զեղեալ ի վերայ երկրի. և ի բողոքել արդարոցն յետ և ամի՝  
ապա Հրաման միայնոյ և ահաւորին Սստուծոյ<sup>1</sup> ասէ. «մուտ  
ի տապանն դու և որդիք քո և կանայք որդւոց քոց. զի ահա  
ևս հօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատա-  
կել զամենայն, յորում է շունչ կենդանի».—յայտ առնելով ի  
թիւ եօթանցն այլ ևս ներողութիւն:

Ո՞վ անծախելի բարերարութեանն Սստուծոյ. ով անհա-  
տական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասի յան-  
զգացեալսն:

Եւ յաւուր յայնմիկ եմուտ ի տապանն Նոյ և որդիք իւր,  
իին Նոյի և կանայք որդւոց նորա ընդ նմա:

Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի  
և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարեւոր բարե-  
կամօք, որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. քանզի յետ  
ջրհեղեղին ոչ երևի լինել դարձեալ որդիս նահապետին. իսկ

1 Ի Հին օր. չեք՝ Աստուծոյ:

աշխարհն վերին Հնդկաց ասի լինել դստեր նորա: Օռոր Եւս-սեբի Ահսալացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց: Այլ և վառն դործակցաց տապանին դիպողագոյնսէ ասել. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. որ և զՊահաբ պոռնիկն առ ժամեայ բարեմտութեամբն յերիքովական բարկութենէն ապրեցոյց իւրովք ազգականոքն, և զՊարաւոնացին ի Քանանացւոյն սատակմանէ: Այնքան խնամոցն արժանէ՝ զի և զվրէժ արհան նոցա առնուլ ի տանէն Աւաւուզայ: Եւ զի ասէ զի՞՝ ոգիք իբրև ութ՝ երկրայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամանն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղին փրկեալք: Նա և յութիցն մտելոց ի տապանն ոչ ամենեքին ընտիրք երևեցան, այլ ի ձեռն արդարոյն և նուազունքն ապրեցան:

Իսկ Փիլոն ասէ՝ զօսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Աէմայ եղ ի տապանի անդ. զոր յիտ սակաւու մից երկրորդեցից զառ ի նմանէն:

Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա, ասէ, զտապանն:

Ո՞վ աշագնասաստ բարկութեան<sup>1</sup> հրաման նորին օրհասին. ով աշեղական ձայնիցն և սասանման հաստատութեան երկնի և երկրի: Օք թէ միոյ փայլատակման ընթացք և Շայթումն<sup>2</sup> ամսոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանքաց և յանդնդաքակ վրովվմանցն հոսելոց, նախ քան ըզ-ջրհեղեղ ջուրց սատակումն: Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել և համատարած ջրովն զրաւառնել համօրէն ամենայն շնչաւոր կենդանեաց՝ զտարի մի ող-ջոյն մնալ յապականութեան երկրի. և յիտ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն

1 Ի հին. օր. չէք՝ բարկութեան:

2 Այլ օր.՝ ճայի՛՛մունք:

յարևելեայն ի միջոց աշխարհի՝ հանգեստ ի լերինս Կորդուաց, և նահապեսն ողջակէզս գոհութեան Աստուծոյ մատուցանէր. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել մարդկան, ուխտ յաւիտինական<sup>1</sup> հաստատեալ՝ վաղեղն իմ եղից յամպս, որ է ծիածանդ, զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ գօտի Արամազդայ: Խսկ եթէ Ի՞շլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիանրդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւլմէ խաշիցի հրամանաւ<sup>2</sup> Ի՞շլայ. զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամելս այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երեխել այլ է արդարեւ նշոյլք արեգական, սեռն օդով ծածկեալ ի վերայ խիտ և խոծ ամպոց խոնաւագունից, զոր ի սկզբանց ոչ եղեալ՝ Նոյիւ ասի լինել:

Եւ յիտ այնորիկ ի բազմանալ որդւոց մարդկան՝ յերիս մասունս և զերկիր բաժանեալ ըստ ասացելում Հերոտողեայն<sup>3</sup>, զոր ասէ մի ըստ միոջէ մեծն Խպիփանոս: Այլ և զՓիլնեայսն ասացաք երկրորդել զառն քաջի և զյոյժ հմատագունի իմաստասիրութեան, որ յիտոյ և հետեւող սուրբ առաքելոցն եղեալ բազում ուստունս ի հնոց հրեականաց նպաստաւորեաց եկեղեցւոյ գեղեցիկ օրինակօք, որպէս ուսուցանէ գիրք Խւսերի Խեսարացւոյ: Զոր ի մեկնութեան Խրլայականացն անուանց ասէ Փիլոն, զոսկերսն Խդամայ բարձեալ Աէմայ զրաստու՝ տարաւ յերկիր ժառանգութեան իւրոյ, և հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէլ և զգրաստն: Աստ զիպուածոցն եղելոց և զանունն ասացեալ տեղի մորոյ, զոր բարբառն երլայական իբր ծեփելով իմն զբանն՝ թուեցուցանէ իմն ասելով Խւալրշմլիմ, այսինքն Խրուսաղէմ, որ նոյն ինքն թարգմանի՝ մնուրս կատարեցաւ:

Խսկ տեղի շիրմին յորում նախահօրն եղան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ երլայականին, երկակի անուամբ. զոր յափշտակեալ ի Աէմայ որդւոցն Վամայ՝ շինեցաւ քաղաք նովիմբ անուամբ.

1 Հին օր՝ հատուցանել երկրի ուխտի յաւիտենից:

2 Այլ օր՝ հրամանով:

3 Հին օր՝ Հերոտոգեայցն:

վասն որոյ և աստուածայնոցն առ Առօքսէսիւ հրամայեալ՝  
առնուլ վրէժինդրութեամբ ազգացն Քանանացւոց զառ ի  
նահապետէն կարգեալ սահման զոր և Դաւիթ գոհաբանէ,  
յիշեաց յաւիտենից զուկտ իւր և զբանն զոր պատուիրեաց՝  
մինչև ի հազար ամ։ Եւ յիտ սակաւու միոյ ասէ, «Ճեղ տաց  
զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ» քանզի  
Քամայ տուաւ ի հօրէն Եզիդիստոս և Լիրէաստան և մինչև  
յարեմուտս հարաւոյ։ Եւ Յարէթի Եւրոպն ամենայն Ճամ-  
ման լիռնէ մինչև ի մուտս հիւսիսոյ։ Խոկ Ահմայ՝ Սորեստա-  
նեայքն համօրէն լայնութեամբ մինչև ի կողմանս արևելից։

Եւ եկաց Նոյ յիտ ջրհեղեղին առ որդւովքն ամն յժ մինչև  
ի հդ ամն Երերայ, գկամա Նաստուծոյ և զօրէնս բնութեան  
ցուցանել ազգաց եկելոց որ յիտ իւր։ Զոր մեք սակաւուք  
այժմ յիշատակեալ զազգաբանութիւն բնաւին մարդկութեան  
ի նահապետացն առաջնոցն։ և մանաւանդ զի հարկ փութոյ  
եղեւ մեզ գիտել զպայազառութիւնս երանաց տիրեցելոց մեր<sup>1</sup>  
աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Սորեստա-  
նեայց, որդի ի հօրէ առեալ մինչև ի Ահնեքարիմ արքայ, որ  
առ Եզեկիայիւ Երուսաղէմի ալքայիւ եղեալ ազգապետ տանս  
Երծրունի։ Եւ են ի թուել մինչև ցայս վայր այսոքիկ։ Նղամ,  
Ահմ, Ենովս, Կայիհանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովը, Մա-  
թուսաղայ, Դամէք, Նոյ, Քամ, Քուշ, Ներլովթ որս և  
Բէլ։ Եւ առ այսոսիկ այժմ բաւականապէս ասացաւ։

## ԳԼՈՒԽ Բ.

Վասն Բէլայ և Բաբելոնաց-ոցն և նոցին առասպէլաբանա-ընեանցն։

Քահպէտ և ոչ ինչ նպաստաւորութիւն առաջիկայ տեսու-  
թեանս ունին հետազայից ցոյցք որ վասն Բէլայ և նոցուն  
խոկ Քաղդէացւոց դիւցազնական զառանցութեանցն՝ այլ և

<sup>1</sup> Հին օր.՝ Թրոց։

ոչ զծիծաղականս նոցա համբաւեալ քաջութիւն, որպէս կարծին՝ առանց եպերանաց անցից զինլագարութեամբն։ Քանզի ասեն սկիզբն աստուծոց՝ զինն ոմն Ի՞ելոս, հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ՝ Ֆէ բիւր ամաց աւուրս ունել և ևս յառաջ. ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բարելոնի բազում զգուշութեամբ. զոր մեք գիտեմք յետ ջրհեղեղին եղեալ գիր:

Իսկ այլք զկոռնոտդ ոմն անուն՝ լինել հայր Արամազդայ, ևս մօտաւոր ժամանակով, որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և գնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Արամարացւոց քաղաքին։ Խւ այլք յայլ ինչ բազում յածմունս անկեռլ ցնդին ժամանակաւ և իրօք. զոր և մեք ոչ ընդդիմակս առ ի լուծումն առասպելեաց նոցա հարկաւորիմք արժանաւորս զրել։ Իսկ Ներկովթ որդի Քուշայ որ ի Դամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զառաջինս ուրուականաց լինել, այլ և ոչ Ներակի որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որով և զԾրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ, քանզի նա խարկանօք առն մոզի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոր Իսկ սա ասաց զինքն Հնագունիցն լինել անժամանակ Ի՞էլ՝ ոչ հայր աստուծոյ, այլ և հրամանատու Արամազդայ։ Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխազրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս<sup>1</sup>, նոյնպէս և զանուանս նահապետացն կեղակարծութեսմբք այլաբանել. յօրացեալ և ապաստանեալ ի յոյժ բազի և ի յաղթանդամութիւն<sup>2</sup> հասակի, քանզի ասեն զբարձրութիւն նորա լինել վաթսուն կանգուն. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բարելացին պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. զոր և

1 Հին օր՝ սոսս։

2 Հին օր՝ ի յաղթամբամութիւն։

անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Իարելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոց ծշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: Որ յիտ բազում ժամանակի ծափը պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Իէլայ: Որպէս և Յօնք երիմն համբաւեցին՝ Ներակղէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր. զծանականաց և զամօթալիաց իրս՝ քաջութեան ասել՝ ըստ այսմ զարմանալիք և Իարելացւոցն Իէլայ ասացաւ, երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Իէլայ. վասն որոյ պարծանօք իմն խեղալից սրտիւ ասէ թագաւորն Դանիելի, գու ընդէր ոչ երկիր պազանս Իէլայ, եթէ ոչ տեսանես որչափ ուտէ և ըմպէ:

Ո՞վ Իարելացի կոյր՝ ունելով խելապատակ ցնդեալ ի մկանց և ի խլզից. եթէ ոչ այլ ինչ յակն ունելեաց բարւոյ ունիցիս ասել զի՞նչ ինչ բարգաւաճանք քեզ լրութիւն անյագ որովայնին Իէլայ իցէ: Ո՞վ յիմարութեան առաջնոցն. որպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. որով ժամ և դէպ իսկ է, առ յայնժամ զարքանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցն Իէլայ՝ ոչ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Իարելացւոցն ըստ կարծեաց նոցա: Ապառնայ և աստուածային դատաստանն Երեմիայիւ, ցաւուր յայնմիկ խնդրեցից զվրէժս ի Իէլայ ի Իարելոն, և հանից զոր եկուլն՝ ի բերանոյ նորան: Դանիքի առաջնոցն ուրուականք և սառուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգիշահ նահապետացն:

Խսկ Ներլովիթ ինքնաղիմաբար ասաց զինքն աստուած, և թագաւորեալ ի Իարելոնի սաստիկ զօրութեամբ՝ առնէր և նշանս կախարդութեամբ և առ աչօք մինչև ի զարմացումն ա-

մենեցուն: Խու տիրեաց ամենայն ազգաց որ ի նկաքը երկնից. և ետ հրաման աշխւ մեծաւ՝ ամենայն ուրեմ կանգնել զպատկեր իւր և երկիր պատանել իրբ և աստուծոյ և զոհս մատուցանել որ և սկիզբն պատկերապաշտութեան եղեւ: Ոչ կարծողական ինչ ըստ առաջնոցն Ի՞էլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երեւելոց, երազականաց և խարերայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն, զոր սովորութիւն թէ առցէ ոք արդեօք ասել ի վերայ Փաղեգայ որդւոյ Խըրեայ և կամ Եռանայ որդւոյ Թարայի: Քանզի սոքայառ քան զհարս իւրեանց ասին վախճանեալ. և հարքն ի գութ խանդաղատանաց զպատկելս որդւոց նկարեցին, ըստ ասացելումն ի Սողոմօնէ, եթէ «Հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր»:

Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական<sup>1</sup> թագաւորաց ի պատիւ, առ այսուիկ և ի պաշտօնս դից յարեցան՝ դիպողագոյնս և զայսոսիկ է ասել ըստ օրինակին Ի՞էլայ, որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յիրկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. և կանխավազ ցըրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտիւնս. միմիայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Խըրայեցւոցն ասի նահապետ Խըրեր որդի Աղայի, որ ոչ հաւանեցաւ մտանել յանմիտ խորհուրդ շենութեան աշտարակին. և աստի զիտելի է մեզ բարբառն առաջին Խըրայեցի լեալ:

Այլ անժամանակն Ի՞էլ ծախի ժամանակաւ, նշկահեալ ի նայկայ որդւոյ Թորդոմայ, որ ի տանէ Յարեթի, որով քամահէ զորսորդականն Քամայ, անարդէ ասելով, «ոչ միայն զեշես աստուած՝ այլ շուն դու, և երամակ շանց՝ որ զինի քո տողեալ սահին»:

Եստանօր ի դէպ ելանէ մարդարէախառն օրհնութիւնք մեծի նահապետին և աշխարհահօրն<sup>2</sup>՝ Խոյի յասելն՝ ընդար-

1 Այլ օր՝ բարբարոսաց:

2 Հին օր՝ աշխարհօրն:

ձակեսցէ Աստուած Յարեթի, և բնակեսցէ ի տան Ահմայ:  
Քանզի Եսիականք արևելքց Ահմայ լեալ վիճակ՝ խոյս տու-  
եալ Հայկայ գայ հատուածեալ ի Ի՞շլայ ի Ի՞արելոնէ յարևելս  
Եսիական. և Ներլովթայ յանդուգն զօրութեամբ հետամտեալ<sup>1</sup>  
հրոսակաւ մեռանի ի Հայկայ, հարեալ նեաիւ, զոր ոմանք ի  
պատմազրաց ասեն՝ փախստեամբ դարձեալ գնաց յՆաորեստան:  
Եւ այսոքիկ վայրապար բանք. զի լայնագոյնս ևս վասն  
այսորիկ պատմէ մեծ քերթողն Մովսէս, և զօրինակ մահու-  
նորա, և որպէս զմռեալ զի նորա բարձաւ ի գաւառն Հար-  
քայ ի տեսիլ բազմաց: Եւ ժամանակ բռնակալութեան նորա  
են ամք է՛, զոր ոմանք ի պատմազրաց ասեն Հայր սորա  
զՄեստրիմ, որ կոչի Մեծրայիմ, այսինքն Եղիպտոս, վասն  
ժառանգութեան սահմանաց Եղիպտոսի. քանզի Եթովպացի  
իսկ ասի Քուշ որդի Քամայ, զոր գիրք Երարածոցն Հայր  
Ներլովթայ ասեն, և Եթովպիայ է մասն Եղիպտոսի և  
ամենայն Երէաստանեայց:

Իսկ ըստ պատմազրաց՝ կարգ ծննդարանութեանդ ունի  
զայս օրինակ. Քամ ծնանի զՎուշ Քուշ ծնանի զՄեստրիմ:  
իսկ զիրք Երարածոցն ասեն զՆերլովթ. այլ ըստ պատմա-  
զրացն Մեստրիմ ծնանի զՆերլովթ, Ներլովթ ծնանի զԻար,  
Իար ծնանի զՄեստրիս, Մներիս ծնանի զԵրբէլ, Երբէլ ծնանի  
զԻայաղ. Քայաղ ծնանի զմիւս Երբէլ, Երբէլ ծնանի զՆի-  
նոս զայրն Համիրամայ: Եւ զի ասեն զՆինոս թագաւորեալ  
յետ Ի՞շլայ՝ անփոյթ զայզքանեօք արարեալ զի ի մատեանս  
առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս  
քաջաց զրիլ և ոչ վատաց. այլ և նկարագիրս ոմանս պատ-  
կերաց զպատկեր քաջաց արականս և շքեղաւորս կենդանա-  
գլիլ: Իսկ զվատացն և զնուազագունիցն՝ լոյծս և կանացիս<sup>2</sup>,  
և միայն վերնազրութեամբ և եթ նշանակեալս:

1 Այլ օր՝ զհետ մոռեալ

2 Այլ օր՝ և կանանցիս:

## ԳԼՈՒԽ Գ.

Առան Ասորիստանէաց նախառողբանէւանն. և նէ ո՞րդէս Օքա-  
ռալը և Մանենոր կացեալ գլխառոք աղեծլից կողման, և ճշոք  
ուսմանց նոցա:

**Ճ**յութք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջադոյն  
ասացաք, որ յաւուրց անտի Իւկայ մինչև ի ‘Նինոս’ երեկիք  
ինչ և նշանաւուրք ի մատենիցն առաջնոցն ոչ երեխ, թերես  
ի բազում իսպանմանց: ‘Նախ զի և լիզուքն շփոթեալք՝ ու-  
նէին զանմիարանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք  
քաջաց հարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղ-  
դէացոց. դարձեալ զի թէ և գրեցաւ ևս՝ պյլ քաջութիւնք  
արութեանն Նինոսի, ըստ օրինակի Իւկայ, առաւել ամբարձաւ  
անձնասէր ամբարտաւանութեամբ՝ զինքն գոլ ասել սկիզբն քա-  
ջաց և թագաւոր առաջին, զի և զմատեանս առաջնոցն մե-  
ծասասա ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այլել զի  
և հետք ևս յիշատակի պյլոց անուանեաց մի երեսցի, բայց  
ինքեան միայնոյ: Քանզի և սա ասի թագաւորեալ ամենայն  
Նսիաստանի և Լիբէաստանի, բայց միայն ի Նորկաց. որ և  
զ’ Նինուէ քաղաք առաջին ալքունեաց շինեալ յԵսուրայ, զոր  
աւերեացն Ներլովթ՝ սա վերստին շինեաց ի պատիւ անուան  
իւրոյ: Եւ զ’ Օքաղաշտ մոգ արթայ Իւկտրիացոց և Մե-  
դաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խիփտաղաց,  
հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժատատանի և կողմանց արե-  
ւելիք և Պարսից, անդր ևս քան զ’ աշխ և զ’ ապուհան, ի  
Դովմայիդ և ի Գուզբան, ի Ծերիբամամական և ի Խոճի-  
հրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Նորկաց՝ յոյժ  
արութեամբ և քաջութեամբ վանեաց ամս ծբ. և ի վախճա-  
նեն իւրում, քանզի էին որդիք նորա յոյժ մանկագոյնք՝ ետ  
զիշխանութիւնն կնոջն իւրում Համբրամայ, որ և նա քա-  
ջագոյն ևս տիրեաց ամենայնի, որոց և ‘Նինոս, և զ’ արելոն  
պարսպօք ամրացոյց և զհակառակութիւն Օքաղաշտին հնա-  
գանդեալ ընդ իւրով ձեռամբն նուաճեաց ի ծառայութիւն:

Եւ քանզի վավաշոտ մոլորութեամբ վարելով ոչինչ՝ փոյթ զորդւոց իւրոց առնէր՝ ամենածախ գանձիւք առատաձեռն պատուով հոմանեաց և եթ ունելով ուշ՝ կացըց զ. Օքադաշտն ի վերակացութիւն Իաբելոնի և Խուժաստանի և ամենայն արևելեաց Պարսից. և ինքն գնացեալ յՆսորեստանէ յերկիր Հայոց, ի տոփանս համբաւուց ուրումն Հայկազնոյ: Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յօյժ արժանաւոլք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Օքադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ գնմանէ՝ այս ամենայն գտանի յայլոց ասացեալ. որ տիրեաց ամս իբ, Եւ առեալ զիշխանութիւն Օամեայ որդի նորա, որ յանուն հօրն իւրոց կոչեցաւ Նիմուաս. որ տիրեաց Եսորեստանի, այլ և ի ժամանակս ինչ Հայոց, ոչ ինչ փոյթ զբազմացուցանելով՝ հեշտասէր և անպատերազմասէր մտօք վարելով կեսյր ի խաղաղութեան:

Իսկ զկողմանս արեւելեց Պարս այնքան ունելով Օքադաշտին՝ յայնմ հետէ ոչ երբէք հարկէր Եսորեստանեայց. նա և պախարակելով զԲէլայն և զայլոց զիւցավանց, իբրև զկարի իմն հնագունից և զանյայտից զինքեանս ասաց նոր առասպելութիւն. միանդամայն և միահազոյն որոշել զՊարս և Մարս ի Իաբելացւոց, զի ուսմամբ և անուամբ մի ևս ասիցի ունել հազորդութիւն ընդ Եսորեստանեայս: Եւ այսպէս զառածանէր, զԱէմ որդի Նոյի ասել նոր Օքուան, որ և սկիզբն աստուածոց: Սա ցանկացաւ լինել ասէ, հայր Որմզդի և ասէ՝ իցէ՛ եթէ լինէր իմ որդի Որմզդ անուն, որ արասցէ՛ զերկինս և զերկիր. և յզացաւ Օքուանն երկուորիս. իսկ խարդախն ի նոցանէ ստիպեալ նախաժաման եկն յառաջ: Եւ հարցեալ Օքուանն, ով ևս դու՛ ասէ. ևս ևմ որդին քո Որմզդ. և նա ասէ. որդին իմ Որմզդ լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր: Երբև կարի թախանձեաց՝ իտ նմա իշխանութիւն հազար ամ: Յետ հազար ամի ապա ծնաւ Որմզդ, և ասաց ցեղայլն. հաղար ամ

անսացեալ իմ քեզը արդ դու ինձ անսա: Եւ գիտացեալ  
Երշմին զյետարկելն իւր՝ ին՛ուեալ ստամբակեաց Ումզղի,  
հակառակ աստուած լինելով: Ումզղ արար զլցյա, Երշմ  
արար զիւաւար. նա արար զկեանս, սա արար զմահ. նա արար  
զհուր, սա արար զջուր, նա արար զբարի, սա արար զչար,  
և զի մի մի ըստ միոջէ ասացից, այլ համանդամայն ամենայն  
բարիքս Ումզղի է և լաւք, և չաղք և դեք՝ հարամանւոյն:  
Երդ ով ոք արժանի յոյժ ծաղու զբանք ուսմանս այսորիիկ  
համարեսցի. ով ասասցէ յիմար արքային Օրադաշտի՝ ասա  
ձրավաստակ աստուծոյդ քո Ումզղի չաշխատել տարապարտ.  
գուցէ ներհակդ առ ընթեր կալով՝ ի միում ժամու բարկա-  
ցեալ և զքեզ ևս վարատիցէ:

Դարձեալ ասէ նշյն յիմար Օրադաշտ, եթէ դէպ եղե  
լինել պատերազմ Ումզղի ընդ հարամանւոյն. և ի սաստիկ  
տովոյն ելեալ Ումզղի յածէր ընդ վայրս ի ինդիր կերակրոց.  
և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարիեալ մեկուսի յազեաց  
զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն, զի տարցի  
անյայտաբար զգողաւան առ իւր և լցցէ զսովառնութիւն  
իւր: Եւ եկեալ երեկոյին ինդալից՝ ակն ունէր առնուլ  
կերակրովն, եղիտ ապականեալ և գիշակեր. զի մողեաք և կովի-  
դայք, քարաթաթօշք և բնդուունք ի վերայ եկեալ կերան զորս  
նորա: Երդ յայսմ հետէ ըստ նեպուկի<sup>1</sup> գեազնն կապճահամար  
ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն.  
զի սոքա վնասակարիք առ աստուծոյն եղին: Դազում և այլ  
ինչ զառանցականս բարբանջանաց օրինադրեաց: Եւ զայսոսիկ  
ոչ վայրապար ինչ եհաս մեզ զրել այլ զի բազում նեղու-  
թիւն և սուր, ի ձեռն այսր սատանայական ուսման՝ սպա-  
ռեալ կործանեաց զերկիրս այոյց, որպէս և ցուցանէ քեզ  
պատմութիւնք սրբոց Վարդանանց, զորս զրեաց երանելի  
քահանայն Եղիշէ: Օոր և այժմ իսկ դեռ ունին զսոյն ասել  
որդիք հրապաշտիցն:

Իսկ Մանիթոպ արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով  
զայսոսիկ հաստատէ. ոչ ասել զհուր արարած Ումզղի, այլ

քնութիւն Որմզդի, և Նեփեսառս և Պոռմիթոս, որ է արեգակն և լուսին՝ գրղացան զհուրին յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. և երկիր պանդոկի սպանդարամետ աստածոյ է, ոչ ստեղծեալ<sup>1</sup> յումեքէ, այլ որպէս երեխոց՝ նոյնալէս էր, և կայ մնայ, և զմարդ ինքնածին:

Օայս և ես իսկ տեղեկացեալ գիտացի ի բազմաց, յայնցանէ որ Ծախրիքն կոչին. որոց դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի յԽպղաստան աշխարհէ, որք անուանէին զինքեանն համակդէնս, այսինքն ամենագէտ ի հաւատ կրակի, և գոյն իսկ ասէին զայսոսիկ այլովք զազիր չարեօք: Եւ զնախնին մեր Էպամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Ծուռելայ, արրոտաբոյծ ուղտուց, զզուեալ յանձանօթ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղել կնաւ իւրով ի միջոց երկրի, և այսրէն եկեալ ցեղապետ մեր եղեւ: Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ուր ուրկը ասէք լինել զերկիրն զայն անծանօթ. և նոքա ասեն. զեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չեք բնակութիւն մարդկանո.—զոր և ես գիտեմ յաշխարհազբութեանց անտի Պալոմեայ՝ զինմաւոն լիտան յարեհիս, որ արդարե բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց, հազեւ ուրկը ակնակառոյց աչօք նկատել զկատար լերինն, իրբ թէ մերձ առ երկնիւքն իցէ.—Եւ ասէին այնոքիկ զորոց և բանս է, եթէ ոփ մասն ինչ լերինն յայնմիկ հասեալք բազումք ի մերոց՝ տեսանեն զկողմանս արեելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայտակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երեմամբ, և ի տունջեան ամպ թանձրախոծ իրբեւ զթաղ լմեալ բալաձեւ սպիտակափայլ յոյժ. զայնմանէ ասէին՝ երկիր օտար անծանօթ: Եւ ես զայլովք հայեցեալ բանիւք քամահեալ՝ ուժգնակի կարծիք ի միտս իմ ընթացան առ ի հաւատ ասացելոցս վերջնոյ, թերեւս և այն իցէ երկիր բնակութեան առաջին մարդոյն. քանզի արդարե զբալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ

1 Հին օր.՝ աստուած է, որ ստեղծեալ

երկուց աշխարհաց, որպէս որք զՅովրեգինին համբաւեն. այլ և ոչ տարարարձական, որպէս և արդ ևս ոմանկը կարծեն, ոչ զիտելով զասացեալսն ի Տեառնէ աւագակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին. Օոր և Նղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Աղըմափաթայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հատանել. և անծանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ ոուզականութիւնս յանկարծօրէնս լինել, որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահրտութիւն: Խւ ոչ արմատոյն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներեսոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. որք և ի մերձենալն անգամ՝ տանջեալ լինեին յաներեւոյթ զօրութիւնէն, զոր ես ոչ հաւանիմ ասել ի դիւաց: «և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէպք, և զհարուածն եկեալս ի վիրայ թիկանցն տեսանէպք, բայց գտանջողն ոչ տեսանէպք: Եւյլ ձայն. իմն քայլ՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թէ ոչ եղեցի անձն այն մեռեալ; և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: Խւ ահարեկ երկիւզիւ ի բաց կացաք յայնմանէու ՚նա և զայլ հիացականսն որ ըստ այսոցիկ ուսցիս ի նորից գրոց. և յետ սակաւու միոյ ասէր, «բազում անգամ աղաւեցին զիս բարեկամքն դառնալ, և ես ոչ կամեցայ, քանզի կամէի տեսանել գկատարած երկրի. և անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ գնացաք ի ծովակողմն կոյս, և ոչ ևս այնուհետեւ ինչ ոչ տեսանէպք, ոչ հաւ և ոչ գազան, բայց զերկին և զերկիր: Խւ զարեգակն ևս ոչ տեսանէպք, այլ ընդ աղօտ օդ յաւուրս ծ, և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եղեալ մտանէպք ի նաւսն, և նաւէպք ի կղզի մի ծովուն, որ ոչ էր հեռի յերկրէ, յորմէ լսէպք խօսս մարդկան հեղինական, և որք խօսէինն ոչ տեսանէպք: Խւ զինուորք ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ ի զոյզս անցանել ի նաւէն ի կղզին. և խեցգետի մի ել, կորզեալ ձգեաց ի ջուրն զինուորս ծոյ: Խւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք, և եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր

Երջանկացն վայր՝ Աաղղեսթենէս իմ բարեկամ խրատ ետ ինձ  
մտանել հանդերձ բարեկամք չ, և մանկամք ճ, և զինուորօք  
ում միայնովք։ Խւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ  
մատակ, որ ունի յաւանակ. զորոյ կապեցաք անդէն գյաւա-  
նակն ի բանակին. և ի մտանելն մերում լարօք հնդետասան՝  
հաւք երկու պատահեցին մեզ, որ ունէին մարդկեղէն երեսս,  
և մեն էին քան զհաւսն որ առ մեղ լինին, և հելմնական  
խօսիւք ի բարձանց աղաղակեցին, «զի՞ զվայր կոխես զաս-  
ատուծոյ զտուն տեսանել, Շողէքանդրէ. ընդ կրունկն դարձիր,  
«թշոււառական, քանզի զիրջանիկ կամարաբացն<sup>1</sup> կղզիս կոխել  
տչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանատ» Խւ իբրև լուայ  
զայս՝<sup>2</sup> դոզդոջումն և սարսափումն զիս կարեալ յահէ յերկիւղէն  
եկիլոյ. ի հարկէ լուայ աստուծայնոյ պքանչելի ձայնին որ ի  
հաւունն ասացեալ եղեւ. — և զիպողազոյնն է առ այս Հրեշ-  
տակս զայնս ասել. քանզի բանականն յիրիս այսոսիկ տեսանի,  
ի հրեշտակս, ի մարդիկ և ի դես. այլ ոչ ի հաւս կամ ի  
յայլ կենդանիս. — «Խսկ սահմանք վայրիցն ահաւոլք և զդալիք  
միանդամայն և արտաքոյ զգալեաց. ի խնամոտ և ի զգուշա-  
ցուցիւ աներեւութականացն պահպանեալ ըստ օրինակի ցանկոյ  
ամրագունի, որ ունիցի արմատս ինչ ինքնաբոյսս և սակա-  
ւախնամն, առ արտաքոյ պարսպեալ բուրաստանին ալքունի  
կացցէ։ Վյսպիսիք իմն ինձ թուեցեալ համարեցան այնոքիկ  
վայրք. այլոց որպէս կամք իցենա։ Խւ մեք զայլս ի բանիցն  
առասպելականաց և որ անպատճառ սոյն է ասացեալ ըստ  
նոցայցն արժանաբանութեանց առ ի յերջումն առցուք. զոր  
աւանդեցին խաւարայած արեւելականքն, Օրադաշտ և Մա-  
նիթոպ իւրեանց հաւանելոցն, որք ասեն, զնեփեստեայ դողա-  
նալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան չնորհել և զյու-  
լովն ինքնան ունել, և զնեփեստեա ասեն կաղ յերկոցունց  
ոտիցն, և կայծակնավարս ունի ի ձեռնն աքցանս և կռանս,  
և նստեալ դարբնէ մարդկան։ Վրդ եթէ զիէսն Որմղդի գո-  
ղացաւ կազն, և նա ոչ գիտաց, զիարդ իցէ աստուած կիսա-  
կտուրն և ի կաղէն գողացեալն։ Դարձեալ զի երկիրպագէ

Հրոյ, և ոչ արեգական որ է Նեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիանդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի։ Եյլ և զհուրն, զիանդ մասն աստուծոյ ոչ ամաշխն ասել, որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շըջագայութենէ սայլիցն բազում անդամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին։ Խա և ջուր մաքուր յապակի զուտ և վժիտ արկեալ, ի տապ արեգականն գնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողյ անտի արեւակէզ եղեալ տոշորի նիւթն։ Խւ արդ զի այսոքիկ այսպէս իցին՝ որպիսի ինչ առ մոխրապաշտան առ այնս իմանալի է, որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ<sup>1</sup> ըստ գրեցելումն, և կորուստն նոցա ոչ նիրհեցէ։ Խւ թերեւ զանդիտութեան ոք ունիցի ասել զպատճառ. այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝ «Ճանան զԼստուած, և ոչ իբր զԼստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդս խւկեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա. զանձինս առ իմաստունս ունէին յիմարեցան. և փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն գոյիցս եղծանելեացս։ Խւ զյաճախութիւն ամբաստանութեանն ունի բողոք, թէ նախ զընութեան օրէնս անարգեալ, և յերեսացն Աստուծոյ անկեալք եղննս Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ զիտել, և ապա յերեելիացս աստի զՃարտարապետն սոցա իմանալ. «զի անկրեսյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցին ամենեին տալ պատասխանի։ Խւ թէ որպէս զիտելի զայս. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ ամենսյն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. քանզի ոչ եթէ մարմին ինքնաշարժ է, այլ հոգին է ինքնաշարժ. արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյն-

<sup>1</sup> Եյլ օր.՝ ի բնէ անտի ոչ դատարկանայ։

պիսիք. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա  
ուրեմն է ոմն, որ շարժէ զերկնային մարմինն. Եւ վասն զի  
մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միոցէ ումեմնէ  
է և ոչ ի բազմաց. զի թէ ի բազմաց էր՝ այլայլակ և շփո-  
թեալ լինէր ի բազմաց շարժումն և ոչ կարգաւորաբար Եւ  
վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն զնա՝  
անբաւ զօրութիւն ունի. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝  
ոչ հանդուրժեր անդադար շարժել զերկնային մարմինն. ուստի  
յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրու-  
թիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւո-  
րաբար. և յայսմանէ յայտ է թէ անեղ է. զի եղեալն՝ ի նիւ-  
թոյ և ի տեսակէ է, որ ի նիւթոյ է՝ ոչ է անմարմին, և ոչ  
անբաւ զօրութիւն ունի: Խսկ նա անեղ է և անբաւ, և ոչ  
յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անա-  
պական՝ նոյն և մշտնջենաւոր. իսկ մշտնջենաւորն՝ է անսկիզբն  
և անվախճան: Նաև ուրեմն յայտ է ըստ ասացելոցս, եթէ  
որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն  
ունի և անմարմին է և անեղ է և անապական, և ինքն ոչ  
յումեքէ, և այլք. ամենիքեանք նովաւ. իսկ այսոքիկ ոչ այլ  
ումեք արարածոցս պատշաճն, բայց միայն միոյ Աստուծոյ,  
և նա է Երարիչ Եւ այսոքիկ իմաստնագոյն գիւտք. իսկ մեք  
աստուածեղէն զրոց հետեւեալք՝ ոչ յօտարաց աստի հաստա-  
տեմք զՃշմարտութիւն, ոն անդր. այլ ըստ օրինակի ասացե-  
լումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաք-  
նոցն, զՃարագ մեռելուույ տանել ի գործ ինչ արտաքին, այլ  
ոչ թէ ի կերակուր:

### ԳԼՈՒԽ Դ.

Ե՞րեւ ո՛րովէ՛ իսրաֆ ըստ իսրաֆի էկաց Յագուարութիւնն Ասորեստա-  
նեայց մինչև ի Ալ-բաս Պարսիկ:

Հնաբանաբար իսկ հետեւեալ մեր կարգի ազդաբանութեանս  
որ վասն առաջի կացելոցս մեզ փութոյ Ասորեստանեայց  
թագաւորութեանն, զոր պայազատեաց առաջին Օամեսոս,

որ և՝ Նինուաս, որդի Նինեայ և Ծամիրամայ, ի ծդ ամի կենաց Երրահամունահապետի, տիրեալ ամենայն Նսիաստանի և Հայոց: Որ և յիտ մահուանն Օվագաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս լը: և յիտ նորա Երիաս որդի իւր որ և չորսորդ ի Նինեայ՝ ամս լ այլ և ամենայն թագաւորլք Նսորեստանեայց որդի ի հօրէ առեալ զիշխանութիւն ունէին, ոչինչ արժանի յիշատակի ուրուք գործեալ. և ոչ ոք ի նոցանէ նոււազագոյն քան զ-ի ամ կալաւ զիշխանութիւն. զի անպատերազմասէր և խաղաղասէր բարք նոցա յամուր զգուշութեան պահէր զնոսա. քանզի ի ներքս նատելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և արք կանացիք: Խու արդ են<sup>1</sup> մի ըստ միոջէ թագաւորլք Նսորեստանեայց այսոքիկ, զորոց զանուանս և զժամանակս գլխաւորելով նշանակեցից փոքր ինչ որ և առ նոքիմբք եղեն:

Նինոս որդի Երբէելայ ի ցեղէն Քամայ ամս ծբ. սա վերստին կանգնեաց զթագաւորութիւնն ՝ Ներողայ<sup>2</sup>, որ ասաց զինքն Իէլ Ծամիրամ կին նորա ամս իբ. սա ելեալ ի Հայս պատերազմաւ արար ընդ իւրով ձեռամբ. սա դարձեալ միապետեաց զՊարսս. յիրորդ ամին եղեւ որդի աւետեաց Երրահամունահակ. ի վերջին ամի սորա եղեն Խսաւ և Յակոր, որ կոչին երկու նահապետք. . . . ի վերջին ամի սորա տիրեն Խզիպտացւոց հովիւքն . . . .<sup>3</sup>:

Ի սորա իւ ամին Թէսաղացւոց առաջին թագաւորեաց Ի-էղղոքոս ամս լը. ի սորա լը ամին համբաւեալ ջրհեղեղն Ովգէգայ: Իաղէոս ամս ծբ. ի սորա իւ ամին վախճանեալ Յակոր մարգարէանայ վասն հեթանոսաց կոչմանն: Նզտադաս, ամդ լի. առ սովաւ Պրոմիթէս այր իմաստուն երեւեցաւ: Մամիզոս ամս լ ի ծդ ամի սորա վախճանի Յովսէփ: Մաքաղիս ամս լ առ սովաւ Նսողաս<sup>4</sup> աստեղլագէտ երևեցաւ: Օվիերոս, ամս ի. ի սորա ծը ամին ծնանի Մովսէս մարգարէ: Մամիզոս միւս՝ ամս լ առ սովաւ այլ թագաւոր եկաց ի

1 Յամենայն օրինակս՝ արդէն:

2 Հին օր՝ Ներուայ:

3 Ի լուսանցն գրեալ էր պյուպէս.

«Անմզագրութիւն իընդրեմ, զի յօրէ-

նակն այնց էր գրեալ»:

3 Հին օր՝ Նզտաս:

Թեսաղեայ։ Ապարիթոս ամս ի. ի սորա ժ ամին գնացեալ  
Մովսէս յԵղիպտոսէ առաքինանայր յանապատին։ Ասկատա-  
ղէս ամս ի. ի սորա ը ամին եղև Մովսէս առաջնորդ և օ-  
րինադիր Նրէից։ Ամինէս ամս ի. ի սորա ը ամին Մովսէս  
մարգարէ վախճանի։

Ի ինի յԵղամայ մինչև յամս այս ՀԱՅ բատ Խօթանաս-  
նիցն թարգմանութեանն։

Ի կղոքոս ամս ի. առ սովաւ այլ բազում թագաւորք կացին  
ի տեղիս տեղիս։ Բաղեպարէս ամս ը առ սովաւ և Երդիացւոց  
թագաւոր նստաւ։ Դամրիթէս ամս լ. առ սովաւ Պիգասոսն  
երեհցաւ, զոր համբաւեն ձի թեւաւոր էր։ Օովսարէս ամս ի.  
առ սովաւ Դիրոնեսիայ զօրաժողովն ի վերայ Նոդկաց։ Դամպե-  
րէս ամս ը առ սովաւ թագաւորք բազումք կացին ի տեղիս տե-  
ղիս։ Պանիհաս ամս ի. առ սովաւ Տիւրոս քաղաք շինեցաւ։  
Սովսարմոս ամս ժ. ի սորա ը ամին Ներակղեայ նահատա-  
կութիւնքն եղեն։ Միթրէոս ամս ի. Մաւտանէս ամս լ. ի  
սորա ի ամին առաւ Խլիոն քաղաք ի յԵթենացւոց անտի,  
և Ամփիտնի եղեն իրքն առ սովաւ Տեսեսայ ամս ի. Ո-  
թինևս ամս ը Դիրիթիւղոս ամս . . .<sup>1</sup> առ այսու ժամանա-  
կաւ Դաւիթ թագաւորեաց յԵրուսաղէմ։ և թագաւորու-  
թիւնն Սորեստանեայց նուաղեալ՝ բոնակալք ոմանք կացին  
ի նոցանէ ի կողմանս Դամասկոսի Պաւոսթենէս ամս ի.  
Պերիտիադէս ամս ը Ափրատէս ամս ի. Ափրատանէս ամս ժ։  
Ակրապաղէս ամս ի. Թողթոս Կոնկողեոս<sup>2</sup>, որ կոչի Յունա-  
րէն Սարգանապաղոս՝ ամս ի. սա անառակութեամք զեղծ և  
ապական յիրս թագաւորութեանն եղեալ, որով տաղտկացեալ  
ի նմանէ բազմութիւն զօրացն՝ արարին լինել նմա պատերազ-  
մակուր ի Վարբակայ և ի Ծէղոսէ<sup>3</sup> Մարաց զօրագլինէ, մինչև  
անձամբ անձին արարեալ ի հուր սատակի։

Եւ են ժամանակք թագաւորութեանն Սորեստանեայց  
ի Ծէլայ և Նինեայ ամք ոյ. և Վարբակայ Մարի բարձեալ  
զիշանութիւնն Սորեստանեայց՝ զՊարոյր Նայկազնեաց ա-

<sup>1</sup> Դլւսանցն գրեալ էր այսպէս. «Ցայս  
տեղը այլ տարեհաշիւ մի պակաս էր»։

<sup>2</sup> Հին օր.՝ Կոնկողեոս  
3 Հին օր.՝ Բէղիսոսէ։

պահարկէ<sup>1</sup> ի հարկաբարձութենէ և թագապատիւ իշխանութեամբ մեծարիեալ՝ տայ զօր բազում յօքնականութիւն, և գարձեալ հաստատէ զթագաւորութիւնն այց. և զ՞էզէսիու՝ իշխան Իարելոնի կացուցեալ, ինքն զարքունիսն յայնմ հնտէ ի Մարս փոփոխէ, որ ձգեցաւ միշև յամն օդի. և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ծղը ասել: Եւ առ այսպիւք պատեհադրյնս իմն դտեալ իրեւ յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեացք և Քաղգեացիք, յազգէ թագաւորացն որ յառաջազդյն՝ հատուածեալք ի կողմանս Դամասկոսի և Նինուէի, զօր բազում գումարեալ՝ յետ էլ ամի անիշխանութեան Ասորեստանեացը ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Իարելոնի և ստորին Ասորեստ, որ կոչի Կումատապն, նորոգեն և զառաջին արքունիսն լքեալս ի Իէլայ, որ է տուն Աստորովայ. և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց ելեալ պատեհացմաւ պաշարեն զՄամարիա, և զի թագաւորութիւնն Երբայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանույ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթյոյ: Եւ յայնմհետէ վտանգի Եսրայէլ յԱսորեստանեաց: Եւ յետ նորա թագաւորէ Ասորեստանեաց Թագղաթիաղասար. սա ել ի վերայ Հրէատանի և զմեծ մասն ժողովրդեանն գերեաց յԱսորեստան..... Սաղմանասար. սա իսպառ գերեաց զտան<sup>2</sup>..... ցուցանելով ի լիրինս Մարաց և երարձ զթագաւորութիւնն. .... որ և տեեաց ամս ծո: Յետ նորա թագաւորէ եղբայր Անեքէրիմայ ..... ապէս մեռանի ի Մարութագրազդան, իբրեւ..... ունէր<sup>3</sup> զվեց ամիս, սպանաւ և նա ի միոջէ ումեմնէ, որում անուն էր Ներեզիրդ և թագաւոր էր. և յերշորդ ամի թագաւորութեան նորա, Անսկերիմոս զօրս բազումն գումարէր ի վերայ նորա<sup>4</sup>, և ձերբակալ արարեալ զնտ հանդերձ իւրովք բարեկամօքն՝ Իարելոնի կացուցանէր զորդի:

1 Հին օր՝ սպա ի հարկէ:

2 Ի ներքոյ հին օր. ունէր սպապէս. առաջ ամէն պակաս է»:

3 Եւսեբ. եր. 21:

4 Հին օր՝ զօր գումարէր ի վերայ նորա:

իւր գԱսորդանիս, և ինքն գնացեալ ի Միջազետս՝ հնագան-  
դեցուցանէր ինքեան քաջութեամբ զեմաթ.. և զԵլբաթ.. և  
զամենայն կողմանս Դամասկոսի և Աիշիկեայ և զայլ բա-  
զումն: Աւ յիւ այսոցիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց  
և Խրուսաղէմի՝ պաշարել զնա. և հրամանէ Խսուծոց սա-  
տակիցան զօրք նորա. և նա դարձաւ ի Նինուէ. և նենդ զոր-  
ծեալ նմա, վասն նախանձու թագաւորեցելոյ Սարդանի, եր-  
կու ևս որդիք նորա Նզրամելէք և Սանասար՝ սպանին զնա  
սրով, որ թագաւորեաց ամս ժը, և ինքեանք գնացին յարե-  
ւելս հիւսիսոյ որպէս ասացաւ ի վեր անդ:

Երդ են թագաւորք Սորբեստանիայց ի միւսմէ կողմանէն  
այսոքիկ. անիշխանութեան ամք իւ: Փուա ամս ժէ: Թագ-  
զաթփաղասար ամս իւ: Սաղմանասար ամս ժէ: Ներկղիքոս  
ամս դ: Սինէքէրիմոս ամս ժը: Որդին ամս ը: Սամօգէս ամս  
իս: Նորին եղբայրն ամս իս: Նաբուպաղսարս ամս ի: Նա-  
րուգոգոնոսոր ամս ժի: Նմիզմարուգամքս ամս ի: Ներիզզի-  
սարոս ամս դ: Նաբունէդոս ամս ժէ: Եյլ սա ի վեց ամին  
լքեալ ի Աիշրոսէ, և աստ անկեալ կննօք շրջէր մինչեւ իս-  
պառ բազմաւ թաղաւորութիւնն Սորբեստանիայց և Մա-  
րաց ի Աիշրոսէ որ թագաւոր<sup>1</sup>. . . . . :

## ԳԼՈՒԽ Ե.

Պատերազմ յուզեալ Սշդահակայ Մարաց թագաւորի  
ընդ մեծին Տիգրանայ Հայկացնոյ, որպէս ցուցանէն մեզ ա-  
ռաջինքն ի պատմագրացն. և այրուճի կազմեալ՝ գալ մտանել  
յաշխարհն Հայոց, առնել որպէս նիւթեաց զչարիսն: Եզդ  
եղեւ մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւնն Եշդահակայ.  
և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրավարաց արանց քա-  
ջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎարաց և զԵղուանից

1 Հին օր. այսպէս. «Այս ճառք վերջբն յօրինակն պակասեալ էր և. մք իսկ դի-  
տեմք»... «Ո՞վ սուրբ ընթերցող պատրաստ կացէր յայսմ վայրէ տեսր է շրջաց որ ի  
կարդաց վրդովիս ո'չ»:

և զՆյրարատեան գաղանամարտիկ անձոռնի գօրսն և զբոլոր բովանդակեալ գուևնգս զօրացն և զորդիսն Անհերելիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զՆշդահակայ դիմեցումն, զի մի քաջարտագոյն կարծիցի Մարն քան գայ-կազնեայն։ Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ<sup>1</sup>, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց, և անդու սակաւ վտանգ հասանէր Ծշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու։ Նա և բազմախոչեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելագօր մարտակ-ցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան և յամենայնի համանմանքն, միասիրտքն, քաջախոչեմքն և բազմադրուատքն։ Ի՞այց մինչ-դեռ չեւ առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յդէ Ծշդահակ պատարագս Կիւրոսի և խոստանայ տալ նմա զտէ-րութիւնն զըրլորդ մասն Անհերիմանցն զկողմամբքն Կիւ-նուէի և զՏմորիս ամրոցաւն որ ի նմա, և գայն ոչ միանգամ, այլ յոլովակի՝ մի զմիոյ ինի ընթացուցանէր դեսպանս հրո-վարտակօք և պատարագօք։ Զայս իմացեալ խորհրդականու-թիւն Քսելքսէս յՆդրամելեայ և Անասարայ յորդւոցն Անհերիմայ՝ ապա գան առ Տիգրան և այոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Ծշդահակ քանզի որդիքն Անհերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաշտմամբ ընդ Ծշդահակայն լինէին, յաղագս զոլ զնա սկրունդ Պարսկայ Մարի, որ երարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, Հաւուցն Անհերիմանց։

Յայնժամ առեալ հրովարտակ Անասարեանց ի Տիգրա-նայ՝ պատարագօք զնացին առ Կիւրոս. և առեալ զնա գան առ Տիգրան, և անյապաղ փութով զգործ պատերազմին վր-ձարեալ քաջք ընդ քաջս ելեալ յիսուստ կողմանէ աճա-պարեալ Քսելքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վա-րապանին Ծշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակաւ երիվա-րին արկեալ, և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ վազս առեալ մտին ընդ կողմն Մականայ։

Նիզակաւ ընդ սրտադուրսն՝ ի բաց կորզէր զթոքակէմն. և Ախւրոսի զհետ մտեալ զօրուն՝ ոչ սակաւ սատակմունս առնէր, մինչեւ միահաղոյն զօրսն Եշդահակայ վատնեալ տուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից<sup>1:</sup>

Իայց երկուք ոմանք ի զաւակէ Եշդահակայ ձերակալ արարեալ Տիգրանայ առեալ ածէ ի Նայս. և կացուցեալ զնոսա ի կարգի սարկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բագէս. և զինարբուն ի տեղի մատոռւակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ, և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Եղբագ, յետ բնակեցուցանելցն զնոսա ի Յողախել, ի Վանցունիս և ի Նախրամի, տեսեալ մինչեւ ի ժամանակս ինչ քանզի յառաջագոյն տուեար էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Եշդահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցաներով:

Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Արասիսեայց բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ զօրս բարդումն գումարեալ<sup>2</sup>, ելանել տալ պատերազմ ընդ Ախւրոսի, զորոյ զօրաժողով լինելն իմացեալ Ախւրոսի՝ դրէ առ Տիգրան՝ զօրս յօդնականութիւն առաքել նմա. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսելքսեայ և Երշէզայ<sup>3</sup> որոդոյ նորուն զի փութով անդր հասցեն. որոց վնացեալ պատահեն նմա ի Դաբուինդ Պարսից: Եւ յառաջեալ առաջոյ զօրուն Ախւրոսի՝ յարդարեն զգործ պատերազմին: Երբեւ խռնեցան ի զօրագլուխ գունդ Լիդէացւոց նետաձգութեամբ ընդ միմեանս հարեալ, և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ, հասանէ ալքայն Ախւրոս և Քսելքսես. և Երշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանեեօք յոտից մինչ ի զըռեխրովանդակ չթողեալ տեղի՝<sup>4</sup> անկոռուելի լինել զինուի, նա և

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ ոչ սակաւ սատակմունս առնէր զօրուն, մինչեւ միահաղոյն զօրսն Եշդահակայ վահեալ սուսերաւ տիրէ Մարաց և Պարսից:

<sup>2</sup> ԱՅԼ օր՝ զօրս գումարեալ  
<sup>3</sup> Հին օր. ամենայն ուրեք՝ Աբշէշ:  
<sup>4</sup> ԱՅԼ օր՝ յոտից մինչ բովնդակ չթողեալ տեղի:

զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սոնապանս, զլսապանս, որ զբեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրածե զօրու անմատշելի կարծելով. և զօքն ախոյեանայարձակ զպատերազմն վառէին: Յայնժամ ձայն բարձեալ Վասերքսէս և Երշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն՝ ասեն՝ հարան զօլքն Աիւրոսի, և փախեաւ ալքայն: Նոքա առյուն խնդացեալ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Աիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք, և թագաւորն Լիդէացւոց ձեմս առեալ երթայր զինի զօրուն:

Նոյն ժամայն Վասերքսէս և Երշէզ վազս առեալ պատահեն Լիդէացւոցն. և ձերբակալ արարեալ մերկացնան ի զինէ և յասպազինէ<sup>1</sup> և տանին կացուցանին առաջի Աիւրոսի. զոր առեալ Աիւրոս դառնայ ի Խորասան. և անտի դարձեալ ի Բաբելոն, ընդ իւր տանելով զԼիդէացին. և զտունս գանձի նորա հրամայեաց ածել յաւարի. և տանջեալ զնա ջոք՝ տայնմա և զգանձս աներեցիթս, և ինքն մեռանի ի հրամանէ<sup>2</sup> Աիւրոսի, բարձեալ զտերութիւնն Լիդէացւոց:

Երբե աջողութիւն դրժցն զլսաւորեցաւ՝ եղե դառնալ Վասերքսեանց, առեալ ի պարգեի զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն՝ Նինուէի:

Իսկ իրրե միապետացաւ թագաւորութիւն Պարսից Աիւրոսի՝ առնոււ՝ զԲաբելոն և արձակէ զգերին Նրէից: Ինդդէմ նորա զօրաժողով եղեալ տունն Պագայ, ազգն Պաղատացւոց, երկոտասան՝ բիւրու: զրէ Աիւրոս առ Տիգրան վասն օդնականութեան մատուցանել նմա: Օք ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ: Կորզել յինքեան զգերին Նրէից: Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Վասերքսէս և զԵրշէզ որդի նորուն քառասուն հազարաւ. գնացեալ պատահեն նմա ի սպառուածս Տօրոսական լերինն: Եւ երկայնագոյնս զպատաղմունան ի Ճանապարհին արարեալ՝ ձգին մինչ յԵրզն Եղձնեաց (և անդ մարգարէն Եզրի<sup>4</sup>

<sup>1</sup> Այլ օր՝ Թրկացուցանն ի զինէ և յասպառազինէ:

<sup>2</sup> Յօրինակն ի հոմնէ:

<sup>3</sup> Հին օր՝ զգերակնեայմն: <sup>4</sup> Հին օր. զբառգ՝ Եզր ուներ ի լուսանցմն. յայլ օր. չիք՝ Եզր:

և թագաւորն Ապղաթիկը վախճանեալ թաղի ի Արքակատինա ի բյակի մի տեղւոջ) և տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւ, որպէս թէ ամսօրեայ մի ժամանակ, յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Նայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքրունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Եւ զորդին Խորակէի առեալ գնացին յաշխարհն իւրեանց, և առաջնորդեաց նոցա Քսելքսէս և Երշէզ մինչ ի սուլր քաղաքն Անրուսաղէմ: և հաւատան զառաջնորդութիւնն Արէից՝ Օօրարարէլի որդւոց Ապղաթիկէի յաղգէ Յուղայ: Եւ դարձան ուժեղ զօրութեամբ և մեծաւ յաղթութեամբ:

**Այս այն Գովկ և Մագովկ զոր յիշեն գիր մարդարէիցն,**  
**Եմովս և Եզակիիկ:**

### ԳԼՈՒԽ Օ.

Յետ Կիբոսէ Կամբէսէս, Շմբդէս մադ, Գարէն Աշխատապ.  
ի ասաներորդի ամէ Դարշէնի մշտակ Տիգրան Նայիանդէայ:

Իսկ յետ այսց գործոց եղկոց ի բառնալ թագաւորութեանն Նայիազնեայցն, ոմն այսպէս ոմն այնպէս շփոթարար կեցեալ անիշխանութեամբ, ունելրվ զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանգիպանայր, և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւնք ուրուք յայտ յանդիման ցուցանիւր. և ոչ մեք գլւել զմուաւ ածել Զանասցուք. բայց զանուանս միայն ըստ կարգի կանոնել բաւական համարեցաք, որպէս և այլոց առաջնոցն մատենագրացն յայս եկեալ ձեւ պատմագրութեան. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս:

Տիգրան.

Մդրամելէք.

Ներս.

Պարսից թագաւորվ.

Քսելքսէս.

Երտաշէս երկայնաձեռն.

|                                                                 |          |
|-----------------------------------------------------------------|----------|
| Ներսէիս.                                                        | Դարէհ.   |
| Մարտդ.                                                          | Եղտաշէս. |
| Երշամ.                                                          | Ողբքոս.  |
| Երշաւիր.                                                        | Զարսէս.  |
| Ասուդ:                                                          | Դարէհ:   |
| <b>Ապա Աղէքսանդրոս Փիլիպպիայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր:</b> |          |

Օպյուռ ժամնակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդոնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ թագաւորութիւնն Պարսից Երշաւիրան: Խսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագիխացն Աղէքսանդրի՝ Ներակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագիխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրգքն արկեալ՝ տային տեղի փախստէի, մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմն Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազնանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր, և շտապով փութանակի յասպազինէ<sup>1</sup> կրիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահուսնաբար գործն զոր գործեաց՝ փութացաւ եա ողջոյն արքայի և ասէ, քաջք քաջաց պատահեալ անմեղադրելիք կան մնան դյաւակնութեամբն, զի մի վատութիւն քան զքաջութիւն ձոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կննացն առնուցուն: Ինդ որ սքանչացեալ ընդ քաջասրտութիւնն և ընդ իմաստուն բանակարգութիւնն Պտղոմէի և Սելևկեայ զօրագիխացն Աղէքսանդրու՝ խնդրեցին պարզե ի թագաւորէն զԱսուդ. զի Աղէքսանդր թէպէտ և լի իմաստութեամբ և հանճարով առաւելանայր՝ սակայն գաղանանայր ընդդիմակացաց հրոսաւզն. և առեալ Պտղոմէայ զԱսուդ՝ տայ տանել յեզիպտոս, ի պարզեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ, և կարգել նմա ոռմիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ:

1 Հին օր՝ և շտապանակի փութանակի յառաղինէ:

Իսկ զԱ-ահագն<sup>1</sup> և այկազնեայ, որ էր նիզակակից Ասու-  
դայ՝ կացուցանեն ի դրան ալքունի, յառաջանալ ի գործ պա-  
տերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ  
թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջարտութեամբ։ Եւ  
կացեալ ժէ ամ Եղէքսանդրի մեռանի ի Իարելոն, կեցեալ  
ամս չէ, թագաւորեալ ամս ժէ։ և ամօրէն տիեզերակալեաց  
ամս է։ Եւ ի մեռանեն իւրում Եղէքսանդրու հաստատա-  
գոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միազե-  
տեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագիան կողմանց  
աշխարհի, զՊտղոմէոս Եղիպտոսի և Հնդկաց, զԱրեւակոս Ե-  
սիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պար-  
սից և ամենայն արեւելից։

Իսկ Պտղոմէոս նննգութեամբ և հարկանօք կալաւ զԵ-  
րուսաղէմ և զԱրկէատան, մինչեւ յամս ժէ. զբազումն ի նո-  
ցանէ իջուցեալ յԵղիպտոս բնակեցուցանէր։ Եւ ապա առ-  
նու զթագաւորութիւնն Ասորոց և Իարելոնի և վերնոց  
կողմանցն Ակելեկոս Նիկանոր, որ կոյի յաղթող։ Պտղոմէայ  
հասեալ ի տէրութիւն ժառանգութեանն՝ փոխանակ իւր կա-  
ցուցանէ զԵսուդ, տալով ի ձեռս նորա զբուր իշխանութիւն  
Եղիպտոսի և Հնդկաց, և ինքն հեռացեալ զնաց զկնի Ե-  
ղէքսանդրի ի Իարելոն, և անտի եկեալ յԵրուսաղէմ պազին  
անդ երկիր Աստուծոյ։ Իսկ Ասորդ թէպէտ և պյնպէս շքե-  
զութեամբ Ճոխանայր եղիպտական և Հնդկային հարստու-  
թեամբն՝ այլ յիշելով զրուն իւր սեփհական թագաւորու-  
թիւն Ասորեստանի՝ ոչ հաճյանայր կեալ եղիպտայի գա-  
հակալութեամբն։ և ցանկութիւն տենչանացն աճէր. գայր  
յանդիմանակաց Պտղոմէի։ Եյլ թէպէտ զայս ախորժելով  
լսէր Պտղոմէոս առ լաւութեան քաջութեան առնն՝ սակայն  
յայտնել ոչ զօրէր Եղէքսանդրի, զի ոչ ումեք զայդ յանձին  
կալաւ Եղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց Ե-  
ղէքսանդրէ։ Ակեցեալ անդ ամս բազումն մեռանի յԵղիպտոս  
և կայ անդէն։

Յետ մահուանն Եղէքսանդրի զօրավարաց կալեալ զՄա-  
կեդոնացւոց տէրութիւնն, բայց մնայ ի հարստութեան Պըս-

<sup>1</sup> Հին օր.՝ զՎահանն.

զոմեականն միայն, մինչ տիրել Աղէռպատրեայ կնոջ միոյ և գիպտացւոյ, որ յետ բազում ժամանակաց, մինչև յօգոստոս կայսր։ Իսկ յետ է ամի անցանելոյ Նղէքսանդրի և անիշխանութեանն ձայոց և Պարսից՝ թագաւորէ Երշակ Քաջ Մարաց և Պարսից և Խղիպտացւոց և Խղմացւոց ի Բախչ քաղաքի։ և Վաղարշակ եղբայր նորա եկեալ ի ձայս՝ լու բարեկարգութեամբ զաղմկեալ և զշփոթեալ երկիրս ձայոց Եւ նախարարութիւնս յօրինէ, յանուն և ի բարձ և ի գահ յառաջ մասուցեալ։

Իսկ սերունդը Եսուդայ. Աանատարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմ այսպէս և երբեմն այնպէս. Ըաւարշ. Գօգեան. Ըաւասպ. Պերոզ. Ըահակ. Աիրուս.

Ըահակս այս անուանէ զանուն որդւոյ իւրոյ՝ Աիրուս, յիշելով զլաւութիւն առնն և զրարեկամանալն նախնոյն նուրա Քսերքսեայ։ Ազքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Աիրուսի՝ կէին անարգաբար զինչ պիտիէն<sup>1</sup> մինչ ի Աիրուս Ըահակեան։

Երշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Աիրուս քաջապէս արիացեալ առաւելանոյր ի գործ պատերազմին. զրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբն Եղշակայ Պարթեի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Խրիմացւոց. և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանձարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարզե. զի հարցեալ լինէր, թէ ով ոք, և յորո՞ց, և յումմէ, և ե՞րբ, և առ որո՞վք։ Իրրե ստուգիաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղին, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահանն ազատահան ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԵղշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի ձայս, և անուանէ զնա Երժրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Երժուկը կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծուունգն կերպարանօք։ Ի՞այց ոչ զիտիմ, թէ յանուն աշխարհին թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Երժրունիս։

<sup>1</sup> Ա. Յ. Օ.՝ գինչ պիտիէն։

Խըրկորդ վասն բնակութեան նախնեացն նորա Խղրամելին և Անասսարայ Երզն՝ կոչեցին Երգունիք:

Խըրկորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջարտապէս խիղախութեանցն ի մարտս պատիրազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա:

Իայց թէպէտ և երկոքին պատճառք անուանակոչութեանցն պատկանաբար վարկանելի է՝ որպէս իմաստապիրացն հաճոյ թուի, այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատաբմութիւնն ի մէջ առնուլ:

Յանդ հանեալ Պաղումեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ մինչ ի Աղէոպարեայ, դուստր Պաղոմէի Դիրնիսի. սա թագաւորեալ Եղիպատոսի և Եղէքսանդրի և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և զտեալ զսերունդն Սենեքերիմայ, և զգործս նոցա զմից միոյ ուրուք յականէ յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայն ամենայն ըստ տոհմից տեղեաց, և զվատացն և զաննշանիցն նշանաւորեալ ըստ վատութեանցն և զգործս նոցա՝ ետ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն զրով հանդիրձ պատարագք՝ Տիգրանայ թագաւորի այց, որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթեւէ: Յայս վայր զայս գրեալ Եղէքսանդրի Մակեդոնացւոյ, ի Անսերիմայ յառաջ մինչեւ ի Պաղումէս եգիստացի, զոր և նոքա Պաղումեանքն կոչէին. զոր ընթերցասէրն Պաղումէս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, զնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչեւ ի Աղէոպատրակին, որպէս վերագրյնն զրիցաք: Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մասորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբէէ Վերծանողէ և ի նորուն եղրօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէկողորոս Վերթող, որք լեալ էին յաշակերտութենէ Պետոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսն և քահանայսն: Առքա հրամանաւ Վահանայ Երծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զամմունս ազգացն անցելոց՝ ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս:

Օռոր և մեր ըստ հրամանի քում, Գագիկ զօրավար Նայոց և Վասպուրական իշխան, ջան յանձին տարեալ ընդ համառօտութիւն զրուցատրութեանցն անցեալ յառաջ խաղացուցից զբանոն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զագգաքանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ, մինչեւ եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէցս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից<sup>1</sup>, կարգեցից զախորժելին քեզ:

Եյս Վահանս զոր յիշեցաք՝ այն Վահան է, զոր թագաւորեցուցին նախարարք Նայոց յաւուրս սրբոյն Վարդանայ՝ զոր յիւրում տեղւո՞ն կարգաբանութեան զրեցից որ ինչ վասն սորա՞։ Խւ մեք այժմ գիարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարդէն. Վահան. Համբիթ. Թաջ. Թաջուռու

Երջամ թագաւորեալ Նայոց՝ զագգն Իազրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Նիւրկանոս քահանայի ի կանգանաց բանտին, և կալեալ գլունանիստ նահապետ Իազրատունեաց և սպարապետ Նայոց հանդելձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարշարանօք, և զոմանս ընդ սուր հանեալ կամէր միախաղյն զրաւ առնել ազգին Իազրատունեաց:

Խսկ Թաջուռնի ձեռն ի գործ արարեալ՝ մատուցեալ առ թագաւորն իննդրէ զԱնիանոս, զի էր կախեալ զփայտէ, և կատարեալ զխնդիրն իջուցանէ զԱնիանոս ի փայտէն, և զագգն նորա<sup>2</sup> փրկեալ ապրեցուցանէ ի սրցն խողխողմանէ. և ի նոյն պատիւ թագաւորութեան կացուցանէ զԱնիանոս Իազրատունի։ Խւ ոչ յանձին կալեալ Երջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Նայոց։ Օռոր առեալ Թաջուռ ահիւ<sup>3</sup> և ամենայն պատրաստ կազմութեամբ բնակեցուցանէ ի կողմն Երագանծոյ, ի զիւղն Թալին կոշեցեալ. սա առաջին ի տանէն Իազրատունեաց եկեալ կայ նա զայսու կողմամբ Եյրարատեան նահանգի։ Խւ առնու Թաջուռ զդուստր Խնիանեայ կնութեան Աահակայ որդւոյ իւրոյ, ու

1 Հին օր՝ Փ ըստ մոջէ շարեցից։

2 Այլ օր՝ յիշեցից և գրեցից որ ինչ վասն սորու

3 Այլ օր՝ և ամենայն զագգն նորաս

4 Այսպէս յօրինակին, թերեւ՝ կահիւր

բում անուն կոչէր՝ Ամբատուհի։ Այս<sup>1</sup> առաջին խնամանալ եղեւ ընդ միմեանս Իազրատումեաց և Աքծրունեաց։ Այս եղեւ յամի յութուտասաներորդի արքայի Պարսից։

Խաւ կեցեալ Արծաման է վախճանի, և թագաւորէ Արգար որդի նորա։ Հասեալ ի տեղիս յայս ի պատմութիւն Արգարութագաւորի այոց, յորոյ աւուկս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի. Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երեւումն եղեւ, և սկիզբն լինել նորոգման արարածոց, և լուսաւոր առնել զամենայն մարդ, որ յաշխարհ գալոց է. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս գդեզերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել։

Քանզի սա առաջին ի հեթանոսական թագաւորաց սկիզբն արար ի Քրիստոս հաւատոց։ Որպէս ցուցանեն յիշատակարանք Հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանին և առաքեալն Յօհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոց զորոտութեաց Աւետարանին Քրիստոսի, որ ի նայն հաւատալոց<sup>2</sup> էին։ Քանզի ասէ, թէ մին ոմանք յելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յերուսաղէմ ի տօնն, զի երկիրագանիցին. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Իեթսայիդայն, ասեն<sup>3</sup> Ասմիսք զՅիսուս տեսանիլ. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալն հանդերձ թզթովք Արգարու, և զիսորհրդական պատասխանին լուեալ վասն փրկական խաշելութեանն որ վասն աշխարհի, զոր փառս իւր անուանեաց, զրելով և զպատասխանի թղթոյն ի ձեռն Թովմայի առաքելոց, և զխոստաբանութիւն՝ զի՞ադէոս առաքել լնուլ զփափագումն ինդրոյն. և զանձկալից տեսութիւնն հրաշափառապէս և անձառարար ի վարշամակի տպաւորեալ ելից զկարութիւնն Արգարու աղբիւրն կենաց Քրիստոս։

Դարձեալ վերստին հրձուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սատ սակն բարձրագահ, համաթոռ, ձոխազգի աղդապիտութեան Արծրունեաց, մեծ զարմի Անէքէրիմայ ծննդոց. որ ըստ ամման և սկրելոյ նախարարութեանց՝ եկեալ հասեալ

<sup>1</sup> Յօրինակս՝ այլ.

<sup>2</sup> Յօրինակս՝ հաւատացելոց։

<sup>3</sup> Յօրինակս չիք՝ ասեն։

ցայս վայր ժամանակի ի թագաւորել Արգարու և հաւատալ ի Վրիստոս։ Ենդ որում և մեծ իշխանն Արձրունեաց Խուրան և զլխապետ զօրավար զօրու, և միահիման թագաւորութեան Նայոց մեծաց, որ առաջին ի Վրիստոս Հաւատացեալ եղաւ իշխանս Խուրան և մկրտեալ ի ճեռաց Թագէոսի առաքելոյ։ որ յետ Հաւատոցն որ ի Վրիստոս բազում ուղղութեամբ և երկիրզածութեամբ կրօնս ըստ արժանի Հաւատոցն ցուցեալ, զրէթէ ի ծայրս առաքինութեան զանգումն Հաւատոցն տարեալ Հասուցեալ, որ ինչ յօրդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք։ Եւ դայս առ այժմ բաւական Համարեալ նշանակութիւն ցուցանել զլաւութիւն երանելի առնն Խուրանայ Արձրունոյ, խոհանագունիցն բաւականանալ առ բովանդակ իմացմունա։ Եւ մեզ զիարգ պատմութեանցս մասնաւորաբար և Համառօտապէս յառաջ վարեացուք, զի ոչ է ժամ մեզ զներբոջականօքն զդեկելումն առնել զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել։

Ներովդէս այլագփի որդի Անդիպատրեայ Ասկաղոնացոյ և մօր Խւպատրեայ Արարացոյ, թագաւոր Նրէից, յաւուրս ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Վրապէս Յովսեպոս մեզ զրուացարանէ և զինչ գործեաց ընդ մանկունսն։ Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Ներովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն Հանեալ Ներովդէի՝ թող զինն իւր զառաջին, զդուստր Արետայ արքայի Պատրէացւոց։ առ որ զարեալ Արէտ՝ խորհէր վրէժ առնուլ զանարգանաց դատերն, և ոչ իշխէր Համարձակ յինքնակալէն Օգոստեայ Տիրէրի կայսեր Ապա բարեկամացեալ ընդ Արգարու թագաւորի Նայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արձրունոյ՝ յղէ նմապատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արձրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն։ և Հարեալ ի զիմի Խուրէն՝ Հարկանին զօրքն Ներովդի, մինչ ինքն Ներովդէս փախստեայ անձնապուր լեալ Հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրտաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Նիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն։ Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Ար-

գարու և ընդ Խուրէնայ՝ այլ Երգար և Խուրան առ փափակումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Ներովդէս՝ ոխացեալ ընդ Ներովդի, որպէս և յետոյ ընդ Պիղատոսի՝ խնդրեցին. զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. և էր ամ վեշտասաներորդ Տիբերի կայսէր:

Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ և վախճանի բարեպաշտ Երգարու, թագաւորեաց Անանուն որդի Երգարու, որ ոչ եղեւ ժառանգորդ հայրենեաց հաւատոցն որ ի Քրիստոս. այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն գառնալ զհետ պաշտաման կռոցն, զոր արհամարհեաց մերժեաց Երգար, և զԽուրանն Երծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետեւել զկնի իւրոյ մոլորութեանն. զոր այսին արարեալ արհամարհեաց զնովաւ. Խւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն զնաց ի Հաւարշան ի Սանտարուկ. և առեալ զնա եկն եհաս ի վերայ որդւցն Երգարու բառնալ ի նմանէ զթագաւորութիւնն զոր ունէր. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմն, զաշտարակին<sup>1</sup> զոր շինէր որդին Երգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, զիէժինդիր եզեալ մահուն Ըդդէի սրբոյ:

Խսկ Խուրան ոչ կացեալ առ Սանտարէցյ զնաց յիրկիրն Յունաց, առ Աեսար Տիբերիոս, մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացին վասն ոսկեհան տեղեացն. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւնս կատարեալ զօրականքն որ ընդ նմա երթեալ կին յաշխարհէս Նայոց. ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեզք և բրարիոնաւ ի Ստադին տեղւոցն. և եղեւ վախճանել Տիբերի թագաւորեալ ամս է. և թագաւորեաց փոխանակ Տիբերի Գայիոս փոքրն ամս է և կէս:

Խսկ Խուրան լուեալ վասն տիկնոցն Նայոց Նեղինէի կնոջ Երգարու, թէ ոչ ախորժեաց կալ ի Միջագետս վասն ամբարշտին Աննատրիոյ, այլ ելեալ գայ ի սուրբ քաղաքն Խրուսաղէմ, և անդ կեալ բարեպաշտութեամբ՝ եկն և նա առ նա յերուսաղէմ, և առեալ ոսկի զտիկնոցն և զիւր՝ զնաց

1 Ա.Յ. օր.՝ զաշտարակն Ստուգագոյն թուի գրել՝ զի զաշտարակն:

Ենդիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղեւ առ Աղողեաւ. բաշխել զայն որոց և այրիաց, միանդամ յամենայն հաւատացեալ ի Քրիստոս<sup>1</sup> տնանկացն, որոց և բաւականանայր ցորեանն: Ենդ կեցիալ Խուրան և անդ վախճանեալ ի բարիգը ծերութեանն և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Նոտուծոց մերոյ. ամէն:

### ԳԼՈՒԽ 1.

Հարախօսութեան նախարարացն Շնորհեն զԱռաւելէ զՄշաւեան:

Ի՞սյ ի գնան Խուրէնայ առ Տիրէր կայսր՝ եթող զորդին իւր զՎաչէ և զեղբայր իւր զԵրշաւէիր ի Խառան առ տիկնոցն Հեղինէի. որ ապա ի գնան տիկնոցն յԵրուսաղէմ Վաչէ և Երշաւէիր երկեան երթալ առ Սանատուկ, գնացին առ Ներսէհ արքայ Ըսորւոց, ընդ իւրեանս առնելով՝ զգիր ուխտի խաղաղութեան Ծգգարու և Ներսէհի<sup>2</sup> և զԽուրէնէ Նրծրունոյ. զոր կարգէ զնոսա Ներսէհ ի վերակացութիւն գործակալութեան, զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն զք նովաւ մոցէ և ելցէ յարքունիսն, և նովաւ վճարիցին զինչ պէտ և լինիցին ումեք<sup>3</sup> ի մեծամեծաց մինչ ի փոքրունս նոցա. և զԵրշաւէիր ի գործ պատերազմի զօրապլուխ զօրուն կարգեաց: Ենդ որս զշարեալ նախարարացն Ներսէհի<sup>4</sup> զրգուն զոմն ի մերձաւորաց Ներսէհի, Դարէհ անուն. որ մատուցեալ առ Ներսէհ ասէ, զնդէ՞ր այսպէս համեցար առնել, զի կացուցեր զարսդ զայդ ի գործակալութիւն աշխարհի քո, և ահա դոքա նն յորդւոց ազգի Սենեքէրիմայ ի Նինուէ, և ունին զզօրս քո ընդ իւրեանս, զուցէ կատարիցին չարիս ի վերայ քո, և կորպեն յընքեանս<sup>5</sup> զթագաւորութիւն Նինուէի: Օք ահա բարեկամացեալ էր Խուրան

1 ԱՅԼ օր.՝ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս:

2 ԱՅԼ օր.՝ Աբգարու ընդ Ներսէհի:

3 ԱՅԼ օր.՝ զի՞նչ պէտ ունիցին ումեք:

4 ԱՅԼ օր.՝ և կորպեցին յինքեանս:

Հայր Վաշէի և եղբայր Երշաւիր ընդ Երտաշէսի Պարսից ալքայի յերթալն Երգարու ի Պարս, և եղեալ են դաշնա ի միջի. գուցէ յորժամ կատարիցն զբարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լրւաք ի հաւատարմաց իւրիանց՝ օժնգակութեամբ Երտաշէսի մերժիցն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Եսորոց: Կամ դարձն զխորհեալ նոցա չարիս ի գլուխս իւրիանց, կամ թող զի ելցեն գնացեն՝ յով և կամեցինք: Իսկ Ներսէհ ունինդիր եղեալ Դարէհի, քայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալմն. այլ վասն բանսարկուացն եղեալ Վաշէ և Երշաւիր գնացին առ Երտաշէս ալքայ Պարսից, և կացին մնացեալ անդր մինչեւ ի դարձն Երտաշէսի որդւոյ Աննատրկոյ, որ եկեալ այսր թագաւորիաց, սպանհալ զԵրուանդ:

Իսկ Սահակ որդի Վաշէի խոյս տուեալ գնայ ընդ կոդմամբքն Մարաց, ընդ կոդմն Ետրպատականի, և բնակէ առ զըրավարի ումեմն և մոգի Պետով Վարամ կոչեալ: Իսկ Արծբատ առեալ զԵրտաշէս բնակէ ի Օարաւանդ<sup>1</sup> Ետրպատականի, և զիէ առ Սահակ դառնալ առ Երուանդ. թերեւս հընար լիցի խորհիւ ինչ վասն Երուանդայ: Նորա ունինդիր եղեալ գայ առւանց յապաղանաց, և առաջի զնէ Երուանդայ զպատճառս փախստեանն, ասէ՝ զի գայեկաբար զորդին Աննատրկոյ մնուցանէաք, և զու ի թագաւորելդ քո որոյ երգմունս արարեալ յԵրտեմի. և յԵրամազդ անկասկած կալ մընալ վասն որոյ երկիւզն առնէր: Եւ զհետ մտեալ Երուանդայ խոյզ և խնդիր լինել Երտաշէսի. իսկ Սմբատ առեալ զԵրտաշէս գայ բնակէ ի բարձրաւանդակ լիրինն Վարագ: Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լիրինն ի զլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին Երուանդպականս. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լիրինն, այլ փութալ ելանել դառնալ անգրէն ի հետեւի զօրս անդ<sup>2</sup>. զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. և տայր տանել զպէտս մանկանն օր ըստ օրէ: Օայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԵրմաւիր. անդ կեցեալ և մեռեալ ի նմին ի կապանս:

<sup>1</sup> Հին օր.՝ ի Զարտաւանդ:

<sup>2</sup> Թերեւս՝ ի Հեր և ի Զարեւանդ:

Իսկ Աշոտ եղբայր Վահեի քանզի էր մանկագոյն տիռվը՝ առեալ դահեկին իւրոյ մատուցանէ առաջի Խրուանդայ, ոչ ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի, դուցէ, ասէ, ի գնալն ի բուռն առեալ ի մահ դատապարտեացի։ Իսկ Խրուանդ պահեալ զերդումն հօրն նորա՝ թողացուցանէ երթալ բնակել և կեալ ուր և հաճոյ թուիցի. և նորա առեալ առնի զնա ի լեառնն Աիմ, ի տեղի հայրենիաց բնակութեան աշխարհին Տարունոյ։

Նոյն ժամայն առեալ Ամբատայ զԵրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հօվտաձես հանդէպ հարաւայ քաղաքաբերդին Վանի, մօտ յայն տեղի<sup>1</sup>, յորում բղիսէ աղբիւրաբար առ ստորոտով բըրակի միոյ, մօտ յիզը ծովուն, յորմէ շնչէ օդք բարեխառն, զովացուցանէ զտապ խորշակի ամարայնոյ՝ յարեգակնակէզն լինելոյ. և անդէն կացեալ զաւուրս բազումն յապահովացեալ ի կասկածանաց երկիւղէ Խրուանդայ։ Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Նորտաշէսի, և այն ի տեսչութենէ Նատուծոյ այնպէս պահեալ լինէր, դառնայ Խրուանդ առ սահմանօքն Ատրպատականի ի ձորն Անձակից։ Իսկ Անձակից ձոր վասն այսր<sup>2</sup> կոչեցին. բազում ունելով ինչս ի կոխակս բարձրաւանդակս և ի կիրճն նրբականս, ի զերծս և ի խոխոմն ձօրոյն ի թոխ և ի բոխ երկրին անքնակ մարդկան յասպատակէ հինիցն Խրուանդայ, և երթայ զետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին։ Յայնմ հետէ ի տարակոյս անկիալ Խրուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեզանայր կերակուր ի քիմս նորա։ Յետ այսր առեալ Ամբատայ զԵրտաշէս ըստ ձեւոյ տառապելոյ միոյ, որ շրջեցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն՝<sup>3</sup> երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի<sup>4</sup>, մինչ զդալ նորա Խրուանդայ. և զրէ առ Ամբատ, թերեւս տացէ ի ձեռն նորա զմանուկն Նորտաշէս Խրուանդուն հասելոյ Նորտաշէս։

1 Այլ օր՝ մուտ յայն տեղի։

2 Այլ օր՝ այդր կոչեցին զեզում

3 Այլ օր՝ զբաւականութիւն աւուրն

օր ըստ օրէ։

4 Այլ օր՝ Դարէհը Մարաց արքոյի։

երթայ գնոյ առ Արտաշէս Պարսից արքայն, և անդ բազում իրս քաջութեան ցուցեալ յախցիանարձակ պատկաղմունան, և մեծարի Արտաշէս Պարսից արքայէ, մինչ ձեռնոտու լինի նմա զօրու օժնականութեամբ, և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկոյ, ի տեղի թագաւորութեան քաջացն Երշակունեաց: Ապա դարձան Վաչե և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ. ի լու ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց... ամի. և դարձոյց ի նոռա զաշխարհն զոր տուեալ էր ի ժառանգութիւն Տիգրանայ Հայկազնոյ, զոր կալեալ էր Սանատրկոյ յալքունիա, զեւառն Աիմ և զԱղճիս մինչ ի սահմանա Ասորեստանի:

## ԳԼՈՒԽ Բ.

Թագաւորէն Արտաշէսի է վերայ Հայոց:

Եպրև յաջողեցաւ թագաւորութիւնն Արտաշէսի ամենայ յարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայացտեն գիրք պատմազրացն, և յառնուլ զՄաթինիկ տիկին կնութեան Հայոց՝ յիշէ զնժդիհանալն իւրի վիմամէծն զոր վերագոյն գրեցաք. գայ դարձեալ ի տեղին զբոսնուլ ի նմա. և հաճոյ թուեալ յաշս նորա՝ շինէ գքարաբլուրն ապարանս արքայանիստ աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմար պարագաւորս ընդդէմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսի նայեցուածով, արեգակնային ի վերայ խաղալով ձառագայթաձիգ ձեմականացն, յելս և ի մուտս ձկան իմն թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով, ընդդէմ նայեցածն<sup>1</sup> ունելով զմեծ լեառն. Մասիք կոչելով<sup>2</sup> բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ, իրը զթագաւոր մեծավայելու պատուական ալեօք զուարձացեալ ի մեջ ձոխ նախարա-

1 Այլ օր՝ ընդդէմ նայեցուածն:

2 Այլ օր՝ լեառն Մասիք կոչելով:

բութեանց, առաջի տեսանկյով զկապուտակ ծիրանափայլ գաշտաձև ծովե. դաշտակերտս մեծամեծա շուրջ զեղերբն անտառախիտ ծառովք և զիներեր որթովք և զանազան պտղովք. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամբոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. ոչ միայն ի տեսիլ խտղոման աչաց և ի զուարձումն հուստելիաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական Հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: Իսկ շուրջ զբերդանման առարանօքն՝ պարսպէ զբլույն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովետն ամրացուցանելով: Իսկ ի վերայ բղխեալ աղբիւրն, զարձեալ պարսպէ զբարարլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիք շինուածովք և շին մարմարգարիտ<sup>1</sup> զբարարլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելի ձեռաց պատերազմոզաց, հեշտալիք առ զգուշութիւնն յօրինեալ՝ ի խորագյան ծովուն զպարփսպն յօրինեալ կազմէ: Իսկ ի մէջ և բերարմատեան գաղաճե հովտին փաքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշուարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղիեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն. կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բաւականա. դտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէն աղբիւր սակաւարուդիս, որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հասուցանէ՝ ի մէջ հովտին: Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եղերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոզն՝ լնուլ այգեստան տնկախիտ պատրաստութեամբ ականախիտ վայելչութեամբ:

Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամբոցն պատրաստեաց՝ կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: Եւ ածեալ զտիկինն Աաթինիկ զբունուլ յաշնանային յիղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին: Իսկ զանուն քաղա-

քին կոչեցին Արտամառ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կոմք թէ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսի ձայնի Մատ՝ Եկք թարգմանի. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Խրուտնդայ տագնաւողել զնա, բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիւրէ Շայոց մեծաց, և ըստ բարբարոսական հմայիցն պատռէ զտեղիս այս, որպէս ի նմանէ սկսելով զփոփոխութեամբ առնու ի խոնարհագունիցն ի բարձրագոյնսն:

Խակ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Աաթինիայ եկեալ զինի նորայ յղնն զո՞մն ի ճգնաւորացն առ տիկինն, զկոոցն յանդիմանելով զմնոտի և զանօդուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քոսիւսի առ Արտաշէս:

Խակ Աաթինիկ ունկնդիր եղեալ իրատու սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կոոցն Նստղկայ անուանեալ պատկերին, քանզի կասկածանս ունելով ի թագաւորէն և յորդւոցն, մառնաւանդ զի և թագաւորին նախ աին ունէր զդառնալն ի կոոցն ի յիրկրպագութիւն՝ Քրիստոսի ծշմարտին՝ Կատուծոյ. բայց թէ որպէս եղեւ կատարութեամբ իրացն մեզ չէ յայտ:

Աահակ որդի Վաչէի կացեալ<sup>1</sup> ի դրան Արտաշէսի շքեղ և երեկի ճոխութեամբ, յոր ձեռն հաւատաց Արտաշէս զգաւառն Աղբագ. զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք, բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուաց ընդ մեռանեն Խրուտնդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի։ Իայց կին ամ յազգէն Աշդահակայ բնակէ յամհւրսն Զմար և ի Արինգ, ի գաւառին ի Փոքր Աղբագ, և յանուն կնոջն Զայլամար, որ և զամուրն յիւր (անուն) անուանէ. և ունէր կինն գանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն առնու զնա Աահակ կնութեան Հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Աահակայ ի սեպհական ժառան-

1 Ա.Յ. օր.՝ կեցեալ:

գութիւն. այսր աղագաւ ինամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Նրուանդ և ոչ միով իւկը պաշտպանութեամբ։ Սահակայ առեալ ի պարփեի զաշիարհն՝ թողու զորդին զԱշու զլեանակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շենել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Նրծրունեաց։ Եւ երթեալ Նշու ոչ խորհրդական իմացուածովք մտանէ ի լետոնն. և յելուզակը ոմանք ի կողմանց ձաշտենից ամրանային ի լերինն. պատահին միմեանց և մեռանի անդ անզգուշաբար ի յաւակնայեղց դիմացուածոյն Եւ անդէն ոչ կարացեալ շենել զերկիրն այն հուազ ընդ հուազ մինչ յութերորդ ամս Նկատաշէսի, զոր թագաւորին յանձն առեալ զաշխարհն՝ հրամայէ շինել անդ մեշեան զերակղեայ և զԴիոնիսեայ. և այնու աղագաւ կարաց շին պահել զերկիրն շատամարդկութեամբ։ Եւ նուազեալ ազգին Նրծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի ձամամ անուն, որդի Նրշաւիրի ծերոյ, եզրօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի. զորոյ նախնացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ ձամամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձրգեալ զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Նղըագ, որպէս Սահակայ նոյնպէս և ձամամայ։ Իայց էր ձամամ սէդ և ամբարհաւած, յոյլ և թոյլ առ պատերազմի զործ, միայն և շըղոմաբար հպատակութեամբ վարէր առ թագաւորին, զորոյ լոյծ և մեղկ բարս ուսեալ թագաւորին՝ կացուցանէ զնա ի վերակացութիւն գործակալաց դրան արքունի, զի այնու կըպատակութեամբ լցոցէ զպաշտպանակս թագաւորին, զի և տեղեակ էր դիւանական մատենագրութեանցն։ Զի յառաջնում ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն ինամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց, բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց։ Իայց դեսպան արձակեալ Նրտաշէսի զձամամ առ կայսր Նղիիանոս վասն Իալբորայ աւազակի և նորուն պատերազմին յԵսորիս. և յերթան նորա և ի գառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Նրտաշէս ի Մարինդ, և

մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխաբշն Ա' արաց  
ի Ի' ակուրակերտ աւանի:

Յետ Երտաշէսի թագաւորէ Երտաւազդ, ապա Տիրան  
որդի Երտաշէսի, ապա Տիրան, ապա Տիրան Վ' երջն, ապա  
Վ' աղարշակ: Եռ սորգք էին ազգք Երծրունեաց ծննդարա-  
նութեամբ՝ ձամազասպ. Շաւարշ. Եաոդ. Ի' արգեան:

Վ' աղարշակ թագաւորեալ փոխանակ հօր իւրոյ Տիգրա-  
նայ, և տուեալ պատերազմ ընդ հիւմիսայինն ա' ազրաց՝ մե-  
ռանի ի կորօվաձիգ աղեղնաւորացն: Ենդ Ի' արգեան և աս-  
պեան մեծ Եշու նիզակակիցք միմեանց գերծեալ ի մեծ պա-  
տերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս ձայոց, ետուն  
գուժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վ' ա-  
ղարշու թագաւոր զորդի իւր զի՞սոսրով ձեռնտուութեամբ  
Երտաւանու Պարսից արքայի: Եւ այսպէս խաղաղեցուցեալ  
զաշխարհս էին հեշտալիր խաղաղականօք ըստ կամի ախոր-  
ժակաց զամենայն ժամանակս կենաց Խոսրովու, որ թագա-  
ւորեաց ամս ի՞ը:

## Գ' ՈՒԽ Թ.

Ի' աշխատ Պահովածի նախաւորութեան և նախաւորէ Արամիացոյն:

Ա' ինչդեռ այսպէս յընդորլութեան<sup>1</sup> կեանս յապահովա-  
նայր երկիրս ձայոց, և ոչ ուստիք գոյր վտանգ կրել բայց  
ընքեանք այլոց հասուցանէին տագնապս որպէս ընթեռնուքն՝  
յեղակարձում ժամանակի հասանէ համբաւ մահուն Երտա-  
ւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Երտաշը Սասա-  
նականի. ի կոր կործանման կացիալ Խոսրով մեր թագաւոր,  
և ջանայր առնուլ զվոքժ մահու հարազատին իւրոյ, թագա-  
ւորին Երտաւանայ, զոր և առնէր իսկ, հասեալ զաւող մահ  
նորա ի յընակայ իւրոյ մերծաւորէ: Եւ բնաւ աշխարհս քայ-  
քայեալ ցլուեցան՝ յով և կարաց աճապարել փախչել այր

<sup>1</sup> Այլ օր՝ յանդորրութեան:

իւրաքանչիւր. դիմեցին առ կայսրն Ա.ազէտիանոս, թէ հնար  
ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի վերջ նահան-  
ջել զբոնակալութիւն Ստահրացյն. բայց թէպէտ և ետ օգ-  
նականութիւն հայոց կայսրն Ա.ազէտիանոս Փոխեգացի զօ-  
րոքն՝ սակայն ոչ խաղաղանայր երկիրս, և ոչ ոք կարէր կալ  
յակաստանի, ունել զժառանգութիւն հայրենի, և ոչ առ  
դիաղաղութիւն մինչեւ ի Պոռբոս կայսր, որ արար խաղաղու-  
թիւն ընդ Եպտաշըի Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ  
կամ որպէս դիմեցաւ լինել առհմին Եղծրունեաց, կամ ուր,  
կամ զիարդ. բայց միայն զազգին շարս ըստ գիւտի աշխա-  
տութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թա-  
գաւորել Տրդատայ, և սկիզբն լինել լուսաւորութեան հայոց  
աշխարհիս ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչին: Եւ այս  
են ծնունդք Եղծրունեաց, ի Ռաբդենայ Ուռշեղ. Ա.աշան.  
Ներսէհ. միւս Ռաբդէն. Տիրոց:

### Գ.Լ.ՈՒԽ Ժ.

Դաքին Տրդատայ ի յերշին Յունաց և հասպարել յանու բար-  
դութեան հայոց Սէծաց օդնականութեամբ նահաւորին Յունաց,  
և լան հաւաքոցն որ ի Վիրեպուա

Ուագաւորեալ մեծին Տրդատայ ի վերաց հայրենեաց աշ-  
խարհին, որպէս զրեալ ցուցանին հանգամանք իրացն գործե-  
լոց, և հաւատալին նորա ի մի Աստուած հայր և ի մի Որդի  
նորա ի Բանն Աստուած Յիսուս Կրիստոս և ի մի հոգի  
սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից հօք և Որ-  
դոց, ի մի Աստուածութիւն կատարեալ և մկրտեալ սուրբ  
և անրիծ խոստովանութեամբ ի հայր և յՈրդի և ի սուրբ  
հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարա-  
րօքն հայոց մեծաց:

Իսկ ի տանէն Եղծրունեաց ընդ մեծ նախարարան հայոց  
մկրտեալ լինի Տիրոց որդի Ռաբդէնի երկրորդի, այր հեղ, խո-

Հական, խորհրդական, համեստ ի բանս, համեստ ի նայեցուածս, որ ոչ բազմաց քան եթէ միոյն, այսինքն՝ Վարդսառոսի՝ պինքն ծանօթ ջանայր կացուցանելը՝ “Ի՞անզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ առնէին ի քաղաք Ահսարացոց ձեռնադրել զնա ի քահանայրութիւն, ի լուսարար վարդապետութիւն աշխարհիս ։ այոց՝ էր ընդ մեծ նախարարան երթեալ և Տիրոց, և որպէս վերագոյն ասացաք՝ վասն հեզ և ցած բարուցն կամօք յանձն կրեր, ոչ յառաջանայր ի բարձր նախարարհ ճոխանալ երևելեօքս և լքանելեօքս, սրբոյ Նուետարանին հետազոտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ուներ նազելի և բարձրագահ պատիւս ի մեջ մեծ նախարարութեանցն ։ այոց, զի ով ոք այլ ձոփ քան զԱներէրիմայսն, զոր համարձակախօսն Խսայիաս հրապարակէ առ Խորայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. այլ և Մակեդոնացին Կղէքսանդրոս ոչ սակաւ դրսուատեզք արձանս զրէ ի մատեանս զիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ<sup>1</sup> զլիսաւորութիւն:

Երդ որպէս յառաջազոյն ասացաք՝ սակս կարեռը յուղմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Երծրունեաց, և ոչ ընթանալ զհետ բազմախօյզ զորուցատբութեանց, զոր առաջնոցն մատենազբրւեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցաքաջառութիւնք և արժանաւորք յօլովագունի և մեծամեծաց գովութեանց: Ի՞այց մեք զյոյժ հռչակեալն միայն նշանակիցաք. սրբոյ թագաւորին և քաջ նահասակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ<sup>2</sup> ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յիրկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ, որպէս ընթեռնուք ի բանիքուն դրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն:

Ի՞ագաւորէ Խոսրով որդի Տրդատայ փոխանակ հօր իւրոյ, հրամանաւ Առատանդիանոսի, և խաղաղաւեր բարեկարգու-

1 Հին օր.՝ մեծափա:

2 Այլ օր.՝ պատերազմ պատերազմեալ:

թեամբ հաստատեալ յօրինէ զկարգ աշխարհիս. նախարարքն հանդիրէ, և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք արշաւանս, բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուածեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Ծապհոյ արքայից արքայի. և զզօն տուեալ ի ձեռս Վահանայ Սմատունոյ, հոգալ զբործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: Իսկ ըստ կարգաց քիմիատոնէ ութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մօճին Արթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ժի:

Իսկ զհարկացն տուրա յալքունիս Անսարու՝ ի ձեռն դպրապետին վճարէ առ կայսր. բայց զտոհմէն Նրծունեաց ոչ ինչ այլ խմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն խաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարնն, և ունէր զիւրագանչւոր կաղուածս զաւանդեալ ժառանգութիւն նոցա ի թագաւորացն առաջնոցն Մուշեղ, Վահան: Եւ զօր ինչ ոչ իմացեալ մը՝ և ոչ զրել արժանի վարկաք, բայց միայն զի բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին:

Օկնի Խոսրովու Փոքու թագաւորէ Տիրան որդի նորա: Եւ ի ժամանակին յայնմիկ ունէր զհագարապետութիւնն այսոց այլ ժանդ շարարարոյ, որում հայր Մարդպետ անուն էր. առ մատուցեալ առ թագաւորին Տիրան՝ սկսաւ քսութամբ խօսել ի գաղտնի զտանէն. Նրծունեաց և զիւշունեաց, զի էին ազգք ձոխք և երեկոիք, քաջք և անսւանիք, և ամենեցուն պատերելիք, ասէ. «Թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ<sup>1</sup> զերկուս նախարարութիւնսդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Ծապհոյ արքայից արքայիր. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերես և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կոլուստ: Որոյ ունինդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանդ հանկ զինորհուրդ անօրէն աստուածատեաց առն: Նզդ եղև Մամիկոնեան սպարապետութեանն անոպայ գործն, և դիմե-

<sup>1</sup> Յայլ օր. չե՞ ի Փէս:

ցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերտմերկը զինեալք ի Ած ամբոխին, Երտաւազդ և Վառակ Ամիկոնեանք, զբաղումն տապաստ արկեալ ի սուրս իւրեանց, յափշտակեցին զԸ աւասպ որդի Վաճէի Երծրունւոյ, և զԱ՛հհէղակ Ոշտունի, քանզի էին մանկադցնք տիրովք. առին զնացին յամուրսն Տայոց. և ի չափ հասեալ ի տիոց տղայականուց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն Ինոցանէ աճնալ ազդք երկուցունց Երծրունեացն և Ոշտունեաց, և ոչ խառնեցան ի խորհուրդ Նայոց զամս բազումն. բայց Տիրան պղծութեան աղտեղութեամբն զգառեալ մատնի ի ձեռս Ծապհայ, և կուրացեալ աշօք կեցեալ և մեռեալ ըստ արժանի իւր վաստակոցն, զոր գործեաց ընդ սուրբան Վաթանէս և Յուսիկ և ընդ քահանայն մեծ Դամիել, ըստ այնմ և հատուցաւ նմա, որ թագաւորեաց ամս ծառ

Երշակ թագաւորեալ փոխանակ Տիրանայ հօր իւրոյ, հրամանաւ Ծապհայ արքայից արքայի՝ ժողովի զնախարարութիւնն Նայոց առ ինքն, տեղեկացեալ և վասն տոհմին Երծրունեաց և Ոշտունեաց և որք ի նախարարութենէն Ամիկոնէից հասեալ զնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց, և գպատճառան ստուգեալ, դրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմին Նախառարարութիւնքն առն խառնեաց՝ դառնալ գաղ բնակիլ անկասկած կենօք, ի բարձ և պատիւ իւրաքանչեւր յառաջանալք. Որում ունինդիր եղեալ երկրեան նախարարութիւնքն առն խանստոնոյ Վահանայ Նախառարարութիւնքն զան զինի նորա անկասկած համարձակութեամբ, քանզի ոչինչ վեաս զիտեին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. և ընկալեալք ի թագաւորէն Երշակայ ըստ զրելոյն ի ձեռն Վահանայ՝ կացին անկասկած:

Եյլ չաբիմացն հայր կոչեցեալ Ամրդմիտ և թաւորեալ խորհրդացն չարին ոչ երբէք դադարէւս Շնդ ժամանակն ընդ այնտափէ խաղաց գնաց Երշակ ի մուտս կոյս, էր երթեալ ընդ նմա և մեծն ներսէս կաթողիկոսն Նայոց. և հասեալ յԵշտիշատ Տարունւոյ ի Պայտարանս սրբոյն Յավհաննու և մղրտչի, և Եմթանագինէի վկային, զոր շենեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: Եւ ելեալ

ի տեղին պրութեան և կատարեալ զաղօթան՝ ելին շըջել դքսնուլ յայլ ևս տեղինս. Տարախորհուրդն հայր Արդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան՝ այլ և առ Նոտուած ևս և առ սուրբս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայուալիր բերանն և որպէս շուն իլրբ պատուհաժմափ<sup>1</sup> եղեալ ածէր գեղուն գերկաւ։ Մատուցեալ առ թագաւորն Երշակ ասէ. «ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զանգիս զայս ի բնակեալ<sup>2</sup> ճոխութեան<sup>3</sup> թագաւորական վայեկսապէս խրախնձանութեանց. արդ հաճոյ թուիցի քեզ զոր խորհիմս. սուրբքն ոչ եթէ գերեւելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ոչ նոքա զնեղ և զանձուկ կեամս կան մահու շափու Ի՞այց այս ոչ իմացեալ եմ, թէ արգեօք թագաւորն զրդուեցաւ ի հրապոյրս նորա թէ ոչ Նու զոր ոչ հուատարմանայ մեզ՝ և ոչ զրել կարեւոր համարեցայ։

Իսկ պրոյն՝ Ներսէսի իրազէկ եղիսալ չարին չարաբարոյ չարախորհուրդութեան՝ անէծս մեծամեծս և ազգոյս և զօրաւարս ոնէ ի վերայ Արգապիտին, և ասացեալքն ի պրոյն հանգերձ գործով գիտարումն առնու։ Անդէն վաղվաղակի մատուցեալ Հաւասպ Նրծրունի առ Արգապետն՝ ասէ, «արջք զիսակագեղք սպիտակապյեղքը որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացգ. արդ թէ հաճոյ թուիցի՝<sup>4</sup> երթիցուք որսալ զնոսա». և առեալ զնա մոտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մոտեալ Հաւասպայ Նրծրունւոյ՝ գլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զիորովալիր մատանցն զազգոյ շարժումն թուուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն զիապեցուցանէ. և յետս ընդդէմ կործանեալ փշեաց զոգին. ի ձեռս խորհրդածուին իւրոյ սատանայի. և բանք պրոյն՝ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ զիւրագոյնս զշատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. որ ըստ արժանի խորհրդոցն ընկալաւ զփոխարէնն։

<sup>1</sup> Այսպէս յօր. գուցէ՝ պատուհաժմափափի։

<sup>2</sup> Թեակեալը?

<sup>3</sup> Այլ օր՝ ճոխութեանց։

<sup>4</sup> Այլ օր՝ հաճոյ թուիցի քեզ։

Ինդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պալատից՝ Ծապուհ արքայից արքայ: Խսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մեջ առեալ Երշակ յերկոցունց կողմանս:

Խսկ նախարարքն այսոց ի սաղրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Երշակայ ի պատերազմ յառաջանան, ի մեջ անցեալ սուրբն Ներսէս Հոմողէ<sup>1</sup> զնոտա և խաղաղացուցանէ զաղմուկն: Խսկ թագաւորն աղաչեալ զսուրբն Ներսէս գհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Երշակայ, զոր և արար խսկ գհաշտութիւնն:

Իայց Մեհուժան Երծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին Հնազանդութեամբ նուածեաց զանձն, Հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանաց Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ զնացին առ Ծապուհ թողեալ զօրէնս քրիստոնէութեանն՝ Հնազանդեցան որմզդական մոլորութեանն մոխրապաշտ վարդապետութեանն: Բնդ որ յոյժ ուրախացեալ Ծապուհ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի:

Խւ էր ի մեջ Ծապհոյ և Երշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Երշակայ: Խւ բազում անգամ ի բազում տեղիս տային ճակատ զօրքն այսոց և Պարսից ընդ միմեանս զոր աւելորդ համարիմ երկրորդել զյառաջագոյն պատմագրաց նշանագրութիւնս:

Իայց յետ բազում պատերազմացն խորամանկ խարէութեամբ կոչէ առ ինքն Ծապուհ զԵրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մեջ առնելով. և նորա զնացեալ զչետ կոչնականացն լի անմտութեամբ: Կապէ երկաթի կասպանզք և տայ տանիլ յԱնուշ կոչեցեալ բերգն ի սահմանս Տիսպոնի<sup>2</sup>. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Եստուծոյ սրբոյն Ներսէսի:

Իայց դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնու-

1 ԱՅԼ օր.՝ Համոզէ:

2 ՀԻՆ օր.՝ Տապօնի:

թիւնն ի վերայ Նայոց բացայայտեցից ի շարի աստ: Առնուն Մեհուժան և Վահան զզօրս Պարսից, գան մատնեն յերկիրն Նայոց, սփռեալ տարածանեն Հենս ասպատակաւորս<sup>1</sup> ընդ բոլոր երեսս երկրիս Նայոց, գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշն ի առւր սուսերի զորս ի քուռն առնութին. գնացին մախն ի գաւառն Ուրշտունեաց, և առին յաւարի զտունն Պարեգնի Ուշտունեաց տեառն. Ծողոպրեալ Պարեգինն անձնապուրծ գնաց փախրստեայ առ կայսրն Յունաց. նոցա կաղեալ զտիկինն Ուշտունեաց զկին Պարեգնի զքոյր Վարդանայ Ամիկոնէի ածեալ ի Վանտոսապ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. ստիպէն լքանել թողուկ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն, զոր չառեալ յանձն սուրբ տիկնոցն Նամազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանգակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. արկանեն տոռունս ի սրունան, կախեն գհիւսիսայինն աշտարակէն. գոհացող համբերութեամբ ընդունի զվճիռ մարտիրոսական: Պահեկին նորա մնալով ի նելքոյ կախաղանին՝ ամփոփէ զսուրբ գանձն ի ծոց իւր, ատրեալ փախէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներակսի, զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոցն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Նորիփսիմեանց. զոր շինեալ էր սրբոյն Պարիգորի, ուր զսեղանն սուրբ և զգաւագան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջցյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւրութեանն մերոյ հօրն:

Պան դարձեալ Մեհուժան և Վահան և առնուն զՎանտոսապ, քանդէն աւերեն զգեզեցկաշէն ամրական տեղիսն, վարեն ի գերութիւն զընակիչս քաղաքին եւ զորէայսն, և ծըս զքրիստոնեայսն, և զորս ածեալ գերի Պարզափրանայ զորէայսն հրամանաւ Տիգրանայ, և խաղացուցանեն յԱսպահան, և առնուն զՎաղարշապատ և զԵրտաշտ.

1 Հին օր՝ ապաստակաւորս:

զՆրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Նրէից հասուցանելով<sup>1</sup> վանք ի Քրիստոս հաւատոցն:

Վնայ զինի նոցա երջանիկն Օռուիթայ երէց յՆրտաշատէ զինի հաւատացեալ Նրէիցն, զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհա կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: Խոկ Ահեղուժան մուեալ առաջի Ըապհոյ սկսաւ չարախօսել զՆուուիթայ քահանայէ, ասէ Շերէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Նրեաց, և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Նայոց յարքայից արքայէ: և անարգէ զկրատէ և առ ոչինչ համարել զարեգակն: արդ զրաւ եղիցի կենաց դորա, և հրաման արքայիդ դիւրաւ զկատարութեան առնուցուա: Նոյն ժամայն ածեալ լինի սուրբն առաջ Ըապհոյ, և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Նոգւովն սրբով՝ զոր անմենելի ունէր յինքեան սուրբն: և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եղ ի վերայ հօտին, և ընկալեալ զվծիո մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Խրորդութեանն, և հորթեաց երանելին<sup>2</sup> Օռուիթայ ճանապարհ բարի բազմաց վկայից ի մէջ՝ Նայատան աշխարհիս, որ յարեւելս և յարեմուտու: Եւ կալեալ Նրշակայ զթագաւորութիւնն ամս լ՛ վախճանի ըստ օրինակի ասացելոց:

Ըապուհ արքայից արքայ թագաւորեալ՝ բազում և անշափ չարիս հասուցաներ ի վերայ Նայոց աշխարհիս և Նսորեստանեայց և Պաղեստինացւոց, և վարեալ ի գերութիւն զՆրէայսն ն բիւր, յաւեր դարձուցեալ զՆրէաստան և զսուրբ քաղաքն Խրուսաղէմ: և զբովանդակ թոյնս անբժշկականս իժից և քարից եհեղ ի վերայ քրիստոնէից: յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան իր սրբոց արանց, որք վկայեցին վասն Քրիստոսի, բազումք յի-

1 Այլ օր՝ աւելի վտանգ հասուցանելով նոցա քան այլոց Նրէիցն:

2 Հին օր՝ զերանելի:

3 Այլ օր՝ զմանապարհ ըստի Վկայոց ի մէջ:

սլիսկոպոսաց, և քահանայից և յայլ կարգէ յեկեղեցական զրնդէ, բազմազյնք և յազատաց աշխարհիս և ի տիկնանց նոցա անհնարին և դառն տանջանօք, զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Երեելիայ առաջ գրոցն վերագրութիւն, զոր չարագրեաց երանելի խոստովանողն Քրիստոսի Եբրահամ ի գեղջէն Երածոյ, որ էր աշակերտ և հետեւող սրբոց Պեռնդեանց, և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ, զԱ ահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳ ոհշթասդ, որ թարգմանի ներկազործ ծիրանեաց արքայական զգեստու, և զԸ ըմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք ալք ճ, որ կատարեցան միանքամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին:

Բայց Մեհուժան ոչ բաւականացաւ կատարել զչարիսն, զոր արար քրիստոնէիցն և առաւել Հայաստանեայց աշխարհիս, այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհց արքայի, ունելով ընդ իւր զՎ ահան Մամիկոնեան. և եկեալ մտեալ յաշխարհս Հայոց աներկիւղ համարձակութեամբ, խորհեալ խորհուրդ զոր ոչ կարաց հաստատել: Քանդի Սամուել որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ: Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանզնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուելի զհայր իւր Վահան, իբր ա՛ն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին, իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուել զմիողնին՝ ազգոյ վէրս ի վերայ եղեալ առժամայն եհատ զնա ի կինաց. և դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի, զի երկոքինն<sup>1</sup> ուրացեալ էին ի Քրիստոսէ. և ինքն գնաց փախստական ի Պարսից ի կողմանս Խաղստեաց<sup>2</sup>:

Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց<sup>3</sup>

1 Հին օր՝ զերկոքինն:

2 Հին օր՝ ի Պարսից կողմանս Խաղ-

տեաց.

3 Եյլ օր՝ գրօշից:

և նշանաց որոց ոչ գոյր թիւ. և հասեալ ի Ի՞ազդաւանդ գաւառ ի Զիրաւ գեօղ՝ կամքի անցանել ի թագաւորաբնակ տեղիսն ։ այոց: Ի՞նդրէմ զօրաժողով եղեալ Ամրատ սպարապետն ։ այոց որդի Ի՞ազդարատայ Ի՞ազդատունւոյ, ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուկր և դունդք գունդք վառելոցն վաշտիցն շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ծողոպրելին աճապարիցի: Խւ նոյնժամայն հուալ ընդ հուալ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ<sup>1</sup> քաջին Ամրատայ:<sup>2</sup> տոռն արկեալ ի պարանոցն Ամեհուժանայ ասէ:<sup>3</sup> քարի՛ է քեզ, թագաւոր ։ այոց, եկ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետու: և շամփուր շողացուցիալ մանուածոյս փակէ ի նելքս զգատ գաթն ամբարշտին. և այնպէս ել յաշխարհէս թշուառականն:

Եռ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական առասպելն որ ասէ. բազում անդամ աղուեսք թագաւորել խորհիցան, բայց շունք ոչ առին յանձն:

### ԳԼՈՒԽ Ժ.Ե.

Թագաւորել Թէոդոսի է վերայ Յունաց:

Վախճանեալ կայսր Վաղէս, և թագաւորէ Յունաց մեծն Թէոդոս. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Երշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ ։ այոց ի տեղի բուն թագաւորութեանն Երշակունեաց: Խւ ոչ գնացեալ ըստ իրատու սրբոյն Ներսէսի Պապ թագաւորն ։ այոց, այլ գնաց զիսոտորնակ և զձախողակի ճանապարհ, աղտեղասէր բազմադիմակ պղծութեամբք, զոր ոչ է հաճոյ երկպորդել ի գիրս աստ. և յանդիմանեալ ի սրբոյն

<sup>1</sup> Հին օր.՝ հարեար....արարեար:

<sup>2</sup> Այլ օր.՝ Ամրատայ սպարապետին

Հայոց:

<sup>3</sup> Այլ օր.՝ ասելով

Ներսիսէ՛ արբուցանեն նմա գեղ մահու, զանխուլ կարծիս քերելով. և զրկեալ լինին<sup>1</sup> ։ այք ի լուսաւոր վարդապետէն և ի քաջ հովուէն սրբոյն Ներսիսէ. և բարձեալ զմարմին սրբոյն քաղմամբոխ զօրգքն ։ առաջապահուտ ծանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Երծրունի զօրավար ։ այս և զԱպահան Ըմատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղուոջ հայրենեացն վկայարանի ի Խորդան: Ի՞պահ ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուն առեալ<sup>2</sup> Տիրինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր, և անդ սպանին հրամանաւ կայսեր, թագաւորեալ ամս զ Եւ կային եպիսկոպոսապետք ։ այսոց յետ մահու<sup>3</sup> սրբոյն Ներսիսի ոմանք ի զաւակէ Եղբիանոսի եպիսկոպոսի Ի՞զնունեաց, առն պատուականի, Ծահակ և Ծաւէն և Ըսպուրակէս, որք ոչ արժանաւորք ինչ բարի յիշատակաց:

Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զԱպազդատ ոմն յՄերշակունի տոհմէ, այս քաջ և պատերազմոդ, ահարկու մեծամեծաց և փոքունց. և սա նշկահեալ զկայսերք՝ յղէ առ Ծապուհ արքայից արքայ նուածել ընդ նմա, և եղբայր Մեհուժան Երծրունի յղէ դեսպան առ Ծապուհ զնոյն խորհուրդ հաստատել: Որց երթեալ առ Ծապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ միամիտ և հպատակ լինիլ արքայի, և զպատերազմացն զործ և զքազում աւարառութիւնս և զգերփանս ։ այսոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Ամբատայ Մամիկոնէի, գրգուէ զարքայ կատարել զասացեալսն Վարազդատայ թագաւորի ։ Եւ մինչդեռ զայս խորհէին՝ հՀաս լուրն առ կայսր ի ձեռն Տիրենտեայ զօրավարին. և գիշե էր գարձեալ պատասխանի յալքայէն՝ հրաման հՀաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: Իսկ նորա տուեալ զնա ի կղզիս Ովկիանու՝ վախճանի անդ, թագաւորեալ ամս դ: Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն ։ այսոց, ոչ յաւել

1 Այլ օր՝ և այնպէս զրկեալ լինին:

2 Այլ օր՝ ի բունն առեալ

3 Այլ օր՝ յետ մահուան:

դառնալի հայու. այլ անդ կեցեալ և անդէն վախճանեալ ոչ  
արժանի ինչ գործ յիշատակաց ցուցեալ: Եւ էր կացեալ եպիս-  
կոպոսապետ հայոց Օաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յիտ  
չորրորդ ամի Ըահակայ:

Մէծն Թէոդոս յետ Վարագգատայ թագաւորեցցյց ի  
վերայ հայոց զԵրշակ<sup>1</sup> և զԵրաղըշակ զորդիսն Պապայ  
թագաւորի հայոց. և յետ է ամաց վախճանի Վաղարշակ,  
թագաւորեալ ընդ եղբօյն բոլոր հայոց: Որ և հուա ժամա-  
նակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւո-  
րութիւնն Անորէս և Նրկադ որդիքն Թէոդոսի: Եւ բաժա-  
նեալ թագաւորութիւնն հայոց յերկուս, ի Յոյնս և ի Պարսս-  
Երշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ  
ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել քան Պարս-  
կականն հնազանդել տէրութեանն. այլ և բազումք ի նախա-  
րարացն հայոց ելեալ զհիտ Նրշակայ գնացին առ Նրկադ,  
Սամուէլ Մամիկոնեան, որ սպան զհայր իւր Վահան և  
զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդու-  
թեան մոգութեան օրինացն, և Վասակ Նրծրունի: Եւ այլք  
յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառա-  
զինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսա-  
կուն և բարբարիկոն<sup>2</sup> ազգին Սասանականին. որոյ հնազան-  
դութիւնն կորստեան պատճառք գտաւ աշխարհիս հայոց:  
Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օ-  
րինաց նոցա:

Երրև զիտաց Ըապուհ արքայ զոր գործեաց Նրշակ՝ թա-  
գաւորեցցյց ի վերայ հայոց զԽոսրով ոմն յազգէն Նրշակու-  
նեաց: Եւ զրիաց թուղթ զկնի նախարարացն Ըապուհ,  
լուծանելով զպատճառ հատուածի նոցա. ասէ, զի պացուցի  
թագաւոր ձեզ յազգէ և ի գենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի  
ձեզ զառնալ անդրէն և ունել զեւրաքանչիւր ժառանգութիւն-  
մի՛ յամառիք զհիտ Նրշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ  
լինիք ի հայրենիաց բնակութենէ, և կեայք պանտիստութեամբ  
կեանս, իւրաքանչիւր ի սուր իւր գտանել զբարձ և զգահ

1 Հին օր. ամենայն ուրեմն՝ Աշակ:

2 Խ.Յ. օր.՝ թարբարոսական:

Նախարարութեան. այլ դարձջիք այսրէն<sup>1</sup>, և առանց աշխատութեան զերկիր իւրաքանչիւր կալարուք։ Որում ունկնդիր եղեալ՝ դարձան այր իւրաքանչիւր ի բնակութիւն իւր, և առեալ զգանձս Արշակայ բերին առ Խոսրով։ Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովույիզը ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ՝ գնաց Արշակ փախստական յԽեղէց գաւառ և անդ<sup>2</sup> վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս է։

Իսկ Յունաց առեալ կացուցին ի բաժնին Արշակայ հիւպատս<sup>3</sup> և զօրավարս և կոմսունս, ոչ զոք թագաւորեցուցեալ այնուհետեւ։

Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն իւր և զգահ, յերկուս կողմանս բաժանեալ գնայիցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր։

Զայն ի փոքր ինչ աւուրց զապստամբութիւն ի մեջ առեալ Խոսրովայ ի Ծապհց՝ ի Յոյնս ապաւինի, և խոստանայ զըուրու Նայսնուածել ընդ կայսերական իշխանութեամբ. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր յաթոռ հայրապետութեան Նայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. և զնախարարսն դարձեալսն յԱրշակայ՝ կացոյց յանձն իւր գահու, ընդ որ զչարացեալ Ծապուհ, թէ ընդէր առանց իւր հրամանի զայն գործեաց՝ յղէ ի Նայսնուածել զԱրտաշեր որդի իւր, և ընկեցեալ զԽոսրով յաթոռոյն՝ կացուցանէ փոխանակ Պաղարշ զեղբայր Խոսրովու։

Իսկ Վասակ Արծրունի խոյս տուեալ գնաց առ Արտաշեր Պարսից, խորհելով վասն սպարապետին մեծին Սահակայ, որպէս ի նմանէ Խոսրով զանձնիշխանականն օրինադրեաց Հրաման. միանգամայն խորհեր վրեժինդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ։ Բնդ որ յշյժ զչարեալ պքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածու-

1 Այլ օր՝ դարձջիք իւրաքանչիւր  
այսրէն։

2 Այլ օր՝ յեղեղէց գաւառ, և անդէն։  
3 Այլ օր՝ հիւպատոս։

թիւն և ընդ այնպիսւց աստուածամարտին Անհուժանայթ զթասիրաբար վարել ազգականութեամբ, զոր ատել արժան էր և չարի վերայ, թէ հնար էր՝ հասուցանել և ելիալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր գհանդերձն զինաւորական, և ողբայր ի վերայ աշխարհիս հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս հայոց և ընդ բռնազքօսութիւնն Պարսից Առաւել ի սուգ մտեալ և յողբս անմիխթարս վասն ազգին իւրոյ Կածրունեաց, որ դիւրամոռաց զերախտիսն Վրիստոսի համարէին, միայն զկնի փառաց աշխարհիս ընթանային և մոգութեան մոխրապաշտութեանն հետեւէին։ Խւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասնւաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. մինչեւ նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդիրձեցաւ աշխարհիս հայոց, իբր մարգարէական իմն գողցիս տեսաւորութիւն, և միաբան յարտասուս եղեալ լային, և դառնապէս<sup>1</sup> ողբս յողբս հարեալ անմիխթար սգոյ՝ անկիալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զպիմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս Օտոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ զուռ լի՛ր առ այժմ, և յայլում ժամու հոգացայց վասն որոյ խորհիս. մի գուցէ մատուցեալ առ Երտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհաց կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն, և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուղեցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն։ Բայց Աստուած ըստ յօժարութեան քո սիրոյդ կատարեացէ զկամն քո որպէս և հաճոյ թուիցի առաջի Տեառն։ Խւ ընկալեալ զիսրատ նորա երանելոյն Աղանայ անսայր դիպող աւուրս

Երկադեայ կայսեր թագաւորեալ ամս իժ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղազս մեղանացն առ Յոհան Ասկերեան։ Խւ թագաւորէ ընդ նորա որդի իւր Փոքր Թէկողոս.

1 Հին օր.՝ դանապէս

և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շնորվ քաղաք Թէոդուպօլիս ի Պարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն։ Օք Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային։ Խւ եղեւ ի վախճանեն Խոսրովու Հայոց թագաւորի, որ եկաց ի տերութեանն ամս ոչ ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Երշակունեաց թագաւորի Հայոց, զի այնուհետեւ քաջ կարասցէ զիել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ այլ թագաւորեցոյց նոցա զորդի իւր Շապուհ, որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս միայն որսոց և խաղուց պարապ զինքն հաճոյանայր կացուցանել։ Առ որ հայեցեալ նախարարքն Հայոց՝ կատականօք և արհամարհանօք ընդ նա նայէին, որպէս Ատոմ Մոկաց իշխան՝ յորսն Աստուածորդի զնա ձայնէր, զի այնու վբացեալ առ հուրն յաւակնեալ զինքն տացէ դարձեալ կնամարդ զնա կոչելով ընդդէմ միմեսնց անուանաձայնէ և ինքն Ատոմ հատեալ զնայ ի կողմն Մարաց։ Խւ քաջասրտագոյն Շաւասպ Երծրունի, խաղս ձիրնթացիկ արշաւանաց զնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով, ամղզկամարդ, ի բաց լիր յասպատակէ ասպարիսիս, այր կանացի, և ծանիր զքեզ։ Իսկ Շապհոյ զմական զնդին ի դիպուածս Շաւասպայ շարժեալ զոր արհամարհեալ Շաւասպ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց զնաց ձեմ զշեմի առ զօրավարն Անատոլի։ Խւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչ ի յանցս Խփրատ գետոյ։ Խւ կացեալ Շաւասպ առ կայսեր ամս ու։

Իսկ Շապհոյ լուեալ զհիւանդանալ հօր իւրոյ՝ փութացաւ գնաց ի Պարս. և վախճանեալ հայրն նորա՝ ի նմին աւուր մեռանի և ինքն սրով յիւրայոցն։ Խւ քանզի վախճանեալ էր Համազասպ Մամիկոնեան, որ ի ժամանակին կաեալ էր զմարզանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի

խնդրոյն Աահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից՝ ոչ ոք այնուշտեւ առաջնորդէր Հայոց աշխարհիս. այլ քայքայեալ ցրուեցան յոր կողմ և աճապարել ախորժեաց ոք, քանզի հէնք բազումք կալան զերկիրս:

Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՛ կոչէ ի գուռն զսուրբն Աահակ Հայոց կաթողիկոս: Որոյ առեալ զթոռունս իւր դամայեակ և Համազասպիան գնան առ արքայ ի Տսպոն: Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն. Մաշտոցիւ առ կայսր Խէոդորոս և առ Նտտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Աահակայ, տանելով ընդ իւլիեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Խէոդորի հինգ թղթովք և հինգ պատասխանիօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յովհաննու Սակեբերանի և քաջաց և գլխաւոր վարդապետացն, իսկ զՎարդան կարգէ ստրատելատ Հայոց:

Իսկ ի հասանել սրբոյն Աահակայ ի գուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժինդրութեան Հայոց քինահարութեան անարդանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խազաղութիւն ունելով. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Աահակայ՝ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԵրտաշէս, որ և Նրտաշիր: Եւ ի թագաւորել Նրտաշի խազաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. և Հարկացն արքունի կանդնեցան դիւանքն, զի այն և ամ բնեկեալ հարկը և զօրք ի յարքունէ Պարսից: Իսկ Նրտաշիր յանդկնազոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախսին զիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան, յանդիման արեգական, անխոտիր կատարէր զցանկականն, զանամնական զիջութեամբքն զանցուցեալ: Ինդ որ զչարեալ նախարարքն Հայոց՝ տաղտկացան ընդ գիջանալն, և խորհեցան զոչ թագաւորեն Նրտաշի ի վերայ Հայոց. որք մատուցեալ առ սուրբն Աահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թեակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին իսկ. որք զնացին առ Վռամ, և ոչ առ Խէոդորոս պարեպաշտ և զուգա-

փառ քրիստոնեայ թագաւոր, զեղլսեցան ամբարշտաբար առանց խորհրդոց։ Եւ Վռամ քանզի կարի ախորժելով ունկն գներ և յօժարէր բառնալ զթագաւորութիւն ։ այոց՝ փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԵրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն ։ այոց. և հարցեալ վասն որոյ ամբաստանն եղեն զԵրտաշը։ զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ պիել ինչ վասն որոյ չարաբանեն զԵրտաշէ։

Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս, մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ուրեմն Երծկեցւոյ մոլիգնոտ փառամոլ աբեղայի՛ սկսան ազգի ազգի լեզուազարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ, որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել ։ այոց և զօրավարել այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն, և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգնալն Ենատողիայ և զշնել քաղաքին ի Արքին գաւառ։ Եւ անմիաբանք լիալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոց եպիսկոպոսապետութեանն և զԵրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲըրբիշոյ Եսորի, և ապա զՍամուէլ որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ լնդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս։ Մշկանա այս փոխանակ Երտաշը մեր թագաւորի մտեալ ունի զաշխարհս հրամանաւ Վռամամայ Պարսից արքայի։ Իսկ նախարարքն ։ այոց իբրև տեսին յիրկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ, ինդրեցին իւրեանց կաթողիկոս զսուրբն Սահակ։ Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զինդիրն, և կասկածանօք տարութերէր ի միտս, մի գուցէ ոչ առնելով իմ զոր իննդրէն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր։

Իսկ Վռամ Երծրունեաց տէր և ։ մայեակ Եշոցաց տէր

և այլք յանգուցեալ ի նոսա՝ համեցին զկամն Վռամայ, և թոյլ ետուն զով և հաճոյ թուիցի<sup>1</sup> արքայի. նորա զԱմուէլն զայն կացուցանէ ի տեղի եպիսկոպոսապետութեանն Հայոց, որ յետ է ամաց վախճանի, կեցեալ կեանս արտաքոյ իրաւանց:

Իսկ Ենատողի զօրավարն Յունաց զՀաւուկ ոմն Կուկրուծացի կացոյց մասինն Յունաց եպիսկոպոսապետ. և այսպէս աղմէեալ և շփոթեալ երկիրս Հայոց՝ կեայր անմիաբանութեամբ, լի անկարգութեամբ, ըստ յօժարութեան Վաչէի Երծրունոյ:

Եւ եղեւ ի դառնալն սրբոյն Աահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Շաղան Երծրունի, և ընկալաւ ի նմանէ պքիմ կրօնաւորութեան. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու զիւաց: Եպա իրեւ վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից, որք առանց եպիսկոպոսին Կենարու ձեռնադրեցան յերանեալ եպիսկոպոսէ՝ միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Աահակ, անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաջանոք՝ մի յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրադիտութեանն. և խոստանային գնալ ըստ հրամանի նորա: Զոր ոչ առ յանձն լսել նոցա. զՀանգամանս տեսլեանն, զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր, զբառնալ եպիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ի տանէն Երշակունեաց, և զկարգապետել անարժանիցն, և զընտրութիւնն սրբոց, և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Երշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զՀանդիձեալ դատաստանացն, և զՀատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր, զոր հտես ի մեծի հինգշաբաթոջն:

Եւ այս ամենայն այսպէս եղեալ կեցեալ սուրբն Աահակ ամս Ֆ՛ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց, և տարեալ հանգուցանեն զնշիւարս սրբոյն յԵշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչն և Եթանագինի վը-

<sup>1</sup> Հին օր՝ Է՛պու երան զո՞վ և հանոյ թուիցի:

կային։ Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ հայրապետն Մաշտոց։ և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն ձայոց ի ձեռն Առաջանայ Եմատունցոյ, որ էր ի ժամանակին սպարապետ ձայոց։ և տարեալ հանգուցանեն զնա ի Յօշական գեօղ, ի գաւառին որ կոչե Ոտն Երագածոյ։

Յամի երկրորդի Յազկերտի որդւոյ Վարամայ երկրորդի՝ բարձաւ թագաւորութիւնն ի տանէն ձայոց, որ տեհաց ամս նժե և վախճանեցաւ։

Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Երշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Պետոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփի եպիսկոպոս և Մովսէս և Մեղմէս։ Խսկ զտեղի թագաւորութեանն ձայոց հրամանաւ Յազկերտի ունի Մշկան զօրավար Պարսից։

Խսկ Վարդան Մամիկոնիան, որդի ձամազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ զնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմն Տորոսական լերինն, ի լեռուրս Պերմանառոյ, և բնակէ յամրոցին, որ այժմ Օռողայլ վասն անխեղեղ<sup>1</sup> ամրութեանն գեղջկաբանեն։ Խւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի ձայոց, հաւատացեալ էր Թահորոսի կայսիր զսպարապետութիւնն ձայոց ձամազասպ Մամիկոնէի և որդւոյ իւլում Վարդանայ՝ երկիաւ Վարդսն ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղազաւ էանց զնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութիւնէ Նստուծոյ այցելել աշխարհիս ձայոց։ Խւ կոչեալ առ ինքն զեպիսկոպոսն Մոկաց զՅօհան և զեպիսկոպոսն Ոշտունեաց Սահակ և զեպիսկոպոսն Նոնձաւացեաց Ծմաւոն, և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տիառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցին զողորմութիւն ի Քրիստոսէ։

Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զզիրս

1 Հին օր՝ վանս ան անիւդեռ։

Պատմութեան հայոց մեծաց, հրաշավան յօրինուածով, սկը-  
սեալ յՆդամայ մինչ ի կայսր Օհնոն. որոյ ժամանակ կենացն  
տեեալ ձգեալ ամս Ֆէ լի և պարարտ ծերութեամբ, որպէս  
գրիալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբա-  
նեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձու-  
թեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին, զոր և ե-  
րանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն  
Մհարովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսո-  
սիկ մեզ հաւատարմացուցանէ: Ուստի և մեք ըստ կարի մե-  
րում անցեալ գտաք զհամառօտութիւն զըուցատրութեանս,  
զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք  
քեզ, քաջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօ-  
րավար հայոց, իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւա-  
տարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ  
շարագրածք հրաշափառագոյն:

Եպա փոյթ ինձ Խովմայի, որ ոչ վերջունեալ կալայ ա-  
մօթով զյետին տեղին, այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս  
յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմութեամբ և  
անհանձարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթա-  
ծութենէ: Իայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս  
մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ  
շաղակրատոյ լիզուաց փառամոլ ոգոց<sup>1</sup>:

Աատարեցաւ Դպրութիւն Առաջին Պատմութեան հայոց  
ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեոի:



<sup>1</sup> Յիշատակարան: Գծագրեցաւ գիրքս այս առաջի սուրբ խաչի Աղթամարայ հրա-  
մանաւ տեսանն Զաքարիայի վերադիտողի Հայոց սեոի, զոր Տէր Աստուած յամայր ամ-  
ժամանակս շնորհեացէ սմա ամբորձ յամենայն յորոգայթից երևելեաց և աներեցյթից  
հանգերձ բարեպաշտ եղբարբ իւրով որոյ անունն ամիր Գաւրգի ճանաչէ. ընդ որ ա-  
ղաչեմ և զմեղուցեալ գրիչս յեւեցէք ի Քրիստոս:

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ Ը.

Յետ բառնալոյ թագաւորութեանն ։ այոց ի տանէն Երշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհս. և զիսաւոլք ։ այոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշնի բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս. և պարսկական բոնութիւնն զօրացեալ աճէր, և հարկապահանջք գունդքն ել և ելս առնեին սաստիկ խոշտանգանօք:

Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մեջ առեալ Շաւասպ Երծրունի եղբայր Վասակայ հօր Նղանայ Նրծրունոյ, և խորհցաւ զտիրելն ։ այոց, և ելեալ գնաց զհետ անհանձար իմացմանց առ Պերով արքայ Պարսից, և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց, և խնդրեսլ յարքայէ զիշխանութիւն ։ այոց: Խւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամնութեանն կատարեալ զինդիրն. և դարձեալ դառնայ ի ։ այս, ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգաբետ: Խւ ընդ մտանելն նոցա յաշխարհս՝ վրդովեցին զուխտ քրիստոնէութեան, և փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել զաեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վերայ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն ։ ոգւոյն սրբոյ, դառնապէս չարալըռէկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Ատակարանաց, զարս և զկանայս մատնել ի բանդս ի խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ<sup>1</sup>, զի այնու

1 Հին օր՝ հարկապահանջութեամ:

դիւրաւ կարասցեն հելքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան։ Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան ողք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչեցն և ստացուածոց և զմահս դառնագոյնս։ Եւ հասեալ Ծաւասպայ Երծրունւոյ ամբարշտի յԵրտաշատ հանդերձ մարդպանաւն՝ շնուն ի դուռն քաղաքին զորմզդական մեհանն, և զկրակապաշտութեան մոլութիւն բոլբոքեն ի նմա. և կայրաշխարհս ի մեծ վտանգաւոր աղէտու

Եյս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տորոսականն Օռայը Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոզի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս ձայոց՝ փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ոշտունեաց տէր և առ Վախրիծ Խնձաւացեաց տէր, զեկուցանել նոյս վեղեալն։ Եւ նորա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան, և զզօրս Եռնակողմանն ընդ իւրեանս ածելով, ոչինչ աւելի քան գհազար և երկերիւր այր, և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Ծաւասպայ և մարդպանին Վնդոյի։ Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Ծաւասպ Երծրունի, յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև կորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան<sup>1</sup> ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կորէ զԾաւասպն։

Իսկ Տաճատ և Վախրիծ ի մեջ փակեալ զմարդպանն և գորդի նորա զԾիրոյ՝ ձերքակալ արարեալ ածեն ի Դուբին, և հուր կրակարանին բոլբոքեալ՝ աստուածակէզ արարին զնայորմզդական մեհանին. և զԾիրոյ կախեն զիայտէ ի վերայ կրակարանին. և զարսն գիտավէժս և սրախողս արարեալ վատնին, և զփախստեայսն տանին անցուցանին յայնկոյս քան զքաղաքն Խախմաւան, և ինքիանք դառնան մեծաւ յաղթութեամբ։ Եւ քանդեն աւերեն զմեհանն և յատակեալ զտե-

<sup>1</sup> Յօրինակոն եագութեան

ղին՝ շինեն նորին քարամքը զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Ելուր տեղւոցն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց գԳիւտ. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականն և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս։ Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Նրծրունոց՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. քանզի Խորհեցան թագաւորեցուցանել գնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ։ Իայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր Խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին գնացին առ մեծն Վարդան. գնաց և Վահան զհետ նախարարացն<sup>1</sup> առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. և եղեն հնազանգեալ նմա զամենայն առլուս Վարդանայ։

Իայց ալքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Վուշանն ի դուռն Շորայ. և երկիրս Հայոց յապահովանայր ի հինիցն Պարսից. և անդ սպանանի ամքայն ի Վուշանաց, և թագաւորէ ընդ նորա Յազկիրս։ Խւ սկսաւ ոգորիկ ընդ իշխանա Հայոց մեծաց Խորխստանք<sup>2</sup>, որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Վրիստոսի նահամակեցան, և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն, և խնդ զբարիոք պատերազմն պատերազմեալ ի մեծ անապատին յԱպար աշխարհին, և որ ինչ այլն ամենայն. զոր աւելորդ համարիմ երկրորդել զմիանգամայն ասացեալսն։

Իայց իբրև եղեւ մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Վշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան գաշտին, յԵրտազական գաւառին. և անդ յԱստուած խրախուսեալ սուրբ աստուածաբանակ զօրացն Հայոց՝ կատարեցան ի Վրիստոս։ Խւ անդ Վահան Նրծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճա-


<sup>1</sup> Ա. Ա. ՕՐ.՝ Ընդ նախարարսն։

<sup>2</sup> Ա. Ա. ՕՐ.՝ Խրոխտանօք։

կառ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէքն ձնմելով  
ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից:

Եւ իբրև ուզմ երկոցունց կողմանցն խռնեցաւ, և ձախոյ  
կողման թեւն Հայոց պարակլ սկսաւ, և սրբոյն Վարդանայ  
մտրակեալ զերիվարն ի փախուստ զախոյեանսն Պարսից դար-  
ձուցեալ և զկողմն իւրոյ ձեռին զնդին զօրացուցեալ՝ անգ  
Վահան Երծրունի ընդմիջեալ զգունդն Պարսից դարձու-  
ցանէ ընդդէմ Վարդանայ. և անյապաղ մինչ այս մինչ այն՝  
նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ  
ալք իբրև ճի: Ի վեր կառուցեալ զաշս սրբոյն Վարդանայ՝  
տեսանէ զանօրէնն Վասակ Աիւնեաց տէր, և զհետ նորա  
աճապարեալ արկանեն զեա ի յամրափակ զենեալ վաշտն ի  
մէջ փղացն. և քաջն Վահան Երծրունի ընդ նմա նիզա-  
կակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նա-  
հատակք Վարդան և Վահան, և զվկայիցն անուն ժառան-  
գեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, որ  
ոգիք: Եւ պատմի այս ի համառօտութեան Երլահամու  
Խոստովանողի:

Ի՞յց թէ Է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վա-  
հանայ ոչ է զրեալ ի զիրս պատմազրի՝ ստուգապէս առանց  
յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտու-  
թեանդ:



ԳՐՈՒ ՌԱՆ

Պատման յիշապակի վւան արէնահէղին Բարսումայի:

Ընդ ժամանակս Պելոզի ալքայից ալքայի էր ոմն յա-  
զանդոյն Նեստորի Բարձումայ անուն, որ ունէր զանուն  
եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն  
բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ  
Պելոզ վարելով՝ բազում օծիրս արիւն հեղութեան գործեաց:

Ի ժամանակին յայնմիկ էր Ճոխացեալ պանծալի աթոռա-

կալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստովոր Նայոց կաթողիկոս. զրէ առ կողմանս Ասորեստանի զգուշացուցանելով՝ մի խառնել ընդ նեստորականսն. զնոյն զրէ և առ որս ի Իուժաստանին էին ժողովուրդ ուղղափառացն: Դարձեալ զրէ և ի կողմն Դիկիանոյ, և Խաղուաց ձորոյ բնակիչն և աշխարհակալ տեալրս և առ եպիսկոպոսունսն: Զոր զժուղթն խարող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ պլքայ Պիրող, և ասէր, թէ զպայս ամենայն զոր զրէ կաթողիկոսն Նայոց և առ ապատամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Նայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդրա: Եւ ինքն Բարծումայ ի չքմեզ լինելով եկն եհաս յՆրգնաբզիւն և յաշխարհն Մոկաց, զի անդ զնեստորական աղանդոցն սերմանիցէ սերմանս: Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, ինդրեալ զպատմողական գիրսն Նայոց, զոր զրեալ էր հրամանաւ. սրբոյն Վարդանայ. և նորա կատարեալ զինդրելին: Դ նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մկրչապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն Պարսից արքային, միայն սպաննական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգաման: Նորա զըարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան<sup>1</sup> բինահանութիւն վրէժիննդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի զրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանկը, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ:

Եսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառուն Ոշտունեաց ի ծովեղերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուլրն Աստուծոյ Եղիշայ: Եսկ ի դառնալ զրոցն ի յաշխարհն<sup>2</sup> Մոկաց՝ ոչ ինչ ու մեք փոյթ վասն այն լինելով, կարծել վարդապետին զպայս այսպէս կանոնեալ զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար

<sup>1</sup> Այլ օր՝ առ զայրուցս պատգամին բարկութեան:

<sup>2</sup> Այլ օր՝ ի գառնալ գրոցն Եղիշէ ի յաշխարհն:

արքայն Պարսից ընդ տունն Արծրունիաց ի սադրելոյ Ռար-  
ծումայի ամբարշտի:

Մարկիանոս կայսր թագաւորիալ Յունացյերկորպն Թէս-  
դոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ուղ եպիսկոպոսաց<sup>1</sup>.  
առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի:

Իսկ Վասակ Արծրունի, հայր Եղանայ սրբոյ, առեալ  
զԾաճատ և զԳոտեր՝ զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի  
եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւելման  
աշխարհին. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ գնոսա սի-  
րով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պա-  
տիւ յառաջ ածեալ իրիւ զքաջամարտիկ ախոյեանս որ ի  
վերայ եկեղեցեաց Վրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ  
արեամբ չափ ձգնեալ նահատակեցան, և զիստովմանողական  
անուն ձայն ի վերայ եղեալ կարդային: Բայց աղերսեալ թա-  
գաւորն զարս պատուականս, զՎասակ և զԾաճատ և զԳո-  
տեր, ոլք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունիաց՝  
զի զժողովն ընկալցին ընդ երից<sup>2</sup> սուրբ ժողովոցն Նոքա  
պատախաննեալ ասեն. «վասն զի մեք ի պարսկակսն հինիցն  
անդուլ և անպարտպ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց  
սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնպ-  
դրութիւն. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն  
մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոս-  
տովանութեան Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար  
հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ  
կայսերական ծոխութիւնդ. այլ հրամայեսցէ մեզ զբել ի  
հայս և հարցանել առաջնորդացն հայոց, և ընդունել պա-  
տասխանիտ:

Եյլ և զայս ևս եղին առաջի թագաւորին աղերսական  
մեղադրանս, եթէ ընդէ՞ր իրիւ ժողովն գումարէր՝ ոչ զոք ի  
հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հա-  
ւատոց:

Պատախանի եաւ Մարկիանոս և ասէ. «վասն զի ա-  
ռաջնորդքն հայոց զպարսկական շփոթմանցն զվտանդ կրէին»:

1 Հին օր.՝ որ զեպիսկոպոսաց: Յայ-  
լում օրինակի այս բառք բոլորովին

պակասեն:

2 Յորինակսն ընդ երիս:

Սպա առեալ հրաման մեծամեծացն մեր Արձրունեացն՝ զբեն առ Արքահամ Մամիկոնէից եպիսկոպոս, որ էր աշակերտ սրբոքյն Աահակայ, և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: Խւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին: Թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: Զոր տարեալ զթուղթն<sup>1</sup> մատուցին առաջի թագաւորին: Խոկ թագաւորն զիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամ կամաց իւրեանց, կեալ որպէս հաճը թուի: Խւ կացեալ անգ մինչ ի ժամանակս առաջինն Ղեռնի կայսեր՝ մեռանի անգ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորպէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց:

Խոկ երանելոյն Եղանայ Արձրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նոզին կլօսնաւորական խստամբերութեամբ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս արբոց որոյ ոսկելքն ընդ այլ սուլբսն հանգուցեալ կան ի վանսն Յագամակերտոյ:

Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց<sup>2</sup>, որպէս ցուցանին բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Զամասպայ և Վաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: Խւ նախարարքն Հայոց կրէին կիրս ծանրաբեռինս ի զէն և ի ծակատամարտ:

Խոկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան աւժեղանայր ընդդէմ Պարսից: և առ ինքն ժողովեալ նախարարքն Հայոց՝ գնեն ուխտ և դաշինս աստուածայինս, միջնորդութեամբ սուլբ Աւետարանին՝ անկեղծաւոր և աննենգ աիրասիրութեամբ ցուցանել հնագանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զսաստիկ արիւնահեղութեանցն գքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ:

Խւ եղեւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատե-

1 Յօրինակն՝ զտարեալ թուղթն:

2 Այլ օր՝ նեղութեան տչիարհիս հայուս:

\*

բազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս, այն ինչ արծարծեալ<sup>1</sup> առ նօրոգումն շնութեան եկեղեցւոյ Պրիստոսի ի կործանմանէ հինքի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. և օփոեալ ասպատակ ընդ կորմանս կողմանս՝ և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրա այրաւձիոց, զիորովի պատերազմողս ի վարելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ:

Եզդ եղեւ քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: Նոյն ժամայն աճապարհալ Վահանայ խրախուսեալ յԱստուած, ձայն քաջալերութեան առ նախարարսն Հայոց ասէ. «Հապա, քաջք, վառեալ ի զէն ի յասպազէն, արիաբար մարտիցուք. մի՛ երկիցուք ի բազմութինէ զօրաց նոցա. Տէր խոբտակէ զպատերազմողսն, Տեառն է պատերազմ; Տէր տկար առնէ զհակառակորդսն<sup>2</sup>, Տէր է յոյս մելու:

Խւ նոյնժամայն վառեցան պատրաստեցան, հեծեալ յիւրաքանչիւր յերիվարս ելին ընդդէմ նոցա: Իսկ իրրեւ տեսին զըազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին լքին զմիմեանս և գնացին յետս կոյս, մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Ո՞եկրշապուհ<sup>3</sup> և Յաշկուր Երծրունիք, և Պամնարն Ներսէհ, և ի տանէն Ըմատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ, նիզակակիցք միմեանց եղեալք երկք տասնեակք թուովն, զսուրբ Երրորդութիւնն յօգնականութիւն իւրեանց վերաձայնեալ՝ լքին զօդնականութիւն մարդկան. և մածեալ պնդեալ իրրեւ զըլուք պղնձի, իրրեւ զմի այր, և ասելով միաբան իրբեւ ի մի բերանց, «ամենայն ազգք շրջեցան զինեւ, և անուամբ Տեառն վանեցի զնոսա» և ըստ միոջէքն՝ և հարեալ ի գիմի զաշիկ<sup>4</sup> զօրուն Պարսից. և նոցա թուէր ծաղը առնել: Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իրրեւ մրբիկ զփոշի պտուտեալ, իրրեւ հուր ընդ եղէզն ընթացեալ՝ սուր ի վերայ

<sup>1</sup> Այլ օր՝ արծարծարեալ:

<sup>2</sup> Այլ օր՝ զհակառակողմն:

<sup>3</sup> Յօրինակսն՝ մը Շապուհ:

<sup>4</sup> Այսպէս յօրինակին. գուցէ զզա-

կը:

Եղեալ վանեցին զբագումն քան եթէ զսակաւս, և զմնացեալսն փախստականս արարեալ հետամուտ լինելով հանին ի սահմանացն Նայոց. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց այլեաց և որբոց<sup>1</sup>: Եւ ամենեցուն բերան լցեալ խնդութեամբ ետուն փառս Աստուծոյ:

### ԳԼՈՒԽ Գ.

ԵՅՆԵ ՇՐՋԻ ԵՆԼ Էտրյուն զար Աստուծոյ-ԵԿԱՆԱՆ Պարսից դան  
Աստանական:

Յամի ութերորդի Մուրկայ Յունաց թագաւորի, թագաւորին Պարսից Որմզդ<sup>2</sup> որ ի տանէ Աստանայ՝ սպանաւ յեւլոց հաւատաբմաց, և որդի նորա Խոսրով մանկագցն տիովք մնացեալ՝ առնու զթագաւորութիւն: Վահրամ ոմն Մեհրեւանդակ, որ էր իշխան կողմանցն արեելց, այլ հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Խետալացոց, և բռնութեամբ կալեալ<sup>3</sup> զի՞ախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկըս գետոյն մեծի որ կոչի Վահրօտսա և զթագաւորութիւնն Պարսից յինքն կորզեաց, և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդով և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ձոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ քեռալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ «Խագաւոր մեծ, իշխան ծովու և ցամաքի, տուր ինձ զօր յօդնականութիւն և հաստատեալ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց, զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ և եղէց քեզ որդի Հնազանդութեան և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն

1 Ա. օր. և աղքատաց այրեաց և  
որբոց:

2 Յորինակին՝ Որմզդ:

3 Մեք պապէս. իսկ ի չին օր. և ի  
Տակ՝ եկեալ:

Նրեաստան մինչև զՄծուխն քաղաք, և ի յերկրէ Նայոց՝ զաշխարհ տանութերական իշխանութեանն մինչև յԵրարարատ և ընդ Իռուխն քաղաք և յեղը ծովուն Ի՞նունեաց և յԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. և կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորիլոյ»:

Խւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յդէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա զիր ընդունելութեան, և առնցըր ի նմանէ երդումն: Խւ տայր նմա զօր կայսերական յօդնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Նայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԵսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Նայոց, Վրաց և Եղուանից, գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Նորպատականի ի Վառարատ գաւառի:

Գրէ և Վահրամ առ Մուշեղ և այլ զօրագլուխսն այսպէս.

«Ճս այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձրուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Աասանայ: Իռուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. այլ ես ոչ երկեաց ի ժողովելոց երեցանցդ Նորմայեցոց, որ գումարեալ գան ի վերայ իմ:

Իայց դուք, Նայք, տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. ոչ ապաքէն առունդ Աասանայ երարձ զերկիր ձեր զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ Իայց ապահանց թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեզակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Նայոց. և զոր կամիջիք՝ արասջիք ձեզ թագաւոր, և յԵսորոց կողմանէ զՆորիստան և զՄծուխն և զՆուշերական մինչև ցսահմանս Տաճկաց, և ես մի՛ իշխեցից քան զԵրասիս անցանել յայդկոյս: Խւ զգանձդ Երեաց թագաւորութեան այնշափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ մինչև ձեր

թագաւորութիւնն հաստատեացիս Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երգուեալ, և աղ ծբարեալ հրովարտակին ետ տանել, և նոցա առեալ և ընթերցեալ ոչ արարին բանիցն պատասխանի:

Գրէ դարձեալ թուղթս երկրուդս և ասէ. «Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել ես զձեզ ապաշաւեմ, ասէ» Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանել ձեզ փիզս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց, որ տեղասցեն. ի վերայ ձեր նետո երկաթեղէնս և շուառունս մուխս պազաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կրուփք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ»:

Գրէ պատասխանի ԱՌուշեղ նմա այսպէս. «Օքանս քո լունալ՝ ասեմ, եթէ յՆստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. բայց զու պարտիս յանձն քո ապաշաւել քան թէ ի մեզ զի տեսանեմ զքեզ այր պուտարան, զի յանձն քո խրախուսես և ոչ յՆստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն, այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և Ճիթեսցեն ի վերայ քո իրմէ զամպս երկնից և բռնալիր նիզակօք անցանիցն ընդ մէջ բազմութիւն քո իրմէ զփայլատակունս հրոյ շանթից: Քանզի թէ Նստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իրմէ զփոշի։ Լշին անդ<sup>1</sup> Վնդայ և Վստամ և զօրք պարսիկք իրմէ ըս հեծեալ. թող զզօրս Յունաց և Հայոց։ Եւ ի վաղիւ անդը մինչդեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ, ճակատ առ ճակատ ուժդին<sup>2</sup> խումբ և անհնարին խառնուրդ. և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչեւ ընդ երեկս քաջապէս՝ և յոգնեցան երկրքեան կողմանքն ի մեծ պատերազմին. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խալացեալ ոռոգանէր զերկիրն ամենոյն։ Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. և նոցա հետամուտ եղեալ մինչեւ ի մութ երեկոյին, լցին դիակամբք

1 Ակք այսպէս. իսկ չին օր. և  
Տաղ՝ և նանդ, և.

2 Ակք այսպէս. իսկ չին օր. և Տաղ՝  
Էտկատու ձգին.

զերկիրն. և զբազումն ձերբակալ արարեալ ածին առ Խոսրով, և զօրացաւ յաւուր յայնմիկ յաղթութիւն Խոսրովայ: Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախզ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ:

Եւ հաստատեցաւ Խոսրով յաթոռ թագաւորութեան, և զիստացեալսն կայսեր՝ կատարեաց. ետ նմա զԾրեաստան զամենայն մինչեւ ցՄ'ծուին, և զերկիրն Նայոց մինչեւ ցգետն Հուրաստան, և զգաւառն Կոտայից մինչեւ յաւանն Պառնի յեզր ծովուն Բազունեաց և մինչեւ յԽոհեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչեւ զՆացիւն և ցՄ'ակու: Եւ էր ոէր դաշնաւորութեան մեծի ի մէջ երկոյցունց թագաւորացն Պարսից և Յունաց:

Եւ եղեւ յամի չորեքտասաններորդի Խոսրովայ ալքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թարակացւոց կողմանէն, և նստուցին իւրեանց թագաւոր այր զոմի անուն Փոկաս կոչեցեալ. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ սպանին զՄուրիկ թագաւոր և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան:

Իրեւ լուաւ Խոսրով ալքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէմինդիր արեանն Մուրկայ: Եւ ժողովեալ զբազմութիւն զօրաց իւրոց՝ առնէր մնասս մեծամեծս և սաստիկս ի բաժնին Յունաց: Իրեւ լցան ամք և Փոկայ՝ սպանաւ և նա Նայրակղէ, որ դաւեալ նրմա՝ էառ զթագաւորութիւն նորա: Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ ալքայ Խոսրով ինդրել ի նմանէ զիսաղաղութիւն մեծաւ թախանձանօք, ասէ. «զվրէժ արեանն Մուրկայ առի ի թշնամոյ նորա, արդ կամ եղեցի քեզ առնել ընդ իս զիսաղաղութիւն և արգելու զսուրք քո յերկրէ իմմէ»: Ուրում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. «իմ է թագաւորութիւնն այն, և ես զորդին Մուրկայ նըստուցի թագաւոր, և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ զիսելով եթէ համարս ինդրեցից զանձիս այսմիկ, և ոչ զադարեցից մինչեւ առից զնա ի բուռն իմ»: Եւ առեալ զգանձնն՝ հը-

բամայեաց սպանանել գրնծայաբերտն, և բանիցն Հայրակղի ոչ  
արար պատասխանի, այլ առներ վեասս սաստիկս ի կողմանս  
կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. և զօրք  
Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար  
նոցա անուաննեալ Արամայուղան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ  
Խրուսաղէմի զխաղաղութիւն. քանզի էին հնազանդեալք  
յառաջագոյն ընդ թագաւորութեամբն Յունաց, և սպանեալ  
զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պա-  
տրաստեալ ի պատերազմ ընդգէմ Պարսից: Յայնժամ ժողո-  
վեալ Խոռեամ Խռազմայուղան զզօրս իւր բանակեցաւ շուրջ  
զնրուսաղէմաւ և պաշտեաց զնա, և պատերազմեցաւ ընդ  
Խրուսաղէմի աւուրս ծի, և փորեալ ի ներքոյ զհիմունսն՝ ա-  
ւերեցին զպարիսպն: Խռ եղեւ յաւուրն ինն և տասներորդի,  
յամսեանն մարգաց, որ օր իւ էր ամսոյն, յամի քսան և հին-  
գերորդի թագաւորութեանն Խոսրովու, որ կոչէր Խալրուէզ,  
զկնի ժ աւուր անցանելոյ զատկին՝ առին զքաղաքն. և սուր  
ի գործ արարեալ ժ աւուրս՝ սպառեցին զամենայն մարդ ի  
քաղաքին. և նստան ի ներքս ի քաղաքին խ օր. ապա ելեալ  
բանակեցան արտաքրոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով:  
Խռ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, գտաւ  
թիւ սպանելոցն ծեր մարդ: Կալան և զհայրապետն Օ-ա-  
քարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝  
սկսան զնոսա տանջել, մինչեւ զբազումն ի պաշտօնէիցն կա-  
ռափեալ սատակեցին. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն  
էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ  
անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: Խռ վասն մնացե-  
լոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յար-  
քունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքա-  
ղաքն և հաստատել զամենհամն յիւրաքանչիւր կարգ: Խռ  
անդէն վաղվաղակի կատարէին զհրաման արքունի. և կարգե-  
ցին երիցապիտ զոմն ի վերայ քաղաքին որում անուն էր Մո-  
ղեստոտ Խռ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազումն Խո-  
ռուէմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Դիւզանդայ, և  
խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ:  
Խրլւ հտես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին

Հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոյսա, մեծարել իրբե զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ ընծայիւք. և տայր զօրագարին. և իշխանացն ամենեցուն պարգես մեծամեծս, և բաշնէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խռոկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև և օրս Ապա ելիալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրագարին Պարսից. պի՞նչ կամիք, ասէ, առնել, և զանն էր եկիք ի տեղիս յայս. միթէ զծով իրբե զցամաք համարիցիք, մարտնչել ի սմա ընդ մեզ. կարտղ է Աստուած, եթէ կամեսցի՝ ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր: Ի՞յց զգոյշ լերուք, մի գուցէ ոչ հածնացի Աստուած, և խնդրեսցէ ի ձէնչ զվրէժ արեան կոտորածի աշխարհի: Ո՞հ ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեկործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: Ի՞յց և զի՞նչ իսկ խնդրիցէ թագաւորն ձեր յինէն, որ ոչ առնէ զիւաղաղութիւն, բառնալ կամի զթագաւորթիւնս զայս: Մի ջանացի. քանզի յԱստուծոյ հաստատեարէ, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս համար իցէ կամք Աստուծոյ կատարեսցին: Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զը և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Նայրակդի. և եթէ երկիր խնդրիցէ՝ ահաւադիկ երկիրդ առաջի<sup>1</sup> ձեր, եթէ կամիմք և եթէ ոչ կամիմք՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: Եւ եթէ քաղաքը խընդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքը մեծամեծք և պարսպաւորք. այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: Մինչեւ յերբ ոչ կամիցի<sup>2</sup> յագենալ արեամբ, միթէ ոչ կարեին Նոռոոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իրբե ետ Աստուած զսա

ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա օգորմութիւն։ Ի այց արդ ես զնոյն բարիս խօսեցայց և խնդրեցից ի նմանէ հաշտութիւն և սէր, և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ —ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգեսութիւն, և յիրիցդ օգուտ գտանէք. զի ոչ դուք նուազեցիք ի սովոյ, և ոչ հարկէ արքունի կորնչեցին։ Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակք, խնդրիլ ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն։ Եւ նոցա ընկալեալ զինդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՞նչ հրամայեսցէ առնել Եւ զօրուն զնացեալ անափ ձմերեցին ի Առւրիա։

Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն, և զշրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէք. այլ հրաման տայր զօրացն՝ նաւս կազմել և անցանել ի Առստանդնուպոլիս։ Եւ եղեւ պատերազմ և նաւամարտութիւն տաստիկ ի մէջ ծովուն։ Եւ կորեան ի զօրացն Պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց դու հանդերձ նաւօք իւրեանց։ Եւ տեսեալ զայնպիսի կորուստ՝ ոչ ևս համարձակեցան ի նշյն գործ, այլ տարածեալ կալան զերկին ամենայն։

Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւութիւն նորա. զրէ հրովարտակ նախատանաց առ կայսր, որ ունէր օրինակ զայս։

«Սատուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկիր և ծովու, ծնունդ մեծին Երամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղսս անմիտ և առ անպիտան ծառայ մերէ Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առքեզ է ծախսս, և զայդ ոչ զիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես։ Օծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ<sup>1</sup>

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ ընդ ինձ։

ի պատերազմ, և ասես վստահանալ յՆստուածն իմ Նդր  
նւր է Նստուածն այն, զոր դուդ ասես, վասն Էր ոչ վրբ-  
կեաց զԱեսարիայ և զԵնտիռք և զՏարսոն և զԵմասիայ և  
զԵրուսաղէմ և զԵղէքսանդրիս և զԹներայիտ և զայլ աշ-  
խարհւա: Միթէ և այժմ ոչ գիտիցես, թէ զամենայն երկիր  
զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. արդ զԱռստանդնու-  
ազօլիս միայն ոչ կարիցեմ բերել: Խայց արդ զամենայն յան-  
ցանս քո և զվեսաս զոր արարել թօղում քեզ արի առ զին  
քո և զորդիս և եկ այսր. և տաց քեզ ազարակս, այդիս և  
ձիթենիս և սերմանս, զի վարեցես և հնձեցես, և մեք սի-  
րով նայեսցուք ի քեզ: Ապա թէ ոչ՝ մի խաբեացէ գքեզ յոյան  
մնոտի, զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրե-  
ցուցանել ի Նրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ  
փայտի՝ իսկ արդ զքեզ զիանդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց  
իմոց: Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս  
իմ և ըմբռնիցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ ու-  
պէս դու ոչ կամիցիս:

Եւ առեալ Նայրակղի զՀրովարտակն՝ հրամայեաց ընթեռ-  
նուլ առաջի հայրապետին և ամենայն մեծամեծացն. և ապա  
մտին ի տունն Նստուծոյ, և տարածեալ զՀրովարտակն առաջի  
սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր  
առաջի Տեառն և լացին դառնապէս, զի տեսցէ Տէր զնախա-  
տինսն զոր նախատեաց զնա թշնամին:

Եւ հաճոյ թուեցաւ Նայրակղի և ամենայն սինկղետո-  
սիցն՝ նստուցանել զորդին Նայրակղի յաթոռ թագաւորու-  
թեան, որ էր մանուկ փոքր. և ինքն հանդերձեալ կազմել  
գնալ ընդ արեւելս նաւել ի Քաղկեդոն: Եւ զօր Պարտից ար-  
քային որ յաշխարհին՝ ոչ գիտացին. և Նայրակղի ժողովեալ  
զամենայն սրեւելեայս իրեւ ծիւ՝ դիմէ ի վերայ Խոսրովայ:  
Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսց՝ ել դէպուդի  
ի Կալնոյ քաղաք և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Գուբին՝  
աւերէ զնա և զՆախիճաւան և զՈրմի, և դիմեալ ի Գան-  
ձակն Նորպատականի՝ բրէ զնա, աւերէ զԵհմատան և զՄայ,  
կործանէ զբագին հրատին մեծի, որում Վշնապն կոչեն, և  
լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զիսոսուն

և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուլր սուսերին: Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն այրակղի: և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատափէր զամենհսեան, մինչ ոչ մնալը ապրեալ:

Օայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես գիրծանունն նոցա յայտ առնէ. և զոր ասէն այսպիսի ինչ է. «վայ քեզ, եղուկ դու, երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յօւնաց ի քեզ արշաւանս եղեալ՝ հասանիցին և հարկանիցին զքեզ ի սուլր սուսերաց, և յառաթուր սմբակաց: Վայ քեզ, եղուկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն դձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: Յայնժամ մերկասցի արեգակն զլցյս իւր ի քէն և զգեցուսցէ քեզ խաւար. յայնժամ ահագինս որոտալով ձայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղղղիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբուիցի երկվարաց և աղաղակ բազում սպառադինաց յարձակեցին ի վերայ քո. յայնժամ ամօթալից աչճք տեսցես զբազմափառ զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուզ խաւար ի վերայ լիրանց և դաշտաց քոց. յայնժամ կերիցէ սուլր զպատերազմողս քո. ելցն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեացին զմնայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբուժն: Օ-ի որովք բարձրացար և ամբարտաւանեցար՝ նոքիմքք խոնարհեսցիս և անկցիս: Քակտեսցի և աւերեսցի պերձութիւն տաճարաց քոց, և ամենայն ուրեք անարգեսցի: Եւ զոր ծնար և գգուեցերն՝ քեզէն կոչեսցես ի մահ»: Այս ամենայն վճարեցաւ Պարսից ի ձեռն յունական սրոյն:

Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ<sup>1</sup> զզօրս իւր և ոլք.

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ աբեարձել:

ի դրանէն արքունի որ կոչին համհարցք<sup>1</sup> և փուշտիպանք, և ամենայն արք ընտիւք տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի։ Եւ նա գնաց ընդդէմնոցա սաստիկ զօրութեամբ. և եղեւ բալ և մուխ թանձրամած խաւարին ի վերայ երեսաց ամենայն երկրի. և ոչ զիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչեւ երթեալ խառնեցան և բախիցին զմիմեանս պատերազմօք։ Եւ այնպէս վրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ՝ տալ ի ձեռու նորա զամենեսեան. և նոքա Հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզորավարն ի պատերազմին, և զմնացեալ սակաւան ի. մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել։ Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ աստուածասէր և բարերար տէր, արա ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան։ Յայնժամ Հայրակղոս հրամայեաց առնել ի վերայ նոցա ողորմութիւն։ Եւ թողին զնոսա արք իբրեւ դու, վերաւոլք, բոկք և մերկք և հետեւակք։ Եւ ընդ առաւոտն հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփոել ի վերայ ամենայն երկրին, և հարկանիլ զամենայն երկիրն սրով սուսերի։

Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Ահեկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. և Հայրակղի հասեալ բանակեցաւ առ դուրս Տիսպոն քաղաքի. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անշափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրեւ զաւազ ծովու անթիւ։ Իայց տիկնայքն և հարճքն և ամենայն որդիքն արքայի և արքունի երիվարացն՝ էին անդէն ի Ահեկաւատ. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն<sup>2</sup>, որ վերծեալ էին ի պատերազմէն։ Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահազին դատատանօք և սպառնալեզք, թէ պնդէլ և դուք ոչ մեռաբուք<sup>3</sup>

1 Այսպէս յօրինական. գուցէն համհարք կամ համհացք, հացակիցք։

2 Այլ օր՝ և զզօրն ամենայն։

3 Այլ օր՝ մռայք։

ի պատերազմին, քան թէ եկեալ փախստական գնացէք գալ առ  
իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վը-  
նաս. մի՞թէ արդեօք զնոսրով մեռեալ կարծէիք։ Յայնժամ  
խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ա-  
սեն. «Թէաէտ և ի թշնամնայն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց  
դորա մեզ չէք ապրել. արդ եկայք իմասցուք ինչու Յայնժամ  
երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ  
զոմ ի Վեհիաւատ և կալան անդ զտիկնայն ամենայն և  
զհարճն և զօրգիսն արքայի, և զերիվարսն արքունական, ո-  
րսվ եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտարար  
ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւկիք չէր տեղեակ. և  
զորդի նորա Կաւատ նստուցին թագաւոր. և նա դիմեալ եկն  
ի վերայ նորա: Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի Խոս-  
րովու, թէ ապստամբեցաւ ամենայն Սրեաց երկիր ի քէն, և  
զորդի քո: Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դի-  
մեալ գայ ի վերայ քո: Եւ ընկոստուցեալ Խոսրով ի յահէն-  
և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի  
փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի՛, ձի՛, և մտեալ յաս-  
պաստանն՝ ոչ հանդիպեցան ձից: Յայնժամ արքայ Խոսրով  
յայլակերպս եղեալ զնաց եմուտ ի բուրաստանն արքունի, և  
երթեալ ի թաւ պուրակս բուրաստանացն, մտեալ ի նելքոյ  
թաւ թփոյ ծաղկոցն որ էր մուրտ բազում՝ զուղեալ դադա-  
րեաց: Եւ Կաւատ ալքայ հրամայեաց խնդիր առնել. և եր-  
թեալ ի բուրաստան՝ գտին զնա. ի թաւի անդ զուղեալ կա-  
լան զնա և եկին ածին զնա ի դախողի՛ անդր: Նրաման ետ  
արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենե-  
կացն. և մտանէին առ նա արք ի նախաբարացն, խօսէին դա-  
տաստանօք և նախատէին զնա, անարգեին. և գնային: Այս  
եղեւ զաւուրս ինչ. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ,  
եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց  
մասնել և սպանանել զնա. որք մտեալ քարտակատեցին զնա  
տապարօք ի պենեկի. անդ և սպանին: Նրամայեաց և զեղքարսն  
իւր սպանանել, որք ի միում ժամու սպանան արք ի, ամե-  
նկեան ի չափ հասակի եկեալ:

Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորու-

թեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյն Եւտ և կայսեր զամենայն զոր և կամեցաւ առնուլ և մինչդեռ խորհեր արքայ Կաւաստ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս զ.

Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշեր, կարի տղայ մանուկ։ Յայնժամ Հայրակղէս զրէ առ Խոռեամ և ասէ. «Կաւաստ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տաց զնա, և եթէ զօր պիտոյ է յօզնականութիւն՝ արձակեցից որչափ կամիս. բայց արդ եկ ի կողմանցդ յայդցանէ, եկից և ես յԱսորեստան. և երդումն արարեալ ուխտ դիցուք ի մէջ մեր երկոցունց՝ խաղաղութեամբ ունել զթագաւորութիւն։ Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԱստիքիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Ենտիրքացւոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Աիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանդամ կամեցաւ Հայրակղոս. և ուրախ եզեւ մեծապէս խնդութեամբ. և Հայրակղոս տայ նմա զթագաւորութիւնն և խոստանայ զօր որչափ և պիտոյ իցէ։ Եւ խնդրէ ի նմանէ խնդիրս, առաջին, ասէ, զաստուածնկալ սուրբ նշանն, զոր գերեցեր յՆրուսաղէմն՝ խնդիր արարեալ մեծաւ փութով այսրէն դարձուացեա։ Յայնժամ երդուաւ նմա Խոռեամ և ասէ. «Հրամայիա՝ արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ։ Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեաննն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յիրեելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր։ Իսկ Խոռեմայ առեալ զզօրսն երթեալ ի թագաւորանիստն, հրաման տուեալ այլոց ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշեր։ Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռէմ վասն աստուածնկալ սուրբ Խաչին. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչեւ կարացին գտանել

նովիմբ կազմածաւ<sup>1</sup>, և ետ յարսն ոլք եկեալ էին. նոքա առեալ գնացին փութանակի. և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումն և մեծարեալ արձակեաց պատուով: Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն, և տարեալ հասուցանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալց, հեղումն արտասուաց յահագին բորբոքմանէ սրտից նոցա և գութ խանդաղատանաց թագաւորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բընակչոց քաղաքին. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանդամայն և յայնչափ խնդութին: Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: Եւ բաշխեաց ամենայն եկեղեցեացն և աղքատաց քաղաքին օրհնութիւն և գինս խնկոց, և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեացէ ինքեան զքաղաքն և զսահմանն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրիկաւ հաստատեալ էր: Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմիւսանգամ առածն Երուսաղէմի, որ յորդւոցն Խսմայէլի:

Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւն՝ յաւուք միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցաներ զինքն և քաջալերել զզօրսն. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա:

Ապա թագաւորեցուցին զԻ՞որն<sup>2</sup> զդուսարն Խոսրովայ, որ էր կին նորին, որում Բամբիշն կոչէին. և կարգեցին Հքրամանատար ի զբանն զԼուսուխ Որմզդ, որ և սպանաւ ի Բամբշանէն որ կոչէին Բոր: Եւ կալաւ Բորն զթագաւորութիւնն ամն բ և մեռաւ: Եւ յետ նորա ածին զԼուսրոյ սմն տղայ մանուկ և նատուցին իւրիհանց թագաւոր: և նա փութանակի վախճանեցաւ: Ապա ոմանք թագաւորեցուցին զԼ-

1 ԱՅԼ օր՝ կազմածով

2 ԱՅԼ օր՝ Դբորն:

զարմիկ գուստով Խոսրովու, և զօրն Խոռհմայ թագաւորեցուցին զՈրմզդ ոմն ի Մծուխն քաղաքի. և յայնմէնտէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: Յետ այսր ամենայնի Յազկերտ թագաւորիաց ի Տիսպովն, և ունէր զթագաւորութիւնն երկիւղիւ, և ոչ հրամանատու այլ անձնապահ: Որ և ի սա հասեալ՝ վախճան եղեւ թագաւորութեանն Պարսից: զոր յետ սակաւու միոյ սասացուք:

Սատանօր և ի դէպ ելանէ մարզարէութիւնն Դանիէլի, աեսութիւն անհեղեղ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցիղէն և երկաթեղէն ոտիցն:

### ԳԼՈՒԽ Դ.

Ի՞ն ո՞րի եղան բարյուսն ըստ նախառուսնեանն Պարսից, և ի՞ն խանորդեաց մէս ևս ըստ Խամայէլահան:

Ընդ ժամանակս Նայրակղի կայսեր Նոռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութիւնն Պարսից: Խւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Խդիսացւոց ալք ժիւ յամենայն ցեղեցն Խսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ զօրն Պարսից, և Թողին ի բաց զքաղաքն նոքա երթեալ մոին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբէլ ի Նոռվմայեցւոց տէրութենէն:

Իսկ թագաւորն Նայրակղէս հրաման ետ պաշարել զնոնա: զոր Թէոդորոս եղբայր թագաւորին և բազմութիւն զօրացն կամեցան սատակել զնոսա: իսկ թագաւորն հրաման ետ՝ երթեալ գնալ ի սահմանաց իւրոց: և նոցա կալեալ զՃանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Խամայէլի, ի քաղաքն որ կոչի Մաղիամ, զոր աւելիսացն Խսրայէլ յելանեն իւրում յԽճիպտոսէ և ընդ պատերազմեն ընդ Իազակայ արքայի Մովաբայ: Խւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ<sup>1</sup> շինեցին զքաղաքն Մաղիամ և բրնակեցան ի նմա:

1 Այլ օր՝ վասն որոյ աներկիւղ:

Յղէին պատգամն առ որդիսն Խսիցէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ որդիք Նբրահամու եմք մեք և զուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանդութեան մերոյ։ Խոհ նորա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մշջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կոոց ըստ իւրաքանչեւր կամաց։

Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Նբրաբիոյ ի տեղւոջն Փառան, որ այժմ կոչի Աբրայ, արք պատերազմողք զօրապլուիք, պաշտօնատարք մէհնին Նմովնացւոց պատփերին, որ կոչի Ամմամ և Վարապու Դհէպ եղեւ միում ի նոցանէ մեռանել, որում կոչէին Նբրզլայ. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Ահմէտ կոչէին. զոր առեալ սնուցանէր հօրեղբայր իւր Նպուտալպ մինչեւ ցարբունս հասակի. և ի չափ ինչ հասեալ բնակեցաւ առ ումեմն մեծատան ի նոցունց ազգականից. հարկանէր<sup>1</sup> նմա սպասաւորութիւնո միամիտս, արածէր ուղտս և լինէր հրամանատար տանն նորա: Եւ իրեւ անցին աւուրք ինչ վախճանեցաւ սանուտտէր տանն: Տեսեալ կնոջն զԱհմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն<sup>2</sup> յամենայն իրս աշխարհականս՝ եղեւ նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: Եւ եղեւ այր թանգար արտեստիւ և հմուտ վաճառկանութեան. հարկանէր ծանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յեզիպսոս և ի կողմանս Պաղեստինացւոց. և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղեւ նմա ի կողմանս Նգիպտացւոց հանդիպել առն միոյ մռնազնի, որում կոչէին Աարգիս ՌՀիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զհնոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Սստուծոյ: Եւ միջնորդէր նմա հետեւել հաւատոյ առաջնոյ Խսրայէլականացն, զի՞ թէ յայս եկեսցիս՝ իմով հրամանաւ եղեցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո: Յուշ առնէր նմա գիսոստումն Նստուծոյ առ Նբրահամ և գիսրգս թլփա-

տութեանցն և զբուհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Խսմայէլացոցն մինչև իսպառ:

Եւ եղե ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և աղդումն ահագին և դիւական անկեալ ի վերաց նորա՝ ուշաթափ անկեալ գնէր, զոր դիպողագոյն է այժմ ըստ առաջիկայ օրինակիս յայտ առնել. քանզի ասեն գինոջէն, յորմէ նեռն է ծնանելոց՝ ծանապարհորդել յեզիալտոսէ յաշխարհն Պազեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձանն կնոջն Դաւթայ՝. երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանց կնոջն քարացելոյ եթէ ծնցիս որդի աշխարհակալ. որ ի պոռնկութենէ յզացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: Այսպիսիք և առ սովաւ երեւեցան. քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ նրափիսի պատճառաւ անկեալ եղեր ի մըտաց՝ ասէ, «ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն զինաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտեր: Եւ եկեալ ի Փառան՝ զնոյն ասաց երկրորդել զբանս զայսոսիկ առ հօրեղբօրն իւրոյ որ կոչէր Ապղջէկր: Ասէ, «զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երեխ. եթէ այլ ևս յաւելիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտապան»: և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերեւ թշյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: Եւ բազումք ի նոցանէ հաւանեցան նմա՝ պատգամաւոր Աստուծոյ ասել:

Եւ յաւուր միում լեալ նորա ի տիրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն հմուտ առ նա Ալի որդի Ապուտարպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տիրեալ. և նա ասէ՝ զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալիք: Եւ Ալի էր այլ քաջ. ասէ ցնա, արի՝ ելքուք, քանզի են և ընդ մեզ ալք բազումք, թերեւ լիցի ելք իրացդ պիտանութեամբ:

Եւ եկեալ նոցա արտաքս՝ սկսաւ խօսել Մահմէտ հրա-

պարակաւ զնոյն բանս. և եղեւ աղաղակ մեծ ի միջի նոցա  
և կոիւ այնքան, մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին։  
Եւ պարտեցաւ կողմն Մահմէտի, և վիրաւորք բազումք լի-  
նէին յերկոցունց կողմանցն, և փախստական եղեալ Մահմէտ  
և Նլի և ընդ նոսա իրրե արք չ՝ եկին ի քաղաքն Մադիամ,  
զոր և ասացաք յառաջազդյն։ Եւ ուսեալ Նրէիցն զպատ-  
ճառս փախստեանն՝ խրախուսեցին ի միարանութիւն, ճշմա-  
ցիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիլք Աստուծոյ և  
որդիք Եբրահամու և եղբարք միմեանց։ Խզն ընդ նմա և  
ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատ-  
րաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր Հրամացեսցեն։  
զոր թէ ասիցէ ոք՝ ի Հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն ա-  
ռաջարկութեանն այնորիկ։ Գումարիցան ի միասին Նրէայքն  
հանդերձ Խսմայէլացովք և եղեն բանակ մեծ, և եկեալք ի  
վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադրձացն,  
սպանին և զԷպղջէհրն և զբազումն ի զօրէն Ամոմնացւոց և  
Մովարացւոց, կործանեցին և զպատկերսն Խամամայ, որ ի  
բաժնին այնորիկ. յանդգնեցան ասել և զմէհեան՝ տուն Եբ-  
րահամու, հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմա-  
նացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով։

**Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն** իրացն և զմիարանութիւն  
Նրէիցն՝ ասաց զինքն զլուխ և առաջնորդ ամենեցուն։ Խար-  
գեաց Հրամանատարս և զօրապլուխս ինքեան յիսմայէլակա-  
նաց անտի՝ զԷլի և զԷպուրիքը և զԷմր և զՌւթման։ Եւ  
յղէ պատգամ առ Խէոդորս եղբայր Հայրակղի, լռտ այնմ  
որում Նրէայքն եղեն ձեռնտու, եթէ Պերկիրդ զայդ Եբրա-  
համու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս  
նոցա էր բազում ժամանակս. և եթէ վասն չարութեան գոր-  
ծոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւա-  
կան լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ. և արդ մեք զաւակ  
Եբրահամու եմք. և գիտէք դուք զխոստումնն որ առ Խսմայ-  
էլ հայրն մեր. տուք ի մեղ զերկիրդ մեր խաղաղութեամբ,  
ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և  
զայլ ևս բազումն։ Եւ նորա կամեցեալ ցուցանիլ թագաւո-  
րին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նո-

բա. Առառանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչեւ տեսցէ զելս իրացն. և բանակն Խսմայէլի հզօրտգոյնս ստիպէր ի պատերազմ: Եւ նոքա կամեցեալ անձնապահ լինել աշխարհին՝ զնացին ընդդէմ նոցա. թողեալ զերիվարս իւրեանց, ի հետիոտս ելին ընդդէմ նոցա Խսկ նոքա քանդի ի հանգստեանն էին՝ զիմեցին ի զերայ նոցա, և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապայ արեգակսնն և ի սաստիութենէ աւազոյն, որ ոչ ունէր գիայ ոտից, և ի հետեւակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալ անկան ի ձեռս թշնամնացն, որք դատացին ի սուրս իւրեանց, և եկեալ ի տեղի բանակի նոցա՝ առին աւար բազում, և սկսան աներկիւղ տարածանել ի զերայ երկրին. քանդի ոչ կասկածեին ի պատերազմէ իմեփէ:

(Հայնժամ տեսեալ Խրուսագէմացւոցն զանհնարին զիպուածն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունակսն հանդերձ այլ ապասխիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Խօստանդին. և Խսմայէլ տիրեաց ամենայն ձրէաստանի)

Խսկ արեգայն արիոսեան, զօր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, աեսեալ զյաջոզութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ կրախտեաց, իրքե յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. իսկ նա քանդի ի հրեշտակէ ասէր ունել պատզամ և ոչ ի մարդց՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի զաղանիս:

Ի սոյն ժամանակս էր այլ ոմն ի կողմանս Պարսից միայնացեալ կրօնաւորութեամբ, էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Խաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր, «որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայտմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից. այլ երթիցես ի կողմանս Խզիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեցիս զոգիդ քո»: Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: Դէպ եղեւ նմա ծանապարհաւ գալ ի քաղաքն Մազիամ, էր և ծանօթ զիտութեան զրոց, թէպէտ և ոչ կատարելա-

պէս Օսա տեսեալ Մահմէտի՝ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամացեալ նմա զբել գիրս օրինաց աղջին իւրոյ, ձեռամբ Երութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր. գիր և ոչ դպրութիւն. Խակ Սաղման յանձն առ զբել նմա. և դրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. այլ և ինքն Մահմէտ, մոլեն կան հոգւով շարժեցեալ՝ տայ զբել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զասկաւս յիշուցուք: «Քանզի ասէր զինքն՝ միսիթարիչն, զոր խոստացաւ տէր Քրիստոս առաքել աշակերտացն իւրոց, և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից Շանապարհի նորա, յասենն Խոսյեայ մարդարէի, «Հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուզտու»՝ զայս ամենայն յինքն յարակցէլու Խւ փոխանակ սուրբ Ապրութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: Խւ զերկ նային պարզեացն որ ի հանդերձհալմն խոստացաւ Տէրն, զանպատում և զշրիշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմակելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակութի: Խւ երկայնագոյնն է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել զի յոյժ բազում է և ընդդիմակ Նստուծոյ: Խւ զայս ամենայն հաստատեալ եղ ազգի իւրում, կոչելով Առուրանա:

Խւ արդ եկ ասացից քեզ, որպիսի ողբովք ողբայ զնոպա հին մատենագիրն ասելովն, «վայ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարպաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանակէնս բարբառէիր: Հասնալ կայիք յանդիման մեծազաւրին Նստուծոյ: Խւ զլեզուդ պղծութեամբ զոր որէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վերաւք դատեսցէ գքեզ քան զամենայն տիեզերա: Եյլ և սաստիկ հարուածովք սատակեսցէ գքեզ: Խւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցին, և ի քէն ամենեին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զհնոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղեցի հանգիստ:

Խւ նորա զայս ամենայն շարիս կատարեալ՝ ևս բազմա-

գոյնս քան զայս հաստատեալ եղ ազգի իւրում օրէնս բազում և, այլ չարագործութեամբք. և կեցեալ ամս չ ի սմին՝ մեռաւ. և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն Տաճկաց զԱպուբաքր, և կեցեալ ամս չ մեռանի: Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Նմի, որդի ձատապայ ամս չ և ամիսս զ Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթեաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց նոցա և ոչ կարաց ձողոպրել քանզի հասին զշետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Խետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Խամայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս չ: Եւ յայնմէշետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազդին Սասանայ, որ տեսեաց ամս շմէ:

Նոր են ժամանակը թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն<sup>1</sup> զոր սպան Նշէքսանդրոս Մակեդովնացի, և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց դրեն չ, և այլք ն, և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթեք, մինչեւ յԵրտեան որդի Վաղարշու, զոր սպան Ստախրացին Երտաշիր որդի Սասանայ, որ առեալ զթագաւորութիւնն Պարթեաց՝ տեսեաց մինչեւ ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: Եւ համարին ամք ժամանակացս այսորիկ, ի Կիւրոսէ մինչեւ ցթագաւորութիւնն Տաճկաց՝ ամք տնի:

Մաւի ամս չ և ամիսս գ և աւուրս ինչ: Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Նշեայ որդւոյ Նպուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիսս գ: Քանզի ասէր Նշի անգաւոր ինքեան զգլխաւորութիւնն Տաճկաց: Յեզիտ որդի Մաւիայ ամս գ և ամիսս գ: Նրդլմէկք որդի Մրուանայ ամս իտ: Եւ էր հակառակութիւն մեծ և պատերազմ Նրդլայի որդւոյ Զուքայրի ամս չ և ամիսս գ: Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղեւ աշխարհին ձայոց ի չարասէր կամաց նորա: Վ վդդ<sup>2</sup> որդի Նրդլմէլքի ամս ժ. սա ևս աւելի խորհեցաւ չար, և

<sup>1</sup> Այլ օր՝ մինչեւ գԴարեհիս:

<sup>2</sup> Հին օր՝ վիզք:

պատրանօք իսաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս հայոց՝ արար հրկէղ զամենեսեան ի քաղաքին ՚նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեղ Խրասխայ. և զաշխարհս ապականեաց գերութեամբ: Առվիման որդի Նբդլմելքի ամս ժ: Ումառ որդի Նբդլտղիզա ամս ժ: Աս ազնուագոյն եղեալ քան զամենեսին. զրէ թուղթ հաւատոց առ ՚Նեռն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Առւանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպիլագոյնն, քանզի ստուգապէն ծանեաւ զգօրութիւնն. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ այլ յոյժ պատկառանօք ամաշեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս քրիստոնէից. և ամենայն ուրեք բարեացապարտ զինքն ցուցանէր. գերեաց գերեգարձ արար, և ամենեցուն շնորհէր զյանցանս, և ձրի թողութիւն առնէր. և առ իւր ազգն ցուցանէր մուերմութիւնս առաւել քան զամենայն առաջինս: Խւրացեալ զմթերս գանձուցն բաշխէր առատապէս ամենեցուն իւրոց սպայիցն: Յեղիտ ամս զ սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում շարիւք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. տայր հրաման փշել և խորտակիլ զկնողանագին պատկերս ճշմարիտ<sup>1</sup> մարդեղութեան Փրկչն և նորին աշակերտաց: Խորտակիր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: Տայր հրաման և խոզասպանութեան և ջնջէր յերկրէ զբազմութիւն արօտական խոզիցն: Խւր ի կատարումն ամենայն չարեաց հասեալ՝ ինքն խեղդեալ ի դիւէ սատակեցաւ: Շամուելեշմ ամս ժ. Վ լիթ ամս ի. Մրուան ամս զ Աբդլայ ամս ժ. միւս Նբդլա ամս ի. Մահաղի ամս ժ. Մահմետ որդի Մահաղեայ ամս զ Մուսէ ամ ա. Կհարօն ամս է. Մահմետ որդի Կհարօնի և կնոջ Զուպետայ ամս դ. Մայման եղբայր նորա ամս ի. Սահակ Մահմետի որդի ամս ի. Կհարօն որդի Մահմետի ամս է և ամիսս զ Զափր որդի Մահմետի ամս ժ: Խւր զբոյցք ժամանակաց սոցա

<sup>1</sup> Այլ օր՝ պատկերս տէրունական ճշմարիտ:

յայլոց գրեալ յառաջագոյն, աւելորդ համարեցաք երկրորդելք  
նեա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ե-  
տուն մեզ, թերեւ վասն շփոթեալ և հակառակասէր ազգին,  
որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին  
դինքիանս, և այլք յԵսորեստանի<sup>1</sup> կացեալ՝ զինքեանս ասէին  
թագաւոր, մինչեւ ի ժամանակս Երդլայի, որ միապետեալ զա-  
մնայն, շինեալ քաղաք և տուն ալբունի, վասն ամուր զգու-  
շութեան արքունեաց, զԴաղդադ: Խւ քանզի թարգմանի  
Երդլայ ծառայ Եսաուծոյ ըստ հագարական լեզուին. այս  
այն Երդլայն է, զոր ազգ իւր ասացին Երդլանգէ, այսինքն  
ծառայ դանդի և ոչ Եսաուծոյ, վասն սաստիկ զօշութեանն  
և անյագ ագահութեանն:

Դայց մեզ կայ առաջի ասել վասն Դափրայ և չար գոր-  
ծոց նորա, անդիրս մեացեալ յայլոց, զոր կատարեաց ի վե-  
րայ աշխարհի Հայոց երկայնազոյն ժամանակաւ, և անրմբե-  
րելի նեզութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց  
յ թուական:

### ԳԼՈՒԽ 1.

Վասն նախառոյն Դափրայ, զոյ ինչ խորհեցաւ է վերայ աշխարհիւ-  
նայոց, և ի գլուխ եկան զիամ զարութեանն. և որ ինչ ընդ առվա-  
նաբ ժան դեռ վեցերդդ յունելնի, և եւնանասուներդդ ոլոնշադին,  
յեւ իններան ընդիւրինին. յոյնուած բավարակին ժամանակի բը-  
նակալութեանն Տաճից ամ ԱՄԻԱ ըստ ինուայ հայեցին դումարի.  
նախառոյի Տաճից Խառու<sup>2</sup> ամ Դափրայ անուն:

Եսլի ոմն Դափր խրոխտ և ամբարհաւած. և ակսաւ եզ-  
ջեւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս  
կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զիաղաղասէրս կենզք,  
քանզի կարի սիրելի էր նմա խռովութիւն և արիւնչեղու-  
թիւն. և հանապազ յանձն իւր տարակու սանօք տարուրե-

1 ԱՅԼ օր.՝ յասորեստան:

2 ԱՅԼ օր.՝ թուրք:

րէք, թէ յնվ և կամ յջը կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից խւրոց, և կամ ուր վատնիցէ ցանիցէ թափիցէ զբազմութիւն նեաից ի կապարձից խորհրդանոցին, շարին հսարիմացութեան։ Խւ առ յօյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլզգենի դիմօք, իրիւ զբազան մի կատագեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս հայոց. և ըստ հարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեզծաւորութեամբ, խազազանէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չպառութեան իւրոյ:

Ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարհիս Եշոս ի տանէն Արձրունեաց, այր քաջայայտ և նոխ ի բարձրագոյն։ յօյր ձեռն բազում արութիւն նահատակութեան, երեւեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց<sup>1</sup> ի միայնամարտիկ զնոնուորութեան։ Խւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր հայաստանեայցս, որ յարեելս և ի կողմանս հիւսիսայ, մանաւանդ որ ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս։

Ինդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց ազգունի Եպուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ երրայական գպրութեանն Խւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ Եռաջին կոչեցեալ հայոց՝ իշխան Տարունոյ Բագրատ, վասն զի ունէր յայնժամ զզլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց հայոց, որ էր ի տոհմէն Բագրատունիաց՝ առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս հայոց։ Բայց նոքա ի մտի եղեալ էին, թերեւս պատիր խարէութեամբ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչեւր տէրութենէ։ Խսկ իրիւ ծանուցաւ նման անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Եշոտոյ և Բագրատատայ՝ ոչ ինչ<sup>2</sup> յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. բայց միայն զհարկաց և զայր

1 Այլ օր՝ Ճակատելոց։

2 Հին օր՝ որ ինչ

Հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանն զնա ընդ նոյն ուստի եկն<sup>1</sup>: Խորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիարդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք ։ Այոց: Խռ զշարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԾշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, ոլք էին ի կողմանս ։ Այոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ Շշմարտութեամբ զեկուցանն զնմանէ դպրծս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քց բանընդդէմ լինի հանապազ: Զնոյն և կողմանակալքն Պարսից զրգուէին զթագաւորն ամբաստան լիալ՝ ամբաստան լինէլ Աշոտի զպեսութենէն Տաճկաց:

Ի՞այց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս ։ Այոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդուոյ Զօրահայի հագարացւոյ, որ տիրէր յայնժամ Երզնայ և ներքոյ կողմանն Աղճնեաց մերձ ի տահմանս Տարունոյ:

### Գ.Լ.ՈՒԽ Զ.

Վասան պատրիարքին Իամբարապայ իշխանին ։ Այոց և Մուսէի և յաղթունւանն ի յեւս Աշոտոյ վաստութակն իշխանին, ու են պրազման Իամբարապայ:

Ի ժամանակին յայնմիկ էր խռովութիւն մեծ ի մեջ Իամբարատայ և Մուսէի: Խռ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարօնոյ, տալ պատերազմ ընդ Իամբարատայ: Խռ կուտեալ զբազմութիւն զօրացն մերձ ի քաղաքն որ էր ձմերոց իշխանին ։ Այոց՝ անցանէր բանակէր ամենայն զօրօք իւրովք. գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձե հովիտն ի ներքս փակէր, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին ։

1 Ա.Հ. օր՝ զնա ուստի եկն:

Իբրև ետես իշխանն Նայոց զզօրսն Տաճկաց եկեալ կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առքաջ նահատակն Աշոտ իշխան, զի թէ հնար իցէ՝ անյապաղ երազութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօդնականութիւն նմա: Իբրև յանդիման եղեն գեսպանքն մեծ իշխանի Աշոտոյ, և ընթիրցաւ զգիր պաղատանոացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատթիւնն և զկապակցութիւն ուխտին որ ընդ միմեանս<sup>1</sup> երդմամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւան և տէրունական<sup>2</sup> նշանաւն՝ համագունդ ժողով առներ ամենայն աշխարհին և ամենայն նախարարք Վասպուրական տէրութեանն:

Փութանակի և վագվաղակի իւրաքանչիւր զօրօք անզր հառսանէին՝ իշխան Աշոտ և եղբալք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց, և ի տոհմէն Երծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Եպուակէմ և Գուրգէն և Վասակ և Եպուջափիր և Մուշեղ և Եպումայեայ և Վասակ և Վահան և Նամազասպ և Վասակ որդի Գրիգորի և Եպումկրէմ և Մեհուժան և Գրիգոր, սոքա ամենեքին արք ծովի տանէն Երծրունեաց զօրօքն իւրեանց. և ի տանէն Բագրատունեաց Թոռնըկայ որդի զօրօք իւրովք. ի տոհմէն Եմատունեաց Շապուհ ը հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Նազոի և այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Բնարունեաց Երտաւազդ է հարազատօք և զօրօք իւրեանց. և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Եպահունի<sup>3</sup>, Գրիգոր Քաջերունի, Վահան Նաւունունի, սեպուհն Դաւիթ, Գաղըրիկն Եպուհարազ, Թոռգորոս Վարագիս, Խոսրով Վահեունի, Խոսրով Եկէացի, Վարդան Գարայեղին, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Նարմացի, Դաւիթ Գունդսաղար. և այլ բազումք յազատ տանէ, իւրաքանչիւր զօրօք գումարիալ ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր, մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց Ճակատեալ կազ-

1 Հին օր.՝ որ միմեան:

2 Այլ օր.՝ տեսանական:

3 Այլ օր.՝ Եպուչունի:

մերն զռագմն, և փողքն դրչին և դրօշքն տարրածանէին և նշանքն փողփողէին, վահաճաւորլին և նիզակաւորքն դրչին, այլուաձն այտր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարձակիլքն աղջղանցն յուրային:

Եւ մինդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարիծակի հասանէր քաջն մեր Աշոտ. և միախուռն յանդուգն յարձակմանմբ դիմեցին ի վերայ այլազգեացն, և ի դիմի հարեալ միմեանց՝ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: Զաշս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ եսիս զմի ոմն հարեալ ի գորաց իւրոց. զուեաց առիւծաբար, յարձակեցաւ ի վերայ ընտիր այրուձիոյն, և զաջ թեմն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկանէր, և սրոյ ձնարակ զամենեսեան տային, խիզախելով իրեւ զքաջ նահատակս. իրեւ զարծուիս կանչելով, իրեւ գիորիւն առիւծուց ի վերայ որսոյ հասեալ բեկանէին: Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթաղրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրբազն առատակէին: Եւ ոչ ոք գտանէր ամենեին ի կողմանէ թշնամեացն որ կարեր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք այլ մնացեալքն ի որոյն փախստական էին յամուրս մայրեացն: Եւ կէսքն հասանէին մինչ ի շահաստան Բաղէշ<sup>1</sup>, թողեալ անդէն զբուն բանակն: Իսկ իշխանքն զհիտ մտեալ փախստէիցն անկելոցն յամուրսն՝ ածեն մերձ ի պաշարումն զքաղաքքն և զամբոցն, մինչ ելիալ արտաքս տիկինն ի հետիւտս լի հառաջանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Վոտուած ի ձեռս Աշոտոյ. և համոզեալ ի միջի նոցա յուղարկել զնոսա, զի էր քոյր Բագարատայ: Եւ նոցա ի դլուխ հանեալ զդործ պատերազմին՝ դառնան զօլքն այլոց մեծաւ յաղթութեամբ, և յաւարի առնուին<sup>2</sup> զբանակետզն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զգէնս պատենազարդս, զզարդս և զգէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա: և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրիսում ինդութեամբ յիւրաքանչիւր տեղիս:

Յայնժամ իրեւ հտես անօրէն զօրավարն ԱՌՈՒԵ, թէ ոչ

1 Հին օր՝ շհստան բաղադէց:

2 Այլ օր՝ առնեն:

Ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն, և հարան ի հայութածս մեծամեծս զօլք նորա՝ փութացաւ արձակել գուժ-կան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Եշոտ իշխանն Վասպուրական:

Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագրյնմն, որ նախ քան զպատերազմն Եղիսեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ որպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Եշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: Իանն զմեզ զանց առնէ. և ոչ վայելուչ է լոռութեամբ և մոռացիոտ մերք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն:

Ի դառնալն Եպուսէթի յԽասորիս, և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկալ յարքունուստ հազարապետ ոմն հարքաց, Ռոպափի կոչեցեալ ամիրայ Եղայ<sup>1</sup> անուն: Օնա յղէ Եպուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրք բազմօք, մինչեւ զբովանդակ գհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն այցոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: Ելին եմուտ ի գաւառն Եղբագ, և ասպատակ սփուր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչեց և ստացուածոց. յափշտակէին զայր և զիին և զժառանզութիւն նոցա: Եռնէր ասպատակ և ի կողմն Ենձաւացեաց տէրութեանն, և անտի ևս առնուին աւար ի պատճառս ոռճկաց պիտոյից այրուձիոյն:

Յղէ առ նա իշխանն ի ձեռն հրովարտակի զայս ինչ. ձերի դու յաշխարհս այցոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. միթէ և հրաման ունիս յարքունուստ, գերել<sup>2</sup> գերփէլ յաւեր գաղճուցանել զաշխարհս մեր: Իայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի<sup>3</sup> թագաւորին և ոչ իսափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհազանդս<sup>4</sup> և գտահակս ի ծառայութինէ տէրանց՝ արդ դու յարուցեալ զնացես ի մի քաղաքացդ այց, որպէս օրէն է աշխարհակալաց, և մեք տացուք քեզ զհասս հարկացն

1 Այց?

2 Յոյլ օր. Հեք՝ գերել

3 Եյլ օր. ի հրամանէ:

4 Եյլ օր. և զանհազան:

և հաճեսցուք գմիաս քո, և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես<sup>1</sup> զերկիր իմ:

Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: Եւ հասեալ ի գեօղն Արծուծն՝ մնայր անդէն, և զիտակս Թողոյր ի վերայ բլրոցն<sup>2</sup> բարձրաւանդակաց:

Ի արկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմն ազգաց իւրաքանչիւր զօրաք. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտափի հեծելովք այլուձիոյ: Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն և նոքա ընդդէմնոցա ի պատերազմ, և ի զիմի հարեալ միմեանց և հատանէին յերիս առաջս<sup>3</sup>: Օգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ և Վահանայ ձաւնունոյ, որ և նիզակակից նմա էր: Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Եպուպելձի, և նիզակակից էր նորա Վահան Երծրունի: Եւ գունդն երրորդ ի ձեռս իշխանին, որ և յարդարիչ պատերազմին: Եւ յարձակեալ քաջութեամբ և արիական ձայնարկութեամբ՝ դիմք ի վերայ թշնամեացն. ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամն բովանդակ յաղթութիւն սպատարեաց և ի փախուստ գարձոյց զբազմութիւն զօրացն Ովայի. սպանաւ ի խոռան<sup>4</sup> անդ և եղբայր Ովային և հեղմունք արեանց եղեն անհնարինք: Վաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան ձաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր դկողմն թշնամեացն, և զըուր ովիտն լնուն դիակամբք կոտորելոցն. և քամուաձք ջրոյն որ ի ծործորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութիւնէ սպանելոցն. և ինքն Ովայ<sup>5</sup> զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Իերկրոյ: Իսկ ի զօրացն ձայոց զսակաւս յաննշանից ոմանց սպանին, և զտէր Գուրգէն վերաւորեցին:

1 Ա.Յ. օր.՝ դարձուցանէր:

2 Ա.Յ. օր.՝ բլրոցն ամենեցուն:

3 Ա.Յ. օր.՝ յերիս առաջս հատանէին:

4 Յօրինակսն՝ ի հռան:

5 Յօրինակսն այս անուն երբեմն Ալայ:

որի և երբեմն Ովայ:

Եւ բարձեալ<sup>1</sup> զօրքն ։ այոց դիակապուտ արարեալ զզալդ  
և զզէնս զարի արանց և զքաջ կրիվարաց, առեալ աւար  
բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ:  
Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առ-  
լթեալ, մանաւանդ յիրկիւղէ՝ կարի յոյժ զրգոնցաւ պատե-  
րազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. զի էր նորա  
գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի  
ներքոյ դրացն ապարանից տան իրոյ, և յիրկիւղ կասկածա-  
նաց եղեալ թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ  
գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: Եւ ի հասանելն նորա  
առ թագաւորն՝ ունէր ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաս-  
տանութեամբ զնախարարացն որ բնակեալ էին ի Հայս, և  
բազում մնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին  
Աշոաի. և քմաղարդ բանիւք զրգուն զթագաւորն ի վե-  
րայ իշխանին ի չարիս: Նոյնպէս և բնակիչք Աղճնեաց ան-  
հանդուրժելիք լեալք անցիցն անցելոց, և առ զայսոսիկ յամ-  
բաստանելն՝ և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճազանձ  
ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձե-  
կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճ-  
կական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի  
հասանէին: Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ  
և զհերս խղեալ, զդէմն կեղեքեալ և ձայնս առեալ կական ող-  
բաք արտասուալից հառաջանօք, վայ ի բերան առեալ և խիղք՝  
մնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց  
քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամ-  
բութեան Հայոց<sup>2</sup> ի քումնէ թագաւորութիւնէդ, ասին, ով  
քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ  
և ընդհանուր իշխեցող կենաց և մահուա: Եւ լքաւ ասա-  
ցեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ մղեցի յաւուր յայնմիկ  
ձայն ի դրանէ օցոտելոցն<sup>3</sup> և զոյժ յիրկորդ դրանէն և բե-  
կումն ի վերայ բլրոց: Ողբացէք, բնակիչք կոտորելոցդ, զի նը-  
մանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակե-  
ցան ամենէքին, որ հպարտացեալ էին արծաթով:

1 Թերեկ՝ բարձեալ

թեան ամենայն Հայոց:

2 Այլ օր՝ պատճառ ապստամբու-

3 Այլ օր՝ օցտելոցն:

Իսկ իրեւ լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի<sup>1</sup> մրմռեալ իրեւ զառիւծ և իրեւ զարջ տարակուսեալ՝ վառեալ լինէր իրեւ զբոց հնոցի, իրեւ զալիս ծովու դիզեալ կուտմամբ փրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին գոչելով անդնդաքակ յուզմամբ, իրեւ զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց, հրախառն տոշըմամբ եռացեալ շուրջ զբրտիւն արիւնն՝ մարձախառն բերմամբ յապուշ զմիտան կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի, խնդրէր գտանել զեն իրացն հկելոցն առնա գուժկանացն<sup>2</sup>, և կուտէր խումբս սինկղիտոսաց զամենայն իմաստունս Ասորոց և Թարելացւոց տեսանել վասն գործոյս այսորիկ:

Էնդ ժամանակս ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապէտութեան տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց: Խռ յաւէտ հրաշիւք յօրինէր գկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղակտու առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Վրիստոս. զնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ զնալ ըստ արժանի հաւատոցն Վրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուանն քրիստոնէութեանն և գործքն: Այլ նոքա թէպէտ և յանձն առնուին և մտագիւրութեամբ լսէին նմա՝ սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սոդոմական ախտիցն, և ըստ մեղաց տանն Երշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազոտեալ լինէին, գնային ոտնիսեթի<sup>3</sup>, գայթ ի գայթս և աղտեղասէրս, մինչև զանբարկանալին Սոտուած ի բարկութիւն ածել ի ստոտիկումն անձանց և ի կործանումն աշխարհի և յտւեր ժառանգութեան տանց հայրենի բնակութեանց. քանզի գրեալ է, թագաւոր արդար կանզնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէնու: Խռ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի մնասակար գործոցն զոր գործէին, և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զեսայի մարզարէ՝ յասէին, պուարուք, իշխանք Սոդոմայիցւոց, ունին զիք օրինացն Աստուծոյ, ժողովուրդ Գոմորացւոց»: զայս

1 Ա.Յ. օր.՝ ի գրան արքայի:

2 Յօրինական՝ գուշկանացն:

3 Ա.Յ. օր.՝ ի եթեթի:

ասէր<sup>1</sup>, ոչ զի սոդոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեզս սոդոմական պղծութեանն զառածեալ լինէին՝ սոգոմայեցիս կոչէ: Որպէս և Եզեկիէլ մարդարէ ասէ, «Հայր քո քանանացի էր և մայր քո քետացիո: Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի ինամ տանէր, ի մեղադրանս մատոցեալ մարդարէիւն հանդերձ սպառնալիօք<sup>2</sup>, «իշխանկք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են Արքոց իրաւունս ոչ առնեն, և դատաստանի այրեաց ունին ոչ դնենո: Դարձեալ ասէ, մթագաւոր արդար թագաւորեսցէ, և իշխանք իրաւամբք իշխեսցենո: և դարձեալ թէ դատաստանս արդար դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք. քանզի առ ձեզ են բանք իմ, ով բռնառլիք, ասէ Աղջոմոն. զի առ զօրաւորսն զօրաւոր դատաստան առաքէ Աստուած, իսկ խառնազանձն<sup>3</sup> ներելի ովորմութեան է: Օայս և առաւել քան զայն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապեան և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: Իայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անուննդիր լսարանս, զշարագյնն իժի և զանբժշկականն քարբի, ալրեցան զինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցն, և ականջս, որովք ոչ լուիցն. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարկքս այսքիկ և անկանզնելի զլորումնս, զոր յառաջ խաղացուցանելով զբանն՝ ցուցից յիւրում<sup>4</sup> կարգի, մինչե. կատարեցաւ ասացեալն ի ձեռն Խսայեայ մարդարէի, զսելով լուիջիք և մի՛ իմասջնք, տեսանելով տեսջիք և մի՛ զիտաջնիք. զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, (ասա ի բուն) մինչև աւերեսցին քաղաքք ի բնակչաց, և տուն առ ի չգոյէ մարդկան. և դարձեալ ի գերութիւն մատնեսցի ժողովուրդի իմ, վասն ոչ ծանաչելոյ նոցա զԾէր. և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրօյք:

Երդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք շ և ոլիմպիատք հք, ընտիքտիոնք ի, որ է ըստ հայերէն թուականութեանն յ՝ աներկրայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկդիտո-

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ զայս առելով:

<sup>2</sup> Յայլ օր. չէք՝ սպառնալիօք:

<sup>3</sup> Ա.Յ. օր.՝ խառնիճազանձն:

<sup>4</sup> Յօրինակս՝ յորում կարգի:

սօքն հանդերձ և ամենայն մեծամեծզքն Ի՞արելացւոց, զի զիշխանս աշխարհին ։այոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութիւնէ, զի մեր լիցի ժառանգութիւննոցա. և նախ ձեռս արկցէ յԱշոտ և ի տուն նորա և ի Ի՞ազարատ և ի տուն նորա, զի ասեն, թէ նոքա ի միջյ բառնայցին՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր:

‘Նոյնժամայն զօր գումարիալ, գունդ կազմեալ յընտիր ընտիր հեծելոց արանց զօրաւորաց, զօրօք և զօրագինօք, և տայ ի ձեռս Յովսիփու ումեմն որդւոյ Նպուսէթի<sup>1</sup>, և նմա յանձն առնէ զաշխարհն, փոխանակ հօր իւրոյ Նպուսէթի. զի մեռաւ նա ի ծանապարհի, ի կողմանս Եսորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս ։այոց՝ չարչարել զսոսա որպէս խորհեցանն. և ասէ, «իթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ ։այոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցին, և կարիցես զիշխանս ։այոց կապանօք առ մեզ հասուցանել մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի գում տաց զերկիրն զայն<sup>2</sup> ի ժառանգութիւն: Երդ փութա, պնդեա, ել<sup>3</sup> զհիտ նոցա, և մի ինչ յայդոսիկ<sup>4</sup> յերկուանայցիս, թուլագոյն կալով մեալով յիրիդ յայդմիկ»:

Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լթեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Նարպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական, և բանակեցաւ ի յԱղամակերտ ոստանին Եղծրունեաց, և անդէն սկըսաւ ասպատակս սփռել աւար առնել կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստիւթեամբ: Կոչէր առ ինքն զիշխանն դիմօք սիրոյ խաղաղութեան, պատճառ հարկաց արքունի. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերես նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա:

Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ

1 Այլ օր՝ Յովսիփու որդւոյ ումեմն  
Ապուսէթի:

2 Յայլ օր. շէք՝ ուղիւն

3 Յայլ օր. շէք՝ ե՛ւ

4 Այլ օր՝ յայգուիկ:

զինու և զօրօք աղատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շընէր գկողմամբքն Մարդոստանի և Զորոյ հասկոյ, և դեսպանս առ զօրավարն արձակէր: Քրէ հրովարտակ մի զայս օրինակ:

«Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթեացուցանել զյուծ բռնութեան ծանրակի բեռանց, թուլացուցանելով զսաստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց, զի մի սպառ սպուռ տապալեցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենով զժառայակիան պաշտօնատրութիւն կողմակալաց, և քաղաքային անհաւատար՝<sup>1</sup> կամարարողաց, և հարկաց բերման և զօրաց. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկը ալքունի կանգուն երթիցն: Օտր և մեք ակն ունիմք և քեզ զսցին զայս կամել, և տեսանելով մեր զինամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէնո: Ի՞ազում և այլ բանս ախորժականս և դիւրնկալս ըստ այսոցիկ կարգէր ի թղթի իւրում: Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Աահակայ և Իագարատայ. իշխանին Տարօնոյ, որ էր կին իմաստուն ի բանս և յիրս և յօյժ խոհեմագոյն միանգամայն և՝ աստուածասէր՝ երթեալ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և ինդրէր զհաշտութիւն և զինաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: Եւ նորա ընկալեալ զպարգեն՝ կատարէր զինդիրն: Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ մնասիք՝ զպատանդն ընդ իւր առեալ տանի: Եւ անցանելով ընդ գաւառն Իզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցն նենգութեամբ խարի:

Իբրև եհաս ամիրայն ի Խլաթ՝ եմուտ բանակեցաւ յամ-

<sup>1</sup> Հին օր՝ անհամատար. գուցէ՝ անհաւատարիմ:

լոցին որ ի քաղաքին։ Արձակէ առ Ի՞ազարատ կոչողս պատճենիւք հանդերձ, զի ևկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի։ Վրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատագ աշխարհիս<sup>1</sup> Նայաստանեայց, զի ինքն երթիցէ յալքունիս, կեղծոտելով զսատկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելցյ և զիստութիւն հիւսիսային օդցին սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով։

Խսկ իշխանն Ի՞ազարատ, քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց<sup>2</sup> տո թագաւորին և պո զօրս նորա՝ ել գնաց անխիզ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելցյ<sup>3</sup> կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խարէութեան նորա, որով վրեպեացնո Ի՞արձեալ ևս ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ գրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական գասուց։ Եւ նորա ըմբռնեալ զնա և զամնայն ազգասոհմն նորա ի տանէ Ի՞ազրատունեաց և կապեալ<sup>4</sup> երկաթեղէն կապանգք՝ խաղացոյց ի Ամառայ։ Եւ ինքն եկն ձմերել ի Առուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր զպատանդնն, և Ասպուրականի ի նախարարութենէն Երծրունեաց և յազատաց նորա։ Եւ զընակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Եսորոց և յամնայն սահմանս տէրութեանն Տաճկաց։ և զկէս գերւոյն ընդ իւրեանց ունելով ի քաղաքին, լինել իւրեանց ըրկիրս և փայտակոտորս։ և շարշարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան։ և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր գալքուցեալ զընաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լիրինն Խոյթ անուանեալ։

1 ԱՅԼ օր.՝ աշխարհաւ

2 ԱՅԼ օր.՝ գերանաց։

3 ԱՅԼ օր.՝ զհետ եկեալ։

4 ԱՅԼ օր.՝ կապեալ զնա։

## ԳԼՈՒԽ Ե.

**Վասն ճակուանն Յովելիու է լըռնայնոցն Իւստիայ և պատմութիւնն  
նոցա:**

Երբեւ ձմեռն ընդմիջեցաւ և օդն խստացեալ թանձրացաւ միգախառն մրրկալից, և թանձրութիւն ձեանն հարթայտակ դիզաւ շուրջ զստորտով լերինն, յորում տեղւոջքաղաքն Տարօնոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն<sup>1</sup> բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մշջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զըոյս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, և բայացեալքն եթէ գազանք և եթէ թուզունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և զիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբոնելի որտորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցաննեն վտանգս<sup>2</sup> ուր և զիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: Այնակէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայլ անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս հայոց սրով և գերութեամբ և մածամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն և կացուացէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի դկարգս աշխարհիս յօրինեսցին<sup>3</sup>, և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս հայոց:

Յայնժամ բնակիչք լերինն իբրեւ տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրկցին՝ հասին միաբան բազ-

1 Այլ օր՝ արջոյն:

2 Այլ օր՝ չուսու:

3 Այլ օր՝ գորինեցին:

մութիւնն մեկնակազէնքն<sup>1</sup> Խութիայ ի հնարս արուեստգիտութեանն իւլիանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ<sup>2</sup> էին: Խւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիան որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանգսն Վասպուրականի հանեն յարգելանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս:

Ի՞յց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին, որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Իածարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև յուաց: Խւ անդ ի միջոց գմբեթիւն<sup>3</sup> զօղեալ սալարեալ սարսուալց դողմամբ զետեղեալ լինէր: Խւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն, և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փշեաց զոգին և թաղեցաւ զթազումն իշոյ:

Խւ ես աչօք իմովք տեսի գայրն զայն, որ հարեալն էր զնա, և ինմանէ ստուգեցի գասն նորա:

Խւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գոյժկան առթագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց:

Սատանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բընակչաց լերինն. թէ զիարդ կամ նրափիսի ոք են, և նրափէս<sup>4</sup> հնարաւորեալ յապրուսա անձանց վճարեն զկարեւոր պէտս իւլիանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանզք. և բընակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթօւնս լերանց: Խւ քնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հաղիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերե-

1 Այլ օր՝ բազմութեամբ մեկնազնքն:

2 Այլ օր՝ հնարեալ:

3 Այլ օր՝ և անտի միջոց գումբեթիւն:

4 Այլ օր՝ և կամ որպէս:

լով, և կէսքն վըիպեալք ի բնական հայրինի լեզուէն, յաղագս հեռարնակ լինիլոյ և անհամբոյլք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: Եւ այնքան խրթնի անձանօթք պատահէն առ միմեանս, մինչե թարգմանաց անգամ՝ կարօտանան. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձեւ կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. և են ստացեալ զէնս աշտեայս հանապաղ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գագանացն որք ի լեբինն բնակեն:

**Ե.յլ. ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝** գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իրեւ զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իրեւ ընդ ցամաք երկիր: Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նա և զանձանց և.ս. և կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն որ բաժանէ ընդ Աղջիս և ընդ Տարօն: Եւ յաղագս խրթնի և անհետազոտելի խօսիցն և բարուցն կոչին Խութ, յորոց անուն և լեառն Խոյթ անուանի: Եւ գիտեն զսաղմասն զհին թարգմանեալսն վարդապետացն այսօց, զոր հանապաղ ի բերան ունին: Սոքա են գոեահք Ասորոց, որ չուեցին զինի Աղբամելեայ և Անասսարայ որդուց Անսկերիմ արքայի թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Անասնայք զինքեանս անուանեն. և են հիւրասէրք օտարընկալք, պատուադիրք:



## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ Ա.

Վասն որ ինչ գործեցաւ ընդ հանուր աշխարհու և այսու և երկրա-  
տական իշխանութեան էլիտարնեան, անհամառնութեան և անհամառնութեան միջանց լինելով,  
և որ ինչ ընդ առաջութեան:

Ունիք զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվարանդա  
և զնեղութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն  
ձշմարտութեաննե. զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէ-  
աք պէսպէս կտուանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաժ-  
կական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժա-  
մանակս, և բազում այն էր որ ի մէջ հարեալ լինէին, քան  
թէ մեք հարկանէաք, քանզի դեռ միաբանք և միախորհուրդք  
և հաւասարք առ միմեանս բնակէին իշխանք և այսոց ազատա-  
գունդ բազմութեամբ և զօրաց նոցա, թէպէտ և ի ծածուկ  
ունէին զիրկրայութիւն նենդութեանց: Խսկ իրսե սկսաւ  
սպրոդել մոտանել ի նելքս երկպառակութիւնն ի մէջ միաբա-  
նութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածա-  
տուր զօրութեանն. և խորհուրդք խորհրդականացս յոշնչ  
համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հոգաբար-  
ձութեան աշխարհիս. և զոր օրինակ ոք զբոլոր անդամն մար-  
մայ յօշեցէ ի մասունս մասունս՝ և ոչ երեխ տեսակ կենդանի  
մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. խսկ եթէ մի  
յանդամոյն կորիցէ զպատահումն խեղութեան ընդունիցի,  
այլ ոչ իբաց դարձի կենդանի: Այսպէս տակաւին ի բազումն  
քայլայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս, և իւրաքանչիւր  
ոք այր զլնկերէ և զեղքորէ իւրմէ ի չարիս խոկային: Եւ  
թուղթս և դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկս ի մի-

**Անանց.** այլ և ընդ միմեանս արկանէին բանս քսութեան, և ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին. և յոյժ ուրախ առնէին զթշնամիսն ի քակել միաբանութեան<sup>1</sup> իրերաց: Խւ.յալով այն լինէր զոր ինչ գրէինն՝ զոր ոչ էր գործեալ ։այոց, և զամենայն թեսասս և զգործս ապստամբութեանն ի վերայ Ըշոտի կուտէին: Խւ առ սոսա ասացեալն ի Փրկչէն, «ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն<sup>2</sup> աւերի, և ամենայն քաղաք և տուն բաժանեալ յանձն<sup>3</sup> ոչ կացցէ»: Ի դէպ ելանէ և հին առասպելն Ոլպիանու փիլիսոփայի, որ վասն առիւծուն և զուարակացն են բարառնութիւնք. տեղեակ են այսմ ուսումնասէր անձինք:

Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մմծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէալ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս ։այոց: Խւ ի բազում և քաջ խորհրդոց զայս և եթ հաստատուն խորհուրդ ընտրեցին սինկդիտոպքն, և ասեն ցթազաւորն. «զօր գումարիհա, գունդ կազմեա, խաղաց երթալ մրտանել յերկիրն ։այոց: Խւ յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ քո են՝ հաւաքեա առ քեզ զընտիրն այրուձիոց, և անց յայնկոյս գետոյն: Խւ հասեալ ի վերայ ։այոց՝ նախ զԸշոտվարանգեալ այսր խաղացուսցես, և այլքն ամենայն դիւրաւմոցեն ի ներկոյ ձեռին քո, և աներկբայութեամբ փակես զամենայն ընդ լծով հնազանդութեան քո: Խւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խաֆանիչ լինելոյ<sup>3</sup> կամ ի վեսաս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս<sup>4</sup>. այլ ստիպեսցուք զըմբռնեալսն՝ ի բաց կալ ի հաւատոց քրիստոնէութեանն. և պաշտեսցեն զօրէնս մերոյ պատգամաւորին և օրէնսդրին: Խւ ամենայն խորհուրդ մեր դիւրաւ կատարեսցին. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք. սպառնալեօք և ողոքանօք և ընչց պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. և ի բաց բարձ զանուն քրիստոնէութեան

1 ԱՅԼ օր.՝ գգաբանութիւն.

2 ԱՅԼ օր.՝ յանձն իւր:

3 ԱՅԼ օր.՝ լինելոյ:

4 Յօրինակն՝ գրեշմ:

ի միջոյ նոցառ Խւ յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաջի թագաւորին, և մեծապէս ուրախ լինէր:

Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է<sup>1</sup> լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց հայաստանեաց: Օոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառազրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր, եկեալ հասեալ վրէժինդրութեան պատիճք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. որպէս և գրեալ է ի մարգարէութեանն Նրեմիայի, եթէ երաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան, զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հաստուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր<sup>2</sup>, ի հարկանել զքարի զոտս մեր. եկեալ հասեալ աւուր կորստեան մերձ առ զուրս մեր, զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր<sup>3</sup> ի վերայ մեր, որպէս զրեաց Մովսէս: Ի՞այց բացումն դրան քան զամենայն այս չար է, որ յաներեսյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոյ՝ առաւել քան թէ մարմնոց, վրիպել յանրիծ և յուղիղ յառաքելաքարոզ հաւատոցն ի հայր և յԱրդի<sup>4</sup> և ի հոգին Առլրա: Օոր մարդկային կարողութեան անհնար է փակել զբացումն դրանն ի կորսուստ. բայց միայն Եստուծոյ կարողի և յամենայնի խնամողի կարողութիւնս այս է դիւրայարմար, որպէս և գրեալ է, թէ պիակիցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ:

Յայնժամ Հրովարտակս արարեալ, պնդազեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն, ի հեռաբնակ վայրս Եսորոց և Իարելացւոց, Թուրքաստանի և Խուժաստանի, Մարացւոց և Իլամացւոց, Եղիպտացւոց և մինչև ի նելքին կողմն Տաճկաստանի և մերձ ի սահմանս Ասկաստանի՝ առ զօրս<sup>5</sup> և զօրագուշս, աշխարհակալս, գաւառապետս քա-

1 Ա.Յ. օր.՝ աշխարհի է, և կամ է պերոյ մոյ աղքի:

2 Ա.Յ. օր.՝ ըստ գործոց մերոց:

3 Ա.Յ. օր.՝ տէր պատրաստութեամբ:

4 Ա.Յ. օր.՝ յառաքելաքարոզ ուղիութէ յԱրդի:

5 Ա.Յ. օր.՝ առ զօրափարս:

զաքայինս, հազարապետս կողմանակալս մեծամեծս աշխարհացժամ տուեալ՝ փութով յանդիման լինել նմա ի թագաւորաբնակ քաղաքն իւրեանց: Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդիր այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն:

Եւ մտեալ զօրագլխացն առաջի թագաւորին՝ խօսել սկսաւ թագաւորն և առէ. «Փ սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորմամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Ըշոտ իշխան Վասպուրական: Եւ արդ քաջալերացարուք, լերուք ալք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. զիշխանս և զտեարս կողմնակալս և զկուսակալս աշխարհին, զագատս և զազատորդիս փութով առ մեզ հասուսջիք կապանօք, և դուք անդէն յաշխարհին կալարուք ձեզ բնակութիւն, և ձեր լիցի երկիրն այն ի ժառանգութիւն և որդւոց ձերոց: Իայց նախ զԸշոտ և զտուն նորա ածջեք այսր, և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնելք»

Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարզես և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. խընդրէր և զդիւան թուոյց զօրացն. քննեցին և գտին: Տեղեկանայր և զայն ևս ըստ իւրաքանչիւր գնդից, զբաջացն և զկորովացն պատերազմողաց ըստ իւրաքանչիւր անուանց, և զայն ևս, թէ քանի՛ սպառազէնք են, և կամ քանի՛ այնոքիկ, որք վահանաւորք հետեւակաց են, և կամ քանի՛ նիզակաւորք, և կամ որչափ թիւք ազեղնաւորացն են, և կամ քանի՛ պարագլուխք իցեն զօրուն, և կամ քանի՛ սաղալք միայնամարտիկք ախոյեանք իցեն, և կամ քանի՛ ըմբշամարտիկք, և կամ թէ քանի՛ գունդք սաղալք իցեն, և քանի՛ սաղալք սուրհանդակաց իցեն: Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ դրոշք են, և կամ քանի՛ նշանք, և կամ ի քանի՛ առաջս զօրքն բաժանիցին,

և կամ քանի՛ փողք դոչեցն, և կամ քանի՛ թմբուկք դա-  
փիցեն:

Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եզիտ բազ-  
մագոյն քան զամենեսեան զկապալմաւորս և զկորովիս աղեղ-  
նաւորացն Խլեմացւոց և Կրաբացւոց, աջողակք յերկոցունց  
ձեռաց, որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻս-  
րայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Խփրեմի և Շհնիա-  
մինի: Եւ զօրագլուխ կացուցանէ նոցա զայր մի Ռուզայ ա-  
նուն, աղգաւ թուրք. և Հրաման պատուիրանի տայր յան-  
դիման բազմութեանն, զի խրատու նորա լուփեցն, և Հրամա-  
նի նորա անսայցեն: Այ էր իշխան Հրամանատար ամենայն  
տէրութեանն Տաճկաց, և ոչ ոք ամենեին իշխէր ելանել ար-  
տաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս.  
այլ և ինքն թագաւորն Հրամանի նորա անսայր: Որ զապի-  
րատ և զի Հնարիւք սատանայական իմաստից, չարահնար  
խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փռնքտալով, և  
վիշապաձայն որտուալով ահ արկանել հեռաւորաց և մերձա-  
ռորաց:

Նոյնժամայն կլեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն  
Ռուզայ, յորում որջացեալ բունեալ էր սատանայ զօրու-  
թեամբ իւրով: Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւ-  
րոց էր մարմին<sup>1</sup> և արիւն անմեղ մարդկան, առ ի յազրւն  
անհնարին զազանաբարոյ կատաղութեանն<sup>2</sup>:

Առ տա ինձ թուի ասացեալն մարդարէին Ամբակումայ.՝  
«տիսէք, արհամարհոտք, և զարմացարուք և եղծարուք, զի  
գործ մի գործեմ իս յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայ-  
ցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: Զի ահա ես զարթուցանեմ ի  
վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ զնայ ընդ լայնութիւն  
երկրի, ժառանգել զիսորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի:՝  
Եւ դատաստան իւր յանձնէ եղեցի, և առած<sup>3</sup> յինքենէ ելքէ:՝  
Եւ վազեսցն առաւել քան զինծ երիվարք նոցա, և երա-  
գունք քան զգայլս Կրաբացւոց: Եւ դիմեսցն երիվարք նո-

1 Այլ օր՝ ոչ այլ ինչ էր՝ քան թէ  
մարմին:

2 Այլ օր՝ կատաղութեանն գալա-

նաբարոյ:

3 Այլ օր՝ և առածէ:

ցա, դիմեսցին որպէս զարծուիս ի վերայ կերոյ<sup>1</sup>. կատարած ամբարշտաց հասցէ դարձելոց ընդդէմ նոցա. կուտեսցէ զերի իբրև զաւազ, և ինքն թագաւոր փափկասցի, և բռնաւորք խաղալիկ նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ:

## ԳԼՈՒԽ Բ.

Վասն Ամբարայ Բագրայուանոց, Մոկայ իշխանին:

Յայնմ ժամանակի Իռուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, Ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց. և հատեալ զզօրուն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել զաշխարհն, աւերել և բնաջինց առնել և մաշել ի սուր սուսերի. զբազմամարդի գեօպս և աւանս՝ առնել անմարդիս, և զմնացեալսն վարել ի գերտոթիւն, զկանայս հանդերձ մանկառվ. և զիշխանն Աշոտ տանել կապանօք առ թագաւորն, զի աացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց. Տուեալ լինել այնուհետև զման ինչ զօրուն ի ձեռս զօրապետի ումեմն միրաք կոչեցելոյ, և յդէ զնա ընդ կողմն Աշտունեաց. և զայլ բազմութիւն զօրացն սուեալ ընդ իւր՝ երթայ ընդ սահմանս Ապահունեաց, իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նշնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ, ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: Ի՞պս քանզի ընդարձակ էր պահն Նողցայ՝ փութանակի եկն եհաս միրաք ի գաւառն Աշտունեաց և զզօրսն առխմթեալ<sup>2</sup> ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. և անդ գտեալ զընակիչն Աշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ և ի մարդախոշոշ շանցն

<sup>1</sup> Ա. Ա. Կերտար:

<sup>2</sup> Հին օր.՝ առ հեթեալ:

զիշակերաց, յորոց վերայ սուր եղեալ կոտորէին, և լնուին արեամբ զերկիրն ։ Եւ զկէան գերի առեալ ածեն ընդ իւրեանս, և զշէնս և զաւանս և զագարակս հրձիգ արարեալ՝ անապատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ։ Ըլ և զռամփկ Նօրագեղ աւանին Ո՛շտունիաց առեալ ածեն ի տեղի վաճառուն սստանին Ո՛շտունիաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. և անտի գնացիալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախըստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազում ի նոցանէ արկանին։

Ի՞այց երկու ոմանք ի սաղարաց սուրհանդակաց, եղբարք միմեանց, հասեալ ի կիրճն ձորոյն, վահան ի թիկունս եղեալ, նիզակ ի ձեռին ունելով, ի կապարճն աղեղանց ի դիմի հարեալ զօրացն, և օգնութիւն հասեալ նոցա յՆստուծոյ՝ ի պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եղեալ, և զբազմութիւն գերւոցն զերծանեն գնալ յամուրս երկրին։ Աղքա անուանք ձանաչին միոյն . . . սրով<sup>1</sup> և կատարեցաւ . . . եղբայր<sup>2</sup> յեղբօրէ օգնեալ իրրե զքաղաք ամուր և հզօր, և ըստ Խսայեայ՝ թէ. «ի բարբառոյ միոյ հազարք կորիցն, և ի բարբառոյ հնդից բազումք փախիցնու։ Խրէց մի Ծապուհ անուն, և մի ոմն յուամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն, սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւքարինս ի վերայ արկանէին. իրրե բազումք առաքինացն մեծաւ ուժով և քաջ նահատակութեամբ ի հանդէս մարտին. որոց յիշատակ նոցա եղեցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեացն և ի յորդորումն քաջ նահատակացն։

Ոմբոնիեալ լինէր յայնժամ մի ոմն ի այցոց ազատանոյն տոհմից Վահեռունեաց, Վապուսահակ ոմն, եղբայր Վահակայ եպիսկոպոսի ոստանին ։ Խախճուանու և Վարդպետականի. և էր ալեւոր<sup>3</sup> ըստ մարմոնյ և հնացեալ արառքին մարմինն, բայց նելքինն նորոգեալ և զեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. տեղեակ և հմուտ Վստուածաշունչ գրոց, և ընդել

1-2 Թուք աղաւազութիւն կամ պահասորդ բանի գոյլայսոսիկ վայրու. —Օրինակ գահին մասիս ունին զգքութիւն։

2 Յօրինակն և կատարեցաւ որով. եղբայր։

3 Յօրինակն աւեւոր։

և ծանօթս. Նստէր փորող պոզոսոսյին նրբագողոց ճանապարհն, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Արան<sup>1</sup>, ի բանակետոցն երինաւոր զօրացն յարկայանիստ քրիստոսեան թագաւորութեան։ Չսա ածեալ լինէր առաջի զօրավարին Ծիրաքայ, որոյ տեսեալ զբարձրաբերձ զայելչումին հասակին և զպատշամ գեղ երեացն, զփազիեալ գյոյն. ի տեսիլ արուտսեկի ի մէջ սպիտակափայլ աղեացն պատուարելին՝ և հաճոյ թռեցաւ յասս զօրավարին։ Եւ սկսաւ ի վերայ մղել<sup>2</sup> զժախախոտ և զյիմարեցուցիչ մատզախառն թոյնան, զի թերեւս կարասցէ արկանել զերանելին ի նելքց պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն, և զփքինս կապարձիցն սպնդով<sup>3</sup> ծածկեալ զստակչական զօրութիւնն թռուցանէր ընդդէմ սբրոյն, թէ գուցէ զրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ, գի կարասցէ խոտորել ի գաղտնիք զգիք սբրոյն, զզրահեալն առգւտմն սբրոյ վերեկութեամբ. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն աերունական, զբ ասացն, թէ յորժամ մատնիցեն զձեղ մի՛ հոգացէք թէ որպէս, կամ զի՛նչ խօսիցիք, զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցն կալ հակառակ կամ տալ պատախանի ամենացն հակառակորդըն ձեր։

Ակառ խօսել բռնաւորն բանիւք ողպանոք, և պարզեւ և պատիւս մեծամեծս հրամայէ բերել առաջի, և խոստանայր շքեղ և երեելի կացուցանել ի մէջ աշխարհակայցտ ամբոխից ի զրան արքունի, և ընդ առաջին իշխանացն լինեղ առաջի թառդառին, և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի զիսաւոր քազմականի անդ, յորժամ ատեանն աբքունական յարդարիցի։ Միայն ի բաց լեր, ասէ, ի հաւասարցն Քրիստոսի, հնազանդեալ ընդ ձեռամբ մեծ թագաւորին, և ընկալ օրէնս և հաւատս արժանի կենաց և զավութեան ի մեծ արքային և ի մեր իշխեցող հրամաննակառար թագաւորին հնազանդութենէ։

Եակ ոռորին վառեալ առգւտմն սբրով՝ յիշէ զասացեալն ի Փրկչն, թէ մի երկնչէր յայնցանէ, որ սպաննանն զմարմինն, և զողին ոչ կարեն ուզանանելը, և զի մի՛ նիւազն եօթնաստեղնն<sup>4</sup>

1 Հին օր.՝ մայրաքաղաքն սբրոյ.

2 Հին օր.՝ ոյնուհեակ ի վերայ մղել.

3 Հին օր.՝ սպնդով։

4 Այլ օր.՝ եօթնաստեղեան։

ընդ գրուանաւ զիայլումն լուսոցն ծածկիցէ, այլ ի վերայ դը-  
նիցի բարձրաբերձ աշտանակի առաքելական եկեղեցւոյ, որպէս  
զի տեսցեն և փառաւորեսցն զայլըն երկնաւոր: Եւ բացեալ  
լինէր զբերան իւր բանիւն Աստուծոյ, և անդ գեղեցիկս և  
համառօտս անգամցյան կարգէր մի ըստ միոջէ ըստ վկայու-  
թիւն հաւատոցն որ ի Վարիստոս և որ ինչ ի նմանէ կան պա-  
հին պարզեք կացելոյն ի ծշմաբութեան հաւատոս, և տան-  
ջանք ուրացելոցն և յետս կացելոցն, և ընդ մեծ պարսաւանգք  
ներքադրեալ զբունաւորն և զմոլար օրէնսդիլն իւրեանց զՄա-  
հումաթ: Ի՞յց քանզի մեր ոչ յայնժամ հանգիպէր ի պա-  
տասխանաւութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համա-  
րեցաք:

Ի՞յց իբրև ետես բռնաւորն զանգառնալի միտսն և զա-  
ներկայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանգուղն պա-  
տասխանիսն և մեծ անարգութիւնն, զոր հասոյց ի վերայ  
նորա և նոցին օրէնսդիլն՝ և բարկացեալ յոյժ հրաման ետ  
փութով զբաւ առնել կենաց նորա:

Խսկ սուլրն ելեալ հանգերձ դաշնաքն ի տեղի ասպարիսէ  
կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունդ, իշեալ  
կայլ յաղօթս, զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել  
հետքից բանսարկութին, որ ի ծածուկ և յայտնի պատկազ-  
մին, և ասէր «Երագիշ իրաւանց և արդարութեան...»: Եւ  
զձեռս յերկինս համբարձեալ, ուներտվ զպարանոցն առաջի  
դաշնացն. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ  
զզլուխ նորա: Եւ այսպէս կատարեցաւ երանելին Ապուառ-  
հակ: Աա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վր-  
տանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր այսաստա-  
նեայցս: Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Աամրւէլ յա-  
ւանին Արտամետ. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձո-  
րոյն Հատուանոյ, որ էր ընդ դաշնան, և ի սկզբան վկայ-  
ութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւած անդ հանդի-  
պեալ լինէր, և ի միտ առեալ էր զսաղմուն; զոր ասպացեալ էր  
երանելին: Գիտեն զայս և բնակիչքն Ոշտունեաց գաւառին,  
զի գեռ ևս կենդանիք են բազումք ի նոցանէ:

Եւ եղե զինի այսորիկ գնաց անտի Ճիրաք և եին ևմուտ-

ի Վանտոսպ, և ի յանձին<sup>1</sup> հրճիք արար զմեծ եկեղեցին յաւանին Երտամետոյ:

Բայց ինքն Իուհայ խաղացեալ գհեա իշխանին, և ընդ նմա Տամիկք Հայաստանիայց, որ բնակեալ էին ի կողմանք կողմանս աշխարհիո՝ առաջնորդէին Իուհայի ի մուտ և ել աշխարհիո:

Դակ իշխանն Աշոտ, առ սակաւ սակաւ ամփոփեալ ընտանեգք իւրովք, և ընդ նմա ոմանք յաղատաց իւրոց, Մուշեղ Վահկունի, որ զտանուտրական պատիւն ունէր, և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Նասան և այլք ի սեպուհ պաշտօնէից և եկին մտին ի բերդն Գաղեակ, յամրոցն Խկան, որ ի Խոռոնավան գաւառի. և խընդուին տեսանել թէ որպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին. ի վերայ հասանելոյ:

Իրրե իմացան զօրքն Տամիկաց, թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետեւ, և շուրջ փակիալ անդէն զամուրն զանել գառագիզն: Խւ զբուն բանտին առնէն ի Պոկորուաա<sup>2</sup> աւանին, ունելով ընդ ինքեանս զբազմութիւն գերուցն կուտեալ իրրե զհողը Այլ և Վահան Ըմատունեաց գաւառին փախատեայ եկեալ ի ձորն, որ մերձ յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր:

Կապա յետ փոքր ինչ աւուրց վառեալ զզօրսն ի պատերազմ ընդ բերդայինսն; առնուլ զամրոցն Խւ ինքն իսկ զիսովին զօրավարն Իուհայ, հեծեալ յերիվայն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին ազեղնաւորացն Խլիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ<sup>3</sup> ի ճակատի: Խւ զայլս ազգի ազգի զինուովք ունէն վաղերք և վակուրք, սուսելք և սուինք, տապարք և վիրզահանք, մեքենայք և ոմբագարք<sup>4</sup>, վահանք և նիզակք: Այլ հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմն, և զլոյծ բնութիւնս յանօթս ապակեղէնս եղեալ, և մանր զծրծումբն ընդ նմին խառնեալ, եղեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամփա-

1 Թերեւ ի յանցին:

2 Այլ օր՝ ի Շոկորուատ:

3 Այլ օր՝ վառեալ ընդ ինքեան:

4 Յօրինակսն՝ ոմբագարք:

յաւն։ Եւ որք մերձ առ պարսպօքն զծակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ, զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մաղոյն թաղ կոչեցին, զոր ի ջուր եղեալ՝ ծծէ իբրեւ զապունդ, զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերապմն, աներկիւղ մնալով ի հրոյն տղչորմանէ. և զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ նպառազինք, շոնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապահս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փոնկալցին մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնամես ի մէջ ճակատուն կապեալ և զնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ այլ և աստի և անտի երիվարի փորոցն տախտակագործ գրգեալ ըստ փորոցն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն։ Եւ ինքեանք արկեալ զրահ զանձամբ, և սաղաւարտ ի գլուխ եղեալ բազպանս ի ձեռն արկեալ, զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ, ոդ ոտիցն կօշկաձեւ արուեստա անտեալ, նիզակ ի ձեռին ունելով, կապարձն և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ, դրօշ և վերջաւորս փողփողեալ՝ ստառնաձայն հնչմամբ զլեառն գնդեցուցանէին<sup>1</sup>, նշանս կանզնեալ և փողք և քնարք հնչէին և թմբուկքն դափէին, և արեւն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերտցն փայլեալ՝ ճառազայթս արեգակնային յինքեանց ձգէին շուրջ զլերամբն քաջքն խիզախէին, սաղապքն կանչէին, նահատակքն քոչէին, զռազմ ճակատուն կարգեցին պատրաստեցին. զայս ասաց Եսայի միով բանիւ Ելիմացիք, ասէ, տոեալ զկապարձն, հեծեալ յերիվարս. և զունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Եշոտ և բնտիր զօրավարն ձայոց առ մեծն իշխանաց։ Եւ յայնշափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ գնդեցուցանէին։

Եշոտաց, և որք ընդ նմա էին գռանդք աղաւտաց և նոցին զօրաց ըստ տոկմն աղբաց, ի բնիկ նախարարացն Վասովուրատկան տերութեանա:

Ինկ իշխանն ելիալ կայր ի վերայ պարապին, նազելով և սիրալով, իրիւ զկորիւն առիւծու ժմմի, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փափեալ շուրջ զնոտու. զի կարծեք ևս համափոքհ և միազործ զնի զակակիցն իւր, զգօրմն և զզօրագլուխս զգունգ աղբատացն, որ մտեալ էին ընդ նմա՝ յանձնան նկանին Ռայց նոքա ևս քան զես սանուկացուցանեին զմերտն:

Յայնժամ ի խորհուրդ եմուտ իշխանն և տահմակիցք իւր, Վահան և Մուշեղ Նըմրունիք, և գունդքն ազատանցյն ար ընդ նմա, զի թերեւ կարասցն հաճել զմիտու զգրավարին՝ ի բաց կալ ի խորհրդոցն զոր ինչ խորհեալ էր, և զմարտն ցածուցանել և զազմուկն ամբոխեալ ի բաց վճարել, և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, միքել և տալ նմա գեօզն և աղարակս, և տալ հարկս արքունիս և պատանդմ խաղաղութեան:

Խւ մինչեւ, զայս օրինակ խոհապին և խորհրդին ի միասմին՝ միանգամայն արգելականք բերդին անդէն իսկ և իսկ քառկեալ ի միաբանութենէ ուխտին, որք էին անդ խորհրդականք ի յազատ տօհմէ՝ խորհուրդ չար ի մեջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանգն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել ի ազագաղութիւն. և մեկնեալ յինքեանց զԱ-ահրամ անուն՝ և տան տաճել հրավարտակ առ զօրավարն, լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաշս իշխանին դաւանենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքշյքն դապականիւ գայլցն բերելով զլրութիւն, իրիւ շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Խսայի մարգարէ, ընդդէմ Ցեսառն փսխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զպութիւնն, յինել տիրակորսց և աշխարհաւելք, բանսարկուք և քսսիչք, խոռվասէլք մանաւանգ քան թէ խաղաղասէլք, որք քակէին գոլ նոցա ամենայն ուրիք ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խանչաղութեան եղբարց և աղդականաց և բարեկամաց:

Խւ եղեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս  
Փրկչին, ունելով ընդ ինքեան զհորվարտակն զբեալ այսպէս.

Այս յարքունուստ ընկալեալ քո զվերակացութիւն աշխարհ-  
հիս Նայոց, և ըստ հրամանի ինցնակալ թագաւորին նուա-  
ծեալ ունիս ի հնագանդութիւն պիտութեան ձեր զեշիանս  
և զտեարս, զփողմնակալս և զիրւսակալս, զքաղաքապիտս և  
զմարզպիպս բոլոր Նայաստանեայցս, և զսպտամբսն և զընդ-  
դիմակայցն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց իրա-  
տել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք, և ի բաց բառ-  
նալ յաշխարհէ զշփոթ և զխոռվութիւն ի միջոյ խաղաղու-  
թեան, որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագա-  
ւորազանց, իբրև Կատուծոյ կամարաբողաց և հաւատարիմ-  
ծառայից տիրասիրաց:

Խւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշ-  
խանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահեսունեաց, Վահրամ յազգէ  
Տրունեաց, Վահրամ միւս, որ և թիկնապահ իշխանիս, և  
այլ գունդք ազատաց և զօրական պիտութեանց, ի ձեռս  
մեր է հոգարարձութիւն աշխարհիս, զփեցաք առ քեզ Իուր  
իսայ<sup>1</sup> գլուխ գորավարաց Ֆաճկաց և բարձակից մեծ թագա-  
ւորին. միայն թէ ընդարձակեսցես մեզ և առհմի մերոյ, բը-  
նակաց<sup>2</sup> երկի մերոյ՝ մեալ յիւրաքանչիւր տունս բնակու-  
թեանց կալ խաղաղութեամբ՝ մեք տացուք զլշտ ի ձեռս քո  
առանց զինու և մարտից և ձակատուց կազմութեան, և մի  
ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. այլ և ոչ զմեզ տպստամբս  
կարծիցիս զրլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխու-  
թենէդ, եթէ հաւաստեաւ քննիցիս Իայց մի և այսմ անտե-  
ղեակ լինիցիս, զի Գուրգէն եղբայր իշխանիս և այլ առհմն  
Երծրունեաց և բազմութիւն ազատաց և ազատողեաց և  
նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս, ամենե-  
քեան ընդ նմա տնցեալ գնացին. ի կողմն Նորպատականի, և  
անդր զումարեալ են ամենայն զօրք և ռամփկք աշխարհիս,  
ալք կորովիք և պատերազմողք, որք ոչ զառնան ի սրոյ. և  
եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հան-

1 Հին օր. ունի անխորի՝ Բուկոյ, 2 Այլ օր՝ բնակչաց:

գամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ և կիսցէ ի վերայ քո և մեծամեծ աւձիրս ի վերայ քո և զօրացդ ալքունի հասուցանիցէ։ ՞Նի այր քաջ է և պատերազմօղ, և միաբանք են որք ընդ նմա ևն զօրքն, և զանձինս ի մաշ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց<sup>1</sup> և աղանց և տոհմից իւրեանց։ Եւ ամուրք յոյժ և անկասկածելիք ի ձեռս նոցա են, ամուրն Թղմար և Արթոդ, և Շախուկ բեկրդն։ և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն<sup>2</sup> իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք գտանիցին, և զքեզ կորակնեալ ամօթալից ի պալատութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հաղարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ սոցա, և ոչ ճ այր առ ժ զօրացն ։ այոց։

Եւ իբրև ընթերցաւ մեծ զօրավարն զծածուկս ազատանցն՝ ետ պատասխանի, զոր և զրով իսկ աւանդեաց. երգմամբ հաստատեալ ասէ, զոր ինչ միանդամ կամք յօժարսւթեան ձերոյ ախորժեցեն՝ եղիցի ձեզ ստուգապէս առանց երկրայութեան. միայն ոչ ելցէ ի ձեռաց խոց Եշոտ հանդերձ ազգականօք իւրովք։

Իմացեալ յայնժամ իշխանն զնննգութիւն նոցա և զխորամանկ կեղծաւորութիւնն, և զի ոչ ըստ հրամանի նորա յօրինէին զպէտս պատրաստութեան ամրոցին՝ ասէ ցնոսա. առ րիք երթայք առ զօրավարն, տհսէք հաւաստի, և ի վերայ հասեալ զիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարացուք համել զմիտս նորա ի խաղաղութիւն։

Յայնժամ բացեալ լինէր պատրուակ կեղծաւորութեանն ի խլոդմնի դիմացն։ Ետուն պատասխանի և ասեն, «յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձրի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծն ապստամբ լինել ի թագաւորէն։»

Իրմէ գիտաց իշխանն, իթէ վճարեալ է շարութիւնն յաշս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջնն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պա-

<sup>1</sup> Այլ օր՝ գասն աշխարհաց և տանց։      <sup>2</sup> Այլ օր՝ և կամ այլ աւելիս...ունիցձն։

տառիսանի և ասէ, «զի՞նչ է այդ, զոր դուք ի ծածուկ գործեք, և ընդէր խորհուրդք գաղոնիք ընդ միմանա խորհիք» Եթէ չար ինչ թուփցիմ յաջս ձեր, և ապիրատո գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ ընդ ձեզ՝ աւասիկ յանս դիման երեսաց իմոց տուք պատաժանի, և ցուցեք յականէ յանուանէ մի ըստ միոցէ իւրաքանչիւր զմասս զօր գործեալ եմ, դիք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի պատկառէք խօսել զշշմարտութիւնն: Ապա թէ իրրե<sup>1</sup> զհայր զբգեալ և զգուեալ էի զձեզ, և ժաղավեալ իրրե հաւ զձագ ընդ թեովք ի պատճառս պահպանութեան, և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իրրե յամուր քաղաքի ընդ ձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. և դուք զայսքան հատուցուն հատուցանէք ինձ, չիմացեալ ձեր զոր ասաց Դաւիթ, աշատուցին չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ և նմին հատուցուն ի կարգի որ ասէ, «կացս ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորատ, և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: Զիցէ<sup>2</sup> լուեալ ձեր զոր ասաց Աօղոմնն, թէ «որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեացէ» Աչ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ գթալիր սիրով մեծարեի այնչափ, զի և զմեծութիւն ընչեց, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար աւլով զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ, զոր ոչ և զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք, եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. և ես ամայացեալ ոչ ինչ փշյթ առնէի, միայն ձեզ զիկանալն սիրելով առ այսոքիւք. և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի զութ խանդաղատանաց ի զիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց<sup>3</sup>, իրրե զառ ի յինէն ծնեալս: Եւ արդ այսոքին են փոխարէնք, զի ետօք յօժարութիւն նենգագործ խորհրդով լինել յարգելանի, և առնել դիւր որսալ ի ինդրողաց անձին իմոյ և իմոց զաւակաց, համօրէն ըն-

1 Յօրինակն չիք՝ իրրե:

2 ԱՅԼ օր՝ հանդերձ մեծամեծ ըն-

ծայիւք ի զիրկս իմ ընդունէի մետւ զը-  
գուանօք:

առնիւք արկանել ի բերան. վիշտապի, և լինել պատճառք պոյ  
և գերութեան ամենայն աշխարհին

Այս նոքա քանզի հաստատուն մոզք ունէին զմիաբանու-  
թիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ և  
առն պատասխանի և առն, աչ կարեմք զդէմ ունել անշնա-  
րին ուժոյ բռնութեանն աբբունի, ոչ ամուլքն պատրաստա-  
կան առ ի յամրութիւն, որպէս թուէր մեզ, և ոչ համբարք  
ի սման բառական, թողումք այլ ումեք ասել՝ այլ և ոչ պահա-  
պանաց ոմանց ուամկաց որ պահեցեն. դամօւլքս: Եւ վասն  
այսոր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամ-  
բռնութեանդ. բարձին, և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են  
ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ<sup>1</sup> ի տեղիս  
խրաբանչեար, և աշխարհ զըստ առցէ յասպատակէ թշնա-  
մաց, որ եկեալ հասեալ է յաւեր և յեղծումն: Եւ եթէ քոյ-  
քն կամաւ երթիցես՝ թերևս օգուտ բազմաց և անձին քում  
եղիցի. գուցէ ակամայ երթալովն, և նեղին աշխատելով է  
պահելն՝ յաճախեսցէ ի վես և ի քէն, և օճան բարւոյ յայնմ  
հետէ ոչ ես ումեք հասցէ գտանելու

Եւ զայս լուեալ գիտաց զառ ի նոցանէ հաստատուն նեն.  
դարբարծութիւնն, և զայս առ Աստուած համբարձեալ եկաց  
յաղօթս, ձաշակեալ առկաւ ինչ հաց և զինի գոհացաւ, և  
առ ընտանիս իւր դարձեալ թախանձագին՝ յարտոցեալ էջ ի  
յամրոցացն, և եկեալ եկաց առաջի ոստի վերագին, և տու-  
եալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: Եւ եհարց եթէ գու  
իցես Եշոտ. ասէ, այս ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և  
զայն լուաւ. ապա բանս մեզաղբականս բազումն յաճախեաց  
եղ առաջի նորա. և լուեալ ի նմանէ պատասխանիս դիպողա-  
գոյնս և իմաստունս՝ հրամայեաց նստել:

Յայնժամ Ամբատ Ռազբատունի, զոր վերագոյնն յիշե-  
ցաք, Մոկաց իշխեցազ, քանզի յոյժ սիրեցեալ եղեւ ի զօրավա-  
րէն, և առաւել քան զամենայն մեծամեծս ընդունէր պարզես  
և պատիւս՝ անհանգուրժելի լեալ անցիցն անցելոց, և մեծաւ  
տրամութեամբ հաշէր և հառաչէր յոգի իւր. և ելեալ ար-  
տաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկ-

<sup>1</sup> Յօրինական յարկ և կուրք:

ման իշխանին և այլոց նախարարացն. բայց ոչինչ ձեռնհաս լինէր օգնել նոցա վասն դառն հրամանի ամբարիշտ թագաւորին. այլէր և խորովէր ի միւտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամացն։ Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին և եկաց առաջի զօրավարին աներկիւղ համարձակութեամբ առանց պատկառանաց, և ասէ, արովհետե գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս ապյաստանեայց և մեծամեծս<sup>1</sup> արքունի զիս նախամեծար և մեծարդի ցուցեր, և լուան ամեներեան զառնելն քո ընդ իս՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս, զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ սեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին։

Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ<sup>2</sup> տալ նմա զի՞նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից<sup>3</sup> կացուսցէ։

Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարզեւոց առիթ լինել. առուր ինձ, ասէ, ի գերելոց այտի՝ ոբչափ և կամք քո հրամայեսցեն։ Ենդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Ամբատայ՝ մի ոք իշխանցէ արգել լինել։ Եւ ետ նմա սուրհանդակս և մակնակագէնս և սակրաւորս և կափաւորս, և զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ անտի զգերիս Վատպուրականի։ Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Աիւրոս ալքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութիւնէն Բարիլոնի. ած եհան զժողովուրդն յերկիր իւր Եւ կատարեցաւ ի վերաց Ամբատայ ասացեալն յանսայիայ մարգարէէ, թէ առուքեսցէ նոցա այր մի, որ փրկեսցէ զնոսա և դատաստանաւ փրկեսցէ զնոսա, և դարձեալ՝ թէ զգերութիւն ժողովրդեան իւրոյ

1 Ա.ՅԼ.օր.՝ քան մեծամեծս։

2 Ա.ՅԼ.օր.՝ երդմամբ խօստացաւ։

3 Ա.ՅԼ.օր.՝ հաւասար և պատուակից

իւրոյ տէրութեանն։

դարձուսցե, ոչ կաշառօք և ոչ պատարագօք, ասէ Տէրու Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուղախութեամբ և անտրտում ինդութեամբ, ժամ տուեալ նմա դառնալ առ նա ի ձմելոց նորա ի քաղաքն Դուին:

### ԳԼՈՒԽ Գ.

Ասպարուն և Հյուրուն յաշխարհն իշխանին և նախարարութեամբ նոցին ընդունեաց:

Ընդ աւուրսն ընդ այնուիկ, մինչ կային ի կապանն իշխանն և նախարարքն իւրաքանչւր ընտանեօք՝ կազմեալ գունդ դինուորաց և ընտիրս այրումիոց, վառեալ գինու բազում պատարաստութեամբ, և զիշխանն Եշոտ և զորդի նորա Գրիգոր և զԱւան Երծրունի և զորդի նորա Գագիկ, որ և Եպումբուան<sup>1</sup> կոչէր, և զՄուշեղ եղբայր Վահանաց և զաիկինն արանուշ և զայլս յազատատանէ<sup>2</sup> կապեալ և բարձեալ ի վերայ ուղուոց՝ վտարեաց ի Ասմառայ, և եղեալ ի նկրքյ արգորայ տազաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից, Ճանապարհ արարեալ ընդ Շտրպատական, կասկածելով թէ դուցէ Գուլբգէն. և կամ մի ոք ի առջմէն Երծրունեաց և նոցին ապատաց ի կորովայն Աստվուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց:

Եւ եղե իրրե եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտա նոցա կրկին շղթայիւք և զնել ի բանտի. և հրամայեաց զինուց վառելոց զինուորաց պահել զնա՝ մինչ ինքնն նատցի յատենի և մուցցէ զնոսա ի դատաստան հարցափորձի և քննութեան վարուցն, զոր կուտեալ եղեալ էին ի վերայ իշխանին:

Եւ իւր հազարապետին դրեալ և ծանուցեալ էր արքայի, զոր ինչ զործեաց ցայն վայր<sup>3</sup> ժամանակի:

1 ԱՅԼ օր՝ Ապրուպուան:

2 ԱՅԼ օր՝ յազատ տանէ:

3 Յօրինակն՝ Պայնվայր:

## ԳԼՈՒԽ Դ.

Ի՞նչ ո՞րպէս պատճառաւ հասին աման է նոցանէ սուշն իսպարմանն:

Ղահատակք ոմանք կային յայնժամ ելեալ յարգելանէն ընդ կալանաւորսն, և զեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եղեալ. ամբարձին զայս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին<sup>1</sup> ընդ աշխարհական գերիսն: Եւ առ չժուժեալ պյնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրծս ձաբօյն և մերկացեալ զաւսեսն՝ յարձակեցան ի վերայ երիվաբացն. և Տէր մատնեաց զնոսա ի ձեռս նոցա, յորոց վերայ սուր եղեալ զբազումն սպանին և զես բազումն վերապեցին և զյոլովագոյնն ի գերելոցն հանդեմ ընտանիւք իւրեանց զերձին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձաբօյն յամբական կողմանս լիրին: Իսկ զօրքն Տաճկոց զումբուալ ի վերայ նոցա, շուրջ վակեալ, ձերբակալ արաբեալ ածին առ զօրավարն և պատմեցին նմա՝ զոր ինչ գործեցին զիրս քաջութեանն: Օոր առեալ զարսն սախակեաց ի բաց կալ յիր կրապատութենէն Քրիստոսի, և պատուի և պարզեաց<sup>2</sup> արժանի լինել ի նմանէ, և մի շարազար առնջանօք մեռնել: Կոցա գեղեցիկ խորհուրդ ի մէջ առեալ՝ ընտրեցին զման քաջութեան, քան զիեանս խոճիւ: Խոսեցաւ ընդ նոսա բանիւք ողոքանօք, և ոչ լուան նմա. ետ բերել պարզեա, և այնպէս ոչ առին յանձն. խօեցաւ. ընդ նոսա խստութեամբ, սակայն և յայնմանէ ոչ երկեան. տանջեաց զնոսա զանիւ, և նզքա ևս առաւել պնդեցան ի հաւատան և ի յոյս բարեաց և ի սէրն Քրիստոսի: Եյնուհետեւ Հրաման ետ պավ բառնալ զզուիս նոցա, և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն աբժանի եղեն մեռնել. և ընկալան զզմիու մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի վառս սուրբ Նորբորգութեանն, որոց անուանք ծանալին, միոյն Գէորգ յԱկեցի տոհմէ, և միւսոյն Խոսրով ի Գաբակեան տոհմէ:

1 Թերեւ տանէին:

2 Այլ օր՝ և մծարանաց և զեւի:

Ի՞սկ երիցս երանալի ոմն երիտասարդ հաստիաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ պիրոյն Վրիտոսաք հաւատոցն<sup>1</sup> եկն յարեցաւ ի Պատրիկն Անձեւոցի, և խնդրմբ առնուլ զտէրունական կնիքն, զի կատարեալ լիցի ի դոշմա պատուիրանաց Տնուն, և յապաղեալ խափան լինէր նմա յօժարութիւն ցանկութեան բարեպաշտութեանն. և էր մանալ սա ընդ արդելուկանսն ի բերդն, և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զրմիռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Վրիտոսէ<sup>2</sup> և մի մեռցին<sup>3</sup>, և բազումք զրդուեցան և ելին զինի սատանայի, և կէպ ընկալան զնդութիւն մահու՝ դիմեալ գայր և սա ընդ աջաթեն կողմն վկացելոցն, ընդրէմ արոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Արդւոյն Վատուծցյ:

Խակ Ա աշհրամ տեսանէր զնու մերձ առ սպանդանոցն. ոյն ինչ սուր ի վերայ բերեալ դաշճին՝ ձայնէ բարձր և ասէ, որու մալիմանակ<sup>4</sup>, ընդէ՛ր մեռանիս զուր և տարապարտուց. և նորա ձիչ բարձեալ ասէ, քրիտոնեայ եմ և նա ևս<sup>5</sup> պնդմբ և ասէր, մի՛ մեռանիր, մալիմանակ ետ. և նա առանել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր, ասէ, «Երիտոննեայ եմ», և մեռանիմ վասն Վրիտոսի, և մկրտիմ ի Նոյր և ի յՈրդի և ի Նոյրին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արծուածք Ոչ ապաքէն դու խակ տեսանէիր, զի մոռանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն, և դու ջանաս մոլորեցուցանել զիս ի հաւատէն Վրիտոսի: Եւս խակ լուսյ յորժամ կարդային զնւետարանն, թէ ասաց Վրիտոսա, որ վիստովանեացի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և եւ սղնա առաջի աօր իմոյ որ յերկինս է. արդ ի բաց զնու, այր դու, ևս մեռանիմ վասն Վրիտոսին: Եւ վազէր ընդ բանակն, կրանչէր<sup>6</sup>, հնչէր, շարժէր զնեռնն և ասէր, մս Վրիտոսնեայ եմ, Վրիտոսնեայ եմ, մինչև զայրանալ դաշնացն, և խուան չ

1 Այլ օր՝ հաւատոցն և սիրոյն Քրիտոսի:

2 Այլ օր՝ գի մեռանիցին:

3 Օրինակքն առ և ամենոյն ուրեց զինի սնէին՝ մոլի մանուկ կամ մոլի մանուկ, որ ընթեռնի է՝ մոլիմանակ Յես

զուզզպութենէդ և առ Նոր. Բիզ-

(Հոյկ. Բառացն. յէլն 5):

4 Այլ օր՝ և նա ևս առանել:

5 Այլ օր՝ Քրիտոտեսոյ եմ Քրիտո-

նեայ եմ:

6 Այլ օր՝ Զաքէր կոնչէր:

վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ Հարբն սրով զերանելին և ի բայ առին դդլուխ նորա, և անցեալ պատմեցին զօրավագին. Խռ. ահա լոյս սասակիկ իջեալ յիրմից և ցոլոցեալ ի վերայ սուրբ մաքմաղյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեկ յարմենէ նորա ցայտեանլ կայր: Խռ. տեսին առ հատարակ ամենայն բազմութիւն կարաւանին:

Եռ սա ինձ թուեցաւ ասացեալն ի մարդարիեն, ամբ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մարժէ<sup>1</sup> զիս Տէր ի ժողովրդենէ խարմեն, և զինի ինչ փոքու առաէ, ողայլաղջիսն որ եկեալ յեցեալ իցեն ի Տէր՝ սիրել զանուն նորա, լինել նմա ի ծառայս և յազախնայր, և ամենեքեան որ պահիցեն դշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնուսա ի լիառն սրբութեան իմոյ և ուրախ արարից զնուսա ի տան աղօթից իմոց, ողջակեդք նոցա և պատարագք նոցա ընդունելի լիցին ի վերայ սեղանոյ իմոյ, զի տուն իմ տուն ափօթից կոչեացին ամենայն հեթանոսաց, ասաց Տէր ամենակալը Խռ. դարձեալ նոյնպէս Փրկիչն ասաց, մն ոչխորք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարա է ինձ ածել պար, և ձայնի իմում լուկիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. և ես տամ նոցա զիեանսան յաւիտենից:

Խռ. կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի հայր և յնրդի և ի հոռին սուրբ, որոյ անունն զրեալ է ի դպրութեան կմնաց: Խակ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Վիրիստոնեայ եմ ըստ այնմ թէ ծառայի իմոյ կոչեացի անուն նոր, որ օրհնեացի վերայ երկրի՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն:

Զկնի այսորիկ մեկնեալ Խռոխայ յինքինէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և յամենայն. աշխարհակալաց, և ի Պարսից և յարիմանցւոց և ի Խարելացւոց և յԱրաբացւոց, որ էին ընդնմա եկեալ ի գործ պատերազմաց ըստ հրամանի թագաւորին և մեծ զօրավարին, արս աւելի քան մեռաց և եհան զնոսա զհիտ Պուրգինայ, զի ուր և իցէ՝ ածցեն զնս տռ նա, թէ պատիր խարէութեամբ և խորամանկ կեղծաւութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ

<sup>1</sup> Ա. Յ. ՕՐԻ ԹՐՓԵԿԵՒ:

և մեծամեծ գօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արդունի կարողութեամբ, որպէս զիսրդ և կարասցն՝ առ նա հաստացնեն:

Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից, և ընդ նմա բաղմաւթիւն ազատաց և մեծամեծացն Երձրունեաց նախարարութեանց և ամենայն գօրաց նոցա, և բանակեալ կային ի շերքնոր ի վերաց գեղջն Խոռուց, ի հովիտս նորա, որ կոչե Երևան լին. զի անոր է լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էք տեղի առաջարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն Ակրոց իշխանացն Վասպուրականի, և անդ լինէին ժողովիալ ամենայն բազմութիւն աշխապհակոյտ ամբոխից գաղթականաց դաւառացն կողմանցն Եղբակոյ, Զարեհիանի և Եկեց և ի ընոնակողմանցն Եղբակոյ և Անն Եռոյ<sup>1</sup>, մի կողմն ի Զողոյ լիոնէն և անգրու Խռ էին անհուն բազմութիւնն մածեալ շուրջ զմերամբն իրբե զմարախ և իրբե զաւազ ծովու առանց թուոյ. իրբե ի մեծ և յանկասկածելի ամեր ասպաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք ռայոց. և առաքեալ էք զմացը իւր զբամբիչն Վասպուրականի առ զօրավարն Շուխայ, զի յայնմէիտ կալցի խաղաղութիւն ինքն և աշխարհի իւր, և տացէ ի ձեռու նորա գիշխանութիւնն Վասպուրականի փռխանակ եղբօր իւրայ, և կացցէ ինքն և իւրքն առնեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց:

Իսկ իրմի եմուտ տիկինն ի բանակն և եկաց առաջի զօրտափրին՝ խօսեցաւ ընդ նմա ըստ պատշաճի իրացն յոր պէտս չոգանս: Խոտ պատասխանի նմա զօրավարն ի խաղաղութիւն, և ասէ, նիստ գու աստ, մինչեւ արձակեցից զքեզ և արարից գիամս հայցուածոց քոց վասն որպէս եկեալ եսու: Խու հրամայեաց պահել զնա յընդարձակի, և կարգնաց նմա ոռնիկս օր ըստ օրէ ըստ արժանի մեծ տիկնոցն ռորիփսիմեայ: Խու զորքն, որ եկեալ էին դհես Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայը Գուրգին զօրօքն իւրովք, և բնակեցան յեզք գետացն Զաւ կոչեցեալ: Խու զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուրադմ, Յուսսի ի Խոփիս քաղաքէ, Յուսսի որդի

<sup>1</sup> Այս որ՝ Եղեցոյ և առն առնոյ:

Առահմայ և Եպուհեշմ Խլօյ տէր և ընդ նոսա զօրք նամ-  
դշի Պարսից ամիրայի: Յղն առ Գուրգէն զետպանո, զի ե-  
կեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի<sup>1</sup> և առանց  
միջ իւկը կատկածանաց, միայն զի պատահեցէն միմեանց  
սիրով խաղաղութեան, և պարգևք պատուեալ<sup>2</sup> ի նոցմանէ  
ըստ հրամանի զօրավարին՝ և տիրեցէ փոխանուկ եղքօր իւ-  
րօյ բոլոր աշխարհի իւրոյ: Իսկ նորա յդեալ առ նոսա զես-  
պան զ՛րդայ սմի, որ ծանօթ էր զօրավարին, տեսանել թէ  
իցէ<sup>3</sup> հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն գենպանաց, թէ  
պատիր խարէութեամբ ջանան կորուսաննն զնա: Իսկ նոցա-  
ոչ յայնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցաննն զնա  
անդրէն, զի մի յերկրայս եղիցի զալ առ նոսա. և երկից և ե-  
րից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի ան-  
գեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա: և ինքեանք  
զզօրսն ամենային մեկնեցին երթալ ի վերայ զնզին ույսոց, և  
տան: աշա մեկնեցաք ի մէջ զզօրսն, և սակաւքնն առ մէզ  
և գու նոյնպէս սակաւուք եկ, կամ թէ ևս աւելի պամեք,  
և տեսցուք զմիմեանս: Յայնժամ ես զզօրսն ի ձեռն Մաշե-  
զի Եպուպեմի եղքօր Գուրգինայ<sup>4</sup>, և ինք ել զնաց զհետ ե-  
կելոց կոչնականացն. և յարգելուլ զնա մեծամեծաց նախարա-  
րացն՝ շանաց բնաւ ու մեք, և ամենեքեան միաբան յարտա-  
սուս եղեալ լային<sup>5</sup>. և մինչե հասեալ առ զօրապլուխան, պոլ  
ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իրրե յերկու մզան՝  
նոցա ի մտի եղեալ էր, զի թէ զայցէ զհետ կոչնականացն՝  
կալցուք զնա և զօրին նորա լքանիցին, և զիւրաւ յազմեա-  
ցուք նոցա:

Եւ եղն իրրե երրորդ ժամ լինէր աւուրն, որ էր միա-  
շաբաթի՝ և աշա ելանէին գունդք գունդք հեծելոյն ընդ  
կողմն անապատին Ամբատայ կոչեցեալ բերդին, զի էր աւե-  
րեալ առ նախնեզքն ի զօրացն Պարսից: Եւ դրօշք փողքո-  
ղեալ ըստ միոյ միոյ զնդի, և լցեալ էր լիառնն բազմութեամբ  
զօրացն, և կարւան գաղթականին տեսանէր զփայլիւն զի-  
նուցն և զշողալ սուսերացն, և այսր և անգր խուճապական:

1 Այլ օր՝ երկիւղի և պատկառանաց:

2 Հին օր՝ պարգեք պատուեալ:

3 Յօրինական՝ Դուզինայ:

4 Այլ օր՝ լային անմիմթար:

լեալ հալածեալս, իբրև զոչիսարս ի գայլոց։ Եւ զօրուն ազդ լինէք վասն իրացն, լսէին և նոքա, զի ձայն զօրուէ և սաստիկը յոյժ։ Եւ հնչեաց երկիրն, և զաղաղակ բարձին ամենայն բազմութիւնն, իբրև այն թէ ի հիմանց լեառնն տապալեցի։ Եւ էր աշեղ որտումն և արհաւիրք և թնդիւնք. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և ստուերացն շղալց, և ի փայլիւնն սպառաղէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն, կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելց և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրեաբեր<sup>1</sup> ժամանակի, այնպէս թուէր ի խինջել երիվարացն և յերագ ի վերայ դիմելոցն։

Եւ զօրքն այսոց կային դեռ յանհոգս, և պաշտօն աւուրն ի զորուի եղեալ, ընթերցան քահանայքն զուուրբ Եւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին, և կատարեալ զաղօթան և գոհացեալ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զտմէնն և նըստան ուտել հաց. բայց միայն տէր Եսպումկդէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոցն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն, և դեռ ևս հեծեալ կայր ի նիւս երիվարին, փութացան ի բանակն. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւլեանց զէնսն պատրաստել։ Եւ ինքն շտապէր տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորիլ, կարգել կազմել զծակատն, պատրաստել ի պատերազմ և նժոյգաձիգն<sup>2</sup> իւր մատոյց նմա զընտիր երիվարին։ Եւ հեծեալ փութացաւ պնդեցաւ զհետ Գուրգինի, և մօտ եղեալ մերկեաց զսուսերն և զսաղաւարտն և զզրահսն, զօր արկեալ էր զանձամբ, և աղաղակեալ զինի նորա՝ զի թերեւս ի լուր ձայնին և ի փայլումն<sup>3</sup> զինուցն և ի շղալ սուսերին և ի խինջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի, և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կարստական ծանապարհէն, յոր դիմեալ երթայր՝ անկանել ի ժանիս արիւնուրբու գազանացն։ Եւ եղել զի ամբարձ զաշս իւր և ետես, զի պնդեալ զայր հեծեալն զինի նորա, և ծանեաւ թէ գութկան ոք է, զի սուսեր մերկ ի ձեռին

1 Այլ օր՝ յանձրեացին։

2 Հին օր՝ նոյզակդն։ Այլ օր՝ նե-

առձիգն։

3 Հին օր՝ և ի փայլալ։

ունի, և միայն առանձին գայ զհետ մեր, և դարձոյց զերեսանակ<sup>1</sup> երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն խրեանց: Խւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն, և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հողովեցան յինքեանս, և եղին իրեւ զմի այր կամ թէ իրրե զվէմմի բլբամե, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի, և իբրե զպարիսպ անդամանգեայ՝ այնպէս եղին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակյտ ամբոխիցն, իբրե զքաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանիլ յանձն առին: Խւ մինչ<sup>2</sup> նոքա դեռ չե հասեալ էին մերձ առ գունդն ։այոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յդեաց դեսպանս առ Եպուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխիցն՝ աղաչել ի խաղաղութիւն, մինչև եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա, խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա<sup>3</sup> զկայս, սակայն և յայնմ<sup>4</sup> ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ:

Յայնժամ իբրե զիտաց զօրավարն ։այոց և ոչ միով իւիք կարաց համել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ՝ և հրաման ետ Գուրգէն իւրում գնորին պատրաստել ի պատերազմ, կազմել ուզմ և տալ ճակատ ընդդէմ այլազդիացն, և ինքն ամրարձ զձեռս իւր. յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յազօթս, ասելով զերեսուն և չորսորդ սազմոն և զութսուն երկու, և ահա այլազդիցն հապին ի զիմի գրգուել զմարտն և զօրագլուխիք փութացան զհետ զօրուն: Խւ գունդն ։այոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձեանքակ ի միմեանց ըստ տոհմա ազգաց, ի տանէն Երծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պետք և Սուշիղ և Սահակ և Եպումկէմ և Եշոտ. և Գնունիք՝ Վահան և Շապուհ. և Եպուսէթ և Պատրիկ և Եպուսելմ և Վարդան. և Գաղրիկն Եպուսելմ և Վասակ և Վահան. և Եմատունիքն՝

<sup>1</sup> Այլ օր՝ զերասանակ

<sup>2</sup> Այլ օր՝ պիշտեռ:

<sup>3</sup> Այլ օր՝ նմա:

<sup>4</sup> Այլ օր՝ այնու:

**Մուշեղ և Սահթ և Սահակ.** և Վարաժնունիք՝ և Մըհահ  
և Ռատոսմ և Վարազշապուհ, և Ընտրունիքն<sup>1</sup> Գէորգ և  
Յիսէ և Սահկաւն<sup>2</sup>, և Սկիացիք և Վասակ, և Վահկու-  
նիք՝ Քարարակն<sup>3</sup> և Խրախատ, և Անձեացիքն<sup>4</sup> Պատրիին և  
Գէորգ, Դաւիթ և Հասան և Դաւիթ գունդսաղար, կար-  
գեցին յօրինեցին զռազմն: Խւ ինքն զօրագարն Գուրգէն եկաց  
ի ձախու կողման ծակատուն<sup>5</sup> ի թիկունս լինել գնդին հետե-  
ակազօր մարտակցացն, և զաջ թեւն տուեալ լինէր ի ձեռն  
Կաղմկրէմայ: Խւ այլքն մի ըստ միոջէ կացին ի կարգի ծա-  
կառուն, և աղօթականք արկանէին առաջի Տեառն զպազա-  
տանսն, և պաշտօնեայքն բարձրացուցանէին զօրհնութիւնսն<sup>6</sup>,  
և քահտնայլքն բարձեալ ի վեր զՆաւտարանն սուրբ և հշա-  
նակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին, և պաշտօնեայքն կա-  
տարէին զտէրունական կանոնն, և երաժշտականքն երգս ա-  
ռեալ զյաղթութեանն Փարաւոհի՝ գոչէին «Տէր խորտակէ  
զպատերազմունս, Տէր է անուն նորա»: Խւ այլք զցաւզածին  
օրհնութիւն Հնոցին երգէին, ի վերուստ կոչել<sup>7</sup> զօրագիգն  
գլուեշտակ Աստուծոյ, և ռամիկքն ամբոխին ոմննք ի կողմա-  
նէ միսեցին զձեռս<sup>8</sup> ի գործ պատերազմին քարամբք:

Խւ դիմեցին խուռան յանդուգն յարձակմամբ և բախեցին  
զգունդն և պատառեցին զռազմն և դարձուցին զայլազգիսն.  
և գոչէին վիշտապաճայն և բեկանէին առիւծաբար և հարկա-  
նէին վարազբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտու-  
թիւն, և իւրաքանչեւր այլ զախոյեան իւր յերկիր հարեալ՝ և  
ինքն զինի միւսոյն ձեպէր: Խւ ի սաստիկ բախմանէ<sup>9</sup> խուռան  
նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ<sup>10</sup> սուսերացն և սր-  
բրնձիլոյ աղեղանցն լարկոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելա-  
նէր իրեւ յամպոց ճայթմանէ, և լիառնն իրեւ ի հրոյ վա-  
ռեալ երեւր: Խւ յերկարեցան գործ պատերազմին մինչ ի  
տամներորդ ժամ<sup>11</sup> աւուրն, և հարին ի հարուածս մեծամեծս  
զայլազգիսն. և եղեւ թիւ սպանելոցն ուոյ, թող զըազում վի-

1 Այլ օր՝ Ընտրունիք:

2 Այլ օր՝ Սահկաւն:

3 Այլ օր՝ Քարարակաւն:

4 Այլ օր՝ զօրհնութիւնսն երից  
ժանկանց:

5 Այլ օր՝ կոչելով:

6 Այլ օր՝ զձեռս իւրեանց:

7 Հին օր՝ բժիմ:

8 Այլ օր՝ շողալոյ:

9 Այլ օր՝ և ի սաստերորդ ժամու:

րաւորսն զկողոպուան<sup>1</sup> և զձերբակալսն։ Զեռնամուխ եղնն ի գործ պատերազմին և քահանայքն, որ կային ի բազմութեան դաղթականին, զի հոգեւոր էր պատերազմն և ոչ մարմնաւոր, և ի վերայ սուրբ եկեղեցեաց և ժողովրդեան Աստուծոյ պատերազմին։ Հարին հալածեցին և ի փախուստ դարձուցին զզօրսն. և կէսքն զհետ մտեալ փախստէիցն, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կոզմն Եւրյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից։ Ի՞այց Սշիսէ ոմն, որ եկեսւ էր ընդ զօրսն արքունի ի Պարտայ Պարսիցն՝ ոչ եմուտ ընդ նոստ ձեռնամուխ լինել ընդ նոստ ի գործ պատերազմին, այլ կայր ի բացեայ իրբեւ հազարօք երկուք, և իրբեւ հարան զօրքն՝ մորակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ նախ նոքա փախեան։ Եւ դարձան առնել դիակապուտ։

Ի՞այց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղնն գնդին Հայոց. զի մինչ խոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն, արկեալ զիւրեւ պատմուճան լուսակիզն փայլեալ իրբեւ զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ճախոյն՝ բուրուտառ լի խնկով, և ինքն կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և ող քաղցր, որ արկանէր զծուխն զերնսոք նոցա. և ի սաստկանալ ծխոյն զօրանային զունդքն Հայոց, և ի նուազին փոքր մի ողի առնուխն ի թշնամեացն։

### ԳԼՈՒԽ Ե.

Խըստ նորին և երեան Գուրգէնի պնդուցն Իսոյայի և որ ինչ գործեցան, և նորուն ինչ է դիմաց արտայի ։<sup>2</sup>

Դմուտ այնուհետեւ տարակուսական խորհուրդ ի մէջ զօրագլխացն վասն հարուածոց զօրացն ի գնդէն Հայոց. զիւրեւ և ծանուցանել բուն զօրավարին ոչ իշխէին, ծածկել և թաքու-

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ զկողոպուտ։

<sup>2</sup> Յերկուս ևս օրինակսն այս բան ընդ նախորդին մահեալ էր. միք

ըստ ցուցանելոյ ոճյն առանձին Կիշոյ  
իսրագիր գնել պատշաճ գատեցաք։

ցանել, ոչ մարթէին, լոռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին, յայտնի և յանդիման կայուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ զ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ժեռացն, զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն, հարկ եղեւ<sup>1</sup> ակամայ կարգել դնել առաջի զդէմն անցիցն ըստ իւրաքանչիւր պատահմանց: Եւ առ վտանգի երկիւղի զօրավարին՝ ածին ի մէջ զերս տեսլեանն, որ երեւեցաւ յերկնից հրեշտակ Աստուծոյ: որով փոքր մի ցածուցին զիեռնացեալ ալիսն, և զկոհակսն մրգկալիցս դադարեցուցին և զգազանութիւն բռնաւորին յընտանութիւն ածին: Եւ հրաման տուեալ ընդ ամենայն երկիրն՝ զի այր իւրաքանչիւր դարձի յերկիր իւր և կալթի զիւր ժառանգութիւն, և բնակեսցէ խաղաղութեամբ և կացցէ ըստ կամաց իւրոց, և մի հայածեսցի ոք ի բնակութենէ, իւրմէ յօտար երկիր պանդխտութեամբ բնակել: Զայս հրաման պատուիրանի տային յօմնդակութիւնն պատիր խարէութեանն իւրեանց, որով որսացանն իսկ և վրիպեցուցին:

Նպա այնուհետև դարձեալ յղեաց զնամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զնէթմ ազգաւ թուլք, և ընդ նոսա հեծեալս ժառաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն, և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Խսմայէլի. և մուտ<sup>2</sup> եղեալ ի տեղին, ուր բանակն Նայոց նստէր՝ հտուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարձն լի նետիւք գեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն:

Խսկ իբրև ընթերցաւ զնամակն, զրեալ երդմունս ի ծանականս կանանցն իւրեանց և ի մոլար օրէնսդիրն, յանձն առեալ տալ նմա զիշխանութիւնն բնիկ տէրութեանն իւրեանց...<sup>3</sup> իւրեանց<sup>4</sup> Մահումաթ ել գնաց զինի փառաց իշխանասիրութեանն ցանկութեան յորմէ վրիպեացն:

Եւ եղեւ ի մերձննալն նորա ի բանակն՝ եշան ընդ առաջ

<sup>1</sup> Այլ օր՝ հարկել:

<sup>2</sup> Այլ օր՝ մօտ:

<sup>3</sup> Թուի պակասորդ բանի լինել ասու:

<sup>4</sup> Յայլ օր՝ չիք՝ իւրեանց:

նորա գունդք գունդք զօրաց. և ի մտանելն առաջի զօրավարին՝ ոչինչ փոյթ աբարեալ զվասուցն և զհարուածոց զօրացն, իբրև զապստամբէ ինչ ամբաստանել բայց և նշանակու և դրօշ փողփողել առաջի, և զնել թագ իշխանական ի գըլուին և զգեստս ալբունականս զանձամբ. և սուսեր ընդ մեց ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ<sup>1</sup>, և նժոյզս առաջի և զինի ի զարդ և ի զէն սպառազինեալ, և ձայնք փողոց և գոփիւնք թմբկաց և այլ երաժշտական զործոց հնեցուցանէին շուրջանակի. և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք<sup>2</sup> այսր անդր քշել զամբոյն գործեալ. և քարոզն ազաղակէր, թէ «առաւ<sup>3</sup> իշխանութիւնն Ա ասպուրականի աշխարհին ի ձեռս Գուրգէնի, փսխանակ եղքօր իւրց Եշոտց տիրել ընդ նոսա».

Եւ եզկ զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, զրեալ Ի սւխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ ալքայի, իբրև այն թէ ի զիմաց ալքային և, յալքունուստ եկեալ. և էր պատճէն թղթոյն զոր կեղծաւորեալ ետուն ցնա՝ այս ինչ.

«Ի ուխայ զլուին զօրավարաց ընդհանուր թագաւորութեան Տաճկաց, Զ ափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնապրին մերոյ Մահումաթի, և հաւասարիմ միջնորդ Եստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր աղգաց հարաւային<sup>4</sup> աթոռակալութեան, յարոց ձեռս հաստատեալ կայ մահ և կեանք: Յզեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ ձայոց ամենայն կենդանիաց, և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուածեալ են թագաւորազունք՝ զի գլոշոտ և զեղբարսն իւր փութով առ մեզ հասուսցես: Գու աւագիկ ելեր մտար յերկիր ձայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեր, զի յապաղեցեր հըրամանաց իմոց: Երդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմդ իւր հանդերձ ազատորդ Ա ասպուրակա-

1 Այլ օր՝ հեծեալ ի մեծազարդ Հորոց:

2 Այլ օր՝ սկսրաւորք:

3 Թերեւ՝ ոռւաւ:

4 Այլ օր՝ հարաւայնոց:

Նի կապեալս առ մեզ հասուսցիս Ապա թէ ոչ տեսից վասն  
քո՞ւ

Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց  
արքայի՝ քննթերցիր զայդ, ասէ, մի ինչ ընդ մեղադրութեամբ  
արկանիր զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրո-  
ժել ինչ քեզ և ստել երգմանց մերոց. տես քեզէն և ծանի՛ր,  
զի ոչ դոյ մնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն ար-  
ձակիել զքեզա

Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ  
նմա զտէր Գրիգոր Արծրունի, որ և վկայեաց առաջի թա-  
գաւորին զբարիոք դաւանութիւն ի Քրիստոս. և եզեալ ի  
վերայ ուղղուց խազացուցին ի Սամառայ, տարան ետուն ի  
բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք. ի  
տանէն Արծրունեաց:

Նոյնժամայն իբրև ետես աիկինն, եթէ վարեցան որդիք  
նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհիտ նոցա, զհերս խզեալ  
և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով, որպէս ասաց  
Ամովս մարգարէ, գերծիր և կորեա ի վերայ փափուկ որդւոց  
քոց, լայնեա զիսզումն քո իբրև զարծուց, զի գերեցան ի քէն:

Յայնժամ սկսան ամենայն նախարարքն այոց ցրուել  
մեկնել ի միմեանց. և գնացին կալան զամբական տեղիս ով  
ոք և փութացաւ մտանել յամուրս ի բերդն որ ի Աս-  
պուրականի. և զօրքն ցրուեցան քայլայեցան ընդ ամենայն  
երեսս երկրին: Եւ այս եզե, զի լցոցի որ ասէ, «զարթիր սուր  
ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. Հարից զհո-  
վիւն<sup>2</sup> և ցրուեսցին ոչխարքո. և դարձեալ վերագոյնն ասէ,  
զոր ասաց Տէր ի բերանոյ մարգարէին:

Յայնժամ իբրև զիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա  
ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ  
թագաւորին, ի գլուխ ելն խորհուրդ չարութեան նոցա, զոր  
ինչ խորհեցան ի վերայ աշխարհիս Ասսպուրական իշխանու-  
թեանս, և երարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ էր  
այնուհետեւ որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա.  
սկսան այնուհետեւ աներկիւղ համարձակութեամբ սփոել

1 Ա. Յ. ՕՐ.՝ յիս Շառ իմ:

2 Յայլ օրինակ չէք՝ հարեց ոչովիւն:

տարածանել ի վերայ երևաց երկրիս ամենայն ազգքն Տաճ-  
կաց, որ երեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռ-  
նամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վի-  
ճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս  
աշխարհիս աներկիւղ. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝  
անտի ևս աներկիւղ հաստատեցան: Եւ էր նեղութիւն մեծ  
ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ աշխարհի<sup>1</sup>,  
և մի այլ լիցի. և յաւեր գարձան գիօղք և ագարակք և ա-  
ւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձեռութիւն, և ընդ  
ազգականութեամբ փակեալ զանազան բոյպ և տունք, որ ի  
վերայ երևաց երկրի. որպէս մարգարէն Յովէլ ողբայ ի վերայ  
եկեալ հասեալ թշուառութեանն, ասէ, փրբե զդրախտ փափ-  
կութեան երկիրն առաջի, և զինի նորա դաշտ ապականու-  
թեան, և իբրեւ հուր ընդ եղէդն ընթացեալ՝ այնպէս հասեալ  
ի վերայ մեր իբրեւ զմարտխ, իբրեւ զջորեակ և իբրեւ զթրթուր  
խառնիճաւն հանդերձ, հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց,  
կամ զիւրածախելի բոյսա խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին  
զզօրութիւն մարգկային ազգի ստացուածովք իւրեանց. որ-  
պէս կայ և այս ի գիրս տեսութեանն Յովելեայ մարգարէի:

Եւ հրաման ետ այնուհետեւ, զի զբազմութիւն գերելոցն  
վաճառակուր արասցին յազգս ազգս ում և հաճոյ թուիցի.  
և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուիին, ձմերոց  
ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունե-  
լով ընդ իւր կապեալս բազումն. և աւերեալ էր զերկիրս մեր  
ի մոտանել և յելանելն իւրումն:

### ԳԼՈՒԽ Օ.

Վասան ըստ յանշնաւուն-նեան նախարարացն Արծրունէաց, և խոսք-  
իւն-նիւն ի մշշնարս առեւուն Պէտրէ Արծրունոյ և պէտուն  
Յովելանիւնի եղբակողուոի Արծրունէաց և Պէտրէ ուսկանայի, և  
պատրունիւն նոցա:

Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ ին որ ինչ  
ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ

<sup>1</sup> Այլ օր. յաւելու միջն օպագութեան

Նախարարացն և իշխանացն մերոց. լի արտասուօք է բանս և ոչ եմ՝ բաւական պատմել զանցս անցիցն կորտականութեանն նոցա մոլորութեանն, վրիպել յուղիդ և յամբիծ առաքելաքարող գաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի այր և յՈրդի և ի առօդին սուրբ. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ՝ գրով փակել գկործանումն՝ տերանց իշխանաց մերոց, և որ ինչ կրնցին թշուառութիւն զոգւոց առաւել քան եթէ մարմնոց. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքիայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ, զի ոչ իսկ է կարողութիւն լրութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ։ Խւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկրայութեան հաւատացիս, իրբե ճշմարիտ և անսոււտ պատմողի։

Իրբե օր մի լինէր պարապոյ, մինչ կային ի բանտի իշխանն և ողք ընդ նմա ազգատոհմիւք և այլովք օտարազգօք՝ և ահա հնչեցին փողք ուժգին գոշմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի և պատուիրակքն<sup>1</sup> զքարոզն բարձրացուցանէին, զի ամենայն մեծամեծք քաղաքին և զիսաւորք և իշխանք յարքունի նախարարութեանէն անդր գումարեացին<sup>2</sup>, զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան։ Խւ ամենայն մեծամեծքն հանդմար խառնաղանձ<sup>3</sup> ամբոխիւն գութ տուհալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և ալքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ով ոք և որպիսիք են սոքա, որոց անուանք քաջութեան իւրեանց հոչակ հարկանէր ընդ ծագս տիեզերաց, մինչև հարկեցաւ թագաւորն յամենայն ուժոյ կարողութեան իւրոյ զօրս գումարել յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ իւրոյ տէրութեանն էին հնազանդեալ թագաւորք և թագաւորազունք, և մեծաւ

1 Հին օր.՝ իցեմ։

2 Յօրինակմն՝ պատուիրանքն։

3 Հին օր.՝ գումարեցան։

4 Այլ օր.՝ խառնինաղանձ ամբոխիւն գուոչ տուեալ։ Հին օր.՝ խառնաղանձ։

աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայդ և զցերեկ<sup>1</sup> ի մեծ տարակուսանս ըմբռունեալ կայր վարանեալ, և ոչ քաղցր թուէր նմա քուն գիշերոյն, և փափկութիւն տօւնջեան յոշինչ համարեալ յինէր, մինչ հազիւ թէ ուրիկ կարաց նշկահել զսոսա ի պատրանս խարէութեան և ի նենգութիւն կեղծաւոր խարգախութեան զօրականաց իւրոյ տէրութեանն: Եւ ընթանային ամենիքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիարդ ի զլուխ ելանիցէ ատեանն:

Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի մոջ, ի մէջ աշխարհակցյու ամբոխի անհուն բազմութեանն, և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: Եւ կայր զյօնսն պողտեալ<sup>2</sup>, կոկողաբանէր լի յոխորտանօք<sup>3</sup>, խրսխտայր և փոնքտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդանութիւն ժահահոտ<sup>4</sup> մազդոյն շարտթոյն վատախառնութեանն, սրտմատեալ անժութէկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իրբու զթոյնս իմի, առանց վեր ի վերայ գնելոյ սփոնել<sup>5</sup> տարածանել ի կորուստ և յապականութիւն բազմաց:

Եւ իրբե կացին նոքա առաջի թագաւորին՝ եհալց հեղնական բանիւք եպելով լի ամբարհաւաճութեամբ, և խորամանկ խարդախութեամբ քողարկեալ զբանսն՝ և ասէ, անզ ոք էք դուք և յորմէ աշխարհէ, և զինչ անուն է ձեր. թերեւս արդիօք դուք էք ապստամբեալքն յինէն:

Պատախանի ետուն և ասեն, զնդէ՞ր, ով տստուածասէր թագաւոր, իրբե ընդ համհարզս և ընդ ստամբակս, իրբե ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ, և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանին զմեզ՝ բանիւք քո իրբե քարամքը հարեալ զմեզ՝ շտապ տազնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: Այլ զմեզ զիտես ով ոք եմք և ուստի և յումմէ, և թէ զինչ անուն է

1 Այլ օր՝ դոյդ և զցերեկ անգուլ:

2 Այլ օր՝ պարզտեալ:

3 Այլ օր՝ իրոխտանօք:

4 Հին օր՝ ժահու:

5 Այլ օր՝ սփռեալ:

մեր՝ կարի քաջայայտ է քեզ, և մեք ոչ եմք ապստամբք ի քումմէ ինքնակալ թագաւորութենէդ. այլ բազմացան շարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Նստուծյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա, և մատնեաց զմեզ Նստուած ի ձեռս քո. արդ ահաւասիկ հասեալ կամք առաջի քո, ինքնակալ թագաւոր իշխեցող կինաց և մահու. որպէս Տէր հրամայեացէ՝ եղիցի:

Խօսել սկսաւ թագաւորն և ասէ, ի բազում ժամանակաց լեալ թագաւոր նախնեաց մերոց և մինչ առ մեզ հասեալ և բազում ազգք և թագաւորք են զոր նուածնալ<sup>1</sup> ունիմք ընդ ձեռամբ մերոյ տէրութեանս. և ոչ առ մի որ այդշափ խնամ՝ և հոգաբարձութիւն առնէաք, որչափ ընդ ձեզ և ընդ աշխարհ ձեր. դուք աւագիկ զընդդէմն ինձ խոկայիք միշտ, և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հաղարաւ պետք և զիրակացուք աշխարհին մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. զօրս գումարէիք, այլումնի կազմէիք, մարտս և պատերազմունս գրգռէիք, ճակաա զնէիք և զգօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք և զարդառուհմ մեր ընդ մեծ նեղութեամք պաշարէիք և աշխարհի աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք։ Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամցն, զոր ասեմք ունել ընդ ձեզ<sup>2</sup>։ Ի՞այց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք<sup>3</sup> արգահատելոյ, և արք զօրութեան էք դուք, և ի դիմաց ձերոց երեկի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդշափ մնասս զործեալ է ձեր առ իս, և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտիբում և անտիբուր երեսօք, որպէս զանմեզս և զըարեգործակս<sup>4</sup>, և լի ամենայն կոմարալութեամբ մեր, անխիղծ համարձակութեամբ<sup>5</sup> և իմ խնայեալ ի ձեզ ոչ արարից զըաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և

1 Այլ օր՝ թագաւորք և ազգք նուածնեալ։

2 Այլ օր՝ մը խնամոցն... առ ձեզ։

3 Այլ օր. յաւելու՝ գուք։

4 Այլ օր՝ զբարեգործ։

5 Այլ օր՝ ամենայն համարձակութեամբ։

վնասուցն, զոր յանցեայքն առ իս դուք. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն<sup>1</sup> հարուածոց մտանելցյ հաւանիալ մեղ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ՝ ընկալծիք հաւատս և օրէնս աստուածատուրս հեռի ի ստութենէ և լի որ ինչ ընդդէմ ստութեան է, և ի բաց լիբուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութեանդ։ Խւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեղ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր, և մի ի ձեռն տանջանաւոր մահու հլանիցէք ի քնակութենէ ձերմէ և բնակիցէք ի դժոխտ։

Խա պատասխանի սուրբ հայրապետն Յօհաննէս հանդերձ մեծ նախարարօքն այոց և ասեն. ոփ իսկ<sup>2</sup> ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ, և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և է իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ, զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումն։ Խւ արդ ճծա են մարդարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբաննեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միոջէ բերանոյ, թող զլւետարանն և զառաքեալս նորա։ Խւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ անոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պածուծազարդ մոլոր ուսմանդ ձերոյ։ Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. պատրաստ ևմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց։ Պայս ևս առաւել քան զսյնս և բազմապատիկ կարգեցին եղին բանս գեղեցկայարմարս ի Քրիստոս հաւատոցն։ Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ նկրքադրեաց, որ-

1 Այլ օր՝ գառնութեամբ։

2 Յայլ օր. չէք՝ իսկ։

պէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան<sup>1</sup> վարկաբ:

Յայնժամ թագաւորն լի եղև սրտմտութեամբ, և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմրուեալ իրբե զգազան արիւնարբու՝ հրաման ետ հանել արտաքս յերեսաց ատենին, յղեաց պատգամն և ասէ, «ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արացուք. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերեւս յայդ գայթակղեալ խաբեցալք և պնդեալ կայք յամառեալ: Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լիրուք յերկրպագութենէն Վրիստոսի, և եղեցին անձինք ձեր ի զիւտս և կեցջիք. և իմ թողեալ ձեզ գչարիս ապստամբութեանն ձեր, վայելհսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր»:

Այլ նոքա թէպէտ առ փոքր մի ոչ կամեցան դառնալ յերկրպագութենէն Աստուածորդւոյն, զի անկիալ էր ի սիրտս<sup>2</sup> նոցա հաւատ սուրբ առաքելոցն, բայց վասն զի ոչ ունէր արմատն՝ վաղվաղակի, չորացաւ ի տապոյ բանսարկուին<sup>3</sup>, զի ի փոնգալց նորա կայծակունք հաւանին<sup>4</sup> և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս զրեալ է ի Յովք: Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անշաստատ և յոզդոզդ մտաց սիրեցին զիառս մարդկան առաւել քան զիառս Աստուծոյ. զի «ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն». և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն՝ անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել ի մնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. ցանձն առնումք զհրամանս արկունականս», ի մտի եղեալ զի այն ինչ իրբեթէ ի վերին երեսս<sup>5</sup> հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցին զխոստովանութիւնն որ ի Վրիստ-

1 Այլ օր՝ արժան:

2 Այլ օր՝ անկեալ ի սիրտ:

3 Այլ օր՝ ունէն արմատս յինքեանս վաղվաղակի ժագել տապոյ բանսարկուին:

Հորացան:

4 Այլ օր՝ հաստանէին:

5 Այլ օր՝ թէ այն ինչ է վերին երես:

առու. որում անհնար է երկոցունց ի միասին բնակել, և ոչ ոք կարէ երկուց<sup>1</sup> տերանց ծառայել որպէս ասաց Փլկիչն, զոր ի կարգի իւրում հարկեցաց ցուցանել

Յայնժամ իսկ և իսկ արագապէս թլփատեալք եղեն մայի-  
մանակ, հետեւեալք զինի Ռազմատատայ Ռազմատունեաց<sup>2</sup>, որ  
ըմբռնեցաւ ի յայլ զօրավարէ ի Խաթք քաղաք, և էր նա  
իշխան Տարտար, բարձեալ եղեւ ի Խամառայ և եղեւ աստուա-  
ծուրաց, և երաց գպողոտայն լայն և ընդարձակ, զշաւիզն  
կորստեան, որ տանի յանդիւտ կորստեան. որպէս Ռոբովամ որ-  
դին Խարատայ, որ մեղաւ և յանցցցն զԻսրայէլ<sup>3</sup>, որպէս  
գրեալ է ի գիրս թազաւորացն Խորայէլի, և յիշատակարան  
նօրա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց  
զազգս բազումն՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան:

Իայց Վասակս այս զոր յիշեցաք վերագոյնն ընդ մեծ  
նախարարսն՝ վասն ազգակից գոլ<sup>4</sup> նոցա ընդ տոհմին<sup>5</sup> Կործ-  
րունեաց. սա յառաջ քան զըմբռնելն նոցա ել գնաց իւլովք  
կամք ի Սամառայ և եղեւ աստուածուրաց, և բունեալ ուր-  
ջացեալ<sup>6</sup> էր ի նմա սատանայ զօրաք իւրովք, ամենայն հնա-  
րիւք խորամանկութեամբ կապեալ անլիյծ գոտեամբ ընդ ոգւյ  
երիցս թշուառականին, զոր կազմեաց իւր սատանայ զործի  
աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարգախութեան,  
իրեւ զպատշաճ դարան՝ դեղեալ նետիւք ընդ խաւար թռու-  
ցելոյ յոդիս խաւարամածու Որպէս և այրս այս արար, անքակ  
և անմենինի զգեցաւ պատեամս յինքեան զզօրութիւն բան-  
սարկուին: Խւ զի մի երկայնեալ որ ինչ վասն սորա ապի-  
րատ և ինքնակամ և անզիղծ և անխիղծ առանց պատկառա-  
նաց մոլորութիւն սորա լի անսամօթութեամբ՝ ի բաց դիցուք  
զսա ի միջոյ յիշատակի նախարարացն, զի ոչ եթէ ատեաց  
զանօրէնն իրեւ զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար,  
այն է չունել զնքն ընդ յանցաւորամն, զի ողջախոհայն քան  
զամենայն չար տանջանս ամօթն է. և մի եղիցի յիշատակ առ-  
լա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սա-

1 Ա.ՅԼ օր.՝ կարէք երկոցունց:

2 Ա.ՅԼ օր.՝ բարբատունուոյ:

3 Ա.ՅԼ օր.՝ զամենայն խորայէլ

4 Ա.ՅԼ օր.՝ գոլոյ:

5 Յօրինական՝ ըստ տոհմին:

6 Ա.ՅԼ օր.՝ սորդացեալ:

7 Խմա՝ պատկանդարան:

կայն և ապաշտեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջյ ժանեաց բռնաւորին. բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մոզք և նովին մոլորութեամբ<sup>1</sup> վարեցաւ, լրեալ լի թշուառութեամբ. և որպէս պատմեն զնանէ՝ զի դարձաւ յետս յՆստուծոյ և դարձոյց զերեսս իւր. ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպարութենէ Եստուածորդուցն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ գերեսս իւրեանց. աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զիստորմանն ժառանգեցաց: Եռանց ախոյեանի պարտեցաւ և առանց զինու խոցուեցաւ և առանց հրզմայ նաւարեկեցաւ, ի կամ անձնիշխան կամաց մոլորեցաւ, և ել զնաց զինի իշխանութեանն ցանկութեան ինքնամոլորութեանն անդիւտ կորըստեանն. եղեւ ոմա կեալ անհաւատութեամբ և մեռանել անյօյս:

Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Եղծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Պրիգոր և տէր Պրիգոր Եղծրունի<sup>2</sup> խրախուսեալք յՆստուած, կացիալ յատենի ի մեծ ասպարիսի հոգեռորական պատերազմին՝ աներկիւղ համարձակութեամբ, բանիրուն համառօտութեամբ կարգեցին եղին առաջի բռնաւորին բանս զեղեցիայարմարս յՆստուածաշունչ գրոց վասն ի Պրիստոս հաւատոցն և պախարակելով զմոլար օրէնսդիրն նոցա, առ ոտն հարկանելով զիստացեայ նոցա պարզեսն՝ ասեն. վաւ է մեռանել վասն Պրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս:

Յայնժամ հրամայիաց բռնաւորն կապել զնոսա երկաթի կապանօք և զնել ի բանտի: Այսկէր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւլոյ զՅոհաննու Մըկրտչի, որ կապեալն էր ի Ներովդիայ և տուեալ<sup>3</sup> ի բանտ: Պեղեցիկ էր և տեսոն Պրիգորի Եղծրունոյ՝ ոչ անփոյթ առնել և զերոյ համանուանն զսրբոյն Պրիգորի առնուլ յանձն գիտաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրաւան:

1 Այլ օր՝ լրբութեամբ և մոլորութեամբ:

2 Այլ օր՝ Եղծրունեաց:

3 Այլ օր՝ համամանել և առնուլ զլուծ հոմանուան իւրոյ զսրբոյն Յոհաննու... և տուեալ լիներ:

կապանքը. հանդերձ. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Պղիգորի՝ միաբանել ընդ նոսա և նուլ զերրեակ թիւն, զի անմեկնելի եղիցի Վրիստոս ի նոցանէ, որպէս ասաց Վրիստոս, եթէ ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ անդ եմ և ես ի մէջ նոցառ եւ ուղմոսէին միաբան՝ «վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոշխուր ի սպանումն»:

Իրեւ գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Պղիգորէ, զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբա պատրանաց զկնի դարձելոցն ի ծրշմարտութենէն. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իրեւ զմեքննայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր, որոյ գլուխ անկեան Վրիստոս<sup>1</sup>, ատա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւր և արկանել ի ներքին բանտ:

Իրեւ գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չըրին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակոխւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս<sup>2</sup> առաքելով, և հայցէին յամենայազմն Վրիստոսէ յաղթել մեծի պատերազմին և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմեջս ծշմարտութեամբ և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Նւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Վրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի, և վահան ի թիկունս եղեալ ի բռլոր սրտէ գհաւատս անրիծս, և համբարձեալք զձեռս իւրեանց յերկինս իրեւ զաղեզն հաստ, և զզորութիւն աղօթիցն իբրև զնեալ ձգեալ ի լայնալի՛ աղեղանէ ի նպատակն, հարեալ զիառափն սատանայի դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէրէ եւ վասն յաղթութեանն գոհութիւն մատուցեալ Վրիստոսի՝ ասէին. «օրհնեալ է տէր Նստուած մեր, որ ուսոյց զձեռս մեր ի պատերազմ, և զմատունս մեր ի ճակատամարտ», և որ ի կարգին է: Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկո-

1 Այլ օր՝ վէճ Քրիստոս:

2 Այլ օր՝ զաղօթս իւրեանց ի բար-

աղոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին աեառն Գրիգորի, այլ և զօլք հրեղինաց, քանզի քանակք հրեշտակաց Տեառն շուրջ են դերիւղածովք իւրովք և պահեն զնոսառա:

Եւ կացեալ սուրբքն ի կապանս զերիս ամս ի ներքին բանաբին: Եւ խնդրեին ի բազումնդորմն<sup>1</sup> Աստուծոյ՝ հանել ի զյուխ զառօրինայ ժամանակս անապիթաք և հասառառան հաւատովք, լի արտասուզք և հեծեծանօք յիշեցեալք զվերին Ախոն մայրաքաղաքն սուրբք, որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետան նստէին և լային ի յիշեն իւրեանց զԱխոն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունան, կապեալք և արկհալք ի Հոոց նեղութեան՝ զնոյին օրհնութիւնս զամենայն գիշեր<sup>2</sup> օրհնէին և զնոյն ցօղ օրհնութեան յամենապարդեսզէն Վրիստոսէ խնդրեին: Եւ յօյժ զուարձացեալ քաղցր բարբառավն Վրիստոսի, որ է անեղծանելի վճիռ քրիտառսասիրաց անձանց, թէ «եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեռք, և թէ «որ ուրասցի զանձն իւր վասն իմ» գտցէ զնա». և զայն երիս ամս կերտակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զառառածազարդն Պօղոս, թէ պայտո իմ և որ ընդ իսն էին՝ պաշակեին ձեռքս այսա:

Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԱրիգոր ի քուրայս նեղութեան. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակազրի պատկեր աստուածորդւոյն: Վանզի սուրբ Վրիգոր չայոց լուսաւորիչն ասէր, թէ «ի մէջ օձիցն էր բընակութիւն իմ, և կոտույին զանդամօք իմովք»: Իսկ տէր Վրիգոր ի մէջ մարդակերպ զազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր զազանս են առ մեզ, և մսիթար բարի ունէր ի բարբառոյ մարդարէին որ ասէր, թէ «մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղեցն նմա»: Եւ խնդրէր ի Վրիստոսէ ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Ասատւած. զորոյ զպազառանս ոչ անտես արարեալ Վրիստոսի՝ ներէ նմա հանել ի զյուխ զուրբք քառասնորդսն, խաչակից լինելով Վրիստոսի, մինչեւ ի

<sup>1</sup> Հին օր՝ ողոթ:

<sup>2</sup> Այլ օր՝ գիշերի:

պարտ զատկին, և զուարձացեալ լինէին սօւբր ճգնաւորքն յաւուրս պենսոնկոստէից. բազմեալ էին ընդ Վրիստոսի իբրև զմանկունս տօագատոտի: Խոկ զինի վերանալոյն Վրիստոսի, յետ ծէ աւուր, ապա հասանէր Վրիգոր ի քրիստոսակոչ կատարութե. որպէս տասաց Վրիստոս, թէ մա յորժամ բարձրացացյց<sup>1</sup> տռ այս՝ զամենեսեան ձգեցից առ իտ: Ապա համբարձեալ զձեռս իւր յիրկինս՝ ասէ, «յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս՝ արքայութեամբ քո». և օրհնեաց զամենեսեան, զհեռաւրս և զմերձաւորս յանձն արար շնորհացն Աստուծոյ, և զինքն յանձն արար երանելի եղիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հռոի ամսեան, որ օր է էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Վրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յափտեանս. ամէն:

Խոկ հաւատացելոցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Վրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Վրիստոսի, որ զօրացոյց զսուրբ վկայն և արար յամօթ զսատանայ: Խու պատուական արանցն քրիստոսասիրայ մտեալ առաջի թագաւորին՝ խնդրեցին զմարմին սրբոյն, և առեալ պատեցին և եղին ի գերեզմանին. և զօր մահուան<sup>3</sup> սրբոյն ամենային Ասորիստան տօնախմբեալ մեծաւուրախութեամբ ի Վրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յափտեանս. ամէն:

## ԳԼՈՒԽ Է.

Վասան հերքուածոյն Բագրատոսայ Բագրատոսանոյ, որ է վերացութան նեան զՎրիստոս յաւել և զայս է խոշտանուն բաղնաց: Բնդուինադրունիւն սակառու:

Ասաց Բագրատ յուրացութեանն իւրում, առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վեասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զիսոստովանութիւնն հաւատոց: Խու զայս

1 Ա.Յ. օր.՝ բարձրացոյց:

2 Ա.Յ. օր.՝ յիշեա՛ զիսյորժամ գոյցես:

3 Ա.Յ. օր.՝ մահու:

Խղկղեսիանոսք. բայց<sup>1</sup> ինձ պատկէս թուէր, թէ ազանդն Խղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց սրբոց վարդապետացն, զոր եգն Խստուած յեկեղեցւոց. դա աւագիկ արմատ դառնութեան ի վեր երեեալ, և բազումք պղծին նովաւ։ Արդ եկալք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և գուղնաքեայ ի գրոց սրբոց, զի ի բաց խլեցի ամբարշտութիւն ազանդոյն այնորիկ յեկեղեցեաց ուղղափառ հաւատացելոց. անցցուք ի վեր Խղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց<sup>2</sup> որք անկան ի կուապաշտութեանն մոլորութիւն. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձի ոք առ ի պաշտօն կուոցն՝ ոչինչ է, եթէ սիրա իւր ողիղ պահեցէ զհաւատան Վրիստոսի։ Օշնդ նոյն ժամանակս և Նաւատիոս<sup>3</sup> երեց ի ռուվմ առաքէր ընդումակս Խղկղեսիանոսացն<sup>4</sup>, որք ի դադարել հալածանացն՝ զամնայն ի զոհելց կուոցն ոչ ընդունէր զապաշխարողնն Խւսա բազումն արգել ի կուապաշտութենէ, թէպէտ և մոլորեցցց անյոււտութեամբ դդարձեալսն յապաշխարութիւն, և նա զբոլոր իսկ զաշխարհն կործանեաց, պաշտօնարար լինել մատեացն, թէպէտ յետոյ ընդունէր զապաշխարողնն։ Ի՞այց երկրքեան կողմանք դնին ի ներքոյ պարսաւանաց, թէպէտ և ի բարեպաշտութեան յաղագս մոլորեցան։ Ի՞այց զի մի և մեք անկեալք լիցեւք ի նոյն՝ ուսցուք ի յԽստուածաշունչ զրոց և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեացուք մի յաջ և մի յահեակ. զշըթունս մեր մաքրեացուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս Ճշմարիտս. զի եթէ երկոքեան<sup>5</sup> միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միոջէն բերցի։ Օփ թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզեցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւարեկեսցի իսկ ի բռնութենէ միրկալից հողմոյն զալիսն կուտակելով։ Խթէ երկոքումք թեսովք<sup>6</sup> ոչ թռչեցի թռչուն՝ ոչ վերասցի ի բարձունս։ Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովա-

1 Ա.Յ. օր.՝ բայց քանդի։

2 Հին օր.՝ սիալանաց։

3 Ա.Յ. օր.՝ նաւատիկոս։

4 Հին օր.՝ առաջ նկղեսիացն։

5 Ա.Յ. օր.՝ երկոքին։

6 Ա.Յ. օր.՝ երկոքին թեզք։

թիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետեւ ճշմարիտ գոռանութեանն ի ձայր և յԱրդի և ի ողին առլրը, պի արտիւ հաւատամք յարդարութիւն, և բերանով խոստավանիմք ի փրկութիւնո, որպէս ասաց առաքեալն, որպէս որ շրթամբքն պատուեն և ի սիրտս իւրեանց անպատուեն. զի «ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն»: Օք չէ և չէ իսկ հընար, թէ որ հաւատայ բերանով թէ ուրասցի շրթամբք, զի «ոչ կարէ ծառ բարի պտուղ շար առնել, և ոչ ծառ շար՝ պրտուղ բարի առնել», որպէս ասաց Փրկիչն, և այլ թէ, միթէ քաղեցին ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուղու այլ թէ ար սւրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի ձար իմոյ որ յիրկինս է. և որ խոստովանեցայց<sup>1</sup> և ես զնա առաջի ձար իմոյ որ յիրկինսն էն: Այսու զպուղ շրթանց մերոց խոստովանելոց<sup>2</sup> յանուն նորա պահանձէ սպառնալիօքն և խոստմամբքն: «Տարձեալ նմին նման աաէ Պօղոս, զօրինացն ստորոգելով<sup>3</sup> զրաւորութիւն, այսպէս ասելով, «մերձ է բան ի բերան քո և ի պրտի քում, այսինքն է բան հաւատաց զոր քարոզեմք», և առ Տիմոթէս գրէ, հաւատարիմ գոլ<sup>4</sup> զզորութիւն հաւատոցն, ասէ, մթէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ ննայո: Տես և զերանելին ննայիտա զի՞նչ ասէ, ամարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ եսո: Օայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան<sup>5</sup> լինի զինքենէ<sup>6</sup>, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէն՝ քանի<sup>7</sup> ևս ողբոց և արտասուտց

1 Ի Հին օր. չիք խոստովանեցայց:

2 Եօրինակմն՝ խոստովանեցու

3 Այլ օր՝ զանօրինացն ստորագրելով:

4 Հին օր՝ գոլ գրէ:

5 Ելշատկարան ի լուսանցու Դրեցաւ ձեռամբ Մակուցի Սամուէլին. այս է թուին հայոց ողջին. Ե յոթլեռն ընդ հազարին. Դ ընդհատին ընդ համարին. Ե առաջարկեցին Անոն Մահմաւա. Հանգերձ եղբարբ ըմբռնեցին. Վանաց քաղաք բանդ գրեցին: Ամէն:

6 Անոց քաղաքն ամուսնութիւնն ամբաստան ինչ:

7 Հին օր՝ սակս ուրացութիւնն ամբաստան ինչ:

8 Այլ օր՝ յինքենէ:

արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամքը իւրեանց։ Որպէս և Պօղոս ողբալով և սպառնալեզ առէ, տրչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զոյն, որ չՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զառպին չնորհաց թշնամանեացո Տես, ով սիրելի, զի թշնամանելն լիզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծին լեզուին զուրացութիւնն բարբառել զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զարտն օն անդր ի բաց տար։

Տես և զմիւս ևս նման սմին ի զրոց Գործոց առաքելոց։ Եիմն Ասմարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևեաց<sup>1</sup> լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիանդ պատժապարտեցաւ. զի՞նչ Էնանիա և Ասփիրայ վասն ագարակին և նորին ստութեանն, իմա և ի միտ առ։ Օ-ի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ծշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչեցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ<sup>2</sup> առաքելական եկեղեցւոյ։ Վանզի ոչ յարմարական՝ բարուոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոցն պղծել շրթամքք։ Օ-ի գրեալ է՝ յաւելորդէ սրտի խօսի բերանն, զի խորհուրդ յղութիւն է մասց, և բան ծնունդ է իմացմանց. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակը Իաւականացի իմ դուզնաքեայ բանքս առ հերձուածող մոլորութեանց։

Խւ մեք Հետեեալ Աստուածաշունչ զրոց՝ պահեսցուք անբիծ զհաւասս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շըրթանց, ըստ պրոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն, թէ «մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է բան հաւատոյ զոր քարոզեմք», և Դաւիթ ասէ, «յոր հաւատացի զնոյն և խօսեցայ», և Պօղոս՝ «մեք հաւատամք զոր խօսիմքն». և դարձեալ Պօղոս՝ «եթէ խոստովանեսցիս բերանով քով

1 Հին օր.՝ պարգևն Այլ օր.՝ զիանդ։  
լեզուացն։

2 Այլ օր.՝ ի սուրբ։

զտէր՝ Յիսուս, և հաւատացես ի սրտի քում թէ Նոտուած յարոյց... զի սրտի հաւատամբ յարդարութիւն։ և բերանով խոստովանիմք ի փրկութիւն։

Նրդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ել յօւք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոփն գնալով ճառ նապարհ. այլ տանելով մեր առաջի թագաւորաց<sup>1</sup> և գատաւորաց վամն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիւոք դաւանութիւն։ և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պանտացւոյ Պիղատոսի. որպէս ասէ Պողոս առ Տիմոթէսոց, մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ, և Դաւիթ՝ միուէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչէիս, և Փրկիչն՝ «եթէ ոք ամօթ համարեսցի զբանա իմ»։ Աստանօր զկայ առեալ բանիս<sup>2</sup> և մեք ի Ճեպելն փութացուք, զի մի յերկարաձեալ<sup>3</sup> զդեր հատուցական բանիս՝ յետնեալ դացուք յառաջիկայ մեզ զրաւոլութենէն, որ սակա պատմութեանցն են Հանդէսք։

## ԳԼՈՒԽ Բ.

Ո՞ր ինչ զնէ այսորին Գործեաց Իռուհայ և Դռնին ժաղաժի, և յիշա պակաբան վեայեցն։

Օ՞որ օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք<sup>4</sup> զծովայրին վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա ազագաւ պատմութեանս խորհրդոյ<sup>5</sup>։

Յորժամ անդնդական խորքն ազդ առնիցին ներքին բնական կենդանեացն զհասանել ջերմութեանն, յորտւմ ջեռացեալ

1 Այլ օր՝ ոյլ տանելով մեր զվկայութիւն, յեղի 86), որպէս և ետք զինթերցուածն «ի Հեր և ի Զարքեանդ», յեղի 50 մատենիս ի Սահն՝ ըստ առաջարկութեան նորին, (անգ)։

2 Հին օր. և Ցղագիրն ունեին առան և թէ ոք ամօթ համարեցի զբանա իմ, առանոր զվկայեալ բանիս Եւ մեք...։ Մեք եգաք պապէս ըստ ուզգագրութեանն նորոցի Իրւկանդացւոյ, (Հայկական Բա-

առքենութիւն, յեղի 86), որպէս և ետք զինթերցուածն «ի Հեր և ի Զարքեանդ», յեղի 50 մատենիս ի Սահն՝ ըստ առաջարկութեան նորին, (անգ)։

3 Այլ օր՝ երկարաձեալ

4 Այլ օր՝ որեցաք և պատմցաք։

5 Այլ օր՝ ինդրոյ։

ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, ի խորսն զիսաղացամ արարեալ լինին, և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարծանան, հրձուին կայտաելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջըշիղջմն ծովափնեայս ջանան. հասանել և առ ծովեղերբն զամառնային ժամանակն պարենաւորեալ առկայանան. և յազագս անձոռնի և թանձր բլբաձե<sup>1</sup> ծանրակիր մարմնոյ՝ և դժուարաշապժ զ’ի վեր բերումն առնեն: Խւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի փ ձեռա որտորդաց. այլ ի շարժելն իւրաւմ՝ ահ առնուն ամենայն լողակք և գաղանք ծովայինք, որոյ և կերակուր նոյն լողակք և զեռունք այլովք կենդանեօք: Խւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն, և արեգակն ի վայր կոյս զընթացն առնիցէ, և ձմեռնային եղանակն առ դուրս հասեալ կայցէ, և հիւսիսային օդն շնչեալ սատոկացուցանէ զզորութիւն ցրացն, և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գաղաթունսն տերևաթափ առնիցէ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն՝ յայնժամ վիշապն նեզի, շատապի, տաղնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն, խաղայ իջանէ ի խորագոյն և ի ջերմային վայրս անդնդական խօրոցն, ձմեռնանայ անդ, և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հաստացանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: ‘Խոյնպէս բանայ, որպէս և այլ թուշունք և գաղանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին, զգարնանայինսն ի բարձրագոյն գաղաթունսն լերանց և ի փափարս վիմաց և ի վերայ բարձրաբերձ ծառոց կենցաղավարին, ուր յաճախ շնչէ<sup>2</sup> օդն հիւսիսային, և ձմեռնայինն խաղան գնան ի խորագոյն երկիր, ի ջերմագոյն<sup>3</sup> վայրս ամբանան<sup>4</sup> առանձնանան և միայն ընակեն ըստ ազգս իւրեանց:

Պատ նմին օբինակի և զօրավարն Առւխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն, իբրև ի խորոց անդնդոց ի վեր մը-

<sup>1</sup> Այլ օր՝ և բլբաձե:

<sup>2</sup> Այլ օր՝ հնչէ:

<sup>3</sup> Այլ օր՝ ի ջերմական:

<sup>4</sup> Հին օր՝ ամբական:

զեալ զինքն, եկեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու<sup>2</sup> եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս ։ այսասան աշխարհիս. և ի շարժելն նորա ահ կալաւ զըուր աշխարհս և աշխարհակալս. յորոց վերայ հասեալ եկուլ վիշտապարտ զօրա և կարաց ի դիմի հարկանելը Խւ զոր օրինակ վեա վիշտապ առակեցաք յազագս սաստիկ ուժոյ զօրութեան ձեռին նորա, ի ծովէ ելեալ այսինքն յերկրէ և յանդիպական խորոց, ի թագաւորաբնակ<sup>1</sup> բազաքէն՝ նոյնապէս և զայլս յիշխանական պետութենէ փոքրագոյն կէտու և լողակս մանունս իմանալի է. զի ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա: Խւ ոչ անվկոյ բանս, որպէս վերագոյնն դիմեալ է մեր զգերահատուցականս սորա, վկայութեամբ մարդարէական տառիցն, որպէս և ի պատահ-մանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայտափի մացհալ յայն ժամու. անդ հանդիպելոցն:

Իսկ անօրէն զօրավարն իրրե արար և կատարեաց զամե-նայն կամն չարութեանն ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ՝ և զնոց եմուտ ի ջերմադոյն աեզիս ի քաղաքն Դուին ձմերել անդ. և արձակեաց զգօրսն իւրաքանչիւր զօ-րավինք եկելոց առ նա յամենայն աղքաց յաշխարհէն ։ այ-ոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց, հը-րաման տուեալ ամենեցուն, զի իրրե մերձ լինիցի գարնա-նային ժամանակն՝ փեռթով առանց յապաղանաց առ նա հա-տանիցեն ամենայն պատրաստութեամբ: Խւ եղե ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումն և գե-րեալս, որոց ոչ գոյր թիւ. զորս վաճառակուր արարեալ յօ-տար աղքս, վարել ի ծառայութիւն, զնալ հեռանալ մերժել ի տանց հայրենի ժառանգութենէ իւրեանց: Նոյնժամայն իրրե կատարեաց զամենայն կամն չարութեանն իւրոյ ի վե-րայ սրբոյ եկեղեցւոյ և կործանեաց կորոյս զբազումն ի զնդէն քրիստոնէից և զորդիս լուսոյ արար որդիս խաւարդի և զժա-ռանզս Աստուծոյ արար բաժին սատանայի և զժառանզս-կիցսն Քրիստոսի արար ժառանգակից դիւտաց և զքնուկիցս արքայութեան արար բնակիչս յաւիտենական հրոյն՝ կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճա-

1 Ա.Յ. Օ.՝ և ի թագաւորական:

բել ի հաւատարիմ երկրպագութենէ ծշմարտին Աստուծոյ աեառն մերց Յիսուսի Քրիստոսի. և կոյր յօրացեալ բարձրամտեալ լցեալ խարդախութեամբ։ Եւ հրամայեաց ածել առաջի զոմանս յերանելի արանց յազատ տանէ, և զայլս որք ի բնիկ վթելազանց, ըստ աղքս և ըստ տոհմն աշխարհաց, որք ոչ առին յանձն միաբանել ընդ դրանց ուրացողացն. և կարծէր յօյնժամ ի ձեռն խոշտանգանց զիտքու արկանել զնուա ի հաղքս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի. Ոչ ամենելին գոնէ փոքր մի խոտոքեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչեց և ոչ անօացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց, զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհին. և երազ դիւրամուոց և ստուեր երազակոս, և յաւիտենական և անոպառ և անվախճան են կեանքն և պարզեցն, զոր պատրաստեաց Աստուած՝ սիրելեաց իւրոց և որք կան համբեկութեամբ ի հաւատս ծշմարտութեանն. Նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանապառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պրդոցն և ուրացողացն ի սուրբ և յանրիծ հաւատոց քրիստոնէութեանն. և դաստիարակ առընթեր ունելով զբանն աէրունական, թէ առ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացաց և ես զնա առաջի աօր իմցր<sup>1</sup>, և թէ առ կամբցի կեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս<sup>2</sup> զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնտո, և թէ զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, և թէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձնն իւրոյ. զի եին որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալնո, և որ այլ այսպիսիք զմնաւ ածեալ, որ զրիալ է ի սուրբ Աւետարանն, և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբոնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան, կամ զծեր զառանցեալ և խելազարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի։

Իսկ իբրև զիտաց բռնաւորն, եթէ չելին ի զլուխ կար-

1 Այլ օր՝ առաջի հօր իմց որ յեր-  
կինս է։

2 Այլ օր՝ և թէ որ կագ զանձ  
իւր կեցուցանելու որ կորուսցէ։

Ժիքն զոր ի վերայ սրբոցն խորհրդաւ, որպէս գրեալ է, կարծողն և արհամարհողն այլ ամբարտաւան է և ոչ ինչ վճարեացէ։ Նշյնժամայն առջոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բռժմելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանգգայ արբեցութեամբ։ և ոչ առ փաքր մի ինչ ներեաց կամ անսաց տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նոցա զվճիռ մահու, փութով զըաւ առնել նոցա ի սատակումն արսոյ։ “Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարձացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մատանել առ Աստուած, և ցնծային հրձուէին կայտոելով, բերկրեալ և ուրախացեալ սրտիւ, անտրտում խնդութեամբ գիմեցին ի տեղի սպանմանն, իբրև<sup>1</sup> ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. և մերկացեալք ի մէջ ամբոխին որ փութացան տեսանել զնահատակութիւն սրբոցն՝ ի բացընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն, և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և ողուովն սրբով զգեցեալ էին, և փոխանակ ծաղկեալ պատմուձանի գունագոյն երանդ երանդ անկուածոցն՝ զսուլր և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբը մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պատկացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. և զնշան փրկական<sup>2</sup> Խաչին ի վերայ զլատոցն զբօշմէին, և փոխանակ մանեկաց՝ զսուլին փայլեալ ի պարանոցան ընդունէին:

Խւ եղեւ իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունք եղեալ կային յաղօթս, զի անսայթաք և աներկրայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ. և դահճացն հանեալ զսուսերն՝<sup>3</sup> գիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հասանիցէ փայտ<sup>4</sup> ի մայրս անտառախիտս

1 ԱՅԼ օր.՝ որպէս:

2 ԱՅԼ օր.՝ փրկագործ:

3 ԱՅԼ օր.՝ զսուսերս իւրեանց:

4 ԱՅԼ օր.՝ զփայտ:

Հարեալ կացնաւ, և յանինայ անողոքմ յօշէին անդամ անդամ:

Իսկ երանելիքն գոհացեալ զանգատում պարզեաց Վրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորան միաբան զաղաղակ բարձիալ ասէին, «Աստուած, յօփնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութա», և որ ի կարգին, պէտք վասն քո մեռանիմք զօրհանապաղ, համարեցաք որպէս զուխար ի սպանումն»: Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Կատուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Վրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: Ոոցա անուանք ճանաչին՝ Կատոմ Ննձեացի և Մշեահ Վարաժնունի և Գհէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինտ Իպյոց երանելիս այս Գհէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ<sup>1</sup> կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն գիտումն սրոյն՝ դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէր ոչ հատանիցէ ստւսերն, և առեալ ի ձեռանէ նորա զսուսեմն՝ հայեցաւ յայտկոյս յայնիցս և ասէ, ոով անտրի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շում անպիտան տեառն իւլոյ, և հարեալ գպարանոց դահիճն՝ ի բաց առ զզուսի նորաւ: Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գհէորգ. և բազմութեան քրիստոնէիցն, որ էին ի տեղուոցն յայնմիկ՝ գոհացեալ միաբան ետուն փառս Կատուծոյ, որ զօրացոյց զսուրբն և արար յամօթ<sup>2</sup> զսատանայ հանդերձ գործակցավքն իւրեանց:

Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. և կացեալ զաւուրս բազումն անթաղ՝ և ոչ ինչ ամենեին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոր-

<sup>1</sup> ԱՅԼ ՕՐ՝ Փ ԲՆԸ ԳԻՒ:

<sup>2</sup> ԱՅԼ ՕՐ՝ ՅԱՖՈԹ ԱՐԱՐ:

Ճիբն զբար ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, պարծողն և արհամարհոցն այդ ամբարտաւան է և ոչ ինչ վճարեցէ՝ նցյուժամայն առ յշյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն. և անհուն սրտմութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իրեւ զարթեալ զանզբայ արբեցութեամբ՝ և ոչ առ փոքր մի ինչ ներեաց. կամ անաց տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դաշճացն տալ ի վերայ նոցա գվճիռ մահու, փութով զբաւ առնել նոցա ի սատակումն սրբյ: Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յշյժ զուարձացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մասնել առ Նստուած, և ցնծային հրանտէին կայտուելով բերկեալ և ուրախացեալ սրտիւ, անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իրեւ<sup>1</sup> ի հարսանիս երիտասարդական ամօնանութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. և մերկացեալք ի մէջ ամբոխին որ փութացան տեսանել զնահատակութիւն սրբոցն՝ ի բացընկեցին զհանդերձա ծածկոյթս ապականագրուծ հնութեան մեղացն, և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զօր ջրով և նոգուզն սրբով զգեցեալ էին, և փոխանակ ծազկեալ պատմուծանի գունագյն երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց. ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ սկիհուու թագակապ զարդու պատկացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. և զնշան փրկական<sup>2</sup> Խաչին ի վերայ գլխոցն զրոշմէին, և փոխանակ մանեկացն՝ զսուրբն փայլեալ ի պարանոցան ընդունէին:

Եւ եղեւ իրեւ հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունք եղեալ կային յաղօթս, զի անապյթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին դվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ. և դաշճացն հանեալ զսուսերն<sup>3</sup> պիմեցին ի վերայ նոցա իրեւ զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրութն, իրեւ ոք զի հատանիցէ փայտ<sup>4</sup> ի մայրս անտառախիտս

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ որպէս:

<sup>2</sup> ԱՅԼ օր՝ Քրիստոսի:

<sup>3</sup> ԱՅԼ օր՝ զսուսերս իւրեանց:

<sup>4</sup> ԱՅԼ օր՝ զփայտու:

Հարեալ կացնաւ, և յանիսնայ անողորմ յօշէին անդամ անդամ:

Իսկ երանելիքն գոհացեալ զննպատում պարզեաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորան միաբան զաղաղակ բարձեալ ասէին, Աստուած, յօզնել մեզ նայիաց, և Տէր, յընկերել մեզ փութամա, և որ ի կարգին, «զի վասն քո մեռանիմք զօրհանապաղ, համարեցաք որպէս զուխար ի սպանումն»: Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիբոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: Սոցա անուանք ճանաչին՝ Ետոմ Ենձեացի և Մշեահ Վարաժնունի և Գհէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերեինա: Իսյց երանելիս այս Գհէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դաշիճն ծհծէր իբրև զանզբայ ինչ, և ոչ փոքր մի գիծ<sup>1</sup> կարացեալ հարկանել ի մարմին սրբոցն զիսոցումն սրոյն՝ դարձաւ ի դաշիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէլ ոչ հատանիցէ սուսերն, և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն՝ հայեցաւ յայտկոյս յայնիոյս և ասէ, «ով անտրի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ», և հարեալ զպարանոց դաշիճն՝ ի բաց առ զզուի նորաւ: Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գհէորգ. և բազմութեան քրիստոնէիցն, որ էին ի տեղաթն յայնմիկ՝ գոհացեալ միաբան, ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբն և արար, յամօթ<sup>2</sup> զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց:

Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց կրկնից. և կացեալ զաւուրս բազումն անթաղ՝ և ոչ ինչ ամենելին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: Գհորս առեալ քրիստոնէից զպատուակսն մարմինս նո-

1 ԱՅԼ օր՝ գ ինչ գիծ:

2 ԱՅԼ օր՝ յամօթ արար:

յա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ առնիւք զոր կատարմանն յիշատակել որք են արք թուով է։ Եւ կատարեցան սուրբ Շինոյքն յէ թուականին։

## Դ.Ա.ՈՒԽ Թ.

Ոչ բնշ գործեցաւ յերկորդուամ ամն բալուրէանն Ի՞սիայի, որ էն աղմէիանիւ։ Հասան պատրիարքին ընդ Աստակոյ Խամունցոյ որ Իսայիւն որդին նաևակեր, և հասան պաշարման +աղմէին։

Եւ եղե իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձեւ միգախառն յստակեցաւ և հարաւային ջերմագյն օդն շնչեաց ի խորագյն դաշտն քաղաքին Դմինայ, և ընդարմատեսեալ արմատքն և բոյպն զգնուուլ սկսան զզօրութիւն, և թուզունք և դաղանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց, և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն, և որսորդքն զինքեանց դործիսն պատրաստէին, և վաճառականքն գհեռուաւոր ձանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգառոխնն քչէին ի դալարաբեր հովիսն, և ամենայն ոք ըստ ազգս աղգս փութայր ի հնարս բնքեանց վաստակոցն մի զմիով ելանել. իսկ զօրավարն զիւրն կերպամտեալ խորհուրդս ապականագործս աշխարհաւերս՝ խոկայր և մտախորհ լինէր և վասն այլոց աշխարհաց և աշխարհակալց չառնուլ դուլ և դադար, ծփայր ի խորհուրդս իւր իրու զծով, որ ոչ դադարէ զալիսն յուզելոյ. յիշեցուցանէր զորինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա, և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լիկել զնոսա, ոտնատորփ լինելով<sup>1</sup> փոնգայր իբրև զծի խստերախու Ծերթ տապալէր իբրև զօձ, մերթ գրչէր իբրև զառիւծ, և իբրև զխող վայրենի կնչէր կռնչէր, փրփուր ի վեր բերելով,

1 Հին որ՝ ոտնատորփ լինել

զատամունս կրծտելով<sup>1</sup>. առ մերձաւորսն կեղծաւորէր զբարեկամութիւն, և առ հեռաւորսն բարձրացուցանէր զշարօւթեան սպառնալիս: Արաման տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի դաշտն քաղաքին. ժողովէր և զորս յառաջադգյնն ունէին յինքեանս զագգս զօրպք իւրեանց, բայց պյլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս<sup>2</sup> և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զընակիս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: Իսկ Ամրատ և Արովլարաս<sup>3</sup> սպարապետն ապյոց, իրրե դիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել փութացաւ եկն առնա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարազգը առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: Եւ էր յղեալ յառաջագոյն գլշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի, և առաջնորդ էր նորա սպարապետն ի գործս պատերազմացն և յելս և ի մուտս աշխարհացն. ծանուցանէր զզօրութիւն իւրաքանչիւր աշխարհաց և զամուրտնոցա և զզօրութիւն պատերազմաց նոցա ըստ ազգս ազգու Եւ գումարեալ այնուհետեւ զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին, և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք<sup>4</sup> կոչեցեալ, որում յառաջագոյն Փայտակարանանուաննէին. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցաւ պարիսպք և պատուալք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակեաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա:

Եւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Առղովմայ և Երիքովի լցեալ չարագրծութեամբք: Բայց հասեալ Բուխաց

1 ԱՅԼ օր՝ Կրծտելով

2 ԱՅԼ օր՝ Ի յամուրոն է քերզոն:

3 Բերեա՝ օր և Ապլ-Աբատ:

4 ԱՅԼ օր՝ Տփղիք

անց ընդ գետն մեծ զօր՝ Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանոյին հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և ընակել շուրջ քաղաքաւն. և ոչ միոյ ումնիք կորնչել, բայց ի միոջէ ումնթէ, որում անուն Եշխէթ ծանաչէր, այր պերծ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ իրրե ծով առելոյ զօրավարաց. և ինքն Եշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպտղէն, զոր կարծեալ ոմանց երկաթեզէն պատկեր գողցիս զերիվարն և զհեծեալն, աշացն միայն ոչ գոլով ծածկոյթ. և իրրե մօտ եղել յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիձն, նատելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ<sup>1</sup> ձեռնն թուլացեալ<sup>2</sup>. կրկնեալ այլ ոմն ծօծ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զլշխէթն. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Իուխայ ծու արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա:

Խւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն Հմձութեամբ, և զիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և զիոց: Խսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշոտայ, սամոյր զինքեամբ արեկեալ և գաւաղան ի ձեռն առեալ յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի: յղեաց առ զօրավարն Միրաք, ասէ, պիութա՛ ի հանդիպումն իմ». և նորա ոչ հաւատայր երթելոց կոչնականացն, մինչև կրկնեաց և երկրկնեաց. և գնացեալ Միրաքն առնու զնա ածէ կացուցանէ առաջի Իուխայի: Խւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: Խւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ, և քանզի էր կին գեղեցիկ՝ փութացաւ գնաց եկաց առաջի Իուխայի, թերեւս կարասցէ ըստ պատշաճ գեղջին և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղել նմա: Խւ հրամայեաց Իուխայ դահճացն՝ բառնայ զզլուխ նորա. իսկ կինն ծիչ բարձեալ ասէ, «առ թագաւորն հասցէ գոյժ իմ», շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ունին օդնեաց. այլ հատեալ զզլուխն ետ տանել յալքունիս և զկինն առ իւր Իուխայ

1 Հին օր՝ երեսանակակալ:

2 Այլ օր՝ մեռն թուլացուցեալ:

**Քնութեան:** Այսն դարձեալ ճիշ բարձեալ ասէ, «վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին». իսկ զկինն կալաւ ընդ իւր Ռուխայ: Եղայդէ առ թագաւորն լինել նմա կին. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղեն, զբողոք բառնալն իւր և զկացուցանեն վկայս, թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղեն, որ եղեւ իսկ պատճառ կորստեան Ռուխայի, զոր ցուցանեմ յիւրում կարգի իրանս համառօտա:

### ԳԼՈՒԽ Ժ.

Վասն որ ինչ է ՞Շահարան գործեցաւ:

Վայց քանզի ամենայնիւ ամենայն ուրիք<sup>1</sup> ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուկս լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արեելեայս, և անհրկիւղ համարձակութեամբ լի ամբարտաւանութեամբ առներ ասպատակ ընդ ամենայն կողմանս տէրութեանն նոցա: Նւ ահա զիմեալ զնաց հասանել ի վերայ կողմանց հիւսիւսոյ, յերկիրն յորում ՞Շանակ կոչի: սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով, միայն զմի ոմն կացուցանեն տիրել ի վերայ իւրեանց ըստ կամ անձանց իւրեանց, և միաբան և միախորհ կան և կեան առ միմեանս, և բնակին ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց: Նւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակին ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս հէ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ:

Եռ սոսա գնացեալ Գրիգորէս երեց որդին Արթանայ՝ քարոզեաց նոցա զբանն կինաց. յորս բազումք անկեալ ի նա հաւատացին ի Վրիստոս, որպէս ՞Շանարքն և Աւրհազքն<sup>2</sup>.

1 Ա. Ա. ՕՐ.՝ ամենայնիւ ուրիք:

2 Թերեւ Եփչողքն:

և կիսոցն անունինդիր եղեալ՝ գնացին ի նոյն կործանման մինչև ցայսօր ժամանակի, զոր ոչ է ժամ մեղ պատմել յորս և դկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վատնիանեայն<sup>1</sup> դաշտին:

Իսկ իբրև եհաս Իուխայ զօրքը բազմօք մերձ ի առհմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խազաղութեան՝ գառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային և ընդունել պատիւս և ի ձեռն նորա ընդունել զանուն իշխանութեան ձոխութեան: Իայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ոչ առ. փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանոց. այլ դարձուցին անդրէն զպատգամաւորսն անարգանօք, արբուցեալ նոցա գան սաստիկ, և ինքեանք իջեալ ի լերանցն՝ կալան զստորոտ լերինն, պատրաստեալ ի պատերազմն Խւ արգելմն փակեցին զպահակս ամբականացն և զկիրճն ձորոց, որ հանէին յերկիր նոցա մտանել յամուրսն:

Յայնժամ հրաման ետ զօրավարն Իուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. ի մօտ առ. նոսա հասեալ՝ կարգեցին կազմեցին զմակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Յանարաց. և փակեցին ի ներքս զոտն լերինն իբրև զծով շուրջանակի, ի վեր ձգիլով զկուտակումն ալեացն ի բռնութենէ հողմոցն վարելոյ. և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն, իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. և հարան զօրքն արքունի և դարձան ի բանակն իւրեանց, և լեռնայինքն գային յիւրեանց բանակն: Խւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հարան զօրքն արքունի. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խոնեցաւ միւսանգամ պատերազմն, և ևս սաստիկ հարան զօրքն արքունի. և կային ի մեծ տարակուսի. դառնալ անդրէն ոչ կամքին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տեսել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կարէին, զի

<sup>1</sup> Այլ օր՝ է վառնեցին.

**բազում** անկան ի զօրաց իւրեանց: Ապա մտախորհ եղեն դարձեալ վառել ի պատերազմ, և կանգնեցին պատնեշս և շնեցին ապարանս և արարին տուն բնակութեան, և նստան անդէն զաւուրս ն և պատերազմեցան ընդ նոսա աւելի քան զժի անգամ. և Հարան սատակիցան պակասեցան զօրքն արքունի ի զօրացն Ծանարաց, և դարձան կորակնեալք ամօթալից խայտառակեալք, լի ծանականօք և մեծ բեկմամբ:

Խւ եղեւ մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի<sup>1</sup> գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Եղուանից. և տիրէր յայնժամ մեծի կողմանն<sup>2</sup> Եղուանից Եպումուսէ<sup>3</sup> ոմն, որում վերծանութեանն<sup>4</sup> յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: Խսկ իբրեւ լուաւ, թէ աշա առեալ. Իուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն, ուշ եգեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: «Ոչ ասէ, վատագոյն մեք քան զԾանարան եղեցուք, զի և ամուրս հզօրագոյնս և բարձրագոյնս քան զնոսա ունիմք և զիւրափակս՝ առ ի յունել զմուտս կրծիցն. միայն միաբանութեամբ սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Եստուծոյ. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալքի ի Քրիստոսէ. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուլր եկեղեցւոյ և ժողովրդեան Եստուծոյ»: Զայսոսիկ և առաւել քան զսցնս ասելով՝ զնէր առաջի զօրաց իւրոց աստուածասէր իշխանն Եղուանից:

Խսկ Իուխայի առեալ զբազմութիւն զօրացն իւրոց՝ իշխանէ ի դաշտն Գագարացւոց<sup>5</sup>, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: Խւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Եղուանից, և յղէր առ նա կոչելով՝ ի հնազանդութիւն: այլ նա ոչ տայլ տեղի բանից նո-

1 ԱՅԼ ՕՐ՝ ԵՐՐՈՐԴԻ:

2 ԱՅԼ ՕՐ՝ յայնժամ ի կողմանն:

3 ԱՅԼ ՕՐ՝ Ապամուսէ:

4 Հին օր՝ Ճանութեան: ԱՅԼ ՕՐ՝

Ճանութութեանն:

5 ԱՅԼ ՕՐ՝ Գարգարացւոց:

բա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խարերայս: Եւ ժողովեալ զբնակիչս աշխարհին համորէն զարս և զկանցս և զայլս ի յերկրէն Աղուանից բազմութիւն ռամիկ շինականաց, և լէգէնս զօրականաց զսակաւս ի լեառնն ամուր անուանեալն Կթիշ ըստ այնմ և համբարս ռոճկաց: Եւ Իուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս իւր. զի և զբազումն պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտընչելի ամրոցացն և քաջութեան արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն<sup>1:</sup>

Եւ նա դարձուցանէ այսպիսի իմն պատասխանի, եթէ «Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնայ ընդ աշխարհ իրրե առ հնազննդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իրրե զինամարկուս, և ոչ աւազակաբար աւերել և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել և գու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յալքունուստ՝ զշինութիւն պարգեաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխոռովութիւն: Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեսոն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. այլ տեսից զքեզ զնուռ և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս յրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թունոց երկնից՝ կամբք լիցին, և ես քաւեալ եմյարենէ քումմէ, մանաւանդ զի բարեպաշտութիւն<sup>2:</sup> մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Առովսէս զԱմաղէկ, և Յիսուս զՔանանացիսն, և Ամուսէլ զԱգագ, և Դաւիթ զԴողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Խրայէլացիքն<sup>3:</sup> զայլազգիսն, և հածեցաւ ընդ նոսա Աստուած. նոյնպէս արարից ընդ քեզ և ընդ զօրս քո: Երդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատխօսու-

<sup>1</sup> Այլ օր՝ և հաղանդութեան:

<sup>2</sup> Յօրինակն՝ բարեպաշտօն:

<sup>3</sup> Այլ օր՝ Խրայէլացիքն սատակե-

ցին:

թիւն ընդ քեզ՝ ի ձեռս քո է խաղաղութիւն և խռովութիւն Խթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ՝ և կոփւ և ճակատամարտ. և դու նրապատակ՝ և աղեղն իմ խոցոտիչ դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու սոսի՝ և զօլք իմ դատապարտիչք. քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. քո ստացուածք՝ և մեք ժառանգորդք, քո աւար՝ և մեք աւարառուք. դու աւազակ՝ և մեք կողոպտիչք, դու եղէզն՝ և մեք հուր դիւրածախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրսփուչ, դու ծաղեկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պաղալից՝ և մեք կարկուտ ապականաբարար, դու շինուած առանց հիման՝ և ես հեղեղ հիմն ի վեր տապալիչ, դու գէշ՝ զօլքն իմ պատառիչ գագան, որ պատռան զառագաստ սրտի քո. դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբալհաւաճութեան քո. դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թոշուն՝ և մեք ի բարձանց ի վայր ի ծուցանեմք և վարմ ձգեալ. դու վիշապ ծովական՝ և մեք կարթ, ի քիմն քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աշաց քոց, և գէշ զքեզ արկանել ձագաց<sup>1</sup> իմոց և աղուեսուց ի ծակս ընակեցելոց. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ<sup>2</sup> ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատրամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորաց:

Յայնժամ իբրև լրւաւ բանաւորն զայս դարձուած պատասխանաց լի հզօրութեամբ և աշազին մեծաւ անարդութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. և ամենայն խորհուրդք իւր ապականեալ ցրուեցան. եթէ զի՞նչ գործիցէ ոչ գիտէր. ապա մտախորհ եղեն բազում քննութեամբ, և յանբառ և յառաւել իմացմանց ընտրեցին՝ գրել և ծանուցանել թագաւորին վասն առնն այնորիկ. և առաքեցին դեսպանս առ ալքայ և ինքեանք

նստան շուջ զլերամբն, մինչեւ փութով եկեսցէ նոցա հրաման  
ինչ յաբըունուստ:

Եսկ Ապումուսէ<sup>1</sup> վառեալ և գննեալ զնքն ամենայն զօրու-  
թեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հա-  
րուածս մեծամեծս, և առ<sup>2</sup> աւար բազում և գարձաւ ի տե-  
ղի իւր ի բանակն իւրեանց: Ապա այնուհետեւ ոչ կարաց կաք  
համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ  
զկէս զօրուն յօմն զիխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսի-  
սի<sup>3</sup> կողմն. և ինքն բազմութեամբ զօրաց նստաւ յարեկլից  
կուսէ<sup>4</sup>, և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ<sup>5</sup>  
զգուշութեամբ. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս  
և կանգնեցին մեքինայս և կացին ի պատրաստութեան: Եւ  
յետ փաքր ինչ աւուրց հրաման ետ Իուխայ ելանել ի պա-  
տերազմ. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ<sup>6</sup>, և գունդս  
գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի  
ներքս փակեցին զիխառնն և զրօշս և նշանս բարձրագոյնս  
լայնատարածս կանգնեցին. կարգեցին ըստ գունդս գունդս  
առ շ այր նշանակ մի. և զի մի մի թուրիցէ յանուանէ զյա-  
ճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն  
և զհեծելոց նոցա. զիտակ են այդմ արք քաջք. և որ միշտ  
ի պատերազմունս զդեզերումն առնեն՝ գումար արարեալ են,  
ամենայն զինուար ի գանձարանս ի տունս գանձուց թագաւո-  
րին, զոր բարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: Ելին ի  
պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սասակացաւ պա-  
տերազմն: Եւ խուռն յարձակմամբ դիմեցին ի վերայ իւրեանց.  
և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դար-  
ձան փախստական ի բանակն իւրեանց և մոտին յապարանոն  
զոր շինեալ էին. և լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մը-  
տեալ փախստեիցն՝ իջուցին ի լիռնէ անտի և դարձան առնել  
դիակապուտ, և չոգան ի բանակիտղ իւրեանց մեծաւ յաղ-  
թութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ, և նստան

1 Հին օր՝ Մուսէ:

2 Այլ օր՝ Էառ:

3 Այլ օր՝ ի հիւսիսց:

4 Այլ օր՝ կողմանէ:

5 Այլ օր՝ մեծամեծ:

6 Այլ օր՝ զուազմ:

պահել զպահպանութիւն իւրեանց և աշխարհակայտ ամբոխին բնակաց իւրոյ տէլութեանն

Խւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ եղանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսաւ և ահա իրուե արք ու ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և խնքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վերաւրեցաւ. և հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ:

Իոկ զօրավարն Իուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձէր<sup>1</sup> ի միտս իւր, ցնորակոծ լինէր<sup>2</sup>, Հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: Խւ հատաւ քոն յաշաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. այլ և երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնան Խսկ զինի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ, ընդէր լքանս զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնս վատութիւն և առնիս զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց, և զանուն քաջութեան քո քեզէն կորուսանես, որով ամենայն աշխարհ զարհուրեալ դողաց և ոչ ոք եկաց ընդդէմ քո, և զբազուկս<sup>3</sup> և զձեռս քո հզօր տկարացուցանես. միթէ զու միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո միայն զօրքդ անկան, կամ քո և եթ աւար բաժանեցաւ: Ոչ ածէր զմտաւ, թէ յիսկը բանցն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրիք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին: ով ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և նն իշխանք աղքաց, է ուրիք որ զօրանան, և է ուրիք որ տկարանանու Խւ յերկարեալ սպարապետին խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մեր-

1 Հին օր.՝ իղձէր:

2 Այլ օր.՝ լինելով:

3 Այլ օր.՝ զբազուկս քո:

կեաց զպատրուակ սրտմութեան ի սրտէ նորա: Եւ ելեալ արտաքս ի սմնեկէն՝ և նստան ուրախ լինել:

Եւ նյժնժամայն եհաս հրաման յարքունուսա՝ մի տաղտկալ և վհատել<sup>1</sup> և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա, մինչեւ եկեսցէ ակամայ կամք ի հնազանդութիւն արքայի:

Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ և ահա ազաղակ և փողք և քնարք և ջնալք, և վառեալ զինու և օրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրէթէ ի հիմանց զլեառն տապաշել, և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն, և ընդ նոսա նշանս բաղումն, իբրև ու արանց ընտրելոց քաջ երիվարօք. և գրէթէ ոչ ամենեին ուրիք երեեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահազին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: Եւ ելանեին գտանդք գունդք շտապով և ձեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսաներ՝ ընդ մեծաւ երկխողեւ ներքաղրեալ լիներ: Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միոջ տէր Առւշեզ որդիք սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուսան Վրիստոսի, և որ յայնժամ լինին ահեղ որստմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկուէ, և թէ զիարդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելեելս առնեն, և զիարդ փայլեալ նշանն տէրումնական ահաւոր ճառագայթիւք, և որ ինչ այդմ հետեւին ի հանդերձեալ գալստեանն Վրիստոսի ի վերջնումն աւուրն, յայնժամ մերկացեալ և ի բաց եղեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան գերեւելիսս, և զի էր վարժեալ Շատուածաշունչ զրոց և ընդել և ծանօթ էր ճարտասանական հրահանդիցն՝ եղ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերզս՝ որոյ սկիզբն է՝ «Շնզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանզամ զալուստն», Ետուն ի յութերորդ վանգէ:

Եւ եղեւ իբրև գումարեցան ի մի վայր ամենայն բազմու-

1 Այլ օր՝ և գ' վհատել.

Թիւն զօրացն աւելի քան գմբաց, և կազմեցին ռազմ և կարգեցին ճակատ, և ետուն ձայն այր առն ախշեան ելանել. և ահա Նպումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել ի պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. և եղեւ իրեւ զըլուք մի մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. և խուռն բոլորեալ գունդն կային մածեալ իրեւ զմի այր: Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքո<sup>1</sup> զգունդն Նղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. և նոքա կային անշարժ, և ոչ ել այր քան զընկեր յառաջ. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յարօթս և զԸստուած կարդային օգնել նոցա. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զՃակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի միրկէ այնպէս կորիսան գնացին յերեսաց զօրացն Նղուանից: Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ գոյր թիւ: Ի՞այց զի՞ մի մի զիւրաքանչեւր հանդէս պատերազմաց նոցա զրեցից յականէ անուանէ. առացից կարձառօս և համառօտեցից զբանս. յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իրեւ մօտ ի լնուլ ամի միոյ. և ոչ ի միտմ ճակատու դարձոյց Նպումուսէ զերեսս իւր յերեսաց Ի՞ուխայի. և որպէս պատմի՝ եղեւ թիւ պատերազմաց նոցա իւ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կոիւ:

Յայնժամ իրեւ զիտացին երկոքին կողմանկն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա համեցան և հաւանեցան զրել առ թափաւորն. զի ասաց զօրավարն Նղուանից, եթէ մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թափաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդդ Նսորեստանի. այլ կուտեաց եղ ի վերայ Ի՞ուխայի զապստամբութեան մնան և զհարուածս զօրացն, զոր զրեաց իսկ և ծանոյց արքայի. փսկ եթէ եկեսցէ առ իս զիր յակբունուստ, ինքեալ մատանեաւ արքայի, և իցէ զրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ

<sup>1</sup> Այլ օր՝ ի ներքոյ:

Հրամանացն նորա: Ի՞սկ եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցիս քան զոր տեսեր, սուր և պատերազմ:

Նպա երկոքին նորա դեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց ըստ Խսայեայ զոր ասէ, «Հրեշտակս արձակիցին<sup>1</sup> որ լայցին դառնապէս», և գրեցին և ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին և որպէս հարան զօրքն արքունի: Խստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և սոսուն անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ՝ մինչև եկեսցին հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: Ի՞սկ տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Խպումուսէի, զի լցոցի զոր ասաց Տէր ի բերանոյ Խմովսայ մարդարէի՝ «փորտակեցից զնիզակս Դամասկոսի», որում այժմ՝ Դմիշին կոշին, ուր ելին զհետ Իուխայի:

Եւ մինչ նորա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Խպումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Իուխայ. և էր գրեալ ի նմա թողութիւն մնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարզես ի պատուական և մեծազնի՝ հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր, միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. և գրեալ էր առ Իուխայ, զի մի ինչ չարիս խորհուցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ:

Իսկ իրրեւ ընթերցաւ զօրավարն Խղուանից զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի և եկն եկաց առաջի՝ Իուխայի: և մինչև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս՝ վառեալ զինու և ընտրեալ երիվարօք, և ետ տպանել ընդ առաջ նորա նժյգան մեծազարդս և երեսեիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զինի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: Եւ ոչինչ ամենեին զչարացաւ ընդ նմա Իուխայ և ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, և ոչ տրտմեցոյց զերեսս իւր:

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ առաքեացին:

այլ բնկայաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատռով և պարզեաք ըստ հրամանի թագաւորին։ Խոկ յեա անցանելց աւուրց ինչ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինութրաց վառեց և ընտիր այրումիոց։ Եւ երթայր աներկիւդ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և ի խորհուրդն իւր<sup>1</sup> ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ։

## ԳԼՈՒԽ Ժ.Ը.

Ի՞նչ որո՞վ օքնական<sup>2</sup> վեստաց Անոհինել է Վանանդ գաւառուն։

Եւ եղե զի անցանէր ընդ այն Մուկաթլ ոմն ի Վանանդ կոչեցեալ ազատութենէ, ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատոցն գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղեց կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ։ Առվորութիւն է զրոց, որպէս զիրն նշնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուցի։ Օսա ըմբռնեալ դորաց Տաճկաց ածին առ զօրավարն, և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ Շշմարտութեամբ պարտաւորեցին զնա։ Եւ մինչ կարի և ահազին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն<sup>3</sup> միաբարբառ զաղաղակ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին։ «Ամահապարտ է, չէ պարտ զմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ», և յայնչափ պաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զըրութ բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Էնուխայ։ Եւ հրամայեաց ածիլ զնա յատեանն, ուր կային միաբան

1 Այլ օր. յաւելու ըստ քաջութեան։

2 Այլ օր.՝ եղանակաւ։

3 Այլ օր.՝ ապաստանքն։

Ժողով զօրագիլսացն Եշարց սաստիւ կամ թէ հրամանաւ ռեքութեան իւրոյ, մի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում մնասմն<sup>1</sup> զոր գործեցեր, և կեցցես և վայելեցես ի պատիւս և ի պարզես թագաւորին, և մի ի վերայ մեծ յանցանացն զօր յանցեար, որպէս ըսմադ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր, յամառնել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեսդ, և ի ձեռն չարաշար տանջանաց ելանել ի կենաց աստի, զի ոչ ևս ունիմ շատ խօսիլ ընդ քեզ:

Ետ պատասխանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ծշմարիտ խոստովանութեամբ ի Նայր և յՈրդի և ի Նոգին սուլբ, ասէ. մե Ռու տայր ինձ վկայել ի վերայ ծշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս Խսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հրասուցանել՝ խաղ մանկոյ կամ զառանցելոց թուի յաշս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ:

Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զպրոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել ապա հրամայեաց զերկոսին զձեռուն և զերկոսին զոտսն հատանել ապա անդամ անդամ յօնցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանդնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և զնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. և իջուցեալ ի փայտէն հատին սուսելաւ զգլուխ նորա. և դարձեալ եղին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռողու մերձ ի

<sup>1</sup> Այլ օր՝ Պատմ քու:

լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն։ Խւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Առկաթլ փառաւորապէս ի Նայր և յՈրդի և ի Նորին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն։

Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Առղովմնն, որ Աւորդին ճանաչի, և Կախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն<sup>1</sup>, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս հատանելոյ. որով զբազումն դրդուեցոյց ի յաստուածային օրինացն և յերկրագագութիւնն յաստուածորդուցն։ Այլ նահատակեցան արիարար և ետուն պատասխանի թագաւորին մեծաւ համարձակութեամբ, յուսացեալ ի մին միայն ի թագաւորին թագաւորաց և ի տէրն տերանց, ի Քրիստոս յորդին Կստուծոյց Խւ աօնն ցթագաւորն, զաւ է մեզ մեռանել վասն անուանն Քրիստոսի, քան վայելել ընդ քեզ. որով մահուամբ և կամիս պատրաստք եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. մեզ ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն։

Յայնժամ բարկացեալ բոնաւորն իբրև զգազան մի կատազեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել, և նոքա կային մեծաւ ուժով և գոհանացին զանքաւ և զառատաշնորհ<sup>2</sup> պարզեացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն։

Խւ մինչդեռ կային կենդանի և գոհանացին զՔրիստոսէ զանցաղթ զօրութենէն, որ զօրացոյց զսուրբան մեծ ասպարիսին ի հոգեւորական պատերազմին՝ ես առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զհնոց վառեալ բորբոքէր. ետ բերել փայտս,

<sup>1</sup> Այլ օր՝ ժահահու բանից նորա:

<sup>2</sup> Այլ օր՝ չնորհացն։ Պետք օր՝

և եղեալ ի վերայ փայտին զերանելին Առղոմն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մին ի միւսոյ տանջանացն երկուցեալ Հնազանդիցի Հրամանի թագաւորին։ Իսկ նոքա առաւել քան զառաջինն դիմեցին ընդդէմ չարչարանացն խաշակից լինել Քրիստոսի. ուրացան զանձինս և առին զխացն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն գկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն զըտցին զկեանս. մեռան ընդ Քրիստոսի, զի ընդ նմին թագաւորեցին։

“Նոյն ժամայն ել Հրաման յարքունուստ, զի զսուրբն Առղոմն ի նմին փայտի սպանցն, նետաձիգ լինել ի նա։ Խռ ըստ Հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Կատուծց երանելի նահատակին Քրիստոսի։ Իսկ զսուրբն Կահայ Հրամայիաց սրով սպանանել և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն աւանդեաց զոգին ի ձեռս։ Ըստուծցոյ Շյապէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Խրորդութեանն յաւիտեանս յաւիտենից։”

Եր ընդ զերեալին ի լեռնէն Խոռվան անուն. սա այն է, որ մինչ<sup>1</sup> յելանելին Իռուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի այս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն ալքունի. իսկ իբրեւ ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնացինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յոթվան տարան ետուն<sup>2</sup> կապանօք. ի բանդ ալքունի։”

Խռ յաւուր միոջ Հրաման ետ թագաւորն ածել զառաջեաւ. և հարցեալ<sup>3</sup> ցնա յաղագս մահուանն Յավսէփու ի վրէժինդիութեանն երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապատամբութենէ և ընդիւառնելոյ նորա ի վնասս ալքունի, միանզամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել<sup>4</sup> ի ծշմարիտ հաւատոցն որ ի այսը և յԱրգի և ի առողին սուրբ. և իբրեւ եդ

1 Յօրինակուն՝ սա պյն գնէ որ։

2 Հին օր՝ ի առն։

3 Այլ օր՝ ածել զառաջի և հարցանել։

4 Այլ օր՝ կարուցէ վրիպեցուցանել զնա։

առաջի զվասուցն որով կարծէր արկանել զնա ի հաղբս<sup>1</sup> կորստեան՝ ասէ ցերանելին, «եթէ կամիս կեալ ընդ իս և զայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լիր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտիս, և ծառայեա ծշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէն՝ Մահումաթայ. ապա թէ ոչ զնորին հակառակն ընկալցիսր տանջանս և մահ, և ելցիս ի կենաց ասաի չարաշար մահումբու:

Խսկ սուրբն գեղեցիկ խորհուրդ ի մեջ տռեալ՝ ասէ ցըըռնաւորն. «ընդէ՞ր որպէս մանուկ տղայ հայմարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնդտի, առասպելաբան, խարերայ<sup>2</sup> և պատիր յօյս խոստանալով ինձ՝ հանել զիօ ի ծշմարիտ յուսցն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ծշմարտութեաննու:

Խսէ թագաւորն. «մի արհամարհիր զթագաւորական բանքս իմ և կորուսաներ զկեանս քո, և լինիցիս իրբե զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հելքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քիզ պատրաստեալ է, եթէ կացցիս ի նմին յամառութեան ի հաւատսդ Յիսուսի որդւցն Մարիամայ կնոջ հրէիս:

Խսէ երանեին. «տեսանեմ զքեզ որպէս զմի ի զառանցելոց խելագարեալ որպէս խօսիսդ. ես վաղ անարգեցի<sup>3</sup> զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զիքամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, և յերկրորդումն ոչ փոքր նախձիրս<sup>4</sup> համարեցի զօրացն քոց. արդ ընդ արութիւնս իմ վատութիւնն խառնիցեմ<sup>5</sup>. և ընդ երկիւղիւ մահուանկիցիմ Ալան մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս զիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Կիրիստոսի և վասն յաւիտենական կենացն ոչ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէն երկնչեցիմ. քաւ լիցի. ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնելք.

Դրբե լուաւ զայսքան և առաւել քան զայնս յանդուգն.

1 Այլ օր՝ ի հաղբս բանսարկուին:

2 Այլ օր՝ խաբէութեան:

3 Յօրինակն՝ վաղ անարգեցից:

4 Այլ օր՝ նոճիբու:

5 Յօրինակն՝ խառնեցեր:

և առանց երկիւզի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ ապա հրաման եւ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ։ Եւ առեալ դահճացն զերանելին՝ ածին ի տեղի սպանմանն. և նորա համբարձեալ զմես իւր յերկինս յաղօթս կալ զի կարասցէ յաղթել նահատակութեամբ, և մատուցեալ զպարանոցն առ դահճն՝ եհատ զգլուխ նորա, և աւանդեաց զոգին երանելին Յովսան Ճշմարիտ խոստովանութեամբ ի Նայր և Արդի և սուրբ Նոգին, որում փառք յաւիտեանս։

Եւ եղեւ իրբեւ արար և կատարեաց Իուխայ զոր ինչ խորհեալն էր ի վերայ աշխարհիս Նայոց, բարձումն յաշխարհէս մեծամեծացն Նայոց՝ յաւել և զայս ես, զի մի ամենելին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տեսեաց ընդդիմանալ ձեռին նորա. զրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւզի առ նա հասանեցեն և կալցին գիւրաքանչիւր իշխանութիւն և վայելիսցեն ի պարգևս և ի պատիւս ալքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին։ Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Իուխայի, և ժողովեցան ի մի վայր և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց։ Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի զլուխ ելին որ ինչ յաղագս Կպումուսէին էին հանգէսք. իսկ իրբեւ նա ըմբռնեցաւ, և դիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետեւ յիշխանացն Նայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են. առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանեալ էր սատանայ ի սիրտ առնն<sup>1</sup>։ Եւ ըստ տոհմն ազգաց, ըստ թուոյ տերանցն Նայոց, կազմեաց զունդս վառեալս զօրականաց, զինեալ և պատրաստեալ. և ընդ այդն ընդ առաւօտն, մինչ նորա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օժոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանգօք և նիզակօք և վառեալ մոմեղինզօք, և մտեալ ի նիլքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց եղին զոտս նոցա ի կապանս երկաթիս և բարձին ուղտուց և խաղացուցին ի Ամառայ.

<sup>1</sup> Այլ օր՝ ի առն չարի:

որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Կոռպդիկայ որդի Ումիկոնեկից տէր, և Շալըռներսէհ Ըստանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր, և Մահլ Սմբատայ որդի<sup>1</sup> Ըաբեց տէր, որ զբարանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձարոյ տէն, և Փիլիպպէ իշխանն Արւնեաց, և Ներսէհ իշխան Գարիթայանից, և ապա Խսայի Ըստումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: Ո՞նաց միայն Ըշոտ որդի սպարապետին և Մուշեղ և Սմբատ եղբայր Ըշոտոյ, զորս եթող Իուփայ տիրել աշխարհին իւրեանց յաղած յառաջադոյն մտերմաւթեան հօրն նոցա առ թագաւորին և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենացն ուժոյ զօրութեան մոտաց իւրոց: Խսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ զօր արութեան<sup>2</sup> մնաց Վուրգէն, և այլ տոհմք Երծրունիք<sup>3</sup>: Խւ երարձ զամենայն արս զօրութեան յերկիս Հայոց, և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի զլուխ կլանիցէ<sup>4</sup>. և մեկնեաց յինքնէ զԵրուահիմ ոմն և յզեաց զնա հազարապետ Հայոց, և վիրակացու ի վերայ հարկաց ալքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա:

### ԳԼՈՒԽ Ժ.Բ.

Ո՞ ի՞նկ զի՞նի անէլիանունեան գործեցաւ և պատերազմաց:

Քետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Երծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Վուրգէն և Մուշեղ եղբայր իւր և Ըստուջափր և Ըստումրքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Ըշոտ և Սահակ, և այլք ի տանէն Երծրունեաց և ազատք նոցա: Խւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն

1 Ա.Յ. օր.՝ որդի Սմբատայ:

2 Տպ.՝ զօրութեան. Հին օր. պապէս.

Յերկո՞ զօրավարութեան:

3 Ա.Յ. օր.՝ տոհմք Երծրունեաց:

4 Ա.Յ. օր.՝ ելանէ:

այլ չարիս, գե ընդ միմեանա մարտ և կոփւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ձեղքեցան, ի միմեանց և զորս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի զերութենէն Ռուխոյի. կէսքն զԴուրգէն յառաջ ածեն ի պատիւ իշխանութեանն, և այլք զԱպուջափր, ոմանքը զՄ ասակ. ըստ այնմ զոր մարգարէն Խոսայի ասաց, «յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղօրէ կամ զազգակցէ իւրմ, և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցիր. և շփոթեալ լի ազաղակաւ երկիրս, և ուր հասանէին՝ աւերէին ասպատակաւ և աւարաւ և յափշտակութեամբ. և այր եղօր իւրում ոչ ողորմէք, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Խոսայի, անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին. քանդի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առներ՝ սցնալիսիք և այժմուս եհաս լինել. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս:

### ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագ Գուրգինոյ մայն հասց, և շար պատերազմաց յաշ խարհիս:

Յաւէտ իսրահանութեամբ բուռն հարկանել ախորժելի է. ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեցաղթ նահատակէն, զԴուրգինայ ասեմ, զյոյժ փառացի և ձոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ, յերկուց թագաւորազանց զածմանն սեռի բերելով զբողընչս զԱնեքերիմայն և զՄ ամդունեաց ձենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ, ի հօրէ զԱնեքերիմայն և ի

մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ, յաճախազոյնս վասն Պուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւն։ բայց քանզի պատմազրութեան է ժամն և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղեց յոլովից բանբասանաց. մանաւանդ զի ոչ բաւականամ իմով աղքատիմաստ բանդիտութիւմի<sup>1</sup> զսորայս բացայացտել զսփի ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի, և զերծի զիս ի պարսաւանաց բարձրագունից։ Ի՞այց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս, ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց<sup>2</sup> եկեղեցեաց Կրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի հայր և յՈրդի և ի հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անրիծ պահելոյ, իրեւ զքաջ հոգիւ եղեալ գանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակիրպեալ պատկերակից լինել<sup>3</sup> որդւցն Խատուծոյ, որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել թէ պորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոց։ Առ այս բաւականացի տրամամիտ մոտուացն, և մեք զպատմողականն համառօտարար յառաջ վարեսցուք հարկաւորութիւն։

Ի՞այց մի ինձ մեղագիր լինիր, ով ուսումնասէր դու, սակա ոչ զբավանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս Վասն զի։ այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. վասն այնր առ այժմ համառօտեալ ի նշանագիրս սուղոյրայից, որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Խբրայեցիս թղթին, թէ չէ բաւական ժամանակս պատմելոյր վասն դատաւորացն Խրայէլի և սրբոց մարդարէիցն, միայն յայս բան բովանդակեալ ասէ, տղբ հաւատով պարտե-

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ բանիւք գիտութեամբ։

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ սրբոյ։

<sup>3</sup> Ա.Յ. օր.՝ նմանակերպ պատկերակից

եղեալ։

ցին զթագաւորութիւննու<sup>1</sup> Արգունակ և յաղագս փրկվական տնտեսութեանն զրէ Յոհաննէս ի կատարածի աւետարանական շարադրածին:

Գուրգէն որդի Ապուպելձի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Իուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ շարին. այլ իրեւ եմուտ Իուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Վուրդիկ Մամիկոնէից տէր ի Իազգեանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Վուրդիկ քեռի Գուրգինայ:

Եւ եղեւ իրեւ կատարեաց Իուխայ զանցա անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարեելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Ապեր գաւառ, և էր յայնժամ առեալ Յունաց Գաղարար իշխանիկ կոչեցեալ. ի տոհմէ բազրատունի՝ զըմբդն Արամանեակ կոչեցեալ. և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով: Եւ արևելիաց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանականն առնուլ զամրոցն, և անդ Գուրգէն բազում արաթիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ միանգամ այլ բազում անգամ, և ի արամիք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումն ի նոցանէ զրնտրելոցն Յունաց, և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ զրէ առ Միքայել թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա:

Իսկ թագաւորն զրէ առ զօրավարն թերեւս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարզեաց և պատուի և գահու յառաջածութեամբ ընկալիք պարզեւ ի թագաւորէն: Ինդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և համեսցի զմիտս թագաւորին: Եւ զօրք Տաճկաց ի զօրացն Իուխայի եկեալ էին ընդ զօրս Յունաց պատերազմել ընդ ամուրսն. և Գուրգէն եկեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ ոչ սակաւ օծիրս գործէր ընդ զօրս Տաճկաց: Եւ ինքն անցհալ գնայր առ իշխանիկն ի յամուլն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիա-

1 Ընթեռնլի է՝ զթագաւորութիւնս: Եթ. ԺԱ. 33:

բար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ  
սպարապետն Ամբատ:

Եւ նորա զեկուցեալ վասն նորա Իուխայի<sup>4</sup> ասէ. «այս  
այս Գուրգէն ի տոհմէն Երծրունեաց, այր քաջ և պատե-  
րազմող ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յու-  
նաց, և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն  
որք ընդդէմ զօրաց քոց պատերազմին՝ և անդ ոչ սակաւ  
հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն  
Յունաց. արդ աւասիկ հասեալ կայ և մնայ քո հրամանի.  
արդ հաճոյ թուլիցի քեզ քաջ զօրավար, զսորայս գործեցեալ  
քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց» Եւ Իուխայ հրա-  
մայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնացէ Գուր-  
գէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք:

Ի սյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Երծրունեաց  
իբրև լուան զպարտութմն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի  
մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հան-  
գերձ խառնազանջ ամբոխիւ՝ լինին<sup>1</sup> թուեալ արք ո, և առսջ-  
նորդ կացուցանէին իւրեանց զԵպուջափր Երծրունի, և ընդ  
նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և  
պատերազմող: Եւ ասպատակեալ ի Ճուաշ և ի Խոռնաւան  
գաւառ՝<sup>2</sup> յաւարի առնուն: Եւ քանզի հաւատացեալ էր զգա-  
ւառսն Իուխայի ի ձեռն սպարապետին Ամբատայ՝ զրէ առ  
ամիրայն Նահիճաւանու Երրահամ անուն, զեկուցանելով նմա  
զօրացն Պասպուրականի. նորա փութանակի հասեալ ի քա-  
զաքն Իհրկրի, և միաբանութեամբ քաղաքացուացն ելեալ  
պատահէն զօրացն ի զօրագլխացն Պասպուրականի ի գեօղն  
որում Խոզաղբեկքն ասեն. զի և այլազգիքն տեղի ետուն և  
փախեան յերեսաց Ապումկդէմայ. և եհար սատակեաց Ապու-  
մկդէմ ի միում ասպատակի ը այր, և զերիվսրս նոցա և զէնս  
և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիմն ի հարուածա  
մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զինի նոցա: Եւ  
մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկար-  
ծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի,  
որպէս ասեն, և զուլումբեալ ի վերայ զլիոյն, ջարդեալ զողն

1 Այլ օր՝ յինէին:

2 Յօրինակն ի թոռն աւան գաւառ:

ու լարն<sup>1)</sup> ի բաց ընկեց զհեծեալն գքաջ զօրավարն Ապումկէմի Խւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին՝ սրով։ Խւ մի ոմն մերկանայր զիօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա։ Յայնժամ զիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զգուշի նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահամ և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին ։ այրոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս։ Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգին և առին։

Իսկ իբրև զիտացին եթէ սպանաւ զօրավարն, և խորտակեցաւ բազուկ աջոյ ձեռին, եղեալ ի փախուստ դարձան, և քակիցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յով և կարաց զերծանել. մնաց միայն զօրքն հետեւակազորքն լքեալ առանց առաջնորդի։ Յորոց վերայ սուր եղեալ կոտորեցին, և լքին դիակամիք սպանելոցն զդաշտաձև հովիտն Խւ աղբեկքն որ ի տեղւոջն և այլ ջրոցն քամուածքն ի ծործորացն ի վայր՝ յարիւն դարձան։ Խւ ինքն Աբրահամ եկնանց յայնկոյս յոստանն Ոշտունեաց և անդ լինէր։ Խւ դարձաւ ի տեղի իւր ի Նախմաւան։ Իսկ Ապուջափր անցեալ ի կողմն Աղբազոյ՝ և ժողովեցան առ նա գունդք գունդ յամենայն կողմանց։ Խւ դարձան մտին յոստանն Ոշտունեաց և կացուցին յանձանց իւրեանց իշխան զԱսասակ Առվակեր, եղբայր Աահանայ։

Առւր եղե այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ։ Խշեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարժապետին կամակցութեամբ։ Խւ այն ինչ ընդ մտանեն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Թղմար և Որինդ կոչեցեալ՝ յինքն զրաւէ զամրոցն, և կալեալ զՎասակ՝ յինքն զրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս։ Խւ սկսաւ շընել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Իուխայի։ Խւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա

1 Այլ օր՝ զուղութարն։

2 Այլ օր՝ հարին զնա սրով։

սրով և աղեղամբ, և երարձ զամենայն ազգս Տաճկաց, որ  
բնակիւալ էին ի Վասպուրական տէրութեանն:

Յայն ժամանակս գայ ոմն Իռուտել անուն ի զօրացն ար-  
քունի հրամանաւ Իռուխայի, հասանել ի վերայ Գուրգինի,  
և ընդ նմա քաղաքացիքն Իերկրոյ որ Ութմանիկքն կոչին,  
և յազատացն Վասպուրականի որ միաբանեալ էին ընդ զօրսն  
աղբունի, արք իբրև ։, և հանդիպեցան միմեանց յՈրդոք  
գեօղ, ի գլուխս ձորոյն<sup>1</sup> ։ացոց, որ հանէ յԵրուանթունի  
գաւառն: Եւ Գուրգէն յանհոգս անկասկած բնակէր անդ ն  
արամբք: Եւ այն ինչ ընդ առաւօտն յեղակարծում հասին ի  
վերայ զօրք Տաճկաց, և ամապարեալ Գուրգէն հեծեալ յե-  
րիվարն. և կարգեցին ձակատս և ռազմ բոլորեցին, և վահա-  
նաւորքն փակեցին զառաջակողմն ձակատուն և կացին ի թի-  
կանց հետեակազօր նահատակացն. և արիաբար հանդիսա-  
ցեալ գնդին ։այոց ձակատեցան ընդ այլազգիսն հարուստ և  
ձիգ ժամն և հարին ի հարուստս մեծամեծս զբանակ այլազ-  
գեացն: Եւ ապա փոքր մի կազդուրեալ գնդին Տաճկաց՝ կա-  
ցին յոտն: Յայնժամ տէր Գուրգէն առ չժուժել<sup>2</sup> սրտին, մրտ-  
րակիւալ գքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն  
զձախակողմն Տաճկաց և պատառեաց զռազմն և դարձոյց  
զերեսս նոցա. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգէնի մի  
կողմն: Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անշափ զօրու-  
թեամբ. և բազումք այն էին որ մեռանն ի սրոյն Գուրգինի  
քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին  
յերկրէն իւրեանց: Իսկ աջ թեն Տաճկաց շարժեցին զզօրու-  
թիւնն ։այոց, և փախստեայ գնացին զհետ մինչ ի սահ-  
մանս իւրեանց. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի  
սպառ հարկանել զգունդն ։այոց. բայց պարտեալ եղեւ  
գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն  
նոցա: Եւ ոչ ևս այնուշետե համարձակ ելանէին և մտանէին  
յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ  
սաստիկ ի վերայ նոցա

Իսկ ի վերայ բազում Հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի  
և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նա-

1 Այլ օր՝ ձորոյն հայոց.

2 Այլ օր՝ առ ի շժուժկալ

Հատակութեամբ, ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուղելին աղմուկք։ Խակ նոցա անմեկնելի զյոյսս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, զյազթութեան նշանակ կանգնեալ. և Տէր ամենակալ էր ընդ նմա ամենայն ուրկը ուր և ախորժէր։

Եյլ լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Ի՞ուխայ. և գարձաւ սիրտ նորա ի վերայ նորա սիրով խաղաղութեան. և ետ բերել նմա ըստ օրինի զլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօափ արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս։ Խւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձեւագոյն ճոխացոյց զպյրն երեելի։ Եյլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ։ Ի՞այց ես յանհունս ձգեմ զղարմացմանն յեզանակս, թէ զիանդ բաւել տոկայի, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ Ճակատամարտն յարատեել ։ Ի՞այց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել վասն ոչ ոճով զորոյայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմանաւորաբար նշանակութեամբ, մանաւանդ զի յառաջագոյն քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար։

Յետ անցանելոյ չորից ամաց, յորում ժամանակի տէր Զաքարիայ ունէր զաթոռ հայրապետութեան Նայոց կաթողիկոսութեան՝ դարձեալ Քրիստո եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. բայց իբրեւ զիտացին զօրին որ ընդ նմա հկեալ էին զնորա քաջա-

կարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: Իսկ Գրիգորի ոչ բերելով զննդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխարհս յերկուս՝ տեղի ետուն միմանց ի խաղաղութիւնու Բայց խոռվիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել զհակառակս բարւոյն և զանձնունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարծեալ իշխանական անունն յինքեան բերէր Բայց Գուրգէն թէպէտ և գուանէր զնենզիչսն իւր՝ ոչ ումեք զփոխարէն չարին հատուցանէր. բայց զՎասակն յամենայն ժամ իրրե ընդ խազ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ:

Ընդ նցն ժամանակս եկն Վահան Եշոտի որդի, հօրեղբօրորդի Աահակայ ի գերութենէն՝ նուածել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: Եւ Գուրգէն նստէր յոստանին Ոշտունեաց յամրածե բերգին. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել<sup>1</sup> ինչ Գուրգինայ. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իրրե ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ արար հալածական զՎահան և զբօրս նօրա. և իջեալ ի դաշտավայրն<sup>2</sup>, խումբ արարեալ, ձակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումն զիաթաւալ<sup>3</sup> կացուցեալ ընդ որս էր Հապուհ նահապէտն Եմատունեաց յանկելոց վերաւորացն: Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոճն Թուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վերաւորեաց զԳուրգէն. իսկ նա առ երազութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Թուանշիրայն, և խլեաց զաւս նորա, և ինքն զարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիւնն Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Աամառայ, զեկուցանել Եշոտի որ ինչ գութեցաւն: Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձն իւրոյ զմի ամ մեռանի իւրով մա-

<sup>1</sup> ԱՅԻ օր՝ ստանանել:

<sup>2</sup> ԱՅԼ օր՝ ի դաշտամակացան:

<sup>3</sup> Յօրինական՝ դիթաւալ:

հուամբ: Եւ տարեալ հանգուցանին զնա ի վանս սուրբ Խաչին յԱղքադ գաւառի:

Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, անդուլ լինելով դժայդ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն, և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյնանարձակ պացմամբ ընթանայր. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ծակատամարտ՝ հասեալ յամուրո՝ տապալէր զգօրութիւն նոցա սրով և ազեղամբ, ի փայլեւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Խորայէլի Յեսուս կամ Գէդէոնի կամ թէ նոյն ինքն նահատակին Նքրահամու, ի վերայ հասեալ Քանանացոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակիալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: Նմանապէս, կամ թէ ևս կրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Խոմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և խսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենեին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. և իբրև զքաջ հովեւն դրուատեալ<sup>1</sup> ի փրկէն՝ զանձն իւր եղ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանինայ դիմեցուածովք, յարին և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիս աշխարհիս. և օրհնեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց, բնակաց և եկաց աշխարհիս: Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբոնեալք լինէին. զի զօրհասն<sup>1</sup> ի վերայ ինքեանց առանց երկրայութեան հասատեալ տեսանէին: Եւ սլքեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենդութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակարայեցի զԱնտիռքայն սրբելով զանասատածութիւնն յԱսրայէլ՝ արար խազաղութիւն նոցա սրոց ափիրէն:

1 ԱՅԼ օր՝ գրատեալ

2 Յօրինակո՞ն՝ զգօրհասն:

## ԳԼՈՒԽ ԺԴ.

“Եաւուալ Իւրանին է Նայո, և ավելին դաշյուղանել աւեառն զիեւ-  
բունիւն է չիսանացն բոլը Նայաւանեաց:

Եւ եղե ի լնուլ վեցերորդ ամի գերութեանն Նայոց որ  
է յի ամ ըստ թուղյ հայերէն տումարին, և ունի յոքելեանք  
ու և ոլիմպիազը և ընդիքտիոնք, և գ ամ հայրապետութեան  
Նայոց կաթողիկոսի տեսառն Օաքարիայի, և մուտ հօթնե-  
րորդ ամի, յորում կային յալքունիսն իշխանքն, ըստ հօթնեկի  
չափոյ շարժման ժամանակաց. որպէս սահմանեաց Աստուած  
ի վերայ ժողովրդեանն Խորայէլի գերելոցն ի Քաքելոն, որ-  
պէս գրեալ է ի մարգարեութեանն Խրեմիայի, «զ-մէ-երորդըն  
ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յիլից բանին տալ պա-  
տասխանի. մինչև յօհեան եօթներորդ է և եօթներորդք կը».  
Նմանապէս զնոյն ընծայեցուցանէ Պանիէլ:

Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ դբոլորն համառօ-  
տեալ ի թիւս միակաց լրման, և զբանդակութեան ամաց  
ըստ տասանց եօթներորդացն որ թուղոյն է լիազոյն է՝ ժամա-  
նակարգեաց համառօտեաց ի վերայ նորս Խորայէլի, այսինքն  
հեթանոսաց: Եւ զայս առատապէս հեղեալ զգութ արարչա-  
կան խնամոցն առ արարածս իւր, ողորմեալ<sup>1</sup> մարդասիրապէս  
բարեխօսութեամբ սրբոցն, որք հեղին զարիւնս իւրեանց  
վասն ուղիզ և անբիծ դաւանեութեանն ի Վրիստոս, և վասն  
ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ<sup>2</sup> քաջ նահա-  
տակին, յաղթող վկային, խոստովանողին Վրիստոսի, և ի  
ձեռն հրվուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճրգ-  
նաւոր քահանայի Վրիտորի, որք միշտ զողորմութեանց խըն-  
զուածուածու վասն ժողովրդեանն աեառն ի վեր առաքէին, զոր  
օրինակ և հրեշտակն աղերսէր Աստուծոյ, ասէ, մին-  
չեւ յերբ ոչ ողորմեսցիս Խրուտաղէմի և քաղաքացն Առւդայ.  
այս է երորդ ամ էա: Եւ յոր կոյս կամի հայեցուցանէ զնոսա:  
Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ ողորմելով:

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ Արծրունեաց:

սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս  
դիեցին կրանելի մարզարէքն:

Եւ եղեւ յետ աւտուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար  
թագաւորն զնախարարսն այսոց ի տաճարի խրախից, և խոս-  
տացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն՝  
յայնժամ հրամայեաց ածել առաջի իւր զԸշոտ և զորդի նո-  
րա Գրիգոր: Եւ զգեցոյց նոցա հանդերձն և կանգնեաց նշա-  
նակ իշխանական և էած սօւսեր ընդ մէջ և կամար ակա-  
նակապ և երիվար ընափեր մեծազարդ. և եհան զնոսա յա-  
տենէն հոյակապ և շքեղ և երեելի պատուով<sup>1</sup> ի ձայնս երգոց  
և ի հնչիւնս փողոց. և քարոզքն բարձրացուցանէին զերգան  
մեծ և սաստիկ գոշմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վաս-  
պուրական աշխարհին Եշոտոյ. և որդւոյ իւրոյ Գրիգորի. և  
հրովարտակ արքայի ի ձեռաւ քարոզացն, թէ յղեաց արքայ  
զԳրիգոր որդի Եշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ  
փոխանակ հօր իւրոյ:

Յայնժամ եկալ իշխանն Գրիգոր յերեաց արքայի մե-  
ծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն  
եմիւտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ:  
Եւ տիրեաց երկրի իւրոյ իշխանական ճոխութեամբ: Եւ եք  
ամաց իրբեւ տասանց յորժամ նատաւ յաթոռ տէրութեան  
հօր իւրոյ:

Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր  
Եշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարնել  
կարգել յօրինել զկարգս շփոթեալ աւելիեալ երկրիս: Օք  
թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յար-  
ձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին<sup>2</sup> հասանել  
դահ, կամ որ արտապքին տաճկական պատերազմունքն բռնա-  
րար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ եր-  
կիրն: Եյլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, զերի-  
վարացն տառապանք, դազանաց յաբձակմունքն, ներքին և  
արտապքին վրգովմունքն հոյանի առնէին զաշխարհս:

Իսկ իրեւ եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հա-  
սանել ի վերայ առաջնոյն Գուրգէնի. զի բռնացեալ բնակէր:

1 Այլօր՝ ճոխութեամբ և պատուով: | 2 Այլօր՝ կոմի:

յամուրսն Արինգ և Թղմար. և ի հասանելն նորա անդք թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եգեալ զհրամանն արքունի, զգլիսաւորին Տաճկաց, և Եշոտի հաւատալ զըոլոր տէրութիւնս Վասպուրականի: Ուրում ոչ անհնազանդ գտեալ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: Խւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առնա զայս օրինակ, եթէ պնդ իս հաստատեա զանզբաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան, և ես ապստամբեցայց յՆշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուկը<sup>1</sup> յապահօվսու:

Իսյց ոչ ետ տեղի Գուրգէն<sup>2</sup> այսմ՝ յերկուց պատճառաց, մի՛ զի մի՛ ապստամբ երկեցայց Տաճկաց բռնաւորին, զորոյշլուեալ էր զբազմաց այլ պատերազմացն արիութիւն<sup>3</sup>, և զհարուածս զօրացն Տաճկաց, կասկած ունելով որ ինչ գործեացն ընդ Եշոտ: Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: Եյնուհետեւ ել զնաց դէմ եղեալ զյունականզն շըջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Եստուծոյ. զի կատարեալ էր սիրտ նորա ընդ տեառն Եստուծոյ ամենակալի:

Խւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա<sup>4</sup> առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. և փութացոյց վասն նորա զի անյապազ առնա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաշանշան դրօշիւք ճոխասցի: Խւ մինչգեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միշն Իշեր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Եշոտ որդի սպարապետին: Խա թէպէտ և զշարացաւ ընդ եղեալն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Խսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիւ էին: Եղդ առնէ<sup>5</sup> քաղաքապետին Տփղեաց. և ինդիրեալ զնա

<sup>1</sup> Այլ օր՝ կոցուք:

<sup>2</sup> Այլ օր՝ Գուրգէն տեղի:

<sup>3</sup> Հին օր՝ պատերազմացն: Այլ օր՝ զպատերազմացն:

Ժաց:

<sup>4</sup> Այլ օր՝ նոցա:

<sup>5</sup> Այլ օր՝ առնէրն:

առ ինքն՝ ստիպէր տագնապէր ահս արկանելով, թողուլ զօրէնս քլիստոնէութեան և յանդորր ելանել։ Նորա ծաղը արարեալ զնովաւ՝ ընտրեաց զկապանս և զբանդ, նաև զմահ քաջութեամբ վասն անուանն Քրիստոսի, քան զկեանս խրդական։ Որոց կապեալ զԳուրգէն երկքին կապանօք և դարձեալ ի պարանոցն եղեալ շղթայս՝ յղն ընդ Կարպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողքական բանիւք հաւանութեամբ<sup>1</sup> թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել<sup>2</sup> այլոց ուրացողացն զՔրիստոս. որ ոչ և փոքր մի խոտորեցաւ ի բանս բռնաւորին, վասն սիրոյն Քրիստոսի։

Դարձեալ զԱղողոմոն Բազրատունի վառեալ ի գէն սատանայական՝ յղէ առ նա բազում անգամ զնոյն խորհելով. և նա դարձուցանէր զնա կսկծեցուցանող բանիւք իբր զարբանեակ սատանայի։

Երևեալ նմա յայնժամ<sup>3</sup> ի բանտին այլ մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալեսորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն, «գգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, Քրիստոսի զինուրեաց։ Մի խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Խամայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց։ Եւ նա ևս քան զես պնդեալ հաստատեալ կայր ի հաւատոս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբ վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժալութեամբ մեծաւ։

Եայց Գուրգէն զմի ամ կեցեալ փոխի յաշխարհէս, դարձեալ յուրացողական ամբարշտութենէն։ Եւ տարեալ հանգուցաննեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս։

Եւ Դեկենկին<sup>4</sup> զօրացեալ զօրութեամբ Քրիստոսի, և Հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկե-

1 Հին օր.՝ և եղքական հաւանութեամբ։

2 Այլ օր.՝ և հասարակցել։

3 Այլ օր.՝ երևեալ յայնժամ

4 Այլ օր.՝ Դեկտեմբեր։

լոյն։ Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգութն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութիւն, և ցըրուեալքն դռոթ<sup>1</sup> տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շենիլ տնկել, մոռանալ զցաւսն և գտրտմութիւնսն զոր կրեցին։

Ինդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ձխացեալ մեծամեծա փբայր Գավիրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Աննէքէրիմ նախնին մեր ի վերայ Խրուսաղէմի և ժողովրդիանն Իսրայէլ՝ յեղակալութմ հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին<sup>2</sup> սպան զնա, և ինքն թագաւորեաց փոխանակ ընդ հօր իւրոյ, և յետ ու ամսոց մեռանի։ Եւ թագաւորէ ընդ նորա որդի հօրեղբօր նորա Մուհթիս<sup>3</sup>, և կացեալ ամիսս գմեռանի։

Եւ իշխանքն Նայոց կային<sup>4</sup> ի տագնապի և խնդրէին զեւ իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին։ Բայց յիւ աւուրց բաղմաց անցանելց շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելիալ վրծեալ իրանտէն՝ եկն եմբւտ յաշխարհ իւր։ Եւ իրիւ ազդ եղեւ Դերենին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեաց։ Եւ դարձեալ ուժեղացեալ դարձաւ ընդդէմ Գուրգէնի և երիվարին ընդ վազս փոնդալիր խրոխտանացն վրոճուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին։ Հասեալ կալան զնա և տարւան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Նադամակերտ։ Եւ ծառայ մի Դերենին որ բանտապանն էր՝ լրւծեալ զնա ի կապանացն և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենին։ և ծառայն զշարիս խորհեալ սպանանել զԴերենին և զաշխարհս նուածել զիշխանութիւն Գուրգէնի, զի և դիպող էր ժամն։ Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս։ ոչ ինդրելով զվրէժ արեան սպանելց հօր նորա ի պապոցն նորա, ձայն բարձեալ արտասուալից առ Դերենին, և զոււսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղը և սակը մի՝ ասէ. առդեակ իմ Դերենիկ, ողջոյն քեղ, ողջոյն

<sup>1</sup> Ա. Յ. որ.՝ գռոթ։

<sup>2</sup> Ա. Յ. որ.՝ Մութէին։

<sup>3</sup> Ա. Յ. որ.՝ Մութիս

<sup>4</sup> Հին որ.՝ կացին։

քեզ. ևս ելի գնացի ի յաշխարհն Յունացու Խւռորա առ աշխ պակուցեալ, ասէ. հայր իմ, ինայեա յիս. և այլ ոչ զօրեաց բարբառել Բնչ:

Խւռ Գուրգէն ելիալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչեւ յաջողեացի ըստ կամաց Քրիստոսի յով և երթիցէ: Խւռ երթեալ հասանէ ի գիւղակ մի Խրագանի անուն առ մնագն մի, որ էր երէց վանիցն: Օնա որպէս զերկիւղած<sup>1</sup> Եստուծոյ ապաստան յինքիան արարեալ՝ խնդրէր պահպանել նմա. և նորա արկեալ գնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և Բնքն փութացաւ զոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել լի անմտութեամբ մոլի արեղայն, որում ոչ հրամայեցաւ. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ:

Ի՞այց Դերենիկն կալեալ գնա պահէ ի զգուշութեան, ոչ Բնչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր գնա, ըստ հատուցմանն բարւոյ. այլ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Օ-աքարիայէ:

Քանզի իրեւ լուաւ երանելին Օ-աքարիայ, եթէ ըմբռունեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսք աշխարհին. և էր ընդ նմա Եշոտ իշխանաց իշխան, և ազերսիալ զիշխան Դերենիկ, զի լուծցէ գնա ի կապանացն: Որում ունկնդիր եղեալ իշխանն՝ կատարէ զասացեալսն: Խւռ դաշնաւորեալ ի մէջ երկոցունց՝ մնալ առանց կասկածանաց. և զՄարդաստան դաւառն զըուն բաժին Գուրգէնայ դարձոյց առ նա Դերենիկն: Ի՞այց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ իրեւ զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ գնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շըջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց:

Ի՞այց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Եշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուածել զիշխանս Հայոց, զՄարաց և զԵղուանից, որ եղել իսկ: Խւռ զօր գումարեալ եկն եմուտ ի Վանտոսպ, և Դերե-

<sup>1</sup> Այլ օր՝ զերկիւղ:

Նիկն յանդիման եղեւ նմա. և նորա կալեալ զնա և ի կապանս  
մատնեալ որպէս զանհնազանդ ոմք՝ և եկն անց յոստանն  
Ոշտունեաց:

Ազդ եղեւ Գուրգենի վասն Դերենկին, և զիարդ ըմբռնե-  
ցաւ. փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ  
զՃեպի. և բանակեցան ն արամբք, վառեալ ի զէն և յասպա-  
զէն, ի Նորագեօղ Ոշտունեաց: Խւ գրէ առ իշխանաց իշխան՝  
ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ  
ոչչ տեսից զքեղ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ.  
և խորհեր յեղակարծում ի գիշերամարտս հասանել ի վերայ  
Ըշտի: Բայց առողացեալ իմաստութեամբ իշխանաց իշխան՝  
փութացաւ առ կատարումն գրելեացն Գուրգենի: Խւ քանզի  
այն ինչ վախճանեալ էք կին Դերենկին՝ գրէ Գուրգեն առ  
Ըշտ, ասէ. «Ե այս ևս քաջահածոյ թուիցի քեզ, վեհդ և  
ամենեցուն գիտելիք. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ ան-  
կասիած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան՝ Դե-  
րենկիդ, տիկնութեան Վասպուրականիո: Խւ անյասպաղ գրւ  
խաւորեալ խորհրդոցն՝ առնու ընդ իւր զԴերանիին, և էանց  
գնաց ի տուն իւր ի Բագարան: Խւ արարին նաւակատիս  
մեծ Հարոսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականու-  
թեան Նայոց յժա-երորդ ամին:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Դարձ գեղս-նեան իշխանացն:

Բնդ նոյն ժամանակս ընդարձակեալ բարերարին Աստու-  
ծոյ իշխանացն Նայոց՝ դարձան յիւրաքանչիւր բնիկ տէրու-  
թիւնս. և կին յապահովս խաղաղացեալք և հնազանդեալք  
ընդ պետութեամբ իշխանաց իշխանի:

Բնդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնա-  
ւոր քահանայ Գրիգոր, մարտիրոսական հանդիսիւ ամբողջ  
լիսոստովանողականն բերելով զանուն՝ զերծեալ ի բանտէն

<sup>1</sup> Այլ օր՝ ի կնութիւն:

յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զառափակիս արձակման գերելոցն, որդունակ Խորէն և Նըրահամ խոստովանողքն Քրիստոսի, ի պարսկայինն զերծեալ Ականաց դառնագոյն կրիցն՝ զբնդարձակութենէ նախարարացն այոց մատուցին ողջոյնս աւետարելու՝ դարձուցանել տեան զգերութիւն ժողովրդեան իւրոյ:

Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընարեալ իւր առանձնակ միայնաստան աեզեակ, ազօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ։ Յորոց տեղի մատուցին զՅոհան ոմն, այր հեզ և բարեպաշտօն, լրցեալ երկիրդիւ Տեառն, պատշաճ առ վերակացութիւն եկեղեցւոյ Քրիստոսի:

Բայց սպարապետն Ամբատ և տիկինն Վասպուրական ժողովսիմէ<sup>1</sup> անդէն մեաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովն։ Քանզի հարցեալ և բռնազբօւեալ զերկոսին զիխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոյա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուրիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. մեռան նոքա անդ և թազեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զիխոստովանողական անուն ատացեալ փառաւորեցան յերկիրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբք. ամէն:

Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազումքան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԵնձաւացիս և զոր յԵրզն<sup>2</sup> և զոր առ ամենայն ուրիք, որպէս ցուցանեն յիշատակարանքն ոլք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուրի երկրորդել Բայց յետ բազում յուղիցն և պատերազմացն հՀաս տիրել նմա Ենձաւացեաց տէրութեանն զայս օրինակ:

Մուշեղ Ենձաւացեաց տէր հիւանդացեալ զյետին կեալն, ունելով որդի ստնդիայ. և Դերանիկն խորհէր տիրել աշխարհէն։ Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամոցան Նորաբերդ և

1 Ա.Յ. օր. և Տ.պ. ամենայն ուրիք։  
Հակիսիմէ։

2 Ա.Յ. օր.՝ յԵրշն։

շուրջ զսահմանսն՝ Գերանիին հաւատալ, և զայլ ևս՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել։ Եւ եղև ընդ մեռանման տեսառն Անձաւացեաց, նորին տիկին<sup>1</sup> Նեղինէ զրէ առ Գուրգէն, «եթէ հաճոյ թուրիցին քեզ կնութեան, և կամիցիս քեզ զտիրին Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղիոտ լինիր և վերջանար զփութեալն»։ և հաճոյ թուեցաւ Գուրգինայ խորհուրդք տիկնացն Նեղինէի<sup>2</sup>։ Եւ ելեալ զնաց եմուտ յամուրն<sup>3</sup> Կանդուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ։

Իսկ Գերանիին զործ առնէր ի զիւտս հնարիմացութեան, և տարութերէր յանձն իւր՝ դուանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրիլ աշխարհին։ Եւ ի բազում յուղիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ<sup>4</sup>։ և զձե ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարաձգութեանցն, զոր և ընդունացն աշխատութեամբ վարանեալ անստնանելի<sup>5</sup> մնալով ամրոցին՝ դառնայ յիւր իշխանութիւնն։ Բայց զերկորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Գերանիին նուածեալ ընդ իւր գործակալօք, և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ յԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր։ Եւ զի ստեալ Գերանիին Գուրգինայ եհան անտի զգործակալն՝ նոյն գունակ<sup>6</sup> Գուրգէն հնարաւորեալ, առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս յապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան։

Եյս զ ամ էր զերութեանն Նայոց, և յլ նորուն թուականութեանն։ Ի յէ ամի Նայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի զերութենէն։

Խոստացայ վերագոյնն գլուկ վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն։

1 ԱՅԼ օր.՝ տիկինն նորին։

2 ԱՅԼ օր.՝ Նեղինեայ։

3 ԱՅԼ օր.՝ ի յամրոցն Կանդուար։

4 ԱՅԼ օր.՝ վառել։

5 ԱՅԼ օր.՝ անստանալի։

6 ԱՅԼ օր.՝ նոյնպէս։

Ի դառնալն Իուխայի յարքունիսն, և կայր գյօննն պողգտեալ<sup>1</sup>, վքացեալ ուռուցեալ լի ամբարտաւանութեամբ՝ կոկողաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց, կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն այոց, և մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Խորայէլին ի Հնումն առ Սեղեկեաւ զնարուքոդոնտարայն։ Կինն Աահակայ որդւոյ Խոմայէլի, զորոյ դհանգամանսն ցուցաք, զմեռանելին Աահակայ և զկնոցն հրապարակագոյժլինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. զորոյ ցուցականութիւն պատմեալ գլխաւորին Տաճկաց Զափրի։ Խսկ նա ըստ սովորակի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ միմուեալ յանձն գաղանեղէն թունիք առաւելեալ բոլբոքեալ տապախառն բոցով հեզուլ զմահածին թոյնսն ի վերայ Իուխայի. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՛ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեանն Եպայլէ զնա ի Խորասան, և նմա հաւատաց զվերակացութիւն աշխարհին. և ինքն Զափր գործ առնէր առ սակաւ սակաւ մեխիւլ ի նմանէ զզօրսն՝ դիմօք յաշխարհս աշխարհս ասպատակ սփռելոյ։ Խւ նոյնժամայն հրաման հասեալ յափփուսոփս յոմանս ի գաղտնիս՝ զրաւ առնել կենացն նորա. և իսկ և իսկ հրամայեալքն զկատարումն առնուին։

### ԳԼՈՒԽ Ժ.Օ.

Վասն դառնալոյ Ալլոյ էլեանէն ի Քերո-Շենէն և<sup>2</sup> Վահանայ Ըբժունոյ։

Բնդ այն ժամանակս ապստամբեալ ի պետութենէն Տաճկաց քաղաքացիքն, որում Ազուինն ասեն։ Խսկ առաջնորդին Տաճկաց զօր գումարեալ այրումի կազմեալ յընտրելոց զօրաց Եսորիստանի և Երաբացւոց, ընդ որս էր և քաջն մեր

1 Հին օր. և Տպ.՝ պողուեալ։

2 Այլ օր.՝ և վասն։

Աշոտ ախոյեանարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրսւն. և զօրագլուխ կացեալ էր Մուսէ որդի Շուշային Նորա խոստացեալ էր առնել դառնալ Աշոտի յիւր բնիկ տեղութիւնն, ժամ տուեալ ի գլուխ հանել, յոր չոգանն՝ զգործ պատերազմին:

Իբրև հասին ուր հանդեմեալն էին՝ և երկոցունց զօրլքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ծակատ առ ծակատ զգործս պատերազմին յարդարէին, և քաջքն և հոյակապքն ելեելս զմիմեամբք առնէին ախոյեանայարձակ խըրուխտանօք: Անդանօր քաջն մեր Աշոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: Խւ ինքն զօրավարն Մուսէ ձեպէր շտապէր՝ փութալ առ պատերազմնն վառել, և նա ևս քան զես զկարծեցեալ հիւանդութեանն ածեցուցանէր զիստութիւն ցաւոցն ծանրանալն նմա: Խւ մինչդեռ յայնմ մահիճնն կարծեալ հիւանդութեանն կիղծաւորէր՝ և ախոյեանարձակքն զմիմեամբք շութափէին, և ահեղ որոտումն և ահեղ թնդիւնք և բախսունք խուռն յարձակելոյ իբրև յամպոյ ձայթիւնք կարկտարելք հրձգութեանց կիրագաճգեին: Խւ ուժեղացեալ զաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանակաւն ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. մտեալ Ա ահան աղերսէր համոզէր՝ մի կայ մնալ մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարձն: Նոյնժամայն ածապարեալ աշտանակեալ ի նիւս նրժոյդ<sup>1</sup> երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ. «Հապա, քաջք ձայոց, և յայսմ ծանիցն զմեղ և զարիանալն մեր»: Խւ յանդուգն զիմեցուածովն<sup>2</sup> ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին զիսրուսակսն<sup>3</sup>, և զռազմն զաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահար արարեալ դիթաւալ կացուցին և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայնոյ՝ այնպէս արագապէ-

1 Յօրինակսն՝ ի նիւսն շոգ երիվարին:

2 Յօրինակսն՝ դիմացուածովն:

3 Այլ օր՝ զիսրուսական:

գպատերագմին զլխաւորեցին նահատակութիւն։ Եւ ամենայն խորհուրդք Մուսէի առին զկատարումն ի վերայ թշնամեայն։ Իայց Մուսէ ոչ հաստատնագոյնս վասն Եշոտի զխոստմանն բերելով յանձնառութիւն, արձակել զնա յիւր իշխանութիւնն, զայս խորհելով<sup>1</sup> թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել։ Իայց Եշոտ վերջունեալ<sup>2</sup> հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր։ Եւ յաճախեցին բազմապատիկս վասն նորա գոհութիւնս Եստուծոյ։

### ԳԼՈՒԽ ԺԷ.

Վահան Անյառ-ացեաց յուղնանցն Եշոտի և դարձեալ խաղաղանալոյց<sup>3</sup>։

Եպա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Ենձաւացեաց. և Եշոտ զօրու ծանու եկն եմուտ յերկիրն Ենձաւացեաց, բանակեցաւ ի Իլրակին<sup>4</sup> գեաւղջն Ենձաւացեաց<sup>5</sup>. յղէ առ Գուրգէն զՎահան Երծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Նոգեաց վանից, ասէ. «ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ արդ թողացո զերկուորդ մասն Ենձաւացեաց որդւոյ իմոյ Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել, ապա թէ ոչ ի կամն կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլու։

Եւ Գուրգէն հեղաբար արտաքոյ ամբարտաւանութեան առնէ նմա պատասխանիս, ասէ. «ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական»

1 ԱՅԼ օր.՝ իորհեալ

2 ԱՅԼ օր.՝ վերջնոտեալ

3 ԱՅԼ օր.՝ խաղաղանալ

4 ԱՅԼ օր.՝ բնակեցաւ առ բլտակին

5 Հին օր.՝ անձանակաց։

6 Յայլ օր.՝ չեք՝ ոչ

Հասէ. զայս ևս բռնազրօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցը ինձ: Միթէ գո՞ւ միայն բնակելոց ևս յերկրի: Տեսէտէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովորէ արդար դատաւորնու:

Նշ ինքն զԴրիգոր եղբօրտրդի իւր հանդերձ ընտրելովք ոմամբք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք ն, զոր զգացուցին Աշոտի. և նա արհամարհեալ յոշինչ համարեալ զզեկուցմանն, զամբարտաւանս բարբառեալ. և յանկարծակի ի մէջ գիշերին Դրիգոր ախոյեանարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակս, սրով և աղեղամբ վէրս մահաբերս ի վերայ եղեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. և ինքն Աշոտ ճողոպրեալ միամի ելեալ<sup>1</sup> եհաս փախստեայ մինչ յուսանն Ոշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. և այլքն ցրուեցան յով և աճապարեաց ոք. և ընդ այդն ընդ առաւոտն առին յաւարի զբանակն հանդերձ ախիւն և զտունս գանձուցն զորս առ ինքեանց:

Ի՞այց իշխանն Դերենիկ անգիտացեալ զեղեալսն՝ ի նմին աւուր եկն բազմաձեռն զօրու բանակեցաւ ի հարաւ կողմն բերդին, և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ:

Նշ դարձեալ գումարեալ հեծեալս ը, զԱպահակ Ի՞ազրատունի զորդի իշխանաց իշխանի և զԱմբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխացողք և զԵրզնոյ զօրսն, և եկեալ կացին մօտ առ Աանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս չ՝ ոչ ինչ գործ ի զլուխ եղեալ ըստ ախորժման. ապա համոզեալ Աահակայ և Ամբատաց այլովքն ևս՝ բարձին ի միջոյ զաղմուկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝ զնացին յիւրաքանչիւր տեղիս: Նշ Դուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ կտուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի:

## ԳԼՈՒԽ Ժ.Բ.

Վասն ճագաւառն Աշոտ էլիունի ընդ Ռեմանիսն և պէղանական առնելո, զարդարակեալն ի նոցանէ:

Իայց Եշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ռւթմանիկ կոչին, որք ամրանային ի յնմիւկ անկասկածելի քարանձաւին. վասն զի ըստ Պատղոմեայ և Եղէքսանդրի սահմանադրութեանն կամ թէ մեր Երտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն, զոր և ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութեանն<sup>1</sup> Տաճկաց ի Վասպուրական պետութենէ:

Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ռւթմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՄասոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. և ի վերայ նոցա զօրաժողով եղեալ Եշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին

Իայց քանզի անպատերազմելի էր ամրոցն, միայն բաւականաւն ռոճկաց մի վատնիցի՝ առեալ իշխանին զՎարագ ի ձեռանէ Տաճկացն, զի<sup>2</sup> յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զզլիսաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եղեալ ի խորափոր խաւարային բանտի: Որում որոնել<sup>3</sup> փրծանել ի վտանգաւոր բանտէ: Խւ անտի դարձեալ դառնաւի, ի յարեելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռովիսիմեայ, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեաւղջն Եւհեականից ի կատարածի լուսաւորութեանն Հայոց: Քանզի էր ի տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից<sup>5</sup> Վահեավահանի: Եյլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ բռնակալութիւնն:

<sup>2</sup> ՅԱՅԼ օր. չէք՝ ոի:

<sup>3</sup> Հին օր՝ արոնել:

<sup>4</sup> Հին օր՝ սուտերծ:

<sup>5</sup> ԱՅԼ օր՝ ոյնմիկ յառաջագոյն տեղ:

ու մհենեց:

Ամդայինն Յիսէ, որ Ծեհի<sup>1</sup> որդին, որ զղօրապետութիւնն հայոց ունէր, ձանաչէր՝ ի հրապոյրս մանազաւեան<sup>2</sup> պետայն և ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Նշոտի ժե հազարաւ հեծելքը վառելովք. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ՝ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգինի, և զաշիկ արարեալ յայնկոյս քան զԱ անտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գողաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յեծիվաբաց արկման դաշտն, ի վերայ Լեզուոյ գեաւղճն<sup>3</sup>, որ զօրացն գեղեցիկ<sup>4</sup> առասպելաբանն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Ծամիրամայ: Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ<sup>5</sup> բազմաձեռն զօրուն՝ յառաջ խազայ ընդ Նքաղայուկատար ասացեալ բլուլն:

Իսկ Նշոտ մտրակեալ զօրասպայզինեալ<sup>6</sup> երիվարն սպառագէն կազմեալ ի մարտ պատրաստել<sup>7</sup>, շահատակելով գունակի խաղս գնդակաց, զսակաւատորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զբ հազարս հեծելոց:

Յայնժամ Վահան հայր Գագկայ Նպումբուանայ և ինքն Գագիկ առնէին համոզել ի մէջ նոցա: Եւ առ չանսախն՝ յետուստ<sup>8</sup> կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյդ ասպարակողին. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Աէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհիլ զխազազութիւն և զմարտն զրոգեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. զոր ոչ անունկնդիր լիալ Նշոտ՝ վերջունեալ եկն բանակհցաւ յՄրտաշեսեան աւանին, և Յիսէ ի Վահան քաղաքի: Նշոնժամայն գնացին Դերանիին և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան<sup>9</sup>, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի, և զարձուցին ընդ նոյն ձանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թո-

1 Տաղ. ամենայն ուրեմն՝ շեխի, շեխայր

2 Այլ օր՝ մանազօնեան

3 Այլ օր՝ Լեզուոյ գեղճն:

4 Թերեւուր զնրայն գեղեցիկ: (Տես Նոր. Բուլ. յէջն 20):

5 Հին օր՝ խողացեալ:

6 Թերեւուր զեւր սպառազինեալ երիւղին:

7 Այլ օր՝ պատրաստեալ:

8 Հին օր՝ յերուստ: Տաղ. յերկուստ:

9 Այլ օր՝ խաղաղականս:

ղացուցին Խմա ելանել ընդ աշխարհն Վասպուրական. և դարձեալ գնաց եհաս ի Պարտաւ յաշխարհն Գարգարացւոց Խւ իշխանքն մեր ստացան Ճոխագոյն հոյակապ անուն ի մէջ հայստանեայց, և այլ ոչ եւ այնուհետեւ համարձակ յանձն առնցը մտանել ընդ աշխարհս Վասպուրական:

Արդ Աշոտի կեցեալ ամս ժի, տեեալ իշխանական Ճոխութեանն ժամ յառաջ քան զգերութիւնն այոց, և է ամ ի գերութեանն արարեալ, և շամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ գքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղիել յապաշտ. ի վերայ ուրացութեանն զՎրիատոս լինելով:

Ի՞այց զի՞նչ աստանօր ինձ ասելի է<sup>1</sup>, զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Վրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն այոց, որք գերադարձն եղեն. զուրացութեանն ի բաց դնելով զվատթարութիւն, սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ զայթ ի զայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք<sup>2</sup> և պղծութեամբք, աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք, որ անցուցանէ<sup>3</sup> զանցանէ զանանական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրութեամբ, անամօթարար այր զարամբք բորբոքեալ, դեղադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին: Օք նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերմն Այէնի խառնակելով ջոռվ կործանեցան. իսկ որք արուէք ընդ արոււ զխայտառակութիւն գործէին՝ ծծրմբախառն<sup>4</sup> հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատշեայս յինքեանս կրելով և յիրկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շեցանի: Արդ եթէ Առղոմայեցիքն, որ հրով զլոիթուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տան-

<sup>1</sup> Ա. Ա. օր.՝ ասելի է ինձ:

<sup>2</sup> Ա. Ա. օր.՝ անկողնօք:

<sup>3</sup> Ա. Ա. օր.՝ անցանէ:

<sup>4</sup> Հին օր.՝ ծծմախառն:

ջելոց են՝ որք բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի  
ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ գնորդք. արդ տես,  
մեղք քան զմեզս և տանջանք քան զտանջանաւ:

Ի՞այց Աշոտ, իբրև հշամ ժամ ելիցն իւր յաշխարհէս՝  
յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան ար-  
տասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդու-  
թիւնն, յուսացեալ ի մարդասիրութիւնն Վրիստոսի, զմաք-  
ստուրին և զաւազակին զյետնորդն բարբառեալ, և զիրկա-  
կան մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւա-  
տով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աս-  
տուծոյ: Օսր և ես ոչ արհամարհելով այպանիմ զզղմանն<sup>1</sup>  
և զապաշաւանացն, զի որ կարդանցէ զանուն Տեառն կեցցէա  
Քաց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիրն  
գան, ըստ որումն սրբազնի տրամաբանութեան: Ի՞այց ի  
տան հօրն Վրիստոսի օթեանք բազում են. թերեւս արտա-  
քոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային  
վայելն ի հարսանիսն: Եւ այս արտաքոյ անյուսութեանն ե-  
լանելով, հայեցեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ:

Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ  
գաւառի յիշ թուականութեանն Նայոց, յամսեանն հոսի, որ  
օր շէր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանդու-  
ցաննն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յՆորբագ գա-  
ւառի:

## ԳԼՈՒԽ Ժ.Թ.

Վասն ծննդոց Դերանին:

Խակ Դերանին առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ  
առ շնութիւն և խաղաղութիւն աշխարհիս, շինել և տածել  
և խնամել զաշխարհս: Եւ գաղարումն լինէր յաւուրս սորա  
հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս

<sup>1</sup> Հին օր՝ զզղմանն:

բարեձեւանայր կարդք սրբոյ եկեղեցւոյ ՚Քրիստոսի, և երկիւղ  
և կասկած և ոչ ուստեք<sup>1</sup>: Խւ ծնան նօրա երիս որդիս, Սար-  
դիս որ և Եշոտ՝ յիշ թուականութեանն ։այոց, Խաչիկ որ  
և Գագիկ յել, և Գուրգէն, մանկունք կայտառք և գեղա-  
պանձք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և եր-  
կուս դստելու:

Ի՞նդ այն ժամանակս տէր Օաքարիայ հանգեաւ ի ՚Քրիս-  
տոս, կեցեալ ի հայրապետութեանն ։այոց ամս ծը, և յա-  
ջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ:

Ի՞այց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ  
քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: Նո-  
րա ի բաց կացեալ ի Հնազանդութեանէ իւրոյ պետականին  
հանդերձ քաղաքային զիսաւորօքն. և Յիսէ տուեալ պատե-  
րազմ ընդ քաղաքին<sup>2</sup>, զտարի մի հանդերձ ամենայն նախա-  
րարօքն<sup>3</sup> ։այոց, անդամազիտ լինելով՝ գառնայ յՆսորիս. և  
այս եղեւ երկիցս անդամն Խակ Յամանիկն ի վերայ ։այոց խոր-  
հէր ելանել, կամելով և տիրել ։այոց. զորոյ ձախողակի ի-  
մացմունս ծանօւցեալ իշխանացն ։այոց՝ միով հաւանու-  
թեամբ գրեն յարքունիս և խնդրեն զԵհմաթ որդի ։ալլթի.  
զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով  
առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն  
։այոց, քող արկեալ զդաւաճանող կեղծաւորութիւնն, զբար-  
ձումն բոլոր իշխանացն ։այոց, մանաւանդ զնախազահանրս-  
տեալն զԵշոտ իշխանաց իշխան: Ի՞այց խնդրոյն ։այոց զկա-  
տարումն առեալ յառաջնորդէն Տաճկաց՝ յղէ ի ։այս զա-  
ռաջասացեալ զԵհմաթ որդի ։ալլթի: Խւ եղեւ ի մտանելն  
նորա ի ՚Դատուան աւանն, զոր իւրեանց սեփհական համա-  
րէին ժառանգութիւն՝ ելեալ իշխանքն ։այոց յանձնիւր տե-  
ղեաց գնացին յանդիման լինել նմա, ՚Դերանիկն, տէր Գա-  
գիկ և տէր ՚Գրիգոր և միւս այլ տէր ՚Գրիգոր Վասպուրա-  
կան իշխան, Եշոտ կորապաղատ ։այոց իշխան, Մուշեղ իշ-  
խանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ե-  
պլառ Կայսիկ Եպահունեաց բռնաւորին և այլք ոմանք:

1 Այլ օր՝ և ոչ ուստեք:

2 Այլ օր՝ քաղաքային:

3 Այլ օր՝ հանդերձ նախարարօքն:

Առքա ամենկրեան վառեալք սպառագէն պատրաստութեամբ և բաղմաձիռն առատայլիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն։ Ի՞յց Յամանիկն և Նհմատն և Նալբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ գնոյն շարիս երկնէին գային։ Խւ զրեն թուղթ առ Յամանիկն, եթէ փ մտանելն իմ ի Դուին քաղաք և դհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ<sup>1</sup> զեշիանս հայոց՝ և եկեսցեն առ իս դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերագմ, և ի միասին միսեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ հայոց։

Իսկ առաւելեալն իմաստութեամբ Եշոտ ոչ յանհոգս և յաներկիւզս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճն ձորոց։ Եզդ լինէր յոմանց զրումն անյայտիցն, թէ «այս ոմանք այսորակ երիվարօք յայտ նիշ նիւս կեղթում, ի մէջ բգեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Եպահունեաց. արդ զգուշացիր ճանապահիդ»։ որ և ըստ ազդեցութեան զկատարումն առնոյր գործն։ Խւ կալեալ զդեսպանն հանին զթուղթն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչնչ ումնք զգուշացուցանելով որ ինչ եղեն:

### ԳԼՈՒԽ Ի.

Վասան առելցն Դերանին զդորապալուրն իշխան Տարունյ, և զԴատին, որ արժայն ճանալու՝ իշխանացուցանելց։

Խւ եղեւ մինչ կային իշխանին ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հաղարապետին որդւոյն հալթի, և զմիաբանական սիրոյն շաղիապ ի միասին յօդեալ պնդեալ անկակ պահէին՝ բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միոջէն առ միւսն, որպէս թէ զչարիս իրերաց առ հաղարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն

1 Հին օր.՝ առաւել.

զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով։ Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ զԸշոտոյ կորապար զատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ<sup>1</sup> հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշ խանութենէ անտի նորա։ Ի՞այց չարեացն այսորիկ հաւասար- մութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Այսկին Եպրւ- բառայ։

Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագեստեալքն<sup>2</sup> մոանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճա- ռանօք հեծեալ յընտիր երիվարս հանգերձ մերձաւոր հարա- զատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իրեւ վտաւանս երկուս. և հեծելագունդ զօ- րացն Այսկին ելին զինի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն։

Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մերժել ի դիմաց հազարապետին, դիտե- լով զոր ինչ խորհեան էր յաղագս նախարարացն ։ Այոց եկե- լոյն<sup>3</sup> առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս ն, և զմուաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԸշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ծշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ։ Ի՞այց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Երծրունոյ, և կա- լաւ զնա և եղ ի յամուրան Աւան. և հրամայեաց ։ Ասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի։

Ի՞այց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա ղայս օրի- նակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապա- ղատին ի քոյր իւր Մարիամ. վասն նորին իրաց ասեն կալաւ, զնա հածոյանայր կացուցանել իշխան Տարունոյ, որ ասի՝<sup>4</sup> ։ Այոց իշխան, որ և եղեւ իսկ։ Զի հրամայեաց Դերանիկն աղատագունդ զօրացն իւրոցն դառնալ զինի արքային տիրել

1 Յայլ օր. Հեք՝ ի մէջ.

2 Թերեւ՝ այգորեալքն.

3 Այլ օր.՝ յաղագս եկելոյն նախա-

բարացն Հայոց։

և Այլ օր.՝ որ է։

բոլոր աշխարհին հանդերձ ամրոցօքն։ Եւ գրել Պերանիկն առ որդին Հալթի հաստատել զնա իշխան իւլով հրամանաւ։ որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն։

Ի՞այց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքըն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս։

Եւ եղեւ յիլանել նախարարացն Հայոց յիրեսաց ամիրային՝ Ֆայտ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայտ և բարձրագահ, և ընդ նմա Պրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարձ իմաստութեամբ առ լրեալ հօյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսօղաց. սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան և այլն ամենայնի՝ քան զհարս և զհաւս իւր։ Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հաղարապետէն, զի յայտնի երեեալ լինէր զոր խորհերն վասն նոցա Ահմատն։ Որոց զիազող ժամ գոտեալ՝ արտաքս ելեալ ի բանակին, զերծեալք իրեւ զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղազութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից։

Օհնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Պուլին, թերեւս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցաւն՝ հասուցանել զւարիսն։ Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուազրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր։ Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել, զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտսն յապականութիւն։

Ի՞այց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել<sup>1</sup> յաւուր միում մինչ այնքան շքեղութիւն մեծարանօք յղփացեալ յօրացեալ կայր հազարապետն՝ հտ հրաման իշխանն առնն կորովի եղթօր իւրոյ

1. Ա. Ա. ՕՐ.՝ ԵԼԱՆԵԼՄ.

Երասայ Հայոց սպալապետի՝ վառել պնդակազմ պատրաս-  
տութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնա-  
րաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց, և  
երիվարաց պատրաստել ինորա չար խորհրդոցն ի բաց վա-  
զել: Խւ ի ժամու մինչ ագեռեալքն<sup>1</sup> կամկին մտանել զառա-  
ջեաւ, և նա ակն ունէր մեծ իշխանին մտանել առ նա՝ յայն-  
ժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին գկազմեալ  
գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ,  
և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր զրեալ առ Յամանիկն ի  
քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: Նորա զերկիր  
նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ ոչ ունել  
ոյժ պնդութեանն, զօրհամն<sup>2</sup> ի վերայ իւր գուշակէր եկեալ  
հասեալ: Իուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հա-  
նեալ արտաքս, քաջալերկլով<sup>3</sup> լինել առանց երկիւղի: և ելեալ  
նստաւ ի ջորւո՞ն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ  
դրան վրանին, և համին արտաքսյ զաշիկ բանակին՝ գարձու-  
ցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: Խւ մեկնեալ զզօրսն ի  
նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպագինէ  
թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ<sup>4</sup> և երիվա-  
րոք իւրեանց: Իսկ զԱհմաթ ընդ Վասպուրական աշխարհն  
անցանել<sup>5</sup> գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի,  
մինչ տանել հասուցանել զնա<sup>6</sup> ի մուտս Ասորեստանեայց Ճա-  
նապարհին:

Այլ կորոպաղատն Տարունւոյ կայր յամրոցին Աւան, որ  
ի ձեռին Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի<sup>7</sup>, և ոչ ու-  
րեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ  
և բազմաց հոգ յանձին կալեալ վլամն առն պատուականի,  
մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առ-  
նէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: Իազում անզամ  
թղթովք աղաչեալ զնա, ոչ առնոյր<sup>8</sup> յանձն. ինքն իսկ փոյթ  
յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծա-

1 Թերեւ՝ այգորեալքն:

2 Այլ օր՝ զօրահամն:

3 Այլ օր՝ քաջալերելով զնա:

4 Այլ օր՝ ակիւ:

5 Այլ օր՝ ընդ անցանելն գնալ Ասս-

պուրական աշխարհն:

6 Ցայլ օր. չիք՝ զնա:

7 Այլ օր՝ ամեարշտին Վասակայ:

8 Այլ օր՝ բաղում թղթովք աղա-

չեալ ոչ առնոյր:

նել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանդի առնն: Խողեալ այնուշենե ի խնամս արարչին, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ<sup>1</sup>: Վանզի . յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: Եյնուհետեւ սկսաւ կորապաղաան արկանել բանս խարդախութեան ի մէջ Դեկրանկին և ձասանայ, որ էր որդի քեռն Դեկրանկին, որպէս թէ ոչ ուղեղ նայի ընդ նա Դեկրանկին, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամբոցն և զաշխարհն նկրտել գրազում անգամ, ասէ, և իմ ստուգեալ զայդ ի հաւատարմաց խորհրդականացն նորա. արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այգր մեայցես, անյապաղ Հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն: Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց, և ինքն մանկաղյն տիտղք, ի ժամանակի անձիշխանութեան լիալ ամաց ծէ, զի «մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է», որպէս զրէ Առղոմն, և ելեալ ի հրապոյրա ցոփութեան ըստ խրատու առնն՝ յուսացեալ յամրոցն և ի գանձսն, և ի ցանկութիւն իշխանասիրութեան համբարձեալ զաշս՝ զօր գումարել, այրուձի կազմել մեծամեծաց աշխարհատերանց պարզես տալ, ի թիկունս և յօգնութիւն<sup>2</sup> զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. ապա Հնարաւորեալ պատիր խարէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոցն զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ հղ առաջի:

Յղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: Եւ ելեալ զնաց գհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելց կոչնականացն: Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն

1 Այլ օր՝ Քրիստոնի:

2 Այլ օր՝ յօգնականութիւն:

թանձրացաւ և սկսան ամենկըին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մհմեղինաց վառելցյ և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եղին ի բանտի ի ներկասագոյն սենեկացն. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաշողելց իրին:

Յայնժամ իսկ և իսկ փութացեալ հՀաս գուժկանն առ հոյակապն իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ դրծեցաւն: Եւ զի էր պաշարեալ նորա յայնժամ գքաղաքն Մանագիերտ Նպահունեաց աշխարհին, որ ի ձեռս Նբլբառայն էր, և առեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: Եւ Գուրգէն և Մուշեղ Ռազրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողեկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: Եւ իմաստուն և հանձարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական Ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետեւէր. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զշարեացն գործելոց զմնասս. և ըստ խնդրելոյ աղերսանաց իշխանին և մեծ հայրապետին՝ զկատարումն առին ասացեալքն. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանիկն և որդի Գրիգորի Նբլբունոյ:

Նոյնժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագիկյ Նպումրուանայ, խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտուն. բայց եթէ ստութեամբ և թէ Ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զուն ստուգեալ և ոչ գրել լաւ համարեցայ: Բայց ինքն Դերանիկն ստեաց երդման ուխտի խաղաղութեանն, զոր եղ ի մեջ իւր և ի մեջ Հասանայ, և կալեալ զնա եղ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհա-

ւատարիմն իւր պահել զնա. և զտուն և զստացուածս<sup>1</sup> հառ  
նեալ ի նմանէ՝ և կացցյց ի վերայ աշխարհին<sup>2</sup> զիւր գործակալու

Ի՞այց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի  
զԱհմաթ լի անարգանօք, և զսորհուրդն զոր խորհեալ էին  
ի վերայ ։այոց ցրել զօրհամն ի վերայ իւր համարեցաւ տե-  
սանել. և սկսաւ ոգորիկ եղջեւը ածել ի վերայ Աշոտի յայտնի  
և ոչ ի ծածուկ. և նա ձեռնամուի եղեւ զընդ նովաւ հնա-  
զանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թրդ-  
թովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԸսլըառ Վայ-  
սիկ զբոնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և  
կարաց հրապուրել. և ինքն Յամանիկն գրէր առ Աշոտ զԴե-  
րանիկէն՝ լի ապիրատութեամբ խորհել վասն Աշոտի: Եւ ա-  
րար՝ մինչ ծնդքեաց խզեաց զմիաբանութիւնն ։այոց:

Ի՞այց Դերանիկն խօսի ընդ ։ասանայ զիսաղաղութիւն,  
խոստանայ առնել զդարձ ամրոցին Աւանի և աշխարհին նո-  
րա. «միայն, ասէ, զԴագիկ Էպումբուան առ իս ածցես հնա-  
րաւորեալ վասն նորա»: զի Դագիկ անցեալ ամրանայր ի Շա-  
խուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանիկէն, ըստ զեկուց-  
մանն զոր ինչ գործեաց ։ասան առ Դերանիկն: Եսկ ։ասան  
ըստ յանձնառութեանն զնաց մեկնեցաւ ի Դերանիկէն, եմուտ  
առ Դագիկ յամուկն և զտրտունցն զԴերանիկէն հաւատար-  
մացցյց առաջի Դագիկ, որ դիւրաւ առ հաւատալն հաս-  
տատնագոյն երեւէր. և ըստ օրինակի կեղծաւորական հիւան-  
դութեանն, զոր առ Դերանիկն հնարաւորեցաւ՝ զնցին և առ  
Դագիկ գլխաւորեաց: Եւ եղեւ իբրև ննջէր Դագիկ յանհոգս  
յանկասկածս՝ հասեալ ։ասան ի գիշերի սուսերամերկ վա-  
ռեալ փոքր զնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա  
կապանօք երկաթի: Եւ փութացաւ գալ առ նա Դերանիկն  
որոյ զնացեալ առնուլ յինքն զԴագիկ և յղէ սպառազէն պատ-  
րաստութեամբ ի Վանսոսպ առ տիկինն Վասպուրական, և  
պահել ի զգուշութիւն: Եւ յիտ սակաւ աւուրց ել զնաց Դե-  
րանիկն ի Շուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական:

Եստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիք  
շարագրութեան: Յապուշ կրթին միտք իմ զմուաւ ածել

<sup>1,2</sup> Այլ օր. յաւելու առաջ նորա:

գաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. երկունք իրեւ ծննդականի ի վերայ իմ հասեալ լինին՝ մատենաւորել զայսր աղետաբեր համբաւուց<sup>1</sup> ցոյցս. ցաւ է ինձ ի վերայ բեկմանն որ ի նախատորդէն խորտակեցայ: Պղպջաձիգ արտօսր իրրեւ յեռանդնոտ<sup>2</sup> կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինեւ պարագրին ի վերայ եղելցն: Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրաննեցն ալիսն, զլեռնաձեւ կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդրվմամբ զմրիկ անձանց ի մեջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բըռնազբօսեալ ձգեն: Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ծոխարանել ծարտաօանութիւնս. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: Եյսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանդիստութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց<sup>3</sup> մտահարուստ արանց<sup>4</sup> կալուտացեալ բաւականանալ իմավ անհեղեղ պատմողական հանդիսիւ՝ զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերեւս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս:

Եւ եղեւ ի գնալ Դիրանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացն, ճանապարհ արարեալ ընդ ձորն Շնծայից, որոյ ելքն ընդ գաւառն Ներ քաղաքի: Եւ յարգելուլ զնա աղատագունդ վաշտիցն՝ չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Եշտոյ իշխանաց իշխանի: Եսին. թող տեսցուք զելս այսր համբաւոց: Եսկ նա առ չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ<sup>5</sup> ի գեօնն Փեռոտակ յանդիման քաղաքին: Եսկ քաղաքապետն որում Եպլըերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բաղրում աւուրց. և զօր գումարեալ ել ընդ առաջ նորա: Եւ կոչնականքն ընդ

1 Այլ օր՝ զայս աղետալի, և աղետաբեր համբաւոց:

2 Այլ օր՝ յեռանգոտ:

3 Այլ օր՝ զօրավարաց:

4 Այլ օր՝ անձանց:

5 Հին օր՝ օթագայեալ:

այդն ընդ առաւօտն փութացուցեալ ասեն, «եկ, տեսցուք զմի-  
մանս սիրով խազաղութեան»։ և յարգելով զնա ազտտա-  
նոյն՝ շանսայ բնաւ ումեք։ Եւ զի հուպ առ հուպ են խառն  
աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձեւ դաշտին՝ նը-  
պաստաւորէր խոշոշ վիրագին քաջարտագյնս լինել։ Յդեաց  
զկոյնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն։  
և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, «ահա մեկնեալ  
ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանգուշութեան զայ  
ընդ այս ինչ տեղի. արդ փութա պատահեաց նմա, զի մատ-  
նեաց զնա Նոտուած ի ձեռս քո։ Նոքա վազս առեալ ձեպով  
խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուժիոց։ և Դեկանիկն  
ձեմն առեալ սիդաքայլ երիվարաւն եհաս հանդէպ ճակատու  
գնդին վառեալ միայն և առանձինն ի յառուամէջ տեղւոջ։ և  
ձեղքեալ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին  
մտանել նմա ընդ մէջ զօրուն։ Եւ նոյնժամայն շուրջ փա-  
կեալ բազմութեան՝ արգելն զնա իբրև յամուրս անձաւաց,  
զվարմ մահաբեր շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատա-  
կին։ Տուհալ էր նշան քաղաքապետին, իբրև զՅուղային ի  
տերունական համբոյրն, ասէ. «յորժամ զայս նիշ համբոյր  
մատուցեալ համբուրեցից զնա՝ դուք զազդոյ վէրս ի զօրու-  
թիւն նիզակի հարջեք զնա»։

Եւ նոյնժամայն սուսերամերէք խուռն նիզակին ի վե-  
րայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձն՝  
արախողլսող արարեալ սպանին զնա, և արարին խաւար  
Վասպուրական աշխարհիս, որ կեցեալ իշխանին<sup>1</sup>։ և էր ա-  
մաց ի յորժամ մեռաւ։ Յայնժամ ողորմագին զաշն շըջըր-  
ջեալ առ քաջ նիզակակիցն իւր, թէ ով ոք արդեօք թերևս  
յօդնութիւն ինչ նմա հասանիցն։ բայց քանզի տէր մատնեաց  
զնա ի ձեռս նոցա, որպէս ասաց «Դաւիթ» և եղեւ ահ տեսոն  
ի վերայ ամենեցուն. այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ  
փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց։ Յայց մի-  
այն զնահապետն Նմատունեաց զԵսպուսակր ձերբակալ առին  
գնացին ի քաղաքն, բարձեալ և զդին սպանելցն տարան ընդ  
իւրեանս ի պարծանս իւրեանց։

<sup>1</sup> Ա. Օ. ՕՐ. ԿԵՑԵԱԼ ՅԻՇԽԱՆԻՆ:

Յիշեցեալ լինին աստանօր սողոմնեան բանագործութիւնքն զկատարումն առեալ զի ասէ, «որ աներկիւղն է՝ անկանի յորոզայթս և ի վեհս, և ի տեղես ուր<sup>1</sup> ոչ եղեցի այցելութիւն յաւիտենից»: Եւ առ վատացի քաջութեան աղազս զգէմ տանին բերեալ ասէ, «վատ երկիւղ ապրեցուցանէ»: Իսկ եթէ վատացն՝ արութիւն զերկիւղն համարելի է, որչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: Որպէս և Դաւիթ ասէ, «պատրաստեցայ և ոչ խռովեցայ»: և այլ ոմն յարտաքին իմասնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ<sup>2</sup>: Այլ ծմարտագոյնք են Առզմնեանքն, զի ասէ, «վայ միումն յորժամ<sup>3</sup> զլորիցէ, ո՞յ յարուցանիցէ զնա»: և եթէ վաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն զլորիցի ոք՝ կանգնեսցի:

Եւ ինդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւիթի նորուն գաւառի և եղին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց<sup>4</sup> առ հարս իւր յԱղբատ գաւառի ի վանս սուրբ Խաչին: Եւ ժողովեալ աշխարհն Վասպուրական՝ զամիսս ժարարին կոծ մեծ ի վերայ նորա:

Եկն այնուհետև Հապուհ որդի թագաւորին Աշոտի և ետ զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդեց Դերանկին, փոխանակ հօր իւրոյ: Եւ զԴագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին: Աշոտ էր ն ամաց, յորժամ մեռաւ Դերանկին, Դագիկ էր է ամաց, Դուրգէն է ամաց: Եւ թէպէտ տածէր և ինամէր Դագիկ աշխարհիս՝ այլ ոչ սւրախ լինէին ի նա ազատատերանցն զրոխք, և կացին ի տարակուսի: Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Դագիկ՝ տեղի տայրը բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստու-

1 Այլ օր՝ որ:

2 Այլ օր՝ ընդ աներկիւղի ի ճանապարհ մի երթայցեալ:

3 Այլ օր՝ ծմարտագոյնք Սողոմո-

նեանքն, զի վահ միոյն ի ճանապարհի՝ զի եթէ:

4 Այլ օր՝ հանգոյց զնա:

թեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա:

Օկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Նայոց միսիթարել զդուսոր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ:

Իայց Տիկինն Առփի կեցեալ<sup>1</sup> յետ մահու Դիերանկին զտարի մի և զամիսս չ յաւելաւ առ հարս իւր. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին:

Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուգգէն կանոնեցին զշիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին, և ետուն ի սուրբ եկեղեցին դ ագարակս, զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակիրտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԻ՞երկրի և այլ բաղում տեղիս, զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահու<sup>2</sup> հօր և մօր իւրիանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. և են հրամանք սոցա<sup>3</sup> իրեւ զվէմ հաստատուն. և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն:

## ԳԼՈՒԽ ԽԵ.

Փոխանակ Աշոտի նահաւորիել Աժքարայ:

Բնդ ժամանակսն ընդ այնոսիկ Աշոտ թագաւորն Նայոց փոփի յաշխարհէս ի բարիոք ծերութեան, փափկացեալ և յղիացեալ խրախութեամբ, ձեռն նորա յամենիսին և ամենեցուն ձեռք ի նա, քաջավայելլագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, և ամ յիշխանական ճոխու-

<sup>1</sup> Այլ օր՝ կացեալ.

<sup>2</sup> Այլ օր՝ մահուան:

<sup>3</sup> Այլ օր՝ նոցա:

թեան, իւ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, դ ամ ի թագակապ շքեղութեանն. և մեռաւ յլն թուականութեանն Նայոց, և ի ժե ամի հայրապետութեանն Գևորգեայ Նայոց կաթողիկոսի: Խւ փոխանակ նորա թագաւորէ Ամբատ որդի Եշտի, այլ քաջայայտ և հանձնարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկնաւս համառօտարար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Եստուծոյ և ընտիր մարդկան:

### ԳԼՈՒԽ ԴՅ.

Առջեանոնք ժաղագին Պատեհի չ ասաբին շարժմանէն:

Դ սորա յերտորդ ամի թագաւորութեանն ի վերայ Նայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց չնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոխակս<sup>1</sup> անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշեռ անբաւութիւնն տատանեալ մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Եպտաշասու, որ Բլուրն նորուն ասի, յորում շահաստանն Պուխն, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեառիկ վածառականութեամբ և աղգի աղգի պղծութեամբ յափրացեալ յղիացեալ՝ զնա ի հիմնաց տապալեալ բերանաբաց դժոխաբար լայնեալ զքերան իւր՝ յոդունց քան թէ սակաւուց արար վեժել յանդունդս, որոց ոմանք և տունք նոցա գերեզմանք նոցին եղեն: Պունակ Պորխային բանակին յանդնդաքակ տունսն զբնակութիւնն արարին, անխայեալ ի նինուէականն ստրծացեալ նախ անդ ոչ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոցն Պունայ: Նա և տեղիք սրբութեանց տունք աղօ-

<sup>1</sup> Այլ օր՝ է կոհակու:

թիցն զշարժմանն կիրս կրեալ, պատառմամբ որմաշարժ լինելով, որպէս յայնժամ ի մահուն Ողիայ արքայի, յաւուրս Խսայեայ մարդարէի՝ ի ձայնէ սրովէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն Որպէս և առ Օաքարիայիւ մարդարէիւ շարժեալ մինչ ի լեառն Ճիթենեաց: Խւափի լինել թիւ մարդկանն ապահանհլոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան հու: Եյս շարժումն սաստկագոյն քան որ եղել յամն Օաքարիայի Նայոց կաթողիկոսի, յետ է ամի գերութեանն Նայոց:

Ենդ հանդիպեալ լինելի և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ոշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայովքն<sup>1</sup> զերծանել իրեւ յայնժամ առղոթաւ ի լեառն: Եւ նորայքն ոմանք ի նմին շարժմանէ գերեզմանացան ի նմին:

Իայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմաննն<sup>2</sup> առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զարդահամեանն վաղնջուց աղաջանն ի կործանմանն Առղովմայ յառաջարերեալ մարդասիրին Աստուծոյ. և թողեալ զընակեն ի Դուխին՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելոյ տեառն Ներսիսի Նրկրորդի Նայոց կաթողիկոսի:

Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարն զՊարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ զնացին: Եւ ի նմին ամի մեռաւ արքայն իշխան Տարունոյ, և բռնազբահալ զաշխարհն Ահմաթ որդի Յիսէի Ըեհայ յինքն նուածել. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այլ քաջ և երեւելի և քաջայայտ ի մէջ Նայաստանեայց:

Իայց որդիին Դերանկին, Եշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ աճմանն չափ առող և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին<sup>3</sup>, նա և զմտացն ոչ ստկաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողըոշմամբ կատարելագործէին. և զուարծ և զուարթ իրա-

1 Այլ օր՝ իւրայնովքն:

2 Այլ օր՝ կործանումն:

3 Յօրինական՝ առենին:

Եռութեամբ յուսակցէին առ տիրական նախախնամօղ հոգաբարձութիւն շինութեան աշխարհիս, և զսուգ և զտրտմութիւն, զոր կրէին աշխարհս յաղագս մահուանն Պահանկին՝ յուրախութիւն և խնդութիւն տրամադրէին. և առ եղբայրականն զհնազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զՃոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով, միայն ըստ ամացն ծննդաբանութեան հաւատացին Աշոտի զիշխանականն տալ պատուադրութիւն, և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի<sup>1</sup>, որպէս ասացաք յառաջագոյն՝ զգահն նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցք աշխարհիս, մինչեւ յամուրն Նախճաւանոււ: Խսկ Գագիկ զկողմանս Ուշտունեաց այլովք մօտակացիւք գաւառոք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Առկաց: Խւ Գուրգէն զկողմանս արեւելից, մելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարակահայք մինչեւ ի մուտս Առրդաց, և ուր և ըստ այնմ իցէ Հնար ածել զձեռամբ: Խւ այսոքիկ այսպէս:

Խսկ Ապումիուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն դրաւել, դհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մոտացն ձեւալ, զամուրն Նիւնաց ի հառունաւան գաւառի, և զամուրն Առոտոր ի ձորն Շնձայից, զամուրն Աւանի ի փորն Լմբայ: Խւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարզես և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և ինքն<sup>2</sup> յանդուցանել ախորժելով վարէր ընդ նոսաւ Օորոյ իմացմանց հանդամանսն իմացեալ ազատացն Ասսպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թեւակոխեն Գագիկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խոռվասէր հանդարտութեան. ոմանք զայս ինչ, ոմանք զայն ինչ տանէին ածէին խորհրդածութիւն: Իայց բազմաց այլ իմացմունքն յայսոսիկ առ վայր մի առին զկատարումն:

Որդին Ապուսեմի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի զլուկս եհան՝ ձեռնամուխ ախոր-

1 ԱՅԼ օր՝ ի ձեռաւ Աշոտի:

2 Թերեւս՝ յինքն:

ժեաց լինել ի վերայ Նայոց, զհարստահարութիւնն բացաձգել և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յածախէր, յուլովագըն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. որք ծանուցեալ զբունանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմուաւ առեալ և զիսառն ընդ աշխարհիս զղրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեք՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան:

Եւ ելեալ Աշոտ զհետ կոչնականաց Աւշին՝ գնաց աներկիւղ համարձակութեամբ: Իսկ թագաւորն Նայոց Ամբատ անպատճան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք գրդուիցին յիշխանացն զնորայն հետեւելու զերութիւն, և յարգելուն զԱշոտ՝ չանսաց ումեք: Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Ամբատ՝ գրէ առ Գոռլրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. վանութեամբ ծշմարտութեամբ աշխարհդ Վասպուբական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: Արդ ելք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն: Որոյ հրամանն փութով զկատարումն առնոյր<sup>1</sup> ըստ ցանկութեան իշխանասիրութեան նոցաւ և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յմրկուս բաժինս հատին զաշխարհս:

Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի, և զի ի գնալ Աշոտի թողեալ էր անդ զտիկինն Վասպուբական զԱնտայ, և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թաղէոսի, որոց Ներեփայ որդիք անուանէին, ի Անկէացի տոհմէ, քաջամարտիկը և հմուտք պատերազմողական յարդարմանց՝ և ետուն պատերազմ անդ զաւուքս լ և ոչ ինչ կարացին ստնանել այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերգին, մանաւանդ Զրոյն սակաւաւորութիւն. որք յակամայ կամ

<sup>1</sup> Այլ օր՝ զկատարութեանոյր փութանակի:

լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամնւրն ի Գագիկ:

Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան եհաս լուր գործոյն առ Եւշն և առ իշխանն Աշոտ, եթէ պլոդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. արդ փութա անյապաղ զմարել զբոնահարեալ գործ միաբանութեան նոցա քակտերը: Որոյ ոչ զպատաղումն բերելով գայ զօրու Եւշնի հասանէ ի վերայ նոցա: Օորոց տեղի տուեալ գնացին յամուրս իւրեանց, և զօրացն Վասպուրականի դարձեալ գինի Եշոտի:

Ի՞այց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զ՛Ստանն Ոշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: Ի՞այց Եպումրուան պատճառելով Եշոտի՝ ասէ. «վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: Երդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն, զպատրուակ կեղծաւորութեան ի միջոյ երկոցունց ի բաց պարուրեալ»: Ի՞այց քաղցրաբարոյ իշխանն Եշոտ, հեզն և ամենայն բարեզք յղիացեալն, տեղի ետ ասացելոյն: Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Առւղան, ուր Գուրգէն բանակ արարեալ էր ի Կարկինեանս տեղուծ բազմաձեռն զօրու. խօսի Գուրգէն ընդ Եշոտի յայտնապէս զոր խորհէլն. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: Ի՞այց Եշոտ թէպէտ և նուազագոյն զօրու ընդ իւր լինելով, ոչ թիկն ածեալ<sup>1</sup> վերջացաւ առ պատերազմն յառաջանալ: Յորոց միջի կացեալ Եպումրուան համոզեալ նոցա ցածոյց զմակատ առ ձակատ վառեալ պատերազմն, և Գուրգէն դարձեալ գնաց յաշխարհն իւր յամուրն Կանգուարը: Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ իրոխտացելոյ զանձն ամբերթեալ եղոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրազուխն ձայոց մեծաց:

Ի՞այց Եպումրուան երկնէր գայր զիշխանափրականն ծընանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: Եւ քանզի էին

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ ոչ թիկնացեալ

Երկրին սոքա անքակ անխղելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին, յեցեալ յուսացեալ առ միմեանս, իբրե զքաղաք ամուր իբրե զպարիսապ պղնձի՝ ոչ կատարելանայր առ աւարտումն հասանել խորհրդոյն. և բազմածուփ ալեացն ներքսագոյն շտեմարանեալ ցանկասիրութեանն՝ անդուլ<sup>1</sup> առ նէր զնորայն իմացմունս. ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. որոյ<sup>2</sup> դիպոլ ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. զԱշոտ տարեալ յանկասկածելին Նկան, զԳագիկ յամուրն Աւեան, զԳուրգին ի Կոտորն բերդ: Եւ դարձեալ զԱւեան բերդ տայ ի ձեռս Հասանայ որդոյ Վասակայ ամրարշտի:

Օնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի՛ մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Աանգուար, գտանել զելս իրացն, Յիսէ Տրունիաց<sup>3</sup> տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Երելինից տէր, Թաղէոս Ակէացի Ծերեփայ որդի, և այլք ընդ նոսա: Աոքա ամեներին աղիսիւ և ընտանեօք իւրեանց թողին զտունս բնակութեան իւրեանց և զհայլինիս իւրեանց, ի վերայ մոերմութեամբ հըպատակութեան որդուոցն Դերանկին. լաւ համարեցան զկեանս պանդիստութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս արգելեալս ի բանդի զորդիս իշխանին իւրեանց, զեշխան աշխարհիս. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնագանդողաց և հնագանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին:

Անդանօր եկեալ Վապուհ եղբայր թագաւորին, և կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. մանաւանդ զի փիսայացուցեալ էր Վապհոյ զԳագիկ ի դուստր իւլ. բայց Ատոմ յամր<sup>4</sup> առ փոյթն լինելով վասն թագաւորին

1 Ա.ՅԼ օր՝ անդոցւ

2 Հին օր՝ որոց:

3 Ա.ՅԼ օր՝ տէրունեաց:

4 Ա.ՅԼ օր՝ համբ:

ակնածութեան։ Եւ կեալ ազատացն Վասպուրականի դէմ  
եղեալ տարագէմ գնացին յԱմրացւոց<sup>1</sup> քաղաքն առ Եհմաթ  
որդի Յիսէի Շեհայ, որ մեծաւ ախորժանօք յանդուցանէ<sup>2</sup>  
առ ինքն զնոսա իրիև արս պատուաւորս և քաջամարտիկս  
զբաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զա-  
նուն յազթութեան ստացեալ ունէին։ Իսկ յառաջադոյն ե-  
նա զիտէր ի համբաւուց, և յօժարագոյնս եղեւ ընդունել զնո-  
սա. որ և զկողմանս Տարունոյ յինքն կորզեալ թիկնածէր  
բնաբանապէս ամիրայապետել ամենայն հայոց։ Ո՞ի և տուն  
հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն<sup>3</sup>։ Եւ զայսոսիկ  
Եհմաթայ յինքն առեալ արկանէր ի կամն ևն յառաջանալ,  
զի և զնախարաբս հայոց զբաւեացէ մեծապատիւ սիրով, ի  
ձեռն այնու հաստատագոյնս լինել ի կասկածաւոր պատգա-  
մացն, զոր հանապազ յղէր առ նա Ամբատ թագաւորն հայոց։

### ԳԼՈՒԽ ԴԳ.

Վասն զօրաժողովն լինելոյ Ամբարայ նադասորին հայոց է մերայ  
Եհմաթայ Եմրացոյն, Վրաց և Եղուանէց և բոլոր հայոց իշ-  
խանօնն, և պարսպնին Ամբարայ յԵհմաթայ է առանձն Եղինեաց  
է մերայ գեւորյան կեռուի կոչեցեալ որ իշանէ է ծովը Բաշունեաց։

Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Եհմաթայ՝  
յինքն զբաւել զաշխարհն Տարունոյ, հանեալ ի հայոց պե-  
տութենէ։ Գրէ բազում անգամ Ամբատ առ Եհմատ՝ թողուլ  
անդրէն զաշխարհն, տալ ի ձեռս Եշոտի որդուոյ իշխանին  
Դաւթայ. և խոստանայր նմա զհազարապետութիւնն հայոց  
յարգունուսա հրամանէ հնազանդութեամբ հայոց։ Ի՞ոյց  
Եհմատ ոչ խօնարհեալ ունին զնել ասացելոյն, արհամար-  
հեալ զառաքեցելովքն։

Յայնժամ թագաւորն զեսպանս արաբեալ յամենայն սահ-

1 Այլ օր՝ Համբացոց։

2 Այլ օր՝ հանդուցանէ։

3 Այլ օր՝ անուանեալ զնա ասէին  
առաջին զՏարօն։

մանս տէրտթեանն Նայոց, Վարաց և Աղուանից, և առ քառ ղաքացիսն և հազարապիտու և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զհնաղանդութեանն հարկ հարկանէին: Եւ եկին հասին<sup>1</sup> առ նա Նարներսէհ իշխանն Վարաց: Եւ որպէս ասեն՝ եղեւ թիւ զօրուն գումարելոյ իրրեւ ծառաց. և գնացեալ ընդ եզր ծովուն Իզնունեաց, ընդ կողմն Նապահունեաց՝ և բանակեցաւ<sup>2</sup> յափն գետոյն, որ իջանէ յԵղձնեաց խոխոմացն: Օսրոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարիալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԴիթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: Եւ իսկոյն անյապակ յական քթթել սպառազինեալ այրուճի պրնդակազմ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ զաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ ախոյանայարձակ լինելով քաջացն Վասպուրականի, զորոց անուանքն վերագոյն անդ յիշեցաք, և փակեցին զբանակն և դարձուցին զզօրագլուխոն, և իրրեւ հողմ զպրակս եղեգան տատանեալ սասանեալ խոռվեցուցին զբազմութիւն զօրացն:

Դսկ թագաւորն իրրեւ գիտաց զընդխառնել ընդ միմեանս զօրացն, կամեցաւ միթէ արդիօք կարացէ դազարեցուցանել զմաքառումն. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզագէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ և անդ բազում արութիւնն ահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ձանապարհն Նողցայ<sup>3</sup>. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհիտեակազօք գրոխսն և զգուեահսն որք ընդ նոսա. և որպէս ասեն՝ աւելի քան Եւ լեալ թիւ սպանելոցն. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գաղանաց և ի թռչնոց: Ենկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Նայկաղնեայ Գեղաքունեաց իշխան, որ Առուփանայ որդին ձանաչէր. և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի:

<sup>1</sup> Այլ օր՝ և եկն եհաս:

<sup>2</sup> Այլ օր՝ բնակեցաւ:

<sup>3</sup> Այլ օր՝ հաղցար:

զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եղ ի գե-  
քեզմանի:

### ԳԼՈՒԽ ԵՎ.

Վասն մահուանն Ապո-մըսանայ:<sup>1</sup>

Իսյց Ապումբուան զՊագիկ որդի Դերանկին պահէր  
քնդարձակի, հանեալ ի կապանաց բանտին: Նորա խորհեալ  
հաստատնագյնս վասն Ապումբուանայ՝ քաջասրտագյնս լինել  
ի սպանումն. և որք ի տանէն Եմատունեաց՝ Շապուհ և  
Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի  
և այլ ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խոր-  
հրդածեալ<sup>2</sup> ընդ Պագկայ առ ի սպանումն Ապումբուանայ,  
որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Եշոտի և Պուր-  
գինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւր-  
եանն. իսկ իբրև եկն Ապումբուան զհետ փախստէիցն ի  
Վանտոսպ զինի թագաւորին՝ և խորհուրդն Պագկայ հաս-  
տատնագյնք զկատարումն առին:

Իբրև հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ՝  
Ապումբուան ելեալ ի ձիբնթացիկ սսպարէզն զգնայր. և ա-  
զատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին  
գնա, և զգլուխ նորա հատեալ առ բերդայինն յղէին: Եւ հա-  
նեալ զԵշոտ և զՊուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ  
մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յան-  
կասկածս այնուհետեւ: Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն  
Սիդայի կնոջն Եշոտի և եղ ի զերեզմանի, ի տեղւոջն որում  
Զորոյ վանքն ասեն, ի վերայ գեադջն Եհաւականից:

Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ  
գցյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, արժանապէս այն  
գործ նոյն գործեցաւ:

Իբրև եհաս թագաւորն յաշխարհն իւր՝ ետ բերել պար-  
գևս և պատիւս Եշոտի ըստ իշխանական յօրինուածի, և

<sup>1</sup> Այլ օր յաւելու ի Պագկայ:

<sup>2</sup> Այլ օր՝ խորհրդակցեալ:

զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց,  
ըստ օրինի թագաւորացն Յունայ՝ տալ առաջի նորա նշա-  
նակս խաչաղբօշտ: Խւ Գուրզինի նորին եղքօրն զպատիւ  
մարդապանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կար-  
գի բարձարեկանութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մե-  
ծին Տրդատայ թագաւորի:

### ԳԼՈՒԽԻ ԽԵ.

Ենէ սպակ իւղաւորական ակրով նիւեր լորի Աշուն է վերայ  
Հայոց և իշխանաց նոցա:

Բայց Աւշին որգի Ապուսկմի, քանզի էր այր խռովասէր,  
ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդ-  
կան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. զա-  
ւերումն աշխարհի քան զշինութիւն կարեոր համարէր, և  
ոգորել զբնաւ<sup>1</sup> աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհան-  
գիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Ասսպուրական  
աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատա-  
րելանալ առ սէր. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ  
ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասա-  
ւորութիւնս, զոր և արարին իսկ Աշուտ և Գագիկ և Գուր-  
գէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս,  
և երթային մի մի նոյնապէս և դառնային:

Իսկ ի միում յաւուրս անցեալ զնացեալ Գուրզէն՝ հան-  
դիպի նմա ի քաղաքին Պարտաւ, և արարեալ անդ յոլովա-  
գոյն աւուրս իբրև տալոյ միոյ. բարիատեացն և չարասէրն  
Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրզինի հատուցանել<sup>2</sup> չարիս  
մեծամեծս, արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահա-  
բերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ  
գործավարացն, ըստ պարակայնոցն հատուցմանց հատուցանել  
նոցա: Իրրև զեկուցաւ նմա յումանց զոր ինչ խորհի վտան նո-

1 Թերևս՝ ընդ բնաւ Տեռ և զբառդ  
«զիշխանութիւն» յէջ 205, տող 28:

2 Այլ օր՝ հատուցանել նմա:

բա Եւշին, մանաւանդ թէ նախախնամօղ և պահպանական աջն. Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկասարեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԵսոսուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ<sup>1</sup> զնա իժանեաց գաղանին՝ ելիալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն, և ընդ նմա Հապուհ յԱմատունի տոհմէ, այն որ գործակիցն եղեւ Գագկայ առ սպանումն<sup>2</sup> Եպումրուանայ, զո՞ր վերագոյնն յիշեցաք, և եկին մտին յաշխարհն իւրեանց: Խւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցին:

Իսկ Եւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհրդաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամն չարագոյնս: Ելեալ խրոխիտ և դառնաշունչ փոնկալով մոմուալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Համիրամայ ի Վանտոսպ: Իսկ իշխանն Եշտ և եղբալք իւր խոյս տուեալ զկողմամբքն Փոքր Եղբագոյ, մերձ առ յամուրսն Զողմար և Արինգ: Խւ Եւշնի հաւատացեալ զաշխարհս ծառայի ումմամն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մալիմանակ գեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ և տարածեալ սփռեալ գործավարս յամենայն երկիրս, բայց միայն յամուրսն ոչ կարացին լինել գամագիտ: Խւ այնպէս յանհոգս աներկիւղս հարկապահանջ գործակալօք վարէին: Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ զնէր ի Նախաւան քաղաքէ: անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաճեռն զրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լըթեատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր<sup>3</sup> յոլովս քան թէ սակաւս: Իայց քանզի խոնջեալ երիվարացն ի յերկայնագոյն ընթացիցն և վասն թանձրամած ձեսնն<sup>4</sup> կուտակմանց պակասեալ ուժոյ երիվարացն՝ և թշնամիքն հանգըստեամբ ելեալ ի վերայ նոցա ի լիճն աղեղանց և նիզակաց ձերբակալ արարեալ զոմանս, և զկէն մահու դատապարտեալ,

1 Այլ օր՝ շուտով թափեալ:

2 Այլ օր՝ ի սպանումն:

3 Այլ օր՝ ի սուր:

4 Այլ օր՝ ձեսնց:

զգութիս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին։ Իսկ զձերբակալմն յղեցին առ Եւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողիսող միջակտուր արարեալ։ Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մեջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկմն կացուցանելով։ Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունաց խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Եւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. զսաւազերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Եշոտի և գուստը Եպումբուանայ՝ զերծին զնա ի սրբյն Եւշնի

### ԳԼՈՒԽ ԽՕ.

ԵՐԵԿ ՇՐՋԵՆ ԱԱՊՐՈ-ԱԺ-ԱԱՍԱՎՐ Է-ԱՐԴ-Ե-Ա-Յ-Ն ԱԱՊԱԽԵԿԱ- Ա-Ն-Յ-Ն և  
համեմէն զըդ է-ը:

Բայց յով ոք կամ որ աշխարհ, զոր ոչ կործանեաց Եւշին պէսպէս լիկանօք հիմի ասպատակաւ, աւարառու յափրշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ։ Վանզի այնչափ թանձացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կինդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամսութիւնն, զմարմինս մեռելոց առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ։ Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ «վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունիլ ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի մատս անարգութեան գործել զանարժանու»։ Զոր և մարգարին առ գերութեամբն Բարելացւոց ասէ, վերիցին հալք զորդիս, և որդիք զհարս», որպէս և առ Վեպիանոսիւն եղեւ։ Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և ե-

1 ԵՅԼ օր.՝ ունել զԱստուած ի գիտութիւն։

կաց բնդղէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: Օք մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. Յովսէփ, անուն ի Յունաց ազգականութիւնէ ի ծառայութիւն հասեալ Աւշնի, ներքինի, թողեալ զքրիստոսական պաշտօնն, մոլորութեանն Մահումաթայ հաւատացեալ<sup>1</sup>, այր գաղանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն արեան մարդկան, այլ զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ Այլ որ փոփոխէ զսիրտս իշխանաց նախախնամօղն Աստուած՝ քակիալ բաժանեաց Ճեղքեաց զՅովսէփ ի յԱւշնէ. և թողեալ զքաղաքն Պարտաւ՝ առնու զզօրս իւր երագապէս անցեալ գնացեալ ի յաշխարհն Աստրեատանի: Օոր լուեալ<sup>2</sup> Աւշնի ի կոր կործանեցաւ. և փութացաւ գրեաց առ Ասփի որ ի Վանտոսապ նստեալ և Ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապազանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ, հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Ներովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղնայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտըրուրումն առնցըր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. և նախ յառաջ Ասփին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական գեղն արբեալ<sup>3</sup>, անբուժելի կեղով վառեալ յոսկը և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնցըր ի կենացն: Նոյնպէս և ամենայն զօլք և զօրագլուխք հանդերձ բազմակյոտ կարաւանին գկորստեան ընկալան զվճիռ. նաև երամակ ձիոցն և իշոցն և ուղտուցն նովին կեղով վառեալ սատակեցն: Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական<sup>4</sup> կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորըս-

1 Յօրինակն՝ հաւատեւ:

2 Յօրինակն՝ լուաւ:

3 Յայլ օր՝ չիք՝ Սափին. և՝ զսա-

տակչական գեղն արբեալ:

4 Այլ օր՝ փորձադյն:

տական ծանապարհն. և դժոխք ի նելքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով:

Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոփունս, և գոհացեալ զգթութեանցն Խսուուծոյ. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ով ոք էր, և որպիսի, և որպէս կորհաւ՝ ասեն, աղիարդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. իթէ Ռոպէս իջին ի դժոխս փառք նորառ:

Գործեցաւ այս յիշ թուականութեանս Հայոց, յորում ամի և տէր Գորդ Հայոց կաթողիկոս փոխեցաւ: Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, եղեալ ի կղզյն Գեղաքունի լճէն, զՅօհաննու Խարապետին զվարուցն բերել<sup>1</sup> զօրինակ. և թէ ոչ այպանել ախորժէք զբանիւք իմովք՝ ոչ ընդհատ կամ պախարակելի թուիցի կոչել զնա<sup>2</sup> նովիմբ անուամբ. այլ Մկրտչն հրամայի՝ մի ըմակել գինի և օդի. սա ոչ միայն զինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խատավայել բանջարովք առ քաղցն վայելելով: Եյլ և ուսումնական բանդիտութեանն քաջահմտագոյն, անընչասիրութեամբն մեռելագոյն. առատաձեռնութեամբն կինդանագոյն: Ու կեցեալ ամիսս ը կամ թէ Ե յաթոռ հայրապետականին՝ փոխի յաթոռ առաքելական պատուադրութեանն ի փրկչէն մերմէ խոստաբանեալսն:

Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնամիրութեանն վարժիւք ոռոգացեալ այլ քաղցրաբարոյ և հեղահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեղոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Գրիստոսէ:

1 Եյլ օր՝ բերեալ

2 Եյլ օր՝ զսա:

## ԳԼՈՒԽ ԵՎ.

**Աւան ստանէլէացն որ ցուցաւ յ՛Ասդանն Աշխառնէաց յահն զօքա-  
վարո-նեանն Գագիկ:**

Յանձն առի պատմել ստուգապէս զպանչելագործ յայտ-  
նութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագ-  
կայ. և ապաշտանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ<sup>1</sup> ի վերայ  
իմ. զոր արդ այժմ համառօտարար հատուցից զհարկ պար-  
տեաց շարագրութեանս:

Նշանն քրիստոսեան քառածրագիծ փայտիւ արուեստա-  
գործեալ ճարտարապետի ումեմն հիւնեալ և արծաթագործ  
եօթնփորձեան հրաբորոք ճարտարապետն ի բովս հալոցացն  
զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինաւն զփայտե-  
ղէնն պատեալ արտաքուստ, որգունակ քաւութիւնն և այլ  
կահ սպասու խորանին ի Մովսիսէ օրինադրեալ ի ձեռն ճար-  
տարապետացն Խղիար և Ծիսելիկլ խորանայարդարք: Նոր  
ոմն Նաբուզարդան կամ Օամիրի յայտնեալ ի յաղանդոյն  
Նեսորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ<sup>2</sup>, զագա-  
հութեանն շարիս ախտացեալ սպրիդեալ եմուտ ընդ մութ  
գիշերին յամիական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կո-  
չարանին օթագացեալ. մինչ քաղցրատննչ քունն ի վերայ հա-  
սանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամ-  
բարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ  
զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս  
ելեալ որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յար-  
ձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղի-  
նին. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր  
լերինն թաւալագլոր խաղաղացուցեալ հարուստ ձկմամբ մինչ  
ի գաշտավայր տեղին ուր այգեստանքն: Իբրև ստուգեցաւ որ  
ինչ եղիան էր՝ փութացան ինդրիկ ի քաղաքին և ի կիրճն  
ճանապարհին, յոր կողմ և ածապարեաց ոք, մինչ անցեալ գը-

<sup>1</sup> Ա.ՅԼ օր.՝ յոլովեալ:

<sup>2</sup> Ա.ՅԼ օր.՝ վատամիրհ:

տին դհարեալն դիւժ չարի, զե. կայր դեռ կիսամեռ։ Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զխաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գորոմանէ այսահարին։ Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբնկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելքագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի։ Իսկ թշուառականն զսատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանգերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս։

Իայ մե՛ ինձ բասրանս դիցես՝ զօրինականին առ աւեաարանականս զնել համեմատութիւն, զոր և ոչ ես անգիտանամ զմեծն և զփոքրն, զօրինակն և զծշմարտութիւնն Որպէս Պօղոս ուսուցանէ. «արհամարհեալ, ասէ, ուրուք զօրէնս Մավէսի՝ մեռանէր, ի բերանոյ է կամ ՞ վկայիւք<sup>1</sup>. քանի սաստկագոյն պատժոց համարիւք զպն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհալո, և որ ի կարգին է։

### ԳԼՈՒԽ ԴԲ.

Վասն ապարամբութեան Տաճկացն որ Կայսին կոյն և էշիանին Ալնեաց է Աստառոցն Ամբարայ, և դաշյեալ երեցունց<sup>2</sup> հնապահութեան։

Ընդ այն ժամանակս զօրաժողով եղեւ թագաւորման այոց Ամբատ ի վերայ Եպահունեաց աշխարհին։ Օք որդիքն Եպդրուհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պիտութենէ թագաւորին, տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր։ Եւ գլութէ ամենայն իշխանք այոց, Վշաց և Ա-

<sup>1</sup> Այլ օր.՝ Վկայեց մեռանէր։

<sup>2</sup> Այլ օր.՝ Երկողունց։

ղուանից եկեալ էին ընդ զօրս ։ այսոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. էր ընդ իշխանն և մեծ իշխանն Վասպուրական Եշոտ, որդի Գրեանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Ենձաւացեաց: Վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Ենձաւացեաց նուածեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն: Խւ անցեալ բանակեալ էին զօրքն ։ այսոց ի դաշտին Օշական ի Մանազաւեան նահանգին:

Խսկ որ տիրէր աշխարհին Եպահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, ուրք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխազազութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: Խւ Կայսիկքն և ուրք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս զրոյէին, և երազապէս աճապարեալ հասին հանդէպ զօրուն ։ այսոց մինչ նոքայանհոգս յապահովս բնակէին՝ նոքա զռազմն կազմեալ վառեցին զճակատն. և թագաւորն յանկասկածս լինելով փութացան ելին ի բանակէն փախստեայ հարուստ ասպարիսօք:

Խսկ իշխանն Եշոտ և իշխանն Մոկաց և զօրքն Ենձաւացեաց քաջագոյնս արիացան կացին յոտնկայի. և վառեալ ի զէն և յասպագէն՝ արձանացան իբրև զմի այր, և յանդուզն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուրք քաջքն այլազգեացն Ճակատէին ընդ աջաթե կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. և այն ինչ ի քթթել ականն դարձուցին զզաշիկն<sup>1</sup>, և զհետ մտեալ փախրստէիցն սուր ի գործ արկեալ՝ դիթաւալ կուտակս կուտակս արկանէին. և մնացեալքն փախստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք: Խւ գոյժն աւետարեր եհաս զինի թագաւորին, և դարձան եկին պաշտել զքաղաքն: Խսկ ուրք էին արգելեալք ի քաղաքն՝ աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Եշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխազազութիւն. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Եշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխազազութիւն.

<sup>1</sup> Այլ օր՝ զոշիկն:

զոր ոչ անունկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնլով հարկս և պատանդս, և զքերդն Երիկաւ Հաղացովնի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. նոցա հանեալ էր ի Պինունի ազգէն, ի զարմէ Մեժեմի Գնունոյ, ի վասպուրական բաժնէ, նաև Իներկի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն, և ինքեանք դառնային մեծաւ յաղթութեամբ անպայման խնդութեամբ: Պործեցաւ այս յժա թուականութեանս Հայոց և ի դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի:

Եւ եղե ի գալ միւսոյ տարոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի Հնազանդութինէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թեակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. և ինքն ժողովեալ զզօրս իւր ժու արանց զօրաւորաց՝ եկն եմուտ յամուրսն Վայոց ձորոյ: Յայնժամ թագաւորն փութացոյց վեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Եշոտ, զի անյապաղ երազութեամբ հասցէ առ նա: Եւ էր զրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Եշոտ ի զօրսն Եպահունեաց զյաղթանակ պատերազմին և զհցյակապ անուն ստանալոյն՝ ասէ, « այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմք և ելքն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես՝ զդեգերանո». և խոստանայր տալ նմա քաղաքս, գաւառս, զեօզս և ագարակս: Քանզի և զստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Պայսկի<sup>2</sup>: Եւ ինքն թագաւորն ժողովեալ զոր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս զետոյն: Երասխայ, և բանակեցան ի տեղւոչն:

Խսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զելծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: Եւ այգուն անցեալ ընդ զետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զդետովն: Եւ իշխանն Եշոտ զրէ առ իշխանն Սմբատ, անօգուտ զապստամբութիւնն համարելով. համոզեաց ի մէջ երկոցունց և զիսաւորեաց զիս-

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ Լքիցես:

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ Կայսեկի:

զաղութիւն առնոսա, մինչ գալ Ասհակայ եղբօր իշխանին Սիւնիաց, ընդ իւր բերելով զհարկսն Եւ դառնայ մեծաւ պարզեգք և անհամեմատ ինդութեամբ:

### ԳԼՈՒԽ ԴՅԱ.

Վասն ճակուն Աշոտի Վաստիրական իշխանին է Նախնառան ժաղացի:

Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զձառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: Թափիծք անզրաւք, քան թէ իրնդութեանցն աճին բողբոջք. արտօսր յորդառատ վտակաց ծաւալին յաչաց, քան թէ ծաղրուն խողխոջին խինջիւնք. գրլորումն, քան թէ կանզնումն յառաջատեն. բեկումն սրտի, քան թէ քաջութիւն պնդութեան ի ներքս դիմեն. կեանք ցաւագինք, քան թէ առողջութիւն ընդդիմակ մաշու յաջորդին<sup>1</sup>: Ե՞ր աղագաւ կամ վասն նյը պատճառանաց. զի ի քաջին իմմէ<sup>2</sup> և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: ԶԱշոտէ ասեմ զնազելի<sup>3</sup> և զբարձրագահ ձոխացելոյ վսեմապետէ<sup>4</sup>, յընդհանուր նախադահանստեալ ի մեջ բոլոր Հայաստանիայցս:

Վանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մաշու, անմերձինալիք ձարտարաց բժշկական<sup>5</sup> ձեռնարկութեանն: Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ձանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր<sup>6</sup>, քան զկեանս Հեղակարծ ինչ խորհել զնմանէ: Եւ ուժեղացեալ ցաւոցն

1 Այլ օր՝ յաջորդէն:

2 Ճին օր՝ իմ:

3 Այլ օր՝ գնազելոյ:

4 Ճին օր՝ վսամապետէ:

5 Այլ օր՝ անմերձելալի ճարտարաց

ի բժշկական:

6 Այլ օր՝ իւրոյ:

խստութեան որովայնացաւածութեան՝ երթայ մտանէ ի քաղաքն Նախնաւան, և տեսեալ անդ զաւուրս ի՛ փոխի յաշ խարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ձոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց<sup>1</sup> և փոքրունց։ Աորա ակք ձգեալ լինին յիշե թուականէն<sup>2</sup> Հայոց։ Լեալ ամաց ի՞ն փոխի յաշ խարհէս յամսեանն արեգ, որ օր դէր ամսոյն յաւուր երկշաբաթոջ<sup>3</sup> ի յիններորդ ժամու աւուրին. և տիկինն Աեղայ առեալ զդի նորա տարիեալ հանգուցանէ ի յԱղքադ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին։

Յերկարագոյնս վասն սորա աճնցուցանել հարկաւորէր զողըերգականացն ձարտասանութիւնս։ Իայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի։ Խւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եղեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ ինդութիւնն դեգիրել, առ հոգեւորական ուրախութիւնն ընթանալ յիտ մարմնականացն<sup>4</sup> յաճախութեանցն։ Վանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափարերեալ կինացն Աշոտի հաստատնազոյն և անվրէպ լուծման կինացս առ հոգեւորն և յաւիտենականն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց, յապաշաւանս և ի զեղջ<sup>5</sup> առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագավէժ առ չարեացն միտեալ խակութիւն<sup>6</sup>։ Օ-ի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս, թողուլ լքանել զաշխարհս բազմազաւառս, զամուրս անկասկածելիս, մերժել հեռանալ ի ձոխ և ի նազելի եղբարյն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ աղզի ազգի պկրժութենէ, և ոլ այլ քաղըրագոյն փայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, \* պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ձո-

1 Այլ օր՝ մեծաց։

2 Այլ օր՝ թուականութենէն։

3 Այլ օր՝ ի յաւուր երեքշաբաթոջ։

4 Այլ օր՝ մարմնականացն արտմա-

կանացն։

5 Այլ օր՝ և ի զեղջու։

6 Այլ օր՝ իսկութիւնս։

խագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղեղտվ, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հորովմանցն հրաժուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ Ակզենտիապն պատկերակերպութիւն։ Զայսոցիկ և որ առաւելն քան զսյն իրողութեանց ցոյցք մոռացմամբ սուզեալ՝ առ երկնաւորսն և առ երկնից թագաւորն թեւակոխեալ վասն հանդերձելոցն հոգացեալ, առ կղերս եկեղեցւոյ սրբոյ խոնարհեալ՝ կոչեաց զերիցունան նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Վրիստոսի, զառհաւատչեայսն առաջաբերելով ի փոքր ժամանակի զմեծամեծսն կշռեալ զպոռնիկն, զմաքսաւորն, զաւազակն և որք այսպիսիք, և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց զեղն հայցել զմարմին և զարիւն որդւոյն Եստուծոյ ի թողութիւն մեղաց, զվայն և զեզուկն անյարմար հառաջմամբ<sup>1</sup>, մեծակական ողբովք առ Վրիստոս ամբառնալով։ Վ Էմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելիք<sup>2</sup> աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեածանչն մուրուացն<sup>3</sup> Ճիրանամբքն զիզումն, և որ առաւելեալն քան զսյն զապաշաւանացն զանյագութիւնն։ Նաեւ սրբոց Հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ, «Պոյ թողութիւն իմոց չարեացն գործելոց, թողոյն Եստուած զիմ պարտեացն յածախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանիք։ Զայս ասելով, և յերեսն<sup>4</sup> ի վայր ի վերայ մահմացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յածախագոյնս մանուածէր։ Ես իսկ առ ընթեր գոլով<sup>5</sup> անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն։ Ճաշա-

1 ԱՅԼ օր.՝ յառաջմամբ։

2 ԱՅԼ օր.՝ ի խոտելիք։

3 ԱՅԼ օր.՝ մորուացն։

4 ԱՅԼ օր. զերեսն։

5 ԱՅԼ օր.՝ կալով։

կեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանաբար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց, համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւ արիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ:

Յետ մահուանն Աշրտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբայր համահարք և միոյ<sup>1</sup> մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ. Անհեքարիմայ և Դաւթի, և անհակառակող հաւանութեամբ հիզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով քաջախորհուրդ առատարուղիս խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով զօտարոտին ի բաց վարատելով զըողջախոհութեան<sup>2</sup> անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին, զշնութեան և զխազաղութեան հայրենի աշխարհի երկասիրաբար հոգ յանձնն տանել. ստացան բարեկարգաբար զարդարել զմերկացեալն ի բարեզարդութենէ<sup>3</sup>, զմերժեալն և զհեռացեալն ի հայրենեաց և ի տանց՝ յանձնիւրս առնել դարձումն, և զշփոթեալ և զվրդովիեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց:

Եւ զբոլոր երկիրս իւրիանց տէրութեանն բաժանեցին յերկուս մասունս: Յելս կոյս և ի մուտս որ առ հիւսիւսի զհայեցածն բերէ՝ առեալ էր ի բաժնէ Գագիկ իշխանի, զ՛ուաշ գաւառն և զթոռնաւան, Արտազ, Մարդաստան, Գառնի, Առքերանի, Աղանդրոս, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք<sup>4</sup>, Տոսպոշտունիք, Իոդունիք, Գուգան գաւառ

<sup>1</sup> Այլ օր՝ ի Փոյ:

<sup>2</sup> Այլ օր՝ զբաշխութեան:

<sup>3</sup> Այլ օր՝ զմերկացեալն ի բարեզա-

գութենէ զարդարել:

<sup>4</sup> Այլ օր՝ Մեծնունիք:

**Աղոտաշէսեան:** Եյսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նինգութեան Մարդպետն կոչեցեալ, զոր և վեր անդ յիշատակեալ ցուցաք զորպիտութիւն, և մանաւանդ քառ ղաքն Շամիրամայ հոչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի:

Իսկ Գուրզինի մարդպանի հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ծոր, զԱրձունիս, զԱկուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրձիշակովիտ, զոան Եռնոյ, զԱղբագ<sup>1</sup> Մեծ և զՓոքր, Եկե, Տամբէր, Տագիեան, Ըռնայ, Օարեհաւան:

Իայց զՏամբէր և զԾռնայն և զՕարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց, իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ճշտ ամօք, յամի այրման<sup>2</sup> եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն հայոց: Իսկ զԳողթը թըն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի Ֆղլթուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն:

Խու սկիզբն արարեալ շինութեան և խաղաղութեան աշխարհիս իրաւագատութեամբ, վերակացութեամբ որբոց և այրեաց, աղքատսիրութեանն լրջմոտութեամբ, եկեղեցւոյ զարդարմամբ. շինեաց Գագիկ պարսպաւոր ամրափակութեամբ զբլուրն յՈստանին Ոշտունեաց զաւերեալն ի բազում ամաց, շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Կստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնամեծագանձ սպասուք և եղ ի նմա զԽան, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: Շինեաց և եկեղեցի մի յԱմիական քարանձաւի, ի կատարքարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրսւառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ զլոշածօք նշանի խաչին Քրիստոսի: Իսպառ ստորև ամրականին ի գոգաձեւ տեղւոջն, որ առ հիւսիսի առ ի շեղ տեսանի՝ շինեաց

1 ԱՅԼ օր, զԱղբագ գաւառ:

2 Յօրինակն՝ յամի այր:

եկեղեցի հրաշագործ հրաշաղան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի մանազաւեան քաղաքին ի Վանտոսսպ, և Հիմնեցուցեալ յանուն սրբոյն Ախոնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ Հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տիեառն Գողգոթայ տեղւոչ, և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զիերնատանն խորհրդական խորհրդածութեանն աւանդութեան նորոյ ուխտի։ Իսկ ի յաշեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարժւթեանն Քրիստոսի յեռօրեայ թաղմանէն վերելեկեալ աւարառութեամբ դժոխոցն, և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի ձօրն գտհակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառքը ըստ Հրեշտակացն առ առաքեալսն զմիմիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առքերելով։ Ծինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խըրախից ոսկեզօծս պատեշգամեալ յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Գերանկէն շինեալ։ Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար<sup>1</sup> արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ նելքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հիշտալիր զել և զեծս յօրինեալ քարագործ աւազամած կրագործութեամբ Եյլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուգ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիսս գոգածե դաշտականացն, ելանել ի գագաթն<sup>2</sup> Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի<sup>3</sup> իւրոյ ձեռակերտին, առ հօրն յաւելադրելով շինուածս իւր։ Գալրձեալ վերակնեալ յառաւոտինս կոյս խաղացեալ ի Շուաշուոս ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից, բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Խրասխայ, ուր հցլքն երէ-

1 Այլ օր՝ ի ջրամբարձ։

2 Այլ օր՝ ի գագաթան։

3 Այլ օր՝ պաւատի։

ոցն խայտան և վայրենեացն խողից և առիւծուցն մորիքն և երամակք ցուց պատրաստական առ. որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին<sup>1</sup>, ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Նրտաւագդն Երտաշէսեան բարավիժեալ խոհամանայր ի կոշտն՝ կոհակին: Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Արտմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Խրասխ՝ շինէ և անդ ամրական տեղի, գրժեւարամատչելի ասպատակող հինից, գնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայրդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ, փոքր ինչ ի վայր խաղացեալ ի տեղին որում Զորք ասեն: Խւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի՝ և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդս խրախճանական կարգադրութեանց զրուագս, և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոդ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք, որպէս օրէն է թագաւորաց և թագաւորազանց աշխարհաշէն խնամողաց յանձնանձել ըստ վերակացութեանն յՆստուծոյ նոցա հաւատացելոց: Օ-ի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եղեալ ի վերայ խաշանցն մեռանել իրեւ զքաջ հովիւ, գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: Փութաճիմ ընթացող արշաւանս ի վերայ ձգեալ՝ հասանել ի լեառն տեսառն և ի տուն Կստուծոյ մերոյ, ըստ յորգորման մարգարէիցն, և ձախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ և երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապակեալ փայտի խաշին Քրիստոսի, պատուանդտնի ոտիցն Կստուծոյ, որով պարծի և պսակի ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց երաւէք: Խւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ

<sup>1</sup> Այլ օր՝ յուլովին:

| 2 Այլ օր՝ ի կուշտն:

փայտն<sup>1</sup>, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ<sup>2</sup> խաչակերտ փայտեղին գղըոցկանն: Այս այն խաչ է զոր վերագոյնն գրեցաք վասն սորա, ճժի ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զքոյցս յայտնութեանն, յամն Ներկրկորդի հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ուշունեաց պատրի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: Եւ յիա խաչայրդար պայծառութեանն իջեալ իլեռնէն Գագիկ ի ստորոտ լիրինն, ուր աբեղայիցն բնակեին սքեմաձեքն:

Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինհաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահուաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ուշունեաց, յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարբաւորք եղեալ էր Վարդ պատրի Ուշունւոյ հայկազնոյ, և վերակացու նմա թողոյր<sup>3</sup> զՅովհաննէս ոմն քահանայ ի Իոդրնի գաւառէ ի յԱնստան գեղջէ: Յորում տեղւոջ բանակ կրօնաւորաց կարգեաց, և հաւատաց զառաջնորդութիւնն նախասացեալ քահանային, որ էր այր հեղ ցածուն և պատուական վարուք և պատշաճագոյն յոր կոչեցաւն: և զատուցանէ զօրավարն վանիցն գեօղս բաւական առ ընկալումն հիւրոցն և ի տեսչութիւն աղքատացն:

Եինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: Եւ յաջմէ և յահեկէ սեղանոյն այլ ևս է եկեղեցիս: Նախ յառաջ ախորդժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնիլ ոչ ուղղակի առ հաւատոն մատուցեալ, զի Նստորականացն և Վաղկեդոնակին է այս իմացմունք այլովքն ևս երկարնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաշեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. այլ տուն Վրիստոսի սուրբ առաքեալքն են և ասին այլոց սրբոց զլուխինք. որպէս ասաց Պաւղոս, եթէ «դուք տաճար էք Նստուծոյ կենդանւոյ», և

1 Այլ օր՝ սուրբ փայտն:

2 Այլ օր՝ քարակրագիծ:

3 Այլ օր՝ թողոյր նմա:

դարձեալ ասէ, թէ առուն Աստուծոյ նմք մեք»։ և դարձեալ մարգարեիւն ասէ, գնակեցայց ի նոսա և գնացից ի նոսաաւ ԱՅԼ՝ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԵսուսուծոյ և ի մարդկանէ կատարեալ ապ՝ եթէ ոչ պաշտելիք եղեցին եկեղեցիքն, որ փրկիչն առ նուանին և երկրպատելիքն աստուածային երկրպատութեամբքնոր որ է յոյժ ծիծաղելի։ և պարզպէս յայտնի առանց կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին. և ևս յաւելցի ծիծաղելն. և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճըշմարտապէս որդին Աստուծոյ. և դարձեալ յոյժ ծիծաղելի է։ Եւ այս առ այժմ բաւականասցի մտառու ուսումնական<sup>1</sup> անձանց, զանմտացն ի բաց լքանելով զիմացմունս։

Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիք մահածին հողմոյն<sup>2</sup> շնչելոյ այսպէս անուանեն, փոխէ անդ գեօղս և շինէ<sup>3</sup> զբլուրն, որ տեղի բանակի ղաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց, և անուանեաց յանուն իւր զենուակերտն Գագկակերտ, և դարձոյց անդ զսահմանս անդր փոխելոյ գեօղիցն<sup>4</sup>։ Օռուգակչու հաւասարութեամբ մարզպանն այոց Գուրգէն Հըրաշաղան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին յԵղամակերտ ի մեծն Նղբագ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց, հարուստ միհեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով<sup>5</sup> առ տրամամաղրութիւն կոչարանին իրբեւ ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. բարձրածիչ աղաղակաւ քարողեալ. իրբեւ բանիւ զբարբառ հնչեցուցեալ աղգեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազգարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ։ Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւնական գոր-

1 Հին օր.՝ մոտառուսումնական։

2 ԱՅԼ օր.՝ օդոյն։

3 ԱՅԼ օր.՝ շինէ անդ։

4 ԱՅԼ օր.՝ գիւղից։

5 Հին օր.՝ բրելով։

ծեացն զհկեղածուփ անդնդաձիդ սահանացն երկնաշոս զուգաձանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յՆստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: Որկեն և եղեցանն առ նորա բերեալ<sup>1</sup> բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փոխւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն, ի տունն Եստուծոյ զընթացն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: Խսկ Գագիկ իշխան ի վերայ մկանաց կոհակալիր ձորաբաժին անդնդապատոյտ կուտակմանցն նաւամարտիկ ընթացս կազմեալ, դուզնաքեայ երասանսակալ փայտիւն վազս առեալ սիգաբայլ Ճեմարանօք ընդ կապուտակամեւ երկնագոյն լիոնային և դաշտական ասպարէզս, քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Անազաւեանն նահանգէ ընդ Ի՞նունական ծովս բերեալ մատուցանէ: առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Ախոնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տընտեսականին բանին Եստուծոյ մարդ եղելոյ: Աապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարտաւանդակ տեղւոցն բարիձեագունի վայելքացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանցն երկուս ևս եկեղեցեաք: Օոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչաղբօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամքք պատուականօք հրաշագործեալ:

Եյլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: Յաւելում պատկանաբար զրել քեզ զարիխական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզենուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: Օոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելքապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք յարաբշական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: Որպէս ընթեռնուս ի զիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերուդ տեսլեանն Դանիէլի

1 Թերեւ որ և եկեղեցեաւն առ նորս բերեալ

և ՞աքարիսյի բանագործութեանն, զոր և Պօղոս հոգացաւ բացայացակը դռէ աշտիճանիան մասունս ի Շոգւցն սլրոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ:

Խւ եղեւ յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յօւշոյ գաշտին, և զիսոովարարս քաղաքացն ի մի փայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ, և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Ասսպուրականի, որպէս գրեցաքն իսկ և իսկ եհաս գումական անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յՆտրպատական սահմանն. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարրու առանց բարւոյ բարեգործութեանցն, մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքան, խոռվեալ ըստ գաղանեղէն իւրեանց մոլեգնութեանցն և գոռթ սուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին, և առ զայրուցն առ մարդկայինն գիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զսատակչական դարձուածէ. սագունակ հասեալ ի վերայ Ասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԽլամացւոց և ի Խուժաստանէ, ի Արմանայ<sup>1</sup> և ի Մուկանաց, ի Թուլքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Շուաշն գաւառ՝ զսուրբ եկեղեցիս, զսունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել զքահանայսն նորոյ ուխտի ի սուրբ իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղաղացուցանել<sup>2</sup> ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն:

Յայնժամ ամրացեալ նստէր ի Շամիրամ բերդին Թաղեռս անուն ի յՆկացի տոհմէ, Շերեփայ որդի ծանօթացեալ, զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին

<sup>1</sup> Ա. Ա. ՈՐ. Ի Կարմանայ:

<sup>2</sup> Թերեւ խաղացուցանել:

ի սահմանս Աղջնեց։ Այ իրբեւ զկորիւն առիւծու ի մորւոջ խւրում նստէր վարաննեալ զրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Եմատունիաց տանն, որ նստէր ի հանգստի սրբոյն Ինադէսի առաքելոյ յՄրդոզական<sup>1</sup> գաւառի՝ գտանել զելս իրացն եկեալ հասեալ Հինին. որոյ զպատասխանիսն դարձուցեալ լիքաջալերական խրատու յորդորմամբ մարտիրոսական ախնկարութիւն պսակաց, և թէ ի պատերազմին յայնմիկ հասանկցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութիւնն զնոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Կրիստոսի Եստուծոյ մերոյ։ Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և եկեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւնն Շամիրամ բերդին, և սլացեալ իրբեւ զսրծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութիւնն ի Փայտակշտան գիօգ, և անդ ընդ փոքր զառ ի վայրն իրբեւ զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Կրիստոս խրախուսեալ յական քթթել ելից զիակամբք սպանելոցն և վիրաւորացն զերիսս դաշտին. և մնացիալքն կէպն փախիան հանդէպ երեսաց յով և կալաց ոք զերծանել, և այլքն զաղաղակ բարձեալ ի ձայնարկու աշխարանս խնդրեցին զապրուստ ի սրոյ քաջամարափկ ախոյանէն Շերեփեանն Ինադէսին։ Խւ յանդորր եկեալ աշխարհս Վասպուրական կեցին յապահով յանհոգս. և այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս սպատակաւորք հինիցն պարսկայնոցն։

Քանզի խառն զրակցութեամբ սահմանին առ միմեանս փոքր Եղբագ և աշխարհն Աորձէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբեկէին, մարզպանն և որ զնորձէիցն ունէին զգործավարութիւն ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԲռնայ գաւառ և որ ասի Ապուծափսի բերդ, ի Վահրի<sup>2</sup> քաղաքին Աորձէից զեւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին։ Խսկ Պարսկահայոց գռեահն<sup>3</sup> խուժան ածեալ զաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանին ի Ար-

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ յԱրդարական։

<sup>2</sup> ԱՅԼ օր.՝ ի վերի։

<sup>3</sup> ԱՅԼ օր.՝ գուեայն։

դաստան գաւառ յաւանն Ա խոտահոտ, հանմն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Շուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրծունեաց գաւառն։ Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ զլեկ և զնզի և զ Արերեացն և ի Շախուկ գաւառէ։ Եզդ եղեալ Ծապհոյ եղօր Թաղէոսի Ծերեփեանց. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն<sup>1</sup> և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելցն ընդարձակեաց, հանելով և զաւարն ի ձեռաց նոցա, և վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Շուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշնցն Վրիստոսի տուեալ զանձն ի մահ։ Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մըտին ի Թարաբ գաւառ և ի Ծնաւհ։

Իրրե եհաս գուման առ մարզպանն Նայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա և արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յՆյլի գաւառ. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամբական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինն անյայտ թաքստեամբ։

Իսկ ի գալ միւսոյ ամին, մինչ նոքա յանհոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին, առեալ զօրականս այլուձի կազմութեամբ իրեւ և ի աղաց գնաց երկայնազոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղիսին, և ելեալ ի Յաղամակերտ քաղաքէ ի Ե ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ վարազի Օարեհաւանի. և ընդ այսն ընդ առաւտոն՝ յՆունայ Յամաց գիօղ, և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գիտ։ Եւ ի միւսում առաւտուն հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Ե ոմանք, Վ լիթ և Մարտաճայ. և երիվար մարզպանին պակասեաց առ վազն, պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոդ տեղի մի ի Մղունիս գիօղ։ Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխա-

1 Այլ օր՝ գումանացն։

տութեանց ելիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգակնակէզ տապախառն ջկոմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն՝ յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս, և գունդ անհաւատից դառնացեամբ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց և ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. և անշնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն ձայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրիմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Ա որ և ոչ տեղի գերեզմանի անգամ նրեւեցաւ նոցա մինչև ցայսօր։ Եւ նոքա էին արք փառաւորագոյնք ի տանէ Արծրունեաց և յայլոց նախարարաց, որոց Տէր եղեցի այցելու։

Եւ յայնմշետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովել ըստ օրինակի մարախոյ անշափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստիք ուստիք ի հեռաւոր աշխարհաց Պարսից, ի Ժանգանայ և ի Թուրքանայ և ոլք ի Վարառատ գաւառէ, և եղին բանակք մեծ ի գաւառին Օարեւան։ Որ կամէին դառնարեր քինահարութեամբ ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն գարձուցանել։ Խսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ ոլք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա ոլք Առուայքն անուանէին, զիխաւորն ի նոցանէ Ճամիս, և միւսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս։ Այլ և իշխանն Գուրգէն հանապազ զրէր աղաչանս առ ծերան և առ աւագագոյնսն նոցա, իբրև փորձութիւն և զիպուած համարէր զեղեալսն, և ոչ խսպառ քինահարութեամբ վարիլ առ հարկատուսն և առ հընազանդս իւրեանց։ Եւ մեծի փորձութեանցն հասելոց լինէր ի վերին հրամանէն հանդարտութիւն . . .<sup>1</sup>։

1 Հին օր. ունի աստ ի ծանօթութեան աւաղ յօրինակն թուղթ և կտրեալ յայս տեղ բանն պակաս կուգայ։

ի բազում փայտից զուարձանայ հուր՝ սոյնպէս և այրս այս ի խոստմանց և յուխտից աստի, մինչև հրապուլուցին, և նովաւ դաւաձանեալ զմահուն գործեցին դարան:

Իսկ ապա այսոցիկ այսպէս եղելոց, ըստ փոփոխման եղանակաց, որ ընդ արեգական բերմամբ մարդկայինս չափին կեանք՝ ձմեռնայինն կանխեաց ժամանակ: Եւ մեծանուն իշխանն ըստ նախնական սովորութեանն չու արարեալ ընդ ձորն Անձահոյ՝ իկն էջ ի Խերականն<sup>1</sup> կոչեցեալ դաշտ, և կամէր փութապէս անցանկ ի ձմերոցան<sup>2</sup> արքունի, ի գաւառն Շուաշ յաւանն Մառական:

Յայնմ ժամանակի ընդ առաջ ելեալ այրն անօրէն, սիրելին նենգաւոր, կեղծաւոր բարեկամն, յղին անօրէնութեամբ, ծնօղն գկորստեանն պահակ, մահացու խորհրդոցն չարամայր ստրնտուն, դայեակն խաւարի, արեան մտեալ սատարն, խրատեալն ի սատանայէ, անհամբոցին ի բարեաց, արբանհակն չարին, բանալին դժոխոց, հնոցն մեղաց, վառեալն հրով նախանձու յիւրոցն գործակցաց, տիղմն խաւարին, որ զծովային մարդարիտն լուսաւոր յիւր կորստեանն ընկոյզ խորխորատ. սա ի ձեռն կոչողաց չարին աղաչէ զմեծանուն իշխանն Վասպուրական, զի ըստ սովորական սիրոյն՝ առ իւր ազգի. զոր ոչ առնոյր յանձն իշխանն, վասն փութալը յիւրականն գաւառ: Իսկ նա զցրեալ ուստ սիրելութեանն առաջի արկանելով՝ ստիպէ զեշիսանն, զի գոնեա փառազարդ երեսացն տեսող արժանի լինել հրամայեսցէ. և գտեալ զպարզեն մահառիթ՝ գայ ի հանդիպումն հզօրին: Եւ կացեալ ի հանդիպոջ՝ ոչ ՚կարէին ընդ գիրկս խառնել միմեանց: Վասն զի ի պատճառս որսոյ ելեալ շըջէր իշխանն թափու յիւրոցն զօրացն, միանգամայն և մերկ ի զինուց. և վասն զի առուամէջ այգեստանեայց էին տեղեք դժուարինք, անջրպետեաց ի մէջ նոցա առու մի սահանակարկաջ յորդահոս և յոյժ խորագոյն. ընդ որ ոչ այլազգին այն և ոչ ի մերոցն ոք դիմագրաւեաց անցանել զօրացն, խոստովանեալ զվարապետիւն սրտից և զպաշարումն երիվարացն. մանաւանդ թէ և ոչ իշխանն իսկ ոչ թողացուցանէ ումեք զկնի իւր անցանել: Անդ քաջին և հզօր իշխանին մտրակ ի

1 Իմա՞ ի Հերականն:

2 Այլ օր՝ ի ձմերոցն:

կուշտ արարեալ երիվարին՝ արագ ընդ դժուարինն անդր անցանէ յորձան:

Իսկ զայլաղգին այն պիղծ, քանզի ոչ կարէր անձամբ զդէմ ունել<sup>1</sup> հզօրին, յառաջագոյն իրատեալ յիւրոց գործակցացն՝ առեալ ունէր ընդ իւր և արս ուժեղս ըմբշամարտիկս զինուք ի ծածուկ: Մօս գայ յիշխանն, և գիլիկս զպարանոցաւն արկեալ տայ զյուղայեանն համբոյր: Եւ զօրացն մերձ կացիալ զբումբ ածին զերեսանակս<sup>2</sup>, ի ձեռն միանդամայն և զքաջահատ սուսերն պողովատիկ, զի մի կարասցէ քաջն աճապարել ինչ ուրեք<sup>3</sup>. և հարեալ գեղարդեամբն՝ զրաւ կենաց քաջին առնէին: Եւ քանզի մանկունք տղայք և անկատարք էին սերեալքն ի նմանէ, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, որ չեւ ևս յարբունս հասեալ էին և վասն այնորիկ ոչ ոք էր որ վրէժինդիր լինէր արեան հեղլոյ անարգապէս:

Եւ արդ ոչ ներէ մեզ բանս առանց մեծի և արժանապէս ողբոց թողուլ զյիշատակ կորստեան ամէնօրհնեալ հզօրին: Վասն որոյ զմարգարէին գոչեմ զնրեմիայի ժիռ մատուակին, և ասեմ, «ո՞ ոք առնէր զդլուխ իմ շտեմարան ջուրց. և զայս իմ յորդահոսանս վտակս աղբերաց», զի անդադար լացից զօր բեկման նորոյ Խորայէի: Ոչ դանդաղիմ կոչել երգակից ողորմելի ողբոցս զմեծ մարգարէն զզարմանալին Զաքարիաս, և նովաւ հանդերձ ելանել ի բարձր կիտակս, ձայն տալ ընդհանուր ազգաց և ասել վացէք, լացէք, արեհլք առ արևմուտս, հիւսիս առ հարաւ, ազգք առ ազգս, ժողովուրդք առ ժողովուրդս: Վասն զի ելիք օգնականն, լոեաց զօրավիզն, և առաջնորդն մեծ իշխանական ճոխութեամբն առաւ այսօր ի գլխոյ ձերմէ: Երկինք ի վեր և երկիր ի խոնարհ զծառայակցին ողբացին զկորուստ: Մ ոք զօրն գայն ոչ ողբասցէ, ոյր ուրուք ոչ գելուցուն աղեքն, որ զայսպիսի ծանրատաղտուկ աղէտս տեսանել և կրել արժանացաք դառնապէս»:

Վասն զի ազատագունդ զօրքն աիրակորոյսք ցրուեալք ի լերինս և ի դաշտս վայիւք և ողբովք և յորդահոս արտասուք զերկինն լրացուցանէին դառնութեամբ, և ի խորովա-

1 ԱՅԼ օր՝ զդէմն ունել:

2 ԱՅԼ օր՝ զերասանակս:

3 ԱՅԼ օր՝ ուրեք ինչ:

կակիծ կիզմանէ աղեացն դիթաւալ յերկիր կործանեալ թըրաբ-  
րիալք լինէին ի դառնաձաշակ մահարոյց բաժակէն։ Եւ ման-  
կունք ձեռասունք թիկնապահք և յորա յենոյր իշխանն ձե-  
ռօք իւրովք՝ խեղդ զպարանոցաւն արկեալ զարիւնս անձանց  
փութային հեղուլ լաւագոյն զմահ քան զկեանս համարելով։  
Իսկ շունք տիրասէլք ի տեղւոջ սպանմանն հոլովեալք և  
գլշերապահ վառմամբ կատաղեալք՝ ընդերկնահաջ ողբովք  
հալածականս առնէին զգագանս անապատի, մինչեւ ցայտմունք  
արեանն պատուականին յերկիր անկելոյ յարեգակնայինն տա-  
պացաւ կիզմանէ։

Իսկ համբաւ հզօրին կորստեան, իրեւ զամպ թանձրա-  
մոծ խոււրային լրեալ սաստկութեամբ՝ ելեալ տարածեցաւ  
ի վերայ Հայաստանեայցս, մանաւանդ ի վերայ բարձրագոյն և  
սիփական Վասպուրականն կոչեցեալ նահանգի. յորում տիկ-  
նայք և աղախնայք թողեալ զկանացի<sup>1</sup> բնութեանն պատիւ՝  
ի գուեհս և ի փողոցս բացազլիսաւ ընդ երկիր զանձինս իւր-  
եանց քարշէին։ Ուք յանհնարին սգոյն դառնութեան՝ մատաղ  
մանկոյն զսովորականն մոռացան դիեցուցանել զկալին, ող-  
բոց միայն պարապեալ միմեանց ձայնակցելով։ Ուստի և ի  
կրծաբախ Տակատահար Շայթմանցն և ի բարձրամիջ աղաղա-  
կացն հնչեաց դուռն դարպատու արփիագեղ տիկնոցն մեծին  
Սոփիայ։ Ուք յաշխարելն իւրեանց ասէին այսպէս, «վայ, կո-  
րեաւ մեծանուն իշխանն, և անտերունչ մնաց երկիրս Հայոց»։

Իսկ տիկինն խիզախեալ յանպարտելի զօրութիւն հզօ-  
րին՝ ասէ, «զի՞ դուք, ով մարդիկք, և ընդէր գործել զայդ  
յանդգնիք. չի՞ք ուրիք թշնամիք. ոչ ուստիք պատեալ պատե-  
րազմ։ Ո՞վ ոք զայդ գործել համարձակեցաւ<sup>2</sup>, ո՞վ ոք զոսկե-  
փետուր ախոյանարձակ քաջազգի վարուժանն իմ հաւահար  
առնել կամ ի ծուլզակ ըմբունել կարողանայր, և ոչ ինքն օձ-  
տեալ ինմանէն մեռանէր. ո՞վ ոք զեարձաթիւ<sup>3</sup> արծիւն քա-  
ջահնչող և ահարկու ձայնիւ ի խոնարհ սուզել լինէր ձեռըն-  
հաս. ո՞վ զանյաղթ վիշապն սանձել մերձննայր, և ապ-

1 Հին օր.՝ զկանանցի։

2 Այլ օր.՝ յանդգնեցաւ։

3 Այլ օր.՝ զբարձրաթեկչ։

բեալ լիներ. ինքնուս Օւայսոսիկ և ևս յաւետ քան զսոյնս ասէ տիկինն ընդդէմ լալականացն:

Իսկ իբրև ստուգեցաւ իրն և համբաւն ճշմարտեցաւ կորսատեան՝ ապա այնուհետեւ յերկիր անկեալ զերեսս ի գետնի գնելով, մոխիր ի վերայ ցանելով գլխոյն, և խաւար ձեռագործ յօդս ցնդէ տաձարին: Խւ ի բաց ընկեցեալ զպատուաղիր քողն մարգարտահիւս զարդուն, զգեցեալ զսեաւս ի զգեստից, և պատրաստեալ զլիսյ իւրում արկանելիս թխակերպս, և յառաջ կոչեալ զդստեր՝ սգոյ ողբոց յօրինէ կարգս, կարգեալ կացուցանէ դասս դասս՝ պարաւորս երբայեցիս և զթագաւորացն Խորայէլի նուագել տայ զողբս:

Յայնմ աւուր սուգ առին սուրբ եկեղեցիք և դասք պաշտօնէից: Ի բաց առան ի գլաց<sup>1</sup> սենեկացն ոսկեհուռան կամարաձև երանդոցն տարագք, և սեաւք խոշորագոյնք և յոյժ տիւրալիք զտեղին փոխարերեցին. և ընթացեալք այսր անողր սուրբհանդակք լալականացս՝ խցին զլուսանցոյց պատուշանս հրաշակերտ ապարանիցն, հրամանաւ տիկնոցն. աղի մի, ասէր արեգակն յանհաս բարձրութեանն երկնից ձեմեսցի կամար. և զձառագայթս ի խոնարհ արձակելով՝ զիմն լուսաւորեսցէ խաւար. և կամ լուսինն ի լրմանն ժամանեալ ամանակ, արուսեկիւն հանդերձ և բնաւ զարդուն աստեղաց՝ զիմն փարատեսցէ մշտ, մինչև տացէ ինձ Աստուած յորդւոց իմոց այրասիրտ նման հօր իւրոյ, որ ի կեանս իմ կամ թէ զկնի կենաց իմոց ի վերայ գերեզմանին տացէ աւետիս՝ առեալ վրէժ հեղման արեան հօր իւրոյ ի գլխոց այնոցիկ, որք զայս ինձ հատուցին խաւարու:

Օւայս մեզ ընծայեցին՝ որք տեսօղք լիւալ էին գործոցն և որք ի գիրկս զմանկունքն կրէին, եթէ զայսոսիկ ասելով տիկնոցն՝ ձգեալ լիներ զձեռսն ի վերայ ուսոյ հրաշազարդ մանկանն Գագկայ, ոչ գիտեմ հանդէ՛պ գրլով, կամ թէ մարգարէաբար իսկ զայս առնէր մեծ օրիորդն Առփի, երջանիկն ի տիկնայօ: Յաւուրս գառնութեան սգոյն այնորիկ ձեռք երկրագործաց և ալուեստականացն լքեալ յիւրաքանչիւր վաստակոցն՝ եղեալ ծնկաց և ծնօտից՝ լային դառնապէս. տեալք

<sup>1</sup> Այլ օր՝ ի բաց առին ի դրանցն:

և ազատք ի միասին հաւաքեալ չար ողբովք զմիմեանց ճըմ-  
լեցուցանէին զսիրտու: «Ուր, ասեն, լքեալ կորուսաք զպա-  
տուական մարդարիտն, զպարծանքն այսոց, զքաջն անպար-  
տելի, որ զմեծ պատերազմունս դիւրաւ մղէր, և անուն բար-  
ձրագյն ինքեան և մեզ ստանայր: Ուր է բարեժմիտ շըթանցն  
ժպտումն, որ բազմերանդ բազմականս ոսկեզարդ գահոյիցն  
միշտ զմեզ ուրախարարն զմայլեցուցանէր բաժակաւ: Ուր  
առատ ձիրք ձեռինն պարզեարաշխ, որ երեկի զարդու՝ ցանկ  
զմեզ շքեղացուցանէր: Վայ և աւաղ մերոյս կենդանութեան:  
Քնդէր ոչ պատահեաց մեզ օրն այն ի մեծ պատերազմի ի  
մէջ նիզակախուռն զօրաց: Թերևս և մերոց լինէր բարձումն  
կենաց»: Աստ ի մէջ կացեալ հայրապետաց և ճգնաւորաց դասք  
զարթուցանէին զմիտս ինոչն և զայլոց կոծողացն յերկիւղն  
Աստուծոյ, և առ սակաւ մի փարատէին աղէտ սգոյն դառ-  
նութեան:

Եւ արդ սիրելի էր ինձ ևս կրաշափառազունիւ անցա-  
նել բանիւ ընդ ողբերդականացս հանդէս. այլ զի մի լսողացն  
խոռվեսցին միտք՝ լուսցի որ ինչ վասն այսոցիկ է բանս, և  
մեք ի պատմութեանցն փութացուք ասպարէզ, թերևս յա-  
ջողեսցէ մեզ Աստուած ծայրագունին հանդիպել լրման, բազ-  
մավէպ զրուցաւրութեանց քաջի արանց տանն Կրծրունեաց:

Կատարեցաւ կարդ ծննդաբանութեան երից որդւոց մեծ-  
անուն և քաջամարտիկ իշխանին Գրիգորի յորում և գործք  
նորին ամենայաջողակք և զըսւ նորուն ի դաւելոյ ոմանց  
այստանեայց և Պարսից և ողբք ի վերայ նորին:



# ԴՊՐՈՒԹԻՒՆ ՀՈՐՌՈՐԴ<sup>1</sup>

## ԳԼՈՒԽ Ա.

Ելուականուիւն Ազգով որդույ նորին անդրստիւնն: Եւ գոյացած այնուն Սովետ երջանին և բարեպաշտի:

Բայց զինի մահուան երջանիկ իշխանին հաստատի յաթու հօր իւրոյ անդրանիկն Աշոտ որդի ամաց իբրև ժէից: Եւ մեծանուն տիկինն Սովի, հայելով ի մանկանցն բարենշան յառաջադիմութիւնն, մանաւանդ ի մանկանն Պագկայ, զեանդստին ի տղայական հասակէն հրաշազարդ փառք փայլէր ի մէջ եղբարց իւրոց. առ որ նայեցեալ տիկինն՝ յուսացեալ արձանացուցանէ զսիրտ իւր<sup>2</sup>, և առնարար ունի զիշխանութիւն, օգնականութեամբ հօր իւրոյ Աշոտոյ թագաւորին հայոց:

Եւ քանզի որդի քեռ էր Ապումրուան տիկնոջն Սովետյան պատրիկ արձակէ զնա ի կապանաց հրամանաւ հօր իւրոյ: Եւ ինքն Սովի անհամեմատն ի կանայս, ըստ նմանութեան ամուսնասէր տատրակի, հրաժարեալ յամենայն վայելչութեանց կենցազականացս՝ խանդակաթ<sup>3</sup> լինելով, ոչ ժուժեալ սրտին նեղութեան՝ զկնի է ամսոյ փոխի յաշխարհէս խազաղութեամբ ննջեալ ընդ հարս իւր, թողեալ զմանկունսն տղայս և անկատարս հասակաւ:

Եստ բազմաց միմուեալ ազգականաց սոցա, ոլք և ստանալ ինչ մանկանցն խորհէին, այլ ոչ իշխէին յերկիւղէ մեծին Աշոտոյ թագաւորին հայոց: Յետ այսորիկ կիցեալ թագաւորին Աշոտ ամ մի և կէս՝ փոխի յաշխարհէս, փառք ի փառս յու-

1 Ի հին օր. և ի Տպ. չէք:

2 Յայլ օր. չէք՝ իւր:

3 Հին օր՝ հանգակաթ:

զարկեալ։ Աստ ապա ի պատեհս գտեալ հարազատաց սոցա՝ սկսան յափշտակել զտեղիս տեղիս ի ձեռաց մանկանցն։ Յայն-ժամ Վագումբուան յառաջ մատուցեալ, խորհուրդ ի մէջ առեալ, կամեցաւ տիրել իշխանութեանն Պասպուրականի, յինքն զրաւէ զմիտս տերանց և ազատաց աշխարհին, ասելով օրի-նակ զայս. եթէ ի դէմս Աշոտոյ առնեմ տեղապահութիւն աշ-խարհիս, և համոզեալ հաւանեցուցանէ զբնակիչս աշխարհին։ Եւ յարբունս հասեալ Աշոտ՝ կայր ըստ սովորութեանն ահիւ-ընդ ձեռամբ Վագումբուանայ, զի և փեսայացեալ իսկ էր նմա։

Եւ ապա իբրև աւուրզք ինչ լինէին պարապոյ՝ կոչէ զԱ-շոտ եղբարբքն հանդերձ ի բերդն Առոտորոց, պատուասիրու-թեան ինչ աղագաւ։ Եւ անդէն ի միում գիշերի կալեալ կա-պէ զնոսա, և յդէ զԱշոտ և զԳուրգէն ի բերդն Նկան կոչե-ցեալ, և տուեալ ի բանտ՝ պահէ մեծաւ զգուշութեամբ։ Եսկ զԳագիկ խաղացուցանէ ի Ճուաշ գաւառ, յամրոցն Շամի-րամ. քանզի իբրև զմանուկ տղայ խարեալ էր զԱշոտ, տալով նմա զբերդն Ագարակայ հանդերձ Ճախուկն կոչեցեալ գաւա-ռաւ, փոխանակ իւր առնլով զբերդն Նկան և զԹոռնաւան և Ճուաշ գաւառք, ուր և շինեալ զՇամիրամն պարսպէ յիւր անուն։

Դարձեալ և այլ իմն օրինակ խարէութեան համբաւէ ի մարդիկ, ասելով սյսպէս. «Տս այր մի անժառանգ եմ, բայց մեայն ի դստերէն զոր առեալ էր Աշոտ իւր կնութեան. եր-կինչիմ գուցէ հպարտասցի<sup>1</sup> ի վերայ իմ Աշոտ»։ Եւ այսուիկ համոզեալ հաւանեցուցանէ զլուզն. և ինքն ի կասկածի լի-նելով, տարակուսելի ըմբռնեալ<sup>2</sup> խորհրդովք՝ երբեմն հանէ զԳուրգէն կրտսերն, և ածեալ ընդ ինքեան շըջեցուցանէ, և դարձեալ տայ ի բանտ կրկին անդամ. և ապա հանէ զԳագիկ. և ածեալ զմուաւ վասն նորա՝ ոչ գիտէր զինչ առնիցէ. զի բեկեալ էր սիրտ նորա առ ուշի մանկանն, և սպասէր գաղա-կորուսանել զնա։ Այլ Աստուած ոչ ետ թոյլ ձեռին նորա միել յարիւն արդարոցն։

1 Այլ օր՝ հպարտանայցէ։

2 Հին օր՝ ըմբռնել։

## ԳԼՈՒԽ Բ.

Փայլումն իւսուսազնութուննեւան միանգամբն և երեսումն շնորհացն Աստվածութեան է վերաց ճանկանն Գագիւց, և աղասումն Ապրոճուանց է յեռաց նորա Եժաւայլու արունեամբ, և որ ինչ վնանէն էն գովեաբ:

Քանզի կանխագիտութեամբն իւրով ամենաթագաւորն Քրիստոս յառաջադրյն նկատեալ զերջանիկ մանուկն Գագիկ, անօթ ընտրութեան արժանի իւրոցն լինել<sup>1</sup> շնորհաց, և զիտելով զնա թէ այսպիսի լինելոց է՝ ետ նմա հոգի զօրութեան և իմաստութեան. կատարելով ի վերայ նորա զասացեալն ի մարդարէէն, թէ «թագաւոր արդար կանզնէ զաշխարհ»<sup>2</sup>: Ուրով և փրկեաց իսկ զնայաստան աշխարհս ի ծանր ծանր աղետից, կուռ զինի միմեանց եկելոց, և ի բազմախուռոն պատերազմաց եղելոց ի նորայն դարս: Որ և անդստին իսկ ի տղայական համակէն արմատ բարութեան ի վեր<sup>3</sup> երևէր: Ուստի և զարմանք մեծամեծք են ինձ ի վերայ մանկանն, զի ոչ պարգեւս կամ ինչ շնորհել ումեք ձեռնհաս էր, և ոչ իշխանական ինչ հրամանաւ հարկեցուցանել զոք կարէր. և տեալք և ազատք աշխարհին միշտ զնորայն սիրովն գային, զի իմաստութիւն ի շրթանց նորա բղիւէր տռաւել քան զոսկի ընտիր, և համեստութեան քաղցրութեանն, միանգամայն և քաջապէս արութեանն շնորհք ի վերայ նորա բացափայլեալ՝ զամենեցուն յուտով լնուին զսիրտս:

Ուրանօր արիաբար վառեալ, այն ինչ մինչդեռ չե ևս եղեալ էր ամաց ծե-ից՝ արկ ի միտս իւր զխորհուրդս առն պատերազմողի, սպանանել զնապումբուան: Եւ իբրև ժամ մի լիներ պարապոյ՝ առեալ ընդ իւր զխորհրդակիցս իւր եհաս ի վերայ նորա, և սրախոզիսող արարեալ զնա ի Առան աւանի յասպարիսին տեղւոջ ընկեցիկ առնէ յոտս երիվարին. և հատեալ զգլուխն բարձեալ տանի յամրոցն Աշխնոտ, ուր էրն Գուրգէն, նմանապէս և ի բերդն Առոտորոց ի ձորն Անձախոյ<sup>4</sup>, յոլում էրն Աշոտ, ուրք անյուտսացեալ էին փրկութեան ան-

1 Հին օր՝ շինել

2 Այլ օր՝ աշխարհս:

3 Այլ օր՝ վեր:

4 Այլ օր՝ Անձահոյ:

ձանց: Եւ հանեալ զնոսա անտի՝ տայ զմատանի ի ձեռս Ա-  
շտոյ և տիրեցուցանէ սիփհական ժառանգութեանն հան-  
դերձ իշխանական ծոխութեամբ:

Սա, որպէս կարծեմ՝ թոյլ տալով Աստուծոյ առնու  
զվրէժ արծան հօր իւրոյ ի զիլոյ Նպումիուանայ: Վասն զե  
և նա մի էր ի գործակցաց չարին, զոր վերագոյնն ասացաք,  
ուր և ստէպ ստէպ միշտ զսորայս ոչ դանդաղիմ դրուատել  
զշնորհս: Յաղագս սորա հաւաստապէս և յոյժ ըղճալի է ինձ  
առնել բանից գեգերանս ի սմա և ի սորին գործս և գովեստս:  
Քանզի սա ազգի նսեմացելոյ ջահ վառեալ եղեալ ի բարձրա-  
գիտակ անառիկ ամրոցի<sup>1</sup>, շուրջանակի պարսպեալ զօրու-  
թեամբն Աստուծոյ՝ աննուաղ պահեցաւ ի չորեքծագեան  
սաստկագոյն հողմոց թշնամեաց ի սա հնչելոց. որ ոչ միայն  
ազօտացաւ, այլ և ի ձեռն պնդակազմ հաւատոյ ճօճ առեալ  
ցոլացեալ կիզեաց զթշնամիս տան հօր իւրոյ:

Սա աշտարակ բարձրաբերձ զօրաւոր վիմօք, կապարայօդ  
հիւսմամբ շարադրեալ իրիւ զպարիսպ պղնձի, հաստահեղոյս  
բեկոմմամբ, անխրամատելի ի թշնամեաց, միանգամայն և իր-  
իւ զսիւն երկաթի, ի մէջ հարուստ խարսխաց, աստուածա-  
յոյս և անհաս զօրութեամբ, կանգնեալ ի բարձր տէրութեանս  
հայոց՝ տեղի ապաւինի, որ ի թշնամեաց ոք փախիցէ յերե-  
սաց: Սա սուսեր բանաւոր, երկնայնոցն հրացեալ զօրու-  
թեամբ, հատանող և ձառագայթարձակ փայլատակեալ ի վե-  
րայ զիլոց թշնամեաց, ահափետ<sup>2</sup> արարեալ դադարեցուցանէ  
զիրոխտացեալսն ի վերայ եկեղեցւոյ և որ ինչ եկեղեցւոյ են  
կարգք: Սա ի համբակ հասակէ տղայական տիոցն իրըև զկո-  
րիւն առիւծու յարուցեալ սիգագայլ նազիլի ծոխութեամբ,  
ամբարձեալ զբազուկս ի վերայ թիկանց թշնամեաց, խորա-  
սոյզ առնելով զդարանակալս ի շաւզաց ոտից իւրոց, և ա-  
հարկու ձայնին գոյման ի ձեռն հրեշտակաց և հրովարտակաց  
յինքն ձղեալ կորգէ զբազում գանձս և զմթերս յօտար աղ-  
գաց, տիրելով բերդից և գաւառաց նոցա առաւել քան ըդ-  
հարս իւր:

1 Այլ օր՝ և անառիկ տեղունք ամ-  
բոցի

2 Այլ օր՝ ահաբեկ:

Եւ արդ քանզի չեւ ես է ժամանակ գովասանութեան,  
այլ պատմութեան՝ առ նշն անդր փութացուք կարգ:

Իսկ իշխանն Եշոտ օժնդակեալ ի շնորհաց և ի բարձր  
բազկէ քաջի և արիացելոյ մանկանն Գագկայ՝ ըստ ասացելոյ  
իմաստնոյն, թէ «եղբայր յեղբօրէ օգնեալ եղիցի իբրեւ զքա-  
ղաք ամուլո՛ սկսաւ պայծառանալ օր ըստ օրէ յաթոռ հօր  
իւրոյ ամենաջողակ փառաւորութեամբ։ Օոր տեսեալ Սրմ-  
բատայ թագաւորին Հայոց՝ առաքէ զեղբայր իւր զԴաւիթ  
և աղաչէ զիշխանն Եշոտ՝ մի մեկուսանալ ի նմանէ և մի ոխս  
պահել վասն ունելոյն գնա Գագկայ որդւոյ Աահանայ։

Օայս ինդրէ Սմբատ պարգևս յԵշոտոյ քեռորդւոյ իւ-  
րոյ, ի կասկածի եղեալ, գուցէ գնասցէ Եշոտ միւսանգամ  
զհետ կոչողաց Եփշնի ըստ առաջնում նուագին, զոր վերա-  
գոյնն ասացաք։ Վասն զի բազում խոստումն պարգևաց և  
դաշնս ուխտից առաջի Եշոտի Եփշին արկանէ. որում ոչ  
հաւանի Եշոտ, փոխադարձելով նմա վասն անփոյթ առնելոյ  
զնա յաւուրս բանտին։ Եւ երթեալ գնայ առ Սմբատ սիրով  
խաղաղութեամբ. ուստի և բազում փորձութիւնք անցին<sup>1</sup>  
զմեաք վասն ոչ երթալոյ իշխանին առ ամիրայն Եփշին։

Իսկ Եփշնի ելեալ յերկիրս Հայոց անհուն զօրու և զի-  
նու՝ և զայ հասանէ ի վերայ Սմբատայ, և փախստական ա-  
րարեալ մազապուր ընկենու յաշխարհն Վարաց։ Եւ անտի  
դարձեալ պաշարէ զբերդն Խարուց<sup>2</sup>, և բացեալ զմթերեալ  
տունս գանձուց՝ առնու աւար բազում։

Յայնժամ Եշոտ իշխանն Վասպուրական ծանապարհ ա-  
րարեալ ընդ գաւառն Բագրեանդ՝ արագ յիւրն անցանէ աշ-  
խարհ։ Իսկ Սմբատ թագաւորն Հայոց հրեշտակ առաքեալ՝  
աղաչէ ի խաղաղութիւն զԵփշին<sup>3</sup>, և գրաւական տալով զոր-  
դին զանդրանիկ. և նորա առեալ դառնայ և դիմէ ի վերայ  
Եշոտոյ մեծաւ սպառնալեօք, ոխս պահեալ վասն զնորայն  
արհամարհելով կոչումն, և եկեալ հասանէ ի գաւառն Թոռո-  
նաւան յաւուրս ձմերայնոյ։

Իսկ իշխանն Եշոտ եղբարբք հանդերձ և ամենայն տերա-

1 Յօրինակն՝ անցից։

2 Այլ օր՝ կարսու։

3 Այլ օր՝ աղաչէ զԵփշին ի եաղա-  
ղութիւն։

կոյտ<sup>1</sup> ազատագունդ զօրաքն խորհուրդ արարեալ ասեն, «առուրք սաստկութեան են և գործ պատերազմի, ով գիտէ ոյլը ուրուք յաղթութիւնն լինիցի»: Եւ ինայեալ ի սուրբ եկեղեցիս և ի հաւատացեալս՝ ել գնաց առ Նվշին, զրաւ մահու զանձն եղեալ ուր և սիրոյ մեղադրանք ել և ելս առնելով՝ պատճառեն միմեանց գինչ հաճոյ է կամաց: Եւ դարձուցեալ զիշանն Աշոտ մեծաւ պատուվ և բազում և երեկի պարգևօք. բայց քանզի կասկած ի սրտից երկոցունցն ոչ մեկնեցաւ՝ գրաւականս ինդրէ Նվշին. և նորա տուեալ զեզբայրն զԳագիկ, և զինի է ամսոյ առաքէ զԳուրգին զկրտսերն և դարձուցանէ զԳագիկ:

Իսկ ի գալ գարնայնոյն փախստեայ եղեալ Գուրգին ի ձեռաց Նվշին՝ գայ հասանէ առ եղբարս իւր ցրեալ զդաշինս սիրոյ. և նորա հետամուտ եղեալ ընդ քաղաքն Տփդիս, ոչ սակաւ հարստահարութիւն արարեալ զլիոյ Ամբատայ՝ առնու հարկս բազումն: Եւ անտի յառաջ մատուցնալ գայ հասանէ մինչև յաւանն Վան յաշխարհն Վասպուրական անթիւ բազմութեամբ: Իսկ իշխանն Աշոտ եղբարգին հանդերձ և ամենայն զօրաքն խոյս տուեալ ամբանայ ի ձորն Որսիրանից:

Յայնժամ հատսան որդի Վասակայ գենագարձի, զոր վերադյոյն ասացաք, այլն անօրէն, ժանտ և ապարասան, աւազակաց հայր, սպանողաց մայր և ամենայն անօրէնութեան ծնող դարձեալ մոլիգնի հայրենի շարեօքն յաղթեալ, զիսուտովանութիւնն հազիւ թէ պահեալ ամբողջ, ձեռն տայ յամիրայն Նվշին, և բազում մնասս կրոծանման ստանայ հաւատացելոց և սուրբ եկեղեցեաց. անձնամասն եղեալ դուռն բանայ չարեաց, դարանս մահաքեր զործէ սատանայի զգածեալ հնարիւք:

Իսկ ամիրային թողլով երկուս ոսաիկանս ներքինիս բազում հեծելովք ի մեծն Վան և յՈստանն աւան, որոյ անուն ձանաշխեր առաջնոյն Սափի. և ինքն երթեալ ի գաւառն Նղբագ՝ դադարէ ի Յաղամակերտն աւանի: Եւ առաքէ զայր մի ներքինի, որում անուն էր Յիւսր զօրաք բազմօք, զի երթեալ պատերազմեսցէ ընդ իշխանին: Եւ քանզի նոքա ամբացեալ

<sup>1</sup> Այլ օր՝ տիրագունդ:

Էին ի դժուարս Աակենից գեաղջ՝ դառնայ նելքինին մեծաւ ամօթով, ոչ ինչ կարացեալ ստնանիլ<sup>1</sup> նոցա վասն տեղւոյն ամրութեան և զօրացն քաջամարտիկ լինելոյ:

Իսկ ամիրայն այնուհետեւ անց գնաց յՆարպատական մեծաւ փութով, մնալով երկոցունց նելքինեացն յերկոսին աւանսն, զոր վերագոյնն ասացաք:

Եւ ի գալ գալինանւոյն այր մի նելքինի զոր կարգեալ էր<sup>2</sup> ի վերակացութիւն քաղաքին Պարտաւայ, զօրաժողով եղեալ ապստամբի յՆախնէ. և անցեալ գնայ մինչև յերկիրն Շամայ: Եւ զայն լուեալ ամիրայն՝ ակամայ կամճք կոչէ առ ինքն զարսն զորս թողեալ էր տեղապահս Վասպուրական աշխարհն, և ինքն ածապարեալ հասանէ ի քաղաքն Պարտաւ: Անդ պատահեալ վրեժինը լութեանն զոր ինչ արար չարիս ընդ ձայտատան աշխարհս, որում ոչ ներեալ Սստուծոյ՝ հարկանէ զնա չարաշար կեղով<sup>3</sup> ի ձեռն հրեշտակի սրբոյ, որպէս երբեմն զՎաղէս կայսր ի ձեռն Վրիտոսի քաջ նահատակացն տեսլեամբ Խեկղեայ սրբոյ. զոր ընծայեաց մեզ հաւաստեաւ Շիւզանդն պատմօղ. ուր և անդէն իսկ երկուք յորդւոց իւրոց, ևս և բազումք ի զօրաց անտի չարամահ սատակեցան առաջի երեսաց նորա, որոց զինի և ինքն չարաշար գառնութեամբ ընդունի զվախճան: Յետ այսորիկ խաղաղանայ երկիրս ձայոց ի հինից չարահնար իսմայէլական ազդին:

Սստանօր յիշէ իշխանն Եշոտ զչարաբարոյ ալբանիկութիւնն ձասանայ որդւոց Վասակայ դենադարձի, զոր արար առ ամիրայն Նախին: Եւ արձակեալ զոր պաշարէ վբերդն Անան, զոր յափշտակեալ էր Պագկայ որդւոց Վահանայ և տուեալ ի ձեռս ձասանայ, մինչդեռ ի կալանտն էր Եշոտ: Եւ քանզի աւուլքը ձմերանի<sup>4</sup> էին, յորում ոչ գոյր հնար ձիական ասպարիսօք կատարել զհանդէս պատերազմաց՝ գունդէ կազմեալ ձասանայ գնայ ի հետիոտս<sup>5</sup> ձակատել ընդ զօրաց իշխանին որ էին ի գեօղն Պղուանս, ի գաւառին Լումբայ կոչեցեալ Փորակ: Եւ հասեալ ի վերայ ի մէջ գիշերի կարծէր:

1 ԱՅԼ օր՝ ոչ կարացեալ ստանանել  
Հին օր՝ ստանալ

2 ԱՅԼ օր՝ կացուցեալ էր:

3 ԱՅԼ օր՝ կեղեւով:

4 ԱՅԼ օր՝ ձմերայնի:

5 ԱՅԼ օր՝ հետիոտս:

յաղթել, ոչ իմացեալ զիմաստնոյն՝ թէ ոչ յաջողեսցի մարդոյ յանիւրաւութենէ:

Իսկ զօրութիւն վերին խնամոցն ի թիկունս հասեալ օդնականութեան<sup>1</sup> զօրաց իշխանին, թէպէտ և նուազունք էին, և հարեալ սատակմամբ լքին զգիշերամարտ դասս անկարգ խլուսակին ձասանայ. ուստի և առ իշխուժել ձիւազեալ<sup>2</sup> պրշակաց տան միոջ, զգոդ առեալ ձեղունն, լինելով նմա անզերծանելի ծուզակ՝ սուզեալ ընկենու զնա ի ձեռս արանց քաջանց. զի կատարեսցի ասացեալն ի մարգարէէն, թէ «զգութն զոր փորեաց՝ անկցի ի խորխորատն զոր և գործեաց»<sup>3</sup>: Եւ անդէն ձերբակալ արարեալ կրկին կապանօք քարշեն ի դրւոն բերդին Աւան կոչեցեալ. անդ վաղագոյնս աճապարեալ հասանէ ի ձեռն աւետաւոր հրեշտակաց և իշխանն Աշոտ եղբարբքն հանդերձ. և նստեալ շուրջանակի սակաւ աւուրս՝ ապա փորեցին զաշս ձասանայ և առին զամբոցն:

Նստ ի մէջ կացեալ բազմաջան լինի Գագիկ եղբայր իշխանին՝ թափել զձասան ի պատուհասից խաւարմանն, և ոչ հասանի խնդրոյն. և ձասանայ զրկեալ ի զգալի լուսոյն՝ ոգւոցն բացան աչք. և իսկոյն կրօնաւորեալ կեայր սրբութեամբ մինչեւ ցօր վախճանի իւլոց:

Դայց ամբ իշխանութեանն Աշոտոյ ոչ խաղաղացան ըստ կամս իւր, երբեմն յեղբարց իւրոց և երբեմն յայլոց բազմաց:

Զայսով ժամանակաւ գայ հասանէ Ամբատ թագաւորն ձայոց ի գաւառոն Ապահունիս, հարկս պահանջել ի գլխոց ձայսիկն կոչեցեալ ազգէ. և նոցա ի դիմի հարեալ զպատերազմի նշանակին հանդէս: Յայնժամ ի թիկունս օգնականութեան կոչէ զիշխանն Աշոտ թագաւորն Ամբատ. և նորա յիշեալ զգութ արեան հարազատութեանն՝ գայ հասանէ մեծաւ փութով. և ի խմբել պատերազմին՝ փախստական լինի Ամբատ զօրօքն հանդերձ յերեսաց այլազգեացն: Նստ ի մէջ կացեալ Աշոտ իշխանն Վասպուրական սակաւ զօրօք, և բազում օդնականութեամբ բարձրելոցն պարտէ զթշնամիսն մեծաւ յաղթութեամբ, և ինքն դարձեալ երթայ ի քաղաքն Նախճաւան,

<sup>1</sup> Այլ օր՝ վերին հասեալ ի թիկունս օդնականութեան:

<sup>2</sup> Այլ օր՝ ճիւազեալ սրտին:

<sup>3</sup> Հին օր՝ զըր գործեաց:

զոր ընդ իւլումն կարգեալ էր իշխանութեամբ. և անկեալ յախտ հիւանդութեան մահու՝ փոխի յաշխարհէս ամաց իբ-ըւ ին:

### ԳԼՈՒԽ Գ.

**ԱԼԵՔ** էլեանո-նեան Գագիաց զինէ եղբօր իշխան Աշոտի, և գուծու նորին առջունեան:

Օկնի պյսորիկ յաջորդէ զաթոռ իշխանութեանն Գագիկ եղբայր Աշոտի, ըստ նմանութեան երկուց ակնավճիտ աղքելց<sup>1</sup> մերձակայլից, յորոց մի ոմն նուազեալ՝ միւսն ևս յա-էտ ի վեր զրդխումն արձակիցէ. զոր օրինակ և երկուց վիշա-պաց կամ կորեանց առիւծուց<sup>2</sup>, մինն դուղեալ՝ միւսն բար-ձրագոյնս խրոխտայցէ. կամ թէ ևս հրաշափառագոյն ասացից՝ ըստ նմանութեան իշխանականին գիշեոյ, որ ընդ թանձրու-թիւն ամառոց շրջագայեալ զաւուրս ժե ի մարդկանէ՝ զբոլորն մաշիցէ արփի. և անդէն ինոյնն ժամանեալ կարդ ծագողու-թեանն՝ յական քթթել զլուսոյն յինքն զգենուցու զզօրու-թիւն, և հրամանաւ վերին կառավարութեանն մաքրեալ զո-դոցն զաժանութիւն՝ զուտ զլուսոյն յերկիր ծաւալեսցէ ճա-ռագայթս, որում ցանկացեալ ոմն ի սրբոցն՝ ասէ, «քաղցր է արև յետ ամպոյ, որպէս և քաղցր է հանգիստ յետ աշխա-տութեանու:

Օսոյն օրինակ և խոհական հանձնարեղութեամբ Գագիկ իշխանն **Վասպուրական** յինքեան բերելով զլուտմն օրինա-կացս, զոր վերագրեցաք ըստ մերումն բանազարդութեան ըստ օրինակի պատմողաց՝ հանգուցանէ զշփոթեալ և զաշխատեալ երկիրն **Վասպուրական** ի բազում վրդովմանց դրացեաց և սահմանակցաց ազգաց օտարաց միանգամայն և բնակչաց աշ-խարհին . . . . կոչեցեալ ազգէ, որք էին արք ապստամբք, գո-զակիցք գողոց, ապականիչք աշխարհի և արհամարհողք տէ-

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ աղբերաց:

<sup>2</sup> ԱՅԼ օր.՝ առիւծոց:

բութեանն։ Յորոց մի էր Շապուհ որդի Մայմանկին, որոյ չարաշնար նենգութեամբ առեալ էր զբերդն Եղարակայ և զգաւառն Շախուկ, և կոկոցավիզ յինքնահայեաց ամբարտաւանութեամբ նստեալ յամրոցին, մեծ ոմն զինքն կարծելով։ Ի սյն աւուրս զնոյն օրինակ ապստամբութեան բերեալ և Գրիգորի որդույ Վասակայ, որոյ Սպուհամզայն անուն, ձանաշիւր, որ բունեալ որջացեալ էր յԵղծուձնն անուանեալ ամրոցին։

Խսկ քաջին և իմաստնոյն Գագկայ Վասպուրական իշխանին տեսեալ զգարանակալացն երկոցունց լիալ ի միում ժամանակի զգործսն՝ դիմեալ ի վերայ Շապհոյ պաշարէ զբերդն անձողոպրելի զգուշութեամբ, զոր տեսեալ Շապհոյ զքաջազօրն պնդութիւն ամենիմնաստ հզօրին։ և զփայլումն շնորհացն աստուածայնոց ի վերայ նորա օր ըստ օրէ, իմացեալ և զիւրն և զիւրոց դործակցաց նեղութիւն՝ յանկարծօրէն, իբրև զպտուղ մի ինքնահաս ի բարձր ոստոց ի գոգս անկեալ թափողի՝ այնպէս յանմերձնեալի ծայրից ամրոցին ստորիջեալ անկանի առ ոտս երջանիկ իշխանին Գագկայ, և խնդրէ զարիւնն իւր և զիւրոյ ազգին՝ պարզեք և զինք վարձուց ծառայութեան յաւիտենականի, և աննենգ կալ ի դրան ալքունի։ Խւ առեալ զպարզեն և բան<sup>1</sup> արեան իշխանին՝ գան բոլոր ազգն ի ծառայութիւն հնազանդել առ ոտս հզօրին։ բայց սակայն սիրտք նոցա ոչ էին ուղիղ, ոչ միայն առիշխանն՝ այլ և ոչ առ տէրն Վրիմսոս։

Խւ հասեալ լրւր համբաւոյ յականջս Գագկայ Վասպուրական իշխանի, եթէ ելեալ համարձակաբար շրջի Սպուհամզա որդւովքն իւրովք յիւրումն կործանեալ զաւառի։ և առաքեալ զօրս ի վերայ նոցա՝ ըմբռնեալ ածին որդւովքն հանդերձ առաջի նորա։ և նոցա զաղաղակ բարձիալ՝ արտասուս և հառաջանս առաջի արկանէին ասելով, մի խսպառմերժեր զմեզ ի ժառանգութենէ մերմէ։

Խսկ քաջին և հեղոյն և ամենաջողակ հզօրին լրւեալ աղաշանաց նոցա, մանաւանդ զի առ ուժգին քաջութեան անպարտելի սրտին զօրեղութեան ոչ ինչ երբէք ածէր զմտաւ

<sup>1</sup> Խ. Ա. ՕՐ. ՊԲԱՆ.

զառ ի նոցանէն զանգիտեն, զոր օրինակ առիւծ յագեալ յուսոց ոչինչ փոյթ առնիցէ զանզէն էրէոց, սոյնպէս և հզօրին գթացեալ ի նոսա, մի՛ վասն զի ողորմած էր և յոյժ բարեգութ առ սիրելիս և առ թշնամիս, և մի՛ զի առեալ էր ըզդուստրն Ապուհամզայի իւր կնութեան. ինայիաց ի նոսա, և ի հիմանց տապալեալ զշինուածս ամրոցին՝ հաստատէ նոցա զժառանգութիւն իւրեանց գաւառին, և բնակել աներկիւդ յերեսաց հզօրին: Եւ զայս ամենայն յաջողեալ սմա շնորհացն Աստուծոյ՝ խաղաղանայ երկիրն Ա-ասպուրական:

Եետ խաղաղանալց երկիրն գթասիրաբար և ուրախալից սրտիւ կրչեալ մեծանուն իշխանին Գագկայ զեղբայր իւր զԴուրդէն՝ և տայ նմա բաժին զԱռնիոտն, և ի ձորցն Շնահից մինչև ցերկուս ամրոցսն Արնպայ և Թղմարայ. զի յոյժ խանգաղատական և զուարթագին ոգւով իւրով սիրէր զնա, և հնարիսմաց վերակացութեամբ որպէս հայր ի վերայ որդւոյ գթայր և դոնքաց լինէր նմա հանդերձ օգնականութեամբ՝ ասպատակել և բանալ զաղխեալն ի հագարեանն ազգէ: Որով և առ իսկ զգաւառն Ելի, և վանեալ զբնակիչս նորա սպառ սպուռ Ծնջեաց զյիշատակս նոցա յերկրէ, զի էր այր խիստ և քաջասիրտ և յոյժ հնազանդ եղբօր իւրում Գագկայ Ա-ասպուրական իշխանի: Եւ ի վերայ քաջասէր առ միմեանս լինելոյն՝ և զշինողութեան երկրի առնեն փոխազարձութիւն գաւառաց և բերդից<sup>1</sup> ի մեջ երկոցունց: Եւ տուեալ Գագկայ Ա-ասպուրական իշխանի զբերդն Ազարակայ և զգաւառն Շախուկ՝ առնու զբերդն Օռեկը և զգաւառն կոչեցեալ Թերմաձոր, որ է մասն երկրին Մոկաց. զի իցէ նորայն սմա մերձաւոր, և սորայն նմա յարակից:

Եւ Գագիկ իշխանն Ա-ասպուրական երթալով երթայր և մեծանայր, և տէր ամենակալ էր ընդ նմա: Աա զօրութեամբ Աստուծոյ զամենայն դրացիս և որք շուրջ զկողմամբ իւրոյ էին տէրութեանն նուաճեալ ընդ իշխանսաստ հրամանաւ՝ ի ծառայութիւն զրաւէ իւրցն տէրութեան. զոր տեսեալ տէրանցն Մոկաց, եթէ բարձրացաւ ձեռն Գագկայ ի վերայ ամենեցուն՝ յամուրս իւրեանց ապաստանեալ՝ արգե-

<sup>1</sup> Այլ օր՝ շմաղութիւն... բերդից և գաւառաց:

լին ի տալոյ զհարկս, պակուցեալք ի սպառնալեաց Գագկայ; իշխանին մեծի: Իսկ մեծանուն իշխանն վաղվաղակի զօր գումարեալ ասպատակեալ յերկիրն Մոկաց յաւուրս ձմերանի<sup>1:</sup>:

Եստանօր զարմանք են ինձ ի վերայ քաջութեան ամէնօրնեալ և մեծանուն իշխանին, զի զերկուս իսս գժուարինս դիւրաւ յաղթեալ վանեաց քաջապէս. մի՛ զի լերինս բարձրաբերձս և փապարս անտառախիտս ունի երկիրն Մոկաց. և մի՛ զի ձիւնապատ սառնասոյր առհասարակ պաղեալ կը երկիրն ամենայն: Իսկ սորա մտեալ՝ զբարձրագաղաթունս լերանցն իբրև զհարթս կոխեաց ճանապարհս, և տեարք և ազատք աշխարհին ամենայն բնակչօքն հանդերձ փախստեայ եղեալ մազապուր մնային յամրոցս բերդիցն, ոչ կարացեալ ի դիմի հարկանել հզօրին: Եւ առեալ զկապուտ երկրին՝ գարձեալ գայ ի գաւառն անուանեալն Երիւարկ, առնու և անդ զբերդն Պաղայ, և զՓարհուաց<sup>2:</sup>. գայ և ի ձորն Եռուանից, առնու և զայն ևս ամրոցն և տիրէ գաւառացն:

Իսկ զգաւառն ծովեզրի, յորում է սքանչելի և անառիկ բերդն Եմիւկ, զոր բազում ժամանակօք յափշտակեալ էին այլազգեաց, բազում և անհուն պատերազմօք յարձակեալ ի վերայ աստուածասէր իշխանաց մերոց առաջնոց. դեռ ևս ցայն ժամանակս անդ յդփացեալ ամրացեալ կային մարդիկ դարուն Ութմանիկք կոչեցեալ ազգաւ: Ընդ որոց մեծ ջանիւ աշխատեալ տանն Երծրունեաց, ոչնչ ստնանել նոցա կարացեալ մանաւանդ քաջն և յաղթոզն մեծանուն իշխանն Գրիգոր, անուանեալն Պիկրանիկ, որ թարգմանի՝ ուխտիւք խընդուեալ ի տեառնէ. որ բազում կրեալ աշխատութիւն՝ խանդակաթ մեռանի, ոչ հասեալ ինդրոյն: Եւ մնացեալ բերդն<sup>3</sup> Եմիւկ իւրական գաւառաւն վէր մեծ անքժշկելի ի սիրտս իշխանաց Վասպուրականի, որում ոչինչ սպեղանիք առաջնոցն ազդեցին. որ տեսեաց եկն եհաս իբրև ն ամօք, մինչեւ ի ժամանակս քաջին Գագկայ:

Իսկ առ սա հասեալ նախանձն հայրենի՝ վառի ընդդէմ նոցա պատերազմօք, նեղի ի նոցանէ և նեղէ զնոսա. և ապա

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ ձմերացնոյ:

<sup>2</sup> ԱՅԼ օր.՝ Փարահուաց:

<sup>3</sup> ՅԱՅԼ օր.՝ չիք՝ բերդն:

Հնարեալ խորհուրդ մեծ՝ ի գիշերի գողանայ զամբոցն, և սրբախողխող արարեալ զբնակիչս բերդին՝ բնաջնջ բառնայ յերկրէ։ Իսկ զգիխաւորսն խազմարարս՝ քարավէժս արարեալ ի խորս խաղացուցանէ սրտից ծովուն. անդ կալցին գերեզմանս անյայտս մինչև յազդեալ ձայնի փողըն յետնոյ, ուր պատրաստեալ են դատիլ գործս իւրեանց։ Իսկ զբերդն Ամիւկ զզարմանալին զամբոցն, զոր երկնապիշ և պարանոցատանջ իմն գիտէ անուանել բան՝ բազում ծախսեւք և բազմագումար արուեստաւորք յերեկլիս հրաշակերտէ շինուածս։ Ի ծայրից անտի գագաթանն ի խոնարհ մինչև ցեզը ծովուն լի և լի պարսպաւորէ անմերձնալի ամրութեամբ։ Խւ զայն լուեալ չարահնար ազգին Խսմայէլացւոց, Մարաց և Պարսից և բոլոր Սարպատականի արանց պատերազմողաց՝ առհասարակ խաղացին պատերազմունք ի վերայ քաջին Գագիկ իշխանին մեծի։ Խւ իրեկ զգազանս արիւնարբուս<sup>1</sup> մրմռեալ՝ գան հասանեն մինչև ցքալաքն Սաղամաս. երգմնւնս ուխտից զնեն առ միմեանս՝ վրէժս առնուուլ քանդել աւերեկլ զերկիրն Վասպուրական, մինչև առցին զԱմիւկ և խնդրեացին զքէն արեան ազգին Ութմանկայ։

Իսկ քաջարին և երբերջանիկ իշխանն Գագիկ գումարեալ զօրս բազում՝ գայ ի գաւառն Մարգաստան և առաքէ զեղբայր իւր զԴուրգէն ի քաղաքն Յագամակերտ, երկորումք վառեալ ընդդէմնոցա, պահել զկիրճն<sup>2</sup> ձանապարհաց. թերևս յաջողիսցէ Սստուած ի ձեռն նոցա զգործ պատերազմին յաղթութեամբ։

Կարգեալ էր և զօրագլուխ մի մեծիմաստ յառաջատես իշխանին Գագիկ ի վերակացութիւն գաւառին Շուաշայ և Շամիրամն կոչեալ բերդի, զոմն ի տանէն Ակէացւոց, այր միամիտ և քաջասիրտ, որում անուն էր Թաղէոս, որոյ բազում գործս ալութեան ցուցեալ ի պատերազմունս, պայծառ և երեկլի հղեալ փայլեր ի մէջ զօրաց հայաստանեայց։ Աաէր լի գործովք բարեաց, ի տուրս աղքատաց զուարթառատ սրտիւ, ժրագլուխ և փոյթ ի զարդ և ի շինութիւն եկեղեցիաց, ընդունող որբոց և այրեաց և հանգուցիչ ամենայն աշ-

<sup>1</sup> Յայլ օր. չեք՝ արինարբուս։

<sup>2</sup> Հին օր. զկիմ։

Խատելոց, որ ոչ միայն ի զէն զինուորութեանն իւրոյ լինէր յուսացեալ՝ այլ ի զօրութիւնն Աստուծոյ։ Եռ սա հասեալ լրտեսաց՝ ասեն, «ահաւասիկ զօր այլազգեացն անցին յաշ-խարհն մեր յայսմ գիշերի անթիւ բազմութեամբ։ Եւ նորա զհիտ մոտեալ սակաւ զօրաք՝ հասանէ նոցա ի դաշտին Գերա-տայ<sup>1</sup>, այն ինչ մինչդեռ մերձեալ էին այլազգիքն տալ բերանոյ սրոյ զբազում բանակս ժողովրդեանն տեառն։ Յայնժամ առնն քաջի Թագէի զաս յերկինս համբարձեալ, յօդնականութիւն կարդալով զտէրն Քրիստոս, և ըստ զիեցելումն, թէ «պատրաստ գտանի Նստուած խնդրողաց իւրոց» վաղվաղակի ի թիկունս հասանէ զօրութիւնն Աստուծոյ գնդին ։ այոց, թէպէտ և յոյժ էին նուազունք. և սուր ի վերայ եղեալ կոտորեցին և լցին զբերան դաշտին յանկերոյ դիակացն յոյժ խտացեալ առ միմեանս, և զբազումն ձերբակալս արարեալ ածեն առաջի իշխանին մեծաւ յաղթութեամբ։ Իսկ մեծանուն իշխանին Գագկայ բազում և երևելի պարզեօք շքեղացուցեալ նախա-պատուէ զյաղթօղ այլն Թագէոս։

Եւ տեսեալ այլազգեացն զեղեալսն՝ ասեն, «որովհետեւ ի փոքունցս զայս կրեցաք, զիալրդ բազմացն կարասցուք ի դի-մի<sup>2</sup> հարկանել զօրաց իշխանին, մանաւանդ ուր և ինքն իշ-խանն իցէ յարդարիչ պատերազմին». և զահի հարեալ դար-ձան ընդ կրունկ, և խափանեցան խորհուրդք չարին նոցա։

Զայն տեսեալ Ամբատայ թագաւորին ։ այոց՝ մախացեալ ընդ իրսն՝ և զարթուցանել ջանայր զայլազգիսն կրկին ան-գամ ի վերայ իշխանին. և իբրև այնու ոչինչ կարաց ստանալ՝<sup>3</sup> ապա պատրողական բանիւք և խոստմամբք դաւաճանէ զայրին զոր կարգեալ էր յամբոցին Ամիւկ, որում անուն ձանաշխւր Ապուսակը, ի տանէն Վահունիաց. և նորա ըստ նմանու-թեան Յուղայի առեալ զգինս աստուածավաճառ նմանու-թեամբ՝ տայ զբերդն ի ձեռս Ամբատայ թագաւորին ։ այոց։

Եւ Ամբատայ առեալ զբերդն՝ դարձեալ վաճառէ իշխա-նին Գագկայ և առնու ի նմանէ գանձս բազումն։ Եւ յայնմ-օրէ անկանի կասկած չարութեան յերկաքանչիւրոցն միտս,

1 Ա. Ա. օր.՝ Գերադայ:

2 Ա. Ա. օր.՝ Գիմ.

3 Թերեւս՝ ստանել:

վասն որոյ և ոչ սիրով խաղաղութեամբ զմիմեամբք թեակոնէին որպէս յառաջոյնն:

Յայնմ ժամանակի զօրացեալ լինէր հարստահարութիւնն Տաճկաց ի վերայ քրիստոնէից. և ելեալ հրամանաւ արքունի ոստիկան ոմն մեծ ի վերայ Պարսից և Նայոց, որում անուն ճանաշիւր Յուսփ որդի Նպուսաճայ, այլ խրոխտ և բարձրանշան և ահարկու քան զբազումն որ յառաջ քան զնա էին: Սա շարժեալ բարկութեամբ մեծաւ ի վերայ Սմբատայ վասն բեկանելց նորա զհարիս ալքունի. և խաղացին ի մէջ նոցադեսպանք հրովարտակաւորք ոչ սակաւք. և ոչինչ<sup>1</sup> իրք խաղաղութեան առ նոսա պատշաճիւր: Իսկ ամիրայն Յուսփ քանզի լսելով լսէր զանուն և զգործս արիական քաջութեանն միանգամայն և զիմաստակիր խոհականութիւն հանճարեղ և մեծանուն իշխանին Գագկայ՝ ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա: Ուր և անդէն իսկ վաղվաղակի դեսպանս առաքէ հրովարտակք և բազում խոստմամբք, և խպառ թախանձեալ զիշխանն՝ կոչէ ի հանդիպումն իւր: Եւ նորա զնացեալ զինի կոչողացն անյապաղելի և սիրով խաղաղութեան. որ ի հասանելն առ միմեանս՝ մեծաւ փառաւորութեամբ շրքեղացուցանէ զիշխանն:

Եւ տեսեալ զպայծառազարդ հասակ մանկութեանն և զզարմանալի գեղ երեսացն վայիկըութեանն՝ զարմանայր բռնաւորն. և հարցափորձ արարեալ զնա խորին և անհետազոտելի իմաստակիր բանիւք՝ լսէր ի նմանէ զպատասխանիս բարձրագոյնս ծանունս, միանգամայն և խորինս և զժուարիմացս, որովք առատապէս և անարգել լուծանէր զհարցմունս նորա զգաղտնիս և բանայր առաջի նորա զզրունս աղխեալս և զանիմանալիս ի մարդկանէ, և լինէր նմա մայր հանճարոյ և դայեակ իմաստից: Եւ քանզի այր զօրաւոր էր մտօք ալքայն Պարսից Յուսփ և տհաճ յամենայն որդիս մարդկան՝ վասն այնորիկ<sup>2</sup> և ի բովս քննութեան զմեծապարծ և զաստուածազարդ իշխանն արկանէր, և ամբարձեալ զաւ իւր արածէր զնա և չափէր զկայս նորա ի նստել և ի յառնել և յամենայն մասունս թագաւորականս գտանէր զնա զուտ և նազելի հա-

1 ԱՅԼ օր.՝ "Հ"

2 ԱՅԼ օր.՝ վասն որդյ:

մեստութեամբ զարդարեալ, իբրև զոսկի որ ի բազում բովս  
փորձեալ իցէ: Ի անայր առաջի նորա զհրովարտակս արքունիս,  
յայտնէր նմա զխորհուրդս և գդործու տարակուսելիս և խըն-  
պրէր ի նմանէ յաղագս ելից, և նպաստաւորեալ առ ի նմանէ՝  
ծայրագունիցն հմանայր բղխելոց<sup>1</sup> ի նմանէ իմաստիցն: Յու-  
ցանէր նմա զականս պատուականս և գեղեցիկ մարդարիտս  
լուսածինս, ելեալս յերկրէ և ի ծովէ, ըստ օրինակի թագաւո-  
րաց, համբաւէր ի լսելիս նորա զզրուցարանութիւն հնոցն  
թագաւորաց դարուց ի դարս, և զեղեալս առ նորք զպատե-  
րազմունս: Հարցանէր ի նմանէ զտունս և զաթոռս թագա-  
ւորաց և բարձրնկալ տոհմից և զսահմանս աշխարհաց զիւ-  
րաքանչիւրոցն, սկսեալ ի Արարաց և Պարսից, Հրէաստանի և  
Ենուսաղէմի, Ասորոց և Եղիպատացւոց, Յունաց և Հնդկաց,  
զբոլոր Հայաստանեայս՝ մինչ<sup>2</sup> ի զրունս Աղանաց և Կասպից,  
որ է յոյժ վայելուչ թագաւորաց. և գտանէր զնա ամենայնի  
Ճարտարապետ<sup>3</sup> և յոյժ հմտագոյն: Փորձեալ քննէր զանպար-  
տելի քաջն և զհրաշազարդ իշխանն ի պատահեալ պատերազ-  
մունան, շուրջ զնովաւ ջոկազրեալ լրտեսս արս պատերազ-  
մողս. և գտանէր զնա իրմել զլեառն մի բարձր անշարժ ի  
հողմոց պատերազմացն հնչմանց. որոց և յաղթէր իսկ մեծաւ  
արութեամբ: Օ այս ամենայն և ևս յաւէտ քան զսոյնս տե-  
սանէր արքայն Պարսից Յուսփի, զերեեալ շնորհս աստուա-  
ծայինս ի վերայ քաջն և աստուածազարդ իշխանին Գագկայ,  
և ուրախ լինէր յոյժ ի վերայ գալստեանն նորա առ նա:

Ի այց ի հասանել համբաւոյն յականջն Ամբաւայ, եթէ  
միաբանեաց Գագիկ Վասպուրական իշխան<sup>4</sup> ընդ Յուսփայ  
Պարսից արքայի՝ մախացեալ գոռայր ընդ նմա խորին չարու-  
թեամբ. և ինքն Ամբաւ ոչ խնդրեաց երթալ զհետ խաղա-  
ղութեան, տալ զհարկս արքունի, որպէս հրամայեաց տէր  
զս ակ անդրանկացն ի ձեռն Պետրոսի ընծայել այնոցիկ որք  
զդիդրամայն պահանջէին, և ասէ, «տուք զկայսերն կայսեր, և  
զՍտուծոյն Աստուծոյ», և այնքան արժանապէս նշանակեաց

<sup>1</sup> Այլ օր՝ բղխեցելոյ:

<sup>2</sup> Այլ օր՝ մինչև:

<sup>3</sup> Այլ օր՝ ճարտար, և իմաստուն և

յոյժ հմտագոյն:

<sup>4</sup> Այլ օր՝ իշխան Վասպուրական:

տալ զսակս արքունի՝ մինչ զե ի ծովն յղէ զՊիտրոս և յանդընդազուրկ կայտառին կեռեաց կորզեալ զսատերն՝ զկամն հածեաց խնդրողացն<sup>1</sup>, զոր ետ ընդ արարչական գլխոյն և ընդ գլխաւորին Պետրոսին Օայս հրաման տէրունեան յետս հարեալ Ամբատայ՝ շարժեաց զբազում չարիս ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեանն տեառն:

Վասն որոյ սրտմտեալ սաստկութիւնմբ Յուսփ<sup>2</sup> յարձակեցաւ ի վերայ Հայաստանեայցս անհուն զօրու և զինու, և բազում անցս աղէտից ի վերայ մեր հասին, զոր այլ զօրաւոր և մտահարուստ ոմն հռետոր մեծ նախ քան զմեզ վերագրեաց և աւանդեաց ի գանձս արքունի: Եւ իբրև ետես Սմբատ, եթէ ոչ զյ հնար նմա ընդդիմանալ արքային Պարսից՝ փախրստեայ եղեալ ամրանայր ի բերդին Կապուտայ. և բռնաւորին շուրջանակի պաշարմամբ պատեալ զամբոցն, և զկնի սակաւ աւուրց ըմբռնէ զնա իբրև զանզօր տղայ:

Եւ տեսեալ եթէ ոչ ոք է որ կարողանայ տիրել և ունել զաշխարհս Հայոց, բայց միայն Գագիկ, զորոյ զփորձ առեալ զփտէր զնա պյսպիսի այր, զոր ոչ թողեալ ի կամն անձնիշխան կամացն՝ թագաւորեցուցանէ զնա ի վերայ ամենայն Հայոց: Եւ եղեալ թագ ի զլուխ նորա զուտ ոսկի բազմարուեստյօրինմամբ, հիւսեալ մարգարտովք և մեծագնի ակամբք պատուականօք, զոր ոչ բաւեմ պատմել: Եւ զգեցուցեալ ոսկեզարդ պատմուձան միանգամայն և գօտի սուսերաւ, հանդերձ ոսկեհուռն փայլեալ զարդու, որ ի վեր քան զմիտս և զբան անցանէ պատմողաց: Եւ հեծեալ յերիվարն քաջակազմ ոսկեհրաշ սարուցն փայլեր իբրև զարեգակն ի մեջ աստեղաց. և բազմութիւնք զօրացն սպառազինեալ յաջմէ և յահեկէ: թընդմունք ճայթմանց և փայլատակմունք սուսերաց, գոշմունք փողոց և հնչմունք եղջերաց, վանդիւնք սրնդաց և հիշտալուր քնարացն, տաւիղք հանդերձ դրօշիւնք նշանաց առաջի և զկնի: և ի ձայնն ահեղ զհետ դղրդեալ բանակն արքունական զօրուն: Եւ պյսպիսի փառաւորութեամբ հաստատեալ տայ ի ձեռանորա զըոլոր Հայաստան աշխարհս հանդել՝ մեծամեծ քաղաքօք և ամենայն վայելչութեամբք. զոր ես ոչ զանդաղիմ՝

1 ՅԱԼ օր՝ ինդրողին:

2 Յայլ օր. չեք՝ Յուսփ:

ասել զօծումն սորա<sup>1</sup> աներեւութաբար լեալ ի Նոգւոյն սրբոյ, ըստ առաքելցն գոշման որ ասէ, ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ Էն յԱստուծոյ է կարգեալ<sup>2</sup>:

Եւ արքայն Յուսփի ել գնաց յաշխարհն Պարսից ապրսամբել յարքունուստ, և ստունդանեալ հրամանաց նոցա՝ առնու զքաղաքս բազումն, և փախստական արարեալ զզօրս արքունի՝ գեգերեցուցանէ ի դրունս նոցա:

Եւ զիշաւորին Տաճկաց, զորոյ զանուն Դափր գիտելով ի նոցունց զրոց, և զմիւս եւ վերագրեալ անունն Առկթդիր, իբրեւ գիտաց զթագաւորելն Գագկայ ի վերայ Նայաստանեաց՝ առաքէ նմա թագ և հանդերձա զարդուց զարմանալիս և յանձն առնէ նմա զհարկս արքունի:

Եյս ինձ սիրալիք առ ի պատմել այս ինձ զարմանալիք առ ի լսել, և վերագունից վերագրյն իմումն և այլոց պատմութեանց, զոր ոչ ի համբաւուց ոչ երբէք լուեալ և ոչ ականատես ուրուք եղեալ կարասցեն յայտնել թագրնկալ փառք պատուիլ ումեք յարքունուստ, մանաւանդ քրիստոնէի և ուղղափառ հաւատացելոց և որդւոյ թագաւորի, սեփհական և բնատուր տիրողի Նայոց. զոր ոչ յանդկնագոյն համարիմ ասել երկրորդ անդամ, թէ ակամայ կամօք զայս բռնաւորն հարկեցաւ առնել ի կամաց և ի հրամանէ բարձրելոյն և բոլորիցն տեառն:

Նայց ի գնալն Յուսփայ ամիրային ի Պարսս՝ գնաց և թագաւորն Գագիկ ի գաւառն Առգովիտ, և պաշարեալ զանառն Դարիւնս՝ գողացեալ առնու ի գիշերի, ըստ յաջողելոյ նմա ի վերուստ. առնու և զբերդն Արկուայ. և անտի յառաջ մատուցեալ առնու զբերդն Աւզեյ և տիրէ գաւառացն, սկսեալ ի Առգովտէ մինչև ցմիջոց Աւզեյ, և Ասեաց ոտն:

Նայսու ժամանակաւ առաքին յարքունուստ պատգուք պատուաւոլք զօրօք բազմօք, որոց հրաման տուեալ՝ անցանել յԱտրպատակոն: Աոցա բերեալ կրկին անդամ թագ և հանդերձա պատուականս յարքունուստ՝ և շքեղացուցանեն զթագաւորն Գագիկ կրկին փառաւորութեամբ, առաւելեալ

<sup>1</sup> Եյլ օր. յաւելու յԱստուծոյ:

<sup>2</sup> Եյլ օր. և որ Էն յԱստուծոյ կար-

քան զոր վերագոյնն ասացաք. և խնդրեալ ի թագաւորէն բերանով արքունի, ի ձեռն սիրով լցեալ հրովարաակաց՝ զի ճանապարհ արասցէ նոցա անցանել ընդ աշխարհն ։ այոց նորին օգնականութեամբ. և արքայ յուղարկէ զնոսա ըստ խրնդրոյն արքունի. և նոցա երթեալ պատերազմեցան յարեւելից կողմանն: Եւ փախստական արարեալ զզօրսն ամիրային Յուսփայ, ձերբակալ ևս արարեալ և զինքն՝ բառնան ի դուռն արքունի. և կացեալ ի բանտի զամն չ՝ և դարձեալ արձակի հրամանաւ արքունի, տալով ի ձեռն նորա զբնաւ աշխարհն Պարսից և զբոլր ։ այք, միանգամայն և զքաղաքսն մեծամեծս, զոր բռնութեամբ յափշտակեալ էր յաւուրս ապստամբութեանն, և զԱյ քաղաք և զմեծն Բասրայ: Եւ նորա յաղթեալ ի բազմութենէ քաղաքաց և աշխարհացն տուելոց ի ձեռս նորա՝ ոչ ժամանէ յԵտրպատական. այլ առաքէ ոստիկանս հաւատարիմն և տայ ի ձեռս նոցա. առաքէ և թագ և Հանդերձա երեւելիս թագաւորին ։ այոց Պագկայ՝ հաստատել ի ձեռս նորա զՀայաստան աշխարհ:

Եւ ընդ այնր ժամանակս փոխի յաշխարհէս Պուրգէն եղբայր թագաւորին, խաղաղութեամբ ննջեալ առ հարս իւր. և եղե օր վախճանի նորա սուդ մեծ ամենայն ։ այստան աշխարհին: Եւ ելաց զնա արքայ լալիւն մեծ զաւուրս ի. և ապա դարձեալ արձարձեալ զմիտս իւր յերկիւղն Շատուծոյ, իմացեալ զիմաստնշն ասացեալն, թէ «իմաստնշ սուդ զաւուրս է, իսկ անմտի զամենայն ժամանակս կենաց», եղեալ ի մտի զառօրեայ զապականացու և վաղազրաւ կենցաղյս փոփոխումն, ամբարձեալ զմտացն աչս առ մշտնջենաւոր և անլուծանելի կենացն յարատեացեալ կայումն, քաջապէս արութեամբ և լիակատար գիտութեամբ ինքն զինքն կանգնեալ շնորհէ շինութիւն աշխարհի և նորոգումն սուրբ եկեղեցեաց և ուխտի մանկանց, որովք միշտ պայծառացուցանէր զոգի գնացելցն յաշխարհէս. մատուցանէ և պատարազս և զոհս զինմանց, բազմաբիւր գանձիւք լրացուցանելով զդասս աղքատաց, որբոց և այլեաց, տնանկաց և տառապելոց, բիւրաւոր ամբոխից տոնա կուտելոց<sup>1</sup>. ուստի և յորդառատ բարե-

<sup>1</sup> Այլ օր՝ եկեղոց:

բանողացն մաղթական հայցուածոցն, ըստ իմում գիտութեան, մանաւանդ ըստ սրբոցն աւետարանութեան, կամ թէ գերագոյն ասացից՝ տէրունեան բանիւն՝ երթեալ այս պատարագ համահաւասար գոլոց երից արանցն արդարոց, Երելին, Նոյին և Արքահամուն, ի ձեռն անմահ պատարագին էական բանին հօր, մարմնով վասն մեր պատարագեցելոյն՝ մատեաւ ընծայ հաշտութեան հօր ի հոտ անուշից։ Խւ ոչ այսքանիւք միայն շատացեալ այլ օր ըստ օրէ յիշելով զգութ կինդանութեանն միանգամայն և զսէր կատարմանն՝ առեալ զմթերս զանձուց և զհանդերձս պայծառավարդս և զձիս և զջորիս, զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ ի չորեքծագեան կողմանս երկրի տայ ի վանս սրբոց և հանդիսաւոր արանց, կարգեալ աւուրս նշանաւորս և քառանօրեայ ժամանակս անխափան ուխտադրութեամբ և անմոռաց յիշատակօք՝ միշտ փառաց ի փառս վերածիլ գնացելում եղբօրն յանվախճանն յայն և յանսպառ յաւիտենին. ի մտի եղեալ թերևս դէպ լինիցի յիտնութն յայն և յահեղ գալստեանն աւուր ընդ աջակողմանն զունդս աչալուրջ պայծառութեամբ ընդ զիրկս խառնել եղբօրն, և լսել ինմանէ, թէ տղջոյն քեզ եղբայր աղատեցուցիչ ոգւոյ իմոյ ի դրաց գժոխոց, որ բարիոք մատակարարելով առ իս ի քում վերջամնացութեանն՝ ընդ իմումս և զքո ոգիդ վերածեր ի կեանուա։ Խւ գարձեալ ինքն ալքայ վառեալ ի զէն և ի զարդ անհամեմատ քաջութեան, միապետեալ զբոլոր աշխարհս հայաստան, գետահետեալ հոսանուտ բարերուղիս ուղիւիւք՝ իրրե զծով բազմացուցանէ զխաղազութիւն ի հայաստան աշխարհի. զոր և մերս բան զարդարեն ասել ոչ զանգիտէ. յառաջ քան զսա այսպիսում հանդիպել բարութեան երկրիս մերում ասել՝ ոչ է ի դէպ, և զկնի սորա լինել՝ հանդերձեալ իմանալ ոչ է կարողութիւն։

## ԳԼՈՒԽ Դ.

**Վասահ բառնալոյ, ադոյն մեծի, և խաղաղացուցանելոյ, արժայի զաշ-իարհա, և որ ինչ յաղագիս Յուսիսից որդեսոյ Եպուսանայ:**

Իսկ զկնի բառնալոյ սգոյն մեծի՝ խաղաղացուցանէ թա-  
գաւորն զաշխարհն ի մրմռեալ պատերազմացն Պարսից և  
Աւորդուցն Նադարու որ գիողմամբք լերանցն:

Ինդ այնը ժամանակս զեռ ևս բռնակալութեամբ տիրեք  
Պարսից և Նայոց Յուսիփ որդին Եպուսանայ, որ ոչ կարա-  
ցեալ հանդուրժել քաջութեան և իմաստութեանն ալքայի,  
թողեալ զգազանաբարոյ գործս չարութեան՝ դառնայ ի խա-  
ղաղութիւն և ի սէր կատարման. և տայ ի ձեռն ալքայի  
զաշխարհս Նայոց և Վարաց, և ուխա խաղաղութեան եղեալ  
գնայ յերկիրն Պարսից: Եւ մինչդեռ կամքը զքօննուլ ի կար-  
ծեան իւրումն խաղաղութեան՝ վազվաղակի գան առնա Հը-  
րեշտակք ալքունի, հրաման տալով զի երթեալ տայցէ պա-  
տերազմ ընդ հարաւային զօրացն, որք եղեալ էին ի վերայ  
Բարելովնի և սահմանաց նորա: Եւ նորա գնացեալ անթիւ  
բազմութեամբ զօրու՝ թողու ոստիկան Պարսից զմի յիւրոց  
հրոմանեաց, որում անուն էր Փէթք. և ինքն հասեալ ի դուռն  
ալքունի՝ առնու և անտի ևս զօրս բազումն յօդնականու-  
թիւն. և գան պատահին միմեանց յԱսիտ աշխարհի, և ի  
Ճակատելն զունդ առ զունդ՝ հարկանին իսպառ զօրքն Յուս-  
փայ, ձերբակալ արարեալ և զինքն. և զկնի սակաւ ժամանակի  
սպանկանի, ոչ գիտեմ որպիսում պատահեալ վեճակի մահու:

## ԳԼՈՒԽ Ե.

**Որ ինչ յաղագիս անիշտանունեանն Պարսից:**

Եւ ապա զկնի այսոցիկ այսպէս եղելոց՝ անիշխանանայ  
երկիրն Պարսից: Եյլ թէպէտ և յառաջ մատուցեալ կակայէ-  
ին որդիք աղախնեաց և ծառայի տանն Եպուսանայ, կար-

ծելով զանձանց թէ իցեն ինչ որք և վաղվաղակի ի միմեանց սատակէին<sup>1</sup>, կատարելով առ նոսա ասացեալն յիմաստնոյն, աւաղ և եղուկ քեզ, քազաք, որ թագաւորդ քո որդի աղախնոյ է» և գարձեալ յայլում տեղւոջ ասէ, «Երիւք շարժի երկիր, և չորրորդին ոչ կարէ հանդուրժել. ծառայ եթէ թագաւորեսցէ՝ շարժէ զերկիր, և անմիտն եթէ յագեսցի հացիւ՝ նոյնպէս առնիցէ». որ արդարե շարժեցաւ երկիր, կարծելով թագաւորել ծառայիցս այսոցիկ: Խւ քանզի ոչ ոք ի սոցանէ արժանի յիշատակաց գործ գործեաց՝ և ոչ մեք<sup>2</sup> շար ի կարդի հարեալ զանուանս նոցա հիւսեցաք յասպարիսի աստպատմութեան:

## Գ. Ա. Ա. Խ. Օ.

Յաղագու աշխարհաշնու-նեան Նեծէ արտային<sup>3</sup> Գագիսյ և բաղաւ-  
ունուաց նորոգմանց և հրաշակերպու-նեանց Ուսրանն ա-անէ:

Իայց ինձ ահա<sup>4</sup> յոյժ սիրելի է աստանօր զբարձրագոյն իմն իրէ բուռն հարկանել, առ ի յիշատակ թողլով զկնի եկելոց, ևս և<sup>5</sup> ի պարծանս աանն Երծրունեաց, յիշատակեալ զեմաստակիր խոհականութեան գործս մեծի ալքային հայոց Գագիսյ, որ քաջութեամբ և աշխարհաշէն խաղաղասիլութեամբ<sup>6</sup> հոգաբարձէր իրրե զհայր և ինամածու ի վերայ աշխարհիս հայոց, որ և ի վերայ բարեխնամօղ գիմութեանց որով զաղքատս գարմանէր, գգերեալս գարձուցանէր, զզրկեալս փրկեր, գատ առնէր որբոց և տայր իրաւունս այրեաց, և զայն ևս աւարտ և գլուխ գնէր ամենայն առաքինասէր վարուց, ևս և մեծի գովութեանց արժանաւոր. զոր և ևս քեզ սիրելի քաջ<sup>7</sup>, և քաջի արանց նախնական, որ և զպատմու-

1 Ա. Ա. ՕՐ.՝ սատակին:

2 Ա. Ա. ՕՐ.՝ ումբը:

3 Ա. Ա. ՕՐ. յաւելու հայոց:

4 Ա. Ա. ՕՐ.՝ աւասիկ:

5 Ա. Ա. ՕՐ. և ևս:

6 Ա. Ա. ՕՐ.՝ խաղաղութեամբ:

7 Յայլ օր. չեք քաջ:

թիւնս յինէն պահանջեցեր, ոչ իբրու<sup>1</sup> յայլոց համբաւուց տեղեկայեալ ընծայեալ արձանացուցանեմքեզ ստացօդ բանից պաժուծնու առասպելս, այլ ականատես և ականջալուր, և իմով իսկ ձեռօք<sup>2</sup> շօշափեալ՝ պատմեմքեզ հաւաստապէս զեղելոցն զարմանա:

Եմենեցուն իսկ ընթերցասիրաց յայտնի են պատմեալքս՝ զի այր արծաթասէր սրով զելուլ զպարանոցն լաւագոյն համարի, քան եթէ դանդ մի տուժել յարծաթոյն. և եթէ զարեգակն տեսանիցէ արձակելով զճառազայթսն ի խնամն տիեզերաց ըստ հրամանի խնամողին Աստուծոյ՝ ընդդէմ նորա ասէ, ընդէր փոխանակ լուացոյ ինձ ոսկի ոչ բղխես. և եթէ աղքիւր աֆսավճիտ տեսանիցէ՝ ատէ, չեմ ծարաւի, և ոչ երբէք ալրից իքէն ջուր. մատո ինձ արծաթ: Իսկ բարք անարծաթասէր գոլով թագաւորին, զուտ և մաքուր մնալով յայսպիսի մեծավիշի ախտէ՝ ինամ ածէ ոչ միայն անձինն զբոսանաց, այլ և բնաւ աշխարհիս ։ այսոց. տայ զմթերս գանձուց ի ձեռս գործավարաց և արուեստաւորաց՝ պարսպաւորել ամրութեամբ զբուրս գագաթնաւորս<sup>3</sup> և զանառիկ ամրոցս թերդից ի գաւառս և ի միջոցս երկրի, ի պէտս ապաստանի փախուցելոց ի հինից և ի խուվութեանց օտար ազգաց. յորոց ի բազում ամրոցաց պարսպելոց յիւր անուն՝ յմիկուս տեղիս կարի իմն յոյժ հածնալ նուածէ ակնակառոցց լինելով. մինն առ եղելր ծովուն, որ է աւսնն Ուստան ի գաւառն Աշտունիաց, որ է յոյժ բարեխառն, ի չորից ծագաց երկրի օդոց առ հասարակ նա շնչելով. նաև ծառովք պտղաբերովք սաղարթեալ և այգեւետ բազմութեամբք յոյժ վայել չացեալ զարդարի. բղխեն և աղքիւրք բարեխառնք շուրջ զքաղաքաւն, օգնականութիւն մատուցանելով մարդկան ի բազում պէտս, այլ և ի հարաւակողմն կուսէ ամրոցին մերձ կայ բարձրաբերձ լիսառնն Արտօս, որ ի գարնանայինն եղանակ ամբարեալ պահէ յինքեան զդալաբութիւն արմաաոց և ծագկանց, և զձիւնահորս ամբարձեալ ի պէտս թագաւորաց, և ամենայնի որ ցանկացի ոք առնուլ: Նաև ի գլխոյ լիրինն

1 Ա.ՅԼ օր: իբրև:

2 Ա.ՅԼ օր: մեռամբ:

3 Ա.ՅԼ օր: գագաթաւորս:

Հոսեալ իջաննն գետք սահանակարկաջք յորդահուք, որով  
ոռագանի երկիրն առ հասարակ, որք և ի ծով անկանելով՝  
բղիսեն ձկունս մանունս առ ի պէտս վայելչութեան բնակչաց  
տշխարհին, և ամբարեն ինչ բազումն ի գանձս թագաւորաց,  
զոր և արքայի առեալ նուիրէ ի դարմանս աղքատաց: Խւ ինքն  
գագաթն ամրացին է ծովահայեաց և յոյժ վայելուչ. եթէ  
շարժեսցի ծով յուղեալ ի հողմոց՝ ծաղկաձև ալիքն զքոսա-  
ցուցանողք և վայելուչք երեխն. և եթէ մաքուր յօդոյ լինի-  
ցի՝ զամենեցուն աշա զրաւէ զիւրն տեսանել ծաւալումն.  
վասն որոյ և արքայի ձեռնարկեալ շինէ ի նմա տաճարս և  
սենեակս և փողոցս հրաշալիս պատկերակերպս և ազգի ազգի  
յօրինուածս, զոր ոչ բաւեմ պատմել: Պարսպէ և զծովակողմն  
գորաւոր վիմճք, դնելով գհիմունսն յանհնարին խորութեան,  
շինէ և ի գլուխ պարսպին ընդդէմ ծովուն տաճար մի ձեմա-  
րանոց ոսկեզարդ և պէսպէս պաճուճեալ դեղովք, արեգա-  
կնաշրաշ ճառագայթաձես ի խաղտանս աշաց և յուրախու-  
թիւն սրտի ինքեան և իւրոց արժանեացն. իսկ զդրունս  
կազմեալ կամարաձևս, օդաբերս, զովացուցիչս, միանդամայն  
և լուսանցոյցս շողախաղացս, որք ի ծագել և ի մտանել ա-  
րեգականն փայլատակելով ի վերայ ծովուն՝ շող գործնն ի  
սփրաս տաճարին, և յերին երին շրջշրջելով զդրօշեալ պատ-  
կերտիպսն և զզանազան յօրինուածսն՝ զմիտս հիացոցանէ  
զահեօղացն, և ի վեր անդր անցանէ քան զպատմողաց դի-  
տութիւն:

Իսկ մեր ի բազմաց զսակաւն յիշտատակելով՝ ահա ասա-  
ցաք որ ինչ յարդագս Ռստանին:

### Գ. Ա. ՈՒԽ 1:

Յաղագս շնորհեան Աղիանարայ, և իւ ոյժ անետ յարաջ ուն  
շնորհարիչն արժայի առող և ոչ արժանի ինչ յիշտատիչ ի նմա գործո  
գործեցին:

Եւ արդ մեր բաղձալի սիրով բուռն հարեալ զգեղեցիկ  
պատմութեանց՝ զբաղմօք զանց արարաք զըուցատրութեամբք,

մանաւանգ որ անհուն շատարանութեամբք իցեն լի, անօգուտ  
մեղ առ ի պատմել, և անշահ լսողաց առ ի լսել ուստի և  
յայսցանէ ի բաց որոշելով զմելո միտս՝ յօդտակարն մեր փու-  
թացաւք պատմութեանցն հանդէս. և անվրէպ յայտարարու-  
թեամբք որ ինչ ի սկզբանց անտի շինութեան աշխարհիս  
Նայոց ի Նայկայ աղեղնաւ որէ. և ի նորուն զարմից և ցկա-  
թու և վավաշոտ Ծամիրանն տիկին Խորեստանեայց և ի  
նմանէ յայլս և յայլոց ևս յաւէտ ձեռակերտք և շինուածք  
յիւրագանչիւրոցն յիրկրիս մերում եղեն՝ մեր առ ամենայնն  
անձամբ հասեալ և աշօք տեսեալ, ձկտեալ և ի հեռաւոր աշ-  
խարհս, մինչեւ ցկարջս և Ծուշեթացիս և առ լիրամբն  
Կաւկոսա և յԵւհիզ, մինչեւ ի մուտան Գաղայ, և ընդ Տայաս-  
տան և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ արեելս ի հետի-  
ոտս գնալով՝ տեսաք զգործ քաջաց և նախնեաց. միայն զմերս  
գրաւեաց զմիտս և զտեսութիւն հրաշակերտն և քան զբա-  
զումն նորանշանն և զարմանալին Աղթամար. որ թէպէտ և  
յառաջ քան զայսոսիկ ի Գաւթայ Աախոռունոյ և յԱշաշամայ  
Ոչտունոյ և ի Բազափրանայ ասի առեալ շինութիւն, որ  
զԳաղեստինացւոց աշխարհն հանդերձ Նիւրկանեաւ<sup>1</sup> քահա-  
նայիւ գերեալ ած բնակեցոյց յերկրիս մերում՝ սակայն ամե-  
նեքեան սոքա իբրև ի տաղաւարի, և կամ որպէս ի հուզս  
մրգապահաց բնակեցան յերևելի յայնմիկ կղզւոջ կոչեցեալն  
Աղթամար, մինչեւ յաւուրս մեծի արքային Նայոց Գագիայ,  
որ քաջակորով գիտութեամբ նայեցեալ ի տեղունյ զբոսանս և  
ծանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնա-  
մեաց՝ ձեռնարկէ հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանա-  
լի հիացմամբ. Հրաման տուհալ բազում արուեստաորաց և  
անթիւ մարդկան զհատեալ վէմս ծանունս և դժուարակիրս  
հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն. և  
ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կալեալ մեծի արքային՝  
և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայատակն ամբար-  
տակ կանգունս հինգ ի վերայ բարձրացեալ մկանաց ծովուն,  
որ մոտացն աշօք իբրև ի ցամաքի շարայարեալ տողադրէ զհաս-  
տակառոյցն վիմաց կարգս. յորոյ վերայ լար եղեալ ձգէ զպա-

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ Հիւրկանու:

բիսպն շուրջանակի իրբ ձիարշաւանօք հինգ. և պարփակն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ լայնանիստ բրդամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկիւնաւոր խօրանանման տախտակաձև յինքեան ունելով քահոյք<sup>1</sup> զքօսանաց, յորում հանդեմ որդուովք և ազատակցյա զօրօք<sup>2</sup> միշտ ուրախանացը արքայ: Իսկ և զգութիս պարսպին ածեալ ի կիրծն դժուարամածս քարանձաւին՝ ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դըրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բևեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հասանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խալաղ և անքցյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց քան զլողեքսանդրին ի Մակեդոնի քաղաքի, և որպէս ինձ թուի՝ գանցոյց զարմանալեօք զՀամբրամեան փորուածոյ սենեկօքն և զամ բարտակաւ գետոյն որ առ ստորոտով<sup>3</sup> լերինն Վարագայ. զի նորայն գոնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մեծ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարստահարէ զամնայն միտս և զգործո իմաստնոցն առ ի քան զինքն եղելոց:

Խւ այնուհետև ժողովեալ ի դուռն ալքայի իշխանաց և տերանց, ազատաց և ռամկաց, եպիսկոպոսաց և կրօնաւորաց, զի ամենկըեան օն անդր փութապէս շինուածս և ձեռակերտս հաստատեացեն, հրաման տայցէ, զի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից ի թշնամեաց եկելոց. և թագաւորն գթացեալ ոչ արգելու զինդրեալ պարզեւն. և զինի հնգից ամաց յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել:

Յայնժամ և իւր իսկ արքայի ամենիմաստ հասողութեամբն հանդեմ բազում արուեստաւորաօք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել առ ստորոտով լերինն, որ է գագաթն կղզոյն, զտեղիս զքօսացուցանողս վայելչաւորս, ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան ձգելով պարսպունս, յարդարելով գփողոցս և գարս գարս դարստանաց և գահս ըստ գահից տէրու-

<sup>1</sup> ԱՅԼ օր՝ գահոյս:

<sup>2</sup> ԱՅԼ օր՝ զօրովք:

<sup>3</sup> Հին օր՝ առ ստորոտաւ:

թեանց և բուրաստանս և պարտէզս, բուրաստանաց և՝ ծաղկոցաց որոշեալ հովիտս. զորս վաղվաղակի ածեալ ի կատարումն հաստուցանէ զամենայնն. ևս և ծառատունկ բազում, զոր ոռոգեալ արբուցանն ի բարեհամ և անսպառ աղքերէն, որ ակնարկիլով խնամողին Նստուծոյ կայ ի մեջ քաղաքին:

Խւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն աղքաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր գկատարումն՝ ումեմն ի նոցանէ ծարտարապետի առն իմաստնոյ և հանձարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն, ի կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն. որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամք չափով ունի զպարզուածն, գունդ անապակ կրոց և քարի, իրրե զհալուածն<sup>1</sup> կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ. և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցզուիս նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արդարեւ արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս: Աւսի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյմ, անթիւ մտաց և անզնելի աչաց. ունի և գումբէթս երկնահարթս ոսկեզարգս<sup>2</sup> և լուսաճաճանչս, յոր թէ նայել ոք կամիցի՝ իբր թագաւորի իմն պատիւ<sup>3</sup>. առնելով նախ ի բաց առցէ զիսյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն հազիւ թէ նշմարել կարիցէ զզանազան դեղոցն կերպագրութիւնս:

Խւ է կարգ շինուածոյ տաճարին ահեղ իմն և զարմանալի, և այնքան բարձրագոյն և անհաս է մտաց՝ զոր օրինակ թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորանի միոջ զըազում ժամն նայեացի, արտաքս ելեալ ոչինչ յորոց<sup>4</sup> նայեցաւն պատմել ումեք կարասցէ: Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երեսի արքայ նազելի ծոխութեամք, շուրջ զիւրեաւ<sup>5</sup> ունելով պատանեակս լուսատեղակս, սպասաւորս ու-

1 Յօրինակոն՝ զհաւուածս:

2 Այլ օր՝ ոսկեզօծս:

3 Այլ օր՝ պատիւս:

4 Այլ օր՝ որոց:


5 Այլ օր՝ գիւրեւ:

րախութեան, ընդ նմին և դասս գուսանաց և խաղս աղձկանց զարմանալց արժանիս. անդէն և սուսերամերկաց հոյլք և ըմբշամարտաց պատերազմունք. անդ և դասք առիւծուց և պյոց գագանաց. և անդ երասմք հաւուց զարդարեալք ի պէսպէս պաճուճանս. զոր եթէ զամենայնն որ ի նմա գործք ի թիւ ոք կամիցի արկանել՝ բազում աշխատութեան պէտք են անձինն և լողաց:

Եւ է փառք տաճարին ահեղ իմն և զարմանալի. եղեալ են ի նմա զրունք հատուածոյք մանք յօրինուածով և հրաշլի գեղգեղմամբ, ի բանալն իւրեանց երկրացիկք են, օդարելք զովացուցիչք. իսկ հուպ առ միմեանս գոլով երեմն իր լիւ զմի պատկեր:

Պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթ լուերս իրբե ծո. և հաւաստապէս ծշմարտութեամբ նուազեաց զասեխ<sup>1</sup>, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս. իսկ և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց դաւառին ի մէջ քաղաքին երեմի իրբե զմեծ մի բլուր. ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զքարտանձաւ ծայր կղզյն:

Պարսպէ անմերձինալի ամրութեամբ և զծայրս ամրոցին, և շինեալ ի նմա շտեմարանս մեծամեծս և համբարանոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց: Այլ եթէ զամենայն զզարդ շինուածոյն, զոսկեզարդ փողոցն և զգումբէթակապ խորանայարկսն և զզանազան տեղիս գահոյիցն<sup>2</sup>, ոլք առաւել այլակերպութեամբ մի քան զմի գերահրաշապէս փայլեն՝ և ըստ արժանեացն մանրամասնաբար գովասանել ոք կամիցի՝ կարծիմ թէ յանհասութիւն ձկտեալ տատանի, որ և հասանելոյ չէ կարողութիւն: Իայց մեր զդիպողսն և զպատշաճաւորսն որքան է կարողութիւն՝ ի լրումն ընծայեցաք գեղեցիկ քոյոցդ ախորժակաց, ով քաջազգի և տան մեծի արգասաւոր և նախնական մեծ:



<sup>1</sup> Այլ օր՝ ասելու

<sup>2</sup> Յունիկական հաշվեցին:

## ԳԼՈՒԽ Ը.

Յաղացո գերապայծաւ և պանծալի ենթեցոյն որ յԱղիամար ժաղածի, որոյ նիւն նոյսաբառուուն-նեան<sup>1</sup> արտեցն բերաւ յերիշէ հեռապանէ. զբոյ մեւ զիքն և զբեշն հասաբըւա յայս արտացու:

Եւ ժամանակս շինութեան հոյակասպ և հոչակաւոր և բարձրանշան քաղաքին Աղթամարաց բարձրացոյց փրկիչն մեր Յիսուս զբազուկս օծելոյն իւրոյ Պագկայ, հարստահարել զգազանաբարոյ ազգն Խոմայէլի. զորս կապեաց զձեռանէ իւրմէ հաստահիմն խորհրդովք և պատերազմական ուժեղ արտօթեամբք, իբրու դանդանաւանաւ իւրիք<sup>2</sup> զկզակս նոցա ճմիեալ թոշնացուցանէր, սկսեալ ի Մարաց և Պարսից զբոլոր Ատրքապատական, մինչեւ ցիուժատան. որում կամեր աւանդէր, և յորոց ոչն կամեր ի բաց կորդէր, զայլս ի վերայ այլոց յարուցանէր, և դհազարս և զբիւրս ի նոցանէն իմաստութեան սրտմն սատակէր. իսկ այլոց պատերազմաւ պատահեալ տայր բերանոյ սրոյ և յանխնայ կոտորէր, երբեմն անձամբ և երբեմն ի ձեռն զօրացն:

Եւ յառնելն արքայի զայսոսիկ յաճախեաց պատերազմաւ և ի վերայ Ասորեստանի և դաւառս բաղումն ամրոցովքն հանդերձ յինքն ձգեալ կորդեաց: Եւ տեսեալ մերձ ի դրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանն Աղջնեաց ի գեօղն Կոտում կոչեցեալ, լինելով սեփհականաբար Օռուրարեկն կոչեցեալ ազգի՝ սպառ սպուռ կորուսեալ ծնծէ զազգն, և զշնուածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձե պղծալից յարկացն զտաճար փառաց: Կատանօր կատարի ասացեալն ի մարգարէէն, առ հանէ զպատուականն յանարժանէն՝ իբրեւ զքերան իմ եղիցի», ուր միշտ հանգչի Նոզին սուլբ, վերագրելով զմարդիկ յանստուել լցոն:

Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր

<sup>1</sup> Ա. Ա. օր.՝ սպառաւորութեան:

<sup>2</sup> Ա. Ա. օր.՝ գանդանաւանիւք:

ի վեր անդր ցուցաք, այր<sup>1</sup> լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր՝ հրաշակերտէ զեկեղեցին զարմանագործ արուեստիւ. և զօր վերագրյնն ցուցաք կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն չշգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ յԱրքահամայ<sup>2</sup> և ի Դաւթէ և մինչև ցտէր մար Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանագործ տեսլեամբ։ Ատեղծագործեալ ջոկադրէ և ի կարգս եկեղեցւոյն զհոլովս երէոց և զերամն հաւուց, միանդամայն և զդասս գագանաց, խոզից և առիւծուց, ցլուց և արջոց, ընդդէմ միմեանց զարդարեալս, զկենդանականին նոցա յուշ առնելով զմարտ, որ է յոյժ ըղձալի իմաստոց, ածեալ զթիկամբք եկեղեցւոյն և շրջապատ պարունակ<sup>3</sup> մի պանձալի մանրամասն հատուածովք յօրինեալ, կերպագրեալ որթս խաղողաբերս այգեգործովք և զագանովք և սողնովք հանդիրձ համակեալք. որոց և կերպարանքն այլ և այլ գանազանութեամբք ըստ իւրաքանչիւր մասին առքերեն զտեսակաւ։

Իսկ ի չորից կողմանց ի վերայ գագաթան սրբութեանցն չշգրտագործեալ զըրից աւետարանշացն պատկերս, որք և արժանաւորապէս իսկ են պսակ ուրախութեան սրբոյ եկեղեցւոյ և վերագրյն քան զամենայն սուրբս։

Նկարագրեալ է տեառնազմկելով և զփրկարկան պատկերս, որ վասն մեր զգեցաւ մարմին երեելով մարդ, և է ի կամարս արևմտական խորանին. նմանահան չշգրտութեամբ յօրինեալ է ընդդէմ Փրկչին և զփառազարդ պատկեր արքային Դագկայ, որ մեծապարծ հաւատովք բարձեալ ունի զեկեղեցին ի վերայ բազկացն, իբրև զսափորն ոսկի լի մանանայիւն և իբրեւ զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ, կայ առաջի տեառն, կերպագրեալ այնպէս, որպէս թէ զթողութիւն խրնդրեսցէ մեղաց։ Որ թէպէտ և մերս պատմութեանց իցեն բանք՝ սակայն թագաւորն ոչ վրիպի ի խնդրեալ պարզեացն, յուսացեալ առ հանդերձեալ հատուցմունսն։

Դարձեալ և ի հարաւակողմ կուսէ խորանին ի վերայ գը-

1 Յօրինակն՝ այլ

2 Այլ օր՝ յԱրքահամ.

3 Այլ օր՝ բարունակ։

լան հկեղեցւոյն յօրինեալ է ի տեղի գահոցից, ի բարձանց ի խռնարհ կամարաձև աստիճանով զէջսն ունելով, որպէս զի իցէ տեղի աղօթից թագաւորին զուսպ և զերծ ի մարդկանէ, որով ի միտս իւր հկեալ անզբազապէս ընդ Աստուծոյ խօսեցի:

Իսկ ի ներքուստ կոզմանէ զարբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապահոյն դեղովք, դրամբք արձաթապատօք և լի ոսկեհուռն զարդիւք, ոսկիպատ պատկերօք և ակամք պատուականօք և մարգարտահիւս զարդիւք և պէսպէս երեւելի և պայծառ սպասիւք, զոր հրաշափառապէս եցոյց մեզ երկրորդ Երուսաղէմ, միանգամայն և դուռն վերին Սիօնի:

Աստանօր կատարին մարգարէութեանն նուագք, թէ ուրախ լեր, անապատ ծարաւիր, և դարձեալ՝ եթէ այնծասցէ երկիր, և ուրախ եղիցին կղզեք բաղրումք: Երդարև սա էր երթեմն անապատ ծարաւի, իսկ այժմ քաղաք մեծին Աստուծոյ գետահետեալ յերկուց մշտաբուղն աղբերաց, ի սրբոյ աւազանէն և յանապական արենէ Որդւցն Աստուծոյ՝ արբուցանէ զոգւով ծարաւիս:

Իսկ զօր նաւակատեաց սորա դասիւք եպիսկոպոսաց և իշխանաց շքեղացուցանելով տօն մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարձանօք յիշտակ ազգաց յազգս: Ահա ասացաք որ ինչ յաղագս սրբոյ եկեղեցւոյն:

## ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս մեծի պատերազմն ընդ արան արաբացոյ է դրսուս ճայրաւաղագին Դաստիայ, և որ ինչ գործ+ +աշունեան մեծի արային ձայոց Գագինյ և որ ինչ յաղթարկեան գործ+:

Եւ որպէս ի վեր անդր պատմեցաք վասն անիշխան լինելոյ Պարսից, ըստ զրեցելումն թէ գատաւոր ոչ զոյլ Իսրայէլի», և իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճէր: Ի սյն ժա-

մանակս պյու մի արաբացի ազգաւ, պյու հմուտ պատերազմաց և գոյծոց զենուորութեան. առ կովոզավիզ ամբարտաւանութեամբ յինքն հայեցեալ՝ կարծեաց ինքնազուխ լինել: Աւստի և զօր գումարեալ յանկարծօրէն թեամփոխեաց անցանել ընդ Դողմէնաստան և ընդ աւանն Նախճաւան, զբումբ ածեալ և զօրս Հարուրն կոչեցեալ գաւառի, գոյ հասանէ մինչեւ ցմեծ մայրաքաղաքն Դուին. և վաղմաղակի հարկապահանջո և սատիկանս առաքեալ յիշրարատեան գաւառ<sup>1</sup> և մինչեւ ցԵրագածն կոչեցեալ ուն, որ է բաժմին<sup>2</sup> կալուածոց Նրասայ որդոց Սմբատայ՝ ընդ իւրումն նուածէ իշխանութեամբ: Խւ քանզի Երաս ոչ կարսղանապր ի դիմի հարկանել բռնացելոյն ի վերայ ինքեան՝ ձայն արկանէ յարքայ ի ձեռն հրեշտակաց և հրովարտակաց, զի եկեալ փրկեսցէ զնա ի հարկապահանջ բռնութեանցն հինք. և արքայի յիշեալ զգութ արեան հարազատութեանն՝ ել զնաց զօրգք բազմօք զհարազատին խընդիւ զքէն վրէն վրիժուց:

Իսկ Երաս որդին Սմբատայ հպարտացեալ գայ իջանէ ի դաշտն Վազգարշապատ քաղաքի, կամեցեալ յառաջադրյն քան զգալուստն մեծի թագաւորին Հայոց Գագկայ անձինն ինչ ստանալ պարծանս: Իսկ պյուն այլազգի քանզի զիտէր զնմանէ, թէ ոչ է հմուտ պատերազմաց՝ եկեալ հասանէ ի վերայ նորա սակաւ զօրգք և հարեալ զնա ի փախուստ դարձուցանէ: Մաշեալ ի սուր սուսերի ի զօրացն նորա արս իրբե ն, և առեալ զկապուտ զօրացն և զբնակչաց երկրին, և հրձիգ արարեալ զաշխարհն ամենայն՝ գառնայ ի քաղաքն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ: Խւ Երաս այնուհետեւ փախստեայ եղեալ մազապուր անկանի յաշխարհն Վարաց:

Խւ արքայի լուեալ զգոյժ աղաղակիս այսորիկ՝ վաղվաղակի հասանէ ի դուռն Դունայ յեզր գետոյն Նրասխայ, հանդէա վերապին պրոց, յորմէ եկեալ մեծն սուրբն Գրիգորիոս լուսաւորեաց զայացաստան աշխարհս: Իսկ այլազգին յորժամ ետես զբանակ արքային մեծի սփռեալ առ լերամին Գինոյ կոչեցեալ բլիր, որ արդարեւ անուն բլրակին մարդարէարար, իբրու յանապակ գինոյ զմայլեալ ուրախ արար զարքայ յիւ-

1 Այլ օր՝ կոչեցեալ գաւառն:

2 Այլ օր՝ որ բաժմին:

րումն սահմանեալ վայրի. որ թէպէտ և ի բարձանց առեալ դշնորհ յագթութեանն, բարեխօսութեամբ սուրբ Առևսաւորչին<sup>1</sup>, որպէս և իւր իսկ տօնախմբիւր յիշատակ յամսեանն սահմի, որ օր ժ էր ամսոյն. սակայն և ըլուրն շնորհս ունելով ոչ ունայնանայ ի գովիտից աստի պատմութեանցս. և այնուհետեւ առն ամբարշտի զօր գումարեալ արս իբրեւ ծգու՝ դիմէ ի վերայ արքայի, գունակ այլոց ոմանց զնա կարծելով. և մինչդեռ արեգակն յերրորդ ժամուն արփիաթեէր զկամարտն երկնի, և դեռ ընթեռնոյր Եւետարանն սուրբ՝ գոյ ոմն ի սուրբանորակաց և ասէ, «քնոդէ՞ր ձիգ և յաւէժ աղօթէ տէր իմ արքայ, և ահա ձակատ այլազգեացն մերձեցաւ ի բանակ սրբութեան տեառն»: Խու արքայ այնուհետեւ կայիւն սրտիւ և հեղահամբոյր քաջութեամբ ոչ զայս և ոչ զբարբառ առ ազդողն ամբառնայ, այլ կատարեալ զսովորական աղօթսն, իմացեալ զիմաստնոյն թէ, առհառն է պատիրազմն, և թէ առէր ամբարտաւանից հակառակ կայ, և տայ զշնորհսն խոնարհացն»:

Յայնժամ արքայ վառեալ ի զէն և ի զարդ արիական քաջութեան, առեալ զզօրսն զնդին հաւատացելոց, հանդարտ յառաջ մատուցեալ՝ գունդս գունդս պատշաճաբար յօրինէ զիւրոյ ձակատուն. և ապա այնուհետեւ սուսերամերկացն հոյլք զմիմեամբք խառնեցան, և ձայթմունք և թնդիւնք և փայլատակմունք իբրև յամպոց ի վայր թափեալ երևեցան, և ահագին օրն սկսաւ լինել: Յայնժամ ի վերին օգնականութեանէն զօրացեալ լինէր արքայ իւրականն զօրօք, մանաւանդ զի և սուրբ հայրապետն ։այսոց մեծն Խընէ, ելեալ ի կատարա բլերն Պինոյ՝ հանրերձ քահանայական դասիւքն, հանգոյն սրբոյն Խերտէտի անխոռնարհելի ունելով զնեռու, մինչեւ պարտեցաւ երկրորդն Եմազէկ. ուստի և գունդ զգնդիւ անցեալ զօրացն ։այսոց՝ գոյ պատահէ արքայ զմիջոցաւ ռազմին այս լազգեաց, յորտւմ էին արք հետեակք ըմբշամարտ զինակրաց իբրեւ ք. որոց ի դիմի հարեալ արքայի, իբրեւ կայծակն ընդ եղեգն հարեալ՝ այնպէս խորտակեաց զռազմաց զօրուն այլազ-

1 Ա.Յ. օր.՝ սրբոյն Դրիգորի Հուսառ և բարձրական առաջարկի:

2 Ա.Յ. օր.՝ Բլրին գինւոյ:

գեաց. և այնուհետև բազմութիւն դիակացն յերկիր անկելոցն էին թանձրացեալք ի վերայ երեսաց գաշտին իրբեւ զորայս անդւյց լից յաւուրա Հնձոց. ուստի և ընդ սրախողիոզն և ընդ գետավեժն սատակեցան արք իրբեւ ըստ, և զբազումն ի նոցանէ ձերբակալս արարեալ՝ զոմանս զվթայակապս յզէ յանառն ՚Նարիւնս: Իսկ արանց Տ աւելի կամ պակաս զարիւնս անձանցն պարգևս նոցունց չնորհէ. և հրամայէ արձակել զի երթեալ ի քատապն պատմեացն զոր տեսինն:

Եւ ինքն արքայ ածապարեալ անցանէ ընդ գետն ՚Նրասի, կամելով հրձիգ առնել զքաղաքն ծագէ ի ծագ, և զաշխարհն շուրջանակի, մինչեւ ծերք քաղաքին<sup>1</sup> անկեալ առ ոտս նորա խնդրեն զիսաղաղութիւն, տալով հարկս և պատանդս. զոր առեալ արքայի դառնայ խաղաղութեամբ յամուրն ՚Նարիւնս, բարձեալ զգէն և զատպազէն առնեձիոյ զօրացն. այլազգեաց անշափ բազմութեամբ, և ի բազում աւարառուաց իւրոցն զօրաց ոչ ինչ տուժէ արքայ յումեքէ, այլ հրամայէ հանդէպ երեսաց տանել զինչ և շահեցաւ:

## ԳԼՈՒԽ Ժ.

Յարյակուտն ՚Նելմիացն է տաղաժն Հարամակերպ և է գաւառան Ռուբադ, և որ ինչ յաղթարկեած զըրացն Հայոց է շորհացն Ռուբադոյ:

Յաւուրսն յայնոսիկ մասն ինչ ի զօրաց ՚Նելմկաց դիմեալ, անցանել կամելով յաշխարհն Սոորեստանի. և հասեալ ի քաղաքն Հարամակերպ և ի զաւառն Ռղբագ, գերփեալ զինչ և գերեալ զկանայս և զտզայս, որչափ և ձեռն հասանէ: Եւ զայն լուեալ արքայի Հրամանն տայ զօրաց իւրոց հետամուտ լինել զինի նոցա քաջի առնեձիոյ. որոց առեալ դհրաման յարքունուստ՝ վազազոյն աճապարեալ ժամանեն նոցա յանհոգս լինելով յաշխարհին Կնձևացեաց. և ի դիմի հարեալ քաջամարտիկ նիզակախուռոն ՚Նելմկացն զօրաց՝ կոխան

<sup>1</sup> Ցայլ օր. Հեր՝ բաղադրին:

իբրև զիւռիւ գաշտաց յոտս երիվարացն Ապյոց, յորոց վերայ  
սուր եղեալ կոտորեցին արս իբրև և և առեալ զբանակն նո-  
ցա յաւարիթ, փրկեալ և զգեկեալսն՝ դարձան յիւրաքանչիւր  
տեղիս մեծաւ յաղթութեամբ:

### Գ. Ա. ՈՒԽ Ժ. Ը.

Յայրաբարութեան ինքն ինդադրութեան և անյին և ժամանաց Թշի ար-  
տոյին Ապյոց Գագիկա:

Իշ քանզի նախածանօթ և յառաջգիտութեամբ Աստու-  
ծոյ, գիտելով զնա թէ այնպէս լինելոց է, անդստին յորովայ-  
նէ մօր իւրոյ ելից զնա իմաստութեամբ հոգւովին: Վասն ո-  
րոյ և չնորհեաց նմա պատկեր լուսավարդ և հասակ փառաց  
անհամեմատ ի մէջ ամենայն մսեղեաց բանական ազդի. հարթ  
և ուղիղ, վայելուչ և պայծառ երեսքը հեր զլիսոյ նորա թը-  
խակերպ, գանգուրագեղ գիսաւորութեամբ ուղերեկ ջոկացիալ  
ի վերայ սպետափառ<sup>1</sup> ծակատուն յոյժ խուռնախիտ թան-  
ձրութեամբ. մրազարդ կամարաձև կցօւացք յունիցն<sup>2</sup>, և բիրք  
և արտեանունք հանդերձ պտղովք վկայեալք, իբրև զշուշան  
ի հովիտս ծագկեալ<sup>3</sup> ծաւալին հրաշազարդ յօլինմամբ: Ունչք  
երկայնազոյնք և վայելչաւորք, լսելիք դիւրալուրք և դիւրա-  
հաւանք ի բարիս և պայծառք լուսահրաշ նմանեալ գունով:  
Երթունք նորա իբրև զլար կարմիր, ատամունք նորա հուպ  
առ միմեանս, զտեալք յազտոյ: Տէգք մորուաց նորա զօրէն  
մանուշակի ծագկեալք ի վերայ գունագեղ այտից՝ ի կերպս  
զուարիթնոց տեսողացն զնա ցուցանէր: Խւ յիրաւի այսպի-  
սիք նմա շնորհազարդ փառաց պարգևք ի վերուստ. վասն զի  
նա լստ նմանութեանն Օովսիայ թագաւորեալ նորոյ Իսրայ-  
էլի՝ վերագցն քան զնա լըացցց գիւրգս եկեղեցայ սրբոց:  
Ուստի և յոյժ սիրելի էր ինձ յայսմ ժամանակի առնուլ ի

1 Ա. Յ. օր.՝ սպետափառ:

2 Ա. Յ. օր.՝ յօնիցն:

3 Ա. Յ. օր.՝ ծագկեալ երեսալ:

Հաղկացինն աշխարհէ և ի Տպազքաղաքէ, մանաւանդ թէ ի քարկովշացն, և յՆղերաստրացւոց<sup>1</sup> և Թէրէացւոց վաճառուց գոսկեանալին տպաղիոնք, և շարամանել ի թագի նորա յաւուրս թագի զբօսանաց<sup>2</sup>, մանաւանդ յորժամ ի փրկական պասկը տէրունական տօնիցն իբրե զփեսայ յառագաստէ ծագիւլ ըստ նմանութեանն արուսեկին. ուստի և ի գունագյն ականցն հիւսելոց մարդարտախուռն զարդուցն ի զլուխս և ի լանջս և ի գաւակս երիվարին խրոխացելոյ ձաճանչք լուսոյ ձառագայթ էին. այլ և ի հոսանս հրաճգութեանցն առաջի նորա և ի կայթմունս թնդականացն և ի հնչմունս փողոցն առ հառարակ դղրդեալ բիւր բիւրոց մարդկան, ամենայն ակն զնաբազմայր տեսանել, ուստի և ամենայն հոգիք աղաղակէին Տէր, կեցր զթագաւորն և լուր մեղ. և արդարե արժանի էր օծեալն Խստուծոյ և բարձրն քան զամենայն թագաւորս երկի՝ այսպիսի և ի վեր քան զայնս գովութեանց:

Վասն զի նա խաղաղութեան և շինութեան առիթ: Նա աւագակաց խանձող և հերքիչ: Նա իրաւանց և դատաստանաց արդարով կշռիչ: Նա ամբարտաւանից բարձրաթոիչ թեւոցն հարթող: Նա որջացելոց բազմաց ի բարձրաբերձ ամրոցաց ստորիջոյց: Նա ապստամբաց անզերծանելի ծուղակ: Նա դաշտնի նենգութեանց թշնամեաց նախատեսող և կարթ կորդիչ: Նա սիրելեաց և կամարաց իւրոց անծախ պարգև, այլ և անուշահոտ բուրաստան, լի համապայծառ ծաղկովք: Նա տան իւրում կանաչատունկ:<sup>3</sup> ոսկեսաղալիթ, լի աստուածայորդոր սիրով և բերկրաբեր աւետիք: Նա որդուոց իւրոց կրթարան բարեաց և մշտաբուղիս աղբիւր իմաստից: Նա ամենայն արուեստականաց դոներաց և անվրէազ քանոն: Նա բանաւրաց սպառնալեաց բբաբեր, և աշարկու հողմոցն ընդդիմակաց լեռոն բարձր և անդրդուելի վէմ: Նա խարդախող և կարծեցուցիչ հրովարտակաց և պատգամաց այլազգեաց յղելոց առ նա հուր ծախիչ: Նա ի սիրտս բռնաւորաց Բաբելացւոց, Արաց և Պարսից, Օունաց և բարբարոսաց հրացեալ և յարտշարժ բեկու: Նա հարցափորձօղ իմաստնոց խորք ծովու կամ

1 Այլ օր՝ Յաղերասրացւոց:

2 Հին օր. աստ և յէջ 295<sup>3</sup> սբու-

սանաց:

3 Հին օր՝ կանաչտունկ:

բարձրութիւնք երկնից որ անհասն է: “Նա յոսկեզարդ գահոյան ուրախութեանց բազմեալ նազելի ճոխութեամբ իրրե զառիւծ զօրաւոր հաւատովք ածնցեալ ի փառս տեառն:” Նա ի սենեակս ոսկեզարդս երեկօթիցն քաղցրանինջ քնով զուղեալ իրբեւ զվիշապ, և ահ, հզօր զօրութեան նորա շրջապատեալ զբոլոր հայաստանեզքս՝ իրրե զգարիսապ պղնձի անմերձենալի պահէր յերկիւղէ և ի գաղտաձիգ նետից թշնամնաց:” Նա ի ի վերայ դրացեաց իւրոց և իւրոց հնազանդելոց հովանի ամբապահեստ, և արագ . . .<sup>1:</sup>

### Դ. Ա. Ա. Ա.

Վասն անցիցն անցելոցն ընդ այս, և վասն ասպատակը իշխան Աբրամէնի և որդուոց<sup>2</sup> իշխան:

Յետ վախճանելոյ ալքային<sup>3</sup> Գրագիայ Արծրունոյ որդուոցն Դերսանկի և բառնալոյ իշխանութեանն հայոց, կատարեցաւ ասացեալն ի մարդարէէն Խրեմիայ ի վերայ հայաստան աշխարհիս, ևս առաւել ի գաւառն Վասպուրականի<sup>4</sup>, եթէ «ժողովուրդք իմ անտերունչք շրջեսուք»<sup>5</sup>, և տիրեցին ի վերայ մեր ազգն հագարու, և յամենայն ժամ ասպատակելով յառի և յաւարի հարկանէին զամենայն քրիստոնեայս, ի սով ի սուր և ի գերութիւն մատնելով զմեծամեծս և զփռքունս. զի չիք ուստիք յցս և ակնկալութիւն, և գեռ ևս ի սակաւուց մնացեալ էին ի պակասաւոր իշխանացն հայոց, և բրուամբ ունէին զամուրս բերդից և քարանձաւաց: Կապա թագաւորեցին ի վերայ մեր մեղք մեր<sup>6</sup> և հարցն մերոց, և մատնեաց զմեզ Տէր և զմնացեալսն ի ձեռս անօրէն արծաթակուրծ եղեռնաթիւր և մեղսասէր զարմին Խլիմայ, որ են

1 Հին օր. ունի ասո՞ւ աւաղյայս նասութիւնն է անկեալ, վերիքն չկայ:

2 Հին օր.՝ որդւոց:

3 Այլ օր.՝ արքային հայոց:

4 Եսոյ օր. չիք՝ ի վերայ հայաստան

աշխարհիս ևս առաւել ի գաւառն Վասպատականի:

5 Այլ օր.՝ շրջեսուք:

6 Այլ օր.՝ ի վերայ մեղքն մբ:

ազգք Թուրլբաց. և տիրեցին աշխարհի ի ծովէն արևելից մինչև յծովն արևմտից, և ոչ մնաց ի նոցանէ մինչև յըարտնանձու մի որ ոչ մատնեաց Նստուած ի ձեռու նոցա. և նոքա ունելով զբնութիւն արիւնաբու գազանի. զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ դիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողն և ահարեկ առնէ. և բնակութիւն նոցա ի լերինս և ի գաշտս և յանապատս, որպէս զվայրենի գազանաց. և են շաղղակիրք որպէս զգազանս. ոչ պատուին զմեծամեծս, ոչ խնայեն յալիս և ի հարկիսս ծերոցն, ոչ ողորմին երիտասարդին և տղայոյն, ոչ խնայեն ի մանկութիւն ումեք. ազգ չար և դառնացող, ազգ որ ոչ ուզգեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ Նստուած կհոգի իւր. Զայս ազգ ետ Նստուած և մեղք մեր՝ թագաւոր աշխարհիս ։ այսոց, ըստ ասացելոց սրբոց մարդարէիցն Ենանիանցն, եթէ ամանեցեր զմեղ ի ձեռու թագաւորի անօրինի և չարի քան զամենայն երկիրո:

Յայնմ ժամանակի այր ոմն երևելի տոհմակից գտեալ արքային Անէքերիմայ մեծի, զոր մարդարէն Եսայի պատմէ վասն նորա, և սա նոյն անուանակից հաւուն իւրոյ Անէքերիմ անուամբ, էլ և եղբայր նորա մեծ իշխանն Դերանիկ<sup>1</sup>: Սոքա ի ձեռն օգնականութեանն Նստուծոյ և ի խնամս տեսչութեան ։ ուգույն սրբոյ տիրեցին հայրենի բնիկ գաւառացն իւրեանց Վասպուրականի, և ի դիմի հարեալ այլազգեացն՝ ոչ տային թշլ աւերել զաշխարհն<sup>2</sup>. զի ունեին զանմատոյց ամրոցն զԱմիրամաշէնն, զաւանն Վան և զերկնապիշ և զպարանոցատանջ զանափիկ բերդն զԱմիւկ, առ ոչինչ համարելով զյարձակումն այլազգեացն յարաժամ այլ հանապազօր իկրունին դարձուցանէր օգնականութիւնն Նստուծոյ:

Ի սոցա ժամանակի երևեցան գանձք աստուածային նշանին, յորոյ վերայ եւեղ զարիւն իւր միածին որդին Նստուծոյ. և էլ համբարեալ ի լերինն Վարագայ, ի գագալմն քարանձաւին ի ձեռն սուրբ որոշին և թագաւորագն կուսին ։ ըստիսիմիայ, յայտնեաց Նստուած, որպէս և յաւուրսն Կոստանդիանոսի արքայի և Կիւրով հայրապետին. զնոյն և գաւառն Վասպուրական ի լեռուն Վարագայ ցոլացեալ նշան

<sup>1</sup> Ա.Ա. ՕՐ.՝ Դերենիկ:

<sup>2</sup> Ա.Ա. ՕՐ.՝ Պաշխարհն իւրեանց:

տէրունական խաչին՝ յերրորդ ժոմու թռուցիալ ի գագաթանէ քարանձաւին՝ բնակեցաւ ի նոյն լեռին ի հովիտ մի, ուր ևն աղբիւրք բարեհամբ. և սուրբ թագաւորին Աննկերիմ<sup>1</sup> շինեաց ի նոյն տեղւոց եկեղեցիս մեծածախս, և ի սարուտ լերին շինեաց զիսյակապ և զհուակաւոր մայրաքաղաք մենաստանացն զԱլարտի, և կարգեաց ի նմա արս հաւատարիմս և զարդարեաց բազում կրօնաւորօք և երկնագումար դասիւրք սուրբ քահանայիւրք. և կարգեաց նոցա ոռմիկս, և կէին ի խաղաղութեան ի գաւառն<sup>2</sup> Վասպուրականի. ամենայն աշխարհաց անկելոց և գերելոց տեղի ապաստանի ի նագանիւր:

Խւ վասն մեղաց մերոց յարձակեցան ի վերայ մեր ազգն Ելիմացւոց, զոր վերագոյնն ասացաք. և հանապազօք նեղէին և մաշէին ի սուր սուսերի զագգն քրիստոնէից: Եպա զմտաւ ածեալ արքային Աննկերիմայ զտէրունեան հրամանն որ ասէ, միթէ հալածեացեն զձեզ յայսմ քաղաքէ՝ փախիջէք ի միւնո. արդ վասն զի ոչ գոյր այլ ուստեք օգնականութիւն բաց ի տեառնէ, և օգնականութիւն տեառն է ի թիկունս արքային Յունաց, և յայնժամ ունէր զկայսերական իշխանութիւնն զաստուածապահ քաղաքին զԱռուանդնուպօլսի<sup>3</sup>, այր ոմն աստուածասէր և բարեպաշտ Վասիլ անուն կոչեցեալ, և ոչ էին ձեռնհաս թագաւորին Յունաց ի վերայ աշխարհին չայց, այլ ինքեանք կամաւ ունէին զտէրութիւնս զաւառաց իւրաքանչիւր ոք, և ոչ ժուժէին յարձակման այլազգիաց: Յայնժամ իրրե որդի առ հայր դիմեցին մնացորդք տանն Խորդումայ առ թագաւորին Յունաց. և նոքա լցեալ աստուածային սիրովն՝ գթացան յաղաշանս որդւոցն, և կոչեցեալ առ իւրեանս յիւրաքանչիւր գաւառաց՝ և տային պարգևու. և կարգեցին ի դուռն արքունի և տային փոխանակ քաղաքացն քաղաքս մեծամեծս և փոխանակ բերդիցն բերդս անմատոցա և գաւառս և գեօղս և ագարակս և սուրբ մենաստանս. և փոխեցին զհայրենի տունսն իւրեանց հայկազումքն Ղրծրու-

<sup>1</sup> Հին օր.՝ թագաւորին Աննկերիմ-  
մար.

<sup>2</sup> Այլ օր.՝ և կէին խաղաղութեան

աշխարհն:

<sup>3</sup> Այլ օր.՝ զԱռուանդնուպօլսոց:

նիքն Աենկրերիմ ի թուին հայկազնեան տումարին նև, և գէմ եղեալ զնացին յաշխարհն Յունաց ժորա արամքը, թող պկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեանն հոռոմոց. նոյնպէս և բազրատունին Գագիկ ուսդի Յովհաննիսի արքայի, և նա ևս փոխեալ զհայրենիսն իւր ի նոյն թուաբերութեանն նու և չոգաւ ի հոռոմո. և նոքա տիրեցին արեելեան գաւառին հայոց, մեծ աւանին Վանի և գաւառին Վասպուրականի և թագաւորանիստ քաղաքին Ենւոյ և աշխարհին հայոց:

Յորժամ եհաս համբաւ թագաւորացն երթալոյ ի հայոց և տիրելն հոռոմոց ի բանակն անօրէն և արիւնարբու զազանամիտ ազգին Խլիմայ՝ ապա ձիարշաւս արարեալ ասպատակայարձակ շառաշմամբ իրիւ զարծուի յերամն հաւուց ցոլացեալ արքայն Խլիմացւոց որ կոչիւր սուլտան անուամբ Տուղլուփ՝ են եհաս ի մայրաքաղաքն Ենի, և պաշարեաց զնա և առեալ մաշեաց ի սուր սուսերի. որ ի հեղմանէ արեանն ոռոգանէր երկիրն իրիւ ի ժամանակս հեղեղաց յարուցելոց. որ ասէին բազումք ի տեսողացն, թէ զտզայս գիացիկս թաւալ տալով արեանն ի գետն հասուցանէր, որ անցանէր ընդ զուռն քաղաքին: Խւ նովին ոծիւ այր ոմն ներքինի ժանդ և ապարասան և փոյթ յարբանեկութիւն սատանայի, արիւնարբու և շաղղակեր, Արահանդ անուն՝ եկեալ էառ յաւարի զգաւառն Վասպուրական, և եկն եկաց մինչև ցաւանն Վան, և զնա պաշարեալ տառապեցցց ի տառապանս խիտ. և զնա ևս մաշեաց ի սուր սուսերի, և զբնակութիւնսն այրեաց հքրով. նոյնպէս և զԾրծէշ քաղաք<sup>1</sup> Գնունեաց գաւառին Խւ ոչ մնաց տեղի ապաստանի քրիստոնէից, բայց միայն յանմատոյց ամրոցն Եմիւկ և յաստուածաբնակ կղզւոջն Եղիթամար, որ վայելչացեալ ունին զգեղ վայելչութեանն ամրացեալ ալեք և պարսպեալ խրոխտացեալ կռհակօք: Ի սոսա կատարեցաւ բան հոգերգողին Դաւթայ, որ ասէ, թէ տւրախ եղիցին կրդզիք և ամենայն բնակեալքն<sup>2</sup> ի նմառ. և հրճուեալ բերկրանօք ըստ հրամանին Սողոմոնի, իրիւ զաքաղաղ ի մէջ մայրեաց սիզալով և իրիւ զնոխազ առաջի հօտից կամ իրիւ

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ զԱրէշ գաւառն:

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ բնակեալն որ:

զթագաւոր ի մէջ գրաց՝ նոյնպէս և սոքա երեելի և փառաւոր գտեալ ի մէջ աշխարհին

Բնտրեաց տէր տեսուչ և վերակացու այսմ աստուածապահ և անմատոց ամրոցացս զայր ոմն տահմակից աբբային Անեքերիմայ ի գաւառն Ըմկոյ յազգէն Նրծրունեաց անուամբ Ծրղմաէհ կոչեցեալ մնացեալ իրրե զկայծակն ի փայլատականց հրոյ. և պահիալ զնա ամենահզօր<sup>1</sup> աշցյն Նստուծոյ յայսմ ծովածուփ վտանգաւոր ալէկոծեալ նաւաբեկութենէս, և որպէս ընտրեաց տէր զնոյ, և ի նմանէ աճեցին ամենայն ազգք և բազմացան, և որպէս ընտրեաց Նստուած զՆբրահամ և օրհնեաց զնա և զծնունդս որովայնի նորա, և որպէս օրհնեաց տէր զմեծն Դաւիթ և օրհնեաց գպտուզս որովայնի նորա և զօրացոյց զնա ի զօրութիւն անպարտելի՝ նոյնպէս և զսա ընտրեաց Նստուած զամենիմաստն զպոտուկուրապաղատն զՆբրղմաէհ, զորդի մեծ իշխանին և սուրբ մարտիրոսին Խոռոնկայ, որ յաւուր մեծի տօնի ծննդեան տեառն և մկրտութեանն՝ արժանի եղեւ առնուլ զպսակ մարտիրոսութեան բազում արամիք ընտրելովք ի գաւառին Մոկաց ի գիօղն Ծտիճանս<sup>2</sup>: Եւ որդի նորա զօրացեալ ի շնորհատուր պարգևացն Ծստուծոյ և լցեալ իմաստութեամբ և Հոգւովն սրբով. և Հեղ տէր ի վերայ նորա զիօթնապատկ շնորհս, հոգի զիտութեան և աստուածպաշտութեան, հոգի զօրութեան և իմաստութեան, հոգի խորհրդոյ և հանձարոյ, և լոյց զնա հոգի երկիւզին Նստուծոյ. և գերազոյն գտեալ քան զամենայն ազգս, Հեղ, խոնարհ, առատ, ողորմած, աղօթասէր, սրբասէր, այրեաց ակնածու, որբոց խնամածու, որ ոչ երդուաւ նենգութեամբ ընդ ընկերի իւրում և ոչ գտաւ ստութիւն ի շրոթունս նոցա. և հանապազ խոկայր յօրէնս տեառն ի տուէ և ի գիշերի: Եր և անձամբ վայելուչ մեծաշուք և բարձրահասակ, գանգրահեր և գեղեցկատեսիլ, քաղցրախօս և անուշաբարբառ իրրե զտատրակ. առեալ իւր ամուսին զդուստր Գըրիգորի արեելեան դուկի, և զթոռն մեծաշուք և տիկիցերակալ իշխանաց իշխանին Նլուզի, որ էր տէր և իշխեցող գաւառացն Ծաղկոտան և Կագովտի և մեծ աւանին Անդեղտանն:

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ ամենազօր:

<sup>2</sup> ԱՅԼ օր.՝ Նստիճանս:

Իսկ սուրբ որոշն Քրիստոսի անուամբ Մարիամ կոչեցեալ, որ և տիկինաց տիկին էր ազգաւ. սա մնեալ սրբութեամբ և աստուածապաշտութեամբ և երկիւղիւ տեառն և ըստ անուանակոչութեանն իւրում միացեալ ի սկզն Աստուծոյ և գերագոյն գտեալ քան զամենայն սուրբս, և առ ամեննեան գթած, ողորմած, հաստատուն ի հաւատս, զգոն և զգաստ, ոչինչ պակասութիւն ունելրվ ի պրոց թագուհեացն. աղօթասէր և աղքատասէր, և հանագազ սպասաւորէր սուրբ ուխտեացն<sup>1</sup>, որ էին ի սուրբ կաթուղիէն, յաստուածագարդ և գեղապածոյն սուրբ եկեղեցւոն և գեղապանձ անուանակոչութեան սուրբ Խաչին. զի զնա ընտրեաց Աստուած և հաճացաւ բնակիլ ինմա, և եղ ի պահեստի զգանձս աստուածայինս զաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին զՊարթեէին Գրիգորի, և զսեղանն սրբարար աստուածային խորհրդոյն և զգօտի սուրբ միջոյն և զգաւազան ամենազօր աջոյն, որ հովուէր զժողովուրդն տեառն, գերագոյն գտեալ քան զգաւազանսն երկոսինս մեծ մարգարէիցն Մովսէսի և Ահարոնի, և զհողաթափս աշխատասէր ոտիցն սուրբ կուսին Հռովսիմեայ<sup>2</sup> և զփողապատն ներկեալ սուրբ արեամբն, և զբազուկ սուրբ մարտիրոսին<sup>3</sup> տղային Երդլմսէհի, ազգակցի և անուանակցի պոտուկուրապաղատին և զայլ ևս նշխարս մարտիրոսացն. և զնշան տէրունական խաչին, յորոյ վերայ էր կաթուած արեան կենարարին, ընդելուզեալ ոսկով և մարգարտով. զոր ետ տէր ի ձեռն սուրբ և երջանիկ հայրապետին արհի եպիսկոպոսի<sup>4</sup> տեառն Դաւթի, որ դեռ ևս կոչի սուրբ նշան Նպարանից: Օ.ի էր տէրն Դաւթիթ ազգակից պոտուկուրապաղատին, և էին սոքա ազգք սուրբ և ընտրեալք ի տեառնէ, զոր յառաջագոյն ընտրեալ Հռուտոյն սրբոյ՝ տեսուչ և վերակացու լինել տանն Վասպուրականի, զմեծ իշխանն զանուանեալն Խեղենկի, զազգակից ալքային<sup>5</sup> Սկնէքերիմայ և թագաւորազն ցեղիցն Երծրունեաց: Նա ծնանի զթոռնիկ իշխան, այլ հզօր

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ սպասաւորէր սրբոց:

<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ սուրբ կուսին սրբայն Հըւափումեացի:

<sup>3</sup> Ա.Յ. օր.՝ և զբազուկ սուրբ և

մարտիրոս:

<sup>4</sup> Ա.Յ. օր.՝ երջանիկ արհի եպիսկոպոսին և հայրապետին:

<sup>5</sup> Ա.Յ. օր.՝ մծի ալքային:

և պատերազմող և քաջ ի գործ արութեան, և զեղբարսն իւր զսուրբ և զամենազով և զբարերջանիկ զհովիւսն քաջ, զտէր ՚Իւտիթ և զտէր Ատեփաննոս, զմեծ պսակքն եկեղեցւոյ, և զանուանակիցն մերոյ. Լուսաւորչին զտէր Գրիգոր. որ և փայլէին ի մէջ տիեզերաց, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց: Խւ ի Թոռնկայ ծնանի մեծ իշխանն Թաղէոս, այլ ընտիր ի դործ պատերազմի. որ օգնականութեամբն Նստուծոյ և քաջութեամբն իւրեանց ոչ տային թոյլ ական հատանել յարաժամ յարձակման թշնամեաց ի գաւառացն իւրեանց: Խւ Թոռնկի որդի Թաղէոսի, յորմէ ծնաւ սուրբ և բարեպաշտն Արդլմսեհ, որ սա իւրով աստուածիմաստ գիտութեամբ առաւելեալ քան զամենայն հարս իւր. նոքա ի գործ պատերազմի արի և քաջ, իսկ սա լի իմաստութեամբ և հանձարով վարէր զկեանս իւր խաղաղութեամբ<sup>1</sup>: Օք յաւուրս նորա կատարեցաւ հրաման տէրունական բանին որ ասէ, «յարիցէ ազդ յազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, և ի տեղիս տեղիս սովոր և սրածութիւնք և սասանութիւնք, և նշան յերկինս յարեգակն և ի լուսին և յաստեղս, և յերկիր տագնապ հեթանոսաց»: Ի սորա ժամանակս ելին արիական ազգն Ֆուանգաց, և ազատեցին զսուրբ քաղաքն Արուսազէմ ի ձեռաց այլազգեացն, և զայլ ևս բազում աշխարհս ի թուին զի՞լ:

Խւ տագնապէր երկիրս արեելեայց ի ձեռաց անօրինաց, յարձակմանէ յարաժամ այլազգեաց, որ իրմւ զյորձանս հեղեղաց յարձակէին ընդ երեսս երկրի, կամ իրմւ զամպս սաստիկս<sup>2</sup> շփոթեալս ի ճայթմանէ օդոց, և ի փայլատակմանց հրոյ ի ժաման մթացեալ գիշերոյ: Խղեւ փախուստն մեր ի ձըմերայնի և յաւուր շաբաթու, ըստ տէրունական հրամանին. և ոչ գտանէր յոյս և ակնկալութիւն քրիստոնէից, բայց միայն յաստուածասէր և յընտրեալ թագաւորակն արքայն<sup>3</sup> պոտուկուրապաղատն, և յազգակցէ մեծ և քաջ նահատակէն մամիկոնէին Վարդանայ. զի աղօթիւք և խնդրուածովք սրբոց հարցն և ազգակցացն զօրացոյց տէր զօծեալն իւր: Օք

<sup>1</sup> Այլ օր՝ աստուածպաշտութեամբ  
և խղաղութեամբ

<sup>2</sup> Եայլ օր. շէք՝ սաստիկս:  
<sup>3</sup> Եայլ օր. շէք՝ արքայն:

վարեաց զինանս իւր խաղաղութեամբ, և ընդ ամենայն ռւմբք զխաղաղութիւն հնարեր, զի տայր ի պէտս հարկացն զինանս և զստացուածս իւր, և ոչ դատէր գիւրսն առնուլ ինչ ի պէտս հարկապահանջողաց, ոչ սաստիւ վարեր զիշխանութիւնն իւր, և ոչ աշխիւ և սպառնալեօք, և ոչ տռկոսիւր. այլ<sup>1</sup> զամենեսեան խնամեր և սփոփէր և գթայր որտէս հայր ի վերայ որդւոց, զի ուսեալ էր ի վաղուց հետէ որ ասէ, թէ «եղերուք գթածք, որտէս և հայրն ձեր երկնաւոր գթած է»: Առա ծնան ուստելք է և դստելք է: Ի սորա ծննդոցս ընտրեաց տէր զմի ոմն, որում անուն էր Դաւիթ, նմանող եղեալ Յեսսէ<sup>2</sup> Ի-դղաշհմացւոյն, որ ընտրեաց տէր յորդւոցն նորա զԴաւիթ. և օրհնեաց զնա անանցանելի օրհնութեամբ մինչեւ ցյաւիտեանս յաւիտինից:

Սա նմանեալ մեծին Դաւիթի և վերագոյն գտեալ քան զնա, զի բարձրացացանել կամեցաւ տէր զեղծիւր եկեղեցւոյ իւրոյ<sup>3</sup>: Սա սնեալ ի տանն տէրունեան ընդ հովանեաւ աստուածային գանձուցն, զոր վերագոյնն ասացաք, ոյք էին ի պահեստի յաստուածաբնակ կզզւոցն Աղթամար<sup>4</sup>: Սա նմանեալ Աամուկիլի մարդարէին, սնեալ ի տաճարին տեառն և փոխանորդ եղեալ քահանայապետին Նեղեայ. և սա վերագոյն գտեալ քան զնա, ի մանկութենէ առեալ զլուծ խոնարհութեան՝ պահօք և աղօթիւք և խստամբեր ճգնութեամբ, արի և քաջ ժուժկալութեամբ ընդգէմ բանսարկուին պատերազմեալ, վառեալ զինու և սպառազինու, քաղցիւ և ծաբաւով և տքնութեամբ յաղթեաց ամենահնար թշնամւոյն. ըստ ասացելոյ առաքելական հրամանին երկնաքաղաքացի առնն Պօղոսի, եթէ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ և ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից»:

Խսկ սա հանեալ ի գլուխ զհանդէս նահատակութեան և կուսութեան, զի որք կուսութեամբ վալեցին զինանս իւ-

1 ԱՅԼ օր.՝ ահեւ և տագնապաւ և սպառնալեօք, այլ:

2 ԱՅԼ օր.՝ Յեսսեայ:

3 ԱՅԼ օր.՝ զեղչիւր օծերոյն իւրոյ և կեղեցւոյ:

4 ԱՅԼ օր.՝ Աղթամարոյ:

յեանց՝ գերագոյն գտան քան՝ զհրեշտակաւ։ Իսկ սա առ ոչինչ համարելով զաշխարհս և զփառս սորա և զփայելըւթիւն կինցաղոյս, զի հանապազօր լուեալ ի սրբոց մարդարէիցն՝ զնրմանութիւն խոտոյ ունելով մարդոյն և ծաղկի թօթափելոյ և նանրի նմանիլ անցաւորի և առօրեայ վարձ վարձկանի և ունայնութեանց՝ վարժեաց սա զկեանս իւր յամենայն գործս առողջինութեան ըստ տէրունական բանին, որ իւրոց սրբոցն հրամայէր ասելով, «ոչ եթէ դուք ընտրեցիք զիս, այլ ես ընտրեցի զձեզ»։

Աա նմանեալ Մելքիսեդեկի<sup>1</sup>, յառաջ ընտրեալ ի ոգւոյն զգալ կենարարին և բաշխել զմարմինն և զարիւն իւր<sup>2</sup>, ընթացեալ ընդ առաջ նահապետին Նըրահամու՝ մինչ գայր ի պատերազմէն։ Աա նմանեալ Յեսուսյ որդւոյ նաւեայ. զի նա կոյս սուրբ և արի, որ իւրով գայիսոնաւն հովուէր զժողովուրդն տեառն յերկրին Նւետեաց։ Աա նմանեալ Նհարօնի վակասակիր պատմուձանաւն, ծէ ակամքք ընդելուզեալք մարդարտով, ըստ թուայ սուրբ առաքելոցն, և օրինակ ծէ աղգաց ի Քրիստոս հաւատացէլոց։ Աա նմանեալ Խղիայի աստուածատես մարդարէին, որ յորովայնէ մօր իւրոյ ի հրեշտակաց հրով կերակրէր, և ի ձեռն կուսութեանն փակեաց զերկինս զի ամս և զշ ամիս, և ոչ տեղեաց յերկիր ցօղ, մինչեւ բանիւ բերանոյ իւրոյ։ Աա նմանեալ մեծի մարդարէին Յովհաննու որդւոյն Օռաքարիայի, որ ի հրեշտակապետէն լուեալ զաւետիսն վասն ճննդեանն Յովհաննու, որ ձեռնազրեաց զբանն Աստուած ի Յորդանան։

Աա նմանեալ Յոհաննու որդւոյն Օռերեղեայ, որ ի ձեռն կուսութեամն անուանեցաւ որդիք որտաման, որ և ի բարձանց որոտաց զբանն Աստուած, որ և անկաւ զլանջօքն տեառն և մաքրեցաւ որպէս զրոկի ի հուր։ Աա նմանօղ եղեալ սոցա սրբութեամբ և կուսութեամբ, որ և տուեալ սմա շնորհք յամենառատ պարզեատուէն Աստուածոյ, առեալ զպատիւքահանայութեան և զեպիսկոպոսութեան և զարհի եպիսկոպոսութեան և զկաթողիկոսութեան։ և նստոյց զնա տէր յա-

1 Այլ օր՝ Մելքիսեդեկի բահանայ-  
ին.

2 Այլ օր՝ իւր սուրբ

Թոռ մերոյ սուրբ Առևաւորչին սրբոյն Գրիգորի<sup>1</sup> և խառնեաց զնա ի կարգ սուրբ հարցն առաջնոց, սրբոյն Ռատակիսի, Վարթանիսի, Յուսականն, Գրիգորիսի, Ներսիսի<sup>2</sup> և Սահակայ. զի յառաջ ցուցեալ առգոյն սրբոյ տեսլեամբ սրբոյն Սահակայ զանցս աղետից այցատան աշխարհիս, անկանիլ ի տէրութենէ և ծառայել ազատաց ստարաց և լինել հակառակ ճշմարտութեանն, որպէս զԱռվմակ և զԸմուէլ, որ հակառակ էին ընդգէմ աստուածատուր շնորհացն, և դարձեալ նորոգիլ տեսութեան քարտէզին, որ ունէին ոսկեգիրն և կարմրագեղն զսրոցն վերափոխումն, և սեագեղն և կարգ և կէսն և չնջագիրն գհակառակացն ճշմարտութեան. իսկ միւս այլ կարգին նորոգիլ որ ունէր օրինակ զմերոյ սուրբ հայրապետին զաստուածապատիւ տեառն Դաւթայ ընտրելցին տեառն և օծելցին և նստելցին յաթոռ սուրբ Առևաւորչին մերոյ: Օք սուրբքն առաջինքն նմանողք եղն հարցն իւրեանց. և սա ևս նմանեալ հարցն իւրոց սուրբ հայրապետացն և մարտիրոսացն, զի աղօթիւք նոցա և խնդրուածովք և հեղմամբ արեան սրբոց մարտիրոսացն Վարդանայ և իւրոցն, Խոռոնկայ և իւրոցն, ազգակցաց սուրբ հայրապետին Դաւթի՝ զօրացոյց զսա տէր առաւել քան զառաւել:

Իսկ միւս ևս այլ ի ծննդոց սորա կրտսերագիրն յեղքարցն անուամբ Ատեփաննոս կոչեցեալ ըստ հայրենի ազգին, և ըստ մայրենի անուանակոչութեանն՝ սրբանեալ մայրն իւր տիկնաց տիկին՝ կոչեաց զնա յանուն հաւուն իւրոյ Նլուզ, և ըստ յառաջադիմութեանն իւրոյ, ի սուրբ թագաւորացն պատիւ և անուն մեծութեան ընկալեալ<sup>3</sup>: Իսկ սա լցեալ զպակասութիւն հայրենի և մայրենի հաւուցն՝ գուաւ երկել յամենայն յազգն. և որպէս օրհնեաց Խսահակ զՅակոր, և տէր լուաւ նմա և օրհնեաց տէր զՅակոր ի բերանոյ հօր նորա, զի օրհնութիւնք հարց հաստատեն զորդիս՝ նոյնպէս և մեծ իշխանն Նլուզ օրհնեցաւ յԱստուծոյ և ի հօրէն իւրմէ Նրդլմնեհէ. զի էր այր աստուածասէր և բարեպաշտ և հնազանդ ծնողաց

1 Այլ օր՝ յաթոռ հօր մերոյ սրբոյն Գրիգորի Առևաւորչին:

2 Այլ օր՝ Գրիգորի, Դանիէլ, Ներ-

սիսի:

3 Այլ օր՝ ընկալաւ:

իւրոց. զի ուսեալ էր ի պատուիրանացն Նստուծոյ, եթէ պատուեան զհայր քո և զմայր», և լուեալ յայլում տեղւոջ, եթէ տրդի անհաղանդ ի կորուստ եղիցի». և հնաղանդեալ նա արտաքոյ ամենայն փորձութեան։ Օսա հաստատեաց տէր յաթոռ հօր իւրոյ, որպէս զԱղողոմոն յաթոռ հօր իւրոյ Դաւթի, և որպէս յաւուրս նորա արար տէր խաղաղութիւն թագաւորութեան նորա՝ նոյնպէս և յիշխանութիւն սորատ Խւ մեծ և ամենիմաստն Երդլմսեհ կուրապաղատն բաժանեաց զհայրենիսն իւր և ետ ի ձեռն որդւոյ իւրոյ Ելուզի զերինանման և զանառիկ ամբոցն զԱմիւկ, զի նա կարող էր ի դիմի ունել անօրէն ազգացն Խմայէլացւոց. և նա առաւելեալ իմաստութեամբ քան զամենայն զհարս իւր։

Իսկ ամեներեւելի և աստուածասէր կուրապաղատն Երդլմսեհ վարեաց զիեանս իւր խաղաղութեամբ, և ետես զորդիս իւր փառաւորս և ամենազովս, զոմն հոգեոր և մարմնաւոր փարթամութեամբ Ճոխացեալ և յաջորդեալ յաթոռ հայրապետութեանն, լցիալ աստուածայինն պատուիրանապահութեամբ և բեկուեալ յերկիւղն տեառն, և զմիւսն ետես տէր և իշխան և պայծառացեալ փառօք և բարեբախտեալ և յաջողաձեռն եղեալ յամենայն գործս, և զայլ ևս զուստերս և զդստերս ետես ի փառս և ի պատիւս։ Խտես և զորդիս որդւոց իւրոց և երանեցաւ ի տեառնէ. և ինքն բարիոք ծերութեամբ ննջեաց առ հարս իւր և թաղեցաւ ի նոյն աստուածարնակ կղզոցն Եղթամար, ի դուռն սուլրբ Խաչին, արժանի եղեալ հանապազօք առնուլ ի տեառնէ վերստին զազատութիւն որդեզրութեանն ի ձեռն սուլրբ և անմահ պատարագին հարազատին իւրոյ տեառն Դաւթի Նայոց կաթողիկոսի, զոր մատուցանէր անխափան ի բարեխօսութիւն աստուածասէր ծնօղաց իւրոց. և էր թուականն Նայոց, մինչ փոխեցաւ արքայն Երդլմսեհ՝ մ. և սրբամնեալ ամուսինն իւր կեցիալ յետ կատարման առն իւրոյ ամս Է՝ և նա բարիոք հանգստութեամբ փոխեցաւ ի Վրիստոս և յաւելաւ առ հարս իւր և եղաւ ի նոյն տապանի. և զորդիս իւր յանձն արարեալ շնորհացն Նստուծոյ։

Յետ կատարման սոցա յաշխարհէս՝ սկսան առաւել քան

զառաւել շնորհ հողմն հիւսիսային դառնաշունչ օդովք սառ-  
 նամանփաք և պակասնեցուցանել յերկրի զըսյա դալարոյ. և կա-  
 տարեցաւ Հրաման տէրունեան առակին, թէ փջին անձրեք,  
 յարեան գետք, շնչեցին հողմք. և ոչ կարացին խօսիտել զմեծ  
 վէմն հաւատոյ, զպայժառացեալն փառօք զիշխանն զԱղուգ,  
 զի մնաց միայնացեալ ի մէջ Հայաստան աշխարհիս, իբրև  
 զնաւ ի մէջ մրտկեալ ահեաց ծովու, ոչ ունելով օգնականու-  
 թիւն յումեքէ, ոչ ի թագաւորաց և ոչ յիշխանաց և ոչ ի  
 մեծամեծաց և ոչ ի հարցն, ունայնացեալ ի ստացուածոց և  
 թսփուր մնացեալ յամենայն բնչեց: Խւ զաւերեալ պարփսպն  
 և զշնան, զոր յառաջագունիցն անփոյթ էին արարեալ սա  
 վիրստին նորոգեաց բազում աշխատութեամբ: Խւ զի աւուրք  
 չարութեան հասին ի վերայ երկրի, զի կատարեցաւ ասա-  
 ցեալն ի տեսանէ, թէ մողեցին աւուրքն այնոքիկ նեղութեան,  
 որպիսիք ոչ եղն երբէք այնպէս». բայց սորա ի թիկոնս հա-  
 սեալ շնորհն և իմաստութիւն ի վերին օգնականութենէն,  
 որպէս արքային Խզեկիսյի, և դարձոյց զժամն երեկոյացեալ  
 ի հասարակօրն և կենդանացաւ յօգնականութենէն Աստուծոյ՝  
 և սա կենդանացաւ ի շնորհացն Աստուծոյ և լքաւ իմաստու-  
 թեամբ, և պէսպէս հեարիւք անցուցանէր զկեանս իւր և  
 հաշտեցուցանէր ընդ իւր զանհաշտ թշնամիսն զագգն Ելի-  
 մացւոց. և ի նոցանէ առնոյր պարզես և մեծութիւն և փա-  
 ռաւոր և երեելի լինէր յաջս անհաւատիցն իւրով բազմիմաստ  
 գիտութեամբն: Ոչ խնայելով յինչ և ի ստացուածս իւր,  
 այլ զուարթամիտ սրտիւ տայր զքրտունա իւր վասն փրկու-  
 թեան քրիստոնէից, զոր տալով ի հարկս այլազգեաց, զօր կար-  
 գելով հեծեալս և տալով նոցա ոռմիկս՝ առնէր խազազու-  
 թիւն ամենեցուն, ըստ այնմ եթէ «ինդրեա զիազազութիւն  
 և երթ զհետ նորա»: «Նմանեալ մեծ նահապետին Նոյի Ա-  
 յուղն, և տապանին՝ ամրոցն իւր. զի նա ունէր առ իւր զըն-  
 տիրս երէոցն և այլ կենդանեաց, և սա ունէր ընդ իւր սե-  
 պուհք, զազատք և զորդիս ազատաց, զմեծամեծաց և զնա-  
 խարարաց յամենայն գաւառաց. և փայլէր ի մէջ ափեղերաց  
 իւրով ազատագունդ հեծելովքն, որպէս լուսին բոլորեալ ի  
 մէջ կամարի, կամ իբրև զարիգակն յաւուրս ամարայնոյ, տա-

լով և նմա յԱստուծոյ զլուսածաղիկ տղայն, զշառաւիզն լուսոյ, զանուանակից հաւուն իւրոյ Խեղմնիկ. որ գեղով վայնլ-չութեամբ իւրով յաշն ամենացուն հածոյ և սիրելի թուեր. զի էր և մեծ իշխանն հայր նորա Ելուզ գեղեցիկ տեսլեամբ և բարձր հասակաւ և կարող զօրութեամբ:

Օստա<sup>1</sup> մեզ պարծանք պարծանաց ցուցեալ միածին որդին Աստուծոյ և տուեալ սմա շնորհս ըստ հայրենի նախնեացն իւրոց զԵրծրունեացն. և զօրացաւ սա զօրութեամբ անպարտելի, ըստ տուեցելոյ նմա յԱստուծոյ զանմատոց ամբոցն Եմիւկ. և նա իւրով ամենիմաստ զիտութեամբն ընդ ամենայն ումեք զխաղաղութիւն հնարեր, զի թերես խաղաղացի կեանք իւր և իւրոցն ի խոռովութենէ վրդովման աւեացն ծիելոց:

Ի սորա խաղաղութեան ժամանակի շփոթեալ ամենայն աշխարհս, ևս առաւել գաւառն Վասպուրականի ոչ խաղաղանայր, այլ ևս քան զմս նեղէր ի տագնապս տարակուսի, և սա և զամրոցն իւր պահեալ ածին<sup>2</sup> Աստուծոյ: Խւ որպէս Յովսէփն այն կերակրեաց զաշխարհն ամենայն ի սովին Խոգիպտացւոց՝ նշյնպէս և սա եղել պատճառ շինութեան տանն Վասպուրականի: Խա սովելոց հաց. նա փախուցելոց պատսպան. նա գերելոց գերեդարձ և մաքրիչ զամենայն արտօսր յամենայն երեսաց. նա ամենայն տեսողաց բաղձալի և անտեսից ցանկալի. նորա անուն բարեհոչակեալ ի ծագաց մինչ ի ծագս երկրի և յամենայն լեզուաց գովիել. նա հաստատութիւն հաւատոց և պսակ պարծանաց սուրբ եկեղեցւոյ և մայր ամենայն աստուածպաշտութեանց. նա և յազօթս և ի խնդրուածս պաղատանաց առաւել քան զանձինն՝ զաշխարհի խնդրելով փրկութիւն, անզբաղապէս լինելով. ի մէջ ժողովրդեանն որպէս մի ի հեղոց. նա գողոց և աւազակաց հերքիչ և ամենայն անօրէնութեան հալածիչ. նա և քըրտամբք երեսաց իւրոց շատանայր և վաստակաւ ծեռաց իւրոց:

“Նա ստացաւ զմատեանս Խովմայի զպատմագիրս այս և ետ նորոգել վերատին, յիշատակ իւր և բարի ծնողաց իւրոց

<sup>1</sup> ԱՅԼ օր.՝ Պայտ:

<sup>2</sup> ԱՅԼ օր.՝ ածին:

և աստուածատուր պտղոյ որովայնի<sup>1</sup> իւրոյ Խեղինկին, զի ի պտղոյ արդարութեան բուսանի ծառ բարեաց:

Եւ նա լուսատու ծաղկով և պտղովն ցանկալի ամենեցուն լինէր, զի վայելչութեամբ գեղով իւրով նմանեալ արուսիկին, ծագելով ի ժամ առաւտուն. կամ իբրև զվարդ անուշահոտ գունակ գունակ գեղով ցուցեալ զգոյնս իւրեանց ի ժամանակս զարնանայինսն:

Որոյ յիշատակ իւր օրհնութեամբ եղիցի, և աղօթք<sup>2</sup> սրբոց ի վերայ նորա եկեսցէ. ամէն:



Փառք եռակիւսակ զուգակշեռ եռաշափեան համագոյ սուրբ Նըրորդութեանն և մի աստուածութեանն<sup>3</sup>, որ ըստ անբաւ մարդասիրութեանն և առաւ բարերարութեամբն իւրով ետ զօրութիւն տկար և ողորմելի և եղկելի մեղսամած անձինս հասանել յաւարտ սորա: Գոհութիւն և անդադար փառաբանութիւն հանդերձ երկրպագութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընորհօք ամենակալին Աստուծոյ Նօր և միածնին Յիսուսի Քրիստոսի<sup>4</sup> և սուրբ Նորդոյն ճշմարտի աստանօր յանգ ելեալ աւարտեցաւ գեղեցկայարմար Պատմութիւնս այս, զոր արարեալ ստուգարանութեամբ անյաղթ և զիտնական վարդապետին Խովմայի, սկսեալ ի յՆգամայ մինչեցնոյ, և անտի եկն աստիճանաւ վերուստ ի վայր մի առ մի, և բազում աշխատանօք ճշգրտարար եկն եհաս ի յազգն Արծուածան:

1 Այլ օր՝ նորոգել յիշատակ իւր, և Տնողաց իւրոց և աստուածպտղոյ յոռ բովայնի:

2 Յօրինակս՝ աղօթքիւր:

3 Այլ օր՝ յաւելու՝ Նօր և Որգոյ և Հոգույն սրբոյ:

4 Այլ օր՝ յաւելու՝ և Որգոյ:

բունեաց, և մի ըստ միոջէ շարակարգեալ զազգն և զիրն և զպատճառս նոցա, և թէ որպէս բազում ջանք և աշխատութիւն կրեալ նոցա հանդերձ պատերազմաւ ընդդէմ այլազգեաց՝ և բարձին զչարութիւն նոցա ի բազում տեղեաց, որչափ և կարողութիւն նոցա եհաս: Եւս առաւել աստուածապսակ և բարեպաշտ և ամենիմաստ թագաւորն այսոց Դագիկ, որ իմաստութեամբ և ուղղափառ վարուքն իւրովք և կամօքն Աստուծոյ տիրեաց բազում աշխարհաց, զոր կայ յիշատակեալ ի սմա, և խաղաղութեամբ պահեաց զամենացն աւուրս կենաց իւրոց ի հինից թշնամեաց, և եղեւ առիթ շենութեան եկեղեցեաց ևս առաւել գիրահոչակ և պանչելագործ սուրբ եկեղեցւոյս սուրբ Խաչիս Աղթամարայ. ընդ որոյ հովանեաւ շարադրեցաւ Պատմութիւնս այս ի թուականութեանս այսոց յեօթն հարիւրերորդի յիսներորդի երկրորդի, և յաշխարհակալ թագաւորութեանն Պազանի, Հրամանաւ և ծախիւք աստուածապատիւ և երշանիկ երիցս երանեալ ամենիմաստ հայրապետիս այսոց տեառն Օաքարիսյի, որ է յոյժ բարի և առատամիտ և աղքատասէր և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, և ի ինդրոյ աստուածարեալ զիտնական և արդիւնական վարդապետի, միանգամացն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ատեփաննոսի, որ է ակն արևելիան և աթոռակալ մեծի Արւնեաց տանն: Եւս եթէ նախնականօքն<sup>1</sup> քննեսցուք զնա՝ ոչ ոք է յիշխանացն և յիշխելոց արևելից կողմանցն բարձրագոյն քան զնա, զի ամենեցուն քաջայայտ է ազգքն և նախնիքն նորա. և նա այնպէս է ի մէջ նոցա փառաւորագոյն և պայծառ՝ որպէս զարեգակն ի մէջ աստեղաց: Եւս նա վասն սիրոյն աստուածային խնդրեաց զպատմութիւնս ի մերոյ աստուածընկալ<sup>2</sup> և սրբասէր և աթոռակալ սուրբ Լուսաւորչին ի տեառն<sup>3</sup> Օաքարիսյէ. իսկ սա մեծաւ ջանիւ ետ գծագրել լսա յաղագս խընդրոյ նորա: Եւս առաւել կամեցող եղեալ այսմ գործոյ ամենիմաստ և բարեմիտ, հեղ և խոնարհն, հարազատ եղբայր տեառն Օաքարիսյի Ամիրգուրդին, զոր տէր Խատուած զնո-

<sup>1</sup> Ա.Յ. օր.՝ նախնեզին:<sup>2</sup> Ա.Յ. օր.՝ աստուածարեալ:<sup>3</sup> Ա.Յ. օր.՝ տեառն:

սա ընդ երկայն աւուրս արասցէ, անփորձ պահելով յամենայն որոգայթից թշնամեաց, յերեկեաց և յաներեռութից, հոգւով և մարմնով զամենայն աւուրս կենաց իւրեանց. ամէն:

Եւ ես ամենամեղս և անարժանս և անցիշելիս ի կարգս զբաց և կրօնաւորաց, Դանիէլ անուն, ըստ իմում տկարութեանս յանձն առի զբել զսա, ի գուռն մեծ և պանծալի սուրբ Խաչիս Աղթամարայ, զոր վերագոյնն յիշեցաք. և գարձեալ յերեսանկեալ աղաչեմ զբարի ընթերցողագ և անմեզադրութիւն խնդրեմ վասն սխալանաց զբոցս, եթէ աւելի կամ պակաս գտանիցի ի սմա, եթէ կէտ, եթէ առուն և եթէ ստոր և եթէ յայլ ինչ բառ, ի խէ կամ ի հըյ. զի գիտնականքն քաջ զիտեն, որ ի հին զբեանք այսպիսեացս ոչ ինչ փոյթ է արարած. և ես անհմուտ գոլ սոցա՝ զոր ինչ լսեալ<sup>1</sup> էաք յեկեղեցական գրոց ի բառիցս յայսցանէ՝ զնցն զբեցաք, և զոր արարածոյ սոցա էր՝ ոչ գիտելով թէ որպէս էք. և ի ձէնջ խնդրեմ, զի ըստ աստաւածասէր կամաց ձերոց՝ միայն զԱստուած ոգորմին շնորհէք մեզ և ծնօղաց մերոց, զի և դուք գտջէք զոզորմութիւն յՆստուծոյ յաւուքն աներեկ գալստեան նորա: Եւ ինքն եղիցի օրհնեալ գովեալ և բարեբանեալ յամենայն արարածոց յիմանալեացն և ի զգալեացս այժմ և հանապազ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դարձեալ կրկին աղաչեմ և զուսուցիչն իմ զԱխմէն պատուական քահանայն, որ ի բազում արուեստից իւրոց զսակաւ զիրս մեզ ուսոյց՝ և զնա յիշել ի տէր սրտի մտքը և զծնողսն նորա: Եւ Քրիստոսի և Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

Յետ այսր ամենայնի այսպէս եղելոցս և գրելոցս, զայս  
 ծանուցանեմք ձեզ, ով սիրելիք որդիք և հաւատարիմ հարա-  
 զատ եղբարկք: Եյլ մի երեսալ և աստուածային փառօք զար-  
 գարեալ, աղատ և յազատ ծնողաց, մնեալ սրբութեամբ և ար-  
 դարութեամբ և հասեալ յիմաստութիւն աստուածեզէն սուրբ  
 կտակարանաց, ուղղափառ հաւատովք և քրիստոսադաւան  
 խոստովանութեամբ, որոյ անուն պարօն Աեֆեզին Կղքայուն  
 ծանաչի. սա իբրև յՆստուծոյ կոչմանէն յառաջ մատուցեալ  
 յաստուածաբնակ և յանառիկ կղզիս Կղթամար, որ է աթոռ  
 սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին և բնակարան գերա-  
 պայծառ և հոչակաւոր սուրբ Խաչիս. զսա յոյժ սիրեաց Խե-  
 ղեննկ Կղքայուն իբրև յիւրմէ ծնեալ որդի, և ետ զդուսաթ  
 իւր սորա ի կնութիւն և յօրինաւոր ամուսնութիւն և կտ  
 սորա վարձք և բաժինք զկէսն Կղթամարայ. զոր յետ սակաւ  
 ժամանակաց, ի ծերանալ Խեղեննկին և ի չքաւորութեան ան-  
 ձինն իւրոյ՝ յետոյ դարձեալ ծախեաց զկէսն այլ վիրստին պա-  
 րօն Աեֆեզնին. և առեալ զգինն բազում ոսկիս ի պէտս մար-  
 տաւոր պիտոյից իւրոց: Եւ յետ սակաւ աւուրց ետ տէր յՆս-  
 տուած դպտուղ յորովայնի նորա, գծաղկեալ և զբարի զս-  
 ւակն զտէր Ստեփաննոս, զոր իբրև հասեալ ի յուսումն և ի  
 մանկութեան հասակի՝ ետ ձեռնազրել զնա յաթոռ հայրա-  
 պետութեան սրբոյն Գրիգորի. զոր իբրև կացեալ ամս ի,  
 վերափոխի յաշխարհէս տարածամ կենօք և սակաւ աւուրբք,  
 և թողեալ զսուգ անմիտթար հօր իւրոյ պարօն Աեֆեզնին:  
 Եյլ որ զթածն է և ողորմածն Կստուածն ամենեցուն՝  
 հայեցաւ ի չերմեռանդ սրտի սորա ցաւս և յարտասուս, ետ  
 նմա զաւակք օրհնեալք յՆստուծոյ և զհաճոյացեալն Կս-  
 տուծոյ, զհարազատ եղբարքն զհեզ և զհանդարտ զԵմիր  
 Գուրգէն և զտղայն իմաստուն զ՞Նաքարիայ:

Եւ յորժամ եհաս ժամ պարօն Անքեղնին գնալ զծանապարհս հարց իւլոց և փոխիլ յաշխարհէն՝ սա ոչ ժամանեաց իւրովք ձեռօք հաստատել զտէր Օ-աքարիայն յաթոռ եղբօր իւրոյ տեառն Ստեփաննոսին։ Եպա տուեալ լինի յուսում աստուածեղէն սուրբ զրոցն և հասու լեալ հին և նոր կոտկարանացն։ և ոչ զոք ունէր զօրաւիդ և օգնական իւր՝ բայց միայն զհարազատն իւր զԸմիր Գուրգէն, զհայր և զհայրագլուխ, և զպարօն Խուռաձբէն և զպարօն Խուռադին զհօր եղբարքն իւր։ Առքա կամքն Եստուծոյ ժողովեալք ի միասին, կոչումն արարեալ սուրբ եպիսկոպոսաց, վարդապետաց և բազում կրօնաւորաց, և աղօթս արարեալ ի միասին՝ օրհնեցին և ձեռնադրեցին զտէր Օ-աքարիայն յաթոռ հայրապետութեան հօր եղբօր իւրոյ տեառն Ստեփաննոսի, և եղեւ ուրախութիւն մեծ և խնդութիւն յաթոռս մեր աստուածաբնակ սուրբ Խաչ Եղթամարայ։ Եւ սա իրեւ զվէմ անխախտելի և իրեւ զպարիսպ երկաթի և իրեւ զդուռն պղնձի, կացեալ ընդդէմ այլասեռից չար ախոյեանից։ Եւ սա եղեւ սիրող շենութեան և բազում ամարաթից, և աստուածային հոգւովն լըեալ շինեաց յաշխարհն Ա-ասպուրական ի կղզին որ Լիճն կոչի զգեղեցիկ և լուսազգեաց գումբայթաձեւ տաճար սրբոյն Գէորգեայ զօրավարին, և բազում սպասիւք զարդարեաց, և տուն աղօթից շինեաց և զտեղիս բնակութեան և դարպասս, և բազում կրօնաւորս կարգեաց և հաստատեաց ի դուռն սուրբ Գէորգեայ զօրավարի տաճարին. զոր աղօթիւք նոցա Քրիստոս Եստուած մեզ ողորմեսցի. ամէտ

Դարձեալ ի յաթոռ հայրապետութեան իւրոյ ի կղզիս Եղթամար ի զուռն սուրբ Խաչիս շինեաց զեղեցիկ և մեծանիստ տեղեաւք ի թիկունս սուրբ Խաչին զժամատունն<sup>1</sup> մեծ յաւուրս ձմերայնոյ։ Խսկ ի կողմն արևմտից զժամանակն ամարացնոյ մեծանիստ կամարակապ ձեօք կրակապ և սրբագործ, բերեալ զքարինս նորա յաշխարհէն Խրաթայ բազում աշխատանօք ի վերայ անդնդային ծովու։ Եւ ետ զծագրել յիշատակ հոգւոյ իւրոյ զիւք որ կոչե Տօնական. վասն զի

<sup>1</sup> Հին օր.՝ ժամանունն.

Կայ ի նմա տօնք տէրունականաց<sup>1</sup> սուլր առաքելոց և մարդարկից հայրապետաց և վարդապետաց, զօրավարաց և կուսանաց. զոր տէր Աստուած Յիսուս Քրիստոս աղօթիւք և բարիխօսութեամբ սոցա ողորմեսցի տեառն Օռքարիային և հարազատ եղրօն իւրոյ պարօն Գուլրգին և զաւակի նորա Աահմագնի տարաժամ հանգուցելոյն և ազգայնոցն ամենեցուն. ամէն:

Եւ դարձեալ վերնատունս բազումն բնակութիւն ամառայնոյ շինեալ գեղեցիկս և վայելուչ ի վերայ դարապասին, զոր մեծ պարօնն Անֆեղին էր շինեալ յաղագս զաւակին իւրոյ տէր Ատեփաննոսին. և այլ բազումն շէնս և անշէնս հաստատեալ հաւատով և յուսով։ Աա ի վերին խնամացն և ի տեսչութենէն մտախորհ եղեալ ի միտս իւր և խորհուրդ բարի ի սիրոյ իւր արկեալ, թէ «յետ մահուան իմց և ելանելոյ աշխարհէս ով մատիցէ յառաջ հայրապետութեանս աթոռոյս մերոյ, եթէ ոչ ի յազգականաց մերոց և ի զաւակաց։ յայնժամ յառաջ մատուցեալ զհոգեոր որդին իւր զսքանչելատես և զիմաստուն տղայն զտէր Դաւիթ, զորդի եղրօր իւրոյ հարազատի պարօն Գուլրգի։ Եւ բազում եպիսկոպոսիւք, կրօնաւորօք և քահանայիւք և բազում ժողովրդովքն, աղօթիւք և պաշտամամբք օրհնեցին և ձեռնադրեցին զտէր Դաւիթ ժառանգ և ժառանգակից աթոռոյ իւրոյ։ Եւ եղեռուրախութիւն և ցնծութիւն ոչ սակաւ ծնողացն և ազգացն ամենիցուն առ հասարակ։ Խսկ սա<sup>2</sup> տէր Օռքարիաս ծագեալ իրեւ զարեգակն յառաւօտի, սա հալեալ զպազումն և զսառն ձմերայնոյ սառնամանեաց և այլազգեաց թշնամեաց իսաչին Քրիստոսի<sup>3</sup>. սա կացեալ ընդդէմ չարեաց միրկին, Ալի փաշային և այլոց նմանեացն նորա, որ խրոխտային ի վերայ սըրբոց եկեղեցեաց և հաւատոց քրիստոնէից. սա բազում հարկս և հարածն խափանէր ի վանորաց և ի կրօնաւորաց. սա բազում ճգանց և աշխատութեանց համբերեալ և մեծ վիրօք վիրաւորեալ և բազում սպիս հոգիս և ի մարմինս իւր ընկատեալ Վասն զի քեռորդին իւր տէր Ատեփաննոս զազգական

1 Ա. Յ. օր.՝ տէրունական։

2 Յայլ օր.՝ չիք՝ խսկ սա։

3 Ա. Յ. օր.՝ յաւելու՝ թշնամեացն։

իւր զդուստրն քեռ իւրոյ տարհալ ետ այլագգեացն, խառնելով զկաթն յարիւնս նոցա. և բազում վանորայք և եկեղեցիք մեծ տողվ և տրտութեամբ վարանեալ լինէին, զի տիրեցին տռ հասարակ գեղեցիկ և տնառիկ կղզոյս Եղթամարոյ և այլ բազում տեղեաց և ապարանից, ոխվից և ազարակաց, զրով և անգիր Խւ իրբե այս այսպէս եղեւ և կատարեցաւ՝ իթուականութեանս Նայոց չերորդի հերորդի Ենրորդի եհաս վախճան և փոխումն յաշխարհէս սրբազան հայրապետին տեառն Օաքարիային. և նա բարի խոստովանութեամբ և ուղղափառ դաւանութեամբ աւանդեալ զհոգի իւր փոխեցաւ յայս աշխարհէս անցաւոր յաշխարհն կենդանեաց ի վերինն Խրուսաղէմ ի կայանս արդարոց: Օոր աղօժիւք նոցա և ամենայն սրբոցն գժամածն և ողորմածն Եստուած դասակից և մասնակից արասցէ զտէր Օաքարիայն սրբոցն հարցն և հայրապետացն առաջնոցն և վերջնոցն:

Խւ եղեւ յետ սակաւ ժամանակի եհաս կատարումն և մահ սոցա Ատեփաննոսին և Շամշայ խաթունին, և բարձան յաշխարհէս և չողան անդ, ուր Ճշմարիտ դատախագքն և քըննողքն և պահանջողք բանից, գործոց և խորհրդոց: Իրմե այս այսպէս կատարեցաւ՝ ոչ գոյր մեր թագաւոր կամ իշխան կամ դատաւոր կամ այցելու կամ առաջնորդ կամ փրկօղ և կեցուցանձղ, որ առատէր զմեզ յայլաւորից և ի չար թշնամեաց. զի բազում ինչս գտնձուց ոսկւոյ և արծաթոյ եղին ի վերայ, թէ ով որ յառաջ մասիցէ յաթոռ յայն հայրապետութեան՝ տացէ վեազում ինչն զայն. ապա թէ ոչ այլազգիքն տիրեացն ուխորից և եկեղեցեացն կրօնաւորաց և քահանայից, կուսանաց և կուսակալաց, ռամկաց և համօրէն Քրիստոսի ժողովրդոցն: Օոր տեսեալ այսպիսի աղէտս տարակուսանաց և զմեծ վտանգս տէրն Դաւիթ Նայոց վերադիտօղ, զոր ձեռնադրեալ էր ի յեղբօրէն իւրմէ տեառն Օաքարիայէ, զի յայսմ ժտմանակի հայրն իւր մեծ պարօն Եմիր Գուլբզին հանդերձ անդրանկաւն իւրով Եմիր Սահմաղնիւն փոխեալ էին յաշխարհէս, և ոչ ոք էր որ օգնէր և կամ ի թիկունս հասանէր. յայնժամ տէրն Դաւիթ ծագեաց իրեւ զաստղ լուսապայծառ, իրմե զարեգակն ի միջօրէի, իրմե

զպատրուակս փայլեալ ի կայծականց, կամ իրմե զնշոյլս լուսոյ երևեալ ի մէջ գիշերի, գերագոյն և գեղեցկապատկեր յօքինուածովք, արի մարմնով և վայելուչ անձամբ։ Առ հարազատովքն իւրովք երկու գեղեցիկ եղբարբքն, որք կոչեն Նմիր Առութիւնք և Նմիր Աէֆէթին, որք են իմաստունք, հանձնաբեղք, ճարտարախօսք, արագալեզուք, յառաջ մատուցեալ սոցա, և ձայն տուեալ միմեանց իրմե զքաջն և զարին զսուրքն Աւարդան և որպէս զսուրքն Աստոմեանք, և դիմեալք սոցա ի մեծ պատերազմիս և ի հանդէսս յայս, և ասեն սոքա ցմիմեանս, առ է պարտ թողուլ զսրբութիւնս մեր զտուն և զտեղի և գհայրենի ժառանգութիւնս, զի մի՛ օտարք մտանեն ի սա այլազգիքն կամ այլ ոք որ իցեն ի չարաց կամ ի չարափառաց և ի բազում բանսարկուաց»։ Խռ սոքա բազում նեղութեամբ և չարչարանօք և անհանգիստ զնացիւք այսր անդի ընթանալով բազում աշխատութեամբ և համբերութեամբ տարեալ վշտաց և նախատանաց, զորս իրաւամբք և զորս անիրաւամբք, զոմանս աղաշելով, զոմանս պաղատելով, զոմանս պատուելով և զոմանս պատուհասելով ըստ արժանեացն, զի թերեւս կարասցեն ընդդիմանալ մեծ պատերազմիս և հանդիսիս և ազատանաալ ի բազում ընչիցս և անհամար գանձուցս, զոր եղեալ կան ի փերայ։ Դարձեալ ասելով ցմիմեանս, «ով սիրելի եղբարք, արիասցուք առ միմեանս կապակցութեամբ Նոգույն սրբոյ, զի մի հայրենի ժառանգութիւնս անկցի յօտարութիւն ի ձեռս այլազգեաց»։ Այլ տէրն և ողորմածն Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց և խաղաղարան ամենայն աշխարհի՝ տացէ սոցա զօրութիւն, իմաստութիւն և զիտութիւն, համբերութիւն և ժուժկալութեամբ կալ ընդդէմ այլասեռից թշնամեաց խաշեն Քրիստոսի, և ազատեացէ զսոսա հոգւով և մարմնով յարկածից և ի խարէութենէ սատանայի. ամէն։

Դարձեալ վերստին հայցեմք և աղաշեմք պաղատիմք և աղերսեմք առ հայրդ գթած և ողորմած Աստուածդ Յիսուս Քրիստոս և սուլր Նոգիդ Աստուած Ճշմարիտդ, մեք անարժանք կրօնաւորքս և քահանայքս և համօրէն հաւատացեալքս սուրբ Երրորդութեանդ. հաւատով և յուսով հայ-

ցեմք յառատ մարդասիրութենէդ, զի վերստին հաստատեսցեա  
զաթոռ հայրապետութեանս մերոյ իրբե զառաջինն, և ազա-  
տեսցէ ի պարտեաց և յանիրաւ պահանջողաց: Նշ գհայրա-  
պետս մեր զտէր Դաւիթ իրբե զարիգակն փայլեցուսցես ի վե-  
րայ երկրի իրբե զյուսին ի մէջ աստեղաց մինչև ի խորին ծե-  
րութիւն բազմամեայ կենօք հանդերձ հարազատ եղբարբքն  
և որդւովքն և իւրով զարմիւ. ամէն: Նշ Քրիստոսի Աստու-  
ծոյ մերոյ փառք գոհութիւն և երկրպագութիւն յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

### ՎԵՐՋ:

## ՑԱՆԿ ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆ

- |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>Արա սպառագետ եղբայր Աշուայ իշխ. իշխանին. 222.</p> <p>Արա որդի Մարտիր. 300.</p> <p>Արգար. 46—50.</p> <p>Արգլազիլ. 105.</p> <p>Արելոյ. 105.</p> <p>Արելոյ Փամ. 105, 106.</p> <p>Արելոյ Հոյր Մահմադ. 99.</p> <p>Արելոյ որդի Զուբայրի. 104.</p> <p>Արելոյ դեսպան Դուքինի. 144.</p> <p>Արելմէր որդի Մըսանայ. 104, 105.</p> <p>Արելմէչ Բ. պատուկութապաղաս որդի Թունկոյ մարտիրոս. 305, 309.</p> <p>Արելմէչ Բ. որդի Թունկոյ Դ. 311, 314, 315.</p> <p>Արելմէչ Ազոյ մարտիրոս. 310.</p> <p>Արգահման. 245.</p> <p>Արելլ Հարելլ. 12—15, 288.</p> <p>Արեղէնք. 235.</p> <p>Արփանաս. 2, 7.</p> <p>Արութուռար. 103.</p> <p>Արքահամ. 9, 33, 99, 101, 200, 288, 298, 309, 313.</p> <p>Արքահամ եղիսկոպոս Մամկոնէից. 88.</p> <p>Արքահամ Խոստավանող. 65, 80, 208.</p> <p>Արքահամ, Արքահիմհազարապետ, աֆրայ Նախառանառ. 191, 195, 196.</p> <p>Արտա. 178.</p> <p>Արտակայ բերդ. 263, 270, 278, 279.</p> <p>Արտա. 2, 5, 11—15, 18—20, 28, 34, 76, 318.</p> <p>Արտամակերտ. ան Հարամակերտ.</p> <p>Արտամակերտայ Գոնք. 88.</p> <p>Արտէ. 48.</p> <p>Արքամէլք. 8, 36, 37, 44, 121.</p> <p>Արքամէլք Բ. 40.</p> <p>Արքիանս. 55.</p> | <p>Ազարդկ. 97—98.</p> <p>Ազագառ. 33.</p> <p>Աթանագինե Վկոյ. 60, 74.</p> <p>Աթենացիք. 34.</p> <p>Ալայ Ծովագի ամրաց. ան Ռկոյ.</p> <p>Ալ. 100, 101, 104.</p> <p>Ալի Գաշոյ. 323.</p> <p>Ալու Իշխան Սաղկոտան. 309.</p> <p>Ալու Սակիսես որդի Արելմէչ Բ. 314—317.</p> <p>Ակ. 143, 252.</p> <p>Ակեցիք. 147, 258, 281.</p> <p>Ակրազաղէս. 34.</p> <p>Ահարոն. 310, 313.</p> <p>Ահարոն աֆրամունիք. 105.</p> <p>Ահարոն որդի Մահմադ. 105.</p> <p>Ահազմնիք. 229.</p> <p>Ահաւական գիւղ. 288.</p> <p>Ահեղ. 293.</p> <p>Ահմաս որդի Հալթի. 218, 219, 221, 222, 225.</p> <p>Ահմաս որդի Յիսէի Շեհոյ. 281, 286, 297.</p> <p>Ահմատան. 92.</p> <p>Աղան արձր. 69, 70, 74, 77, 82, 83.</p> <p>Աղանաց գուռն. 284.</p> <p>Աղնանառ. 251.</p> <p>Աղբագ, Աղբակ. 38, 54, 55, 111, 116, 143, 196, 200, 217, 228 (Աղբատ), 232, 249, 252, 256, 274, 302.</p> <p>Աղբագ Փոքր. 54, 240, 252, 259.</p> <p>Աղ բիանս եղիսկոպոս. 67.</p> <p>Աղջ. 143, 260.</p> <p>Աղերասարացիք. 304.</p> <p>Աղերուսնդրէ քաղաք. 41, 42, 92.</p> <p>Աղէրսանդր Մակեդոնացի. 21, 29, 30, 41—44, 58, 104, 214, 294.</p> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

- Աղթամուր. 229, 308, 312, 315, 321, 222,  
     324.  
 Աշխելք. 39, 52, 108, 111, 113, 121,  
     286, 287, 259, 297.  
 Ազուտիք. 36, 86, 177, 178, 181, 183,  
     184, 191, 206, 286, 287, 245, 246.  
 Ամողէկ. 178, 301.  
 Ամսին գաւառ. 92.  
 Ամսունիք. 84, 109, 146, 199, 227,  
     238, 259.  
 Ամոց գիւղ. 260.  
 Ամրակում. 126.  
 Ամրացւոց քաղաք. 236.  
 Ամրմարուդաբառ. 36.  
 Ամքեն. 34.  
 Ամրգուրքի որդի Սեֆերի և 319,  
     321—324.  
 Ամրէ. 214, 280—282, 306, 308, 315,  
     317.  
 Ամրդյ գաւառ. 309.  
 Ամրն. 20.  
 Ամրդ. 21.  
 Ամրդացիք. 101..  
 Ամրդացւոց պահկն. 99.  
 Ամրդ. 40, 151, 184.  
 Ամրդ որդի հասազդ. 101, 104.  
 Ամրական քարանձաւ. 252, 253.  
 Այլ գաւառ. 260.  
 Այրարա. 86.  
 Այրարանեան լերինք. 254.  
 Այրարանեան նահանգ. 45, 300.  
 Անակ. 56.  
 Անանիս. 165.  
 Անանիսիք. 306.  
 Անանուն. 48.  
 Անասովզ գօրավար. 71, 73, 74.  
 Անգիպարան. 42.  
 Անգրաւարան ասկաղմացի. 47.  
 Աների. 24.  
 Անի. 308.  
 Անձահից ճար. 51, 226, 252, 264, 271.  
 Անձահիք. 75, 111, 208, 209, 212,  
     233, 246, 302.  
 Անուշ կին Սահմակայ որդ. Վաշէկ. 54.  
 Անուշ ընրդ. 62.  
 Անուտի գիւղ. 255.  
 Անտիկ. 92.  
 Անտիքացիք. 96.  
 Անտիքս (Եղիքանէս). 200.
- Աշտահակ. 36—38, 54.  
 Աշխեռա ամրոց. 271.  
 Աշխարհաբերդ ամուր. 194.  
 Աշխէ. 148.  
 Աշխէթ. 174.  
 Աշխա եղացյր Վաշէկի որդւոյ Խուրանոյ.  
     51.  
 Աշխա Շագաւոր բազրաստնիք. 222, 228—  
     230, 269.  
 Աշխա իշխան մծ, իշխանաց իշխան.  
     107—111, 113, 116, 117, 123, 125,  
     127, 131—135, 137, 139, 150, 151,  
     172, 198, 199, 202, 203, 206, 207,  
     209—219, 221, 225, 226.  
 Աշխա հոյկանեայ իշխան Գեղարքունիաց,  
     որդի Սուփանոյ. 237.  
 Աշխա կորապաղատ, իշխան Տարունոյ.  
     218, 220.  
 Աշխա որդի Դաւթի Կորողազարին և  
     իշխ. Տարունոյ. 221, 236.  
 Աշխա որդի Սահմակայ որդւոյ Վաշէկ. 55,  
     56.  
 Աշխա որդի Մարտանյ Ապլաբար. 173,  
     191, 203.  
 Աշխա սեպուհ արծր. 146.  
 Աշխա սեպուհ արծր, գլւ. 191.  
 Աշխա-Սարգիս որդի Դերակին. 218, 228,  
     229, 231—235, 238—240, 246—251,  
     265, 269, 270, 272—275, 277.  
 Աշխաց. 73.  
 Աշխիշառ. 60, 74.  
 Ապահունիք. 127, 128, 219, 222, 223,  
     225, 237, 245—247, 276.  
 Ապար աշխարչ. 79.  
 Ապարան կոյսիկ. 218—220, 224, 225.  
 Ապարերս. 226.  
 Ապարանից Ս. Նշան. 310.  
 Ապարանան. 28.  
 Ապարէցր. 100, 101.  
 Ապուրաբը. 101, 104.  
 Ապուհշշ. 144, 146.  
 Ապումոյեայ արծր. 109.  
 Ապումկէմ Սահմակ արծր. 109, 145, 146,  
     191, 195, 196.  
 Ապումուտէ Խասյի, իշխան Ազուտիք.  
     177, 180, 184, 185, 189, 191.  
 Ապումուր. 268.  
 Ապումկէմ իշխ. Վարդարականիք. 109,  
     112, 194.

- Ապուջափր. արծր. 109, 191, 192, 195,  
     196.  
 Ապուջափրի բերդ. 259.  
 Ապուսակը ամառունի. 227.  
 Ապուսակը վահունի. 282.  
 Ապուսահակ վահունի. 128.  
 Ապուսելմ գաղրիկ. 146.  
 Ապուսելմ գնունի. 146.  
 Ապուսէթ գնունի. 146.  
 Ապուսէթ ստիկան. 107, 111, 116.  
 Ապուսալպ. 99, 100, 104.  
 Առան. 23.  
 Առքերանի. 251.  
 Առեսա. 86, 88.  
 Առնոյ սան. 143, 252, 2 79.  
 Առուսնից ճոր. 127, 280.  
 Արիականը, Արիացիք. 9, 24, 42.  
 Արխասան. 25, 33.  
 Արիթ ամսառունի. 147.  
 Արկազն. 47.  
 Արկատագէս. 34.  
 Արկկեպիս. 58.  
 Ասորդանիս. 36.  
 Ասորեստան. 8, 9, 24, 26, 35, 42, 52,  
     81, 86, 96, 106, 121, 162, 188, 210,  
     242, 297, 302.  
 Ասորեստանեցք. 7, 9, 20, 25, 26, 32—  
     36, 64, 222, 298.  
 Ասորիք. 7, 35, 42, 49, 50, 55, 85, 86,  
     111, 114, 116, 118, 121, 124, 284.  
 Ասորիք առաջն. 6.  
 Ասորիք ստորին. 35.  
 Ասուդ արծր. 41—43.  
 Ասուդ Բ. արծր. 56.  
 Ասուր. 6—8, 25.  
 Ասպահն. 63.  
 Ասպուրակէս. 67, 69.  
 Աստապանց վահը. 105.  
 Աստղիկ. 54.  
 Աստօրովա. 35.  
 Աստուածածնի Ս. Էկեղեցի Առանին. 252.  
 Ասիմանիք գիլը. 309.  
 Ասղաս. 33.  
 Ասում անձաւացի. 171.  
 Ասում մոկացի. 71.  
 Ասում որդի Դուրդինց առաջն. 285.  
 Ասումանիք. 285.  
 Աստիկոս արքեպիսկոպոս. 72.  
 Ասրներսէհ իշխան Աղուսնից. 191.
- Ասրներսէհ իշխան Արայ. 237.  
 Ասրպատական. 50, 51, 86, 116, 134,  
     139, 148, 258, 262, 275, 281, 286,  
     287, 297.  
 Արաբացիք. 126, 142, 210. ան և Տափիք.  
 Արմիք ապառաժ. 99.  
 Արտած. 45.  
 Անգեղառն. 309.  
 Արագածոտն, Արագածոյ սան. 75, 300.  
 Արածոյ գիլ. 65.  
 ԱրաՄ (որդի Սեմոյ). 6.  
 Արամագ. 19, 21, 50, 91.  
 Արամանեակ բերդ. 194.  
 Արքաթ. 36.  
 Արքէլ. 24, 33.  
 Արգեցիք. 34.  
 Արեան լիճ. 143.  
 Արեա. 47.  
 Արեաստան. 86, 88.  
 Արզն. 39, 44, 108, 208, 213.  
 Արզնաբղին. 81.  
 Արիստ. 33.  
 Արիստոն? քաղաքացի. 7.  
 Արիք. 86, 95.  
 Արծուիք. 43.  
 Արծուուիք. 4—6, 20, 44 (Արգունիք),  
     46, 47, 55—60, 70, 73, 76, 81—83,  
     107, 109, 116, 118, 134, 139, 143,  
     146, 151, 152, 159, 191, 195, 256,  
     261, 268, 280, 290, 307, 309, 310,  
     317, 318.  
 Արկադ որդի Թէոդոսի Ա. 60, 70.  
 Արչա. 27.  
 Արէլ. 308.  
 Արէիշ ակովիս. 252.  
 Արէուշ. 112, 278.  
 Արմաւիք. 50.  
 Արշակ Գալ. 43.  
 Արշակ Բ. որդի Զիրանց Դ. 60—62, 64,  
     65.  
 Արշակ Դ. որդի Պաղպ. 68, 69.  
 Արշակ Վարաժնունի. 241.  
 Արշամ արծր. 41.  
 Արշամ թագաւոր. 45, 46.  
 Արշամիք արծր. 41.  
 Արշամիք արծր. Եղբայր Խորէնց. 49,  
     50, 52, 55.  
 Արշէզ. 38—40.  
 Արուանթունի գաւառ. 197.

- Արտազ, Արտազական, Արդազական գառ-  
 ւան. 79, 251, 259.  
 Արտամաս. 54, 180, 181.  
 Արտաշաս. 68, 64, 78, 280 (Արտաշաս).  
 Արտաշենան աւան. 215.  
 Արտաշենան գառան. 252.  
 Արտաշեն Երկայնաձեռն. 40.  
 Արտաշեն (Ուշեղ?) 41.  
 Արտաշես? արքոյ Պարսից. 50, 52.  
 Արտաշես որդի Սահարպից. 50—52,  
     54—56, 214.  
 Արտաշես Կամ Արտաշիր. 72, 73.  
 Արտաշիր որդի Շապհոյ. 69, 70.  
 Արտաշիր ստունեան ստախացի. 56,  
     57, 85, 104.  
 Արտաւագդ ընտրունի. 109.  
 Արտաւագդ Թագաւոր. 56, 254.  
 Արտաւագդ Տաթկունեան. 60.  
 Արտաւան, 56, 104.  
 Արտեմիս. 50.  
 Արտոս. 291.  
 Արդարածթ. 6.  
 Արդարայրեան գաշտ. 79.  
 Արտարշլիմ. 19. աես և Երուսաղէմ.  
 Արենեաց Երկիր. 313.  
 Արհազց. 175. աես և Արհազց.  
 Աւշին. աես Ավշին.  
 Աւհազց. 198.  
 Աւշին որդի Ապուսենի. 282—284, 289—  
     242, 273—275.  
 Աւրասանէս. 34.  
 Աւրատէս. 34.  
 Աւրիկանոս. 6.  
 Աւայազու կատար. 215.  
  
 Բաբ. 24.  
 Բաբեն. 56, 57.  
 Բաբեէն Բ. որդի Ներսէնի. 57.  
 Բաբելոնց. 9, 20—22, 114, 116, 124,  
     142, 241, 304.  
 Բաբելոն. 6—8, 21, 22, 24—26, 35, 39,  
     42, 138, 201, 289.  
 Բագարան. 207.  
 Բագարան բագր. 66.  
 Բագարան բագր. Իշեան Տարունյ. 107,  
     108, 110, 116—118, 120, 158, 162.  
 Բագրատունիք. 45, 46, 109, 118, 158.  
  
 Բագրաւանդ, Բագրեանդ. 66, 194.  
 Բազափրան. 68, 293.  
 Բակուրակերան. 56.  
 Բակարիացիք. 25.  
 Բահէ, Բահէն, Բախզ Ծախսան. 25, 43,  
     85, 88.  
 Բազակ. 98.  
 Բազգան. 106.  
 Բազեպարէս.  
 Բահէշ. 110.  
 Բայէսս. 38.  
 Բայիլին. 251.  
 Բարսոյ. 287.  
 Բարձումայ, Բարձումայ. 80—82.  
 Բարցոր աւազակ. 55.  
 Բեթասիդյ. 46.  
 Բենիսինի առն. 126.  
 Բենէկէլ. 244.  
 Բերկիր. 112, 195, 197, 229, 247.  
 Բերոսս. 2.  
 Բնիունեաց ծով. 86, 88, 236, 237, 257.  
 Բնիունիք, Բնիունիքն գույք. 67, 117.  
 Բւզոս. 34.  
 Բէլ. 19—25, 33—35.  
 Բէղէփոս. 35.  
 Բէղըզոս. 38, 34.  
 Բիւզնիք (Փալատոս). 275.  
 Բիւզնիք (Քաղաք). 89. աես և Կոստան-  
     դիուպօլիս.  
 Բլուր. 79.  
 Բլուր. աես Արտաշատ.  
 Բլուր գիւղ. 212.  
 Բշիր. 203.  
 Բոգունիք. 251, 255.  
 Բոբ. 97.  
 Բուզոյ, Բուհոյ, Բուխոյ. 126, 127, 131,  
     134, 142, 143, 148, 150, 166, 167,  
     172—178, 180, 181, 183—185, 188,  
     189, 191, 192, 194—198, 209—211.  
 Բոււել. 197.  
 Բըրէց ասորի. 73.  
  
 Գարաւանացիք. 18.  
 Դադ. 39, 293.  
 Դադիկ Ապումբուն, որդի Աւհազց. 189,  
     215, 218, 224, 225, 228, 229, 282—  
     235, 238, 240, 241, 263, 269—273,  
     275.

Դադիկ բագր. սրգի Յովհ. արքային. 308.  
 Դադիկ Վասպուրական զօրավար. 45, 76.  
 Դադիկ-Խաչիկ որդի Դերանիկ, զօրավար.  
     218, 224, 228, 229, 231, 232, 235,  
     288—240, 244, 251, 252, 255—257,  
     265, 267, 269—271, 273, 274, 276—  
     284, Թագաւոր. 285—287, 290, 293,  
     297—300, 303, 305, 319.  
 Դագկակերտ. 256.  
 Դադիկ Սպուհարաց. 109.  
 Դադիկը. 146.  
 Դաղլուսար Գրիգոր իշխանիկ բագր. 194.  
 Դաղլուսացիք. 39, 40.  
 Դաշիս կայսր. 48.  
 Դարբարացիք, Դագարացիք. 177, 216.  
 Դանձակ Ամրագառականի. 92.  
 Դանիկ. 88, 251.  
 Դարգ. 148.  
 Դարեգին աշառմակ. 68.  
 Դարիթայանը. 191.  
 Դեմացիք. 237.  
 Դեղամայ ծով. 69. աես և  
 Դեղաբանի լին. 243.  
 Դեղաբանիկ. 237.  
 Դեմք աւան. 253.  
 Դերասայ դաշա. 282.  
 Դէդէսէն. 200.  
 Դէսրդ ակեցի. 140.  
 Դէսրդ անձաւացի. 147.  
 Դէսրդ բողկացի. 171.  
 Դէսրդ ընտրունի. 147.  
 Դէսրդ կաթող. 218, 222, 230, 231, 249.  
 Դէսրդ Ս. եկեղեցի յԱմրական քարտե-  
     նակին. 252.  
 Դէսրդ Ս. եկեղեցի ի կմ. 322.  
 Դիեց լւան. 300, 301.  
 Դիւցի. 260.  
 Դիւտ կաթողիկոս. 79.  
 Դիոնիք, Դինունիք. 109, 146, 247, 308.  
 Դոթոզիսյ. 7.  
 Դոհցասա. 65.  
 Դողցթայ. 19, 97, 253.  
 Դողթն, Դողթասասան. 74, 252, 300.  
 Դողիսթ. 178.  
 Դոմիրացիք. 114.  
 Դոռոզու. 186.  
 Դով. և Մագով. 40.  
 Դովմացիք. 25.  
 Դոտեր. 82.

Դորդ Հարմացի. 109.  
 Դուզման. 251.  
 Դուզման. 25.  
 Դուրգեն Ա. սրգի Մուշեղայ Ապօւղելնի-  
     109, 112, 191—200, 202—209, 212,  
     213, 215, 233—235.  
 Դուրգեն Բ. եղասյր Աշուայ Իշխ. Իշխա-  
     նի. 109, 112, 184, 189, 142—147,  
     150, 202, 203.  
 Դուրգեն Եղի. Մուշեղայ Ապօւղելնի. 144.  
 Դուրգեն Մարզպան, սրգի Դերանիկ. 218,  
     224, 228, 229, 231, 232, 235, 238,  
     239, 251, 252, 256, 257, 260—262,  
     265, 270, 271, 274, 278, 287.  
 Դուրգեն սրգի Կորապալսարին. 231.  
 Դրիգոր արծր. եղասյր Աշուայ Իշխ. Իշ-  
     խանի. 109, 198, 199.  
 Դրիգոր արծր. եղասյրուդի Դուրգենից Ա-  
     213.  
 Դրիգոր արծր. իշխան Վասպուր. 3, 218?  
 Դրիգոր արծր. «Հարազատ Դերանին».  
     220, 224?  
 Դրիգոր արծր. Խահատակեալ. 151, 152,  
     160—162, 201.  
 Դրիգոր արծր. մեզուհ. 109.  
 Դրիգոր Ապօւղամզյ արծր. սրգի Վա-  
     սկայ. 221, 278, 279.  
 Դրիգոր բագր. աես Դաղլուսար.  
 Դրիգոր վնոնիկ սրգի Հարդի. 109.  
 Դրիգոր-Դերանիկ. աես Դերանիկ.  
 Դրիգոր եղիսկոպոս Սմառունեաց. 259.  
 Դրիգոր եղիսկոպոս Թշոռունեաց. 231.  
 Դրիգոր Ս. Լուսաւորիչ. 57, 58, 60, 63,  
     64, 75, 159, 161, 214, 243, 300,  
     310, 311, 314, 319, 321.  
 Դրիգոր մաֆկանեան սրգի Քուրդիսյ. 191.  
 Դրիգոր մնկացի. 246.  
 Դրիգոր Սիւնեաց աէր. 191, 218.  
 Դրիգոր վանահայր Վարագայ. 214.  
 Դրիգոր աէր. սրգի Աստվածին Ա. 311.  
 Դրիգոր քահանայ. 152, 159, 160, 201,  
     207.  
 Դրիգոր քաջրերունի. 109.  
 Դրիգորի Ս. եկեղեցի ի Բուր. 79, 81,  
     231, 252.  
 Դրիգորի Ս. սրգի Վ. քթանիսի. 175,  
     176, 314.  
 Դոզեան արծր. 43.

Դամակոս. 34—36, 106, 184.  
 Դան. 100.  
 Դանել կրօնաւոր. 320.  
 Դանելի մարդարէ. 22, 98, 201, 257.  
 Դանելքահանոց. 60.  
 Դաստիան. 218  
 Դարեհ արքայ Մարտ. 51.  
 Դարեհ (Արտամայ). 41.  
 Դարեհ (Խորթ). 41.  
 Դարեհ Աշտամազյ. 40.  
 Դարեհ Նախարար Ներսէհի. 49, 50.  
 Դարբնու. 286, 302.  
 Դաւթ անձաւացի. 147.  
 Դաւթ արքեպիսկոպոս որդի Արգւմեն-  
     քի Ա. 310, 311.  
 Դաւթ արքեպիսկոպոս որդի Արգւմեն-  
     քի Ա. 312, 314, 315.  
 Դաւթ գունդառազր. 109, 147.  
 Դաւթ եղբայր Աշոտայ Կորապալատին.  
     219, 220, 236.  
 Դաւթ եղբ. Սմբատայ Թագաւորին. 273.  
 Դաւթ եղիսկովոս Հերոյ. 228.  
 Դաւթ մարդարէ. 1, 3, 20, 34, 136,  
     165, 166, 178, 227, 228, 251, 298,  
     308, 309, 312, 315.  
 Դաւթ սափառնէ. 293.  
 Դաւթ սեպուհ. 109.  
 Դաւթ տէր, որդի Ամբրուրդինի. 323,  
     324, 326.  
 Դեկտէ. 302.  
 Դեկտ. 94.  
 Դեպուհան. 25.  
 Դերանիկ-Դրիգուր, որդի Աշոտայ Իշխ. Իշ-  
     խանին. 139, 201, 204—209, 212—  
     215, 217—229, 231, 232, 235, 246,  
     253, 268, 280, 305.  
 Դերկուզոս. 34.  
 Դերջան. 81.  
 Դիսիսիս. 7.  
 Դիսիսիս աստուածուչի. 55.  
 Դիսիսիս. 34.  
 Դիսս. 7, 21.  
 Դուտկ ըերդ. 131.  
 Դոֆշ տես. Դամակոս.  
 Դիբուխ. 38.  
 Դուխ. 16, 92, 139, 152, 166, 168,  
     172, 219, 221, 230, 299, 300.

Եբեր. 20, 23.  
 Եբրայեցիք. 2, 6, 23, 35. ահա և Հրէոյք.  
 Եղիուսացիք. 9, 33, 43, 99, 124.  
 Եղիուսու. 7, 9, 20, 24, 34, 41, 42, 44,  
     49, 98—100, 102, 284.  
 Եղեմ. 10.  
 Եղեսացաց քաղաք. 98.  
 Եղեկու. 6, 20, 316.  
 Եղեկուլ. 40, 115.  
 Ելր մարդարէ. 39.  
 Եթովոցիք. 6.  
 Եթովոցիս. 24.  
 Ել. 144, 148, 279.  
 Ելամացիք, Ելեմացիք, Ելիմացիք. 43,  
     124, 126, 131, 142, 258, 308, 315,  
     316.  
 Ելիմ. 34. ահա և Տրովական պատերազմ.  
 Եկեղեց գուտու. 69.  
 Եղամ. 6.  
 Եղիուր. 244.  
 Եղիս մարդարէ. 313.  
 Եղիւկ. 27, 81.  
 Եղիսէ կաթողիկոս. 301.  
 Եղիշեփանուց. 163.  
 Եմաթ. 36.  
 Եմաւոն. 28.  
 Ենարիս, Սնիանոս. 45.  
 Ենովու. 14, 20.  
 Ենովու. 15, 20.  
 Եպիփանոս. 19.  
 Եսոյի մարդարէ. 58, 103, 128, 132,  
     133, 138, 164, 184, 192, 306.  
 Եսու. 33.  
 Երադանի գիւղակ. 206.  
 Երամի, Արամի. 78, 86, 105, 247, 253,  
     254, 300, 302.  
 Երեմիս մարդարէ. 22, 124, 201, 265,  
     305.  
 Երիշ դիւզ. 84.  
 Երիկու ըերդ. 247.  
 Երիվարաց որկման գուլու. 215.  
 Երիւարկ գուտու. 280.  
 Երիքով. 173.  
 Երուանդ Թագաւոր. 50—52, 54, 55.  
 Երուանդականք. 50.  
 Երուանդականք. 19, 20, 34, 36, 40, 42, 46,  
     48, 64, 89, 92, 96, 97, 201, 205,  
     253, 284, 299, 311.

Երուսաղեմացիք. 102.  
Եւայ. 12.  
Եւպատրէ. 47.  
Եւսեբիոս Կհոաբացի, Եւսեբ. 7, 18, 19.  
Եւրոպ. 20.  
Եփրատ. 71.  
Եփրեմայ տռն. 126.

Զամիս, Զամեսոս. 26, 32.  
Զամրի. 244.  
Զարդ ամրոց. 53.  
Զարէհան, Զարէհաւան; Զարէհաւան. 143, 252, 260.  
Զարսանդ, Զարսանդ, Զարսան. 8, 50, 261.  
Զարսէս. 41.  
Զաւ. 143.  
Զաւէն կաթողիկոս. 67, 68.  
Զաքարիա Ա. կաթողիկոս. 198, 201, 206, 218, 231.  
Զաքարիա Բ. կաթողիկոս, որդի Աւ-քոդի. 319, 321—324.  
Զաքարիա Հայրավետ Երուսաղէմի. 89.  
Զաքարիա մարգարէ. 231, 258.  
Զաքարիա Հայր Յովհ. Մկրտչ. 313.  
Զերէդէս Հայր Յովհ. աւետարանչ. 313.  
Զենն. 76.  
Զովսարէս. 34.  
Զուրայր. 104.  
Զուհիթայ երէց. 64.  
Զուուեայ կին Սհարսնի. 105.  
Զուրարէկ ազդ. 297.  
Զուշայլ, Զուալ Յօրսոսական. 75, 78.  
Զուէլ ամբոր. 279.  
Զրադաշտ. 25—27, 30, 33.  
Զրուան. 6—8, 26.  
Զքրի. 203.  
Զօրաբարէլ. 40.  
Զօրահայ հագաբացի. 108.  
Զփեռոս. 33.

Ընծայից, Ընձայից ճոր. 226, 232, 279.  
աես և Սիհուհից ճոր.  
Ընտրունից. 109, 147.  
Ըսէն. 260.  
Ընայ դաւառ. 252, 259, 262.

Թագղաթիւղասոսը. 35, 36.  
Թաղէսս ակէացի որդի Շերէփայ. 233,  
235, 258—260, 281, 282.  
Թաղէսս Ա. առաքել. 46, 47.  
Թաղէսս որդի Թաղնկայ Ա. 311.  
Թալին. 45.  
Թարայ. 23.  
Թերայիս. 92.  
Թեկոյի Ա. 275.  
Թեսաղացիք. 33.  
Թեսաղիս. 34.  
Թետուլացիք. 85.  
Թէրէացիք. 304.  
Թէոդոս Մւծն. 66—68.  
Թէոդոս Փոքր. 70, 71, 72 (Թէոդորոս)—  
75, 82.  
Թէոդորոս եղբայր Հայրակայի. 98, 101.  
Թէոդորոս վանահայր Հոգեաց վանից. 212.  
Թէոդորոս Քերթոս. 44.  
Թէոդուլովիս, Թէոդոսի քաղաք. 71,  
203. աես և Կարնոյ քաղաք.  
Թոգորոս վարադի. 109.  
Թոռնաւան. 131, 195, 232, 251, 260—  
270.  
Թռանիկ Ա. մարտիրոս. 309.  
Թռանիկ Բ. որդի Աբգլմանէի Ա. 310, 311—  
Թռանիկ Գ. որդի Թաղէսսի. 311.  
Թռանիկյ որդի բագրատունի. 109.  
Թռվմայ Պատմագիր արքր. 76, 317, 318.  
Թռվմաս առաքեալ. 46.  
Թռվոս, Թռնոս Կանկողեառա. 8, 34. —  
և Սարգանապառու.  
Թորգոմ, Թորգոմյ տռն. 23, 307.  
Թորդան. 67.  
Թուայ գիւղ. 143.  
Թուէ գետ. 236.  
Թուրքաստան. 124, 258.  
Թուրքաց ազգ. 306.  
Թուք. 106.  
Թրաբ գաւառ. 260.  
Թրակացիք. 88.

Ժանգան. 261.  
Ճիրոք. 127, 129, 130, 174.

Իսահակ. 33, 314.  
Իսմայլ. 97—99, 101, 102, 104, 149,  
200, 203, 204, 297.

- Խոմայէլսիք. 100, 101, 262, 281, 315.  
աես և Տամիկը.  
Խորդէլ 7, 35, 40, 98, 158, 193, 200,  
201, 205, 210, 263, 265, 267, 299,  
303.  
Խորդէլսիք, Խորայէլտն զորք. 58, 99,  
178. աես և Հրեացը.

- Լեզւյ գիւղ. 215.  
Լեհ. 260.  
Լիբէտատան. 20, 24, 25.  
Լիդէտացիք. 38, 39.  
Լիմ կողի. 322.  
Լորայ, Լումբայ դոր. 232, 275.

- Խաղիք (Հաղիք). 56.  
Խաղուց ձոր. 81.  
Խաղուիք. 65.  
Խաչ Ս. Եկեղեցի Աղթամարայ. 229, 297,  
310, 315, 319, 320, 322.  
Խաչի Ս. վահք Սովագայ. 200, 204, 217,  
228, 229, 249.  
Խառնան. 49.  
Խեղենեկ. 310.  
Խեղինիկ որդի Ալուկ. 317, 318, 321.  
Խեփուղ. 25, 27.  
Խլաթ. 117, 127, 158, 322.  
Խոզուղեցք. 195.  
Խոճիքաստան. 25.  
Խոյթ լեռան. 118—121, 188.  
Խռահամ Մազմայուզան. 89, 96—98.  
Խռովի Որմդի. 97.  
Խոսրոյ. 97.  
Խռորդ ակէտացի. 109.  
Խռորդ գաբանզենան. 140.  
Խռորդ գողթնեցի. 252.  
Խռորդ Ա. Մեծն թագաւոր Հայոց. 56, 57.  
Խռորդ Բ. Փոքր. 58, 59.  
Խռորդ Գ. Արքան. 68, 69, 71.  
Խռորդ Թագաւոր Պարսից. 83.  
Խռորդ Ապրուեզ որդի Որմդի. 85, 87,  
88, 91—95, 97.  
Խռորդ Վահկունի. 109.  
Խորանան. 39, 210, 258.  
Խորէն խոստովնեղ. 208.  
Խուժաստան. 25, 26, 35, 81, 124, 258,  
297.

- Խուրան, Խուրէն արք. 47—29, 55.  
Խուխուս վահկունի. 147.  
Խրամ. 105.  
  
Ծաղկուտն. 309.  
Ծանազք, Ծանակ. 175—177, 195.  
Ծոփք. 84.

- Կագմոս գիւնիկեցի. 9.  
Կախայ, Կահայ. 187, 188.  
Կակենից գիւղ. 275.  
Կաղղիսթենէս. 30.  
Կամբիւտէս. 40.  
Կայէն. 12, 14, 216.  
Կայիանան. 14, 20.  
Կայսիք. 245—247, 276.  
Կանգուար. 209, 213, 234, 235.  
Կապոյց բերդ. 285.  
Կապուգկացիք. 36.  
Կասոկց գուման. 284.  
Կարին գաւառ. 71, 73.  
Կարինյ քաղաք. 92, 203, 231.  
Կարկինենք տերի. 234.  
Կարմիր գետ. 254.  
Կարուց բերդ. 273.  
Կաւաս (Ա.) 83.  
Կաւաս (Բ. Շերոյէ). 95, 96.  
Կաւկաս, Կաւկաս. 175, 293.  
Կեսար. 59.  
Կեսարիա Պաղեստինացւոց. 92, 96.  
Կեսարցւոց քաղաք. 58.  
Կեսարու եպիսկոպոս. 74.  
Կղուին. 210.  
Կիւիկիա. 36.  
Կիւրեղ Ա. Կրուսադէմացի. 306.  
Կիւրոս արք. 43, 45.  
Կիւրոս պարսիկ. 32, 36—40, 43, 104,  
138.  
Կկուղան ովիտ. 252.  
Կլորչք. 293.  
Կղէսպատրոց. 43, 44.  
Կղօդիս կայսր. 49.  
Կոգովիտ, Կագովիտ. 88, 286, 309.  
Կոխան գիւղ. 214.  
Կոստանդիանոս Մեծն. 58, 306.  
Կոստանդիանոս որդի Հերակլ. 102.  
Կոստանդիուլովին, Կոստանդին քաղաք.  
88, 91, 92, 102, 307.

- Կոտորք. 88.  
 Կոտոմ գիւղ. 297.  
 Կոտորց բերգ. 232, 235, 270, 271.  
 Կորդուխը, Կորդիք. 19, 232.  
 Կորիւն. 76.  
 Կորնույք. 259.  
 Կուշան. 234.  
 Կուտանչեկ եղբայր Սեֆերնի Ա. 322.  
 Կուտանչեկ որդի Սփրուռդինի. 326.  
 Կուր գետ. 174.  
 Կուրտանք. 103, 105.  
 Կունոս. 7, 21.  
 Կրերեաց (զաւառ). 260.  
 Կրճանիք. 252, 260.  
 Կրման. 258.  
 Կրոսին. 38.
- Հաբեւէլ. տես Աբեւէլ.  
 Հադար, Հադարեան ազդ. 279, 289, 305,  
 տեսև և Ցածիկը.  
 Հադամակերտ, Ադամակերտ, Յադամա-  
 կերտ, սատան Արծունեաց. 116, 256,  
 260, 274, 281, 302.  
 Հաղպաւուխտ. 83, 84.  
 Հազը գնումի. 109.  
 Հաղոցավովիտ. 247.  
 Համազասպ արծր. 56.  
 Համազասպ արծր. սեպուհ. 109.  
 Համազասպ մամիկոնեան. 71, 75.  
 Համազասպեան. 72.  
 Համամ որդի Արշ. Կղօօր Խուրենայ. 55.  
 Համբարձաղան. 240.  
 Համդոյ ամիրայ. 144, 149.  
 Համին կրծտապետ. 261.  
 Հայաստանեայք, Հայկալինեայք, Հայկա-  
 կանք. տես Հայք (ժողովուրդ).  
 Հայկ. 23, 24, 293.  
 Հայսիկ. տես Կայսիկը.  
 Հայրակշէս Կայսր. 88—94, 96—98, 101.  
 Հայք, Հայաստան. 33, 36, 38, 43, 45,  
 64, 65, 68, 71, 78, 82, 86, 113, 118,  
 124, 131, 168, 188, 201, 204, 218,  
 271, 275, 285, 287, 288, 300, 314,  
 315.  
 Հայք Առաջին. 107.  
 Հայք Մեծ. 47, 54, 57.  
 Հայք (ժողովուրդ). 3, 26, 27, 33, 35,  
 40, 42, 44, 45, 48, 50, 56—58, 60,
- 62—77, 79—88, 104—111, 113—116,  
 119—128, 128, 132, 134, 135, 143—  
 146, 148—151, 156, 161, 168, 173,  
 189—191, 194, 196—198, 201, 202,  
 204—211, 214—216, 218—222, 225,  
 229—231, 233, 234, 236, 237, 239,  
 243, 245—249, 252, 255, 256, 260,  
 261, 266, 268, 269, 272, 273, 275,  
 276, 282, 283, 285—287, 289—291,  
 293, 299—303, 305—307, 315, 319,  
 321, 324.  
 Հաշտեանք. 55, 84.  
 Հասան անձաւացի. 146.  
 Հասան արծր. սեպուհ. 131.  
 Հասան, Հասանիկ որդի Վասակայ ուժ-  
 բարչակ, քենորդի Դերանկին. 220,  
 222—225, 235, 263, 274—276.  
 Հատապ. 104.  
 Հարամոց. 6.  
 Հարամանի. տես Արհան.  
 Հարք. 24.  
 Հացիւն. 88.  
 Հացոց (Հայոց?) ձոր. 197.  
 Հաւուկ կուկունցի. 74.  
 Հեղի. 8, 312.  
 Հեղինե. կին Արդարու. 48, 49.  
 Հեղինե տիկին Ծնձաւացեաց. 209.  
 Հելմ կամ Շամ. 105.  
 Հեր, Խեր. 226, 263.  
 Հերական դաշտ. 264.  
 Հերակլ. Հերակլէս դիւցազի. 21, 22, 34,  
 41, 55.  
 Հերոդոտ. 19.  
 Հերոդուս որդի Անդիպատրի ասկաղա-  
 նացոյ. 47.  
 Հերոդուս (Զորորդապետ) որդի նորա  
 47, 48, 159.  
 Հեփեսոս. 28, 30, 31.  
 Հեթմ (Թուրք. 149.  
 Հերկանիս. 293.  
 Հմայեակ Ալոյաց ուր. 73.  
 Հմայեակ մամիկոնեան. 72.  
 Հնդիկը. 18, 25, 34, 42, 284.  
 Հնդկաց ծով. 25.  
 Հոդեաց վանք. 212.  
 Հողթայ պահ. 127, 237.  
 Հնաւար որոշի. 235.  
 Հուրաստան գետ. 88.  
 Հուիփոիմեանք. 63.

- |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>Հառվիսիմ. Ա. 214, 306, 310.</p> <p>Հառվիսիմէ, Հառվիսիմէ մայր Ալուսի և Գուրգինի արձր. 148, 151, 208.</p> <p>Հառմայեցիք, Հառմայք. 86, 90, 98, 308. անս և Ցոյնք.</p> <p>Հառմքազաք. 163.</p> <p>Հքաննուշ տիկին արձր. 139.</p> <p>Հքէպմ. 35, 39, 47, 63, 64, 92, 101.</p> <p>Հքէսասան. 35, 42, 64, 102, 284.</p><br><p><b>ԶԻՐԵԽԵԿ</b> լեռն. 231.</p> <p>Զիրաւ դիւղ. 66.</p> <p>Զորյ հանկ. 117.</p> <p>Զորյ վահ. 63, 238.</p> <p>Զոբ. 254.</p><br><p>Պազմի թագաւորութիւն. 319.</p> <p>Պամէք. 15, 20.</p> <p>Պամպերէս. 34.</p> <p>Պամբիթէս. 34.</p> <p>Պաւոդիկէ Փոխւգացւց. 17.</p> <p>Պաւոժենէս. 34.</p> <p>Պաւոյ կին. 100.</p> <p>Պեն (Լեն) կայսր. 83, 105.</p> <p>Պենդ Ա. բահանայ. 44, 75.</p> <p>Պենդեանք Ա. 65.</p> <p>Պեփուատ առն. 131.</p> <p>Պոդ. 6.</p> <p>Պուկու աւետարանիչ. 8.</p><br><p>Պուխուկ. 135, 225, 260, 263, 270, 278, 279.</p> <p>Պորոյ դուռն. 79.</p> <p>Պուշ. 195, 225, 251, 258, 260, 264, 270, 281.</p> <p>Պուշչոստ. 253.</p><br><p>Մադիսմքազ. 98, 101, 102.</p> <p>Մաթուսազայ. 15, 20.</p> <p>Մակն. 37.</p> <p>Մակետնացիք. 42, 43.</p> <p>Մակուշ քաղաք? 294.</p> <p>Մակու. 88, 286.</p> <p>Մահաբ. 105.</p> <p>Մահւ Շաքեց ակ. 191.</p> | <p>Մահմետ, Մահմետաթ օրէնտիք Յան- կայ. 99—103, 130, 149, 150, 156, 189, 242, 263.</p> <p>Մահմէտ որդի Ահաբանի. 105.</p> <p>Մահմէտ որդի Մահաբեայ. 105.</p> <p>Մահմալու. 255.</p> <p>Մալշայշէլ Մալշայշէլ 14, 15, 20.</p> <p>Մամբրէ վերծանող. 44.</p> <p>Մամկուն անհազ. 192.</p> <p>Մամիկոնեանք, Մամիկոնեանք. 59, 69, 191, 193, 194.</p> <p>Մամիզոս. 33.</p> <p>Մամիզոս միւս. 33.</p> <p>Մաս. 92.</p> <p>Մայմանիկ. 278.</p> <p>Մայման. 105.</p> <p>Մանազաւեան նահանդ. 246, 253, 257, 258.</p> <p>Մանազկերտ. 224.</p> <p>Մանակերտ. 229.</p> <p>Մանասէ. 35.</p> <p>Մանիթոպ. 25, 27, 30.</p> <p>Մանուէլ Շաբատարապետ. 297.</p> <p>Մաշտոց. անս Մեսրովզ.</p> <p>Մաշտոց կաթողիկոս. 243.</p> <p>Մառական. 225, 254, 264.</p> <p>Մառեաց առն. 286.</p> <p>Մասիք. 52, 254.</p> <p>Մատթէոս աւետարանիչ. 8.</p> <p>Մարաճայ. 260.</p> <p>Մարապարսացիք. 35.</p> <p>Մարգարոսան, Մարգարոսան. 117, 206, 209, 240, 251, 252, 259, 281.</p> <p>Մարդպետ հայր. 59—61, 252.</p> <p>Մարդպետական (դաւառ). 128.</p> <p>Մարբակատինա. 40.</p> <p>Մարիամ տիկնաց տիկին. 310.</p> <p>Մարիամ քայլ Դերանկան կին Դաւթի. 220.</p> <p>Մարինդ. 55.</p> <p>Մարկիանոս կայսր. 82.</p> <p>Մարոդ. 41.</p> <p>Մարութաքբազդան. 35.</p> <p>Մարք. 26, 34—36, 38, 43, 50, 54, 56, 71, 124, 258, 281, 284, 297, 304.</p> <p>Մաւի. 104.</p> <p>Մաւսանէս. 34.</p> <p>Մաւր մեծ (Մահմանը). 78.</p> <p>Մաքազիս. 33.</p> |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

- Մաքսյ.** 99. տես և Փառան.  
**Մեդացիք,** Մեդացիք. 25, 37.  
**Մեծէց զնունի.** 247.  
**Մելքիսեդեկ քահանայ.** 313.  
**Մեծնունիք.** 251.  
**Մեծրայիմ:** 24. տես և Եղիպատ.  
**Մեհեղակ ու շառանի.** 60.  
**Մեհուժան արծր.** 62—67, 69, 70.  
**Մեհուժան արծր. սեպուհ.** 109.  
**Մեղս.** 75.  
**Մեսարիմ:** 9, 24. տես և Եղիպատ.  
**Մեսրովայ Ա.** 72—76.  
**Մերշապուհ արծր.** 67.  
**Մերշապուհ արծր.** միւս. 81, 84.  
**Միթրէս.** 34.  
**Միհր.** 86.  
**Միջագետք.** 36, 48, 68, 71, 237.  
**Միջագետք Ասորաց.** 97.  
**Միքայէլ Կայսր.** 194, 203.  
**Մլեահ վարաժնունի.** 147, 171.  
**Մծունի.** 86, 88, 98.  
**Մղոնիք.** 260.  
**Մշկան.** 73, 75, 79.  
**Մոգեստոս երիցապետ.** 89.  
**Մոթէին որդի Զափրայ Մոթոբլի.** 205.  
**Մոկացիք,** Մոկաց աշխարհ. 71, 75, 81, 127, 137, 213, 221, 232, 246, 279, 280, 309.  
**Մովաք,** Մովաքացիք. 98, 101.  
**Մովսէս Եղիպայր Մամրէկ Ա. Երժ.** 44.  
**Մովսէս Խորենացի.** 6, 7, 9? 24, 58, 75, 76.  
**Մովսէս մարգարէ.** 1, 2, 7, 15, 20, 32—34, 124, 178, 244, 245, 310.  
**Մովսէս տեղապահ Ա. Սահակայ.** 75.  
**Մովսէթ վանանդացի.** 185—187.  
**Մովսէն.** 258.  
**Մուհիթիս.** 205.  
**Մուլ.** 118.  
**Մուշեղ ամառունի.** 147.  
**Մուշեղ անձաւացի.** 208.  
**Մուշեղ Ապուակէլճ.** 144, 191.  
**Մուշեղ Եղիպայր Ա. ահանայ արծր.** 139, 109? 133?  
**Մուշեղ բագրատունի.** 224.  
**Մուշեղ զօրավար.** 86, 87.  
**Մուշեղ մոկացի.** 213, 218, 221.  
**Մուշեղ որդի Բաբենայ.** 57, 59.  
**Մուշեղ որդի Սմբատայ Սպլաք.** 182, 191.
- Մուշեղ սեպուհ արծր.** 109, 133, 139?  
**Մուշեղ սեպուհ արծր. միւս.** 109.  
**Մուշեղ սեպուհ արծր. միւս ևս.** 146, 191?  
**Մուշեղ վահնունի.** 131, 134.  
**Մուսէ ամիր ալ մումիք.** 105.  
**Մուսէ որդի Բաւղայի.** 211, 212.  
**Մուսէ որդի Զօրահայի.** 108, 110, 111.  
**Մուրիկ Կայսր.** 85, 86, 88, 90, 97.  
**Մուշտամ:** 143.  
**Մուտան.** 104.  
**Մուտան ամիր ալ մումիք.** 105.
- Յարեթ.** 6. 20, 23, 24.  
**Յադամակերտ.** տես Հադամակերտ.  
**Յազկերտ Ա.** 71, 72, 75.  
**Յազկերտ Բ.** 79.  
**Յազկերտ Գ.** 98, 104.  
**Յակոբ.** 33, 314.  
**Յակոբիկ.** 208.  
**Յակով Հայր Յովո.** աստուածահօր. 8.  
**Յամանիկ.** 218, 219, 222, 225.  
**Յաշուր.** 84.  
**Յապիտոսթէ.** 6.  
**Յարէդ.** 15, 20.  
**Յեղատ.** 105.  
**Յեղիս որդի Մաւեայ.** 104.  
**Յեսու.** 3, 178, 200, 313.  
**Յեսէ բնթահնեմացի.** 312.  
**Յըմեայ ծովակ.** 260.  
**Յիսէ ակէացի որդի Շերեփայ.** 233.  
**Յիսէ ամդային Շեհի որդի.** 215, 218, 221, 231, 236.  
**Յիսէ ընտրունի.** 147.  
**Յիսէ տրունի.** 235.  
**Յիւր?** 274.  
**Յոյնէ.** 9, 22.  
**Յոյնէ (Բիւղանդացիք).** 59, 62, 66, 68, 69, 72—74, 81—83, 85—89, 104, 105, 194, 195, 203, 206, 231, 239, 240, 242, 246, 284, 304, 307, 308.  
**Յոյնէ (Հոսվանյեցիք).** 48, 52, 57.  
**Յովէ.** 157.  
**Յովէլ.** 152.  
**Յովհան եպիսկոպոս Արծրունեաց.** 208.  
**Յովհան եպիսկոպոս Մոկաց.** 75.  
**Յովհան Ա. Ոսկեբերան.** 72.  
**Յովհան պատրիկ.** 86.

- Յովհաննէս աւետարանիլ. 46, 194, 313.  
 Յովհաննէս բազրատամի թագաւոր. 308.  
 Յովհաննէս եպիկոպոս Արքունեաց. 152,  
     156, 159, 201, 207, 208.  
 Յովհաննէս (Բ. Օհնեցի) կաթողիկոս.  
     114, 115, 194.  
 Յովհաննէս (Գ. Պատմադիր) կաթողի-  
     կոս. 243, 247.  
 Յովհաննէս Մկրտչ. 60, 74, 159, 243,  
     313.  
 Յովհաննէս քահանայ. 255.  
 Յովհանն խութացի. 188, 189.  
 Յովհանոս. 47.  
 Յովհափ աստուածահայր. 8.  
 Յովհափ գեղեցիկ. 33, 317.  
 Յովհափ եպիկոպոս (կաթողիկոս). 75.  
 Յովհափ որդի Ապուսեթի. 116, 117, 188.  
 Յովհափ յղին եկրքին. 242.  
 Յովհափ. 303.  
 Յովհեգենին? 29.  
 Յուլայ մակաբայեցի. 200.  
 Յուլայ մատնիլ. 227, 282.  
 Յուլայ (ցեղ Խորսկելացւոց). 40, 201.  
 Յուլիանոս աղիկառաւացի. 7, 9.  
 Յուլյ դաշտ. 258.  
 Յուլիկ. 60, 314.  
 Յուլսի որդի Ապուսեմայ. 283—287, 289.  
 Յուլսի որդի Ռահմայ. 143.  
 Յուլսի տիշխեցի. 143.  
  
 Կարուգուդոսոր. 36, 210.  
 Կարուղարդան. 244.  
 Կարունէցոս. 36.  
 Կարուպազսարոս. 36.  
 Կախճան, Կախճաւան. 78, 92, 105,  
     128, 195, 196, 232, 240, 247—249,  
     252, 276, 300.  
 Կաւասին. 163.  
 Կերովթ, Կարովթ. 6, 8, 20—22,  
     24, 25.  
 Կեսոսր աղմադաւոր. 80, 244.  
 Կեսոտրականք. 85, 255.  
 Կերեղիբոր, Կերեղիկոս. 35, 36.  
 Կերեղիսարոս. 36.  
 Կերս արծր. 40.  
 Կերսէի արծր. 41.  
 Կերսէն արծր. որդի Վահանայ. 57.  
 Կերսէն արքայ Ասորւց. 49, 50.
- Կերսէն կամար. 84.  
 Կերսէն իշխան Գոթիթպայանից. 191.  
 Կերսէն Ա. Մեծն. 60—63, 66, 67, 69,  
     301, 314.  
 Կերսէն Բ. կաթողիկոս. 231, 255.  
 Կերսէն սորոտելաս. 86.  
 Կիսոս. 6—9, 24, 25, 33, 34.  
 Կիսոս քաղաք. ան Կիսուէ.  
 Կիսուաս. 6, 21, 33.  
 Կիսուէ. 6—9, 25, 35—37, 39, 49, 121.  
 Կիսան. 131, 133, 224, 235, 270.  
 Կոյ. 5, 6, 15, 17, 19, 20, 23, 26, 231,  
     256, 288, 309, 316, 318.  
 Կոր քաղաք. ան Վաղարշպատ.  
 Կորուերդ. 208, 209.  
 Կորոդիւզ. 128, 207.  
 Կուշիրական. 86.  
 Կուրադին եղբայր Սեֆերնի Ա. 322.
- Ըախրիք. 28.  
 Ըահակ արծր. 43.  
 Ըահակ կաթողիկոս. 68.  
 Ըահոստ. 65.  
 Ըամ. ան Հեղմ.  
 Ըամայ երկիր. 275.  
 Ըամբիթ արծր. 45.  
 Ըամիրամ, Ըեմիրամ. 6—9, 24—26,  
     33, 215, 293.  
 Ըամիրամայ բերդ, քաղաք, Ըամիրամ-  
     շէն. ան Վանասպատ.  
 Ըամշայ խաթում. 324.  
 Ըամշղայ բերդ, քաղաք. 174, 240.  
 Ըապուհ ամուսնի. 109, 199, 238,  
     240.  
 Ըապուհ արքայից արքայ. 59, 60, 62,  
     64, 65, 67—69.  
 Ըապուհ բադր. 241.  
 Ըապուհ գնունի. 146.  
 Ըապուհ երեց. 128.  
 Ըապուհ եղբ. Աշուայ մ. իշխանի. 218.  
 Ըապուհ թագաւոր Հայոց որդի Յաշ-  
     կերտի Ա. 71, 72.  
 Ըապուհ մոկացի. 213.  
 Ըապուհ որդի Աշուայ թագաւորի. 229?  
     228, 235.  
 Ըապուհ որդի Մայմանի. 278.  
 Ըատուան. 130,  
 Ըարուր դաշտ. 247, 300.

Շաւասպ արձր. 43.  
 Շաւասպ եղբայր Առակայ հօր Աշտիոյ.  
     77, 78.  
 Շաւասպ որդի Աւազի. 60, 61, 71?  
 Շաւարչ Ա. 43.  
 Շաւարչ Բ. 56.  
 Շաւարչ ան. 48.  
 Շաքե. 191.  
 Շիխետի. 261.  
 Շերեփ. 233, 235, 258.  
 Շերիբամական. 25.  
 Շիրակ. 92.  
 Շիրոյ որդի Վագոյի. 78.  
 Շմատոն եպիսկոպոս. 65.  
 Շմատոն Եպիսկոպոս Անձուացեաց. 75.  
 Շմբաթ մոռ. 40.  
 Շմուէլ. 314.  
 Շնաւչ. 260.  
 Շուշեթ-ացիք. 293.  
 Շումել. 28.  
  
 Ողիա. 231.  
 Ուղիանոս վիլխոսփառ. 123.  
 Ուղքոս. 41.  
 Ոթիւն. 34.  
 Ողըմպիաթ. 29.  
 Ունորէս որդի Թէոդոսի Մ. 68.  
 Ուխտ. 289.  
 Ուստան Խշտունեաց. 196, 199, 207, 213,  
     234, 244, 252, 274, 290—292.  
 Ուկոյ. 111, 112. առև և Ալոյ.  
 Ուգեգայ Զբհւեղոյ. 33.  
 Որդու գիւղ. 197.  
 Որմեղ. Որմեղ, Որմաղ, ասառուած.  
     26—28, 30, 86.  
 Որմղ (Դ). ասաննեան. 85.  
 Որմղ (Ե). 98.  
 Որմղուցի. 62.  
 Որփ. 92.  
 Որսիբանիք. 143, 274.  
 Ուժման. 101.  
 Ուժմանիկ. 197, 214, 215, 280.  
 Ուղեց բերդ. 286.  
 Ումառ որդի Արգւազիւայ. 105.  
 Ուրեղիանոս. 47.  
  
 Պալունիք. 251.  
 Պաղայ բերդ. 280.

Պաղեստինացիք. 35, 36, 64, 89, 99,  
     100, 293.  
 Պանիսառ. 34.  
 Պապ Թագաւոր. 66, 67.  
 Պատրիացիք. 47.  
 Պատրիկ անձաւացի. 109, 141, 147.  
 Պատրիկ գնուռնի. 146.  
 Պարթև. 104.  
 Պարոյր Հայկաղնեայ. 34.  
 Պարս. 44.  
 Պարտկաշոյք. 232, 252, 259, 260.  
 Պարս (աշխարհ). 25, 26, 33, 38, 39,  
     50, 54, 68.  
 Պարս (ժողովությ). 40, 42, 43, 46,  
     50, 52, 54, 56, 62, 63, 65, 68, 71—  
     74, 77, 79—85, 88—94, 98, 102,  
     104, 108, 138, 139, 142, 144, 148,  
     149, 246, 247, 258, 261, 263, 268,  
     281, 284—287, 289, 297, 304.  
 Պարտա. 177, 191, 216, 218, 222, 239,  
     241, 242, 275.  
 Պէջ արձր. 146.  
 Պետրոս առաքեալ. 284, 285.  
 Պետրոսի Ա. եկեղեցի. 255.  
 Պերիփարէտ. 34.  
 Պերու արձր. 43.  
 Պերու արքայից արքայ. 77, 80, 81.  
 Պերու-Վամ զօրավար և մար. 50.  
 Պիգման պնդացի. 166.  
 Պղուանիք գիւղ. 275.  
 Պորու. 238.  
 Պողոս. 57.  
 Պտղոմեանիք. 44.  
 Պտղոմէոս (աշխարհագիր). 9? 28, 214?  
 Պտղոմէոս Դինիսիս. 7, 44.  
 Պտղոմէոս (Լագոս). 41, 42.  
 Պրոֆթէս, Պռոֆթոս. 28, 33.  
 Պողոս, Պաղոս առաքեալ. 31, 161, 164—  
     166, 193, 241, 245, 255, 258, 312.  
  
 Քամասպ. 83.  
 Քայլամար. 54.  
 Քաջ արձր. 45.  
 Քայուռ արձր. 45.  
 Քափր որդի Սահմանի. 105, 106.  
 Քափր Սոթոքլ Սոկթոքի. 105, 205,  
     210, 286.  
 Քերմանոր. 279.

- Զերմանորդ լեսուրք?** 75.  
**Զերմար,** ՀՀմար. 54, 135, 196, 203, 240,  
279.  
**Զողաբեկը.** 38.  
**Զողայ լետոն.** 143.  
**Զուտնչէր.** 199.  
**Զուրլան.** 261.
- Ուահար.** 18.  
**Ուահմ.** 144.  
**Ուայ.** 287.  
**Ուշամ ռշտունի.** 293.  
**Ուե.** 7.  
**Ուշտունիք.** 59, 60, 63, 75, 81, 127,  
128, 130, 207, 231, 232, 255, 291.  
**Ուստակւ.** 314.  
**Ուստոմ վարածունիք.** 147, 214.
- Սալթիկ.** 52—54.  
**Սակառան.** 124.  
**Սահակ ամստունի.** 147.  
**Սահակ արձր. սրդի քաջուց.** 45.  
**Սահակ արձր. սրդի Վաշէր.** 50, 54, 55.  
**Սահակ արձ. սեպուհ.** 146, 191? 199?  
**Սահակ բադր. եղբայր Բագարասոսյ իւ-**  
*խանին Ցարստոց.* 117.  
**Սահակ բադր. սրդի Էլիո Էլիստանին.** 213.  
**Սահակ եղբակապու.** 75.  
**Սահակ Ս. Կաթողիկոս.** 69, 70, 72—75,  
83, 314.  
**Սահակ մեծ սպարտապետ.** 69, 75.  
**Սահակ սրդի Խոմայելի.** 172, 210.  
**Սահակ սրդի Մահմետի.** 105.  
**Սահակ սեպուհ.** 109.  
**Սահակ վահեռակի եղբակողոս Կար-**  
*ճունանու.* 128.  
**Սահակ սինի եղբայր Սմբատոյ.** 248.  
**Սահակ քաղաքապետ Յիշեաց.** 174.  
**Սահկան ընտրունիք.** 147.  
**Սահմադին սրդի Ամբողուրդին.** 323,  
324.  
**Սաղմթէլ.** 40.  
**Սաղմնոս.** 281.  
**Սաղոյ.** 23.  
**Սաղմնի.** 102, 103.  
**Սաղմնասար.** 35, 36.  
**Սամամ.** 99, 101.  
**Սամառոյ.** 108, 118, 139, 151, 158,  
189, 199.
- Սամարիա.** 35.  
**Սամոնէս.** 36.  
**Սամոնէլ կաթողիկոս.** 73, 74.  
**Սամոնէլ մամիկ. սրդի Ա. ահանայ.** 65, 68.  
**Սամոնէլ մարգարէ.** 178, 312.  
**Սամոնէլ քահանայ.** 130.  
**Սամինոն.** 34.  
**Սահասար.** 8, 36, 37, 44, 121.  
**Սահասարեանք.** 37, 43.  
**Սահասնայք.** 121.  
**Սահասրուկ.** 48—50, 52, 214.  
**Սասանայ, սասանական տես;** —**դ.** 68,  
85, 86, 104.  
**Սարոյ ամառունիք.** 238.  
**Սարդիս Բհերայ.** 99i  
**Սարդիս սրդի Դերանկին.** ան Աշո-  
Սարդիս.  
**Սարգանապաշէս, Սարգանապաշու.** 34.  
37.  
**Սաւուզ.** 18.  
**Սափի յայն սատիկան.** 240, 242, 274.  
**Սափիրայ.** 165.  
**Սերեկիս.** 210.  
**Սերեկոս Կիկանոր.** 41, 42.  
**Սեմ 6—8, 18—20, 24, 26.**  
**Սեմեանք.** 8.  
**Սեմիրամ. ան Շամիրամ:**  
**Սեմերերիմ; Սեմերերիմ.** 6, 8, 20, 35,  
37, 44, 46, 49, 121, 192, 205, 251,  
306.  
**Սեմերերիմ թագաւոր արեր.** 306—310.  
**Սեմերերմանք.** 37, 58.  
**Սեմեն.** 220, 222, 225; 232, 235, 275,  
276.  
**Սերդիք.** 289.  
**Սետոյ, Սետոյ սիկին Վասպուրական,**  
*կին Ըստոյ սրդոյ Դերանկին, գուսար*  
*Ապումբուռանոյ.* 233, 238, 241, 249.  
**Սէթ. 2, 13, 14, 20.**  
**Սէմ հաւատարիմ Յիսէի Շեհայ.** 215.  
**Սէթէդին Ը.** 321—323.  
**Սէթէդին Ը. սրդի Ամբողուրդին.** 325.  
**Սիմ. 8, 51, 52.**  
**Սիմէն քահանայ.** 320.  
**Սիմն սամարցի.** 165.  
**Սիպարացոց քաղաք.** 21.  
**Սիւնիք.** 191, 245, 247, 248, 319.  
**Սիօն Ս. եկեղեցի և Ա. անտոնով.** 253, 257.  
**Սոդոյ գաւռու.** 262.

- Սմբատ ապահովի. 109.  
 Սմբատ արձր. 300.  
 Սմբատ բայր. դպյակ Արտաշեմ. 50, 51.  
 Սմբատ թագաւոր որդի Ալբանյ. 229,  
     230, 233, 236, 245, 273, 274, 276,  
     282—285.  
 Սմբատ իշխան Մովսեց. 127, 137, 138.  
 Սմբատ իշխան Արմենաց. 247.  
 Սմբատ մամիկոնեան. 67.  
 Սմբատ մարտացեան. 109.  
 Սմբատ մակացի. 213.  
 Սմբատ որդի Բագարանյ բայր. 66.  
 Սմբատ որդի Օմբառայ Սողոմոնի. 191.  
 Սմբառայ բերդ. 144.  
 Սմբառուհի դուռը Մեհմանյ, կին Սահակյ արձր. 46.  
 Սոգոմոնցիք. 114, 216.  
 Սոգոմոն. 173, 231.  
 Սուլոմն. 23, 115, 136, 223, 228, 308,  
     315.  
 Սուլոմն բայր. 204.  
 Սուլոմն մարդկ. 187, 188.  
 Սովորուս. 34.  
 Սորմակ արծիւցի. 73, 314.  
 Սուլիմոն որդի Արդլմելքի. 105.  
 Սուկուտէս. 54.  
 Սուրբու. 91.  
 Սուփան. 237.  
 Սովի ափկին, կին Դերանին. 229, 266,  
     267, 269.  
 Սովոնիս մարդուրէ. 113.  
 Սովոնիւցիք. 48.  
 Սովորեթոս. 34.  
 Սովեր. 194.  
 Սոսադին. 48.  
 Սուեֆաննոս արքեպիսկոպոս մթուռակուլ  
     Միհմանյ. 319.  
 Սուեֆաննոս աւք, որդի Արդլմելքի Ա. 311.  
 Սուեֆաննոս աւք, որդի Սեփեդի. Ա. 321—  
     323.  
 Սուեֆաննոս քեռօրդի աւտան Դաւթի.  
     323, 324.  
 Սուհանդ. 308.  
 Սոբին. 54, 135, 196, 203, 240, 279.  
  
 Վայրիէ Անձաւացեաց աւք. 78.  
 Վահագն հայկաղեայ. 42.
- Վահան Ամառունեաց իշխան. 59, 60,  
     67, 75.  
 Վահան Ծմառունեաց իշխան, միւս. 238.  
 Վահան ամառունի սեպուհ. 131.  
 Վահան արձր. պատերազմակից Ս. Վար-  
     դանայ. 79—82.  
 Վահան արձր. հայր Սպումկումայ. 133,  
     139, 215, 273, 275.  
 Վահան արձր. որդի Ալբանի իշխ. իշխ-  
     եան. 199, 210—212.  
 Վահան արձր. որդի Մուշեղայ. 57, 59.  
 Վահան արձր. որդի Վարդինի. 45.  
 Վահան արձր. սեպուհ. 109, 112.  
 Վահան արձր. սեպուհ, միւս. 109.  
 Վահան գողրիկ. 146.  
 Վահան գունի. 146.  
 Վահան Ս. գողթնեցի. 252.  
 Վահան Եղբայր Վասակոյ կովակերի.  
     196.  
 Վահան համեմեի. 109, 112.  
 Վահան մամիկոնեան. 83, 84.  
 Վահան մամիկոնեան սորտեալ. 62, 63,  
     65, 68.  
 Վահեռավահան մեհմանյ. 214.  
 Վահեռավահ. 128, 134.  
 Վահոնիկ. 282.  
 Վաղես. 275.  
 Վահոմամ Մեհմանդակ. 85—88.  
 Վահոմամ սեպուհ. 131, 134.  
 Վահոմամ արքինի. 131, 133? 134, 141?  
 Վաղորչ արքայից արքայ. 83.  
 Վաղորչ թագաւոր եղբայր Խասրազու  
     Քերինյ. 69.  
 Վաղորչ հայր Արտառանեայ. 104.  
 Վաղորչակ Ա. պարթև. 43, 44.  
 Վաղորչակ Բ. (Վաղորչ). 56.  
 Վաղորչակ Գ. 68.  
 Վաղորչական. 63, 231, 300.  
 Վաղինիսինոս կոյսր. 57.  
 Վաղես. 62, 66.  
 Վայոց Հոր. 191, 247.  
 Վահ. 51, 215, 233, 248, 263, 271,  
     274, 306, 308. մես և Վահունու  
 Վահանդ. 185.  
 Վահանուզ. 63, 131, 206, 215, 217, 225,  
     238, 240, 242, 252, 253, 258, 270,  
     281.  
 Վաղէ արձր. 73.  
 Վաղէ արշաւրեան. 49.

- Աւշել որդի Խոսրահայ. 49—52, 60?
- Աւագաստ, Վարաստ. 86, 261.
- Աստակ ակեցիք. 147.
- Աստակ արծր. «ամբարիչ»: 109, 146, 158, 222, 235, 274, 275.
- Աստակ արծր. ռերացեալ, հայր Աղանայ. 68, 69, 77, 82, 88.
- Աստակ արծր. սեպուհ. 109, 191, 192?
- Աստակ արծր. սեպուհը երկու. 109, 191?
- Աստակ արծր. սեպուհ, որդի Գրիգորի (Եղիօր Սշառոյ իշխ. իշխանի?) 109, 118?
- Աստակ գազրիկ. 146.
- Աստակ իշխանիկ Վայոց ձորոյ. 191.
- Աստակ Կովկաս. 196, 199.
- Աստակ հայր Գրիգորի Ապուհամշայի. 221, 278.
- Աստակ մամիկոնեան. 60.
- Աստակ (մարտիրոսացիալ). 171.
- Աստակ Սիհնեաց տէր, ռերացեալ. 80.
- Աստի հայոր. 307.
- Աստաղործական. 3, 45, 51, 107, 109, 111, 112, 116—118, 120, 125, 127, 133, 134, 138, 139, 143, 150, 151, 168, 191, 194—198, 202, 208, 207—209, 214, 216, 218, 230, 232, 235, 226—228, 232—237, 239, 242, 246—248, 252, 258, 259, 264, 266, 270, 273—281, 284, 305—308, 310, 317, 322.
- Աստինիանեայն դաշտ. 176.
- Աւրագ. 50, 214, 253, 254, 262, 294, 306, 397.
- Աւրագատ. 67, 68.
- Աւրազապուհ Աբելինից տէր. 235.
- Աւրազապուհ վարաժնումի. 147.
- Աւրաժնումի. 147, 241.
- Աւրբակ մար. 34, 87.
- Աւրդէն արծր. 45.
- Աւրդ պատրիկ ռշտունի. 255.
- Աւրդան դաբայելին. 109.
- Աւրդան դնունի. 146.
- Աւրդան Ս. մամիկոնեան. 45, 63, 72, 73, 75, 78—82, 84, 311, 314, 325.
- Աւրդան պատրիկ ռշտունի հայկազն. 255.
- Աւրդանակ. 27.
- Աեհկաւատ. 94, 95.
- Աեսպիտնոս. 241.
- Ակղդ որդի Աբովյալքի. 104.
- Ափառհաս աւան. 260.
- Ափք. 36, 86, 198, 206, 236, 237, 245, 273, 300.
- Ալիթ. 105.
- Ալիթ զինուոր. 260.
- Անդ քաղաք. 259.
- Անդոյ մազպեա. 77, 78.
- Անդով, Անդոյ. 85, 87.
- Անհապ հրատ. 92.
- Առամ Ա. (Առհրամ Դ. Կրմանչահ). 71.
- Առամ Բ. (Առհրամ Ե. Զուր). 72—75.
- Առամ. 85, 87.
- Արթանեա. 59, 60, 175, 314
- Արիջունիք. 38.
- 
- Տադրեան գաւառ. 252.
- Տաճառ արծր. 82, 83.
- Տաճառ ռշտունի. 78.
- Տաճառունիք կին Վահանայ մամիկ. ռւթցելս, մայր Սամուելի. 68.
- Տաճկեք (Արաբացիք). 3, 86, 103, 104, 106, 108, 109, 111, 113, 116, 118, 119, 126, 127, 131, 134, 137, 140, 150, 182, 183, 185, 188, 189, 194, 196, 197, 203, 206, 208, 210, 214, 218, 219, 245, 255, 283, 286.
- Տաճկաստան. 98, 124.
- Տաճեր. 252, 259.
- Տայք, Տայառան. 60, 293.
- Տարսն Կիւլիկեցւց. 8, 92, 96.
- Տարուն, Տարօն. 51, 60, 74, 107, 108, 117—119, 121, 158, 207, 208, 219—223, 231, 236, 237.
- Տարօնյ գետ. 260.
- Տերենա զօրավար. 67.
- Տևեսայ. 34.
- Տիբերիոս Կայոր. 47—49.
- Տիդրան արծր. 40.
- Տիդրան Հայկազն. 8, 36—40, 43, 52.
- Տիդրան (Ա. արշակունի). 44, 63.
- Տիդրան (Բ. Աերջին) 56.
- Տիդրանունիք. 38.
- Տիմիթէսս աշակերտ Պօղոսի առաքելս. 164, 166.
- Տիսպոն, Տապոն. 62, 72, 94, 95, 98.
- Տիտան. 6, 7.
- Տիրոն (Ա.) որդի Արտաշեսի. 56.
- Տիրոն (Բ.) որդի Խոսրովու Փոքու. 59, 60.

- |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Տերոց արծր.</b> 57, 58.<br><b>Տեւրոս.</b> 34.<br><b>Տմրիք.</b> 37, 39, 81.<br><b>Տոսուր.</b> 50, 251, 262.<br><b>Տուղլուփ սուլտան.</b> 308.<br><b>Յպազ քաղաք.</b> 304.<br><b>Երան Ա. թագաւոր.</b> 57, 58, 79, 239,<br>257.<br><b>Երազական պատերազմ.</b> 21.<br><b>Երանիք.</b> 134, 235.<br><b>Յօրոսական լշտան.</b> 39, 75.<br><b>Տեղիս, Տեղիք, Թէիսի.</b> 86, 143, 173,<br>203, 274.<br><br><b>Բաբովամ որդի Նաբառայ.</b> 158.<br><br><b>Փաղեց.</b> 23.<br><b>Փայտակարան.</b> 173. աես և Յեղիս.<br><b>Փայտակառան գիւղ.</b> 259.<br><b>Փառան.</b> 99—101. աես և Մաքայ.<br><b>Փարհուաց բերդ.</b> 280.<br><b>Փեռոտակ գիւղ.</b> 226.<br><b>Փէթք ոստիկան.</b> 289.<br><b>Փիլիպպէ իշխան Սրբնեաց.</b> 191.<br><b>Փիլիպպիկոս վեսոյ Մուրիս.</b> 86.<br><b>Փիլիպպոս առաքեալ.</b> 46, 165.<br><b>Փիլիպպոս որդի Հերովդեայ.</b> 47.<br><b>Փիլիպպոս մակեդոնացի.</b> 41.<br><b>Փիլոն աղէքսանդրացի.</b> 12, 13, 18, 19.<br><b>Փշոց վանք.</b> 229.<br><b>Փոկաս.</b> 88, 90. | <b>Փորակ.</b> 275.<br><b>Փուայ ասորեստանեայ.</b> 35, 36.<br><b>Փակուացիք.</b> 257.<br><br><b>Քաբար.</b> 99.<br><b>Քաբարակ գահեռունի.</b> 147.<br><b>Քաղգեցիք.</b> 2, 9, 20, 35.<br><b>Քաղկեդոն քազաք.</b> 89, 92.<br><b>Քաղկեդոնի ժողով.</b> 82.<br><b>Քաղկեդոնականք.</b> 255.<br><b>Քամ.</b> 6, 7, 9, 19—21, 23, 24, 33.<br><b>Քանան, Քանանացիք.</b> 18, 20, 113, 178,<br>200.<br><b>Քթիչ, Քշիթ լւան.</b> 178, 187.<br><b>Քուշ.</b> 20, 21, 24.<br><b>Քուշանիք.</b> 43, 79, 85.<br><b>Քուրդիկ մաֆկոնեան.</b> 190, 194.<br><b>Քուսիք.</b> 54.<br><b>Քուրքսէս արծր.</b> 37—40, 43.<br><b>Քուրքսէս թագաւոր Պարսից.</b> 40.<br><b>Քուրքսէսեանիք.</b> 39.<br><b>Քոսութիս.</b> 7, 21.<br><b>Քրիստուֆոր կաթողիկոս.</b> 81.<br><br><b>Օգլոսոս կայսր.</b> 43.<br><b>Օձ ձոր.</b> 256.<br><b>Օշական.</b> 75, 246.<br><b>Օսի գիւղ.</b> 249.<br><br><b>Գուանդիք.</b> 311. |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

